3901–3911-ից	Սկզբնական ձեւեր՝ նախատեսված տնտեսական-խմելու նպատակով ջրամատակարարման մեջ կամ սննդամթերքի արտադրության ժամանակ օգտագործելու նպատակով (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15–ի թիվ 36 որոշմամբ)
3912-ից	Թաղանթանյութ եւ դրա քիմիական ածանցյալները սկզբնական ձեւերով՝ այլ տեղում չնշված կամ չներառված, նախատեսված տնտեսական-խմելու նպատակով ջրամատակարարման մեջ օգտագործելու համար կամ սննդային հավելումներ հանդիսացող (պատրաստողի (արտադրողի) փաստաթղթերի համաձայն) (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15–ի թիվ 36 որոշմամբ)
3913-ից	Պոլիմերներ՝ բնական (օրինակ՝ ալգինաթթու) եւ պոլիմերներ՝ բնական ձեւափոխված (օրինակ՝ պնդացած պրոտեիններ, բնական կաուչուկի քիմիական ածանցյալներ), սկզբնական ձեւերով, այլ տեղում չնշված կամ չներառված, նախատեսված տնտեսական-խմելու նպատակով ջրամատակարարման մեջ օգտագործելու համար կամ սննդային հավելումներ հանդիսացող (պատրաստողի (արտադրողի) փաստաթղթերի համաձայն) (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15–ի թիվ 36 որոշմամբ)
3914 00 000 0-ից	Խեժեր՝ իոնափոխանակիչ, ստացված 3901-3913 ապրանքային դիրքերում նշված պոլիմերների հիմքով, սկզբնական ձեւերով, նախատեսված տնտեսական-խմելու նպատակով ջրամատակարարման մեջ օգտագործելու համար (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15–ի թիվ 36 որոշմամբ)
3917-ից	Խողովակներ, փողակներ, ճկափողեր եւ դրանց կցամասերը (օրինակ՝ միացումներ, արմունկներ, կցաշուրթեր)՝ պլաստմասսաներից, նախատեսված տնտեսական-խմելու նպատակով ջրամատակարարման մեջ օգտագործելու կամ սննդամթերքի հետ շփման համար

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշման խմբագրությամբ)

3919-ից
 Սալիկներ, թերթեր, թաղանթ, ժապավեն, շերտ եւ այլ հարթ ձեւեր՝ պլաստմասսաներից, ինքնակաշուն, գլանափաթեթներով կամ ոչ գլանափաթեթներով, սույն բաժնի 4, 6-11-րդ կետերում ընդգրկված
 (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)

3920-ից
 Սալիկներ, թերթեր, թաղանթ եւ շերտեր կամ ժապավեններ՝ այլ, պլաստմասսաներից, ոչ ծակոտկեն եւ չամբանավորված, ոչ շերտավոր, առանց հիմնաշերտի եւ նույնանման ձեւով այլ նյութերի հետ չմիացված, նախատեսված սննդամթերքի հետ շփման համար

3923-ից
 Ապրանքների տրանսպորտային փոխադրման կամ փաթեթավորման համար արտադրատեսակներ (տուփեր, արկղեր, զամբյուղներ եւ նույնանման իրեր)՝ պլաստմասսաներից, նախատեսված սննդամթերքի հետ շփման համար

3924-ից
 Տնային գործածության այլ իրեր եւ հիգիենայի կամ հարդարման առարկաներ՝ պլաստմասսաներից, սույն բաժնի 10- 11-րդ կետերում ընդգրկված
 (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)

3925 10 000 0-ից
 Ամբարներ, ցիստեռններ, բաքեր եւ նույնանման տարողություններ՝ պլաստմասսաներից, 300 լիտրից ավելի ծավալով՝ նախատեսված սննդամթերքի հետ շփվելու կամ տնտեսական-խմելու նպատակով ջրամատակարարման մեջ օգտագործելու համար
 (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)

3926-ից
 Այլ արտադրատեսակներ եւ 3901-3914 ապրանքային դիրքերում նշված այլ նյութերից արտադրատեսակներ՝ պլաստմասսաներից՝ սույն բաժնի 6-րդ, 9-11-րդ կետերում նշված ապրանքների շարքին դասվող
 (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)

Խումբ 40
Կաուչուկ, ռետին եւ դրանցից արտադրատեսակներ

4014-ից
 Հիգիենիկ արտադրատեսակներ՝ վուկանացրած ռետինից՝ բացի կոշտ ռետինից, կոշտ ռետինից կցամասերով կամ առանց դրանց. տարբեր տեսակների ձծակներ եւ նույնանման արտադրատեսակներ երեխաների համար

Խումբ 44
Փայտանյութ եւ դրանից արտադրատեսակներ. փայտածուխ

4415-ից	Արկղեր, տուփեր, փաթեթավորման վանդակներ կամ զամբյուղներ, թմբուկներ եւ նույնանման տարա՝ փայտանյութից՝ նախատեսված սննդամթերքի փաթեթավորման համար
4416 00 000 0-ից	Տակառներ, տակառիկներ, գուռեր, տաքարներ եւ տակառագործական այլ արտադրատեսակներ՝ փայտանյութից՝ նախատեսված սննդամթերքի փաթեթավորման համար
Խումբ 45 Խցան եւ դրանից արտադրատեսակներ	
4503-ից	Արտադրատեսակներ բնական խցանից՝ նախատեսված սննդամթերքի հետ շփման համար
Խումբ 48 Թուղթ եւ ստվարաթուղթ. թղթազանգվածից, թղթից կամ ստվարաթղթից արտադրատեսակներ	
4803 00-ից	Արդուզարդի թղթե անձեռոցիկներ կամ անձեռոցիկներ դեմքի համար, սրբիչներ կամ խանձարուրներ եւ տնտեսական-կենցաղային կամ սանիտարահիգիենիկ նշանակության թղթի այլ տեսակներ
4805-ից	Այլ ոչ կավճապատ թուղթ եւ ստվարաթուղթ՝ գլանափաթեթներով կամ թերթերով, առանց հետագա մշակման կամ մշակված, ինչպես նշված է տվյալ խմբի 3-րդ ծանոթագրության մեջ, նախատեսված սննդամթերքի հետ շփման համար
(ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)	
4806-ից	Մագաղաթ՝ բուսական, անյուղանցիկ թուղթ, կալկա, պերգամին եւ այլ կոկած թափանցիկ կամ կիսաթափանցիկ թուղթ՝ գլանափաթեթներով կամ թերթերով, նախատեսված սննդամթերքի հետ շփման համար
(ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)	
4807 00-ից	Թուղթ եւ ստվարաթուղթ՝ բազմաշերտ (պատրաստված թղթի կամ ստվարաթղթի հարթ շերտերը կապակցող նյութով սոսնձելու եղանակով)՝ առանց մակերեսային պատվածքի կամ ներծծվածքի, ամրանավորած կամ չամրանավորած, գլանափաթեթներով կամ թերթերով, նախատեսված սննդամթերքի հետ շփման համար
(ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)	
4808-ից	Թուղթ եւ ստվարաթուղթ՝ ծալքավոր (սոսնձած կամ չսոսնձած արտաքին հարթ շերտերով)՝ խորշոմավորած, դրոշմատպված կամ սորատած՝ գլանափաթեթներով կամ թերթերով, բացի 4803 ապրանքային դիրքում նշվածներից, նախատեսված

	<p>սննդամթերքի հետ շփման համար (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)</p>
4810-ից	<p>Թուղթ եւ սովարաթուղթ՝ մեկ կամ զույգ կողմերից ճենակավով (չինական կավով) կամ այլ անօրգանական նյութերով պատված, կապակցող նյութի օգտագործմամբ կամ առանց դրա, եւ առանց որեւէ այլ պատվածքի, ներկած կամ չներկած, գեղազարդված կամ չգեղազարդված մակերեսով, տպված պատկերներով կամ առանց տպված պատկերների, գլանափաթեթներով կամ ցանկացած չափսի ուղղանկյուն (այդ թվում՝ քառակուսի) թերթերով՝ նախատեսված սննդամթերքի հետ շփվելու համար (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)</p>
4811-ից	<p>Թուղթ, սովարաթուղթ, թաղանթանյութի բամբակ եւ թաղանթանյութի մանրաթելերից քաթան՝ պատվածքով, ներծծված, մակաշերտված, ներկած կամ գեղազարդած մակերեսով կամ տպված, գլանափաթեթներով կամ ուղղանկյուն (այդ թվում՝ քառակուսի) թերթերով՝ ցանկացած չափի, բացի 4803, 4809 կամ 4810 ապրանքային դիրքերում նշված ապրանքներից, նախատեսված սննդամթերքի հետ շփման համար (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)</p>
4812 00 000 0-ից	<p>Ֆիլտրման բլոկներ, սալեր եւ թիթեղներ՝ թղթազանգվածից, նախատեսված սննդամթերքի հետ շփման համար (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշման խմբագրությամբ)</p>
4818-ից	<p>Չուգարանի թուղթ եւ նույնանման թուղթ, թաշկինակներ, կոսմետիկ անձեռոցիկներ, սրբիչներ, սփռոցներ, անձեռոցիկներ, մանկական խանձարուրներ, խծուծներ (տամպոններ), սավաններ եւ տնտեսական-կենցաղային կամ սանիտարահիգիենիկ նշանակության նույնանման արտադրատեսակներ</p>
9619 00-ից	<p>Կանանց հիգիենիկ միջադիրներ եւ խծուծներ (տամպոններ), մանկական խանձարուրներ ու տակդիրներ եւ նույնանման սանիտարահիգիենիկ արտադրատեսակներ (Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշման խմբագրությամբ)</p>
4819-ից	<p>Արկղեր, տուփեր, պարկեր, տոպրակներ եւ փաթեթավորման այլ տարաներ՝ թղթից, սովարաթղթից՝ նախատեսված սննդամթերքի փաթեթավորման համար</p>
4823 20 000-ից	<p>Ֆիլտրման թուղթ եւ սովարաթուղթ՝ նախատեսված սննդամթերքի հետ շփման համար</p>

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36, 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ 73 որոշումների խմբագրությամբ)	
4823 70-ից	Արտադրատեսակներ թղթազանգվածից՝ կաղապարած կամ մամլած, նախատեսված սննդամթերքի հետ շփման համար (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)
Խումբ 56	
Բամբակ, թաղիք կամ նրբաթաղիք եւ չգործված կտորեղեն. հատուկ մանվածք. թոկեր, պարաններ, ճոպաններ ու մետաղաճոպաններ եւ դրանցից պատրաստված արտադրատեսակներ	
9619 00-ից	Կանանց հիգիենիկ միջադիրներ եւ խծուծներ (տամպոններ), մանկական խանձարուրներ ու տակդիրներ եւ նույնանման սանիտարահիգիենիկ արտադրատեսակներ՝ բամբակից (Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշման խմբագրությամբ)
Խումբ 59	
Մանածագործական նյութեր՝ ներծծվածքով, պատվածքով կամ կրկնորդված. տեխնիկական նշանակության մանածագործական արտադրատեսակներ (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)	
5903-ից	Մանածագործական նյութեր՝ ներծծվածքով, պատվածքով կամ կրկնորդված պլաստմասսաներով, բացի 5902 ապրանքային դիրքում նշված նյութերից, նախատեսված սննդամթերքի հետ շփման համար (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)
5906-ից	Մանածագործական նյութեր՝ ռետինացված, բացի 5902 ապրանքային դիրքում նշված նյութերից, նախատեսված սննդամթերքի հետ շփման համար (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)
5910 00 000 0-ից	Փոխակրիչային ժապավեններ՝ մանածագործական նյութերից, ներծծված կամ չներծծված, պատվածքով կամ առանց պատվածքի, պլաստմասսաներով կամ ամրանավորված մետաղով կամ այլ նյութով կրկնորդված կամ չկրկնորդված, նախատեսված սննդամթերքի հետ շփման համար (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)
5911 20 000 0-ից	Մաղազործվածքներ՝ պատրաստի կամ անավարտ՝ նախատեսված սննդամթերքի հետ շփման համար (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)
5911 40 000 0-ից	Ֆիլտրման գործվածքներ, որոնք օգտագործվում են

	<p>մամլիչներում յուրը քամելու կամ նույնանման նպատակների համար (բացառությամբ մարդու մազից պատրաստված գործվածքների)՝ նախատեսված սննդամթերքի հետ շփման համար</p> <p>(ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)</p>
<p>Խումբ 61</p> <p>Տրիկոտաժե հագուստ եւ հագուստի պարագաներ՝ մեքենայագործ կամ ձեռագործ</p>	
6107-ից	Փոխաններ, կիսավարտիքներ, գիշերաշապիկներ, ննջազգեստներ, լոգարանի խալաթներ, տնային խալաթներ եւ նույնանման տրիկոտաժե արտադրատեսակներ՝ մեքենայագործ կամ ձեռագործ, տղաների համար
6108-ից	Կոմբինացիաներ, ներքնաշրջազգեստներ, կիսավարտիքներ, վարտիքներ (պանտալոններ), գիշերաշապիկներ, ննջազգեստներ, գիշերազգեստներ (պենյուարներ) , լոգարանի խալաթներ, տնային խալաթներ եւ նույնանման, , տրիկոտաժե արտադրատեսակներ՝ մեքենայագործ կամ ձեռագործ, աղջիկների համար
6109-ից	Ներքնաշապիկներ, գործովի տաք շապիկներ (ֆուֆայկաներ)՝ թեւքերով եւ մարմնահագի տրիկոտաժե այլ ֆուֆայկաներ՝ մեքենայագործ կամ ձեռագործ, տղաների եւ աղջիկների համար
6115-ից	Զուգագուլպաներ, գուլպաներ, կիսագուլպաներ, կարճ գուլպաներ ու ոտնաթաթագուլպաներ եւ այլ գուլպեղեն ու կոշկեղեն՝ առանց ներբանների, տրիկոտաժե, մեքենայագործ կամ ձեռագործ, տղաների եւ աղջիկների համար
<p>Խումբ 62</p> <p>Հագուստ եւ հագուստի պարագաներ՝ բացի տրիկոտաժե մեքենայագործ կամ ձեռագործ հագուստից եւ պարագաներից</p>	
6207-ից	Ներքնաշապիկներ եւ մարմնահագի ֆուֆայկաներ՝ այլ, փոխաններ, կիսավարտիքներ, գիշերաշապիկներ, ննջազգեստներ եւ նույնանման արտադրատեսակներ տղաների համար
6208-ից	Ներքնաշապիկներ եւ մարմնահագի ֆուֆայկաներ՝ այլ, կոմբինացիաներ, ներքնաշրջազգեստներ, կիսավարտիքներ, վարտիքներ (պանտալոններ), գիշերաշապիկներ, ննջազգեստներ եւ նույնանման արտադրատեսակներ աղջիկների համար
6209-ից	Մանկական հագուստ եւ մանկական հագուստի պարագաներ (առաջին շերտ)
<p>(ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)</p>	
6212-ից	Կրծկալներ, գոտիներ, սեղմիրաններ (կորսետներ),

	տաբատակալներ, կապիչներ եւ նույնանման, մեքենայագործ կամ ձեռագործ, տրիկոտաժե կամ ոչ տրիկոտաժե արտադրատեսակներ աղջիկների համար
--	---

Խումբ 63
Այլ պատրաստի մանածագործական արտադրատեսակներ. լրակազմեր. օգտագործված հագուստ եւ մանածագործական արտադրատեսակներ. լաթեր

6305-ից	Փաթեթավորման պարկեր եւ տոպրակներ՝ նախատեսված սննդամթերքի հետ շփման համար
---------	--

6307-ից	Պատրաստի արտադրատեսակներ՝ այլ (բացառությամբ հագուստի ձեւվածքների)՝ նախատեսված սննդամթերքի հետ շփման համար (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)
---------	--

Խումբ 70
Ապակի եւ դրանից արտադրատեսակներ

7010-ից	Մեծ շշեր, շշեր, սրվակներ, սափորներ, թաղարներ, բանկաներ, ապակե այլ տարողություններ՝ արդյունաբերական եւ տնտեսական նշանակության սննդամթերքի պահպանման, տրանսպորտային փոխադրման եւ փաթեթավորման համար
---------	---

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 115 որոշմանը համապատասխան՝ 2014 թվականի հունիսի 17-ից 73-րդ խումբը շարադրվում է նոր խմբագրությամբ:

Խումբ 73
Արտադրատեսակներ սեւ մետաղներից

7310 21-ից 7310 29-ից	Ցիստեռններ, տակառներ, թմբուկներ, կանիստրներ, արկղեր եւ նույնանման տարողություններ՝ սեւ մետաղներից, ցանկացած նյութի համար (բացի սեղմված կամ հեղուկացված գազից), 300 լիտրից ոչ ավելի տարողունակությամբ, երեսապատումով կամ ջերմամեկուսացումով կամ առանց դրանց, բայց առանց մեխանիկական կամ ջերմատեխնիկական սարքավորումների, բացառությամբ 50լ եւ ավելի տարողունակությամբ սարքավորումների, նախատեսված սննդամթերքի եւ խմելու ջրի հետ շփման համար
--------------------------	---

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 115 որոշմանը համապատասխան՝ 2014 թվականի հունիսի 17-ից Միասնական ցանկի II բաժինը լրացվելու է 74-րդ խմբով:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 115 որոշմանը համապատասխան՝ 2014 թվականի հունիսի 17-ից 76-րդ խումբը «7607» ծածկագրով դիրքից հետո լրացվելու է «7611 00 000 0-ից» դիրքով, իսկ «7612-ից» ծածկագրով դիրքը շարադրվելու է նոր խմբագրությամբ:

Խումբ 76
Ալյումին եւ դրանից արտադրատեսակներ

7607-ից	Այլումինե նրբաթիթեղ (առանց հիմքի կամ թղթի, ստվարաթղթի, պլաստմասսայի կամ նույնանման նյութերի հիմքով)՝ ոչ ավելի, քան 0,2 մմ հաստությամբ (չհաշված հիմքը), նախատեսված սննդամթերքի հետ շփման համար (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)
7612-ից	Մետաղական տափաշներ՝ կաթի եւ կաթնամթերքի համար
7615-ից	Ճաշի, խոհանոցային արտադրատեսակներ կամ այլ արտադրատեսակներ կենցաղային կարիքների համար եւ դրանց մասերը՝ այլումինից՝ նախատեսված սննդամթերքի հետ շփման համար (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)
Խումբ 83	
Այլ արտադրատեսակներ ոչ թանկարժեք մետաղներից Հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 115 որոշում	
Խումբ 84	
Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ եւ մեխանիկական սարքեր. դրանց մասերը	
8413-ից	Պոմպեր՝ հեղուկային, ծախսաչափերով կամ առանց դրանց. հեղուկների վերհաններ՝ նախատեսված սննդային միջավայրերի հետ շփման կամ տնտեսական-խմելու նպատակով ջրամատակարարման մեջ օգտագործելու համար (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)
8413 70 300 0	Հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշում
8421 21 000	Սարքավորումներ եւ սարվածքներ՝ ջրի ֆիլտրման կամ մաքրման համար
Խումբ 85	
Էլեկտրական մեքենաներ եւ սարքավորումներ, դրանց մասերը. ձայնագրման եւ ձայնավերարտադրության ապարատուրա, հեռուստատեսային պատկերի եւ ձայնի գրառման եւ վերարտադրության ապարատուրա, դրանց մասերն ու պարագաները	
8512 40 000	Ապակեմաքրիչներ, հակասառցապատիչներ եւ հակաքրտնակալիչներ
8516 10-ից	Ջրատաքացուցիչներ
Խումբ 90	
Գործիքներ եւ ապարատներ՝ օպտիկական, լուսանկարչական, կինեմատոգրաֆիական, չափիչ, հսկիչ, ճշգրիտ, բժշկական կամ վիրաբուժական. դրանց մասերը եւ պարագաները (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)	

9029 10 000-ից	Հաշվիչներ՝ պտույտների թվի, հաշվիչներ՝ արտադրանքի քանակի որոշման, նախատեսված սննդային միջավայրերի հետ շփման կամ տնտեսական-խմելու նպատակներով ջրամատակարարման մեջ օգտագործելու համար (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36 որոշմամբ)
Խումբ 96 Տարբեր պատրաստի արտադրատեսակներ	
9603 21 000 0	Ատամի խոզանակներ՝ ներառյալ ատամի պրոթեզների համար խոզանակները

<*> Սույն ցանկն օգտագործելու համար անհրաժեշտ է առաջնորդվել ինչպես ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրով, այնպես էլ ապրանքի անվանմամբ:

<*> Հղումը հանվել է: Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշում:

Ծանոթագրություն: Ցանկին համապատասխան՝ պետական գրանցման ենթակա է միայն այն արտադրանքը, որը նշված է միասնական ցանկի II Բաժնի սկզբում թվարկված արտադրանքի խմբերում եւ միեւնույն ժամանակ գտնվում է ՄՄ ԱՏԳ ԱԱ ապրանքային դիրքերի նկարագրություններում՝ համապատասխան բացառումներով եւ վերապահումներով:

Այսպիսով, պետական գրանցման ենթակա չեն Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում թվարկված՝ 2915, 2916, 2917, 2918 դիրքերում նշված հետեւյալ ենթադիրքերի աղերը եւ բարդ եթերները՝

2915 12 000 0, 2915 13 000 0, 2915 24 000 0, աղեր եւ բարդ եթերներ՝ 2915 29 000 0, 2915 31 000 0, 2915 32 000 0, 2915 33 000 0, 2915 36 000 0-ից, աղեր եւ բարդ եթերներ՝ 2915 39 000 0, աղեր եւ բարդ եթերներ՝ 2915 40 000 0-ից, աղեր եւ բարդ եթերներ՝ 2915 50 000 0-ից, աղեր եւ բարդ եթերներ՝ 2915 60 110 0, 2915 60 190 0-ից, աղեր եւ բարդ եթերներ՝ 2915 60 900 0, աղեր եւ բարդ եթերներ՝ 2915 70 000 0-ից, աղեր եւ բարդ եթերներ՝ 2915 90 000 0-ից,

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ 73 որոշման խմբագրությամբ)

ակրիլաթթվի աղեր՝ 2916 11 000 0-ից, ակրիլաթթվի բարդ եթերներ՝ 2916 12 000 0, աղեր՝ 2916 13 000 0-ից, բարդ եթերներ՝ 2916 14 000 0, աղեր եւ բարդ եթերներ՝ 2916 15 000 0-ից, աղեր եւ բարդ եթերներ՝ 2916 19 100 0-ից, աղեր եւ բարդ եթերներ՝ 2916 31 000 0-ից (բացառությամբ սննդային հավելումներ հանդիսացողներից (պատրաստողի (արտադրողի) փաստաթղթերի համաձայն), աղեր՝ 2916 34 000 0-ից, բարդ եթերներ՝ 2916 39 100 0, աղեր եւ բարդ եթերներ 2916 39 900 0-ից,

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 36, 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ 73 որոշումների խմբագրությամբ)

աղեր եւ բարդ եթերներ՝ 2917 11 000 0-ից, աղեր եւ բարդ եթերներ՝ 2917 12 000 0-ից, աղեր եւ բարդ եթերներ՝ 2917 13 900 0-ից, աղեր եւ բարդ եթերներ՝ 2917 19 -ից (աղեր եւ բարդ եթերներ՝ 2917 19 100 0-ից եւ 2917 19 900 0-ից), 2917 32 000 0, 2917 33 000 0, 2917 34 100 0, 2917 34 900 0-ից, աղեր՝ 2917 36 000 0, 2917 37 000-ից, աղեր եւ բարդ եթերներ՝ 2917 39-ից (տետրաբրոմֆտալաթթվի բարդ եթեր կամ անհիդրիդ՝ 2917 39 200 0-ից, աղեր եւ բարդ եթերներ՝ 2917 39 950 0-ից),

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ 73 որոշման խմբագրությամբ)

աղեր եւ բարդ եթերներ՝ 2918 11 000 0-ից, աղեր եւ բարդ եթերներ՝ 2918 13 000 0-ից, աղեր եւ բարդ եթերներ՝ 2918 15 000 0-ից, աղեր եւ բարդ եթերներ՝ 2918 16 000 0-ից, աղեր եւ բարդ եթերներ՝ 2918 19-ից (աղեր եւ բարդ եթերներ՝ 2918 19 300 0-ից, աղեր եւ բարդ եթերներ՝ 2918 19 980 0), աղեր՝ 2918 21 000 0-ից, աղեր եւ բարդ եթերներ՝ 2918 22 000 0, 2918 23 000 0-ից, աղեր եւ բարդ եթերներ՝ 2918 29 000 0-ից. աղեր եւ բարդ եթերներ՝ 2918 30 000 0-ից, աղեր եւ բարդ եթերներ՝ 2918 91 000 0-ից, աղեր եւ բարդ եթերներ՝ 2918 99-ից:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ 73 որոշման խմբագրությամբ)

3302 10 ապրանքային դիրքից պետական գրանցման ենթակա են հոտավետ նյութերը եւ դրանց խառնուրդները, որոնք օգտագործվում են սննդի արդյունաբերության մեջ կամ ըմպելիքների արտադրության համար, ինչը ենթադրվում է՝ խմբի անվանումից ելնելով, նշված դիրքից այլ նյութեր պետական գրանցման ենթակա չեն:

3403 ապրանքային դիրքից պետական գրանցման ենթակա են բացառապես մանածագործական նյութերի, կաշվի եւ մորթու յուղային կամ ճարպային մշակման համար նախատեսված միջոցները:

(Ճանոթագրությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14–ի թիվ 432 որոշմամբ)

Բաժին III

Այն ապրանքների ՑԱՆԿԸ, որոնց համար չի պահանջվում ներկայացնել պետական գրանցման մասին վկայական՝ անկախ պետական գրանցման ենթակա ապրանքների ցանկի համաձայն՝ ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր տրամադրելուց <*>

<*> Սույն ցանկի գործողությունը տարածվում է այն ապրանքների վրա, որոնք ներառվել են Մաքսային միության մաքսային սահմանի վրա եւ մաքսային տարածքում սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա Ապրանքների միասնական ցանկի II բաժնում:

(Հղումն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17–ի թիվ 341 որոշմամբ)

- արտադրանքի նմուշներ, որոնք նախատեսված են պետական գրանցման

մասին վկայականի ձեւակերպման նպատակով սանիտարահամաճարակաբանական փորձաքննության անցկացման համար.

- ոչ ծխախոտային հումք, ոչ ծխախոտային նյութեր եւ բաղադրիչներ, որոնք օգտագործվում են ծխախոտային արտադրատեսակների արտադրության համար.

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

- ապրանքներ, որոնք նախատեսված են որպես լաբորատոր ռեակտիվներ, լաբորատոր սպասք օգտագործելու համար, (բացառությամբ ճառագայթային վտանգ ներկայացնող եւ բնական վարակիչ նյութ պարունակող ապրանքների).

- սննդային հումք (հավի, սագի ձու եւ այլն), որն օգտագործվում է սնուցող միջավայրերի պատրաստման համար.

պարբերությունը հանվել է: Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14 -ի թիվ 432 որոշում.

պարբերությունը հանվել է: Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշում.

- հուշանվերային արտադրանք, կոսմետիկական պարագաներ.

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

- արտադրանք, որն արտադրվել է Մաքսային միության տարածքում արտասահմանյան ընկերությունների պատվերներով եւ նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի համաձայն եւ նախատեսված է դրա սահմաններից դուրս իրացնելու համար.

- արտադրանքի ցուցահանդեսային եւ գովազդային նմուշներ, որոնք նախատեսված չեն Մաքսային միության մաքսային տարածքում իրացնելու եւ օգտագործելու համար.

- օգտագործված արտադրանք, այդ թվում՝ խանութների եւ կոմիսիոն վաճառքի

բաժինների միջոցով իրացվող արտադրանքը.

- հավաքածուներ, որոնք ստեղծվել են կրթական հաստատությունների աշակերտների եւ ուսանողների կողմից՝ նախատեսված ազգային եւ միջազգային փառատոներին մասնակցելու համար.

- պաշարներ, որոնք գերազանցում են Մաքսային միության մաքսային օրենսգրքի 363-րդ հոդվածի 4-րդ կետի առաջին մասին համապատասխան սահմանված նորմերը, որոնք ենթակա են մաքսային ընթացակարգերով ձեւակերպման.

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշմամբ)

- ապրանքներ, որոնք իրացվում են անմաքս առետորի խանութներում եւ ձեւակերպվում են «անմաքս առետոր» ռեժիմով.

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշմամբ)

- մարդասիրական օգնություն.

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշմամբ)

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի թիվ 64 որոշմամբ III բաժնում կատարված փոփոխությունները գործում են մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 31-ը:

- ապրանքներ, որոնք նախատեսված են 2014 թվականին Սոչի քաղաքում XXII ձմեռային Օլիմպիական խաղերի եւ XI ձմեռային Պարաօլիմպիական խաղերի կազմակերպման ու անցկացման համար եւ թույլատրված են հատուկ մաքսային ընթացակարգով ձեւակերպելու համար՝ Մաքսային միության հանձնաժողովի 2010

թվականի մայիսի 20-ի թիվ 329 որոշմամբ հաստատված՝ Հատուկ մաքսային ընթացակարգով ձեւակերպման համար թույլատրված ապրանքների կատեգորիաների եւ նման մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման պայմանների ցանկի 9-րդ կետին համապատասխան:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի թիվ 64 որոշմամբ)

Հաստատվել են

Մաքսային միության հանձնաժողովի 2010
թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշմամբ

**ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
(ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ) ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՄԻԱՍՆԱԿԱՆ
ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341, 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456, 2011 թվականի մարտի 2-ի թիվ 571, 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 662, 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 829, 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 889 որոշումների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34, 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125, 2012 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 208, 2013 թվականի հունվարի 15-ի թիվ 6 որոշումների խմբագրությամբ)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Կիրառության ոլորտը

1.1. Սույն Սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա ապրանքների միասնական սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջները (այսուհետ՝ Միասնական սանիտարական պահանջները) մշակվել են «Սանիտարական միջոցների մասին» Մաքսային միության 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագրի դրույթների իրականացման նպատակով՝ Եվրասիական տնտեսական համայնքի՝ պետության ղեկավարների մակարդակով Միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) 2009 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 28 որոշմանը համապատասխան:

1.2. Միասնական սանիտարական պահանջներով սահմանվում են Մաքսային միության մաքսային սահմանի վրա եւ մաքսային տարածքում սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա ապրանքների միասնական ցանկում (այսուհետ՝ Ապրանքների միասնական ցանկում) ներառված՝ հսկողության ենթակա ապրանքների հիգիենիկ ցուցանիշները եւ անվտանգության նորմատիվները:

1.3. Միասնական սանիտարական պահանջների կատարումը պարտադիր է Մաքսային միության անդամ պետությունների գործադիր իշխանության մարմինների (այսուհետ՝ Կողմեր), տեղական ինքնակառավարման մարմինների, ցանկացած կազմակերպարարական ձեւի իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, ֆիզիկական անձանց համար:

1.4. Սույն Միասնական սանիտարական պահանջները խախտելու համար մեղավոր անձինք պատասխանատվություն են կրում՝ Կողմերի ազգային օրենսդրությանը համապատասխան:

1.5. Սանիտարական ոլորտը կարգավորող Կողմերի ազգային օրենսդրությունը պետք է ներդաշնակեցված լինի Միասնական սանիտարական պահանջների հետ:

(1.5 կետն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշմամբ)

Հոդված 2. Եզրույթները եւ սահմանումները

Սույն Միասնական սանիտարական պահանջներում կիրառվում են հետեւյալ եզրույթները եւ դրանց սահմանումները.

«Սանիտարահիգիենիկ հետազոտություն (փորձարկում)»՝ հսկողության վերցված այն ապրանքների մեկ կամ մի քանի բնութագրերի սահմանումը (քանակական կամ որակական), որոնք ենթակա են սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ գնահատման (փորձաքննության) (այսուհետ՝ գնահատման), որն անցկացվում է Կողմերի՝

հավատարմագրման (ատեստավորման) ազգային համակարգերում հավատարմագրված (ատեստավորված) ու Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Միասնական ռեեստրում ընդգրկված լաբորատորիաներում:

«Հետազոտությունների (փորձարկումների) արձանագրություն»՝ հսկողության վերցված ապրանքի հետազոտությունների (փորձարկումների), կիրառվող մեթոդաբանությունների, հետազոտությունների (փորձարկումների) միջոցների եւ պայմանների, դրանց արդյունքների մասին անհրաժեշտ տեղեկություններ պարունակող՝ սահմանված կարգով ձեւակերպված փաստաթուղթ:

«Հետազոտությունների (փորձարկումների (չափումների)) իրականացման մեթոդաբանություն»՝ գործողությունների եւ կանոնների ամբողջություն, որոնց կատարումն ապահովում է հետազոտությունների (փորձարկումների (չափումների)) արդյունքների ստացումը՝ որոշ սխալանքով:

«Տիպային նմուշ»՝ նույնատիպ արտադրանքի անվանացանկից ընտրված, մեկ արտադրողի կողմից մեկ տեխնոլոգիական գործընթացով պատրաստված, նույն հումքային եւ բաղադրիչային կազմն ու կիրառության ոլորտն ունեցող ներկայացուցչական օրինակ: Տիպային նմուշների քանակը պետք է լինի հետազոտությունների անցկացման համար հայտագրված արտադրանքի ցանկի 30 %-ից ոչ պակաս:

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշմամբ)

Սույն Միասնական սանիտարական պահանջներում հատուկ չսահմանված եզրույթներն օգտագործվում են «Մաքսային միության մաքսային սահմանը հատող անձանց եւ տրանսպորտային միջոցների, Մաքսային միության մաքսային սահմանով եւ Մաքսային միության մաքսային տարածքում տեղափոխվող՝ հսկողության վերցված ապրանքների նկատմամբ պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) իրականացման կարգի մասին» հիմնադրույթով, միջազգային այլ պայմանագրերով,

այդ թվում՝ Մաքսային միության եւ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում կնքված պայմանագրերով սահմանված իմաստներով:

Հոդված 3. Հսկողության վերցված ապրանքների անվտանգությանը ներկայացվող սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջները

3.1. Հսկողության վերցված ապրանքները չպետք է վնասակար ազդեցություն ունենան ներկայիս եւ ապագա սերունդների առողջության, քաղաքացիների գույքի, մարդու բնակավայրի եւ շրջակա միջավայրի վրա:

3.2. Սպառողի համար տեղեկությունները, ըստ բովանդակության եւ դրանց ներկայացման եղանակի, պետք է հնարավորություն տան նույնականացնելու ապրանքը եւ դրա պատրաստողին, բավարարեն ապրանքների մակնշմանը ներկայացվող պահանջները, որոնք սահմանված են Կողմերի նորմատիվ իրավական փաստաթղթերում եւ ապրանքի կոնկրետ տեսակի տեխնիկական կարգավորման ոլորտը կարգավորող նորմատիվ փաստաթղթերում:

Հոդված 4. Հսկողության վերցված ապրանքների գնահատման համար կիրառվող հետազոտությունների (փորձարկումների) մեթոդները

4.1. Միասնական սանիտարական պահանջներին հսկողության վերցված ապրանքների համապատասխանության գնահատման ժամանակ օգտագործվում են հետազոտությունների (փորձարկումների) նույն կամ համադրելի մեթոդները, որոնք ազգային մակարդակում սահմանված կարգով հաստատված են Կողմերի կողմից:

4.2. Հետազոտություններն անցկացվում են Կողմերի՝ հավատարմագրման (ատեստավորման) ազգային համակարգերում հավատարմագրված (ատեստավորված) եւ Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Միասնական ռեեստրում ընդգրկված լաբորատորիաների կողմից:

4.3. Եթե անվտանգության ցուցանիշի նորմատիվը սահմանված է՝ «չի

թույլատրվում», ապա պարտադիր է նշել համապատասխան ցուցանիշը սահմանելու համար պաշտոնապես թույլատրված ամենաքիչ զգայուն մեթոդի հայտնաբերման սահմանաչափը:

4.4. Կողմերի լիազոր մարմինները միմյանց տեղեկացնում են հետազոտությունների (փորձարկումների) անցկացման գնահատման համար կիրառվող մեթոդաբանությունների եւ հսկողության վերցված ապրանքների գնահատման համար կիրառվող՝ նորից ներդրված մեթոդաբանությունների մասին:

4.5. Անցկացված հետազոտությունների (փորձարկումների) արդյունքների հիման վրա կազմվում է հետազոտությունների (փորձարկումների) արձանագրությունը:

4.6. Հետազոտությունների իրականացման ժամանակ թույլատրվում է ապրանքների խմբից տիպային նմուշի օգտագործումը: Տիպային նմուշի սահմանման չափորոշիչները շարադրված են 2-րդ հոդվածում՝ «Եզրույթներ եւ սահմանումներ»: Տիպային նմուշի սահմանման լրացուցիչ չափորոշիչները, ըստ ապրանքների առանձին խմբերի, շարադրված են ապրանքների համապատասխան խմբի անվտանգության պահանջները ներառող՝ II գլխի համապատասխան բաժիններում: Եթե սահմանված չեն լրացուցիչ չափորոշիչներ՝ ըստ ապրանքների համապատասխան խմբի, ապա հետազոտողն առաջնորդվում է վերոնշյալ սահմանմամբ:

(4.6 կետն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18–ի թիվ 456 որոշմամբ)

Գլուխ II

Բաժին 1. Սննդամթերքի անվտանգությանը եւ սննդային արժեքին ներկայացվող պահանջներ

1. Սննդամթերքի անվտանգությանը եւ սննդային արժեքին ներկայացվող միասնական սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներ

1.1. Կիրառության ոլորտը

1. Անվտանգության սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջները (այսուհետ՝ Միասնական սանիտարական պահանջներ) տարածվում են սննդամթերքի վրա՝ Մաքսային միության Միասնական ԱՏԳ ԱԱ (այսուհետ՝ ՄՄ ԱՏԳ ԱԱ) ծածկագրերով ապրանքների դասակարգման համաձայն:

2. «Միասնական սանիտարական պահանջների մասին» սույն բաժինը մշակվել է Մաքսային Միության անդամ պետությունների օրենսդրության հիման վրա, ինչպես նաեւ սննդամթերքի անվտանգության ոլորտը կարգավորող միջազգային փաստաթղթերի օգտագործմամբ:

1.2. Եզրույթներ եւ սահմանումներ

3. «Միասնական սանիտարական պահանջների մասին» սույն բաժնում տվյալ փաստաթղթի նպատակներով օգտագործվում են հետեւյալ եզրույթներն ու սահմանումները.

1) «սննդամթերք»՝ մարդու կողմից սննդում օգտագործվող մթերքներ՝ բնական կամ վերամշակված, (այդ թվում՝ մանկական սննդամթերք, դիետիկ մթերքներ եւ այլ մասնագիտացված մթերքներ), տարաների մեջ շալցված խմելու ջուր (շալցված խմելու ջուր), ալկոհոլային արտադրանք (այդ թվում՝ գարեջուր), ոչ ալկոհոլային ընպելիքներ, մաստակ, ինչպես նաեւ պարենային հումք, սննդային հավելումներ եւ կենսաբանորեն ակտիվ սննդային հավելումներ: Տարաների մեջ շալցված խմելու ջրին (շալցված խմելու ջրին) ներկայացվող պահանջները սահմանվում են

միասնական սանիտարական պահանջների մյուս բաժիններում.

2) «կենսաբանորեն ակտիվ սննդային հավելումներ (այսուհետ՝ ԿԱՀ)»՝ բնական ծագման կամ դրանց նույնական արհեստական ծագման նյութեր եւ (կամ) կենսաբանորեն ակտիվ նյութեր պարունակող մթերքներ (դրանց խտանյութերը), ինչպես նաեւ պրոբիոտիկային բաղադրիչներ եւ պրոբիոտիկային միկրոօրգանիզմներ, որոնք նախատեսված են սննդի հետ օգտագործման համար՝ մարդու սննդակարգի օպտիմալացման նպատակով, եւ սննդի կամ դիետիկ սննդի միակ աղբյուրը չեն.

(2-րդ ենթակետը՝ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

3) «սննդային հավելում»՝ ցանկացած նյութ (կամ նյութերի խառնուրդ), որը մարդու կողմից սննդում չի օգտագործվում, նախատեսված է սննդամթերքի արտադրության պրոցեսում դրա բաղադրակազմի մեջ ներառելու համար՝ ելնելով տեխնոլոգիական նպատակից (ֆունկցիայից)՝ ներառյալ դրան որոշակի զգայորոշման (օրգանոլեպտիկ) հատկություններ վերագրելը եւ (կամ) որակի եւ անվտանգության պահպանումը սահմանված պիտանիության ժամկետի ընթացքում, ինչը կարող է կատարել տեխնոլոգիական մի քանի ֆունկցիա.

4) «մասնագիտացված սննդամթերք»՝ սննդամթերք՝ բնակչության տարբեր կատեգորիաների համար եւ (կամ) տարբեր ֆիզիոլոգիական վիճակների համար որոշակի քիմիական կազմով.

սպառման բավարար մակարդակ՝ սննդային եւ կենսաբանորեն ակտիվ նյութերի օրական սպառման մակարդակ, որը սահմանվում է հաշվարկային կամ փորձարարական եղանակով որոշվող մեծությունների կամ գործնականում առողջ մարդկանց խմբի (խմբերի) կողմից՝ սննդային եւ կենսաբանորեն ակտիվ նյութերի սպառման գնահատումների հիման վրա.

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշմամբ)

սպառման առավելագույն թույլատրելի մակարդակ՝ սննդային եւ

կենսաբանորեն ակտիվ նյութերի օրական սպառման ամենաբարձր մակարդակ, որը ընդհանուր բնակչության 18 տարեկանից բարձր գործնականորեն բոլոր անձանց առողջական վիճակի ցուցանիշների վրա անբարենպաստ ազդեցություններ առաջացնելու վտանգ չի ներկայացնում.

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշմամբ)

Ֆիզիոլոգիական պահանջմունքների նորմեր՝ մարդու գենոտիպում ֆիքսված ֆիզիոլոգիական եւ կենսաքիմիական պրոցեսների օպտիմալ իրականացումն ապահովող սննդային ու կենսաբանորեն ակտիվ նյութերի անհրաժեշտ ընդունման միջինացված մեծություն.

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշմամբ)

վաղ տարիքի երեխաներ՝ ծննդյան օրվանից մինչեւ երեք տարեկան երեխաներ.

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշմամբ)

4. Սույն բաժնում հատուկ չսահմանված եզրույթներն օգտագործվում են Մաքսային միության անդամ պետությունների ազգային օրենսդրությամբ, ինչպես նաեւ Մաքսային միության եւ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

1.3. Ընդհանուր դրույթներ

5. Սննդամթերքը պետք է բավարարի մարդու՝ անհրաժեշտ նյութերի եւ էներգիայի ֆիզիոլոգիական պահանջմունքները, համապատասխանի սննդամթերքին սովորաբար ներկայացվող պահանջներին՝ զգայորոշման եւ ֆիզիկաքիմիական ցուցանիշների առումով, եւ համապատասխանի նորմատիվ փաստաթղթերով սահմանված քիմիական, կենսաբանորեն ակտիվ նյութերի եւ դրանց միացությունների, միկրոօրգանիզմների ու ներկայիս եւ ապագա

սերունդների առողջության համար վտանգ ներկայացնող այլ օրգանիզմների թույլատրելի պարունակությանը ներկայացվող պահանջներին:

6. Սննդամթերքի ճառագայթային անվտանգության ցուցանիշները սահմանվում են Միասնական սանիտարական պահանջների 3-րդ հավելվածով:

7. Նոր տեսակի սննդամթերքի մշակման (հումքի ոչ ավանդական տեսակներից ստացված), սննդամթերքի պատրաստման, փաթեթավորման, պահպանման, փոխադրման նոր տեխնոլոգիական պրոցեսների (Մաքսային միության անդամ պետությունների տարածքում ավելի վաղ չօգտագործված) դեպքում անհատ ձեռնարկատերերը եւ իրավաբանական անձինք պարտավոր են հիմնավորել անվտանգությանը եւ սննդային արժեքին ներկայացվող պահանջները, պիտանիության ժամկետները, ինչպես նաեւ մշակել փորձարկումների մեթոդաբանությունները:

Նոր սննդամթերքի պատրաստումը Մաքսային միության անդամ պետությունների տարածքում, առաջին անգամ իրականացվող՝ սննդամթերքի ներմուծումը Մաքսային միության անդամ պետությունների տարածք թույլատրվում է միայն Միասնական սանիտարական պահանջներին դրանց համապատասխանությունը գնահատելուց հետո:

8. Ներկրվող սննդամթերքը ենթակա է Միասնական սանիտարական պահանջներին համապատասխանության գնահատման՝ մինչեւ դրա ներմուծումը Մաքսային միության անդամ պետությունների տարածք:

9. Մաքսային միության անդամ պետությունների տարածք մուտք գործող եւ շրջանառության մեջ գտնվող սննդամթերքին կից պետք է ներկայացվի դրանց անվտանգությունը հավաստող՝ արտադրողի (մատակարարի) փաստաթուղթը:

10. Միասնական սանիտարական պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հիման վրա՝ լիազոր մարմինների կողմից տրվում է արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հավաստող փաստաթուղթ:

11. Բուսական ծագման պարենային հումքի համար պարտադիր է գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման ժամանակ թունաքիմիկատների

(պեստիցիդների), դրանց պահպանման համար շինությունների եւ տարողությունների ծխահարման (ֆումիգացիայի), պարենային պաշարների վնասատուների դեմ պայքարի կիրառման (կամ չկիրառման) մասին տեղեկությունների առկայությունը:

12. Կենդանական ծագման պարենային հումքի համար պարտադիր է կենդանիների եւ թռչունների էկոտպարազիտների, հիվանդությունների դեմ պայքարի, անասնապահական եւ թռչնաբուժական շինությունների, ձկների վերարտադրության համար՝ լճակային տնտեսությունների եւ ջրամբարների, մեղվաընտանիքների մշակման համար՝ թունաքիմիկատների կիրառման (կամ չկիրառման) մասին տեղեկությունների առկայությունը՝ նշելով թունաքիմիկատների անվանումները, ինչպես նաեւ անասունների, թռչունների, լճակի եւ ձկնաբուժարանում պահվող ձկների եւ մեղվաընտանիքների բուժման, հիվանդությունների բուժման ու պրոֆիլակտիկայի նպատակով նշելով անասնաբուժական պատրաստուկների անվանումները:

(12-րդ կետը՝ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

13. Չի թույլատրվում արտադրության ժամանակ թունաքիմիկատների եւ (կամ) անասնաբուժական պատրաստուկների կիրառման (կամ չկիրառման) մասին տեղեկություններ չպարունակող բուսական կամ կենդանական ծագման պարենային հումքի ներմուծումը եւ այն շրջանառության մեջ դնելը:

14. Թռչնի մսեղիքի մշակման համար չի թույլատրվում օգտագործել խմելու ջրի համար սահմանված պահանջները գերազանցող կոնցենտրացիաներով քլոր պարունակող լուծույթներ:

15. Պարենային հումքը եւ սննդամթերքը պետք է սննդամթերքի հետ շփման համար թույլատրված նյութերով կշռաճրարված եւ փաթեթավորված լինեն այնպիսի եղանակներով, որոնք թույլ կտան ապահովել դրանց որակի եւ անվտանգության պահպանումը դրանց պահպանման, տրանսպորտային փոխադրման ու իրացման ժամանակ:

16. Չի թույլատրվում թռչնի մսի, բացի պաղեցրածից, մեխանիկական ոսկրահանման ենթարկված թռչնի մսի եւ թռչնի մսից սոսնձանյութ (կոլլագեն) պարունակող հումքի օգտագործումը մանկական սննդամթերքի արտադրության համար (տարիքային բոլոր խմբերի համար, այդ թվում՝ մանկական կազմակերպված կոլեկտիվների համար), դիետիկ (բուժիչ եւ պրոֆիլակտիկ) սննդի, հղի եւ կերակրող կանանց սննդի համար մասնագիտացված սննդամթերքի, թռչնի մսից դելիկատեսային արտադրանքի (պաստրոմա, հում ապխտած եւ հում ապխտած-ծխահարված արտադրատեսակների) համար: Չի թույլատրվում ջերմային մշակում չանցած թռչնի մսի, բացի պաղեցրածից, օգտագործումը թռչնի մսից եւ թռչնի մսի սննդամթերքից պաղեցրած բնական կիսաֆաբրիկատների արտադրության համար:

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

1.4. Սննդամթերքի մակնշմանը ներկայացվող ընդհանուր պահանջներ

17. Սննդամթերքի մակնշումը պետք է համապատասխանի Մաքսային միության անդամ պետությունների ազգային օրենսդրությանը:

18. Սննդամթերքի առանձին տեսակների համար (մանկական, դիետիկ եւ մասնագիտացված սննդամթերք, պրոբիոտիկ մթերքներ, սննդային հավելումներ, կենսաբանորեն ակտիվ սննդային հավելումներ, գենային ինժեներիայի եղանակով ձեւափոխված օրգանիզմների (այսուհետ՝ ԳՁՕ) օգտագործմամբ ստացված բաղադրիչներ պարունակող սննդամթերք եւ այլն) նշվում են՝

- կիրառման ոլորտը (մանկական, դիետիկ եւ մասնագիտացված սննդամթերքի, սննդային հավելումների, բուրավետիչների, կենսաբանորեն ակտիվ սննդային հավելումների համար).

- սննդամթերքի բաղադրության մեջ մտնող բաղադրիչների անվանումները, սննդային հավելումները, միկրոբային կուլտուրաները, մակարդները եւ նյութերը, որոնք օգտագործվում են սննդամթերքի հարստացման համար. սննդային ԿԱՀ-ի եւ կենսաբանորեն ակտիվ բաղադրիչների համար հարստացված մթերքների դեպքում

նշվում են նաև Մաքսային միության անդամ պետությունների ազգային օրենսդրությամբ սահմանված տոկոսները՝ օրական ֆիզիոլոգիական պահանջմունքի հաշվարկով, եթե նման պահանջմունք սահմանված է.

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

- խորհուրդներ՝ օգտագործման, կիրառման վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում՝ դրանց օգտագործման հակացուցումները.

- կենսաբանորեն ակտիվ սննդային հավելումների համար պարտադիր է նշել հետեւյալ տեղեկությունը՝ «Դեղամիջոց չէ».

- ԳՁՕ-ի կիրառմամբ ստացված, այդ թվում՝ դեզօքսիռիբոնուկլեինաթթու (ԴՆԹ) եւ սպիտակուց չպարունակող սննդամթերքի համար պարտադիր է նշել հետեւյալ տեղեկությունները՝ «գենետիկորեն ձեւափոխված արտադրանք» կամ «գենային ինժեներիայի եղանակով ձեւափոխված օրգանիզմներից ստացված արտադրանք» կամ «արտադրանքը պարունակում է գենային ինժեներիայի եղանակով ձեւափոխված օրգանիզմների բաղադրիչներ» (սննդամթերքում ԳՁՕ-ի կիրառմամբ ստացված բաղադրիչների 0,9% եւ ավելի քիչ պարունակությունը համարվում է պատահական կամ խառնուկ, որը տեխնիկապես հնարավոր չէ վերացնել, եւ ԳՁՕ-ի բաղադրիչների նման քանակություն պարունակող սննդամթերքը չի դասվում ԳՁՕ-ի կիրառմամբ ստացված բաղադրիչներ պարունակող սննդամթերքի կատեգորիային).

- գենային ինժեներիայի եղանակով ձեւափոխված միկրոօրգանիզմներից (մանրէներից, խմորասնկերից եւ միցելային սնկերից, որոնց գենետիկ նյութը փոփոխված է գենային ինժեներիայի մեթոդի կիրառմամբ) (այսուհետ՝ ԳՁՄ) կամ դրանց օգտագործմամբ ստացված սննդամթերքի համար պարտադիր է նշել հետեւյալ տեղեկությունները՝

- կենդանի ԳՁՄ պարունակող սննդամթերքի համար՝ «Արտադրանքը պարունակում է գենային ինժեներիայի եղանակով ձեւափոխված միկրոօրգանիզմներ».

- անկենսունակ ԳՁՄ պարունակող սննդամթերքի համար՝ «Արտադրանքն ստացվել է գենային ինժեներիայի եղանակով ձեւափոխված միկրոօրգանիզմների օգտագործմամբ».

- տեխնոլոգիական ԳՁՄ-ից ազատված կամ ԳՁՄ-ից ազատված բաղադրիչների օգտագործմամբ ստացված սննդամթերքի համար՝ «Արտադրանքը պարունակում է գենային ինժեներիայի եղանակով ձեւափոխված միկրոօրգանիզմների օգտագործմամբ ստացված բաղադրիչներ».

- այն սննդամթերքի համար, որն արտադրվել է այնպիսի տեխնոլոգիաների կիրառությամբ, որն ապահովում է դրանց պատրաստումն առանց թունաքիմիկատների եւ բույսերի պաշտպանության մյուս միջոցների, քիմիական պարարտանյութերի, կենդանիների աճի խթանիչների եւ բտման, հակաբիոտիկների, հորմոնալ եւ անասնաբուժական պատրաստուկների, ԳՁՕ-ի օգտագործմամբ ստացված եւ իոնացնող ճառագայթման կիրառմամբ մշակման չենթարկված եւ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխանող հումքից, նշվում է հետեւյալ տեղեկությունը՝ «օրգանական մթերք».

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

- մարզիկների սննդի համար նախատեսված մասնագիտացված սննդամթերքի համար, որն ունի որոշակի սննդային ու էներգետիկ արժեք եւ ուղղորդված արդյունավետություն, որը բաղկացած է նուտրիենտների հավաքածուից կամ ներկայացված է դրանց առանձին տեսակներով Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, նշվում է հետեւյալ տեղեկությունը՝ «մասնագիտացված սննդամթերք՝ մարզիկների սննդի համար».

- մարզիկների սննդի համար մասնագիտացված սննդամթերքի համար սպառողական փաթեթվածքի վրա լրացուցիչ նշվում են հետեւյալ տեղեկությունները՝ տվյալներ՝ մթերքի սննդային եւ էներգետիկ արժեքի մասին, Մաքսային միության անդամ պետությունների ազգային օրենսդրությամբ սահմանված չափը՝ օրական

Ֆիզիոլոգիական պահանջմունքները բավարարելու համար. խորհուրդ տրվող դոզավորումները, պատրաստման եղանակները (անհրաժեշտության դեպքում), օգտագործման պայմանները եւ տեւողությունը.

- պարենային հումքի եւ սննդամթերքի սննդային եւ էներգետիկ արժեքի մակնշման ժամանակ սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի պարունակության եւ էներգետիկ արժեքի մասին տվյալները ներկայացվում են այն դեպքում, երբ դրանց քանակը 100 գ (մլ) պարենային հումքի կամ սննդամթերքի մեջ գերազանցում է 2 %-ը, հանքային նյութերի եւ վիտամինների դեպքում՝ Մաքսային միության անդամ պետությունների ազգային օրենսդրությամբ սահմանված՝ խորհուրդ տրվող օրական ֆիզիոլոգիական պահանջմունքի 5 %-ը: Համային մթերքների համար (սուրճ, թեյ, քացախ, համեմանքներ, կերակրի աղ եւ այլն) սննդային եւ էներգետիկ արժեքի մակնշում չի պահանջվում.

- սպանդային կենդանիների մսի եւ թռչնի մսի, սպանդային կենդանիների եւ թռչնի սննդային ենթամթերքի, ինչպես նաեւ սննդամթերքի բոլոր տեսակների բաղադրության մեջ մտնող՝ սպանդային կենդանիների մսի եւ թռչնի մսի համար ջերմային մշակման տեսակը նշվում է՝ «պաղեցրած» (պաղեցրած մսին են դասվում՝ մորթից անմիջապես հետո ստացված՝ սպանդային կենդանիների միսը եւ դրանցից ստացված ենթամթերքը, որոնք մկանների խորքում 0°C-ից մինչեւ +4°C ջերմաստիճանը ենթարկվել են պաղեցման, ունեն չորացման կեղեւ ունեցող չխոնավեցրած մակերես. մորթից անմիջապես հետո ստացված թռչնի միսը եւ դրանցից ստացված ենթամթերքը, որոնք ենթարկվել են պաղեցման մկանների խորքում 0°C-ից մինչեւ +4°C ջերմաստիճանը).

- այլ տեղեկություններ՝ համաձայն Մաքսային միության անդամ պետությունների ազգային օրենսդրության:

19. «Դիետիկ», «բուժիչ», «պրոֆիլակտիկ», «մանկական», «պրոբիոտիկ» կամ դրանց համարժեք եզրույթների օգտագործումը սննդամթերքի անվանումներում, սպառողական փաթեթվածքի վրա նշված տեղեկություններում եւ մթերքի գովազդային թերթ-ներդրակներում կատարվում է Մաքսային միության անդամ

պետությունների ազգային օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան:

20. «Էկոլոգիապես մաքուր մթերք» եզրույթի օգտագործումը մասնագիտացված սննդամթերքի անվանման մեջ եւ սպառողական փաթեթվածքի վրա տեղեկություններ նշելիս, ինչպես նաեւ օրենսդրական ու գիտական հիմնավորում չունեցող այլ եզրույթների օգտագործումը չի թույլատրվում:

1.5. Սննդամթերքի անվտանգությանը եւ սննդային արժեքին ներկայացվող հիգիենիկ պահանջներ

21. Միասնական սանիտարական պահանջներով սահմանվում են սննդամթերքի անվտանգությանը եւ մարդու՝ հիմնական սննդանյութերի եւ էներգիայի ֆիզիոլոգիական պահանջմունքները բավարարելու դրանց ունակությանը ներկայացվող հիգիենիկ պահանջները:

22. Սննդամթերքի զգայորոշման հատկությունները չպետք է փոփոխվեն պահպանման, տրանսպորտային փոխադրման (փոխադրման) ժամանակ եւ իրացման գործընթացում:

23. Սննդամթերքը չպետք է ունենա մթերքը փչացած լինելու մասին վկայող կողմնակի հոտեր, համեր, բաղադրամասեր, գույնի, հոտի եւ կազմության (կոնսիստենցիայի) փոփոխություն:

24. Կենդանական ծագման պարենային հումքի պատրաստման ժամանակ չի թույլատրվում անասնաբուժական պատրաստուկների (կերային հավելումներ, կենդանիների աճի խթանիչներ, այդ թվում՝ հորմոնալ պատրաստուկներ, անասնաբուժական դեղամիջոցներ՝ ներառյալ հակաբիոտիկները), կենդանիների, թռչունների մշակման համար պատրաստուկների, ինչպես նաեւ դրանց պահպանման համար շինությունների մշակման համար պատրաստուկների օգտագործումը, որոնց կիրառումը չի թույլատրվում՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

(24-րդ կետը՝ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

25. Բուսական ծագման պարենային հումքի պատրաստման ժամանակ չի թույլատրվում այն թունաքիմիկատների օգտագործումը, որոնց կիրառումն արգելված է՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

(25-րդ կետը՝ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

26. Սննդամթերքի անվտանգությունը մանրէաբանական եւ մակաբուծական, ինչպես նաեւ քիմիական աղտոտիչների պարունակության առումով որոշվում է անվտանգության՝ սահմանված հիգիենիկ նորմատիվներին դրանց համապատասխանությամբ:

27. Սննդամթերքի, այդ թվում՝ կենսաբանորեն ակտիվ սննդային հավելումների՝ խառը բաղադրությամբ, անվտանգության եւ սննդային արժեքի ցուցանիշները որոշվում են՝ ըստ հումքի հիմնական տեսակի (տեսակների) ինչպես զանգվածային մասում, այնպես էլ ըստ նորմավորման ենթակա աղտոտող նյութերի (կոնտամինանտների) թույլատրելի մակարդակների:

28. Չոր, խտացրած կամ նոսրացրած սննդամթերքի անվտանգության ցուցանիշները որոշվում են սկզբնական մթերքի հաշվարկով՝ հաշվի առնելով չոր նյութերի պարունակությունը հումքի եւ վերջնական մթերքի մեջ:

29. Հիգիենիկ նորմատիվները տարածվում են պոտենցիալ վտանգավոր քիմիական միացությունների եւ կենսաբանական օբյեկտների վրա (միկրոօրգանիզմներ եւ դրանց թունավոր նյութեր (տոքսիններ), մակաբույծներ, միաբջիջներ), որոնց առկայությունը սննդամթերքում չպետք է գերազանցի հետազոտվող մթերքի որոշակի զանգվածի (ծավալի) համար դրանց պարունակության սահմանված թույլատրելի մակարդակները:

30. Սննդամթերքում վերահսկվում է մարդու առողջության համար վտանգ ներկայացնող՝ նորմավորման ենթակա քիմիական աղտոտիչների

պարունակությունը:

31. Թունավոր տարրերի պարունակության թույլատրելի մակարդակներին ներկայացվող հիգիենիկ պահանջները սահմանվում են պարենային հումքի եւ սննդամթերքի բոլոր տեսակների համար:

32. Աֆլատոքսին B₁, դեզօքսինիվալենոլ (վոմիտոքսին), զեարալենոն, ֆումոնիզին, T-2 տոքսին, պատուլին միկոտոքսինների պարունակությունը վերահսկվում է բուսական ծագման պարենային հումքի եւ սննդամթերքի մեջ, իսկ աֆլատոքսին M₁-ը՝ կաթի եւ կաթնամթերքի մեջ: Առաջնային աղտոտիչներ են համարվում՝ հացահատիկային մթերքների համար՝ դեզօքսինիվալենոլը, ընկույզների եւ ձիթատուների սերմերի համար՝ աֆլատոքսին B₁-ը, մրգերի եւ բանջարեղենի վերամշակման արդյունքում ստացված մթերքների համար՝ պատուլինը:

33. Օխրատոքսին A-ի պարունակությունը վերահսկվում է պարենային հացահատիկի եւ ալրադացածավարային արտադրատեսակներում, ֆումինոզինների պարունակությունը՝ եգիպտացորենի եւ դրա վերամշակման արդյունքում ստացված մթերքներում:

34. Մանկական եւ դիետիկ սննդամթերքում անթույլատրելի է միկոտոքսինների առկայությունը:

35. Պարենային հումքի եւ սննդամթերքի բոլոր տեսակներում վերահսկվում են թունաքիմիկատները՝ համընդհանուր աղտոտիչները՝ հեքսաքլորցիկլոհեքսան (ալֆա, բետա, գամմա-իզոմերներ), ԴԴՏ-ն ու դրա մետաբոլիտները: Հացահատիկներում եւ վերամշակման արդյունքում ստացված մթերքներում վերահսկվում են նաեւ սնդիկօրգանական թունաքիմիկատները, 2,4-Դ թթուն, դրա աղերը եւ եթերները: Ձկան մեջ եւ վերամշակման արդյունքում ստացված մթերքներում վերահսկվում են նաեւ 2,4-Դ թթուն, դրա աղերը եւ եթերները:

36. Թունաքիմիկատների, բացառությամբ 35-րդ կետում նշված համընդհանուր աղտոտիչների, մնացորդային քանակները որոշվում են դրանց կիրառության վերաբերյալ տեղեկությունների հիման վրա, որոնք տրամադրվում են սննդամթերքն

արտադրողի (մատակարարի) կողմից՝ դրանք Մաքսային միության անդամ պետությունների տարածք ներմուծման կամ Մաքսային միության անդամ պետությունների ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով վերամշակման համար մատակարարման ժամանակ:

Գյուղատնտեսության մեջ կիրառվող թունաքիմիկատների մնացորդային քանակների պարունակության մակարդակների գնահատումն իրականացվում է շրջակա միջավայրի օբյեկտներում թունաքիմիկատների պարունակության հիգիենիկ նորմատիվներին համապատասխան:

37. Դիօքսինները նորմավորվում են սննդամթերքի բոլոր խմբերում: Մանկական սննդամթերքում դիօքսինների առկայությունն անթույլատրելի է: Դիօքսինների պարունակության նկատմամբ հսկողությունն իրականացվում է պատրաստողի (մատակարարի, ներմուծողի) կողմից եւ (կամ) վերահսկողության (հսկողության) լիազոր մարմնի կողմից միայն էկոլոգիական իրավիճակի վատթարացման դեպքում՝ կապված վթարների, տեխնածին եւ բնական աղետների հետ, որոնց հետեւանքով առաջանում եւ շրջակա միջավայր են ներթափանցում դիօքսիններ, եւ պարենային հումքի մեջ դրանց հնարավոր առկայության մասին հիմնավորված ենթադրության դեպքում:

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18–ի թիվ 456 որոշման խմբագրությամբ)

16	Բալբա անտառային	Malva sylvestris L. (cyn. Malva Mauritiana) cem. Malvaceae	նույնը
17	Պատրինջ	Althaea officinalis cem. Lamiaceae	Պատրինջի տերեւները (Melissae folium)
18	Անանուխ կիտրոնային	Althaea officinalis cem. Lamiaceae	նույնը
19	Անանուխ պղպեղային	Mentha piperita cem. Lamiaceae	Անանուխ պղպեղայինի տերեւները (Menthae piperitae folium)
20	Չիչխան	Hippophae rhamnoides L. cem. Elaeagnaceae	Չիչխանի տերեւները (Hyppophaës folium)
21	Եզան լեզու մեծ	Plantago major L. cem. Plantaginaceae	Եզան լեզվի տերեւները (Plantaginis herba)
22	Եզան լեզու միջին	Plantago media L. cem. Plantaginaceae	նույնը
23	Եզան լեզու նշտարածել	Plantago lanceolate L. cem. Plantaginaceae	նույնը
24	Եզան լեզու	Plantago psyllium L. cem. Plantaginaceae	Սերմերի կճեպը (Plantaginis tunica semen)
25	Թրնջենի դառը	Citrus aurantium cem. Rutaceae	Թրնջենու կեղևը
26	Երիցուկ դեղատնային	Matricaria recutita L. cem. Chamomilla L.)	Երիցուկի ծաղիկները (Chamomillae flos)
27	Սեւ հաղարջ	Ribes nigrum L. cem. Saxifragaceae	Հաղարջի տերեւները (Ribis nigri folium)
28	Ուրց հոտավետ	Thymus vulgaris L. (Thymus marschallianus)cem. Lamiaceae	Ուրցի տերեւները (Thymi herba)
29	Ուրց (խոռն)	Thymus serpyllum cem. Lamiaceae	նույնը
30	Ուրց սողացող	նույնը	նույնը
31	Քիմոն սովորական	Carum carvi, cem. Umbellifere	Քիմոնի պտուղները (Cari carvi fructus)
32	Ռազինա սովորական	Foeniculum vulgare Mill cem. Umbelliferae Umbelliferae	Ռազինայի պտուղները (Foeniculi fructus)
33	Սամիթ դեղատնային	Foeniculum vulgare Mill cem. Umbelliferae Umbelliferae	նույնը
34	Հապալաս	Vaccinium myrtillus L. cem. Vacciniaceae	Հապալասենու պտուղները (Myrtilli fructus)
35	Մասուր	Rosa cem. Rosaceae	Մասրենու պտուղները (Rosae

			fructus)
36	Հապալաս (կարմիր)	Vaccinium vitis idaea L. сем. Vacciniaceae	Հապալասենու պտուղները (Vaccini fructus)

Հավելված 11

**ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՎԱՂ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ՝
ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄՆՆԴԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ
ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴԻԵՏԻԿ (ԲՈՒՃԱԿԱՆ ՈՒ
ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ) ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ
ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԻՏԱՄԻՆՆԵՐԻ,
ՎԻՏԱՄԻՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՆՔԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՎԵՐԸ**

(ավելացվել են Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշմամբ, Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 889 որոշման խմբագրությամբ)

Անվանումը	Ձեւը
Վիտամիններ	
Վիտամին A	Ռետինոլ, ռետինոլ ացետատ, ռետինոլ պալմիտատ, բետա-կարոտին
Կարոտինոիդներ	
բետա-կարոտին	բետա-կարոտին
Լիկոպին	լիկոպին
Լյուտեին	Լյուտեին եւ դրա եթերները
Ջեաքսանտին	զեաքսանտին
Աստաքսանտին	աստաքսանտին
Վիտամին D	D2 (էրգոկալցիֆերոլ), D3 (խոլեկալցիֆերոլ)
Վիտամին E	D-ալֆա-տոկոֆերոլ, DL-ալֆա-տոկոֆերոլ, D-ալֆա-տոկոֆերոլ ացետատ, DL-ալֆա-տոկոֆերոլ ացետատ, DL-ալֆա-տոկոֆերոլ պալմիտատ, D-ալֆա-տոկոֆերոլ սուկցինատ, DL-ալֆա-տոկոֆերոլ սուկցինատ, D-գամմա-տոկոֆերոլ, DL-գամմա-տոկոֆերոլ
Վիտամին B1	Թիամինի հիդրոքլորիդ, թրամինի բրոմիդ, թիամինի մոնոնիտրատ
Վիտամին B2	Ռիբոֆլավին. ֆլավինմոնոնուկլեոտիդի նատրիումական աղ (ռիբոֆլավին 5'- նատրիումի ֆոսֆատ)
Վիտամին PP (նիացին)	Նիկոտինամիդ, նիկոտինաթթու եւ դրա աղերը

Վիտամին B6	Պիրիդոքսինի հիդրոքլորիդ, պիրիդոքսին-5-ֆոսֆատ, պիրիդոքսալ, պիրիդոքսամին, պիրիդոքսամին-5'-ֆոսֆատ, պիրիդոքսինդիպամիտատ
Պանտոտենային թթու	Կալցիումի D-պանտոտենատ, նատրիումի D-պանտոտենատ, դեկսպանտենոլ
Վիտամին B12	Ցիանոկոբալամին, մեթիլկոբալամին, հիդրոքսոկոբալամին
Ֆոլիաթթու	Ֆոլիաթթու (N-պտերոիլ-L-գլուտամինաթթու), կալցիումի L-մեթիլֆոլատ
Վիտամին C	L - ասկորբինաթթու, նատրիումի L - ասկորբատ, կալիումի L - ասկորբատ, կալցիումի L - ասկորբատ, 6-պալմիթիլ-L-ասկորբինաթթու (ասկորբիլ պալմիտատ)
Վիտամին K	K1 (ֆիլոլիսինոն, ֆիտոմենադիոն), K2 (մենախինոն)
Բիոտին	D-բիոտին
Խոլին	Խոլին քլորիդ, խոլին ցիտրատ, խոլին բիտարտրատ
Ինոզիտ	Ինոզիտ
Կարնիտին	L-կարնիտին, L-կարնիտին հիդրոքլորիդ, ացետիլ-L-կարնիտին, L-կարնիտին տարտրատ, L-կարնիտին քլորիդիդրատ
Կոէնզիմ Q10	Ուբիսինոն
Լիպոյաթթու	ալֆա-լիպոյաթթու
Մեթիլմետիոնինսուլֆոնիում (վիտամին U)	Մեթիլմետիոնինսուլֆոնիում քլորիդ
Օրոտաթթու	Կալիումի օրոտատ, մագնեզիումի օրոտատ, ցինկի օրոտատ, կալցիումի օրոտատ
Պարաամինոբենզոյաթթու	Պարաամինոբենզոյաթթու
<p>Հանքային նյութեր (Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 889 որոշման խմբագրությամբ)</p>	
Կալցիում	Կալցիում ածխաթթվային (կալցիումի կարբոնատ), կալցիումի քլորիդ, կիտրոնաթթվի կալցիումական աղեր, կալցիումի քլորիդ, կալցիումի գլուկոնատ, կալցիումի գլիցերոֆոսֆատ, կալցիումի լակտատ, օրթոֆոսֆորական թթվի կալցիումական աղեր (կալցիումի օրթոֆոսֆատներ), կալցիումի սուլֆատ, կալցիումի հիդրօքսիդ, կալցիումի օքսիդ, կալցիումի ցիտրատ-մալատ, կալցիումի մալատ
Նատրիում <1>	Նատրիումի բիկարբոնատ, նատրիումի կարբոնատ, նատրիումի ցիտրատ, նատրիումի քլորիդ, նատրիումի գլուկոնատ, նատրիումի լակտատ, նատրիումի հիդրօքսիդ, օրթոֆոսֆորական թթվի նատրիումական աղեր
Մագնեզիում	Մագնեզիումի ացետատ, մագնեզիումի կարբոնատ, կիտրոնաթթվի մագնեզիումական աղեր, մագնեզիումի քլորիդ, մագնեզիումի գլուկոնատ, օրթոֆոսֆորական թթվի մագնեզիումական աղեր, մագնեզիումի սուլֆատ, մագնեզիումի լակտատ, մագնեզիումի գլիցերոֆոսֆատ, մագնեզիումի ամինաթթվային կոմպլեքսներ, մագնեզիումի օքսիդ, մագնեզիումի հիդրօքսիդ,

	մագնեզիումի-կալիումի ցիտրատ
Կալիում	Կալիումի լակտատ, օրթոֆոսֆորական թթվի կալիումական աղեր, կալիումի գլյուկոնատ, կալիումի գլիցերոֆոսֆատ, կալիումի քլորիդ, կալիումի ցիտրատ, կալիումի կարբոնատ, կալիումի բիկարբոնատ, կալիումի հիդրօքսիդ
Ֆոսֆոր	Ֆոսֆորական թթվի նատրիումական, կալիումական, կալցիումական եւ մագնեզիումական աղեր
Երկաթ	Երկաթի (II) գլյուկոնատ, երկաթի բիսգլիցինատ, երկաթի կարբոնատ (II), երկաթի (II) սուլֆատ, երկաթի (II) լակտատ, երկաթի (II) ֆումարատ, երկաթի (II, III) ցիտրատ, երկաթի (III) դիֆոսֆատ (պիրոֆոսֆատ), երկաթ տարրական (կարբոնիլային + էլեկտրոլիտային + ջրածին-վերականգնված), երկաթ (III) կիտրոնա-ամոնիումային (ամոնիումի-երկաթի ցիտրատ), երկաթի (III) օրթոֆոսֆատ, երկաթի սուկցինատ, երկաթի (III) սախարատ, երկաթի ամինաթթվային կոմպլեքսներ, երկաթի (II) էթիլենդիամինտետրաքաղցախաթթվի նատրիումական կոմպլեքս, նատրիում-երկաթի դիֆոսֆատ
Պղինձ	Պղնձի կարբոնատ, պղնձի ցիտրատ, պղնձի գլյուկոնատ, պղնձի սուլֆատ, պղնձի լիզինային կոմպլեքս, պղնձի ամինաթթվային կոմպլեքսներ
Մանգան (II)	Մանգանի կարբոնատ, մանգանի քլորիդ, մանգանի ցիտրատ, մանգանի գլյուկոնատ, մանգանի սուլֆատ, մանգանի գլիցերոֆոսֆատ, մանգանի ամինաթթվային կոմպլեքսներ
Սելեն <2>	Նատրիումի սելենատ, նատրիումի սելենիտ, նատրիումի սելենիտ՝ միատեղակայված, սելենոլ հարստացված խմորասնկեր (<i>Saccharomyces</i>), L-սելենիտմետիոնին
Քրոմ	Քրոմի (III) քլորիդ, քրոմի (III) սուլֆատ, քրոմի նիկոտինատ, քրոմի պիկոլինատ, քրոմի ամինաթթվային կոմպլեքսներ
Մոլիբդեն	Ամոնիումի մոլիբդատ (VI), նատրիումի մոլիբդատ (VI)
Ցինկ	Ցինկի ացետատ, ցինկի բիսգլիցինատ, ցինկի կարբոնատ, ցինկի սուլֆատ, ցինկի քլորիդ, ցինկի ցիտրատ, ցինկի լակտատ, ցինկի գլյուկոնատ, ցինկի ամինաթթվային կոմպլեքսներ, ցինկի օքսիդ
Յոդ	Կալիումի յոդիդ, նատրիումի յոդիդ, կալիումի յոդատ, նատրիումի յոդատ, յոդկազեին
<p>Ծանոթագրություն.</p> <p><1> Միայն մարզիկների սննդի համար նախատեսված մասնագիտացված սննդամթերքի դեպքում.</p> <p><2> մարզիկների սննդի համար նախատեսված մասնագիտացված սննդամթերքի եւ չոր ու հեղուկ խառնուրդների բաղադրության մեջ դիետիկ (բուժական) նշանակությամբ մասնագիտացված սննդամթերքի դեպքում (այդ թվում՝ էնտերալ սնուցման համար):</p>	

**Բաժին 2. Մանկական ապրանքների տեսականուն ներկայացվող
անվտանգության պահանջները**

**ՄԱՆԿԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՍԱՆԻՏԱՐԱՎԱՄԱՃԱՐԱԿԱՐԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԻԳԻԵՆԻԿ ՄԻԱՍՆԱԿԱՆ
ՊԱՀԱՆՋՆԵՐ**

Սույն Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ միասնական պահանջներն ուղղված են երեխաների եւ դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգության ապահովմանը՝ մանկական բնակչության կյանքի ու առողջության պաշտպանության նպատակով, եւ դրանցով սահմանվում են քիմիական ու կենսաբանական անվտանգությանը ներկայացվող պահանջները՝ կախված արտադրանքի տեսակից:

Սույն Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ միասնական պահանջները չեն տարածվում այն արտադրանքի վրա, որն օգտագործվել կամ պատրաստվել է անհատական պատվերով, չի կիրառվում ըստ նշանակության:

Ուսումնասիրություններ անցկացնելիս հնարավոր է առանձնացնել տիպային նմուշ/ներկայացուցիչ: Տիպային նմուշն այն նմուշն է, որն ըստ նպատակային օգտագործման մեկ տեսակին պատկանող արտադրանք է ներկայացնում՝ նախատեսված է մեկ տարիքային խմբի համար՝ պատրաստված մեկ արտադրողի կողմից, միեւնույն նյութերից, նույն բաղադրատոմսով եւ արտադրանքի բացթողումը համակարգող նույն տեխնիկական փաստաթղթերով:

(Պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշմամբ)

Անվտանգության սույն Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ միասնական պահանջները տարածվում են մանկական ապրանքների տեսականու վրա՝ ապրանքների դասակարգման ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի համաձայն:

1. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾՃԱԿՆԵՐԻ ՏԱՐԲԵՐ ՏԵՍԱԿՆԵՐ ԵՎ ՆՈՒՅՆԱՆՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐ

(ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը՝ 4014-ից)

Ծծակների անվտանգությունը գնահատվում է՝ ըստ օրգանոլեպտիկ (հոտի, կողմնակի համի), սանիտարաքիմիական (հսկվող քիմիական նյութերի ցանկը սահմանվում է՝ կախված նյութի քիմիական բաղադրությունից), թունաբանահիգիենիկ (թունավորության ցուցիչ կամ տեղային, գրգռիչ ազդեցություն) անվտանգության ցուցանիշների:

1.1. Օրգանոլեպտիկ ցուցանիշներին ներկայացվող պահանջները

Նմուշի եւ ջրային լուծամզուկի հոտի ուժգնությունը չպետք է գերազանցի 1 բալլ: Չի թույլատրվում արտադրատեսակների ջրային լուծամզուկների համի առկայություն:

1.2. Սանիտարաքիմիական ցուցանիշներին ներկայացվող պահանջները

1.2.1. Ջրային լուծամզուկի pH-ի փոփոխությունը չպետք է գերազանցի +/- 1,0-ն:

1.2.2. Կաթի ծծակների եւ սիլիկոնային պոլիմերներից պատրաստված փուչ ծծակների փորձարկման ժամանակ քիմիական նյութերի միգրացիան չպետք է գերազանցի հետեւյալ նորմերը՝

կապար – չի թույլատրվում,

մկնդեղ – չի թույլատրվում,

ֆորմալդեհիդ – չի թույլատրվում,

մեթիլսպիրտ – չի թույլատրվում,

բութիլ-սպիրտ – չի թույլատրվում,

ֆենոլ – չի թույլատրվում,

ցինկ – 1,0 մգ/դմ³-ից ոչ ավելի,

հակաօքսիդիչ (ազիդոլ-2) – 2,0 մգ/դմ³-ից ոչ ավելի:

1.2.3. Լատեքսից կաթի ռետինե ձծակների եւ փուչ ձծակների փորձարկման ժամանակ քիմիական նյութերի միգրացիան չպետք է գերազանցի հետեւյալ նորմերը՝

կապար – չի թույլատրվում,

մկնդեղ – չի թույլատրվում,

հակաօքսիդիչ (ազիդոլ-2) – 2,0 մգ/դմ³-ից ոչ ավելի,

N-նիտրոզամին (հեռացում երկքլորմեթանով) – 10,0 մկգ/կգ-ից ոչ ավելի,

N-նիտրոզազոյացնող (հեռացում արհեստական խեժով) – 200,0 մկգ/կգ-ից ոչ ավելի,

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

ցիմատ (երկմեթիլերկթիոկարբամատի) – չի թույլատրվում,

ֆտալային անհիդրիդ – 0,2 մգ/դմ³-ից ոչ ավելի,

ֆենոլ – չի թույլատրվում:

1.3. Թունաբանահիգիենիկ ցուցանիշներին ներկայացվող պահանջները

1.3.1. Ծծակները եւ նույնանման արտադրատեսակները չպետք է տեղային, գրգռիչ ազդեցություն ունենան մաշկային ծածկույթի եւ լորձաթաղանթի վրա:

1.3.2. Թունավորության ցուցիչի արժեքը, որը որոշվում է ջրային միջավայրում (թորած ջուր), պետք է լինի 70–120% ներառյալ:

Թունավորության ցուցիչի արժեքը, որը որոշվում է լյունինեսցենտային մանրէաբանական թեստի միջոցով, պետք է լինի 20%-ից պակաս:

2. ՏԱԿԴԻՐՆԵՐ, ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՆՁԱՐՈՒՐՆԵՐ (ՍԱՆԻՏԱՐԱՀԻՓԻԵՆԻԿ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ԴՈՆԴՈՂԱԳՈՅԱՑՆՈՂ ԽՈՆԱՎԱԿԼԱՆԻՉ ՆՅՈՒԹԵՐ)

(ՄՄ ԱՏԳ ԱԱ ԾԱԾԿԱԳԻՐԸ 9619 00-ԻՑ)

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)

Տակդիրների, մանկական խանձարուրների անվտանգությունը գնահատվում է՝ ըստ օրգանոլեպտիկ (հոտի), սանիտարաքիմիական (հսկվող քիմիական նյութերի ցանկը սահմանվում է՝ կախված նյութի քիմիական կազմից), թունաբանահիգիենիկ (թունավորության ցուցիչ կամ տեղային, գրգռիչ ազդեցության ցուցիչ մաշկային ծածկույթի եւ լորձաթաղանթի վրա, զգայունացման հատկության ցուցիչ) եւ միկրոկենսաբանական ցուցանիշների:

2.1. Օրգանոլեպտիկ ցուցանիշներին ներկայացվող պահանջները

Նմուշի եւ ջրային լուծամզուկի հոտի ուժգնությունը չպետք է գերազանցի 1 բալլ:

2.2. Սանիտարաքիմիական ցուցանիշներին ներկայացվող պահանջները

2.2.1. Ջրային լուծամզուկի pH-ի փոփոխությունը պետք է լինի +/- 1,0-ից ոչ ավելի:

2.2.2. Արտադրատեսակներում պարունակվող վնասակար նյութերի արտազատումը չպետք է գերազանցի հետեւյալ արժեքները՝ ալրիլլոնիտրիլ – 0,02 մգ/դմ³, ացետալդեհիդ – 0,2 մգ/դմ³, ացետոն– 0,1 մգ/դմ³, բենզոլ– 0,01մգ/դմ³,

հեքսան– 0,1 մգ/դմ³, մեթիլսպիրտ – 0,2 մգ/դմ³, պրոպիլսպիրտ – 0,1 մգ/դմ³, տոլուոլ– 0,5 մգ/դմ³, ֆենոլ– 0,05 մգ/դմ³ կամ բոլոր ֆենոլների միագումարը – 0,1 մգ/դմ³, ֆորմալդեհիդ– 0,1 մգ/դմ³, էթիլացետատ– 0,1 մգ/դմ³, կապար– 0,03 մգ/դմ³, ցինկ– 1,0 մգ/դմ³, մկնդեղ– 0,05 մգ/դմ³ եւ քրոմ (III) եւ (VI) (գումարային)– 0,1 մգ/դմ³:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի նոյեմբերի 18–ի որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19–ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

Թաղանթանյութից (ցելյուլոզայից) եւ բամբակից պատրաստված սանիտարահիգիենիկ արտադրատեսակներում պարունակվող վնասակար նյութերի արտազատումը չպետք է գերազանցի հետեւյալ արժեքները՝ ացետալդեհիդ– 0,2 մգ/դմ³, ացետոն– 0,1 մգ/դմ³, բենզոլ– 0,01 մգ/դմ³, մեթիլսպիրտ– 0,2 մգ/դմ³, բուտիլ– սպիրտ– 0,5 մգ/դմ³, տոլուոլ– 0,5 մգ/դմ³, ֆորմալդեհիդ– 0,1 մգ/դմ³, էթիլացետատ– 0,1 մգ/դմ³, կապար– 0,03 մգ/դմ³, ցինկ– 1,0 մգ/դմ³, մկնդեղ– 0,05 մգ/դմ³ եւ քրոմ (III) եւ (VI) (գումարային)– 0.1 մգ/դմ³:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19–ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

2.3. Միկրոկենսաբանական անվտանգությանը ներկայացվող պահանջները

Սանիտարահիգիենիկ արտադրատեսակները, որոնք պարունակում են դոնդողագոյացնող խոնավակլանիչ նյութեր, պետք է համապատասխանեն միկրոկենսաբանական անվտանգության պահանջներին՝ 1–ին աղյուսակի համաձայն:

Մեկանգամյա օգտագործման սանիտարահիգիենիկ արտադրատեսակներին ներկայացվող միկրոկենսաբանական անվտանգության պահանջները

Արտադրանքի անվանումը	Միկրոօրգանիզմների ընդհանուր քանակությունը (մեզոֆիլներ, աերոբներ եւ ֆակուլտատիվ անաերոբներ), ԳԱՄ <*>	Խմորասնկեր, խմորանման սնկեր, բորբոսասնկեր 1 գ (1 սմ ²) արտադրանքում	Էնտերոմանրէների ընտանիքին պատկանող մանրէներ 1 գ (1 սմ ²) արտադրանքում	Ախտածին ստաֆիլոկոկեր 1 գ (1 սմ ²) արտադրանքում	Պսեւդոմոնաս աերոգինոզ 1 գ (1 սմ ²) արտադրանքում
մեկանգամյա օգտագործման սանիտարահիգիենիկ արտադրատեսակներ	10 ² -ից ոչ ավելի	բացակայություն	բացակայություն	բացակայություն	բացակայություն

<*> ԳԱՄ– գաղութ առաջացնող միավորներ 1 գ կամ 1 սմ² արտադրանքում:

2.4. Թունաբանահիգիենիկ ցուցանիշներին ներկայացվող պահանջները

2.4.1. Արտադրատեսակները չպետք է տեղային, գրգռիչ ազդեցություն ունենան մաշկային ծածկույթի եւ լորձաթաղանթի վրա:

2.4.2. Սանիտարահիգիենիկ արտադրատեսակները, որոնք պարունակում են դոնդողագոյացնող խոնավակլանիչ նյութեր, 24 ժամվա ընթացքում չպետք է ունենան զգայունացնող սեղմումային ազդեցություն:

2.4.3. Թունավորության ցուցիչի արժեքը, որը որոշվում է ջրային միջավայրում (թորած ջուր), պետք է լինի 70–120% ներառյալ:

Թունավորության ցուցիչի արժեքը, որը որոշվում է լյունինեսցենտային մանրէաբանական թեստի միջոցով, պետք է լինի 20%-ից պակաս:

3. ԽԱՂԱԼԻՔՆԵՐ, ԽԱՂԵՐ, ԴՐԱՆՑ ՄԱՍԵՐԸ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ, ԾԵՓՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԱԾՈՒԿՆԵՐ

(ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրերը՝ 3407 00 000 0, 3920–ից, 9503 00, 9504–ից)

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի օգոստոսի 17–ի որոշման,
Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի
16–ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)

Անվտանգության սույն պահանջները չեն տարածվում հետևալի վրա՝ տոնաճառի զարդարանքներ, արհեստական տոնաճառներ եւ դրանց պարագաներ, էլեկտրական զարդաշարան. հավաքածուների համար նախատեսված մասշտաբային մոդելներ, որոնք նախատեսված չեն 14 տարեկանից փոքր երեխաների համար. մանկական խաղահրապարակների համար սարքավորումներ. մարզագույք, այդ թվում՝ ստորջրյա. ազգային եւ դեկորատիվ տիկնիկներ, որոնք նախատեսված չեն 14 տարեկանից ցածր տարիքի երեխաների համար, մասնագիտական խաղալիքներ՝ տեղադրված հանրային վայրերում. գլուխկոտրուկներ, որոնք պարունակում են 500–ից ավելի տարրեր. օդաճնշական զենք. ինքնանետիչներ (կատապուլտներ) եւ նետման համար սարքեր. նետման համար գործիքներ՝ մետաղե ծայրերով, խաղալիքների համար տրանսֆորմատորներ, որոնք սնուցվում են ցանցից, կուտակչային մարտկոցի համար լիցքավորող սարք, այդ թվում՝ խաղալիքի հետ տրամադրվող արտադրատեսակներ, որոնք պարունակում են տաքացնող տարրեր եւ նախատեսված են ուսուցման ընթացքում մեծահասակների վերահսկողության ներքո օգտագործվելու համար. տրանսպորտային միջոցներ, որոնք նախատեսված են 14 տարեկանից ցածր տարիքի երեխաների համար՝ ներքին այրման շարժիչով. խաղալիք մեքենաներ՝ շոգեշարժիչով. ընդհանուր օգտագործման ճանապարհներով երթեւեկելու համար նախատեսված հեծանիվներ. խաղեր եւ խաղալիքներ, որոնք աշխատում են 24 վոլտից բարձր անվանական լարումով. լատեքսից պատրաստված

սանիտարահիգիենիկ արտադրատեսակներ, երեխաների համար նախատեսված ռետիններ եւ սիլիկոնային էլաստոմերներ. հրազենի ճշգրիտ կրկնօրինակը. երեխաների համար զարդեղեն (բիժուտերիա). պաշտպանության միջոցներ (լողալու համար նախատեսված ակնոցներ, արեւապաշտպան ակնոցներ, հեծանվային սաղավարտներ, անվատախտակի (սքեյթբորդ) համար սաղավարտներ). թռչող խաղալիքներ, որոնք երեխան գործի է գցում ռետինե լարի օգնությամբ, նշանաձգության համար աղեղներ, որոնց երկարությունը ձգված վիճակում գերազանցում է 1200 մմ-ը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

Խաղալիքներում չի թույլատրվում օգտագործել որդնակերուկներով եւ ոստերով փայտանյութ, պինդ կամ սուր կողմնակի առարկաներ (մեխեր, ասեղներ, մետաղատաշեղ, մանրատաշեղ, ապակու կամ պլաստմասսայի բեկորներ եւ այլն) պարունակող խճուժվածք, վառելազազ եւ այրվող հեղուկ:

Բացի դրանից՝ մինչեւ 3 տարեկան երեխաների համար նախատեսված խաղալիքներում չի թույլատրվում օգտագործել մորթի, կաշի, ապակի, խավավոր ռետին, ստվարաթուղթ եւ թուղթ, ինչպես նաեւ 0,038 մմ-ից պակաս հաստությամբ պոլիմերային չկրկնակված թաղանթներ, ցելուլոզի, խճուժման հատիկներ՝ 3 մմ չափով կամ պակաս, առանց ներքին պաստառի, զանգուլակների նման խաղալիքների լցանյութեր, որոնց չափը խոնավ միջավայրում ավելանում է ավելի քան 5%-ով:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

3 տարեկանից բարձր տարիքի երեխաների համար նախատեսված խաղալիքներում թույլատրվում է ապակու առկայություն այն դեպքում, եթե խաղալիքն ըստ նշանակության օգտագործելու համար այն անհրաժեշտ է:

Մինչեւ 10 տարեկան երեխաների համար նախատեսված կոնստրուկտորներում եւ հավաքովի մոդելներում զոդվածք չի թույլատրվում:

Հեղուկով կամ այլ լցանյութ լցված խաղալիքների պարունակության արտահոսք չի թույլատրվում:

Փորձարկումների համար նախատեսված ռեակտիվ առարկաների հավաքածուների մեջ հրդեհավտանգ եւ պայթունավտանգ նյութերի, ինչպես նաեւ փորձարկումների անցկացման ընթացքում նման միացություններ առաջացնող նյութերի օգտագործումը չի թույլատրվում: Խաղալիքի պաշտպանական-դեկորատիվ պատյանը պետք է դիմակայուն լինի խոնավ մշակման նկատմամբ: Չի թույլատրվում օգտագործողի բերանին հպվող զանգուլակների եւ խաղալիքների մակերեսային ներկում եւ նախշազարդում:

Չանգուլակների զանգվածը չպետք է գերազանցի 100 գրամը:

Մինչեւ 3 տարեկան երեխաների համար նախատեսված խաղալիքներում վտանգավորության 1-ին դասի քիմիական նյութերի միգրացիա չի թույլատրվում:

Խաղալիքների անվտանգությունը գնահատվում է՝ ըստ օրգանոլեպտիկ (հոտի, կողմնակի համի), սանիտարաքիմիական (հսկվող քիմիական նյութերի ցանկը սահմանվում է՝ կախված նյութի քիմիական կազմից), ֆիզիկահիգիենիկ (ծայնի մակարդակը, էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը, ռադիոհաճախականությունների ընդգրկույթի էլեկտրամագնիսական դաշտի լարվածությունը, էլեկտրական դաշտի լարվածությունը, տեղային թրթռում, ենթակարմիր ճառագայթահարման ինտենսիվությունը), թունաբանահիգիենիկ (թունավորության ցուցիչ կամ տեղային գրգռիչ ազդեցություն) ցուցանիշների:

3.1. Օրգանոլեպտիկ ցուցանիշներին ներկայացվող պահանջները

3.1.1. Մինչեւ 3 տարեկան երեխաների համար նախատեսված խաղալիքների եւ բերանի խոռոչին հպվող խաղալիքների նմուշի ու ջրային լուծամզուկի հոտի ուժգնությունը չպետք է գերազանցի 1 բալլը:

3 տարեկանից բարձր տարիքի երեխաների համար նախատեսված խաղալիքների նմուշի եւ ջրային լուծամզուկի հոտի ուժգնությունը չպետք է

գերազանցի 2 բալլ:

3.1.2. Մինչև 3 տարեկան երեխաների համար նախատեսված խաղալիքները եւ բերանի խոռոչին հպվող խաղալիքները չպետք է ունենան 1 բալլ գերազանցող համի ուժգնություն:

3.2. Ֆիզիկահիգիենիկ ցուցանիշներին ներկայացվող պահանջները

3.2.1. Ակուստիկ հնչողություն ունեցող խաղալիքները պետք է համապատասխանեն հետեւյալ պահանջներին .

Խաղալիքների ձայնի համարժեք մակարդակը, բացառությամբ այն խաղալիքների, որոնք իմպուլսային ձայն են հանում, մարզական մրցույթների համար խաղալիք-մոդուլների, լարած երաժշտական խաղալիքների, փողային եւ հարվածային գործիքների, մինչև 3 տարեկան երեխաների համար չպետք է գերազանցի 60 դԲԱ-ն, 3-6 տարեկան երեխաների համար՝ 65 դԲԱ-ն, 6 տարեկանից բարձր տարիքի երեխաների համար՝ 70 դԲԱ-ն. բացօթյա խաղի համար նախատեսված խաղալիքների ձայնի մակարդակը չպետք է գերազանցի 75 դԲԱ-ն:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

Մինչև 3 տարեկան երեխաների համար ձայնի առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 70 դԲԱ-ն, 3-6 տարեկան երեխաների համար՝ 75 դԲԱ-ն, 6 տարեկանից բարձր տարիքի երեխաների համար՝ 80 դԲԱ-ն: Բացօթյա խաղի համար նախատեսված խաղալիքների ձայնի առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 85 դԲԱ-ն. իմպուլսային ձայն հանող խաղալիքների ձայնը՝ 90 դԲԱ-ն:

3.2.2. Խաղալիքների մակերեսային էլեկտրաստատիկ դաշտի լարվածության մակարդակը չպետք է գերազանցի 15 կՎ/մ-ն:

3.2.3. Էլեկտրամագնիսական դաշտի լարվածության մակարդակը, որն արձակվում է ռադիոկառավարվող, էլեկտրոնային եւ էլեկտրատեխնիկական

խաղալիքներից, չպետք է գերազանցի 25 Վ/մ-ն 0,3-300 կՀց
 հաճախականությունների ընդգրկույթում, 15 Վ/մ-ն՝ 0,3 – 3 ՄՀց
 հաճախականությունների ընդգրկույթում, 10 Վ/մ-ն՝ 3 – 30 ՄՀց
 հաճախականությունների ընդգրկույթում, 3 Վ/մ-ն՝ 30 – 300 ՄՀց
 հաճախականությունների ընդգրկույթում, 10 մկՎտ/սմ²-ն՝ 0,3 – 300 ԳՀց
 հաճախականությունների ընդգրկույթում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

3.2.4. Խաղալիքի առաջացրած արդյունաբերական հաճախականության հոսանքի էլեկտրական դաշտի լարվածությունը (50Հց) չպետք է գերազանցի 0,5 կՎ/մ-ն:

3.2.5. Ենթակարմիր ճառագայթման ինտեգրալ հոսքի ուժգնության մակարդակը չպետք է գերազանցի 100 Վտ/մ²-ն:

3.2.6. Խաղալիքի առաջացրած տեղային թրթռման մակարդակները չպետք է գերազանցեն 63 դԲ-ն 8 Հց եւ 16 Հց օկտավային շերտերի միջին երկրաչափական հաճախականություններում, 69 դԲ-ն՝ 31,5 Հց-ի դեպքում, 75 դԲ-ն՝ 63 Հց-ի դեպքում, 81 դԲ-ն՝ 125 Հց-ի դեպքում, 87 դԲ-ն՝ 250 Հց-ի դեպքում, 93 դԲ-ն՝ 500 Հց-ի դեպքում, 99 դԲ-ն՝ 1000 Հց-ի դեպքում: Թրթռման արագացման ճշգրտված մակարդակը չպետք է գերազանցի 66 դԲ-ն:

3.2.7. Մանկական խաղալիքներում արգելվում է ցանկացած տեսակի լազերային ճառագայթման համակարգի օգտագործումը:

3.2.8. Բնական ռադիոնուկլիդների տեսակարար արդյունավետ ակտիվությունը բնական նյութերում (ավազ, գիպս, կավ եւ այլն) ու դրանցից պատրաստված արտադրատեսակներում (խեցեղենից արտադրատեսակներ եւ այլն), որոնք մտնում են խաղերի հավաքածուների, մանկական ստեղծարարության համար նախատեսված հավաքածուների կազմի մեջ, չպետք է գերազանցի 370 Բք/կգ:

3.3. Սանիտարահիգիենիկ անվտանգությանը ներկայացվող պահանջները

3.3.1. Խաղալիքները պետք է համապատասխանեն 2-րդ աղյուսակում ներկայացված քիմիական անվտանգության պահանջներին: Սանիտարաքիմիական ուսումնասիրություններ իրականացնելիս որպես պարտադիր մոդելային միջավայր է հանդես գալիս թորած ջուրը: 3 տարեկանից բարձր տարիքի երեխաների համար նախատեսված, փափուկ նյութերով լցված եւ փայտե խաղալիքներից, թղթե ու ստվարաթղթե խաղալիքներից, տիկնիկների համար նախատեսված հագուստներից, մեծ խաղալիքներից, որոնցում երեխան կարող է տեղավորվել կամ որը կարող է իր վրա կրել երեխային, քիմիական նյութերի միգրացիան որոշվում է օդային մոդելային միջավայրում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

Աղյուսակ 2

Խաղալիքներին ներկայացվող քիմիական անվտանգության պահանջները

Նյութերի, արտադրատեսակների անվանումը	Որոշվող վնասակար նյութի անվանումը	Միգրացիայի նորմատիվը	
		ջրային միջավայր (մգ/դմ ³), ոչ ավելի	օդային միջավայր (մգ/դմ ³), ոչ ավելի
Ակրիլոնիտրիլբուրա-դիենստիրոլային պլաստիկներ	ալֆա-մեթիլստիրոլ	0,1	0,04
	ակրիլոնիտրիլ	0,02	0,03
	բենզալդեհիդ	0,003	0,04
	բենզոլ	0,01	0,1
	քսիլոլներ (իզոմերների խառնուրդ)	0,05	0,2
	ստիրոլ	0,01	0,002
	տոլուոլ	0,5	0,6
	էթիլբենզոլ	0,01	0,02
Պոլիստիրոլ եւ ստիրոլի համապոլիմերներ	ակրիլոնիտրիլ	0,02	0,03
	ացետալդեհիդ	0,2	0,01
	ացետոն	0,1	0,35
	բենզալդեհիդ	0,003	0,04
	բենզոլ	0,01	0,1
	բութադիեն	0,05	1,0
	քսիլոլներ (իզոմերների	0,05	0,2

	խառնուրդ)			
	կումուլ (իզոպրոպիլբենզոլ)	0,1	0,014	
	մեթիլմեթակրիլատ	0,25	0,01	
	բութիլ-սպիրտ	0,5	0,1	
	մեթիլսպիրտ	0,2	0,5	
	ստիրոլ	0,01	0,002	
	տոլուոլ	0,5	0,6	
	ֆորմալդեհիդ	0,1	0,003 <*>	
	էթիլբենզոլ	0,01	0,02	
Բազմաօլեֆինների հիմքով նյութեր	ացետալդեհիդ	0,2	0,01	
	ացետոն	0,1	0,35	
	հեքսան	0,1	-	
	հեքսեն	-	0,085	
	հեպտան	0,1	-	
	հեպտեն	-	0,065	
	իզոպրոպիլ սպիրտ	0,1	0,6	
	բութիլ-սպիրտ	0,5	0,1	
	իզոբութիլային սպիրտ	0,5	0,1	
	մեթիլսպիրտ	0,2	0,5	
	պրոպիլսպիրտ	0,1	0,3	
	ֆորմալդեհիդ	0,1	0,003 <*>	
	էթիլացետատ	0,1	0,1	
	Վինիլացետատի հիմքով պոլիմերներ	ացետալդեհիդ	0,2	0,01
վինիլացետատ		0,2	0,15	
հեքսան		0,1	-	
հեպտան		0,1	-	
ֆորմալդեհիդ		0,1	0,003 <*>	
Պոլիվինիլբլորիդներ	ացետալդեհիդ	0,2	0,01	
	ացետոն	0,1	0,35	
	բենզոլ	0,01	0,1	
	վինիլբլորիդ	0,01	0,01	
	երկբութիլֆտալատ	չի թույլատրվում	չի թույլատրվում	
	երկմեթիլֆտալատ	0,3	0,007	
	երկօկտիլֆտալատ	2,0	0,02	
	Երկէթիլֆտալատ	3,0	0,01	
	բութիլ-սպիրտ	0,5	0,1	
	իզոբութիլային սպիրտ	0,5	0,1	
	իզոպրոպիլ սպիրտ	0,1	0,6	
	մեթիլսպիրտ	0,2	0,5	
	պրոպիլսպիրտ	0,1	0,3	
	տոլուոլ	0,5	0,6	
	Ֆենոլ կամ բոլոր ֆենոլների միագումարը	0,05 0,1	0,003	
	(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)			
		ցինկ	1,0	-
	անագ	2,0	-	

Պոլիուրետաններ	ացետալդեհիդ	0,2	0,01
	ացետոն	0,1	0,35
	բենզոլ	0,01	0,1
	բութիլացետատ	0,1	0,1
	իզոպրոպիլ սպիրտ	0,1	0,6
	մեթիլսպիրտ	0,2	0,5
	պրոպիլսպիրտ	0,1	0,3
	տոլուոլ	0,5	0,6
	ֆորմալդեհիդ	0,1	0,003 <*>
	էթիլացետատ	0,1	0,1
	էթիլենգլիկոլ	1,0	1,0
Պոլիամիդներ	բենզոլ	0,01	0,1
	հեքսամեթիլենդիամին	0,01	0,001
	ե-կապրոլակտամ	0,5	0,06
	մեթիլսպիրտ	0,2	0,5
	ֆենոլ կամ բոլոր ֆենոլների միագումարը	0,05 0,1	0,003
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)			
Պոլիակրիլատ	ակրիլոնիտրիլ	0,02	0,03
	հեքսան	0,1	-
	հեպտան	0,1	-
	մեթիլմեթակրիլատ	0,25	0,01
Պոլիէթերների հիմքով նյութեր	ացետալդեհիդ	0,2	0,01
	ացետոն	0,1	0,35
	մեթիլացետատ	0,1	0,07
	մեթիլսպիրտ	0,2	0,5
	պրոպիլսպիրտ	0,1	0,3
	ֆենոլ կամ բոլոր ֆենոլների միագումարը	0,05 0,1	0,003
	ֆորմալդեհիդ	0,1	0,003 <*>
Տերեֆտալատի թթվի հիմքով պոլիէթիլենտերեֆտալատ եւ համապոլիմերներ	ացետալդեհիդ	0,2	0,01
	ացետոն	0,1	0,35
	դիմեթիլտերեֆտալատ	1,5	0,01
	բութիլ-սպիրտ	0,5	0,1
	իզոբութիլային սպիրտ	0,5	0,1
	մեթիլսպիրտ	0,2	0,5
	ֆորմալդեհիդ	0,1	0,003 <*>
	էթիլենգլիկոլ	1,0	1,0
Պոլիկարբոնատ	դիրքը հանվել է: – Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշում		
	մեթիլենքլորիդ	7,5	-
	ֆենոլ կամ բոլոր ֆենոլների միագումարը	0,05 0,1	0,003
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)			

	քլորբենզոլ	0,02	0,1
Ֆենոպլաստներ եւ ամինոպլաստներ	ացետալդեհիդ	0,2	0,01
	ֆենոլ կամ բոլոր ֆենոլների միագումարը	0,05 0,1	0,003
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)			
	ֆորմալդեհիդ	0,1	0,003 <*>
Պոլիմերային նյութեր էպօքսիդային խեժի հիմքով	ացետալդեհիդ	0,2	0,01
	դիրքը հանվել է: - Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշում		
	ֆենոլ կամ բոլոր ֆենոլների միագումարը	0,05 0,1	0,003
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)			
	ֆորմալդեհիդ	0,1	0,003 <*>
	էպիքլորհիդրին	0,1	0,2
Պարաֆիններ եւ մոմեր	ացետալդեհիդ	0,2	0,01
	ացետոն	0,1	0,35
	բենզապիրեն	չի թույլատրվում	չի թույլատրվում
	հեքսան	0,1	-
	հեպտան	0,1	-
	բութիլ-սպիրտ	0,5	0,1
	մեթիլսպիրտ	0,2	0,5
	տոլուոլ	0,5	0,6
	ֆորմալդեհիդ	0,1	0,003 <*>
		ազիդոլ 2	2,0
Ռետինե եւ լատեքսային բաղադրանյութեր	ազիդոլ 40	1,0	-
	ակրիլոնիտրիլ	0,02	0,03
	ալտաքս	0,4	-
	ացետոֆենոն	0,1	0,003
	բենզապիրեն	չի թույլատրվում	չի թույլատրվում
	վուկացիտ (ցինկի էթիլֆենիլդիթիոկարբամատ)	1,0	-
	ցինկի դիմեթիլդիթիոկարբամատ (ցիմատ)	0,6	-
	դիէթիլդիթիոկարբամատ (էթիլցիմատ)	0,5	-
	երկմեթիլֆտալատ	0,3	0,007
	երկբութիլֆտալատ	չի թույլատրվում	չի թույլատրվում
	երկօկտիլֆտալատ	2,0	0,02
	երկէթիլֆտալատ	3,0	0,01
	երկֆենիլգուանիդին	0,5	-
	դիրքը հանվել է: - Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշում		
	կապտաքս (2-մերկապտորբենզաթիազոլ)	0,4	-
	ստիրոլ (վինիլբենզոլ)	0,01	0,002

	սուֆենամիդ Ա (ցիկլոհեքսիլբենզոթիազոլ- սուֆենամիդ-2)	0,4	-
	թիուրամ Ը (քառամեթիլթիուրամերկսուլ- ֆիդ)	0,5	
	թիուրամ Ե (քառամեթիլթիուրա- մերկսուլֆիդ)	0,5	
	ցինկ	1,0	-
Սիլիկոններ	ացետալդեհիդ	0,2	0,01
	բենզոլ	0,01	0,1
	բութիլ-սպիրտ	0,5	0,1
	մեթիլսպիրտ	0,2	0,5
	ֆենոլ կամ բոլոր ֆենոլների միագումարը	0,05 0,1	0,003
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)			
	ֆորմալդեհիդ	0,1	0,003 <*>
Թուղթ, ստվարաթուղթ	ացետալդեհիդ	0,2	0,01
	ացետոն	0,1	0,35
	բենզոլ	0,01	0,1
	բութիլացետատ	0,1	0,1
	քսիլոլներ (իզոմերների խառնուրդ)	0,05	0,2
	բութիլ-սպիրտ	0,5	0,1
	իզոբութիլային սպիրտ	0,5	0,1
	մեթիլսպիրտ	0,2	0,5
	իզոպրոպիլ սպիրտ	0,1	0,6
	տոլուոլ	0,5	0,6
	ֆորմալդեհիդ	0,1	0,003 <*>
	էթիլացետատ	0,1	0,1
	ցինկ	1,0	-
Փայտանյութ	ացետալդեհիդ	0,2	0,01
	բութիլ-սպիրտ	0,5	0,1
	իզոբութիլային սպիրտ	0,5	0,1
	մեթիլսպիրտ	0,2	0,5
	իզոպրոպիլ սպիրտ	0,1	0,6
	ֆենոլ կամ բոլոր ֆենոլների միագումարը	0,05 0,1	0,003
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)			
	ֆորմալդեհիդ	0,1	0,003 <*>
Կերամիկա, ապակի	ալյումին	0,5	-
	բոր	0,5	-
	ցինկ	1,0	-
	տիտան	0,1	-
Արհեստական մորթի	ակրիլոնիտրիլ	0,02	0,03

Եւ մանածագործվածք	ացետոն	0,1	0,35
	բենզոլ	0,01	0,1
	վինիլացետատ	0,2	0,15
	մեթիլսպիրտ	0,2	0,5
	տոլուոլ	0,5	0,6
	Ֆենոլ կամ բոլոր ֆենոլների միագումարը	0,05 0,1	0,003
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)			
	Ֆորմալդեհիդ	50 մկգ/գ	0,003 <*>
Ներկեր, մատիտներ, ֆլումաստեր, գուաշ, պլաստիլին եւ այլ նույնանման արտադրատեսակներ	Ֆենոլ կամ բոլոր ֆենոլների միագումարը	0,05 0,1	0,003
	Ֆորմալդեհիդ	0,1	0,003 <*>
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)			
Պողպատ	երկաթ	0,3	-
	մանգան	0,1	-
	քրոմ (Cr 3+)	գումարային	-
	քրոմ (Cr 3+)	0,1	-
	նիկել	0,1	-
	պղինձ	1,0	-
(ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշմամբ)			
Անագաբրոնզ	պղինձ	1,0	-
	ցինկ	1,0	-
	նիկել	0,1	-
	անագ	2,0	-
	կապար	0,03	-
(ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշմամբ)			
Ալյումինային համաձուլվածքներ	ալյումին	0,5	-
	մանգան	0,1	-
	երկաթ	0,3	-
	պղինձ	1,0	-
	ցինկ	1,0	-
(ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշմամբ)			
Կապարի եւ արծաթի համաձուլվածքներ	կապար	0,03	-
	կադմիում	0,001	-
	արծաթ	0,05	-
(ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշմամբ)			

<*> Նորմատիվը նշված է՝ հաշվի չառնելով մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածությունը:

3.3.2. Խաղալիքի ցանկացած նյութի 1 կգ-ում պարունակվող վնասակար նյութերի՝ մոդելային միջավայր արտազատումը (աղաթթու), բացի մատներով քսելու համար նախատեսված ձեւավորվող զանգվածներից եւ ներկերից, չպետք է գերազանցի հետեւյալ նորմերը.՝

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 9-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

ծարիր՝ 60 մգ.

մկնդեղ՝ 25 մգ.

բարիում՝1000 մգ.

կադմիում՝ 75 մգ.

քրոմ՝ 60 մգ.

կապար՝ 90 մգ.

սնդիկ՝ 60մգ.

սելեն՝ 500 մգ:

Մատներով քսելու համար նախատեսված ձեւավորվող զանգվածների եւ ներկերի 1 կգ-ում պարունակվող վնասակար նյութերի՝ մոդելային միջավայր արտազատումը (աղաթթու) չպետք է գերազանցի հետեւյալ նորմերը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

ծարիր՝ 60 մգ.

մկնդեղ՝ 25 մգ.

բարիում՝ 1000 մգ.

կադմիում՝ 50 մգ.

քրոմ՝ 25 մգ.

կապար՝ 90 մգ.

սնդիկ՝ 25մգ.

սելեն՝ 500 մգ:

3.4. Թունաբանահիգիենիկ ցուցանիշներին ներկայացվող պահանջները

3.4.1. Խաղալիքները չպետք է տեղային, մաշկը գրգռող ազդեցություն ունենան:

Մինչև 3 տարեկան երեխաների համար նախատեսված խաղալիքները, ինչպես նաև անմիջապես երեխայի բերանի խոռոչին հպվող խաղալիքները չպետք է գրգռիչ ազդեցություն ունենան լորձաթաղանթի վրա:

3.4.2. Խաղալիքների թունավորության ցուցիչը, որը որոշվում է ջրային միջավայրում (թորած ջուր), պետք է լինի 70–120% ներառյալ, իսկ օդային միջավայրում՝ 80–120% ներառյալ:

Թունավորության ցուցիչի արժեքը, որը որոշվում է լյումինեսցենտային մանրէաբանական թեստի միջոցով, պետք է լինի 20%-ից պակաս:

3.5. Միկրոկենսաբանական անվտանգությանը ներկայացվող պահանջներ

Խաղալիքները պետք է համապատասխանեն 3-րդ աղյուսակում նշված՝ մանրէաբանական անվտանգությանը ներկայացվող պահանջներին:

Խաղալիքներին ներկայացվող միկրոկենսաբանական անվտանգության պահանջները

Արտադրանքի անվանումը	Միկրոօրգանիզմների ընդհանուր քանակությունը (մեզոֆիլներ, աերոբներ եւ ֆակուլտատիվ անաերոբներ), ԳԱՄ <*>	Խմորասնկեր, խմորանման սնկեր, բորբոսասնկեր 1 գ (1 սմ ² , 1 սմ ³) արտադրանքում	Էնտերո մանրէների ընտանիքին պատկանող մանրէներ 1 գ (1 սմ ² , 1 սմ ³) արտադրանքում	Ախտածին ստաֆիլոկոկեր՝ 1 գ (1 սմ ² , 1 սմ ³) արտադրանքում	Պսեդոմոնաս աէրոզինոզա, 1 գ (1 սմ ² , 1 սմ ³) արտադրանքում
Լցանյութերով եւ մինչեւ 1 տարեկան երեխաների համար նախատեսված խաղալիքներ, ձեւավորվող զանգվածներ ու ներկեր, որոնք քսվում են մատներով	10 ² -ից ոչ ավելի	բացակայություն	բացակայություն	բացակայություն	բացակայություն

<*> ԳԱՄ– գաղութ առաջացնող միավորներ՝ 1 գ, 1 սմ² կամ 1 սմ³ արտադրանքում:

4. ՀԱԳՈՒՍՏԻ ԱՌԱՐԿԱՆԵՐ ԵՎ ՀԱԳՈՒՍՏԻ ՊԱՐԱԳԱՆԵՐ, ԳԼԽԱՐԿՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՍԵՐԸ, ԱՅԼ ՊԱՏՐԱՍՏԻ ՄԱՆԱԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐ

(ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրերը՝ 3920-ից, 4303-ից, 4304 00 000 0-ից, 6101-ից, 6102-ից, 6103, 6104, 6107, 6108, 6109-ից, 6110, 6111-ից, 6112, 6113 00, 6114, 6115-ից, 6116-ից, 6117, 6201-ից, 6202-ից, 6203, 6204, 6205, 6206, 6207, 6208, 6209, 6210, 6211, 6212-ից, 6213-ից, 6214, 6216 00 000 0-ից, 6301, 6302-ից, 6307-ից, 6505-ից, 6201 - 6202-ից, 6214 - 6217, 6203 - 6211 (երեխաների եւ դեռահասաների համար նախատեսված արտադրատեսակներին վերաբերելու առումով)

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34, 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշումների խմբագրությամբ)

Երեխաների եւ դեռահասաների համար նախատեսված արտադրատեսակների անվտանգության ցուցանիշները կանոնակարգվում են՝ հաշվի առնելով տարիքը, դրանց ֆունկցիոնալ նշանակությունը, մաշկի հետ շփման մակերեսը, օգտագործված նյութերի կազմը:

Ֆունկցիոնալ նշանակության համաձայն՝ հագուստը եւ արտադրատեսակները ստորաբաժանվում են 1-ին, 2-րդ եւ 3-րդ շերտի հագուստի ու արտադրատեսակների:

1-ին շերտի հագուստի շարքին են դասվում այն արտադրատեսակները, որոնք անմիջական շփման մեջ են գտնվում օգտագործողի մաշկի հետ՝ մարմնահագը եւ անկողնային սպիտակեղենը, կորսետային եւ լողազգեստային արտադրատեսակները, գլխարկները (ամառային), գուլպեղենը, թաշկինակները եւ գլխաշորերն ու այլ նույնանման արտադրատեսակները:

2-րդ շերտի հագուստի շարքին են դասվում այն արտադրատեսակները, որոնք սահմանափակ շփում ունեն օգտագործողի մաշկի հետ, մասնավորապես՝ զգեստներ, բլուզներ, վերնաշապիկներ, տաբատներ, կիսաշրջազգեստներ,

կոստյումներ առանց աստառի, սվիտերներ, ջեմպերներ, գլխարկներ (բացի ամառայինից), թաթմաններ, ձեռնոցներ, աշնանային-ձմեռային տեսականու գուլպեղենի արտադրատեսակներ (գուլպաներ, կիսագուգագուլպաներ) եւ այլ նույնանման արտադրատեսակներ:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 9-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

3-րդ շերտի հագուստի շարքին են դասվում վերարկուն, կիսավերարկուն, բաճկոնները, թիկնոցները, աստառով կոստյումները, նորաձիհների համար ծրարները եւ այլ նույնանման արտադրատեսակները:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշում)

Արտադրատեսակներից չպետք է վտանգավորության առաջին դասի քիմիական նյութեր արտազատվեն:

Նորաձիհների համար նախատեսված արտադրատեսակները եւ մինչեւ 1 տարեկան երեխաների համար նախատեսված սպիտակեղենը պետք է պատրաստված լինեն բնական նյութերից, նորաձիհների համար նախատեսված սպիտակեղենի կտրվածքները շուրջ միացման կարերը պետք է դրված լինեն դիմերեսից, սինթետիկ նյութերից պատրաստված արտաքին եւ դեկորատիվ տարրերը (ժանյակ, ասեղնագործություն, ապլիկացիա եւ այլն) չպետք է անմիջապես հպվեն երեխայի մաշկին:

Նորաձիհների համար նախատեսված արտադրատեսակներում (ծրարներում, ծածկոցներում, բարձերում եւ նույնանման արտադրատեսակներում) որպես լցանյութ կարող են օգտագործվել արհեստական կամ սինթետիկ նյութեր:

Արտադրատեսակների անվտանգությունը գնահատվում է՝ ըստ սանիտարաքիմիական (հսկվող քիմիական նյութերի ցանկը սահմանվում է՝ կախված նյութի քիմիական կազմից), ֆիզիկահիգիենիկ (խոնավածոություն (հիգրոսկոպիկություն), օդաթափանցելիություն, էլեկտրաստատիկ դաշտի լարվածություն), թունաբանահիգիենիկ (թունավորության ցուցիչ կամ տեղային,

գրգռիչ ազդեցություն) անվտանգության ցուցանիշների:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

4.1. Օրգանոլեպտիկ ցուցանիշներին ներկայացվող պահանջները

Հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշում

4.2. Սանիտարաքիմիական եւ ֆիզիկահիգիենիկ անվտանգության պահանջները

Հսկվող քիմիական նյութերի ցանկը սահմանվում է՝ կախված նյութի քիմիական կազմից եւ արտադրանքի տեսակից (աղյուսակ 5):

1-ին եւ 2-րդ շերտի հագուստի մեջ առկա վնասակար քիմիական նյութերը սահմանվում են ջրային միջավայրում, 3-րդ շերտի արտադրատեսակներում (բացառությամբ նորածինների եւ մինչեւ 1 տարեկան երեխաների համար նախատեսված արտադրատեսակների)՝ օդային միջավայրում: 3-րդ շերտի՝ նորածինների եւ մինչեւ 1 տարեկան երեխաների համար նախատեսված արտադրատեսակներում վնասակար նյութերը սահմանվում են ջրային եւ օդային միջավայրերում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

4.2.1. Մինչեւ 1 տարեկան (չափսերի ընդգրկույթը՝ հասակը՝ մինչեւ 74 սմ, կրծքավանդակը՝ մինչեւ 48 սմ) երեխաների համար մանածագործական նյութերից հագուստը, տրիկոտաժե արտադրատեսակները եւ պատրաստի մանածագործական արտադրատեսակները պետք է համապատասխանեն քիմիական ու ֆիզիկահիգիենիկ անվտանգության պահանջներին:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19–ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

4.2.1.1. 1-ին շերտի հագուստը (անկողնային սպիտակեղենը, մանածագործական նյութից տրիկոտաժե եւ կարի արտադրատեսակները) պետք է համապատասխանի հետեւյալ նորմերին՝

խոնավածծություն (հիգրոսկոպիկություն)՝ 14%-ից ոչ պակաս.

օդաթափանցելիություն՝ 150 դմ³/մ²վ, ֆլանելից, բումազեից եւ ներպատված (խավավոր) պաստառից արտադրատեսակների դեպքում թույլատրվում է ոչ պակաս, քան 70 դմ³/մ²վ–ը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19–ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

ազատ ֆորմալդեհիդ՝ 20 մկգ/գ–ից ոչ ավելի:

4.2.1.2. 2-րդ շերտի հագուստը (մանածագործական նյութից տրիկոտաժե եւ կարի արտադրատեսակները) պետք է համապատասխանի հետեւյալ նորմերին՝

խոնավածծություն (հիգրոսկոպիկություն)՝ 10%-ից ոչ պակաս.

օդաթափանցելիություն՝ 100 դմ³/մ²վ, ֆլանելից, բումազեից, ներպատված (խավավոր) պաստառից եւ պոլիուրետանային թելերով նյութերից արտադրատեսակների դեպքում թույլատրվում է ոչ պակաս, քան 70 դմ³/մ²վ–ը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19–ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

ազատ ֆորմալդեհիդ՝ 20 մկգ/գ–ից ոչ ավելի:

4.2.1.3. 3-րդ շերտի հագուստը (մանածագործական նյութից տրիկոտաժե եւ կարի արտադրատեսակները) պետք է համապատասխանի հետեւյալ նորմերին՝

խոնավածծություն (աստառի համար)՝ 10%–ից ոչ պակաս.

օդաթափանցելիություն (աստառի համար)՝ առնվազն 100 դմ³/մ²վ. ֆլանելից, բումազեից, ներպատված (խավավոր) պաստառից, ջինսե եւ վելվետի կտորից՝

առնվազն 70 դմ³/մ²վ.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

ազատ ֆորմալդեհիդ՝ 20 մկգ/գ-ից ոչ ավելի:

3-րդ շերտի 10 դմ³/մ²վ-ից պակաս օդաթափանցելիություն ունեցող նյութերից պատրաստված՝ աստառ չունեցող հագուստի մեջ պետք է նախատեսված լինեն կառուցվածքային տարրեր՝ օդափոխանակություն ապահովելու նպատակով:

(Պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշմամբ)

4.2.2. 1 տարեկանից բարձր տարիքի երեխաների եւ դեռահասների համար նախատեսված՝ մանածագործական նյութերից հագուստն ու կարի արտադրատեսակները պետք է համապատասխանեն ֆիզիկահիգիենիկ եւ քիմիական անվտանգության պահանջներին՝ 4-րդ աղյուսակի համաձայն:

1 տարեկանից բարձր տարիքի երեխաների եւ դեռահասների համար նախատեսված՝ մանածագործական նյութերից հագուստին եւ կարի արտադրատեսակներին ներկայացվող ֆիզիկահիգիենիկ եւ քիմիական անվտանգության պահանջները

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

Տարիքային խումբ, օգտագործողի տարիք	Խոնավածություն (հիգրոսկոպիկություն) (տոկոսներով, ոչ պակաս)	Օդաթափանցելիություն (դմ ³ /մ2վ, ոչ պակաս)	ազատ ֆորմալդեհիդի զանգվածային մասը (մկգ/գ, ոչ ավելի)
1. 1-ին շերտի հագուստ, անկողնային սպիտակեղեն, թաշկինակներ, գլխի հարդարանքի տեսակներ (ամառային), լողազգեստներ <*> եւ գուլպեղեն			
Մանկամսուրային խումբ, 1-3 տարեկան	9 (կարճատեւ օգտագործման գուլպեղենի դեպքում թույլատրվում է առնվազն 7-ը)	150 (ֆլանելից, բումազեից, ներպատված (խավավոր) տրիկոտաժե աստառից արտադրատեսակների դեպքում թույլատրվում է առնվազն 70-ը)	20
Նախադպրոցական խումբ, 3-7 տարեկան	9 (կարճատեւ օգտագործման գուլպեղենի դեպքում թույլատրվում է առնվազն 7-ը)	100 (ֆլանելից, բումազեից, ներպատված (խավավոր) տրիկոտաժե աստառից արտադրատեսակների դեպքում թույլատրվում է առնվազն 70-ը)	75
Դպրոցական խումբ, 7-14 տարեկան	9 (գուլպեղենի համար թույլատրվում է առնվազն 7-ը)	100 (ֆլանելից, բումազեից, ներպատված (խավավոր) տրիկոտաժե աստառից արտադրատեսակների դեպքում թույլատրվում է առնվազն 70-ը)	75

Դեռահասների խումբ, 14-18 տարեկան	6 (գուլպեղենի դեպքում թույլատրվում է առնվազն 2-ը)	100 (Ֆլանելից, բումազեից, ներպատված (խավավոր) տրիկոտաժե աստառից արտադրատեսակների, անկողնային սպիտակեղենի դեպքում թույլատրվում է առնվազն 70-ը)	75
2. 2-րդ շերտի հագուստ, ձեռնոցներ <*>, թաթմաններ <*> եւ գլխարկներ <*>, աշնանային-ձմեռային տեսականու գուլպեղեն <*>			
Մանկամսուրային խումբ, 1-3 տարեկան	8 (տրիկոտաժե արտադրատեսակների դեպքում թույլատրվում է առնվազն 6-ը)	100 (Ֆլանելից, բումազեից, ներպատված (խավավոր) տրիկոտաժե աստառից, ջինսե եւ վելվետի կտորներից ու պոլիուրեթանային թելերով նյութերից արտադրատեսակների դեպքում թույլատրվում է առնվազն 70-ը)	75
Նախադպրոցական խումբ, 3-7 տարեկան	8 (տրիկոտաժե արտադրատեսակների դեպքում թույլատրվում է առնվազն 6-ը, կարճատեւ օգտագործման արտադրատեսակների դեպքում՝ առնվազն 4-ը)	100 (Ֆլանելից, բումազեից, ներպատված (խավավոր) տրիկոտաժե աստառից, ջինսե եւ վելվետի կտորներից ու պոլիուրեթանային թելերով նյութերից արտադրատեսակների դեպքում թույլատրվում է առնվազն 70-ը)	75
Դպրոցական խումբ, 7-14 տարեկան	7 (տրիկոտաժե եւ կարճատեւ օգտագործման արտադրատեսակների դեպքում թույլատրվում է առնվազն 4-ը)	100 (Ֆլանելից, բումազեից, ներպատված (խավավոր) տրիկոտաժե աստառից եւ պոլիուրեթանային թելերով նյութերից արտադրատեսակների դեպքում թույլատրվում է առնվազն 70-ը. ջինսե եւ վելվետի կտորների դեպքում՝ առնվազն 50-ը)	75

Դեռահասների խումբ, 14-18 տարեկան	4 (տրիկոտաժե եւ կարճատեւ օգտագործման արտադրատեսակների դեպքում թույլատրվում է առնվազն 2-ը)	100 (ֆլանելից, բումազեից, ներպատված (խավավոր) տրիկոտաժե աստառից եւ պոլիուրեթանային թելերով նյութերից արտադրատեսակների դեպքում թույլատրվում է առնվազն 70-ը. ջինսե եւ վելվետի կտորների դեպքում՝ առնվազն 50-ը)	75
3. 3-րդ շերտի հագուստ			
Մանկամսուրային խումբ, 1-3 տարեկան	6 (աստառի համար)	70 (աստառի համար)	300
Նախադպրոցական եւ դպրոցական խմբեր, 3-14 տարեկան	6 (կոստյումների աստառների համար)	70 (աստառի համար)	300
Դեռահասների խումբ, 14-18 տարեկան		70 (աստառի համար)	300
4. Մկրակած ծածկոցներ, բարձեր, անկողնային պարագաներ, շարձեր եւ այլ նույնանման արտադրատեսակներ <***>			
Մանկական ծածկոց	4 (աստառի համար)	70 (աստառի համար)	75 (աստառի համար)
Մանկական բարձեր	-	-	75
Անկողնային պարագաներ, այդ թվում՝ մանկական մահճակալի համար (շղարշներ (բալդախիներ), բարձիկներ եւ այլն)			75
Մանկական շարձեր	-	-	75
Մանկական ծրարներ	10 (աստառի համար)	70 (աստառի համար)	20
5. Հատով պատրաստի մանածագործական արտադրատեսակներ (սրբիչներ, ծածկոցներ եւ նույնանման արտադրատեսակներ <***>)			
Մանկական սրբիչներ	6	-	75
Մանկական	-	70	75

ծածկոց			
--------	--	--	--

* Լողազգեստներում չեն սահմանվում խոնավածությունը (հիգրոսկոպիկությունը), գույլպեղենում՝ օդաթափանցելիությունը:

(Տողատակի ծանոթագրություն՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19–ի թիվ 34 որոշման խմբագրության մեջ)

<*> Թաթմաններում, ձեռնոցներում եւ գլխարկներում չեն սահմանվում խոնավածությունը (հիգրոսկոպիկությունը) եւ օդաթափանցելիությունը:

(Տողատակի ծանոթագրություն՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19–ի թիվ 34 որոշման խմբագրության մեջ)

<***> Բոլոր տարիքային խմբերի երեխաների համար, այդ թվում՝ մինչեւ 1 տարեկան երեխաների համար:

(Տողատակի ծանոթագրություն՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19–ի թիվ 34 որոշման խմբագրության մեջ)

Օդաթափանցելիության ցուցանիշով փորձարկումներ չեն անցկացվում այն արտադրատեսակներում, որոնց կառուցվածքը (սարաֆաններ, կիսաշրջազգեստներ, բաճկոններ) կամ նյութի կազմը (փխրուն հյուսվածք, ցանցկեն գործվածք) ենթադրում է բարձր օդաթափանցելիություն, ինչպես նաեւ այն արտադրատեսակներում, որոնք ունեն օդափոխանակությունն ապահովող կառուցվածքային տարրեր:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19–ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

4.2.3. Մանածագործական նյութերը պետք է համապատասխանեն քիմիական անվտանգության պահանջներին՝ 5–րդ աղյուսակի համաձայն:

Մանածագործական նյութերին ներկայացվող քիմիական անվտանգության պահանջները

Նյութեր	Արտազատվող նյութերի անվանումները	Նորմատիվ	
		Ջրային միջավայր (ոչ ավելի)	օդային միջավայր (մգ/մ ³), ոչ ավելի
Բնական՝ բուսական հումքից	Ֆորմալդեհիդ <*>		0,003 <***>
Արհեստական՝ վիսկոզային եւ ացետատային (Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշման խմբագրությամբ)	Ֆորմալդեհիդ <*> քացախաթթու		0,003 <***> 0,06
Պոլիէթերային	Ֆորմալդեհիդ <*> դիմեթիլտերեֆտալատ ացետալդեհիդ	1,5 մգ/դմ ³ 0,2 մգ/դմ ³	0,003 <***> 0,01 0,01
Պոլիամիդային	Ֆորմալդեհիդ <*> կապրուլակտամ հեքսամեթիլենդիամին	0,5 մգ/դմ ³ 0,01 մգ/դմ ³	0,003 <***> 0,06 0,001
Պոլիակրիլոնիտրիլային	Ֆորմալդեհիդ <*> ակրիլոնիտրիլ դիմեթիլֆորմամիդ վինիլացետատ	0,02 մգ/դմ ³ 10 մգ/դմ ³ 0,2 մգ/դմ ³	0,003 <***> 0,03 0,03 0,15
Պոլիվինիլքլորիդային	Ֆորմալդեհիդ <*> վինիլքլորիդ ացետոն բենզոլ տոլուոլ երկօկտիլֆտալատ երկբութիլֆտալատ ֆենոլ	1,0 մգ/կգ 0,1 մգ/դմ ³ 0,01 մգ/դմ ³ 0,5 մգ/դմ ³ 2,0 մգ/դմ ³ չի թույլատրվում 0,05 մգ/դմ ³	0,003 <***> 0,01 0,35 0,1 0,6 0,02 չի թույլատրվում 0,003
Վինիլսպիրտային	Ֆորմալդեհիդ <*> վինիլացետատ	0,2 մգ/դմ ³	0,003 <***> 0,15
Պոլիօլեֆինային	Ֆորմալդեհիդ <*> ացետալդեհիդ	0,2 մգ/դմ ³	0,003 <***> 0,01
Պոլիուրեթանային	Ֆորմալդեհիդ <*> էթիլենգլիկոլ ացետալդեհիդ	1,0 մգ/դմ ³ 0,2 մգ/դմ ³	0,003 <***> 1,0 0,01
Արտազատվող քիմիական տարրեր (կախված ներկանյութից)	սնդիկ (Hg) <***>	0,0005 մգ/դմ ³	-
	մկնդեղ (As)	1,0 մգ/կգ	-
	կապար (Pb)	1,0 մգ/կգ	-
	քրոմ (Cr)	2,0 մգ/կգ	-
	կոբալտ (Co)	4,0 մգ/կգ	-

պղինձ (Cu)	50,0 մգ/կգ	-
նիկել (Ni)	4,0 մգ/կգ	-

* Ազատ ֆորմալդեհիդի զանգվածային մասը համապատասխանում է 4.2.1, 4.2.2. կետերով նախատեսված նորմատիվներին:

<*> Միայն բնական թելքերից նյութերի համար:

<***> Նորմատիվը նշված է՝ հաշվի չառնելով մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածությունը:

4.2.4. Մանածագործական նյութերում պարունակվող ցնդող քիմիական նյութերի արտազատումը, որը պայմանավորված է վերջնամշակվածքի օգտագործմամբ, չպետք է գերազանցի 6-րդ աղյուսակում ներկայացված նորմատիվները: Ցուցանիշներն ուսումնասիրվում են՝ կախված օգտագործվող վերջնամշակվածքի բաղադրությունից:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

**Մանածագործական նյութերում պարունակվող ցնդող քիմիական նյութերի՝
վերջնամշակվածքի օգտագործմամբ պայմանավորված արտազատման
նորմատիվները**

Արտազատվող նյութերի անվանումները	Նորմատիվ
	ջրային միջավայր (մգ/դմ ³), ոչ ավելի
Դիրքը հանվել է: –Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի նոյեմբերի 18–ի թիվ 456 որոշում	
Մեթիլակրիլատ	0,02
Մեթիլմեթակրիլատ	0,25
Ստիրոլ	0,02
Քսիլոլներ (իզոմերների խառնուրդ)	0,05
Վինիլացետատ	0,2
Մեթիլսպիրտ	0,2
Բութիլ–սպիրտ	0,5
Ֆենոլ կամ բոլոր ֆենոլների միագումարը	0,02 0,1
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19–ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)	
Ացետալդեհիդ	0,2
Տոլուոլ	0,5

4.2.5. Հազուստի, գլխարկների համար կաշին պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

ազատ ֆորմալդեհիդի զանգվածային մասը՝ 20 մկգ/գ-ից ոչ ավելի.

կաշվի մեջ ջրով լվացվող քրոմի (VI) զանգվածային մաս չի թույլատրվում:

Կաշվից հազուստի եւ գլխարկների մեջ մանածագործական նյութերը պետք է համապատասխանեն ֆիզիկահիգիենիկ պահանջներին եւ մանածագործական նյութերին ներկայացվող քիմիական անվտանգության պահանջներին:

4.2.6. Մինչեւ 1 տարեկան երեխաների համար նախատեսված մորթուց հազուստը եւ արտադրատեսակները պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝

կաշվե կտորի եւ մազաձածկույթի մեջ ազատ ֆորմալդեհիդի զանգվածային մասը՝ 20 մկգ/գ-ից ոչ ավելի.

կաշվե կտորի եւ մազաձածկույթի մեջ ջրով անջատված քրոմի (VI) զանգվածային մաս չի թույլատրվում.

կաշվե կտորի ջրային լուծամզուկի pH-ը՝ 3,5-ից ոչ պակաս:

(Պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշմամբ)

4.2.7. 1 տարեկանից բարձր տարիքի երեխաների համար նախատեսված մորթուց հագուստը եւ արտադրատեսակները պետք է համապատասխանեն հետեւյալ պահանջներին՝

կաշվե կտորի եւ մազաձածկույթի մեջ ազատ ֆորմալդեհիդի զանգվածային մասը՝ 75 մկգ/գ-ից ոչ ավելի.

կաշվե կտորի եւ մազաձածկույթի մեջ ջրով անջատված քրոմի (VI) զանգվածային մասը՝ 3,0 մգ/կգ-ից ոչ ավելի.

կաշվե կտորի ջրային լուծամզուկի pH-ը՝ 3,5-ից ոչ պակաս:

(Պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշմամբ)

Մորթուց հագուստի եւ արտադրատեսակների մեջ մանածագործական նյութերը պետք է համապատասխանեն մանածագործական նյութերին ներկայացվող կենսաբանական եւ քիմիական անվտանգության պահանջներին:

4.2.8. Արտադրատեսակների մակերեսային էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը չպետք է գերազանցի 15,0 կՎ/մ-ն:

4.3. Թունաբանահիգիենիկ ցուցանիշներին ներկայացվող պահանջները

4.3.1. 1-ին եւ 2-րդ շերտերի հագուստը չպետք է օրգանիզմի վրա ունենա տեղային, մաշկը գրգռող ազդեցություն:

4.3.2. Հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշում

4.3.3. Արտադրատեսակների թունավորության ցուցիչը ջրային միջավայրում (թորած ջուր) պետք է լինի 70-120% ներառյալ, իսկ օդային միջավայրում՝ 80-120% ներառյալ:

Թունավորության ցուցիչի արժեքը, որը որոշվում է լյումինեսցենտային մանրէաբանական թեստի միջոցով, պետք է լինի 20%-ից պակաս:

5. ԿՈՇԿԵՂԵՆ

(ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրերը՝ 3920-ից, 6401-ից, 6402-ից, 6403-ից, 6404-ից, 6405-ից)

Արտադրատեսակների անվտանգությունը գնահատվում է՝ ըստ օրգանոլեպտիկ (հոտի), սանիտարաքիմիական (հսկվող քիմիական նյութերի ցանկը սահմանվում է՝ կախված նյութի քիմիական կազմից), ֆիզիկական (էլեկտրաստատիկ դաշտի լարվածություն), թունաբանահիգիենիկ (թունավորության ցուցիչ կամ տեղային, մաշկը գրգռող ազդեցություն) ցուցանիշների:

Մինչև 1 տարեկան երեխաների համար կոշիկների, ինչպես նաև 1 տարեկանից մեծ երեխաների՝ մաշկին անմիջապես հպվող կոշիկների (կոշիկի ներքին շերտերը, ամառային, տնային եւ այլ կոշիկներ) մեջ պարունակվող վնասակար նյութերի արտազատման որոշումն իրականացվում է ջրային միջավայրում, իսկ կոշիկի այլ տեսակների դեպքում՝ օդային միջավայրում:

Մանկամսուրային եւ մանկական խմբի երեխաների համար նախատեսված կոշիկների ներդրվող միջատակերը եւ աստառները պետք է լինեն բնական նյութերից (աստառի կաշի, կտոր, տրիկոտաժե աստառներ եւ այլն), կարող են օգտագործվել աստառի կտորներ ու տրիկոտաժե աստառներ՝ ներդնելով քիմիական մանրաթելեր՝ 20%-ից ոչ ավելի:

Երեխաների համար նախատեսված փակ կոշիկների մեջ արգելվում է օգտագործել արհեստական եւ (կամ) սինթետիկ կաշվից աստառներ.

Մանկական խմբի երեխաների համար ձմեռային կոշիկների մեջ կարող է օգտագործվել արհեստական մորթուց կամ բայկայից աստառ.

մանկական խմբի երեխաների կոշիկների վերնամասի համար կարող են օգտագործվել արհեստական եւ սինթետիկ նյութեր.

մանկամսուրային խմբի երեխաների համար կոշիկների ամառ եւ աշնանային-գարնանային տեսականու դեպքում կոշիկների վերնամասի համար կարող են օգտագործվել արհեստական եւ սինթետիկ նյութեր՝ բնական նյութերից ներքին աստառ օգտագործելու պայմանով:

Կոշիկի մեջ չի թույլատրվում բաց հետնամաս՝ մինչեւ 3 տարեկան երեխաների համար, չամրացված հետնամաս՝ 3–7 տարեկան երեխաների համար՝ բացի կարճ ժամկետով կրելու համար նախատեսված կոշիկներից:

(Պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19–ի թիվ 34 որոշմամբ)

5.1. Օրգանոլեպտիկ ցուցանիշներին ներկայացվող պահանջները

Արտադրատեսակի նմուշի հոտի ուժգնությունը չպետք է գերազանցի 2 բալլ:

5.2. Սանիտարաքիմիական ցուցանիշներին ներկայացվող պահանջները

5.2.1. Կոշիկների համար նախատեսված կաշին պետք է համապատասխանի հետտեյալ պահանջներին՝

երեխաների համար նախատեսված կոշիկների մեջ ազատ ֆորմալդեհիդի զանգվածային մասը՝ 20 մկգ/գ–ից ոչ ավելի.

ջրով լվացվող քրոմի (VI) զանգվածային մաս չի թույլատրվում:

Կոշիկի արտադրության ընթացքում օգտագործվող սինթետիկ եւ պոլիմերային նյութերին ներկայացվող քիմիական անվտանգության պահանջները ներկայացված են 7-րդ աղյուսակում:

Աղյուսակ 7

Սինթետիկ եւ պոլիմերային նյութերին ներկայացվող քիմիական անվտանգության պահանջները

Նյութի անվանումը	Որոշվող վնասակար նյութի անվանումը	Նորմատիվ	
		ջրային միջավայր (մգ/դմ ³ , ոչ ավելի)	օդային միջավայր (մգ/մ ³ , ոչ ավելի)
Պոլիամիդներ	կապրոլակտամ	0,5	0,06
	հեքսամեթիլենդիամին	0,01	0,001
Պոլիուրետաններ	ֆորմալդեհիդ	300 մգ/կգ	0,003 <*>
	տոլուիլոնդիիզոցիանատ	-	0,002
	ացետալդեհիդ	0,2	0,01
Պոլիէթերներ	ֆորմալդեհիդ	300 մգ/կգ	0,003 <*>
	դիմեթիլտերեֆտալատ	1,5	0,01
	ացետալդեհիդ	0,2	0,01
Պոլիակրիլատներ	ակրիլոնիտրիլ	0,02	0,03
	մեթիլմեթակրիլատ	0,25	0,01
Պոլիվինիլքլորիդային	ացետալդեհիդ	0,2	0,01
	երկօկտիլֆտալատ	2,0	0,02
	երկբութիլֆտալատ	չի թույլատրվում	չի թույլատրվում
Ռետինե	թիուրամ	0,5	-
	ցինկ	1,0	-
	երկօկտիլֆտալատ	2,0	0,02
	երկբութիլֆտալատ	չի թույլատրվում	չի թույլատրվում
Վինիլացետատներ (արհեստական կաշիներ)	ֆորմալդեհիդ	300 մգ/կգ	0,003 <*>
	վինիլացետատ	0,2	0,15
	երկօկտիլֆտալատ	2,0	0,02
	երկբութիլֆտալատ	չի թույլատրվում	չի թույլատրվում

<*> Նորմատիվը նշված է՝ հաշվի չառնելով մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածությունը:

5.3. Թունաբանահիգիենիկ ցուցանիշներին ներկայացվող պահանջները

5.3.1. Կոշիկի ներքին շերտերը չպետք է օրգանիզմի վրա ունենան տեղային, մաշկը գրգռող ազդեցություն:

5.3.2. Արտադրատեսակների թունավորության ցուցիչը ջրային միջավայրում (թորած ջուր) պետք է լինի 70–120%–ը ներառյալ, իսկ օդային միջավայրում՝ 80–120%–ը ներառյալ:

Թունավորության ցուցիչի արժեքը, որը որոշվում է լյումինեսցենտային մանրէաբանական թեստի միջոցով, պետք է լինի 20%-ից պակաս:

5.4. Ֆիզիկահիգիենիկ ցուցանիշներին ներկայացվող պահանջները

Արտադրատեսակների մակերեսային էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը չպետք է գերազանցի 15,0 կՎ/մ–ն:

6. ՄԱՆԿԱՍԱՅԼԱԿՆԵՐ

(ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր՝ 8715 00-ից)

Արտադրատեսակների անվտանգությունը գնահատվում է՝ ըստ սանիտարաքիմիական (հսկվող քիմիական նյութերի ցանկը սահմանվում է՝ կախված նյութի քիմիական կազմից), թունաբանահիգիենիկ (թունավորության ցուցիչ կամ տեղային, մաշկը գրգռող ազդեցություն) ցուցանիշների:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19–ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

6.1. Օրգանուլեպտիկ ցուցանիշներին ներկայացվող պահանջները

Հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշում

6.2. Սանիտարաքիմիական ցուցանիշներին ներկայացվող պահանջները

Սայլակների պատրաստման մեջ օգտագործվող մանածագործական նյութերը պետք է համապատասխանեն 5-րդ աղյուսակում ներկայացված քիմիական անվտանգության պահանջներին, սինթետիկ եւ պոլիմերային նյութերը՝ 7-րդ աղյուսակում ներկայացված քիմիական անվտանգության պահանջներին: Մաշկային ծածկույթի հետ շփվող նյութերում պարունակվող վնասակար նյութերի արտազատումը որոշվում է ջրային միջավայրում, մնացած նյութերում՝ օդային:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

6.3. Ֆիզիկահիգիենիկ ցուցանիշներին ներկայացվող պահանջները

Հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշում

6.4. Թունաբանահիգիենիկ ցուցանիշներին ներկայացվող պահանջները

6.4.1. Մանկասայլակների պատրաստման մեջ օգտագործվող մանածագործական նյութերը չպետք է ունենան տեղային, մաշկը գրգռող ազդեցություն:

6.4.2. Արտադրատեսակների թունավորության ցուցիչը ջրային միջավայրում (թորած ջուր) պետք է լինի 70-120%-ը ներառյալ, իսկ օդային միջավայրում՝ 80-120%-ը ներառյալ:

Թունավորության ցուցիչի արժեքը, որը որոշվում է լյումինեսցենտային մանրէաբանական թեստի միջոցով, պետք է լինի 20%-ից պակաս:

7. ՕՐԱԳՐԵՐ ԵՎ ՆՈՒՅՆԱՆՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐ, ՏԵՏՐԵՐ, ԹՂԹԻՑ ԵՎ ՍՏՎԱՐԱԹՂԹԻՑ ԱՅԼ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ

(ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր՝ 4820-ից)

Մաքրագիր թղթե արտադրատեսակների անվտանգությունը գնահատվում է՝ ըստ ֆիզիկամեխանիկական (տողվածքին ներկայացվող պահանջներ, 1 մ² մակերեսով թղթի զանգված) եւ սանիտարաքիմիական ցուցանիշների (քիմիական նյութերի հսկվող ցանկը սահմանվում է՝ կախված նյութի քիմիական կազմից):

7.1. Օրգանոլեպտիկ ցուցանիշներին ներկայացվող պահանջները

Հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշում

7.2. Ֆիզիկամեխանիկական ցուցանիշներին ներկայացվող պահանջները

Դպրոցական եւ ընդհանուր օգտագործման, բառերը գրելու, նախադպրոցականներին գրել սովորեցնելու, նոտաների համար նախատեսված տետրերի, դպրոցականների օրագրերի պատրաստման համար օգտագործվում է գրաթուղթ, ինչպես նաեւ պոլիգրաֆիական թղթի այլ տեսակներ՝ 1 մ² մակերեսով թղթի՝ 60,0 +/- 3,0 գ զանգվածով: Չի թույլատրվում օգտագործել փայլուն թուղթ: Տողեր եւ վանդակներ կազմող գծերի հաստությունը պետք է լինի 0,1 – 0,4 մմ: Չի թույլատրվում տողերը թողնել առանց գծելու:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշում)

Նկարչական ալբոմների, թղթապանակների եւ տետրերի արտադրման համար օգտագործվում է նկարչական թուղթ, ինչպես նաեւ պոլիգրաֆիական թղթի այլ տեսակներ՝ 1մ² մակերեսով թղթի 100.0,0±5,0 գրամից 5.0,0±7,0 գ զանգվածով, գծագրական ալբոմների եւ թղթապանակների դեպքում՝ գծագրական թուղթ, ինչպես նաեւ պոլիգրաֆիական թղթի այլ տեսակներ՝ 1մ² մակերեսով թղթի 160.0,0±7,0գ-ից 7.0,0±8,0 գ զանգվածով:

7.3. Սանիտարաքիմիական ցուցանիշներին ներկայացվող պահանջները

Արտադրատեսակները պետք է համապատասխանեն քիմիական անվտանգության պահանջներին: Քիմիական անվտանգության պահանջները ներկայացված են 8-րդ աղյուսակում:

Աղյուսակ 8

Մաքրագիր թղթե արտադրատեսակներին ներկայացվող քիմիական անվտանգության պահանջները

Նյութի անվանումը	Որոշվող վնասակար նյութի անվանումը	Նորմատիվ	
		օդային միջավայր (մգ/մ ³), ոչ ավելի	ջրային միջավայր (մգ/լ գ <*>. մգ/դմ ³), ոչ ավելի
Ստվարաթուղթ, թուղթ	Ֆորմալդեհիդ	0,003 <*>	-
	Ֆենոլ	0,003	-
Պոլիվինիլքլորիդային	Ֆորմալդեհիդ	0,003 <*>	-
	Ֆենոլ	0,003	-
	Երկբութիլֆտալատ	չի թույլատրվում	-
	Երկօկտիլֆտալատ	0,02	-
	ացետալդեհիդ	0,01	-
Ստվարաթուղթ, թուղթ՝ գունավոր տպագրության օգտագործմամբ	կապար	-	90 <*>
	մկնդեղ	-	25 <*>
	քրոմ գումարային	-	60 <*>
	ցինկ	-	1,0

<*> Նորմատիվը նշված է՝ հաշվի չառնելով մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածությունը:

**8. ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՂԹԱՊԱՅՈՒՍԱԿՆԵՐ
(ՊՈՐՏՖԵԼՆԵՐ), ԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍԱՊԱՐԿԵՐ ԵՎ ՆՈՒՅՆԱՆՄԱՆ
ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐ**

(ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր՝ 4202-ից)

Արտադրատեսակների անվտանգությունը գնահատվում է՝ ըստ կառուցվածքային բնութագրիչների, սանիտարաքիմիական (հսկվող քիմիական նյութերի ցանկը սահմանվում է՝ կախված նյութի քիմիական կազմից), թունաբանահիգիենիկ (թունավորության ցուցիչ կամ տեղային, մաշկը գրգռող ազդեցություն) ցուցանիշների:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19–ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

8.1. Արտադրատեսակների կառուցվածքին ներկայացվող պահանջները

Տարրական դասարաններում սովորողների համար նախատեսված արտադրատեսակի քաշը պետք է լինի 600 – 700 գրամից ոչ ավելի, միջին եւ բարձր դասարաններում սովորողների համար՝ 1000 գրամից ոչ ավելի:

Արտադրատեսակները պետք է ունենան հակադիր գույների նյութերից պատրաստված մասեր եւ (կամ) լույսի անդրադարձման տարրերով օժանդակ մասեր՝ առջեւի, հետին մակերեսին, ինչպես նաեւ վերին կափարիչի վրա, ու պատրաստված լինեն հակադիր գույների նյութերից:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված արտադրատեսակների՝ թիկունքին հպվող հատվածը պետք է ձեւակայուն լինի:

Տարրական դասարաններում սովորողների համար արտադրատեսակների չափսերին ներկայացվող պահանջները ներկայացված են 9-րդ աղյուսակում:

Աղյուսակ 9

Տարրական դասարաններում սովորողների համար նախատեսված արտադրատեսակների չափսերին ներկայացվող պահանջները

Ցուցանիշներ	Անվտանգ մակարդակ, մմ
Երկարություն (բարձրություն)	300- 360
Առջեւի հատվածի բարձրությունը	220- 260
Լայնություն	60 -100
Ուսագոտու երկարությունը՝ ոչ ավելի	600- 700
Վերելի հատվածում ուսագոտու լայնությունը (400 – 450 մմ երկարությամբ)՝ ոչ ավելի	35 -40
Այսուհետ, ոչ պակաս	20 -25

Թույլատրվում է չափսերը մեծացնել 30 մմ–ից ոչ ավելի:

8.2. Օրգանոլեպտիկ ցուցանիշներին ներկայացվող պահանջները

Հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19–ի թիվ 34 որոշում

8.3. Ֆիզիկահիգիենիկ ցուցանիշներին ներկայացվող պահանջները

Հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19–ի թիվ 34 որոշում

8.4. Սանիտարահիգիենիկ անվտանգությանը ներկայացվող պահանջները

Արտադրատեսակները պետք է համապատասխանեն 10-րդ աղյուսակում ներկայացված քիմիական անվտանգության պահանջներին:

Աղյուսակ 10

Արտադրատեսակներին ներկայացվող քիմիական անվտանգության պահանջները

Նյութեր	Արտազատվող նյութերի անվանումները	Նորմատիվ
		օդային միջավայր (մգ/մ ³), ոչ ավելի
Բնական նյութեր՝ բուսական հումքից, բնական կաշի	Ֆորմալդեհիդ	0,003 <*>
Պոլիամիդային	Ֆորմալդեհիդ կապրոլակտամ հեքսամեթիլենդիամին	0,003 <*> 0,06 0,001
Պոլիէթերային	Ֆորմալդեհիդ դիմեթիլտերեֆտալատ ացետալդեհիդ	0,003 <*> 0,01 0,01
Պոլիակրիլոնիտրիլային	Ֆորմալդեհիդ ակրիլոնիտրիլ վինիլացետատ	0,003 <*> 0,03 0,15
Պոլիուրետանային	Ֆորմալդեհիդ տոլուիլոնդիիզոցիանատ ացետալդեհիդ	0,003 <*> 0,002 0,01
Պոլիվինիլքլորիդային	Ֆորմալդեհիդ ֆենոլ երկօկտիլֆտալատ երկբութիլֆտալատ ացետոն	0,003 <*> 0,003 0,02 չի թույլատրվում 0,35
Արհեստական՝ վիսկոզային եւ ացետատային	Ֆորմալդեհիդ քացախաթթու	0,003 <*> 0,06
Պոլիօլեֆինային	Ֆորմալդեհիդ ացետալդեհիդ	0,003 <*> 0,01
Վինիլացետատներ (արհեստական կաշի)	Ֆորմալդեհիդ վինիլացետատ երկօկտիլֆտալատ երկբութիլֆտալատ	0,003 <*> 0,15 0,02 չի թույլատրվում
Սինթետիկ կաշի	Ֆորմալդեհիդ երկբութիլֆտալատ	0,003 <*> չի թույլատրվում

	երկօկտիլֆտալատ	0,02
Ռետինե	ֆորմալդեհիդ երկբութիլֆտալատ երկօկտիլֆտալատ	0,003 <*> չի թույլատրվում 0,02
Ստվարաթուղթ	ֆորմալդեհիդ	0,003 <*>

<*> Նորմատիվը նշված է՝ հաշվի չառնելով մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածությունը:

8.5. Թունաբանահիգիենիկ ցուցանիշներին ներկայացվող պահանջները

8.5.1. Աշակերտների մաշկային ծածկույթի հետ շփվող արտադրատեսակների կառուցվածքային տարրերը չպետք է ունենան տեղային, մաշկը գրգռող ազդեցություն:

8.5.2. Արտադրատեսակների թունավորության ցուցիչը, որը որոշվում է օդային միջավայրում, պետք է լինի 80-ից մինչև 120%-ը ներառյալ:

Թունավորության ցուցիչի արժեքը, որը որոշվում է լյումինեսցենտային մանրէաբանական թեստի միջոցով, պետք է լինի 20%-ից պակաս:

9. ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԿԱՄ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ

(ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրերը՝ 3926 10 000 0, 4016 92 000 0)

Արտադրատեսակների անվտանգությունը գնահատվում է՝ ըստ սանիտարաքիմիական (հսկվող քիմիական նյութերի ցանկը սահմանվում է՝ կախված նյութի քիմիական կազմից), թունաբանահիգիենիկ (թունավորության ցուցիչ կամ տեղային, մաշկը գրգռող ազդեցություն) ցուցանիշների:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

9.1. Օրգանլեպտիկ ցուցանիշներին ներկայացվող պահանջները

Հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշում

9.2. Սանիտարահիգիենիկ անվտանգությանը ներկայացվող պահանջները

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

Արտադրատեսակները պետք է համապատասխանեն 3.3.1 (2-րդ աղյուսակում) եւ 3.3.2 կետերում ներկայացված քիմիական անվտանգության պահանջներին: Սանիտարաքիմիական ուսումնասիրություններ իրականացնելիս որպես պարտադիր մոդելային միջավայր է հանդես գալիս թորած ջուրը:

9.3. Թունաբանահիգիենիկ ցուցանիշներին ներկայացվող պահանջները

10.3.1. Արտադրատեսակները չպետք է ունենան տեղային, մաշկը գրգռող ազդեցություն :

10.3.2. Արտադրատեսակների թունավորության ցուցիչը ջրային միջավայրում (թորած ջուր) պետք է լինի 70-120%-ը ներառյալ, իսկ օդային միջավայրում՝ 80-120%-ը ներառյալ:

Թունավորության ցուցիչի արժեքը, որը որոշվում է լյումինեսցենտային մանրէաբանական թեստի միջոցով, պետք է 20%-ից պակաս լինի:

Բաժին 3. Ջրամաքրման եւ ջրապատրաստման համար օգտագործվող նյութերին, ռեագենտներին, սարքավորումներին ներկայացվող պահանջները

1.ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

1.1. Սույն բաժնի պահանջները տարածվում են ՄՄ ԱՏԳ ԱԱ հետեւյալ ծածկագրերի վրա՝ 3802 10 000 0, 3917, 4812 00 000 0, 4823 20 000, 7310 21, 7310 29, 8413 70 300 0, 8421 21 000, 8516 10, մասնավորապես՝

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16–ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)

– ջրին ավելացվող ռեագենտներ (մակարդիչներ (կոագուլյանտներ), պոլիէլեկտրոլիտներ (ֆլոկուլյանտներ, ալգիցիդներ), հակադիտներ, հակաքայքայիչ միջոցներ, կայունացուցիչներ).

– օժանդակ սարքավորում եւ կոնստրուկցիոն նյութեր (խողովակներ, միացման արմատուրա, ծորակներ, ջրի պահպանման եւ տեղափոխման համար նախատեսված պոլիմերային, մետաղյա տարաներ, ջրատաքացուցիչներ, մեկուսիչ նյութեր, միջաշերտեր եւ այլն).

– ջրի հետ շփվող սարքավորումների եւ կոնստրուկցիոն նյութերի մակերեսների մշակման համար օգտագործվող նյութեր (լաքեր, ներկեր, էմալներ, հերմետիկ նյութեր, քսուքներ, հակաքայքայիչ երեսապատման նյութեր, ռետինե նյութեր, պոլիմերային նյութեր եւ այլն).

– գտիչ, հատիկավոր նյութեր, բնական եւ արհեստական ծագման կլանիչներ եւ թաղանթներ (ավազ, մանրախիճ, ցեոլիտներ, կերամզիտներ, շունգիզիտներ, կլինօպտիլոլիտներ, ածուխներ, իոնափոխանակիչ խեժեր, պոլիմերային թաղանթներ):

1.2. Ուսումնասիրություններ իրականացնելիս հնարավոր է առանձնացնել տիպային նմուշ/ներկայացուցիչ:

Ջրին ավելացվող ռեագենտների տիպային նմուշ՝ միատեսակ արտադրանքի

խմբից ընտրված նմուշ, որը պատրաստված է նույն արտադրողի կողմից՝ միասնական տեխնիկական պահանջներին համապատասխան, ունի միեւնույն հումքային եւ բաղադրիչների կազմը, կիրառության նույն ոլորտը եւ տարբերվում է ակտիվ նյութի (նյութերի) տոկոսային պարունակությամբ, ագրեգատային վիճակով (պինդ կամ հեղուկ) կամ փաթեթվածքի չափով:

Օժանդակ սարքավորումների տիպային նմուշ (ջրատաքացուցիչներ, խմելու ջրի մաքրման եւ լրացուցիչ մաքրման համար նախատեսված կենցաղային սարքավորումներ, էլեկտրոլիզային կայանքներ, օզոնարարներ)՝ միատեսակ արտադրանքի խմբից ընտրված նմուշ, որը պատրաստված է նույն արտադրողի կողմից՝ միասնական տեխնիկական պահանջներին համապատասխան, ունի նույն կառուցվածքը, կիրառության նույն ոլորտը եւ գործարկման նույն պայմանները, սակայն տարբերվում է արտադրողականությամբ, չափսերով եւ ընդհանուր տեսքով:

Կոնստրուկցիոն նյութերի (խողովակներ, միացման արմատուրա, ծորակներ, ջրի պահպանման եւ տեղափոխման համար նախատեսված պոլիմերային, մետաղյա տարաներ, միջաշերտեր, մեկուսիչ նյութեր եւ այլն) տիպային նմուշ՝ միատեսակ արտադրանքի խմբից ընտրված նմուշ, որը պատրաստված է նույն արտադրողի կողմից՝ միասնական տեխնիկական պահանջներին համապատասխան, ունի միեւնույն հումքային եւ բաղադրիչների կազմը, կիրառության նույն ոլորտը եւ գործարկման նույն պայմանները, սակայն տարբերվում է չափսով, տրամագծով, ձեւով, ծավալով:

Ջրի հետ շփվող մակերեսների մշակման համար օգտագործվող նյութերի (լաքեր, ներկեր, էմալներ, հերմետիկ նյութեր, քսուքներ, հակաքայքայիչ, պոլիմերային երեսապատման նյութեր եւ այլն) տիպային նմուշներ՝ միատեսակ արտադրանքի խմբից ընտրված նմուշ, որը պատրաստված է նույն արտադրողի կողմից՝ միասնական տեխնիկական պահանջներին համապատասխան, ունի միեւնույն հումքային եւ բաղադրիչների կազմը, կիրառության նույն ոլորտը եւ գործարկման նույն պայմանները, սակայն տարբերվում է հիմնական նյութերի տոկոսային պարունակությամբ, ագրեգատային վիճակով (պինդ կամ հեղուկ) կամ փաթեթվածքի չափով:

Ձտիչ հատիկավոր նյութերի, բնական եւ արհեստական ծագման կլանիչների եւ թաղանթների տիպային նմուշներ՝ միատեսակ արտադրանքի խմբից ընտրված նմուշ, որը պատրաստված է նույն արտադրողի կողմից՝ միասնական տեխնիկական պահանջներին համապատասխան, ունի միեւնույն հումքային եւ բաղադրիչների կազմը, կիրառության նույն ոլորտը եւ գործարկման նույն պայմանները, իսկ բնական ծագման նյութերի համար՝ նաեւ միեւնույն ծագման վայրը, հատիկների մակերեսային ընդհանուր տեսքը, սակայն տարբերվում է անցքերի չափսով, կլանման (փոխանակման) տարողունակությամբ կամ փաթեթվածքի ծավալով:

(1.2 կետն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշմամբ)

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1. Ջրամաքրման եւ ջրապատրաստման համար օգտագործվող նյութերը, ռեագենտները եւ սարքավորումները շահագործման ընթացքում չպետք է՝

– վնասակար ազդեցություն ունենան մարդու առողջության եւ շրջակա միջավայրի օբյեկտների վրա (ջրային օբյեկտներ, հող, օդ, սննդամթերք, բնակավայր)՝ որպես մարդու բնական միջավայր.

– վատթարացնեն ջրի օրգանոլեպտիկ հատկությունները.

– հանգեցնեն ջրում հիգիենիկ նորմատիվները գերազանցող խտությամբ միացությունների առաջացմանը.

– նպաստեն բուսակալմանը եւ ջրում բուսական միկրոօրգանիզմների առաջացմանը.

– առաջացնեն հիգիենիկ նորմատիվները գերազանցող խտությամբ միացություններ եւ (կամ) կերպափոխության արգասիքներ.

– կիրառության ընթացքում վնասակար ազդեցություն ունենան աշխատողների առողջության վրա:

**3. ՋՐԱՄԱՔՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ
ՆՅՈՒԹԵՐԻ, ՌԵԱԳԵՆՏՆԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

3.1. Ջրամաքրման եւ ջրապատրաստման համար օգտագործվող նյութերի եւ ռեագենտների՝ մարդու համար անվտանգությունն ապահովվում է պարունակության կանոնակարգման միջոցով՝

– ջրում՝ հիմնական քիմիական բաղադրիչների, խառնուրդների եւ կերպափոխության արգասիքների պարունակությունը.

– արգասիքում՝ ելակետային կողմնակի քիմիական նյութերի եւ այլ խառնուրդների պարունակությունը:

3.2. Նորահայտ քիմիական ռեագենտների, նյութերի, կերպափոխության արգասիքների եւ խառնուրդների համար անհրաժեշտ է մշակել ջրում դրանց պարունակության հիգիենիկ նորմատիվներ:

3.3. Ջրամատակարարման համակարգերում օգտագործվող կոնստրուկցիոն նյութերի եւ ներքին ծածկույթների անվտանգության գնահատման չափորոշիչները՝

– օրգանոլեպտիկ (ջրային լուծամզուկի հոտը եւ կողմնակի համը 200 եւ 600 °C ջերմաստիճանում, ջրային լուծամզուկի փրփրագոյացումը, գույնը).

– ֆիզիկաքիմիական (ջրածնային ցուցանիշ pH, պերմանգանատային օքսիդացում).

– ջրային լուծամզուկում 1-ին եւ 2-րդ դասերի վտանգավորության միացությունների խտությունը չպետք է գերազանցի ջրում դրանց ՍԹԽ-ի 1/2-ը, 3-րդ եւ 4-րդ դասերի վտանգավորության միացությունների դեպքում՝ ջրում ՍԹԽ-ն: Ջրային լուծամզուկում 1-ին եւ 2-րդ աստիճանի վտանգավորության երկու եւ ավելի նյութեր հայտնաբերելու դեպքում, որոնք բնութագրվում են թունավոր ազդեցության միաուղղորդված մեխանիզմով, համապատասխան ՍԹԽ-ի նկատմամբ դրանցից յուրաքանչյուրի խտության հարաբերության գումարը չպետք է գերազանցի

միավորը:

3.4. Ջրապատրաստման նորագույն տեխնոլոգիաների անվտանգության գնահատման ժամանակ հիգիենիկ անվտանգության չափորոշիչները համալրվում են հետեւյալ պահանջներով այն մասին, որ ջրային լուծամզուկները չպետք է ունենան՝

- ընդհանուր թունավոր ազդեցություն,
- մաշկագրգռիչ ազդեցություն,
- ալերգիկ ազդեցություն,
- մուտագեն ազդեցություն:

3.5. Ջրամաքրման եւ ջրապատրաստման համար օգտագործվող ռեագենտների անվտանգության գնահատման չափորոշիչները՝

– ջրամատակարարման համար որպես ռեագենտներ թույլատրվում է օգտագործել միայն վտանգավորության 3–4–րդ դասերի միացությունները (բացառությամբ ջրի ախտահանման միջոցների)։

վտանգավորության 2–րդ դասի ռեագենտների կիրառությունը թույլատրվում է ջերմամատակարարման, ինչպես նաեւ հետադարձ ջրամատակարարման փակ համակարգերում՝ տեխնոլոգիական առումով անհրաժեշտ խտություններով՝ ջրային օբյեկտներ դրանց արտանետման դեպքում պահպանելով այդպիսի ջրերում ռեագենտների ՍԹԽ–ն։

– ռեագենտի եռակի աշխատանքային դոզայի հաշվարկով՝ վտանգավորության 1–ին եւ 2–րդ դասերի նյութերի պարունակությունը ջրում չպետք է գերազանցի ՍԹԽ–ի 1/2–ը, իսկ վտանգավորության 3–րդ եւ 4–րդ դասերի դեպքում՝ ՍԹԽ–ն:

3.6. ՄՄ ԱՏԳ ԱԱ 8413 70 300 0, 8516 10 ծածկագրերի համաձայն՝ հսկվող ապրանքների հետեւյալ խմբերը գնահատվում են «Մեքենաշինության, գործիքաշինության եւ էլեկտրատեխնիկայի արտադրանքին ներկայացվող պահանջների» թիվ 7 բաժնում նշված ֆիզիկական գործոնների պարամետրերով:

Նշված արտադրանքի անվտանգության ցուցանիշները ներկայացված են սույն

Միասնական սանիտարական պահանջների II գլխի 3-րդ բաժնի 3.1 – 3.2 հավելվածներում:

Հավելված 3.1.

Սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա ապրանքներին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ միասնական պահանջների գլխի 3-րդ բաժնի

Ջրամաքրման եւ ջրապատրաստման համար օգտագործվող նյութերին, ռեագենտներին, սարքավորումներին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջները (հսկվող ցուցանիշների ցանկը)

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456, 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշումների խմբագրությամբ)

Աղյուսակ 1. Ջրամատակարարման համակարգերում օգտագործվող նյութերից՝ ջրային լուծամզուկներում հսկվող ցուցանիշների ցանկը

Նյութի անվանումը	Հսկվող ցուցանիշները
1. Պոլիմերային նյութեր	
1.1. Պոլիէթիլեն (ՔՃՊԷ, ՑՃՊԷ), պոլիպրոպիլեն, էթիլենով պրոպիլենի համապոլիմերներ, պոլիբութիլեն, պոլիհիդրոբութիլեն, պոլիօլեֆինների հիմքով համակցված նյութեր	ֆորմալդեհիդ
	մեթիլսպիրտ
	բութիլ-սպիրտ
	իզոբութիլային սպիրտ
	ացետալդեհիդ
	էթիլացետատ
	ացետոն
1.2. Պոլիստիրոլային պլաստիկներ	
1.2.1. Պոլիստիրոլ (բլոկային, կախույթային, հարվածակայուն)	ստիրոլ
	մեթիլսպիրտ
	ֆորմալդեհիդ

1.2.2. Ստիրուլի համապուլիմեր՝ ակրիլոնիտրիլով	ստիրուլ
	ակրիլոնիտրիլ
	ֆորմալդեհիդ
1.2.3. Ստիրուլի համապուլիմեր՝ մեթիլմեթակրիլատով	ստիրուլ
	մեթիլմեթակրիլատ
	մեթիլսպիրտ
	ֆորմալդեհիդ
1.2.4. Ստիրուլի համապուլիմեր՝ մեթիլմեթակրիլատով եւ ակրիլոնիտրիլով	ստիրուլ
	մեթիլմեթակրիլատ
	ակրիլոնիտրիլ
	մեթիլսպիրտ
1.2.5. Ստիրուլի համապուլիմեր՝ ալֆա- մեթիլստիրուլով	ստիրուլ
	ալֆա-մեթիլստիրուլ
	երկբութիլֆտալատ
	ֆորմալդեհիդ
1.2.6. Ստիրուլի համապուլիմեր՝ բութադիենով	ստիրուլ
	մեթիլսպիրտ
	բութիլ-սպիրտ
	ացետալդեհիդ
1.2.7. Փոփրապուլիստիրոլներ	ստիրուլ
	մեթիլսպիրտ
	ֆորմալդեհիդ
	բենզոլ
	տոլուոլ
1.3. Պոլիվինիլքլորիդային պլաստիկներ	
1.3.1. Կոշտ ՊՎՔ	վինիլ քլորային
	ացետալդեհիդ
	մեթիլսպիրտ
	բութիլ-սպիրտ
	ցինկ
1.3.2. Անհրաժեշտ է որոշել պլաստիկացված ՊՎՔ-ը՝ ի լրումն կոշտ ՊՎՔ-ի համար նշված ցուցանիշների	երկօկտիլֆտալատ
	երկբութիլֆտալատ
1.4. Վինիլացետատի եւ դրա ածանցյալների հիմքով պուլիմերներ պոլիվինիլացետատ, պոլիվինիլային սպիրտ, վինիլացետատի համապուլիմերային դիսպերսիա երկբութիլմալեինատով	ֆորմալդեհիդ
	ացետալդեհիդ
1.5. Պոլիակրիլատներ	ակրիլոնիտրիլ
	մեթիլակրիլատ
	մեթիլմեթակրիլատ
	բուտիլակրիլատ
1.6. Պոլիօրգանոսիլակսաններ (սիլիկոններ)	ֆորմալդեհիդ
	ացետալդեհիդ
	ֆենոլ
	մեթիլսպիրտ

1.7. Պոլիամիդներ	
1.7.1. Պոլիամիդ 6 (պոլիկապրոամիդ, կապրոն)	E-կապրոլակտամ
	ֆենոլ
	բենզոլ
1.7.2. Պոլիամիդ 66 (պոլիհեքսամեթիլենադիպամիդ, նեյլոն)	հեքսամեթիլենդիամին
	մեթիլսպիրտ
	բենզոլ
1.7.3. Պոլիամիդ 610 (պոլիհեքսամեթիլենսեբացինամիդ)	հեքսամեթիլենդիամին
	մեթիլսպիրտ
	բենզոլ
1.8. Պոլիուրետաններ	էթիլենգլիկոլ
	ֆորմալդեհիդ
	ացետալդեհիդ
	մեթիլսպիրտ
1.9. Պոլիէթերներ	
1.9.1. Պոլիէթիլենօքսիդ	ֆորմալդեհիդ
	ացետալդեհիդ
1.9.2. Պոլիպրոպիլենօքսիդ	մեթիլացետատ
	ացետոն
	ֆորմալդեհիդ
	ացետալդեհիդ
1.9.3. Պոլիտետրամեթիլենօքսիդ	պրոպիլսպիրտ
	ֆորմալդեհիդ
	ացետալդեհիդ
1.9.4. Պոլիֆենիլօքսիդ	ֆենոլ
	ֆորմալդեհիդ
	մեթիլսպիրտ
1.9.5. Պոլիէթիլենտետրաֆտալատ եւ տերեֆտալային թթվի հիմքով համապոլիմերներ	ացետալդեհիդ
	էթիլենգլիկոլ
	դիմեթիլտերեֆտալատ
	ֆորմալդեհիդ
	մեթիլսպիրտ
1.9.6. Պոլիկարբոնատ	ֆենոլ
	մեթիլենքլորիդ (երկքլորմեթան)
1.9.7. Պոլիսուլֆոն	բենզոլ
	ֆենոլ
1.9.8. Պոլիֆենիլենսուլֆիդ	ֆենոլ
	ացետալդեհիդ
	մեթիլսպիրտ
	բոր
1.9.9. Որպես միացնող նյութ օգտագործելիս՝	
ֆենոլֆորմալդեհիդային խեժերի դեպքում՝	ֆենոլ
	ֆորմալդեհիդ
սիլիցիումօրգանական խեժերի դեպքում՝	ֆորմալդեհիդ
	մեթիլսպիրտ
	բութիլ-սպիրտ
	ֆենոլ

էպօքսիդային խեժերի դեպքում՝	էպիքլորհիդրին
	ֆենոլ
	ֆորմալդեհիդ
1.10. Ֆտորապլաստներ՝ ֆտորապլաստ-3, ֆտորապլաստ-4, տեֆլոն	ֆտոր-իոն (գումարային)
	ֆորմալդեհիդ
	երկբութիլֆտալատ
1.11. Ֆենոլապլդեհիդային խեժերի հիմքով պլաստմասսաներ (ֆենոպլաստներ)	ֆորմալդեհիդ
	ացետալդեհիդ
	ֆենոլ
1.12. Պոլիֆորմալդեհիդ	ֆորմալդեհիդ
	ացետալդեհիդ
1.13. Ամինոպլաստներ (կարբամիդա- եւ մելամինաֆորմալդեհիդային մամլած զանգվածներ)	ֆորմալդեհիդ
1.14. Պոլիմերային նյութեր էպօքսիդային խեժերի հիմքով	էպիքլորհիդրին
	ֆենոլ
	երկֆենիլոլպրոպան
	ֆորմալդեհիդ
1.15. Իոնամերային խեժեր, այդ թվում՝ սերլին	ֆորմալդեհիդ
	ացետալդեհիդ
	մեթիլսպիրտ
	ցինկ
2. Թաղանթանյութ (ցելյուլոզա)	էթիլացետատ
	ֆորմալդեհիդ
	բենզոլ
	ացետոն
3. Սովարաթուղթ՝ զտիչ	էթիլացետատ
	ացետալդեհիդ
	մեթիլսպիրտ
	ֆորմալդեհիդ
	կապար
	ցինկ
	մկնդեղ
	քրոմ (Cr ³⁺)
	քրոմ (Cr ⁶⁺)
	կադմիում
	ցինկ
	երկատոմիտի ավելացմամբ (լրացուցիչ)
սիլիցիում	
երկաթ	
մանգան	
4. Կերամիկական արտադրատեսակներ	բոր
	ցինկ
	ալյումին
	կադմիում
	մանգան
	քրոմ (Cr ³⁺)

	քրոմ (Cr ⁶⁺)
	կոբալտ
	պղինձ
	քրոմ
	կապար
5. Անօրգանական, զտիչ նյութեր	
5.1. Երկատոմիտներ	սիլիցիում
	ալյումին
	երկաթ
	կադմիում
	կապար
	ցինկ
	պղինձ
6. Մետաղներ, համաձուլվածքներ	
6.1. Թուջ	երկաթ
	քրոմ (Cr ³⁺)
	քրոմ (Cr ⁶⁺)
	նիկել
	պղինձ
	կադմիում
	կապար
	ցինկ
	մանգան
	ալյումին
6.2. Պողպատ	երկաթ
	մանգան
	քրոմ (Cr ³⁺)
	քրոմ (Cr ⁶⁺)
	նիկել
	պղինձ
	սիլիցիում
	կադմիում
	կապար
	ցինկ
	ալյումին
	մոլիբդեն (մոլիբդենային պողպատների համար)
	տիտան (տիտանային պողպատների համար)
	վանադիում (տիտանային պողպատների համար)
(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշման խմբագրությամբ)	
6.3. Պղինձ	պղինձ
	մկնդեղ
	երկաթ
	նիկել

	կապար
	ծարիր
	կադմիում
	ցինկ
6.4. Արույր	պղինձ
	ցինկ
	երկաթ
	կապար
	ալյումին
	մանգան
	նիկել
	սիլիցիում
	կադմիում
	անագ
6.5. Բրոնզներ	պղինձ
	ցինկ
	նիկել
	կապար
	ալյումին
	երկաթ
	մանգան
	կադմիում
	անագ
6.6. Նիկելային համաձուլվածքներ	նիկել
	սիլիցիում
	մանգան
	ալյումին
	քրոմ (Cr^{3+})
	քրոմ (Cr^{6+})
	պղինձ
	երկաթ
	կադմիում
	կապար
	ցինկ
6.7. Ցինկ եւ դրա համաձուլվածքները	ցինկ
	կապար
	երկաթ
	կադմիում
	պղինձ
	մանգան
6.8. Տիտան՝ տեխնիկական	տիտան
	երկաթ
	սիլիցիում
	ցինկ
	կապար
	կադմիում
	պղինձ

6.9. Տիտանի համաձուլվածքներ	տիտան	
	ալյումին	
	ցինկ	
	կապար	
	կադմիում	
	պղինձ	
7. Զտող, հատիկավոր բնական նյութեր՝		
7.1. Ավազ, մանրախիճ, ցեոլիտներ, կլինոպտիլոլիտներ, ածուխներ	երկաթ	
	մանգան	
	նիկել	
	կադմիում	
	պղինձ	
	սիլիցիում	
	ցինկ	
	կապար	
	ալյումին	
	բոր (ցեոլիտների համար)	
	կոբալտ (ցեոլիտների համար)	
	մոլիբդեն (ցեոլիտների համար)	
	արսեն (ցեոլիտների համար)	
	սնդիկ (ցեոլիտների համար)	
	քրոմ՝ ընդհանուր (ցեոլիտների համար)	
	ամոնիակ՝ ըստ ազոտի (ցեոլիտների համար)	
	նիտրիտներ (ըստ NO ₂ -ի) (ցեոլիտների համար)	
	ջրային լուծամզուկի ճառագայթային անվտանգության ցուցանիշներ՝ տեսակարար գումարային ալֆա-ռադիոակտիվություն եւ բետա-ռադիոակտիվություն (նորմատիվը՝ 9-րդ բաժնի 9.1 հավելվածի 3-րդ աղյուսակում)	
	(7-րդ կետն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշմամբ)	
	8. Ակտիվացված ածուխ	երկաթ
		մանգան
		կադմիում
		պղինձ
ցինկ		
կապար		
բենզ(ա)պիրեն		
քրոմ (6 ⁺)		
քրոմ (3 ⁺)		
(8-րդ կետն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշմամբ)		

9. Ձտող, հատիկավոր արհեստական նյութեր՝	
9.1. Կերամզիտներ, շունգիտներ եւ այլն	երկաթ
	մանգան
	նիկել
	կադմիում
	պղինձ
	սիլիցիում
	ցինկ
	կապար
	ալյումին
(9-րդ կետն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշմամբ)	
10. Ռետիններ	թիուրամ D
	կապտաքս
	երկբութիլֆտալատ
	ցինկ
	ստիրոլ (ստիրոլային ռետիններից)
(10-րդ կետն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշմամբ)	

Աղյուսակ 2. Տաք ջրամատակարարման բաց համակարգերում օգտագործվող ռեազենտներին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական պահանջները

Արդյունքի (ռեազենտի) քիմիական դասը	Հսկվող ցուցանիշների ցանկը
1. Ռեազենտներ՝ ալկիլամինաֆոսֆոնային թթուների հիմքով	Հոտը
	Կողմնակի համր
	Գույնը
	Պղտորությունը
	Ջրածնային ցուցանիշը
	Պերմանգանատային օքսիդացում
	Ալյումին
	Երկաթ
	Կադմիում
	Կոբալտ
	Պղինձ
	Նիկել
	Սնդիկ
	Կապար
	Ֆորմալդեհիդ
Քրոմ ընդհանուր	
Ցինկ	
2. Ռեազենտներ՝ օքսիէթիլիդենդիֆոսֆոնային թթուների	Հոտը
	Կողմնակի համր

(ՕԷԴՖԹ) հիմքով

Գույնը
Պղտորությունը
Ջրածնային ցուցանիշը
Պերմանգանատային օքսիդացում
Ալյումին
Երկաթ
Կադմիում
Կոբալտ
Մանգան
Պղինձ
Նիկել
Սնդիկ
Կապար
Քրոմ ընդհանուր
Ցինկ

Աղյուսակ 3. Ջրամաքրման եւ ջրապատրաստման համար օգտագործվող սինթետիկ պոլիէլեկտրոլիտներին (ֆլուկուլյանտներ, ալգիցիդներ) ներկայացվող սանիտարահամաճարակաբանական պահանջները

Արդյունքի (ռեագենտի) քիմիական դասը	Հսկվող ցուցանիշների ցանկը	Նորմատիվը արդյունքում՝ մգ/կգ
1. Պոլիակրիլամիդներ (ՊԱԱ)	Հոտը	-
	Կողմնակի համը	-
	Գույնը	-
	Պղտորությունը	-
	Ջրածնային ցուցանիշը	-
	Պերմանգանատային օքսիդացում	-
	Ակրիլամիդ	< 250
	Ակրիլային թթու	9500
2. Պոլիամիններ (ՊոլիԵԱԵՄԱՔ)	Հոտը՝ բալերով	-
	Կողմնակի համը	-
	Գույնը	-
	Պղտորությունը	-
	Ջրածնային ցուցանիշը	-
	Պերմանգանատային օքսիդացում	-
	Էպիքլորհիդրին	20
	Երկմեթիլամին	2000
3. ՊոլիԵԱԵՄԱՔ	1,3-երկքլոր-2-պրոպանոլ	1000
	Հոտը	-
	Կողմնակի համը	-
	Գույնը	-
	Պղտորությունը	-

	Ջրածնային ցուցանիշը	-
	Պերմանգանատային օքսիդացում	-
	ԵԱԵՄԱՔ (երկալիլերկմեթիլամինոնիումի քլորիդ)	< 0,5%
4. Ալկիլ C 10-16 բենզիլերկմեթիլամինոնիումի քլորիդ	Հոտը	-
	Կողմնակի համը	-
	Գույնը	-
	Պղտորությունը	-
	Ջրածնային ցուցանիշը	-
	Պերմանգանատային օքսիդացում	-
	Բենզիլքլորիդ	-
5. Ալկիլ C 10-20 բենզիլերկմեթիլամինոնիումի քլորիդ	Հոտը	-
	Կողմնակի համը	-
	Գույնը	-
	Պղտորությունը	-
	Ջրածնային ցուցանիշը	-
	Պերմանգանատային օքսիդացումը	-
	Բենզիլքլորիդ	-
6. ալֆա-Ալկիլ C 18-20 օմեգա-օքսիմեթիլենդի (օքսիէթան-1,2-դիլ)երկէթիլմեթան-ամինաբենզոլսուլֆատ	Հոտը	-
	Կողմնակի համը	-
	Գույնը	-
	Պղտորությունը	-
	Ջրածնային ցուցանիշը	-
	Պերմանգանատային օքսիդացումը	-
	Բենզիլքլորիդ	-

Աղյուսակ 4. Ջրամաքրման եւ ջրապատրաստման համար օգտագործվող ռեագենտներին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական պահանջները

Արդյունքի (ռեագենտի) քիմիական դասը	Հսկվող ցուցանիշների ցանկը
1. Ռեագենտներ՝ ալյումինի հիմքով	Հոտը
	Կողմնակի համը
	Գույնը
	Պղտորությունը
	Ջրածնային ցուցանիշը
	Պերմանգանատային օքսիդացում
	Ալյումին
	Բոր

	Երկաթ
	Կադմիում
	Կոբալտ
	Լիթիում
	Մագնեզիում
	Մանգան
	Պղինձ
	Մոլիբդեն
	Արսեն
	Նիկել
	Սնդիկ
	Կապար
	Քրոմ ընդհանուր
	Ցինկ
2. Ռեագենտներ՝ ամոնիակի հիմքով	Հոտը
	Կողմնակի համը
	Գույնը
	Պղտորությունը
	Ջրածնային ցուցանիշը
	Պերմանգանատային օքսիդացում
	Ամոնիակ
	Ալյումին
	Բոր
	Երկաթ
	Կադմիում
	Լիթիում
	Պղինձ
	Արսեն
	Նիկել
	Սնդիկ
	Կապար
	Քրոմ ընդհանուր
	Ցինկ
3. Ռեագենտներ՝ երկաթի քլորիդի հիմքով	Հոտը
	Կողմնակի համը
	Գույնը
	Պղտորությունը
	Ջրածնային ցուցանիշը
	Պերմանգանատային օքսիդացում
	Ալյումին
	Բոր
	Երկաթ
	Կադմիում
	Լիթիում
	Մանգան

	Պղինձ
	Արսեն
	Նիկել
	Սնդիկ
	Կապար
	Քրոմ ընդհանուր
	Ցինկ
4. Ռեագենտներ՝ ծծմբական թթվի հիմքով	Հոտը
	Կողմնակի համր
	Գույնը
	Պղտորությունը
	Ջրածնային ցուցանիշը
	Պերմանգանատային օքսիդացում
	Սուլֆատ իոն
	Ալյումին
	Բոր
	Երկաթ
	Կադմիում
	Լիթիում
	Մանգան
	Պղինձ
	Նիկել
	Սնդիկ
	Կապար
	Քրոմ ընդհանուր
	Ցինկ

Հավելված 3.2

Սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա ապրանքներին ներկայացվող՝ սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ միասնական պահանջների գլխի 3-րդ բաժնի

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456,
2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշումների խմբագրությամբ)

Աղյուսակ 1

**Ջրամաքրման ու ջրապատրաստման համար օգտագործվող՝ ուսումնասիրվող
նյութերից, ռեագենտներից, սարքավորումներից ստացված ջրային
լուծամզուկների օրգանոլեպտիկ ու ֆիզիկաքիմիական ցուցանիշների հիգիենիկ
նորմատիվները**

Հ հ/հ	Ցուցանիշների անվանումը	Հիգիենիկ նորմատիվի մեծությունը
1.	Օրգանոլեպտիկ ցուցանիշներ՝	
1.1.	հոտը	2 բալլից ոչ ավելի
1.2.	գույնը	20 աստիճանից ոչ ավելի
1.3.	պղտորությունը	պղտորությունը՝ 2,6 միավորից ոչ ավելի՝ ըստ ֆորմազինի կամ 1,5 մգ/լ ըստ կառլինի
1.4.	նստվածքի առկայությունը	բացակայություն
1.5.	փրփրագոյացում	կայուն, խոշոր պղպջակավոր փրփուրի բացակայություն, մանր պղպջակավոր փրփուրի բարձրությունը գլանի պատերի վրա՝ 1մմ-ից ոչ ավելի
2.	Ֆիզիկաքիմիական՝	
2.1.	ջրածնային ցուցանիշը (pH)	6-9-ի սահմաններում
2.2.	պերմանգանատային օքսիդացման մեծությունը	5,0 մգ/լ-ից ոչ ավելի

**Ջրում քիմիական նյութերի պարունակության հիգիենիկ նորմատիվները
(կենցաղային եւ խմելու կարիքների համար ջրամատակարարման մեջ
օգտագործվող նյութերից ու ռեագենտներից վնասակար նյութերի միգրացիան
հսկելու համար)**

	Նյութի անվանումը	Նորմատիվները (սահմանային թույլատրելի խտությունները (ՄԹԽ)), մգ/լ-ում ոչ ավելի, քան	Վնասակարության ցուցանիշը	Վտանգավորության դասը
1	2	3	4	5
1. ԸՆԴՀԱՆՐԱՅՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ				
1.	Ընդհանուր հանքայնացում (չոր մնացորդ)	1000		
2.	Ընդհանուր կոշտություն	7,0 մգ-էկվ./լ		
3.	Նավթամթերքներ՝ գումարային	0,1		
4.	Մակերեսային ակտիվ նյութեր (ՄԱՆ), անիոնաակտիվներ	0,5		
II. ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ				
1. Տարրեր, կատիոններ				
5.	Ալյումին (Al^{3+})	0,5	u/թ	2
6.	Ամոնիակ (ըստ ազոտի)	2,0	u/թ	3
7.	Բարիում (Ba^{2+})	0,7	u/թ	2
8.	Բերիլիում (Be^{2+})	0,0002	u/թ	1
9.	Բոր (B, գումարային)	0,5	u/թ	2
10.	Վանադիում	0,1	u/թ	3
11.	Բիսմութ	0,1	u/թ	2
12.	Հանվել է: Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի նոյեմբերի 18 -ի թիվ 456 որոշում			
13.	Երկաթ (Fe, գումարային)	0,3	օրգ.	3
14.	Կադմիում (Cd, գումարային)	0,001	u/թ	2
15.	Կոբալտ	0,1	u/թ	2
16.	Սիլիցիում	10,0	u/թ	2
17.	Լիթիում	0,03	u/թ	2
18.	Մանգան (Mn, գումարային)	0,1	օրգ.	3
19.	Պղինձ (Cu, գումարային)	1,0	օրգ.	3
20.	Մոլիբդեն (Mo, գումարային)	0,25	u/թ	2
21.	Արսեն (As, գումարային)	0,05	u/թ	2
22.	Նատրիում	200,0	u/թ	2
23.	Նիկել (Ni, գումարային)	0,1	u/թ	3

24.	Հանվել է: Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի նոյեմբերի 18 -ի թիվ 456 որոշում			
25.	Սնդիկ (Hg, գումարային)	0,0005	u/թ	1
26.	Կապար (Pb, գումարային)	0,03	u/թ	2
27.	Սելեն (Se, գումարային)	0,01	u/թ	2
28.	Արծաթ	0,05	u/թ	2
29.	Ստրոնցիում (Sr ²⁺)	7,0	u/թ	2
30.	Ծարիր	0,05	u/թ	2
31.	Թալիում	0,0001	u/թ	1
32.	Տիտան	0,1	ընդհ.	3
33.	Հանվել է: Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշում			
34.	Քրոմ (Cr ⁶⁺)	0,05	u/թ	3
35.	Քրոմ (Cr ³⁺)	0,5	u/թ	3
36.	Ցինկ (Zn ²⁺)	5,0	օրգ.	3
2. Անիոններ				
37.	Բրոմիդ-իոն	0,2	u/թ	2
38.	Հանվել է: Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի նոյեմբերի 18 -ի թիվ 456 որոշում			
39.	456 որոշում			
40.	Նիտրատներ (ըստ NO ₄ -ի)	45	u/թ	3
41.	Նիտրիտ-իոն	3,0	օրգ.	2
42.	Ջրածնի պերօքսիդ	0,1	u/թ	2
43.	Պերսուլֆատ-իոն	0,5	u/թ	2
44.	Պերքլորատ-իոն	5,0	u/թ	2
45.	Պոլիֆոսֆատներ (ըստ PO ₄ ³⁻ -ի)	3,5	օրգ.	3
46.	Ծծմբաջրածին (ջրածնի սուլֆիդ)	0,003	օրգ. հոս	4
47.	Սուլֆատներ (SO ₄ ²⁻)	500	օրգ.	4
48.	Քլորատ-իոն	20,0	օրգ. կողմնակի համ	3
49.	Ռոդանիտ-իոն	0,1	u/թ	2
50.	Հեքսացիանաֆերիատ իոն	1,25	u/թ	2
51.	Ֆտորիդներ (F)	1,5	u/թ	2
52.	Քլորիդներ (Cl)	350	զգայ.	4
53.	Քլորիտ իոն	0,2	u/թ	3
54.	Ցիանիդներ (CN)	0,07	u/թ	2
II. ՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ				
55.	Ակրիլամիդ (պրոպենամիդ, ալրիլաթթու, ամիդ)	0,0001	u/թ	1
56.	Ակրիլային թթու	0,5	u/թ	2
57.	Ակրիլոնիտրիլ	2,0	u/թ	2
58.	Ացետալդեհիդ	0,2	օրգ. հոս	4
59.	Ացետոն (պրոպան-2-ոն)	2,2	ընդհ.	3
60.	Ացետոֆենոն	0,1	u/թ	3
61.	Բենզալդեհիդ	0,003	օրգ. հոս	4
62.	Բենզապիրեն	0,00001	u/թ	1

63.	Բենզիլքլորիդ	0,001	u/թ	2
64.	Բենզոլ	0,01	u/թ	2
65.	Բութադիեն (երկվինիլ)	0,05	օրգ. հոտ	4
66.	Բութիլակրիլատ (ակրիլաթթվի բութիլային եթեր)	0,01	օրգ. կողմնակի համ	4
67.	Բութիլացետատ	0,1	ընդհ.	4
68.	Վինիլացետատ	0,2	u/թ	2
69.	Վինիլքլորիդ (քլորէթիլեն)	0,005	u/թ	1
70.	Հեքսամեթիլենդիամին (1,6-երկամինահեքսան)	0,01	u/թ	2
71.	Հիդրոխինոն (1,4-երկօքսիբենզոլ)	0,2	օրգ. գուն.	4
72.	Երկալիլերկմեթիլամինոնիումի քլորիդ (ԵԱԵՄԱՔ)	0,1	u/թ	3
73.	Երկբութիլֆտալատ	0,2	ընդհ.	3
74.	Երկմեթիլամին	0,1	u/թ	2
75.	Երկմեթիլտերեֆտալատ	1,5	օրգ. հոտ	4
76.	Երկմեթիլֆտալատ	0,3	u/թ	3
77.	Երկօկտիլֆտալատ	1,6	u/թ	3
78.	Երկքլորբենզոլ	0,002	օրգ. հոտ	3
79.	Երկքլորմեթան (մեթիլենքլորիդ)	0,02	օրգ. հոտ	3
80.	1,3-երկքլոր-2-պրոպանոլ	1,0	օրգ. հոտ	3
81.	Երկֆենիլոլպրոպան (4,4'-իզոպրոպիլիդեներկֆենոլ)	0,01	օրգ. կողմնակի համ	4
82.	Երկցիկլոպենտադիեն	0,015	օրգ. հոտ	4
83.	Երկ(2-էթիլհեքսիլ)ֆտալատ	0,008	u/թ	1
84.	Երկէթիլենտորիամին	0,2	օրգ. հոտ	4
85.	Երկէթիլֆտալատ	3,0	u/թ	3
86.	Իզոպրեն	0,005	օրգ. հոտ	4
87.	Իզոպրոպիլբենզոլ (կումոլ)	0,1	օրգ. հոտ	3
88.	Է-կարպոլակտամ	1,0	ընդհ.	4
89.	Կապտակս (2-մերկապտոբենզաթիազոլ)	5,0	օրգ. հոտ	4
90.	Քսիլոլ (երկմեթիլբենզոլ)	0,05	օրգ. հոտ	3
91.	Մեթիլակրիլատ (ակրիլաթթվի բութիլային եթեր)	0,02	օրգ. հոտ	4
92.	Մեթիլացետատ	0,1	u/թ	3
93.	Մեթիլմեթակրիլատ (մեթակրիլաթթվի մեթիլային եթեր)	0,01	u/թ	2
94.	ալֆա-մեթիլստիրոլ ((1-մեթիլվինիլ) բենզոլ)	0,1	օրգ. կողմնակի համ	3
95.	Բութիլ-սպիրտ (բութան-1-ոլ, պրոպիլկարբինոլ)	0,1	u/թ	2
96.	Իզոբութիլային սպիրտ	0,15	u/թ	2
97.	Իզոպրոպիլ սպիրտ	0,25	օրգ. հոտ	4
98.	Մեթիլսպիրտ (մեթանոլ)	3,0	u/թ	2

99.	Պրոպիլային սպիրտ	0,25	օրգ. կողմնակի համ	4
100.	Ստիրոլ (վինիլբենզոլ)	0,02	զգայ. հոտ	3
101.	Թիուրամ Ը (քառամեթիլթիուրամերկսուլֆիդ)	1,0	ս/թ	2
102.	Տոլուոլ (մեթիլբենզոլ)	0,5	օրգ. հոտ	4
103.	Տրիմեթիլամին	0,05	զգայ. հոտ	4
104.	Տրիէթանոլամին	1,0	օրգ. կողմնակի համ	4
105.	Ֆենոլ (հիդրօքսիբենզոլ)	0,001	օրգ. հոտ	4
106.	Ֆորմալդեհիդ (մեթանալ)	0,05	ս/թ	2
107.	Քլորբենզոլ	0,02	ս/թ	3
108.	Էպիքլորհիդրին (1-քլոր-2,3-էպօքսիպրոպան)	0,0001	ս/թ	1
109.	Էթիլացետատ	0,2	ս/թ	2
110.	Էթիլբենզոլ	0,002	օրգ. հոտ	4
111.	Էթիլեներկամին (1,2-երկամինտէթան)	0,2	օրգ. հոտ	4
112.	Էթիլենգլիկոլ (էթան-1,2-դիոլ)	1,0	ս/թ	3
113.	Անագ	2,0	ս/թ	3

(113-րդ կետն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշմամբ)

**Բաժին 4. Օժանելիքակոսմետիկական արտադրանքին եւ բերանի խոռոչի
հիգիենայի միջոցներին ներկայացվող պահանջներ**

**Ենթաբաժին I. ՕՇԱՆԵԼԻՔԱԿՈՍՄԵՏԻԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ

Սույն ենթաբաժնով սահմանվում են օժանելիքակոսմետիկական արտադրանքին ներկայացվող հիմնական պահանջները.

Եթերայուղեր (տերպեններ պարունակող կամ չպարունակող)՝ ներառյալ լուծամզված բուսական նյութերը (concrete) եւ բացարձակ յուղերը, ռետինանյութերը, լուծամզված եթերայուղերը, եթերայուղերի խտանյութերը՝ ճարպերի, չցնդող յուղերի, մոմերի կամ համանման նյութերի մեջ, որոնք ստացվում են անֆլերաժի կամ թթվամշակման մեթոդով, եթերայուղերի տերպենազերծումից ստացված տերպենային կողմնակի արգասիքներ, եթերայուղերի ջրային թորվածքներ եւ եթերայուղերի ջրային լուծույթներ, որոնք օգտագործվում են օժանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրման համար (ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր 3301).

Օժանելիք, հարդաջուր (ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր 3303 00).

Կոսմետիկական միջոցներ կամ դիմահարդարման միջոցներ եւ մաշկի խնամքի միջոցներ (բացի դեղամիջոցներից)՝ ներառյալ արեւայրուքի դեմ կամ արեւայրուքի համար միջոցները, մանիկյուրի կամ պեդիկյուրի միջոցները (ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր 3304).

Մազերի խնամքի միջոցներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր 3305).

Միջոցներ՝ սափրվելուց առաջ, սափրվելու ընթացքում կամ դրանից հետո օգտագործելու համար, անհատական օգտագործման հոտազերծիչներ, բաղադրություններ՝ լոգանք ընդունելու համար, մազահեռացման միջոցներ եւ

օճանելիքային, կոսմետիկական կամ հարդարանքի այլ միջոցներ՝ այլ տեղում չնշված կամ չներառված (ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր 3307)։

Ձեռքի օճառ՝ քառակուսիների, կտորների կամ կաղապարվածքների տեսքով, դեղամիջոցներ չպարունակող, օճառ՝ այլ ձեւերով, մակերեւութաակտիվ օրգանական նյութեր եւ միջոցներ՝ մաշկը լվանալու համար, հեղուկի կամ կրեմի տեսքով, բաժնեծրարված մանրածախ առետրի համար, օճառ պարունակող կամ չպարունակող (ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր 3401-ից)։

Սույն ենթաբաժնի պահանջները չեն տարածվում այն արտադրանքի վրա, որը նախատեսված է կուլ տալու, ինհալացիայի, մարդու մարմին ներարկելու կամ պատվաստելու համար, դաջվածքներ անելու միջոցների, ինչպես նաեւ բուժիչ հատկություններ ունեցող արտադրանքի վրա։

2. ԵՐՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Օճանելիքակոսմետիկական արտադրանք (ՕԿԱ)՝ նյութեր կամ նյութերի խառնուրդներ՝ նախատեսված անմիջականորեն մարդու վերնամաշկին (մաշկին, մազաձածկույթին, եղունգներին, շրթունքներին եւ արտաքին սեռական օրգաններին) կամ ատամներին եւ բերանի խոռոչի լորձաթաղանթին քսելու համար, որոնց միակ եւ գլխավոր նպատակը դրանք մաքրելը, արտաքին տեսքը փոփոխելը, հաճելի հոտ հաղորդելն ու (կամ) մարմնի հոտը կարգավորելը, եւ (կամ) դրանք պաշտպանելը կամ լավ վիճակում պահելն է։

Ամպուլային կոսմետիկա՝ հերմետիկ եռակցված ապակյա (պոլիմերային) անոթի մեջ լցված ՕԿԱ, որը չի պարունակում կոնսերվանտներ եւ նախատեսված է միանգամյա օգտագործման համար։

ՕԿԱ-ի անոտացիա՝ ՕԿԱ-ի բառացի նկարագիրը եւ (կամ) գրաֆիկական նշումը, որը պարունակում է դրա սպառողական հատկությունների բնութագրերը, նշանակությունը, օգտագործման եւ սահմանափակման առնչությամբ առաջարկությունները, ինչպես նաեւ օգտագործման եղանակը։

ՕԿԱ-ի անվտանգություն՝ ՕԿԱ-ի այն հատկությունների եւ բնութագրերի ամբողջությունը, որոնցով հիմնավորապես հավաստվում է, որ արտադրանքը վնասակար չէ եւ օգտագործողի համար վտանգ չի ներկայացնում՝ իր նշանակությանը եւ օգտագործման եղանակին համապատասխան կիրառելու դեպքում:

ՕԿԱ-ի նույնականացումն իրականացվում է ըստ փաստաթղթերի: Որպես փաստաթղթեր կարող են օգտագործվել պետական կառավարման մարմինների ՏՆԻԱ-ները, ապրանքաուղեկցող փաստաթղթերը, մատակարարման պայմանագրերը, մասնագրերը, անոտացիաները, պիտակները, ապրանքանիշները եւ արտադրանքը բնութագրող այլ փաստաթղթեր:

Պատրաստող՝ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, որոնք արտադրում են օժանելիքակոսմետիկական արտադրանք՝ դրանք սպառողին (գնորդին) իրացնելու համար, եւ պատասխանատվություն են կրում անվտանգության պահանջներին դրանց համապատասխանության համար:

Ծանոթագրություն. Եթե մեկ ձեռնարկությունում արտադրված արտադրանքը մեկ այլ ձեռնարկությունում ենթարկվում է տեխնոլոգիական այնպիսի մշակման, որն այն դարձնում է պատրաստի արտադրատեսակ, ապա պատրաստող է համարվում վերջին ձեռնարկությունը:

ՕԿԱ-ի բաղադրամաս՝ քիմիական նյութ եւ (կամ) նյութերի խառնուրդ, սինթետիկ կամ բնական ծագման մթերք, որն օգտագործվում է ՕԿԱ-ի արտադրության համար: Բաղադրիչներ չեն համարվում բաղադրիչներում առկա խառնուկները, ինչպես նաեւ այն նյութերը, որոնք օգտագործվում են օժանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրության ընթացքում եւ առկա չեն պատրաստի արտադրանքում:

Արտադրանքի որակ՝ ՕԿԱ-ի այն հատկությունների եւ բնութագրերի ամբողջությունը, որոնք դրան հնարավորություն են տալիս բավարարելու որոշակի պահանջներ՝ իր նշանակությանը համապատասխան:

Արտադրանքի որակի եւ անվտանգության հսկողություն՝ նորմատիվային, տեխնիկական փաստաթղթերի պահանջներին արտադրանքի որակի եւ անվտանգության ցուցանիշների համապատասխանության ստուգում.

Անվտանգության լաբորատոր գնահատում՝ մասնագիտացված հաստատություններում (լաբորատորիաներում) ՕԿԱ-ի եւ հումքի ուսումնասիրում, գնահատում՝ տվյալ միջոցի անվնաս լինելը պարզելու նպատակով.

Մականշվածք՝ փաթեթվածքի (պիտակի, թերթ-ներդրակի եւ այլ տպագիր նյութերի) վրա զետեղվող տեղեկություններ.

ՕԿԱ-ի անունը՝ արտադրատեսակի բառային նշում, որը դրան տրվում է այն պատրաստողի, իրավական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից, որի պատվերով արտադրանքը պատրաստվում է.

ՕԿԱ-ի նշանակությունը՝ ՕԿԱ-ի գործառական նշանակությունը, որը որոշակիացնում է դրա կիրառման ոլորտը.

ՕԿԱ-ի անվանումը՝ միատարր ՕԿԱ-ի տեսակի նշում (ատամի մածուկ, լոսյոն, օձանելիք, կրեմ եւ նմ.).

Նորմատիվ փաստաթղթեր՝ ազգային ստանդարտներ, սանիտարական կանոններ եւ նորմեր, որոնցով սահմանվում են ՕԿԱ-ի որակին եւ անվտանգությանը, դրա որակի եւ անվտանգության հսկողությանը, պատրաստման պայմաններին, պահպանմանը, փոխադրմանը, իրացմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները.

Միատարր ՕԿԱ՝ մեկ անվանում ունեցող արտադրանք՝ նման բաղադրակազմ ունեցող եւ ՏՆԻԱ-ի միեւնույն պահանջներին համապատասխանող.

Օձանելիքային (անուշահոտ) բաղադրանյութ՝ նյութերի խառնուրդ, որը նախատեսված է ՕԿԱ-ի բաղադրիչներին հոտ հաղորդելու եւ (կամ) հոտը քողարկելու համար.

Կոսմետիկական սպեղանի՝ օձանելիքակոսմետիկական միջոց, որը պատրաստված է կոսմետիկական պրոցեդուրաներ անցկացնելու համար

նախատեսված հարակցման ազդեցությամբ օժտված թերթանյութից.

Մասնագիտական կոսմետիկա՝ կոսմետիկական արտադրանք, որը նախատեսված է բացառապես կոսմետիկական հաստատություններում, վարսավիրանոցներում, սրահներում, կաբինետներում եւ այլ վայրերում աշխատող մասնագետների կողմից օգտագործելու համար.

Բաղադրագիր՝ ՕԿԱ-ի բաղադրության մեջ մտնող հումքային նյութերի (բաղադրիչների)՝ արտադրողի կողմից հաստատված ամբողջական ցանկ՝ բաղադրիչների զանգվածային մասի նշումով.

Ինտիմ հիգիենայի միջոց՝ արտաքին սեռական օրգանների եւ դրանց հարակից մարմնի հատվածների խնամքի օժանելիքակոսմետիկական միջոց.

Դաջվածքի համար միջոց՝ մաշկի մակերեսային դեկորատիվ նկար պատկերելու համար նախատեսված օժանելիքակոսմետիկական միջոց.

Պիտանիության ժամկետը՝ ժամանակահատված, որի լրանալուց հետո արտադրանքը համարվում է ոչ պիտանի՝ ըստ նշանակության օգտագործելու համար.

Ծանոթագրություն. Պիտանիության ժամկետը սահմանվում է արտադրանքը պատրաստողի կողմից, ինչի ընթացքում պատրաստողը պարտավոր է երաշխավորել սպառողի կյանքի եւ առողջության անվտանգության պահանջներին արտադրանքի համապատասխանությունը ու պահպանման պայմանները պահպանելու դեպքում՝ սպառողական հատկանիշների պահպանումը:

Հումք՝ արտադրանքի պատրաստման ժամանակ օգտագործվող բոլոր բաղադրիչները՝ անկախ այն հանգամանքից, թե արտադրման գործընթացի ընթացքում դրանք անփոփոխ են մնում, թե կրում են փոփոխություններ.

Տեխնիկական փաստաթղթեր՝ փաստաթղթեր, որոնց համաձայն իրականացվում են ՕԿԱ-ի պատրաստումը, պահպանումը, փոխադրումն ու իրացումը (տեխնիկական պայմաններ, տեխնոլոգիական հրահանգներ ու

կանոնակարգեր, բաղադրագրեր, տեխնիկական պահանջներ եւ նմ.)

Փաթեթվածք՝ միջոց կամ միջոցների ամբողջություն, որն ապահովում է արտադրանքի պաշտպանությունը վնասվածքներից եւ կորուստներից, շրջակա միջավայրից, աղտոտումից, ինչպես նաեւ ապահովում է արտադրանքի շրջանառության գործընթացը (տրանսպորտային փոխադրումը, պահպանումն ու իրացումը)։

Փաթեթանյութ՝ նյութ, որը նախատեսված է տարայի, փաթեթվածքի եւ օժանդակ փաթեթավորման միջոցների պատրաստման համար։

Պիտակ՝ փաթեթավորված արտադրանքի եւ դրա պարտաստողի մասին տեղեկատվության միջոց, որը զետեղվում է հենց արտադրանքի, թերթ-ներդրակի կամ ապրանքապիտակի վրա, ամրացվում կամ կցվում է փաթեթավորման միավորին։ Այն պիտակը, որը պարունակում է արտադրանքի մասին տեղեկություններ եւ զետեղված է հիմնական պիտակի հակառակ կողմում, կոչվում է հակադարձ պիտակ։

3. ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ (ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ)

ՕԿԱ-ի անվտանգությունն ապահովվում է պահանջների ամբողջությամբ, որոնք ներկայացվում են՝

հումքին,

օրգանոլեպտիկ ցուցանիշներին,

Ֆիզիկաքիմիական ցուցանիշներին,

թունավոր տարրերի պարունակությանը,

մանրէաբանական ցուցանիշներին,

թունաբանական անվտանգությանը,

կլինիկալաբորատոր ցուցանիշներին,

սպառողական փաթեթվածքին եւ մականշվածքին,

պահպանման եւ տրանսպորտային փոխադրման պայմաններին:

Ըստ միասնական տեխնիկական փաստաթղթերի (բաղադրագիր, տեխնիկական պայմաններ)՝ Միասնական պահանջների II գլխի 4-րդ բաժնի 4.4 հավելվածում թվարկված, սակայն երանգով տարբերվող ներկանյութերի օգտագործմամբ պատրաստված դեկորատիվ կոսմետիկայի (շրթներկ, տուշ, գծաներկ, կոսմետիկ մատիտներ, տոնային միջոցներ, ստվերաներկ, դիմափոշի եւ այլն), եղունգների լաքի, մազերի ներկի եւ երանգավորող միջոցների տիպային նմուշ է համարվում մեկ անվանման եւ նշանակության ներկայացուցիչը՝ պատրաստի արտադրանքում յուրաքանչյուր կոնկրետ ներկանյութի առավելագույն տոկոսային (քանակական) պարունակությամբ: Դեկորատիվ կոսմետիկայի (շրթներկ, տուշ, գծաներկ, կոսմետիկ մատիտներ, տոնային միջոցներ, ստվերաներկ, դիմափոշի եւ այլն), եղունգների լաքի, մազերի ներկի եւ երանգավորող միջոցների տիպային նմուշները պետք է կազմեն արտադրանքի հետազոտություն անցկացնելու համար հայտագրված ցանկի ոչ պակաս, քան 30%-ը, եւ հետազոտվեն ամբողջ ծավալով. մնացած բոլոր երանգների համար որոշվում է միայն զգայունացնող ազդեցությունը:

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշմամբ)

Հումքին ներկայացվող պահանջները: Արգելվում է ՕԿԱ-ի արտադրության համար որպես բաղադրիչներ օգտագործել այն նյութերը, որոնք թվարկված են սույն Միասնական պահանջների II գլխի 4-րդ բաժնի 4.2 հավելվածում:

Արգելվում է ՕԿԱ-ի արտադրության համար որպես բաղադրիչներ օգտագործել այն նյութերը, որոնք թվարկված են սույն Միասնական պահանջների II գլխի, 4-րդ բաժնի 4.3 հավելվածում՝ առանց սույն Միասնական պահանջների II գլխի 4-րդ բաժնի 4.3 հավելվածում նշված սահմանափակումների եւ պահանջների կատարման:

Թույլատրվում է ՕԿԱ-ի արտադրության համար որպես բաղադրիչներ օգտագործել սույն Միասնական պահանջների II գլխի, 4-րդ բաժնի 4.4 հավելվածում

թվարկված ներկանյութերը՝ սույն Միասնական պահանջների II գլխի 4-րդ բաժնի 4.4 հավելվածում նշված սահմանափակումներով: Թույլատրվում է օգտագործել սույն Միասնական պահանջների II գլխի 4-րդ բաժնի 4.4 հավելվածում թվարկված ներկանյութերի աղերը, եթե դրանց բաղադրության չեն մտնում այն նյութերը, որոնց օգտագործումն արգելված է՝ սույն Միասնական պահանջների II գլխի 4-րդ բաժնի 4.4 հավելվածին համապատասխան:

Թույլատրվում է ՕԿԱ-ի արտադրության համար որպես բաղադրիչներ օգտագործել սույն Միասնական պահանջների II գլխի 4-րդ բաժնի 4.5 հավելվածում թվարկված կոնսերվանտները՝ սույն Միասնական պահանջների II գլխի 4-րդ բաժնի 4.5 հավելվածում նշված համապատասխան սահմանափակումներով:

Թույլատրվում է ՕԿԱ-ի արտադրության համար որպես բաղադրիչներ օգտագործել սույն Միասնական պահանջների II գլխի, 4-րդ բաժնի 4.6 հավելվածում թվարկված ուլտրամանուշակագույն ֆիլտրեր՝ սույն Միասնական պահանջների II գլխի 4-րդ բաժնի 4.6 հավելվածում նշված սահմանափակումներով:

Հումքի զգայունացնող ունակության ընդհանուր թունավոր, մաշկը եւ աչքերի լորձաթաղանթները գրգռող ազդեցության ուսումնասիրությունն ու գնահատումն իրականացվում է ՕԿԱ-ի բաղադրության մեջ առավելագույն թույլատրելի կոնցենտրացիայի պայմաններում:

Թունավոր տարրերի պարունակությունը բնական բուսական եւ բնական հանքային ծագման հումքային նյութերում չպետք է գերազանցի՝ մկնդեղ՝ 5,0 մգ/կգ-ն, սնդիկ՝ 1,0 մգ/կգ-ն, կապար՝ 5,0 մգ/կգ-ն՝ հաշվի առնելով պատրաստի արտադրանքում առաջարկվող առավելագույն խտության վերահաշվարկը:

ՕԿԱ-ի օրգանոլեպտիկ եւ ֆիզիկաքիմիական ցուցանիշներին ներկայացվող պահանջները ներկայացված են 1-ին աղյուսակում:

Աղյուսակ 1. ՕԿԱ-ի օրգանոլեպտիկ եւ ֆիզիկաքիմիական ցուցանիշներին ներկայացվող պահանջները

Արտադրանքի անվանումը	Արտադրանքի բնութագրեր (ցուցանիշներ)	Նորմեր	Ծանոթագրություն
Մաշկի խնամքի միջոցներ			
Կրեմներ, սերուցք, կաթիկ, էմուլսիաներ, կրեմային դիմակներ, կրեմ-գելեր, կրեմ-մուսեր, բալզամներ եւ այլն, այդ թվում՝ արեւայրուքի համար	Արտաքին տեսք	Կողմնակի խառնուկներ չպարունակող միատարր զանգված	
	Գույն	Տվյալ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	5,0 - 9,0	10% լուծույթ
Գելեր (դոնդող), գել-մուսեր, գել-փրփուրներ եւ այլն	Արտաքին տեսք	Կողմնակի խառնուկներ չպարունակող միատարր դոնդողանման զանգված	
	Գույն	Տվյալ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	5,0 - 9,0	10% լուծույթ
Խտանյութեր, շիճուկներ, յուղեր	Արտաքին տեսք	Միատարր հեղուկ կրեմանման զանգված կամ էմուլսիա, կամ հեղուկ, որը չի պարունակում կողմնակի խառնուկներ	
	Գույն	Տվյալ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	5,0 - 9,0	10% լուծույթ
Արեւապաշտպան միջոցներ եւ միջոցներ՝ ինքնայրուքի համար	Արտաքին տեսք	Միատարր հեղուկ կրեմանման զանգված կամ էմուլսիա, կամ հեղուկ, որը չի պարունակում կողմնակի խառնուկներ	
	Գույն	Տվյալ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	3,0 - 9,0	10% լուծույթ
Սպիտակեցնող	Արտաքին	Միատարր հեղուկ կրեմանման	

միջոցներ	տեսք	զանգված կամ էմուլսիա, կամ հեղուկ, որը չի պարունակում կողմնակի խառնուկներ	
	Գույն	Տվյալ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	3,0 - 9,0	10% լուծույթ
Դեպիլյացիայի միջոցներ	Արտաքին տեսք	Միատարր կրեմանման կամ դոնդողանման զանգված կամ հեղուկ, կամ էմուլսիա որը չի պարունակում կողմնակի խառնուկներ	
	Գույն	Տվյալ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	7,0 - 12,7	10% լուծույթ
Սկրաբներ, պիլինգներ (կրեմային)	Արտաքին տեսք	Կողմնակի խառնուկներ չպարունակող միատարր զանգված	Թույլատրվում են հղկանյութի եւ հավելումների հատուկ բժավորումներ
	Գույն	Տվյալ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	3,0 - 9,0	10% լուծույթ
Քիմիական պիլինգներ, դիմակ-պիլինգներ (հեղուկ)	Արտաքին տեսք	Միատարր միաֆազ կամ բազմաֆազ հեղուկ, էմուլսիա, սուսպենզիա՝ առանց կողմնակի խառնուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	1,2 - 3,0	Բնական: Առաջարկել միայն մասնագիտական օգտագործման համար
	Ջրածնային ցուցանիշ	3,0 - 8,5	Բնական
Հեղուկ լոսյոններ, լոսյոն-տոնիկներ,	Արտաքին տեսք	Միատարր միաֆազ կամ բազմաֆազ հեղուկ, էմուլսիա,	

տոնիկներ եւ այլն		սուսպենզիա՝ առանց կողմնակի խառնուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրաձնային ցուցանիշ	4,0 - 8,5	Բնական: Երկֆազ կամ բազմաֆազ նյութերում որոշվում է ֆազերը խառնելուց հետո
Հոտազերծիչներ, հոտազերծիչ հակաքրտնքային միջոցներ, հեղուկ հակաքրտնքային միջոցներ	Արտաքին տեսք	Միատարր միաֆազ կամ բազմաֆազ հեղուկ, էմուլսիա, սուսպենզիա՝ առանց կողմնակի խառնուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրաձնային ցուցանիշ	3,5 - 8,0	Բնական
Հոտազերծիչներ, հոտազերծիչ հակաքրտնքային միջոցներ, պինդ հակաքրտնքային միջոցներ(մատիտ, գնդիկավոր)	Արտաքին տեսք	Միատարր կոշտ մամլած զանգված՝ առանց կողմնակի խառնուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակին բնորոշ	
	Ջրաձնային ցուցանիշ	3,5 - 10,0	10% լուծույթ
Կոսմետիկական չոր դիմակներ, մածուկանման կամ փոշենման	Արտաքին տեսք	Բուսական բաղադրիչների խառնուրդ կամ մածուկանման, կամ փոշենման զանգված	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրաձնային ցուցանիշ	5,0 - 9,0	Օգտագործման ցուցումների համաձայն՝

			պատրաստի բաղադրանյութի 10% լուծույթ
Սափրման միջոցներ (կրեմներ, գելեր, մուսեր, փրփուրներ)	Արտաքին տեսք	Միատարր դոնդողանման կամ կրեմանման զանգված կամ հեղուկ՝ առանց կողմնակի խառնուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	6,0 - 11,0	10% լուծույթ
Բուսական լուծամզուքներ պարունակող կրեմներ և գելեր, մրգային թթուներ ու դրանց ածանցյալները	Արտաքին տեսք	Կողմնակի խառնուկներ չպարունակող միատարր զանգված	
	Գույն	Տվյալ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	3,0 - 9,0	10% լուծույթ
(ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշմամբ)			
Մազերի խնամքի միջոցներ			
Շամպուններ	Արտաքին տեսք	Միատարր միաֆազ կամ բազմաֆազ հեղուկ կամ հեղուկ կամ թանձր դոնդողանման կամ կրեմանման զանգված՝ առանց կողմնակի խառնուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	3,5 - 8,5	Բնական: Երկֆազ կամ բազմաֆազ նյութերում որոշվում է ֆազերը խառնելուց հետո
(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)			
Բալզամներ, դիմակներ	Արտաքին տեսք	Կողմնակի խառնուկներ չպարունակող միատարր զանգված	
	Գույն	Տվյալ արտադրատեսակի գույնին	

		բնորոշ	
	Հոտ	Տվյալ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	5,0 - 9,0	10% լուծույթ
Բալզամ-ողողիչներ, կոնդիցիոներներ, ողողիչներ	Արտաքին տեսք	Միատարր միաֆազ կամ բազմաֆազ հեղուկ կամ հեղուկ կամ թանձր դոնդողանման կամ կրեմանման զանգված՝ առանց կողմնակի խառնուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	3,0 - 7,5	10% լուծույթ: Երկֆազ կամ բազմաֆազ նյութերում որոշվում է ֆազերը խառնելուց հետո
(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)			
Մազերի եւ գլխամաշկի յուղեր	Արտաքին տեսք	Միատարր միաֆազ կամ բազմաֆազ յուղանման հեղուկ՝ առանց կողմնակի խառնուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	5,0 - 9,0	10% լուծույթ: Երկֆազ կամ բազմաֆազ նյութերում որոշվում է ֆազերը խառնելուց հետո
Երանգավորող միջոցներ՝ մազերի համար (շամպուններ, բալզամներ, կոնդիցիոներներ եւ այլն)	Արտաքին տեսք	Միատարր միաֆազ կամ բազմաֆազ հեղուկ կամ հեղուկ կամ թանձր դոնդողանման կամ կրեմանման զանգված՝ առանց կողմնակի խառնուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին (երանգին) բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	

	Ջրածնային ցուցանիշ	3,5 - 8,0	10% լուծույթ: Երկֆազ կամ բազմաֆազ նյութերում որոշվում է ֆազերը խառնելուց հետո
Մազերը ներկելու համար նախատեսված միջոցներ	Արտաքին տեսք	Միատարր հեղուկ կամ կրեմանման կամ փոշենման զանգված, որը չի պարունակում կողմնակի խառնուկներ	
	Գույն	Փաթեթվածքի վրա նշված գույնին (տոնին) բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
Ջրածնային ցուցանիշ		Ներկող բաղադրությունը՝ 7,5 - 12,5	10% լուծույթ
		Ի հայտ բերող բաղադրությունը՝ 1,5 - 5,0	10% լուծույթ
		Օգտագործման ցուցումների համաձայն՝ պատրաստի բաղադրանյութը՝ 7,0 - 11,0	10% լուծույթ
Մազերի գունաբացման, գունաշերտավորման միջոցներ	Արտաքին տեսք	Միատարր հեղուկ կամ կրեմանման կամ փոշենման զանգված կամ էմուլսիա կամ սուսպենզիա՝ առանց կողմնակի խառնուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
Ջրածնային ցուցանիշ		Գունաթափող բաղադրությունը՝ 7,5 - 12,0	10% լուծույթ
		Օքսիդացնող բաղադրությունը՝ 1,2 - 5,0	10% լուծույթ
		Օգտագործման ցուցումների համաձայն՝ պատրաստի բաղադրանյութը՝ 3,5 - 10,5	10% լուծույթ
Մազերի գույնի վերականգնիչներ	Արտաքին տեսք	Միատարր հեղուկ կամ դոնդողանման կամ կրեմանման զանգված կամ էմուլսիա կամ սուսպենզիա՝ առանց կողմնակի խառնուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	

	Ջրածնային ցուցանիշ	5,0 - 7,5	10% լուծույթ
Լաքեր, մուսեր, փրփուրներ, հեղուկներ՝ մազերի հարդարման համար	Արտաքին տեսք	Միատարր հեղուկ՝ առանց կողմնակի խառնուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
Գելեր, մեղրամուներ, կրեմներ, մածուկներ՝ մազերի հարդարման համար	Արտաքին տեսք	Միատարր դոնդողանման կամ կրեմանման կամ մածուկանման, կամ պինդ զանգված, որը չի պարունակում կողմնակի խառնուկներ	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	4,0 - 9,0	10% լուծույթ
Միջոցներ՝ մազերի գանգրացման, ուղղման համար	Արտաքին տեսք	Կողմնակի խառնուկներ չպարունակող միատարր հեղուկ	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	4,0 - 11,5	Բնական
Միջոցներ՝ մազերի սառը գանգրացման, ուղղման համար	Արտաքին տեսք	Կողմնակի խառնուկներ չպարունակող միատարր հեղուկ	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	Գանգրացման կազմ. 7.0 - 11.5 Ֆիքսող կազմ. 2.0 - 4.0	Բնական Բնական
Բալզամներ, դիմակներ՝ լվացվող	Արտաքին տեսք	Կողմնակի խառնուկներ չպարունակող միատարր զանգված	
	Գույն	Տվյալ արտադրատեսակի գույնին բնորոշ	

	Հոտ	Տվյալ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	3,0 - 5,0	10% լուծույթ
(ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշմամբ),			
<u>Լվացող կոսմետիկ հիգիենիկ արտադրատեսակներ</u>			
Լոզանքի փրփուր, գել, կրեմ, կրեմ-գել՝ լոզանքի կամ լվացվելու համար, հեղուկ օճառ	Արտաքին տեսք	Միատարր միաֆազ կամ բազմաֆազ հեղուկ կամ հեղուկ կամ թանձր դոնդողանման կամ կրեմանման զանգված՝ առանց կողմնակի խառնուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	3,5 - 8,5	10% լուծույթ
(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)			
Մաքրող միջոցներ՝ գել, կրեմ-գել, մուս, փրփուր	Արտաքին տեսք	Միատարր միաֆազ կամ բազմաֆազ հեղուկ կամ հեղուկ կամ թանձր դոնդողանման կամ կրեմանման զանգված՝ առանց կողմնակի խառնուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	5,0 - 8,5	10% լուծույթ
Ձեռքի օճառ՝ պինդ	Արտաքին տեսք	Մակերեւույթը՝ նկարով կամ առանց նկարի: Օճառի մակերեւույթին չեն թույլատրվում ճաքեր, գծեր, արտաքիրտներ, հետքեր, ոչ պարզ դրոշմ, եթե դրանք պատրաստողի կողմից հայտագրված չեն	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Կազմություն	Շոշափելիս կոշտ: Կտրելիս միատարր	

Աղեր եւ պինդ հավելումներ՝ նախատեսված լոգանքի համար	Արտաքին տեսք	Բյուրեղային կամ պինդ միատարր զանգված՝ առանց կողմնակի ներառուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին կամ երանգին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
Դեկորատիվ կոսմետիկա՝ յուղամոմային հիմքով			
Շրթներկ (այդ թվում՝ հիգիենիկ եւ հեղուկ), փայլ եւ բալզամ՝ շուրթերի համար, ուրվագծային մատիտ՝ շուրթերի համար	Արտաքին տեսք	Հարթ, միատարր, հավասարապես ներկված կամ չներկված մակերեսույթ	Թույլատրվում է դեկորատիվ ներառուկների առկայությունը, սադափե փայլ ունեցող արտադրատեսակներում՝ հոսահետքերի առկայությունը: Թեփ առաջացնող շրթներկների դեպքում թույլատրվում է հղկանյութի կետային բծավորումների առկայությունը
	Գույն	Տվյալ արտադրատեսակի գույնին (անվանմանը) կամ երանգին (համարին) բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
Կոպերի ստվերաներկ, կարմրաներկ, դիմափոշի, քողարկող մատիտ, թատերական գրիմ	Արտաքին տեսք	Հարթ, միատարր, հավասարապես ներկված կամ չներկված մակերեսույթ	Թույլատրվում է դեկորատիվ ներառուկների առկայությունը, սադափե փայլ ունեցող արտադրատեսակներում՝ հոսահետքերի առկայությունը
	Գույն	Տվյալ արտադրատեսակի գույնին (անվանմանը) կամ երանգին (համարին) բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
Ուրվագծային մատիտ՝ կոպերի եւ հոնքերի համար	Արտաքին տեսք	Հարթ, միատարր, հավասարապես ներկված կամ չներկված մակերեսույթ	Թույլատրվում է դեկորատիվ ներառուկների

			առկայությունը, սադափե փայլ ունեցող արտադրատեսակներում՝ հոսահետքերի առկայությունը
	Գույն	Տվյալ արտադրատեսակի գույնին (անվանմանը) կամ երանգին (համարին) բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
Պինդ տուշ՝ թարթիչների համար	Արտաքին տեսք	Պինդ միատարր զանգված կամ թիթեղ՝ առանց ճաքերի եւ ջարդվածքների	Թույլատրվում է դեկորատիվ ներառուկների առկայությունը, սադափե փայլ ունեցող արտադրատեսակներում՝ հոսահետքերի առկայությունը
	Գույն	Տվյալ արտադրատեսակի գույնին (անվանմանը) կամ երանգին (համարին) բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրաձնային ցուցանիշ	7,0 - 10,0	1% ջրային շերտ (95 - 100 °C, սառեցում՝ մինչեւ 20 +/- 2 °C)
Դեկորատիվ կոսմետիկա՝ էմուլսիայի հիմքով			
Տոնային միջոցներ, բազա, հիմք, կարմրաներկ, կոպերի ստվերաներկ, շուրթերի, դեմքի եւ մարմնի փայլ	Արտաքին տեսք	Կողմնակի խառնուկներ չպարունակող միատարր ներկված զանգված	Թույլատրվում է հատուկ հավելումների (փայլքեր, թելիկներ եւ այլն) օգտագործումը
	Գույն	Տվյալ արտադրատեսակի գույնին (երանգին) բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրաձնային ցուցանիշ	5,0 - 8,5	10% լուծույթ
Մազերի տուշ	Արտաքին տեսք	Կողմնակի խառնուկներ չպարունակող միատարր ներկված զանգված	Թույլատրվում է հատուկ հավելումների (փայլքեր, թելիկներ եւ այլն) օգտագործումը
	Գույն	Տվյալ արտադրատեսակի գույնին (երանգին) բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ	

		արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	5,0 - 8,5	1% լուծույթ
Հեղուկ տուշ՝ թարթիչների համար, գծաներկ՝ աչքերի համար	Արտաքին տեսք	Կողմնակի խառնուկներ չպարունակող միատարր ներկված զանգված	Թույլատրվում է հատուկ հավելումների (փայլքեր, թելիկներ եւ այլն) օգտագործումը
	Գույն	Տվյալ արտադրատեսակի գույնին (երանգին) բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	5,5 - 8,5	1% լուծույթ
Փոշենման եւ խիտ կոսմետիկական արտադրատեսակներ			
Փոշենման ստվերաներկ՝ կոպերի համար, դիմափոշի, կարմրաներկ, դեմքի, մարմնի եւ մազերի փայլ	Արտաքին տեսք	Միատեսակ փոշենման զանգված՝ առանց կողմնակի ներառուկների	Թույլատրվում է հատուկ հավելումների (փայլքեր, թելիկներ եւ այլն) օգտագործումը
	Գույն	Տվյալ արտադրատեսակի գույնին կամ երանգին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	5,5 - 10,0	Ջրասպիրտային լուծույթ
Կոպերի ստվերաներկ, դիմափոշի, կարմրաներկ՝ խիտ	Արտաքին տեսք	Միատեսակ մամլած խիտ զանգված՝ առանց կողմնակի ներառուկների	Թույլատրվում է հատուկ հավելումների (փայլքեր, թելիկներ եւ այլն) օգտագործումը
	Գույն	Տվյալ արտադրատեսակի գույնին կամ երանգին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	5,5 - 10,0	Ջրասպիրտային լուծույթ
Մանկական ցանափոշի, տալկ, դիմափոշի (մինչեւ 3 տարեկան)	Արտաքին տեսք	Միատեսակ փոշենման կամ խիտ զանգված՝ առանց կողմնակի ներառուկների	
	Գույն	Տվյալ արտադրատեսակի գույնին կամ երանգին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	5,0 - 8,0	15%-անոց ջրային լուծույթ
(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)			
Օձանելիքային արտադրատեսակներ			
Օձանելիք,	Արտաքին	Թափանցիկ հեղուկ	

հարդաջուր, օձանելիքային ջուր, օդեկոլոն, անուշահոտ ջուր եւ այլ միջոցներ, որոնք սպիրտ չեն պարունակում	տեսք		
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
Բուրավետացրած (անուշահոտ) ջուր, բուրավետ տոնիկներ (սպլեշներ), բուրավետացրած լոսյոններ եւ այլ միջոցներ, որոնք սպիրտ չեն պարունակում	Արտաքին տեսք	Թափանցիկ հեղուկ	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	4,0 - 8,5	Բնական
Եթերայուղեր	Արտաքին տեսք	Թափանցիկ յուղանման հեղուկ	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
Եղունգների խնամքի միջոցներ			
Թաղանթագոյացնող արտադրատեսակներ (մանիկյուրի լաքեր, եղունգների գեղազարդման ներկեր, բազաներ, հիմքեր, փայլեր եւ այլն)	Արտաքին տեսք	Մածուցիկ թափանցիկ կամ ոչ թափանցիկ զանգված՝ առանց կողմնակի ներառուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին կամ երանգին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	Օրգանական լուծիչների հիմքով արտադրատեսակներ ի դեպքում հոտը չի որոշվում
	Ժապավենի արտաքին տեսքը	Փայլուն կամ կիսափայլուն սադափե ազդեցությամբ կամ առանց դրա կամ փայլատ՝ առանց կողմնակի խառնուկների	
	Ջրածնային ցուցանիշ	6,0 - 9,2	10% լուծույթ: Որոշվում է ջրային հիմքով արտադրատեսակներ ում
Լաքը մաքրելու	Արտաքին	Միատարր միաֆազ կամ	

հեղուկներ և միջոցներ	տեսք	բազմաֆազ հեղուկ՝ առանց կողմնակի խառնուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	3,0 - 8,5	10% լուծույթ
Եղունգների խնամքի գելեր, կրեմներ	Արտաքին տեսք	Միատարր դոնդողանման կամ կրեմանման զանգված՝ առանց կողմնակի ներառուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին կամ երանգին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	5,5 - 8,0	10% լուծույթ
Գելեր, կրեմներ՝ նրբամաշկը (կուտիկուլաները) հեռացնելու համար	Արտաքին տեսք	Միատարր դոնդողանման կամ կրեմանման զանգված՝ առանց կողմնակի ներառուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին կամ երանգին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	Ալկալիական հիմքով արտադրատեսակների համար՝ 8,0 - 12,5	10% լուծույթ
		Թթվային հիմքով արտադրատեսակների համար՝ 2.0 - 5.5	10% լուծույթ
Եղունգների խնամքի յուղեր	Արտաքին տեսք	Միատարր միաֆազ կամ բազմաֆազ հեղուկ՝ առանց կողմնակի խառնուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին կամ երանգին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	4,0 - 9,0	10% լուծույթ
Եղունգների սպիտակեցման, երկարացման միջոցներ		Միատարր հեղուկ կամ փոշենման զանգված՝ առանց կողմնակի ներառուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին կամ	

		Երանգին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
Եղունգների խնամքի միջոցներ	Ջրածնային ցուցանիշ	4,5 - 7,0	Ըստ ցուցումների՝ օգտագործման առաջարկվող արտադրատեսակի զանգվածային մասնաբաժնով լուծույթ
	Արտաքին տեսք	Միատարր բյուրեղանման զանգված՝ առանց կողմնակի ներառուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին կամ երանգին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	4,5 - 9,0	Ըստ ցուցումների՝ օգտագործման արտադրատեսակի զանգվածային մասով լուծույթ
	Ֆրանսիական մանիկյուրի համար մատիտ	Արտաքին տեսք	Հարթ, միատարր, հավասարապես ներկված կամ չներկված մակերեսույթ
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
Սոսինձ՝ արհեստական եղունգները (թիփսաները), ստրազները, մանիկյուրի այլ տարրեր ամրացնելու համար	Արտաքին տեսք	Միատարր կազմություն՝ առանց կողմնակի ներառուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
Մարմնի ինտիմ հատվածների խնամքի միջոցներ, այդ թվում՝ քսանյութեր			
Գելեր, կրեմներ, էմուլսիաներ, սուսպենզիաներ և	Արտաքին տեսք	Միատարր դոնդողանման կամ կրեմանման զանգված կամ էմուլսիա՝ առանց կողմնակի	

այլն		խառնուկների	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	5,0 - 9,0	10% լուծույթ
Հատուկ նշանակության միջոցներ			
Կոսմետիկական միջոցներ՝ վանելու մոծակներին, մլակներին, տիզերին եւ այլն	Արտաքին տեսք	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի արտաքին տեսքին բնորոշ	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	5,0 - 9,0	10% լուծույթ
Արտադրական վնասակար գործոններից մաշկը պաշտպանելու միջոցներ (քսուքներ, կրեմներ, մածուկներ եւ նմ.)	Արտաքին տեսք	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի արտաքին տեսքին բնորոշ	
	Գույն	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի գույնին բնորոշ	
	Հոտ	Տվյալ անվանմամբ արտադրատեսակի հոտին բնորոշ	
	Ջրածնային ցուցանիշ	4,5 - 9,0	10% լուծույթ

Թունավոր տարրերի պարունակությանը ներկայացվող պահանջներ: Այն ՕԿԱ-ում, որի բաղադրության մեջ բնական բուսական կամ բնական հանքային ծագման հումքը կազմում է ավելի, քան 1%, թունավոր տարրերի պարունակությունը չպետք է գերազանցի՝ մկնդեղ՝ 5,0 մգ/կգ-ն, սնդիկ՝ 1,0 մգ/կգ-ն, կապար՝ 5,0 մգ/կգ-ն:

Մանրէաբանական ցուցանիշներին ներկայացվող պահանջներ: ՕԿԱ-ի մանրէաբանական ցուցանիշները պետք է համապատասխանեն 2-րդ աղյուսակում ներկայացված պահանջներին:

Աղյուսակ 2. ՕԿԱ-ի մանրէաբանական ցուցանիշներին ներկայացվող պահանջները

Խմբեր	Կոսմետիկական արտադրանքի տեսակը	Մեզոֆիլային աերոբ եւ ֆակուլտատիվ անաէրոբ մանրէների ընդհանուր քանակը (ՄԱՖԱՄՔ)	Բորբոսասնկեր եւ խմորիչներ	Enterobacteriaceae ընտանիքին պատկանող մանրէներ	Staphylococcus aureus տեսակի մանրէներ	Pseudomonas aeruginosa տեսակի մանրէներ
		ԳԱՄ <*> արտադրանքի 1 գ-ում (սմ ³)		արտադրանքի 1 գ-ում (սմ ³)		
1-ին խումբ	Ամպուլային կոսմետիկա	Մանրէազերծ արտադրանք				
2-րդ խումբ	Կոսմետիկա՝ երեխաների համար, կոսմետիկա՝ աչքերի շուրջ օգտագործելու եւ շրթունքների համար, ինտիմ հիգիենայի եւ ինտիմ կոսմետիկական միջոցներ, բերանի խոռոչի հիգիենայի միջոցներ եւ այլն	10 ² -ից ոչ ավելի	բացակայություն	բացակայություն	բացակայություն	բացակայություն
3-րդ խումբ	Կոսմետիկայի մնացած մասը	10 ³ -ից ոչ ավելի	10 ² -ից ոչ ավելի	բացակայություն	բացակայություն	բացակայություն

Մանրէաբանական ցուցանիշներին պահանջներ չեն ներկայացվում ՕԿԱ-ի հետեւյալ անվանումների համար՝

25% -ից ավելի խտությամբ Էթիլային սպիրտ եւ օրգանական լուծիչներ պարունակող ՕԿԱ, որն օգտագործվում է առանց նոսրացման.

եղունգների լաքեր՝ բացի ջրային հիմքով եղունգների լաքերից.

հոտազերծիչներ, հոտազերծիչ հակաքրտնքային միջոցներ, հակաքրտնքային միջոցներ.

մազերի օքսիդացնող ներկեր, գունաբացման եւ գունաշերտավորման միջոցներ.

մազերի քիմիական գանգրացման միջոցներ եւ տիոլային միացությունների հիմքով մազերի ուղղման միջոցներ.

Դեպիլյացիայի համար միջոցներ՝ թիոգլիկոլային թթվի հիմքով.

ձեռքի պինդ օճառ.

շրթունքների, հոնքերի, աչքերի չոր մատիտներ.

լոգանքի համար նախատեսված աղեր.

100%-անոց եթերայուղեր:

Թունաբանական անվտանգությանը ներկայացվող պահանջներ: Երբ ՕԿԱ-ն ներկայացվում է թունաբանահիգիենիկ փորձաքննության, անվտանգության գնահատումը կատարվում է մի քանի փուլով եւ սկսվում է փաստաթղթերի փորձաքննությամբ՝

- արտադրանքի բաղադրագրերի (բաղադրակազմի) վերլուծություն՝ թունաբանական բնութագրերի առկայությունը եւ յուրաքանչյուր, հատկապես՝ նոր, նախկինում չօգտագործված բաղադրիչի վտանգավորության աստիճանը գնահատելու համար դրանց պարունակությունը այն խտությամբ, որը չի գերազանցում առավելագույն թույլատրելի չափը.

- արտադրանքի նշանակության, օգտագործման եղանակի ու հաճախականության, մաշկի եւ (կամ) լորձաթաղանթների հետ շփման ընդհանուր մակերեսի, ներգործության տեսողության, սպառողների տարիքային կազմի գնահատում.

Համալիր վերլուծության հիման վրա ընտրվում է թունաբանական գնահատման համար առաջարկվող մեթոդներից մեկը՝ կա՛մ լաբորատոր կենդանիների վրա, կա՛մ IN VITRO մեթոդներով այլընտրանքային կենսաբանական նմուշօրինակների վրա, կա՛մ ՕԿԱ-ի բաղադրագրի վերլուծության հիման վրա:

ՕԿԱ-ի բաղադրագրերի եւ բաղադրիչների թունաբանական բնութագրերի վերլուծության հիման վրա տրվում է փորձագիտական եզրակացություն հետեւյալ տեսակի արտադրատեսակների համար առանց փորձարկումներ անցկացնելու՝ մազերի ներկեր, մազերի քիմիական գանգրացման միջոցներ, մազերի ֆիքսման եւ ուղղելու համար նախատեսված միջոցներ, գունազրկող միջոցներ, պիլինգներ, լաքը մաքրելու եւ ջրիկացնելու հեղուկներ ու միջոցներ: Փորձագիտական եզրակացությունը պետք է ներառի յուրաքանչյուր բաղադրիչի մանրակրկիտ զննության եւ տրամադրության տակ գտնվող բոլոր տեղեկությունների վերլուծության վրա հիմնված սպառիչ տվյալներ ՕԿԱ-ի թունաբանական անվտանգության մասին:

Թունաբանական ցուցանիշներին ներկայացվող պահանջները ներկայացված են 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3. ՕԿԱ-ի մանրէաբանական ցուցանիշներին ներկայացվող պահանջները

Հ/հ	ՕԿԱ-ի անվանումը	Լաբորատոր կենդանիների վրա փորձարկումներով սահմանվող անվտանգության թունաբանական ցուցանիշներ		IN VITRO մեթոդներով այլընտրանքային կենսաբանական նմուշօրինակների վրա որոշվող անվտանգության թունաբանական ցուցանիշներ
		մաշկը գրգռող ազդեցություն (բալեր)	լորձաթաղանթների վրա ազդեցություն (բալեր)	
1.	Դեմքի եւ մարմնի մաշկի խնամքի միջոցներ			
1.1.	կրեմներ, էմուլսիաներ եւ այլն	0	0	Թունաբանական եւ գրգռող ազդեցության բացակայություն
1.2.	Սնուցող, մաքրող եւ այլ դիմակներ	0	0	Թունաբանական եւ գրգռող ազդեցության բացակայություն
1.3.	Ցնցուղ, լոգանք ընդունելու համար նախատեսված միջոցներ	0	0	Թունաբանական եւ գրգռող ազդեցության բացակայություն
1.4.	օճառ (ձեռքի, հոտազերծող եւ այլն)	0	-	Թունաբանական եւ գրգռող ազդեցության բացակայություն
1.5.	հոտազերծիչներ եւ քրտինքի դեմ օգտագործվող այլ	0	-	Թունաբանական եւ գրգռող ազդեցության բացակայություն

	միջոցներ			
1.6.	մարմնի խնամքի համար փոշի (տալկ) մանկական ցանափոշի, տալկ, փոշի (մինչեւ 3 տարեկան)	0	-	Թունաբանական եւ գրգռող ազդեցության բացակայություն
		0	0	Թունաբանական եւ գրգռող ազդեցության բացակայություն
1.7.	սափրման միջոցներ	0	'	Թունաբանական եւ գրգռող ազդեցության բացակայություն
1.8.	եղունգների խնամքի միջոցներ (գելեր, կրեմներ եւ այլն)	0		Թունաբանական եւ գրգռող ազդեցության բացակայություն
2.	Մազերի խնամքի միջոցներ՝			
2.1.	լվանալու համար	0	0	Թունաբանական եւ գրգռող ազդեցության բացակայություն
2.2.	ողողիչներ, բալզամներ եւ այլն	0	0	Թունաբանական եւ գրգռող ազդեցության բացակայություն
3.	Դեկորատիվ կոսմետիկայի միջոցներ.			
3.1.	շրթունքներին քսելու միջոցներ	0	0	Թունաբանական եւ գրգռող ազդեցության բացակայություն
3.2.	աչքերի շպարի միջոցներ (տուշ, մատիտներ եւ այլն)	0	0	Թունաբանական եւ գրգռող ազդեցության բացակայություն
3.3.	դիմափոշի, կարմրաներկ եւ այլն	0		Թունաբանական եւ գրգռող ազդեցության բացակայություն
3.5.	միջոցներ՝ մանիկյուրի համար (եղունգների երկարացման գելեր, եղունգների երկարացման համակարգեր ակրիլատային հիմքով)	0 - 2		Թունաբանական եւ գրգռող ազդեցության բացակայություն
4.	Ինտիմ հիգիենայի միջոցներ	0	0	Թունաբանական եւ գրգռող ազդեցության բացակայություն
5.	Արեւապաշտպան միջոցներ եւ միջոցներ՝ ինքնայրուքի	0		Թունաբանական եւ գրգռող ազդեցության բացակայություն

	համար			
6.	Հիգիենիկ խնամքի եւ բուրահաղորդիչ միջոցներ (օժանելիք, օդեկոլոններ եւ այլն)	0		Թունաբանական եւ գրգռող ազդեցության բացակայություն
7.	Արտադրական վնասակար գործոններից մաշկը պաշտպանելու միջոցներ (քսուքներ, կրեմներ, մածուկներ եւ նմ.)	0	0	Թունաբանական եւ գրգռող ազդեցության բացակայություն

Կլինիկալաբորատոր փորձարկումներն անցկացվում են օրգանոլեպտիկ, ֆիզիկաքիմիական, մանրէաբանական եւ թունաբանական հետազոտությունների դրական արդյունքներն ստանալուց հետո: Կլինիկալաբորատոր ցուցանիշներին ներկայացվող պահանջները ներկայացված են 4-րդ աղյուսակում:

Աղյուսակ 4. Կլինիկալաբորատոր ցուցանիշներին ներկայացվող պահանջները

Հ/հ	Արտադրանքի անվանումը	Մաշկը գրգռող եւ զգայունացնող ազդեցություն			Մաշկային թեստավորման արդյունքների գնահատում	
		Մաշկային թեստերի իրականացում I կաթիլային մեթոդ II կոմպրեսային մեթոդ	Փորձարկվող արտադրանքի էքսպոզիցիայի ժամանակը	Թեստերի իրականացման արդյունքների գնահատման ժամկետները	Գրգռող ազդեցություն	Զգայունացնող ազդեցություն
1	2	3	4	5	6	7
1.	Մաշկի խնամքի միջոցներ					
1.1.	Կոսմետիկ կրեմներ, էմուլսիաներ, կաթիլ, սերուցք, գելեր, դոնդող, սնուցող դիմակներ եւ այլն	II	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
1.1.1.	Կոսմետիկ յուղեր	II	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
1.1.2.	- Հակացեյուլիտային կրեմներ	II	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
	- Հակացեյուլիտային սփրեյներ, «ցեխեր» փաթաթում	I	2 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
	- Հակացեյուլիտային սպեղանիներ	II	2 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո:	բացակայում է	բացակայում է

				Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո		
1.2.	Մաքրող կոսմետիկ միջոցներ					
1.2.1.	Լոսյոններ, կաթիկ, տոնիկներ, գելեր, թաց կոսմետիկ անձեռոցիկներ՝ շպարը մաքրելու համար, մաքրող անձեռոցիկներ	I	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
1.2.2.	Սկրաբներ, դիմակներ, բնական կոսմետիկ կավ («ցեխեր»), փաթաթում	I	2 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	թույլ, ռեակցիայի տեսողությունը 30 րոպեից ոչ ավելի	բացակայում է
1.2.3.	Կոսմետիկ սպեղանիներ՝ պրոբլեմատիկ մաշկի համար, մաշկը մաքրելու համար	II	15 րոպե	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	թույլ, ռեակցիայի տեսողությունը 30 րոպեից ոչ ավելի	բացակայում է
1.2.4.	Դեպիլյացիայի միջոցներ (կրեմներ, գելեր, մեղրամուներ եւ նմ.)	I	15 րոպե	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	թույլ, ռեակցիայի տեսողությունը 30 րոպեից ոչ ավելի	բացակայում է
	Սպեղանիներ՝ դեպիլյացիայի համար	II	15 րոպե	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	թույլ, ռեակցիայի տեսողությունը 30 րոպեից ոչ ավելի	բացակայում է
1.3.	Լվացող կոսմետիկական միջոցներ					

1.3.1.	<p>- Օճառ՝ ոչ հատուկ նշանակության, փրփուրներ, գելեր՝ լոգանքի համար, գելեր՝ ցնցուղ ընդունելու համար, եւ այլն</p> <p>- Օճառ՝ հակամանրէական ազդեցությամբ, եւ այլն</p>	I	24 ժ.	<p>Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո</p>	բացակայում է	բացակայում է
1.3.2.	Լոգանքի միջոցներ (փրփուր, աղ, յուղ եւ այլն)	I	24 ժ.	<p>Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո</p>	բացակայում է	բացակայում է
1.4.1.	Հոտազերծիչներ եւ այլ հակաքրտնքային միջոցներ (առանց սպիրտի պարունակության)	II	24 ժ.	<p>Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո</p>	բացակայում է	բացակայում է
1.4.2.	Սփրեյ հոտազերծիչներ եւ սպիրտ պարունակող այլ հոտազերծիչներ	I	24 ժ.	<p>Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո</p>	բացակայում է	բացակայում է
1.5.	Սափրման միջոցներ (փրփուրներ, կրեմներ, գելեր եւ այլն)	I	24 ժ.	<p>Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո</p>	բացակայում է	բացակայում է
1.6.	Միջոցներ՝ սափրվելուց հետո օգտագործելու	I	24 ժ.	<p>Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից</p>	բացակայում է	բացակայում է

	համար՝ սպիրտ պարունակող (լոսյոններ՝ սափրվելուց հետո օգտագործելու համար)			24, 48 եւ 72 ժամ հետո		
1.7.	Սափրման միջոցներ (փրփուրներ, կրեմներ, գելեր եւ այլն)	II	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
2.	Մազերի խնամքի միջոցներ					
2.1.	Շամպուններ, օճառ՝ մազերի համար	I	2 ժամ (լվանալ ջրով)	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	թույլ, ռեակցիայի տեսողությունը 15 րոպեից ոչ ավելի	բացակայում է
2.2.	Բալզամներ, միջոցներ՝ թեփի դեմ	I	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
2.3.	- Ողողիչներ, կոնդիցիոներներ	I	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
	- Դիմակներ՝ մազերի համար	I	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
2.4.	Մազերի հարդարման եւ սանրվածքի պահպանման միջոցներ՝	I	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	թույլ, ռեակցիայի տեսողությունը 30 րոպեից ոչ	բացակայում է

	- լաքեր - մուսեր, փրփուրներ, գելեր	I	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	ավելի բացակայում է	բացակայում է
2.5.	Մազերի ներկ, մազերի տուշ	I	2 ժամ (լվանալ 40%-անոց էթանոլի լուծույթով)	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	թույլ, ռեակցիայի տեւողությունը 30 րոպեից ոչ ավելի	բացակայում է
2.5.1.	Մազերի գունաբացման միջոցներ (գունաշերտավորում եւ նմ.) օքսիդացնող միջոցներ եւ նմ.	I	2 ժամ (լվանալ 40%-անոց էթանոլի լուծույթով)	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	թույլ, ռեակցիայի տեւողությունը՝ 30 րոպեից ոչ ավելի	բացակայում է
2.5.2.	Հինա եւ բասմա	I	24 ժ. Արտադրատեսակի անոտացիայի համաձայն (մաքրել ջրով)	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	թույլ, ռեակցիայի տեւողությունը 15 րոպեից ոչ ավելի	բացակայում է
2.5.3.	Շամպուններ եւ բալզամներ, փրփուրներ, երանգ հաղորդող մուսեր	I	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	թույլ, ռեակցիայի տեւողությունը 15 րոպեից ոչ ավելի	բացակայում է
2.6.	Միջոցներ՝ մազերի գանգրացման, ֆիքսման, ուղղման միջոցներ	I	6 ժամ (լվանալ 40%-անոց էթանոլի լուծույթով)	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	թույլ, ռեակցիայի տեւողությունը 30 րոպեից ոչ	բացակայում է

					ավելի	
3.	Դեկորատիվ կոսմետիկայի միջոցներ					
3.1.	Շրթներկ, շրթունքների փայլ, շրթունքների մատիտ, շրթունքների բալզամ	II	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
3.2.	Տուշ, գծաներկ, աչքերի մատիտ, հոնքերի մատիտ	I	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
3.2.1.	Թարթիչների եւ հոնքերի ներկ	I	24 ժամ (լվանալ 40% - անոց էթանոլի լուծույթով)	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	թույլ, ռեակցիայի տեւորությունը՝ 15 րոպեից ոչ ավելի	բացակայում է
3.3.	Սովերաններկ՝ կոպերի համար, դիմափոշի, կարմրաներկ	II	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
3.4.	Կրեմ-դիմափոշի, յուղոտ կարմրաներկ, տոնային կրեմ, շպարի հիմք, մարմնի փայլ եւ նմ.	II	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
4.	Եղունգների խնամքի միջոցներ					
4.1.	Մանիկյուրի լաքեր (արծնաներկեր (արծններ), մաճուկներ, հիմքեր)՝ եղունգների համար	I	2 ժամ (լվանալ 40%-անոց էթանոլի լուծույթով)	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	թույլ, ռեակցիայի տեւորությունը՝ 30 րոպեից ոչ ավելի	բացակայում է
4.2.	Հեղուկ՝ լաքը	I	6 ժամ (լվանալ	Էքսպոզիցիայի ավարտից	թույլ,	բացակայում է

	մաքրելու համար, ամրացնող միջոց		40%-անոց էթանոլի լուծույթով)	անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	ռեակցիայի տեւողությունը՝ 30 րոպեից ոչ ավելի	
4.3.	Եղունգներն ամրացնող միջոցներ (յուղեր, բազա եւ նմ.)	I	24 ժամ (լվանալ 40%-անոց էթանոլի լուծույթով)	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	թույլ, ռեակցիայի տեւողությունը՝ 30 րոպեից ոչ ավելի	բացակայում է
4.4.	Նրբամաշկի խնամքի միջոցներ (կրեմներ, յուղեր եւ նմ.)	I	2 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
4.5.	Եղունգների երկարացման միջոցներ (գելեր, ակրիլային փոշիներ, փոշիներ եւ այլն), ակրիլային փոշիների լուծիչներ	I	2 ժամ (լվանալ 40%-անոց էթանոլի լուծույթով)	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	թույլ, ռեակցիայի տեւողությունը 30 րոպեից ոչ ավելի	բացակայում է
5.	<u>Հատուկ կոսմետիկական արտադրանք</u>					
5.1.	Միջոցներ՝ արեւայրուքի համար, պաշտպանիչ գործոններով, միջոցներ՝ սոլյարիում արեւայրուքի համար	I	2 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
5.2.	Միջոցներ՝ առանց արեւի արեւայրուքի համար (ինքնայրուք)	I	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է Թույլատրվում է պիգմենտների առաջացում	բացակայում է

5.3.	Միջոցներ՝ արեայրուքից հետո օգտագործման համար (կրեմներ, էմուլսիաներ, կաթիկ, սերուցք)	II	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
5.4.	Սպիտակեցման միջոցներ	I	2 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
6.	Հիգիենիկ խնամքի եւ հոտ հաղորդելու միջոցներ					
6.1.	Օծանելիք, օծանելիքային ջուր, հարդաջուր, օղեկոլոն եւ այլն	I	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
6.2.	Սպիրտ չպարունակող բուրավետիչներ (չոր օծանելիք, օծանելիքային մարգարիտ եւ նմ.)	I	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
6.3.	Եթերայուղեր	I	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
7.	Ինտիմ կոսմետիկայի հիգիենիկ միջոցներ					
7.1.	Թաց անձեռոցիկներ, հիգիենիկ միջադիրներ՝ բուրավետացված, սպիրտ չպարունակող	II	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է

7.2.	Քսանյութեր	II	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
8.	Մաշկը վնասակար գործոններից պաշտպանող միջոցներ					
8.1.	Պաշտպանիչ կրեմներ, էմուլսիաներ, մածուկներ եւ նմ.	II	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
8.2.	Միջոցներ՝ արտադրական աղտոտումները մաքրելու համար (մաքրող մածուկներ, մաքրող գելեր եւ նմ.)	I	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է
8.3.	Վերականգնող, ռեգեներատիվ ազդեցություն ունեցող միջոցներ (կրեմներ, էմուլսիաներ եւ այլն)	II	24 ժ.	Էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո: Էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո	բացակայում է	բացակայում է

Մաշկի փորձաստուգումների արդյունքների գնահատումն իրականացվում է փորձարկվող արտադրանքի էքսպոզիցիայի ավարտից անմիջապես հետո եւ էքսպոզիցիայի ավարտից 24, 48 եւ 72 ժամ հետո: Էքսպոզիցիայի արդյունքները գնահատվում են հետեւյալ կերպ՝

ռեակցիայի բացակայություն (բացակայում է) - մաշկային մակերեսի տեսանելի փոփոխությունների բացակայություն.

թույլ ռեակցիա՝ թույլ էրիթեմա, որը չի անցնում փորձարկվող հատվածից դուրս.

արտահայտված ռեակցիա՝ փորձարկվող հատվածում վառ էրիթեմա կամ էրիթեմա, որն անցնում է փորձարկվող հատվածից դուրս:

4. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՏԱՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Սպառողական տարան պետք է ապահովի օժանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգությունն ու պահպանումը պիտանիության ժամկետի ընթացքում:

Ինտիմ հիգիենայի համար նախատեսված կոսմետիկական միջոցները պետք է փաթեթավորվեն առաջին բացման նկատմամբ հսկողությունը երաշխավորող սպառողական տարայում:

5. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՏԱՐԱՅԻ ՄԱԿԱՆՇՎԱԾՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Օժանելիքակոսմետիկական արտադրանքը մակնշվում է սպառողական տարայի, արտադրանքին կցվող կամ ամրացվող ապրանքապիտակի, պիտակի, բացիկի, ժապավենի վրա՝ օժանելիքակոսմետիկական արտադրանքի մասին տեղեկություններ նշելու միջոցով:

Արտադրվող, իրացվող ՕԿԱ-ի փաթեթվածքի վրա պետք է լինի հստակորեն կատարված, ընթեռնելի եւ չջնջվող մականշվածք, որը պետք է պարունակի հետեւյալ տեղեկությունները՝

- օճանելիքակոսմետիկական արտադրանքի անվանումը, անունը.

- պատրաստողի անունն ու գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն՝ ներառյալ երկիրը) եւ դրա ապրանքային նշանը (դրա առկայության դեպքում).

- այն կազմակերպության անվանումն ու գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն), որը պատրաստողի կողմից լիազորված է սպառողներից բողոքներ ստանալու համար (պատրաստողի լիազոր ներկայացուցիչ, ներմուծող).

- արտադրանքի անվանական քանակը սպառողական փաթեթվածքում (ձեռքի պինդ օճառի համար՝ մեկ կտորի անվանական զանգվածը)՝ բացառությամբ 5 գրամից պակաս անվանական քաշով կամ 5 մլ-ից պակաս անվանական ծավալով օճանելիքակոսմետիկական արտադրանքի, ՕԿԱ-ի անվճար նմուշների.

- գույնը, երանգը, խումբը (դեկորատիվ կոսմետիկայի եւ ներկող միջոցների համար).

- պիտանիության ժամկետը.

- պահպանման պայմանները, որոնք պահպանելու դեպքում ապահովվում է օճանելիքակոսմետիկական արտադրանքի պիտանիության ժամկետը, այն դեպքում, երբ այդ պայմանները տարբերվում են ստանդարտ պայմաններից.

- աերոզոլային արտադրանքից, փորձանմուշներից, բույրաբարձիկից (սաշեից), միանգամյա օգտագործման արտադրանքից, օրգանական լուծիչների հիմքով պատրաստված արտադրանքից, ձեռքի պինդ օճառից, ավելի, քան 25 ծավալային տոկոս էթիլային սպիրտ պարունակող արտադրանքից բացի այն կոսմետիկական արտադրանքի վրա, որի պիտանիության ժամկետը գերազանցում է 30 ամիսը, պետք է փաթեթվածքը բացելուց հետո նշված լինի արտադրանքի պիտանիության ժամկետը.

- նախազգուշական հատուկ միջոցներ ծանոթագրությանը համապատասխան՝ արտադրանքն ըստ նշանակության օգտագործելու դեպքում.

- արտադրական խմբաքանակի համարը կամ հատուկ կոդը, որոնցով հնարավոր է նույնականացնել արտադրանքի խմբաքանակը.

- վաճառքի համար ներկայացվող օժանելիքակոսմետիկական արտադրանքի նշանակությունը, եթե դա չի բխում արտադրանքի անվանումից.

- օժանելիքակոսմետիկական արտադրանքի օգտագործման եղանակների մասին տեղեկությունները, որոնց բացակայությունը կարող է հանգեցնել սպառողի կողմից օժանելիքակոսմետիկական արտադրանքի սխալ օգտագործմանը.

- այն փաստաթղթի նշումը, համապատասխան որի պատրաստվել է արտադրանքը (առկայության դեպքում).

- նույնականացման շտրիխ կոդը (վարսավիրանոցներում օգտագործվող մասնագիտական օժանելիքակոսմետիկական արտադրանքի համար նույնականացման շտրիխ կոդը պարտադիր չէ).

- բաղադրիչների ցանկը.

- լվացվող օժանելիքակոսմետիկական արտադրանքը, որը նախատեսված է անձնական եւ մասնագիտական օգտագործման համար (օճառ, շամպուններ, կոնդիցիոներներ՝ մազերի համար եւ այլն), 2014 թվականի հունվարի 1-ից պետք է ունենա էկոլոգիական մականշվածք:

Բաղադրիչների ցանկին պետք է նախորդի «Բաղադրիչներ» կամ «Բաղադրություն» վերնագիրը:

Բաղադրիչները նշվում են բաղադրագրում իրենց զանգվածային մասի նվազման կարգով, միեւնույն ժամանակ օժանելիքային (անուշահոտ) կազմությունը նշվում է որպես ընդհանուր բաղադրիչ առանց վերջինիս բաղադրությունը ներկայացնելու: Եթե կազմության բաղադրության մեջ մտնում են բաղադրիչներ, եւ դրանց պարունակությունն արտադրանքում լվացվող արտադրանքի համար գերազանցում է 0,01% կոնցենտրացիան, լվացվող արտադրանքի համար՝ 0,001% -ը, ապա դրանք պետք է նշված լինեն բաղադրության մեջ:

Այն բաղադրիչները, որոնց կոնցենտրացիան 1%-ից պակաս է, կարող են թվարկվել ցանկացած հերթականությամբ այն բաղադրիչներից հետո, որոնց կոնցենտրացիան 1%-ից ավելի է:

Արտադրողի կողմից որպես հումքային բաղադրիչներ նանոնյութերի օգտագործման դեպքում, պատրաստի արտադրանքի մականշվածքը պետք է պարունակի դրանց պարտադիր հստակ թվարկումը: Այդ բաղադրիչների անվանը պետք է հաջորդի «նանո» բառը:

Ներկանյութերը կարող են թվարկվել ցանկացած հերթականությամբ մնացած բաղադրիչներից հետո՝ գույնի ինդեքսի կամ ընդունված նշանակումներին համապատասխան:

Թույլատրվում է բաղադրիչների ցանկը ներկայացնել կոսմետիկայի բաղադրիչների միջազգային անվանացանկին (INCI) համապատասխան՝ օգտագործելով լատինական այբուբենի տառերը:

Որպես տարբեր երանգների սերիա թողարկված դեկորատիվ կոսմետիկայի արտադրատեսակների վրա կարող են թվարկվել սերիայում օգտագործված բոլոր ներկանյութերը՝ օգտագործելով «կարող է պարունակել» եզրույթը կամ (+/-) նշանը.

Օձանելիքակոսմետիկական արտադրանքի արդյունավետությունը (հայտագրված սպառողական հատկանիշների հաստատումը), որը նշված է սպառողական տարայի մականշվածքում (հակամանրէային ազդեցություն, հակակարիեսային ազդեցություն, կնճիռների դեմ, SPF գործոն եւ այլն), պետք է հաստատվի արտադրողի կողմից փաստաթղթերով:

Օձանելիքակոսմետիկական արտադրանքի արդյունավետությունը կարող է հաստատվել տարբեր մեթոդներով՝ մարդկանց վրա հետազոտություն անցկացնելու միջոցով, գործիքային մեթոդների օգնությամբ հետազոտությունների միջոցով, սպառողի կողմից կատարված ինքնագնահատման միջոցով: Բացի դրանից՝ օձանելիքակոսմետիկական արտադրանքի արդյունավետությունն ակտիվ բաղադրիչների համար կարող է հաստագրվել հայտնի գիտական տվյալների հիման վրա:

Օձանելիքակոսմետիկական արտադրանքի մասին տեղեկությունները տրամադրվում են Մաքսային Միության անդամ պետությունների պետական լեզուներով՝ բացառությամբ բաղադրիչների ցանկի:

Ներմուծված օժանելիքակոսմետիկական արտադրանքը պատրաստողի անվանումն ու իրավաբանական հասցեն կարող են գրված լինել դրա գտնվելու վայրի պետության լեզվով լատինական այբուբենի տառերով:

Առետրի ձեռնարկություններում, մանրածախ առետրի ցանցի օբյեկտներում արգելվում է փաթեթվածքի ամբողջականության խախտմամբ ՕԿԱ-ի իրացումը առանց վերոնշյալ պահանջներին համապատասխան տեղեկությունների առկայության:

6. ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՎ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

Արգելվում է պիտանիության ժամկետը լրացած ՕԿԱ-ի իրացումը:

Իրացվող հեղուկ օժանելիքակոսմետիկական արտադրատեսակները պահվում են պլյուս 5°C-ից մինչև պլյուս 20°C ջերմաստիճանում, թանձր օժանելիքակոսմետիկական արտադրատեսակները, փոշենման, խիտ, բյուրեղային եւ մոմանման արտադրատեսակները պահվում են 0°C-ից մինչև պլյուս 25°C ջերմաստիճանում պատրաստողի փաթեթվածքով փակ պահեստային շինություններում՝ համապատասխան գործող ՏՆԻԱ-ին:

Չի թույլատրվում ՕԿԱ-ն պահել անմիջապես արեւի լույսի ներքո, միացված ջեռուցման սարքերից 0,5 մ-ից պակաս հեռավորության վրա:

Այն դեպքում, երբ ՕԿԱ-ն պետք է պահվի նշված պայմաններից տարբերվող պայմաններում, ապա դա պետք է նշված լինի ՕԿԱ-ին վերաբերող տեխնիկական փաստաթղթերում եւ սպառողական փաթեթվածքի վրա:

Արգելվում է ՕԿԱ-ի իրացումը առետրի ձեռնարկություններում եւ մանրածախ առետրի ցանցի օբյեկտներում՝ ջերմաստիճանային եւ խոնավության պայմանների պահպանման համար անհրաժեշտ պայմանների բացակայության դեպքում:

ՕԿԱ-ի փոխադրումն իրականացվում է տրանսպորտի բոլոր տեսակներով տրանսպորտի համապատասխան տեսակի համար նախատեսված փոխադրումների կանոններին համապատասխան: Փոխադրման պայմանները պետք է

համապատասխան են արտադրանքի պահպանման պայմաններին:

Ենթաբաժին II. ԲԵՐԱՆԻ ԽՈՌՈՉԻ ՀԻԳԻԵՆԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

Սույն ենթաբաժնով սահմանվում են բերանի խոռոչի հիգիենայի միջոցներին ներկայացվող հիմնական պահանջները.

Բերանի խոռոչի կամ ատամների հիգիենայի միջոցներ՝ ներառյալ ատամի պրոթեզները սելեռոդ փոշիները եւ մածուկները, միջատամնային տարածքների մաքրման համար օգտագործվող թելերը՝ մանրածախ վաճառքի համար անհատական փաթեթվածքով (ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր 3306).

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18–ի թիվ 456 որոշման խմբագրությամբ)

Ատամի խոզանակներ՝ ներառյալ ատամի պրոթեզների համար նախատեսված խոզանակները (ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր 9603 21 000 0-ից):

Պահանջները տարածվում են Մաքսային միության անդամ պետությունների տարածքում շրջանառվող եւ արտասահմանից ներմուծվող՝ բերանի խոռոչի հիգիենայի միջոցների ամբողջ տեսականու վրա: Արտադրանքի տեսակներն են ատամի մածուկները, գելերը (կանխարգելիչ, հիգիենիկ) ատամի փոշիները, տնային պայմաններում ատամների սպիտակեցման միջոցները, բերանի խոռոչի հիգիենայի հեղուկ միջոցները (բալզամներ, թարմացնող միջոցներ, հոտազերծիչներ, բուժահեղուկներ, ողողումներ, ողողիչներ, եւ այլն), ատամի խոզանակներ (մեխանիկական, էլեկտրական), ատամի պրոթեզների մշակման խոզանակները, ֆլուսը, ֆլուսը պահող միջոցները, իռիգատորները, բերանի խոռոչի համար նախատեսված խթանիչները, կլոր խոզանակները, ատամնաքչփորիկները եւ այլն, ատամի պրոթեզների համար նախատեսված միջոցները (ատամի պրոթեզների

մաքրման միջոցներ, ատամի պրոթեզները սեւեռող միջոցներ եւ այլն), ատամնափառն ի հայտ բերելու միջոցներ:

Սույն պահանջները չեն տարածվում բուժական նշանակություն ունեցող միջոցների վրա:

2. ԵԶՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Բերանի խոռոչի հիգիենայի միջոցները (ԲԽՀՄ) ցանկացած այն նյութերը կամ միջոցներն են, որոնք նախատեսված են ատամների եւ բերանի խոռոչի լորձաթաղանթի հետ շփման համար, որոնց բացառիկ եւ գերնպատակն է դրանց մաքրումը, հոտազերծումը եւ կանխարգելումը, սակայն չեն դասվում դեղորայքային միջոցների դասին՝ հաշվի առնելով դրանց կազմության մեջ եղած բաղադրիչների հիմնական հատկություններն ու կոնցենտրացիան:

Անոտացիա՝ ԲԽՀՄ-ի բառացի նկարագիրը եւ (կամ) գրաֆիկական նշումը, որը պարունակում է դրա սպառողական հատկությունների բնութագրերը, նշանակությունը, օգտագործման եւ սահմանափակման առնչությամբ առաջարկությունները, ինչպես նաեւ օգտագործման եղանակը:

Արտադրանքի անվտանգություն՝ արտադրանքի այն հատկությունների եւ բնութագրերի ամբողջությունը, որոնցով հիմնավորապես հավաստվում է, որ արտադրանքը վնասակար չէ եւ օգտագործողի համար վտանգ չի ներկայացնում իր նշանակությանը եւ օգտագործման եղանակին համապատասխան կիրառելու դեպքում:

Արտադրանքի որակ՝ արտադրանքի այն հատկությունների ամբողջությունը, որոնցով պայմանավորվում է արտադրանքի որոշակի պահանջներ բավարարելու կարողությունը՝ իր նշանակությանը համապատասխան:

Արտադրանքի որակի հսկողություն՝ սահմանված պահանջներին արտադրանքի որակի ցուցանիշների համապատասխանության ստուգում հաստատված մեթոդների օգնությամբ:

Մակնշումն ունի երկու նշանակություն՝

փաթեթավորման տարայի վրա զետեղված տպագիր նյութ (պիտակ, թերթ-ներդրակ եւ այլ տպագիր նյութեր),

փաթեթավորման տարային պիտակներ ամրացնելու գործընթաց:

Նորմատիվ փաստաթղթեր (ՆՓ)՝ սահմանված կարգով մշակված եւ հաստատված՝ պատրաստի արտադրանքին, դրա պահպանմանը, տրանսպորտային փոխադրմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանող փաստաթղթերի լրակազմ:

Որակի ցուցանիշ՝ արտադրանքի որակը կազմող՝ հատկությունների քանակական բնութագիր, որը դիտարկվում է դրա գործածման պայմանների հետ համեմատությամբ:

Բաղադրագիր՝ տեխնիկական փաստաթուղթ, որով սահմանվում է ԲԽՄՀ-ի կազմի մեջ մտնող բաղադրիչների ամբողջական ցանկը:

Արտադրանքի պահպանվածություն (կայունություն)՝ արտադրանքի որակի հիմնական ցուցանիշների պահպանության միջին տեսողությունը:

Պիտանիության ժամկետ՝ ժամանակահատված, որի լրանալուց հետո արտադրանքը համարվում է ոչ պիտանի՝ ըստ նշանակության օգտագործելու համար:

Ծանոթագրություն: Պիտանիության ժամկետը սահմանվում է արտադրանքը պատրաստողի կողմից, ինչի ընթացքում պատրաստողը պարտավոր է երաշխավորել սպառողի կյանքի եւ առողջության անվտանգության պահանջներին արտադրանքի համապատասխանությունն ու պահպանման պայմանները պահպանելու դեպքում՝ սպառողական հատկանիշների պահպանումը:

Հումք՝ արտադրանքի պատրաստման ժամանակ օգտագործվող բոլոր բաղադրիչները (ակտիվ կամ իներտ)՝ անկախ այն հանգամանքից, թե արտադրական գործընթացի ընթացքում մնում են դրանք անփոփոխ, թե կրում են փոփոխություններ:

Փաթեթվածք՝ միջոց կամ միջոցների ամբողջություն, որն ապահովում է արտադրանքի պաշտպանությունը վնասվածքներից եւ կորուստներից, շրջակա միջավայրից, աղտոտումից, ինչպես նաեւ ապահովում է արտադրանքի շրջանառության գործընթացը (տրանսպորտային փոխադրումը, պահպանումն ու իրացումը):

Փաթեթանյութ՝ նյութ, որը նախատեսված է տարայի, փաթեթվածքի եւ օժանդակ փաթեթավորման միջոցների պատրաստման համար:

Պիտակ՝ փաթեթավորված արտադրանքի եւ դրա պատրաստողի մասին տեղեկատվության միջոց, որը զետեղվում է հենց արտադրանքի, թերթ-ներդրակի կամ ապրանքապիտակի վրա, ամրացվում կամ կցվում է փաթեթավորման միավորին: Այն պիտակը, որը պարունակում է արտադրանքի մասին տեղեկություններ եւ զետեղված է հիմնական պիտակի հակառակ կողմում, կոչվում է հակադարձ պիտակ:

3.ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ (ԶԱՓԱՆԻՇՆԵՐ)

Բերանի խոռոչի հիգիենայի միջոցների գնահատումը ներառում է բաղադրիչային կազմի վերլուծություն՝ հաշվի առնելով հետեւյալ պահանջները՝

- արգելվում է որպես բերանի խոռոչի հիգիենայի միջոցների բաղադրիչներ օգտագործել II գլխի 4-րդ բաժնի 4.2 հավելվածով նախատեսված նյութերը.

- թույլատրվում է որպես բերանի խոռոչի հիգիենայի միջոցների բաղադրիչներ օգտագործել նյութեր՝ հաշվի առնելով II գլխի 4-րդ բաժնի 4.3 հավելվածի համաձայն նշված սահմանափակումները.

- թույլատրվում է որպես բերանի խոռոչի հիգիենայի միջոցների բաղադրիչներ օգտագործել ներկանյութեր՝ II գլխի 4-րդ բաժնի 4.4 հավելվածի համաձայն.

- թույլատրվում է որպես բերանի խոռոչի հիգիենայի միջոցների բաղադրիչներ օգտագործել II գլխի 4-րդ բաժնի 4.5 հավելվածով նախատեսված կոնսերվանտները.

- թույլատրվում է որպես բերանի խոռոչի հիգիենայի միջոցների բաղադրիչներ օգտագործել II գլխի 4-րդ բաժնի 4.6 հավելվածով նախատեսված ուլտրամանուշակագույն ճառագայթների ֆիլտրերը.

- բերանի խոռոչի հիգիենայի միջոցների արտաքին տեսքը, հոտը, գույնը, փաթեթվածքը, մականշվածքը, ծավալը կամ չափսերը չպետք է սպառողների առողջության կամ անվտանգության համար վտանգ ներկայացնեն, որը կարող է ի հայտ գալ այդ արտադրանքը սննդամթերքի հետ շփոթելու հնարավորության դեպքում.

- բերանի խոռոչի հիգիենայի միջոցները պետք է թունաբանական եւ կլինիկական տեսանկյունից անվտանգ լինեն: Դրանք չպետք է բացասական ազդեցություն ունենան բերանի խոռոչի հյուսվածքների վրա եւ չպետք է առաջացնեն փոփոխություններ բնականոն միկրոֆլորայի որակական եւ քանակական կազմում պիտանիության ժամկետի ընթացքում պահպանման պայմաններին հետեւելու դեպքում:

Ըստ օրգանոլեպտիկ, ֆիզիկաքիմիական, մանրէաբանական, թունաբանական եւ կլինիկական ցուցանիշների՝ բերանի խոռոչի հիգիենայի միջոցները պետք է համապատասխանեն II գլխի 4-րդ բաժնի 4.1 հավելվածում նշված սահմանված պահանջներին:

4. ՓԱԹԵԹՎԱԾՔԻՆ, ՄԱԿԱՆՇՎԱԾՔԻՆ ԵՎ ՊԻՏԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Փաթեթվածքը պետք է ապահովի պիտանիության սահմանված ժամկետների ընթացքում պատրաստի արտադրանքի հատկությունների պահպանվածությունը եւ օգտագործման հարմարավետությունը:

Սպառողական եւ տրանսպորտային տարայի մականշվածքն ու փաթեթվածքը պետք է լինեն հստակ, ոչ երկիմաստ:

Սպառողական տարայի, փաթեթվածքի, պիտակի, հակադարձ պիտակի,

ապրանքապիտակի, բացիկի, թերթ-ներդրակի վրա տեքստում բերված տեղեկությունները պետք է լինեն միանշանակ հասկանալի, ամբողջական եւ հավաստի, որպեսզի սպառողը խաբված չլինի կամ մոլորության մեջ չընկնի՝ բերանի խոռոչի հիգիենայի միջոցների ծագման, հատկությունների, բաղադրության, օգտագործման եղանակի, ինչպես նաեւ այլ տվյալների հետ կապված, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն բնորոշում են բերանի խոռոչի հիգիենայի միջոցների որակն ու անվտանգությունը, եւ տվյալ արտադրատեսակները այլ արտադրատեսակների տեղ չընդունի:

Բաղադրիչների ցանկին պետք է նախորդի «Բաղադրություն» վերնագիրը, որից հետո պետք է ներկայացված լինի բոլոր բաղադրիչների ցանկը՝ արտադրատեսակի բաղադրագրում դրանց զանգվածային մասի նվազման կարգով: Այն բաղադրիչները, որոնց կոնցենտրացիան 1%-ից պակաս է, կարող են թվարկվել ցանկացած հերթականությամբ այն բաղադրիչների հետո, որոնց կոնցենտրացիան 1%-ից ավելի է: Պատրաստողի հայեցողությամբ թույլատրվում է բաղադրիչների ցանկը ներկայացնել կոսմետիկայի բաղադրիչների միջազգային անվանացանկին (ԿԲՄԱ) համապատասխան՝ օգտագործելով լատինական այբուբենի տառերը: Արտադրողի կողմից նանոնյութերը որպես հումքային բաղադրիչներ օգտագործելու դեպքում, պատրաստի արտադրանքի մականշվածքում պետք է նշված լինի դրանց պարտադիր հստակ թվարկումը: Այդ բաղադրիչների անվանը պետք է հաջորդի «նանո» բառը:

Բերանի խոռոչի հիգիենայի միջոցների փաթեթվածքի վրա պետք է նշված լինի՝
բերանի խոռոչի հիգիենայի միջոցների անվանումը,

Ֆիրմային անվանումը (ապրանքային նշանը)՝ առկայության դեպքում,

պատրաստողի (կամ հիմնական մատակարարի) անվանումը եւ հասցեն ու սպառողի դժգոհություններն ընդունելու համար պատրաստողի կողմից լիազորված կազմակերպության գտնվելու վայրը,

այն փաստաթղթի նշումը, որի համաձայն պատրաստվել է արտադրանքը (առկայության դեպքում),

խմբաքանակի կամ սերիայի համարը,

հիմնական բաղադրիչների անվանումը.

պիտանիության ժամկետը եւ պատրաստման ամսաթիվը (բացի ատամի խոզանակներից, կլոր խոզանակներից, ատամնաթելերից եւ բերանի խոռոչի այլ միջոցներից), կամ իրացման ժամկետը լրանալու ամսաթիվը (այդ դեպքում փաթեթվածքի վրա պետք է նշված լինի հետեւյալը՝ օգտագործել մինչեւ ... կամ պիտանի է մինչեւ ...),

ատամի խոզանակների համար՝ խոզանակի մագերի կոշտությունը,

ատամնաթելերի համար՝ երկարությունը (մ),

ատամնաթելերի եւ ատամնաքչփորիկների համար՝ տեսակը, օրինակ՝ մոմած/չմոմած, փայտե, հավելումների տեսակները՝ ֆտորիդով, քլորհեքսիդինով եւ այլն,

զտաքաշը (մլ) եւ (կամ) զանգվածը (գ)՝ (բացի բերանի խոռոչի հիգիենայի օժանդակ միջոցներից),

Լվացող միջոցների, սպիտակեղենի եւ հագուստի վազքի սինթետիկ վազող միջոցների (ձեռքով եւ մեքենայով), սպիտակեղենի լավորակիչների, ամանները վանալու համար նախատեսված վազող, մաքրող միջոցների տիպային նմուշ՝ մեկ անվամբ եւ նշանակությամբ նմուշ, որն ընտրվել է արտադրանքի խմբերից եւ արտադրված է մեկ արտադրողի միասնական տեխնիկական փաստաթղթերի հիման վրա (բաղադրագրություն, տեխնիկական պայմաններ, ԳՕՍՏ, ԲՍՏ եւ այլն), ունի միանման բաղադրակազմ եւ հումքային նյութեր, ագրեգատային վիճակ, կիրառության միեւնույն ոլորտ ու պայմաններ եւ տարբերվում է փաթեթվածքի ծավալով, ձեռով ու օգտագործվող գազանցքով կամ ներկանյութով:

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշմամբ)

Կենցաղային քիմիայի միջոցների համար տիպային նմուշները պետք է կազմեն արտադրանքի վերաբերյալ հետազոտություններ անցկացնելու համար ներկայացված ցանկի առնվազն 30%-ը եւ ամբողջությամբ հետազոտվեն. մնացած բոլոր նմուշների համար որոշվում է միայն զգայունացնող ազդեցությունը:

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշմամբ)

1.3. Ընդհանուր պահանջներ

1.3.1. Կենցաղային քիմիայի ապրանքները չպետք է վնաս հասցնեն մարդու առողջությանը, շրջակա միջավայրին, երբ դրանք օգտագործվում են ըստ նպատակի՝ հաշվի առնելով մշակված պաշտպանական միջոցները եւ պետք է համապատասխանեն սահմանված սանիտարահիգիենիկ

պահանջներին:

1.3.2. Կենցաղային քիմիայի ապրանքները պետք է արտադրվեն ազդեցատային վիճակներում, որոնք կիրառման ընթացքում կնվազեցնեն կամ կբացառեն վտանգավոր նյութերի թափանցումը մարդու շնչառական ուղիներ, մարսողական տրակտ, լորձաթաղանթ:

1.3.3. Կենցաղային քիմիայի ապրանքների նկատմամբ անվտանգությունն ապահովվում է արտադրանքի բաղադրությամբ եւ բաղադրագրությամբ՝ հաշվի առնելով կիրառության եղանակի նպատակը եւ մշակված պաշտպանիչ միջոցների բավարար լինելը:

1.3.4. Արգելվում է դնել կենցաղային քիմիայի այն ապրանքների առանց նախազգուշական մականշվածքի եւ համապատասխան պաշտպանիչ միջոցների կիրառության եղանակի մասին ցուցման շրջանառությունը, որոնք՝

- դասակարգվում են որպես 1-ին եւ 2-րդ կարգի վտանգավորության դասի սուր թունավոր նյութեր՝ ստամոքս ընկնելիս, մաշկի վրա քսելիս եւ ինհալացիոն ազդեցության ժամանակ,

- մաշկի վրա ունեն խոցեր առաջացնելու (քայքայող) ազդեցություն եւ թողնում են անդառնալի հետեւանքներ լորձաթաղանթի համար,

- ունեն զգայունակություն առաջացնող (ալերգիկ) ազդեցություն՝ մաշկի վրա քսելիս եւ ինհալացիոն ներգործության ժամանակ,

- առաջացնում են մուտագեն ազդեցություն եւ վերարտադրության ֆունկցիայի խանգարում,

- քաղցկեղածին են:

1.3.5. Կենցաղային քիմիայի ապրանքների վրա կատարվող փորձարկումների տեսակները (հավելված 5)

Սանիտարաքիմիական փորձարկումներ.

- ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշի (pH) չափում՝ լվացվող միջոցներում,

- սպասքի վրայից լվանալու միջոցները հեռացնելու գնահատում,

- կենսատարրալուծում (ամբողջական, առաջնային) <*>, <*>

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի օգոստոսի 18-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

- ֆոսֆորական թթվի միացությունների զանգվածային մասը ֆոսֆորի հինգօքսիդի հաշվարկով (P_2O_5),

- ակտիվ քլորի զանգվածային մասը քլորակտիվ միություններ պարունակող միջոցներում,

- ծանր մետաղների պարունակության որոշումը աման լվանալու միջոցներում, սննդի արդյունաբերության մեջ օգտագործման համար, բուժ-պրոֆիլակտիկ հիմնարկություններում, մանկական, նախադպրոցական եւ դպրոցական հաստատություններում,

Թունաբանական փորձարկումներ՝

- սուր թունավորման գնահատում՝ <*> DL50 ստամոքս ընկնելու դեպքում,

- կոմույատիվ ներգործության գնահատում <*>,

- մաշկի վրա DL50 քսելիս սուր թունավորության (տոկսիկության) գնահատում <*>,

- ինհալացիոն վտանգավորության գնահատումը՝ ըստ ցնդելիության աստիճանի<*>, C20 (հազեցնող խտանյութեր)

- ինհալացիոն վտանգավորության գնահատում՝ աերոզոլների եւ փոշիանման միջոցների ազդեցության տակ (ստատիկ ինհալացիոն թունավորում),

- գրգռիչ բնույթի ազդեցության գնահատում կիրառման համար առաջարկվող ռեժիմում՝

մեկանգամյա ներգործության դեպքում,

- կաշվե ծածկոցների վրա (կաշվի վիճակի ֆունկցիոնալ ցուցանիշների գնահատում),

- աչքի շաղկապենու վրա,

- մաշկի մեջ ներծծվելու ազդեցության գնահատում <*>,

- զգայունացնող ազդեցության գնահատում <*>,

- թունավորման ինդեքս<***>:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

Ծանոթագրություն. <*> Հետազոտության այս տեսակը կիրառվում է կրկնակի վերամշակված արտադրատեսակների համար, երբ դրանք դուրս են բերվում սերիական բացթողման եւ (կամ) ներկրվող միջոցի համար, եթե անհրաժեշտ տեղեկությունները բացակայում են կից փաստաթղթերում:

<***> Կիրառվում է ցուցանիշներից մեկը՝ թունավորման ինդեքս կամ սուր թունավորում՝ ստամոքս ընկնելու դեպքում,

<***> Մեթանոլի պարունակությունը որոշվում է միայն հեղուկ միջոցների դեպքում, որոնց բաղադրության մեջ սպիրտ է մտնում,

<***> Չի կիրառվում կենցաղային քիմիայի այն ապրանքների նկատմամբ որոնց pH ցուցանիշը կազմում է 3 pH միավորից պակաս, կամ 11,5 pH միավորից ավելի. սպիրտ պարունակող տարրերում սպիրտի տոկոսային մասը կազմում է 25%-ից ավելի. վարակազերծիչ եւ քլոր պարունակող միջոցների դեպքում, որոնք պարունակում են օրգանական լուծիչներ եւ այլ նյութեր, որոնք մաշկի եւ լորձաթաղանթի վրա ընկնելիս ունեն ակնհայտ գրգռիչ հատկություններ:

(Ճանաչագրությունը՝ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

Միկրոկենսաբանական փորձարկումներ՝

– ախտածին եւ սանիտարահիգիենիկ վիճակի ցուցիչ միկրոօրգանիզմների՝ ծածկույթի վրա գոյատևելու ժամկետի գնահատում (կուլտուրաների թեստ),

– այն նյութերի հակամանրէային ակտիվության մակարդակի կամ աստիճանի գնահատում, որոնց համար արտադրության ժամանակ սահմանվել են հակամանրէային հատկություններ՝ դիֆուզային, կաթիլային կամ աներոզուլային մեթոդներով,

– մանրէային վարակի աստիճանի գնահատում (արտադրատեսակի ցուցանիշների օգտագործման լրացուցիչ մեթոդ, որն օգտագործվում է ամանները լվանալու, սննդի արդյունաբերության մեջ կիրառելու, բուժ-պրոֆիլակտիկ հիմնարկություններում, մանկական եւ նախադպրոցական ու դպրոցական հաստատություններում):

1.4. Կենցաղային քիմիայի ապրանքների սպառողական մակնշման նկատմամբ պահանջները

1.4.1. Սինթետիկ լվացող միջոցների եւ կենցաղային քիմիայի ապրանքների սպառողական մակնշվածքը պետք է դրոշմվի հստակ, ընթեռնելի, հեշտ տեսանելի եւ չլվացվող տառերով, որոնք դիմացկուն են քիմիական նյութերի, կլիմայական գործոնների նկատմամբ, պահպանվում են ապրանքի օգտագործման ամբողջ ժամանակահատվածում եւ պարունակում են հետեւյալ տեղեկությունները՝

– արտադրատեսակի անվանումը եւ նշանակությունը՝ ներառյալ ապրանքային անվանումը, արտադրանքի բաղադրակազմն ու այլ տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս հստակ տարբերակելու կոնկրետ արտադրատեսակը շուկայում շրջանառվող մյուս արտադրատեսակներից,

– արտադրանքի դիմումատուի մասին տեղեկություններ՝ ներառյալ կոնտակտային տվյալներն արտակարգ իրավիճակների համար կամ ապրանքի առետրային անվանման, շուկայահանման համար պատասխանատու կողմի ամբողջական հասցեն եւ հեռախոսի համարը (եթե հայտարարատուն արտադրողն է),

- արտադրանքի նշանակությունը,

- վտանգավորության նկարագրությունը (այդ թվում՝ կարելի է կիրառել ազդանշանային բառեր կամ պատկերագրեր, որոնք սահմանված կարգով ընդունված են Մաքսային միության անդամ պետություններում),

- վտանգավորության նախազգուշական միջոցներ,

- արտադրանքի խմբաքանակի մասին նույնականացման տվյալներ,

- զուտ քաշ՝ գրամով, կիլոգրամով (գ, կգ) կամ ծավալը քառակուսի սանտիմետրով, քառակուսի դեցիմետրով, միլիլիտրերով, լիտրերով (սմ3, դմ3, մլ, լ),

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

- պիտանելիության ժամկետը, որը նշվում է հետեւյալ բառակապակցությամբ. «Պիտանի է (կիրառության համար) մինչեւ (ամիս, տարի), կամ «Պիտանիության ժամկետը՝ (ամիս, տարի)՝ սպառողական փաթեթվածքի վրա նշելով նաեւ արտադրանքի արտադրման ամսաթիվը կամ վայրն այն մասում, որտեղ նշված է ամսաթիվը,

- պայմանները, որոնց պահպանումն ապահովում է ժամկետի ընթացքում արտադրանքի պահպանվածությունը (անհրաժեշտության դեպքում): Եթե ժամկետի ավարտից հետո արտադրանքը կարող է օգտագործվել դրա նշանակության մեջ փոփոխություն կատարելուց հետո, ապա դրա մասին բերվում է համապատասխան տեղեկություն՝ նշելով տեղեկություններ կիրառության եղանակների մասին:

1.4.2. Սպառողական մականշվածքի վրա ներառվում է այն բաղադրիչների ցանկը, որոնք մտնում են կենցաղային քիմիայի ապրանքների բաղադրակազմի մեջ՝ պարունակությունը նշելով տոկոսներով՝

- 5 տոկոսից ոչ ավելի (%),

- 5 տոկոս (%) եւ ավելի, բայց 15 տոկոսից (%) պակաս,

- 15 տոկոս (%) կամ ավելի, բայց 30 տոկոսից (%) ոչ ավելի,

- 30 տոկոս (%) եւ ավելի:

Թույլատրվում է օգտագործել համեմատության համընդհանուր ճանաչելիություն ունեցող մաթեմատիկական սիմվոլներ:

(1.4.2 կետը Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 456 որոշման խմբագրությամբ)

1.4.3. Սույն բաժնով նախատեսված տեղեկությունները պետք է նշել ռուսերենով եւ պետական լեզվով: Հայտարարատուի անվանումը, արտադրանքի անվանումը եւ օտարերկրյա հայտարարատուի գտնվելու վայրը կարող են նշվել լատինատառ գրաֆիկական հիմքով:

1.4.4. Արտադրանքի նույնականացման նշան է համարվում սպառողական փաթեթվածքի վրա նշված նշանակությունը:

1.4.5. Որպես վաքքի եւ (կամ) վանալու միջոցներ վաճառքի դուրս բերված սինթետիկ վաքվող միջոցների եւ կենցաղային քիմիայի ապրանքների սպառողական մականշվածքում պետք է ներառվեն տեղեկություններ միջոցի համար առաջարկվող քանակության եւ չափաքանակի վերաբերյալ՝ կախված վաքքի եւ (կամ) վանալու օգտագործվող եղանակից:

1.4.6. Սպառողական փաթեթվածքը պետք է պարունակի ցուցումներ կենցաղային քիմիայի ապրանքների ներգործությունից սպառողի պաշտպանության միջոցների, անվտանգության միջոցների եւ պահպանման ու օգտագործման կանոնների վերաբերյալ, ինչպես նաեւ պետք է կատարվի նախազգուշական նշումներ՝ կախված արտադրատեսակից (օրինակ՝ «Հեռու պահել երեխաներից» կամ «Պահել երեխաներին անհասանելի տեղում» կամ «Չքանդել եւ չտալ երեխաներին», «Ապրանքն ունի մաշկը գրգռելու հատկություն», «Ձեռքի պաշտպանության միջոցների կիրառությունը պարտադիր է» եւ այլն):

(1.4.6 կետը Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշման խմբագրությամբ)

1.4.7. Սպառողի համար տեղեկությունները պետք է ներառվեն կից ներկայացված փաստաթղթերում եւ (կամ) սպառողական մականշվածքում եւ (կամ) անվտանգության անձնագրում:

Աղյուսակ 1

Բաղադրիչների ցանկ եւ սինթետիկ վաքող միջոցների ու կենցաղային քիմիայի ապրանքների քանակական եւ որակական բաղադրության մասին տեղեկություններ, որոնք պարտադիր պետք է ներառվեն սպառողին ներկայացվող տեղեկությունների մեջ

Ա) եթե վաքող, մաքրող եւ օժանդակ միջոցներում պարունակվում է՝
0,2%-ից բարձր (քաշ)
ֆոսֆատներ,
ֆոսֆոնատներ,
անիոնային մակերեւոյթաակտիվ նյութեր,
կատիոնային մակերեւոյթաակտիվ նյութեր,
ամֆոտերային մակերեւոյթաակտիվ նյութեր,
ոչ իոնային մակերեւոյթաակտիվ նյութեր,
Սպիտակեցնող նյութեր՝ թթվածնային հիմքով,

<p>սպիտակեցնող նյութեր՝ քլորի հիմքով, Էթիլենդիամինտետրաքացախաթթու եւ դրա աղերը, նիտրիլտորիքացախաթթու եւ դրա աղերը, ֆենոլներ եւ հալոգենացված ֆենոլներ, պարադիքլորբենզոլ, հոտավետ ածխաջրածիններ, ալիֆատիկ ածխաջրածիններ, հալոգենացված ածխաջրածիններ, Օճառ (ճարպաթթուների աղեր), ցեոլիտներ, պոլիկարբոքսիլատներ, աղաթթու, թրթնջկաթթու:</p>
<p>Բ) լվացող, մաքրող եւ օժանդակ միջոցներում իրենց բաղադրությունից անկախ՝ էնզիմներ, վարակազերծիչ միջոցներ, օպտիկական սպիտակեցողներ, բուրավետիչ հավելումներ, կոնսերվանտներ:</p>
<p>Գ) պոտենցիալ ալերգեններ՝ լվացող, մաքրող եւ օժանդակ միջոցներում 0,01%-ից բարձր պարունակության դեպքում (քաշ) Ամիլի ցիննամալ, բենզիլային սպիրտ, դարչնի սպիրտ, ցիտրալ, էվգենոլ, հիդրօքսի ցիտրոնելալ, իզոէվգենոլ, ամիլդարչնային սպիրտ, բենզիլ սալիցիլատ, ցիննամալ, հիդրօքսիմեթիլպենտիպցիկլոհեքսենկարբօքսիալդեհիդ, կումարին, գերանիոլ, անիսոնի սպիրտ, բենզիլ ֆարնեզոլ, 2-(4-տերտբուտիլբենզիլ) պրոպիոնալդեհիդ, լինալոլ, բենզիլ բենզոատ, ցիտրոնելլոլ, հեքսիլդարչնային ալդեհիդ, d-լիմոնեն, մեթիլհեպտինկարբոնատ, 3-մեթիլ-4-(2,6,6- տրիմեթիլ-2-ցիկլոհեքսեն- -1-իլ)-3-բութեն-2-ոն փայտամամուռի լուծամզուք, կաղնու մամուռի լուծամզուք:</p>

<*> - Թույլ է տրվում օգտագործել քիմիական նյութերի անվանումներին հոմանիշները:

(ծանոթագրությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18 -ի թիվ 456 որոշմամբ)

Ենթաբաժին II. ԼԱՔԱՆԵՐԿԱՆՅՈՒԹԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՎԱՆՋՆԵՐԸ

2.1. ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

Սույն պահանջները տարածվում են լաքաներկանյութերի վրա՝ գունավոր լաքեր, գունավոր լաքերի հիմքի վրա պատրաստուկներ, որոնք նշված են 3-րդ հավելվածի հետեւյալ խմբում՝ (ծածկագիր ՄՄ ԱՏԳ ՄԱ 3205 00 000 0), նախաներկանյութերի, գունանյութերի, ներկերի, արծնների, ջրաէմուլսիոն ներկերի, մածիկների, մածվածքների, գունավոր լաքերի, (ծածկագիր ՄՄ ԱՏԳ ՄԱ 3206-ից), սինթետիկ պոլիմերների եւ քիմիականորեն բարեփոխված բնական պոլիմերների հիմքով, դիսպերսված կամ ոչ ջրային միջավայրում լուծված ներկերի եւ լաքերի (ներառյալ ջնարակները եւ արծնները), 4-րդ հավելվածի հետեւյալ խմբի լուծույթների (ՄՄ ԱՏԳ ՄԱ 3208), սինթետիկ պոլիմերների եւ քիմիականորեն բարեփոխված բնական պոլիմերների հիմքով, մանրացված կամ ջրային միջավայրում լուծված ներկերի եւ լաքերի (ներառյալ ջնարակները եւ արծնները) (ՄՄ ԱՏԳ ՄԱ 3209), այլ ներկերի եւ լաքերի (ներառյալ ջնարակները, արծնները եւ սոսնձվող ներկերը), կաշվի երեսամշակման համար օգտագործվող պատրաստի ջրային գունանյութերի վրա (ծածկագիր ՄՄ ԱՏԳ ՄԱ 3210 00):

2.2. ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Լաքաներկանյութ (ԼՆՆ)՝ ներկվող մակերեսային վրա քսելիս լաքաներկային պատվածք առաջացնող, պաշտպանական, դեկորատիվ կամ հատուկ տեխնիկական հատկություններ (մեկուսացնող, հակասահուն եւ այլ) ունեցող հեղուկ, մածուկանման կամ փոշիանման նյութ,

լաքաներկային պատվածք (ԼՆՊ)՝ ամբողջական պատվածք, որն ստացվել է ներկվող մակերեսային վրա մեկ կամ մի քանի շերտ ԼՆՆ քսելու արդյունքում,

արծն՝ հեղուկ կամ մածուկանման գունաներկված ԼՆՆ, որն օրգանական լուծույթներում թաղանթաստեղծ նյութի լուծույթի տեսքով լաքաներկային միջավայր է ստեղծում եւ ներկվող մակերեսույթի վրա քսելիս առաջացնում է ոչ թափանցիկ ԼՆՊ,

ներկ՝ հեղուկ կամ մածուկանման գունաներկված ԼՆՆ, որը, որպես թաղանթաստեղծ նյութ, ունի տարբեր ապրանքանիշերի օլիֆ կամ սինթետիկ պոլիմերների ջրային դիսպերսիա եւ ներկվող մակերեսույթի վրա քսելու դեպքում առաջացնում է ոչ թափանցիկ ԼՆՊ,

յուղաներկ՝ հեղուկ կամ մածուկանման գունաներկված ԼՆՆ, որը, որպես թաղանթաստեղծ նյութ, ունի տարբեր ապրանքանիշերի օլիֆ եւ ներկվող մակերեսույթի վրա քսելու դեպքում առաջացնում է ոչ թափանցիկ ԼՆՊ,

ջրադիսպերսիոն ներկ՝ հեղուկ կամ մածուկանման գունաներկված ԼՆՆ, որն ստեղծում է լաքաներկային միջավայր՝ օրգանական թաղանթաստեղծ նյութի դիսպերսիայի տեսքով եւ ներկվող մակերեսույթի վրա քսելիս առաջացնում է ոչ թափանցիկ ԼՆՊ,

լաք՝ ԼՆՆ, որը ներկված մակերեսույթի վրա առաջացնում է թափանցիկ ԼՆՊ,

նախաներկ՝ ԼՆՆ, որը ներկված մակերեսույթի վրա քսելիս առաջացնում է ոչ թափանցիկ կամ թափանցիկ համասեռ ԼՆՊ, որը ներկվող մակերեսույթի հետ լավ հարակցում է եւ ունի ծածկող շերտ, որը նախատեսված է լաքաներկային համակարգերի հատկությունները բարելավելու համար,

մածիկ՝ մածուկանման կամ հեղուկ ԼՆՆ, որը քսում են ներկվող մակերեսույթի վրա՝ նախքան ներկը քսելը՝ ուղղելու համար աննշան անհարթությունները եւ (կամ) ստանալու համար հարթ, հավասար մակերեսույթ,

փոշի ԼՆՆ՝ փոշի ԼՆՆ, որը չի պարունակում լուծիչ, հալումից եւ պնդացումից հետո ներկվող մակերեսույթի վրա քսելիս առաջացնում է հոծ ԼՆՊ,

ծակոտալցիչ՝ ԼՆՆ, որը նախատեսված է ներկվող մակերեսույթի անցքերը կամ ճեղքերը լցնելու համար,

ԼՆՆ-ի լուծիչ՝ միաբաղադրիչ կամ բազմաբաղադրիչ հեղուկ, որը չորացման

որոշակի պայմանների դեպքում ցնդում եւ ամբողջովին լուծում է ԼՆՆ-ի թաղանթաստեղծ նյութը,

ԼՆՆ-ի նոսրացուցիչ՝ միաբաղադրիչ կամ բազմաբաղադրիչ ցնդուն հեղուկ, որը ԼՆՆ-ի լուծիչ չէ, կարող է օգտագործվել լուծիչի հետ՝ առանց ԼՆՆ-ի կամ ԼՆՊ-ի վրա վնասակար ազդեցություն թողնելու,

ջրիկարար՝ միաբաղադրիչ կամ բազմաբաղադրիչ հեղուկ, որը գոլորշիանում է չորացման որոշակի պայմանների դեպքում եւ ավելացվում է ԼՆՆ-ի մեջ՝ դրա մածիկությունը նոսրացնելու համար,

ԼՆՆ-ի ներկանյութ՝ բուսական կամ սինթետիկ նյութ, որը ԼՆՆ-ին ցանկալի գույն է հաղորդում, որի մեջ այն լուծվում է,

ԼՆՆ-ի գունանյութ՝ մանր դիսպերսացված մասնիկների տեսքով նյութ, որը համարյա չի լուծվում լաքաներկային միջավայրում եւ օգտագործվում է իր օպտիկական, պաշտպանիչ եւ դեկորատիվ հատկությունների շնորհիվ,

ԼՆՆ-ի լցանյութ՝ հատիկավոր կամ փոշի նյութ, որը համարյա չի լուծվում լաքաներկային միջավայրում եւ որպես բաղադրիչ օգտագործվում է ԼՆՆ-ի գունավորման համար՝ ֆիզիկական որոշակի հատկությունների վրա ազդեցություն թողնելու նպատակով,

չորարար՝ մետաղաօրգանական միացություն, որն ավելացվում է ԼՆՆ-ի օքսիդացնող պնդարարում՝ չորացման պրոցեսն արագացնելու համար,

ԼՆՆ-ի արագացուցիչ՝ նյութ, որը ԼՆՆ-ում ավելացնելիս արագացնում է լայնական կապերի առաջացման պրոցեսը մոլեկուլների միջեւ,

ԼՆՆ-ի պնդարար՝ ԼՆՆ լցվող նյութ՝ թաղանթաստեղծ նյութի մակրոմոլեկուլներն իրար միացնելու եւ եռաչափ կառույց ստեղծելու համար,

ԼՆՆ-ի հավելանյութ՝ նյութ, որն ավելացվում է ԼՆՆ-ի մեջ բարելավելու կամ մեկ կամ մի քանի հատկություններ փոփոխելու համար,

ԼՆՆ-ի պլաստիկարար՝ նյութ, որն ավելացվում է ԼՆՆ-ում չորացած ԼՆՊ-ին էլաստիկություն հաղորդելու համար,

բազմաբաղադրիչ ԼՆՆ՝ ԼՆՆ, որը թողարկվում է մեկ կամ մի քանի առանձին բաղադրիչներով, որոնք պետք է խառնվեն նախքան օգտագործելը՝ արտադրողի կողմից նշված չափաբաժիններով,

վտանգավոր նյութերի միգրացիա (լաքաներկային պատվածքների կիրառության նպատակով)՝ լաքաներկային բաղադրագրության մեջ մտնող քիմիական նյութի ցնդող բաղադրիչների անջատում՝ պատրաստի արտադրանքից դեպի մթնոլորտ:

Լաքաներկային արտադրանքի տիպային նմուշներ կարելի է համարել՝

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշմամբ)

1. մեկ անուն կամ անվանում ունեցող նմուշները (ներկ, լաք, արծն, փոշի ներկ, նախաներկ, մածիկ եւ այլն)՝ նյութի մեկ տեսակից ստացված, նախատեսված լաքաներկային արտադրանքի համար, որն ունի հատուկ հատկություններ (Ե – առանց լուծիչի, Ե-ջրալուծվող, ԵԸ-ջրադիսպերսիոն, ՕԸ-միադիսպերսիոն, Մ-փոշի),

(1-ին կետն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշմամբ)

2. մեկ ընդհանուր տեխնիկական փաստաթղթերով արտադրված նմուշները (բաղադրագրություն, տեխնիկական պայմաններ եւ այլն), մեկ ապրանքանշանի (այդ թվում՝ առետրային ապրանքանշանի) նմուշները,

(2-րդ կետն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշմամբ)

3. մեկ ոլորտի կիրառության նմուշները (արտաքին հարդարման աշխատանքների, ներքին աշխատանքների եւ այլն), մեկ հիմնական նշանակության (կիրառելի մակերեսային շահագործման պայմանների համար), ծածկող ԼՆՆ-երի համար (լաքեր, արծններ, ներկեր)՝ մթնոլորտադիմացկուն, սահմանափակ մթնոլորտադիմացկուն, ջրադիմացկուն, հատուկ, յուղաբենզակայուն, քիմիակայուն, ջերմակայուն, էլեկտրամեկուսիչ եւ էլեկտրահաղորդական, կոնսերվացված եւ այլն),

(3-րդ կետն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշմամբ)

4. մեկ քիմիական բաղադրության նմուշներ՝ թաղանթաստեղծ նյութից (ալկիդ-ակրիլային, ալկիդ-ուրեթանային, ացետիլցելյուլոզային, ացետոբուտիրատցելյուլոզային, բիտումային, վինիլացետիլային եւ դիվինիլացետիլային, գլիֆտալային, բեւեկնախեժային, ռետինե, կոպալային, սիլիցիումօրգանային, (պոլիօրգանասիլօքսանային, պոլիօրգանասիլազանսիլօքսանային, սիլիցիումօրգանաուրեթանային եւ այլ խեժեր), գլիֆտալային, յուղաալկիդոստիրոլային, յուղային, մելամինային, կարբամիդային, նիտրոցելյուլոզային (լաքայինի կոլօքսիլիններ, նիտրոալկիդային կոմպոզիցիաներ (նիտրոգլիֆտալ, նիտրոպենտաֆտալի եւ այլն), նիտրոցելյուլոզուրետանային, նիտրոամինոֆորմալդեհիդային), պենտաֆտալային, պերքլորվինիլային եւ պոլիվինիլքլորիդային, պոլիակրիլային, պոլիամիդային, պոլիվինիլացետատային, պոլիիմիդային, պոլիուրետանային, բազմաէթերային հագեցած, բազմաէթերային չհագեցած, սոպոլիմեր-վինիլքլորիդային, սոպոլիմեր-վինիլացետատային, ֆենոլ-ալկիդային, ֆենոլային, ֆտորոպլաստային, ֆուրիլային, քլորացված պոլիէթիլենային, ցիկլոհեքսանային, դոճխեժային, էպօքսիդային, էպօքսիֆիրային, էթիլցելյուլոզային, էտրիֆտալային, սաթի, նավթապոլիմերային, սիլիկատային եւ այլն)։

(4-րդ կետն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշմամբ)

5. Ընդհանուր կոմպոնենտային (բաղադրիչների) կազմ,

(5-րդ կետն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշմամբ)

6. Լայն գունային զամմայի դեպքում ընտրվում են պատրաստի արտադրանքում յուրաքանչյուր գունանյութի տոկոսային (քանակական) առումով առավելագույն բաղադրություն ունեցող օրինակները։

(6-րդ կետն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011

**2.3. ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ
(ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ)**

ԼՆՆ-ն մթնոլորտային օդում չպետք է առաջացնի հատուկ հոտ, որը գերազանցում է թույլատրվող նորմը՝ ըստ հոտաչափական ցուցանիշների (սույն Միասնական պահանջների II գլխի 5-րդ մասի 5Ա հավելված):

ԼՆՆ-ների հետ շփվող մոդելային միջավայրերի զգայորոշման (օրգանոլեպտիկ) ցուցանիշները (կողմնակի համը, գույնը, պղտորությունը) պետք է համապատասխանեն հիգիենիկ նորմատիվներին ցուցանիշների (սույն Միասնական պահանջների II գլխի 5-րդ մասի 5Ա հավելված):

ԼՆՆ-ները չպետք է պարունակեն սիկատիվներ, որոնք ներառում են վտանգավորության 1-ին դասի մետաղներ, քիմիական նյութեր, որոնց քանակությունը չոր մնացորդի հաշվարկով գերազանցում է 0,5%-ը, իսկ կապար պարունակող գունանյութերի դեպքում (կապարային քրոմաներկեր)՝ վտանգավորության 1-ին դասի քիմիական նյութերը՝ 15%-ը: Սիկատիվների եւ կապար պարունակող գունանյութերի առկայության գնահատումը կատարվում է ԼՆՆ-ների բաղադրագրության վերլուծության միջոցով:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշման խմբագրությամբ)

ԼՆՆ-ները դրանց հետ շփվող մոդելային միջավայր (օդ) չպետք է արտազատեն այնպիսի քիմիական նյութեր, որոնք պատկանում են վտանգավորության 1-ին դասին, իսկ մնացած նյութերի պարունակությունը չպետք է գերազանցի մթնոլորտային օդի համար հիգիենիկ նորմատիվները (վտանգավոր նյութի միջին օրական սահմանային թույլատրելի խտությունը բնակելի վայրերում՝ օդում, ներգործության մոտավոր անվտանգ մակարդակը), որոնք բերված են սույն Միասնական պահանջների II գլխի 5-րդ գլխի 5Բ հավելվածում: Եթե ԼՆՆ-ն արտադրում է մի քանի քիմիական նյութ, որն ունի ընդհանուր ներգործության

ազդեցություն, ապա խտությունների հարաբերությունների հանրագումարն իրենց միջին օրական սահմանային թույլատրելի խտության նկատմամբ չպետք է գերազանցի մեկը:

ԼՆՆ-ները, որոնք կիրառվում են խմելու ջրի մատակարարման եւ շփվում են սննդամթերքի հետ, չպետք է մոդելային միջավայր արտադրեն ԼՆՆ-ների հետ շփվող՝ վտանգավորության 1-ին դասին պատկանող քիմիական նյութեր, իսկ մյուս նյութերի բաղադրությունը չպետք է գերազանցի թույլատրելի մակարդակները, որոնք սահմանված են 3-րդ բաժնում (ջրի զտման եւ ջրի պատրաստման համար օգտագործվող նյութերի, ռեագենտների, սարքավորումների նկատմամբ պահանջները) եւ 16-րդ բաժնում (սննդամթերքի եւ սննդային միջավայրի հետ շփման համար նախատեսված՝ պոլիմերներից եւ այլ նյութերից պատրաստված նյութերի ու արտադրանքի նկատմամբ պահանջները)՝ համապատասխանաբար:

Լաքաներկանյութային ծածկույթից ցնդող բաղադրիչների միգրացիայի գնահատում դեպի հեղուկ մոդելային միջավայրեր (լուծամզուկ) այն ԼՆՆ-ների համար, որոնք կիրառվում են խմելու ջրի մատակարարման համակարգում, սննդարդյունաբերության մեջ՝ հեղուկ մթերքի հետ շփվելու դեպքում:

ԼՆՆ-ները չպետք է առաջացնեն արտահայտված գրգռիչ, զգայունացնող ազդեցություն մարդու օրգանիզմի վրա (սույն Միասնական պահանջների II գլխի 5-րդ բաժնի 5Ա հավելված):

ԼՆՆ-ների (լուծամզուկների) հետ շփվող մոդելային միջավայրերը չպետք է առաջացնեն տեղային գրգռիչ ազդեցություն փորձարկվող կենդանիների մաշկային ծածկույթի, աչքի լորձաթաղանթների վրա (սույն Միասնական պահանջների II գլխի 5-րդ բաժնի 5Ա հավելված):

ԼՆՆ-ների (լուծամզուկների) հետ շփվող մոդելային միջավայրերը չպետք է առաջացնեն տեղային գրգռիչ ազդեցություն փորձարկվող կենդանիների մաշկային ծածկույթի, աչքի լորձաթաղանթների վրա (սույն Միասնական պահանջների II գլխի 5-րդ բաժնի 5Ա հավելված):

ԼՆՆ-ները չպետք է խթանեն միկրոֆլորայի աճը եւ զարգացնեն այն, այդ թվում՝

ախտածին միկրոֆլորայի, երբ այն կիրառվում է շենքերի ու շինությունների ներքին տարածքներում, որտեղ նախատեսված է թաց ախտահանման ռեժիմ (սույն Միասնական պահանջների II գլխի 5-րդ բաժնի 5Ա հավելված):

ԼՆՆ-ներ օգտագործելիս աշխատակիցները պետք է ապահովված լինեն անհատական պաշտպանության միջոցներով՝ օրենսդրության պահանջներին համապատասխան:

ԼՆՆ-ների փորձարկումների տեսակներն ըստ կիրառության ոլորտների՝

Հոտաչափական փորձարկումներ.

- ԼՆՆ-ի հոտի ինտենսիվության սահմանում արդյունաբերական եւ քաղաքացիական շինարարության, սննդարդյունաբերության (չոր մթերքների հետ շփման դեպքում), կահույքի արտադրության մեջ օգտագործվող ապակե թիթեղի վրա չորանալուց հետո (օդային միջավայր), ինչպես նաեւ ավտոմեքենաների խնամքի համար օգտագործվող ԼՆՆ-ների դեպքում:

Զգայորոշման (օրգանոլեպտիկ) փորձարկումներ.

- խմելու ջրի մատակարարման, սննդարդյունաբերության մեջ օգտագործվող ԼՆՆ-ի լուծամզուկների (հեղուկ մոդելային միջավայր՝ խմելու ջուր, մոդելային լուծույթների, սննդամթերք նմանակող մոդելային միջավայրում) հոտի, համի, գունայնության, մգության, ինտենսիվության սահմանում:

Սանիտարաքիմիական փորձարկումներ.

- ԼՆՆ-ի համար նախատեսված ԼՆԾ-ների ցնդող բաղադրիչների միգրացիայի սահմանում օդային միջավայրում, որոնք օգտագործվում են արդյունաբերական եւ քաղաքացիական շինարարության, կահույքի արտադրության, սննդարդյունաբերության մեջ՝ չոր սննդամթերքի հետ շփման դեպքում,

- ԼՆՆ-ի համար նախատեսված հեղուկ՝ մոդելային միջավայրում ԼՆՊ-ների ցնդող բաղադրիչների միգրացիայի գնահատում (լուծամզուկ), որն օգտագործվում է խմելու ջրի մատակարարման եւ սննդարդյունաբերության մեջ՝ հեղուկ սննդամթերքի հետ շփման դեպքում:

Թունաբանական փորձարկումներ.

– արդյունաբերական եւ քաղաքացիական շինարարության, խմելու ջրի մատակարարման, սննդարդյունաբերության, կահույքի արտադրության մեջ օգտագործվող ԼՆՆ-ների, ինչպես նաեւ ավտոմեքենաների խնամքի համար օգտագործվող ԼՆՆ-ների տեղային գրգռիչ եւ մաշկում ներծծվելու հատկությունների գնահատում սպիտակ առնետների մաշկածածկույթի վրա՝ ազդեցության համար կիրառելի առաջարկվող ռեժիմում (միանգամյա, եռանգամյա),

– խմելու ջրի մատակարարման, սննդարդյունաբերության մեջ օգտագործվող ԼՆՆ-ի ներստամոքսային միանգամյա ներմուծման դեպքում լուծամզուկի ընդհանուր թունավորման ազդեցության գնահատում 3 մլ/200գ մարմնի զանգվածային ծավալով՝ սպիտակ առնետների մոտ,

– խմելու ջրի մատակարարման, սննդարդյունաբերության մեջ կիրառվող ԼՆՆ-ի լուծամզուկների տեղային գրգռիչ ազդեցության գնահատում փորձարկման ենթարկվող կենդանիների աչքի լորձաթաղանթի վրա:

Սանիտարամիկրոկենսաբանական փորձարկումներ.

– լաքաներկային պատվածքների վրա՝ ախտածին եւ սանիտարահիգիենիկ վիճակի ցուցիչ միկրոօրգանիզմների (թեստային կուլտուրաներ) գոյատեւման ժամկետների գնահատում այն ԼՆՆ—ների համար, որոնք նախատեսված են շինություններում ներկելու աշխատանքների համար (ներքին հարդարման աշխատանքներ), որոնց դեպքում նախատեսված է վարակազերծման թաց ռեժիմ:

2.4. ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ՓԱԹԵԹՎԱԾՔԻ ԵՎ ՄԱԿԱՆՇՎԱԾՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Սինթետիկ լվացող միջոցների եւ կենցաղային քիմիայի ապրանքների սպառողական մականշվածքը պետք է դրոշմվի հստակ, ընթեռնելի, հեշտ տեսանելի եւ չլվացվող տառերով, որոնք դիմացկուն են քիմիական նյութերի, կլիմայական գործոնների նկատմամբ, պահպանվում են ապրանքի օգտագործման ամբողջ

ժամանակահատվածում եւ պարունակում են հետեւյալ տեղեկությունները՝

- արտադրատեսակի անվանումը եւ նշանակությունը՝ ներառյալ ապրանքային անվանումը, արտադրանքի բաղադրակազմն ու այլ տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս հստակ տարբերակելու կոնկրետ արտադրատեսակը շուկայում շրջանառվող մյուս արտադրատեսակներից,

- արտադրանքի հայտարարատուի մասին տեղեկություններ՝ ներառյալ կոնտակտային տվյալներ արտակարգ իրավիճակների համար, կամ ապրանքի առեւտրային անվան, շուկայահանման համար պատասխանատու կողմի ամբողջական հասցեն եւ հեռախոսի համարը (եթե հայտարարատուն արտադրողն է),

- արտադրանքի նշանակությունը,

- տեղեկություններ վտանգավորության մասին (ազդանշանային բառեր եւ պատկերագրեր՝ անհրաժեշտության դեպքում)

- վտանգավորության մասին նախազգուշական միջոցներ,

- արտադրանքի խմբաքանակի նույնականացման մասին տեղեկություններ,

- զուտ քաշ գրամով, կիլոգրամով (գ, կգ) կամ ծավալը քառակուսի սանտիմետրով, քառակուսի դեցիմետրով, միլիլիտրերով, լիտրերով (սմ3, դմ3, մլ, լ),

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

- պիտանելիության ժամկետը, որը նշվում է հետեւյալ բառակապակցությամբ. «Պիտանի է (կիրառության համար) մինչեւ (ամիս, տարի)», կամ «Պիտանիության ժամկետը (ամիս, տարի)»՝ սպառողական փաթեթվածքի վրա՝ նշելով նաեւ արտադրանքի արտադրման ամսաթիվը կամ վայրն այն մասում, որտեղ նշված է ամսաթիվը,

- այն պայմանները, որոնց կատարումն ապահովում է ժամկետի ընթացքում արտադրանքի պահպանվածությունը (անհրաժեշտության դեպքում): Եթե ժամկետի ավարտից հետո արտադրանքը կարող է օգտագործվել դրա նշանակության մեջ

փոփոխություն կատարելուց հետո, ապա դրա մասին բերվում է համապատասխան տեղեկություն՝ նշելով տեղեկություններ կիրառության եղանակների մասին:

Սույն բաժնում նախատեսված տեղեկությունները պետք է նշվեն ռուսերենով: Հայտարարատուի անվանումը, արտադրանքի անվանումը եւ օտարերկրյա հայտարարատուի գտնվելու վայրը կարող են նշվել լատինատառ գրաֆիկական հիմքով:

Արտադրանքի նույնականացման նշան է համարվում սպառողական փաթեթվածքի վրա նշված նշանակությունը:

Սպառողական մականշվածքը պետք է ներառի ցուցումներ հետեյալ նախազգուշական միջոցների մասին եւ նախազգուշական գրություն՝ գործող Տեխնիկական նորմատիվների իրավական ակտերի ազգային ֆոնդի (ՏՆԻԱԱՖ) պահանջներին համապատասխան:

Սպառողի համար տեղեկությունները պետք է ներառվեն կից ներկայացված փաստաթղթերում եւ (կամ) սպառողական մականշվածքում եւ (կամ) անվտանգության անձնագրում:

ԼՆՆ-ի տեղափոխումը եւ պահպանումն իրականացվում են ՏՆԻԱԱՖ-ի պահանջներին համապատասխան: Տրանսպորտային մականշվածքը միեւնույն ժամանակ պետք է ներառի լրացուցիչ նախազգուշական գրություններ, վտանգավորության նշաններ, մաներելու նշաններ, այդ թվում՝ վտանգավոր բեռների համար պետք է ներառի որակավորման ծածկագիր եւ այլն:

ԼՆՆ-ի յուրաքանչյուր խմբաքանակ կամ առաքման յուրաքանչյուր միավոր պետք է ներառի տվյալ ԼՆՆ-ն օգտագործելու մասին հրահանգներ, որտեղ նշվում է նյութի լրիվ անվանումը, կիրառության եղանակը եւ ոլորտը, անվտանգության պահանջները:

Անհայտ բաղադրության ԼՆՆ-ների պահպանումը պահեստներում արգելվում է:

**Սանիտարահամաճարակաբանական վերահսկողության
(հսկողության) ենթակա ապրանքներին ներկայացվող
սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ
միասնական պահանջների 2-րդ գլխի 5-րդ բաժնի**

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՔԻՄԻԱՅԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԵՎ ԼԱՔԱՆԵՐԿԱՆՅՈՒԹԵՐ

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341, 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456, 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշումների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

**Աղյուսակ 1. Հսկողությանը ենթակա ապրանքների եւ դրանց անվտանգության
ցուցանիշներին ներկայացվող հիմնական պահանջները**

Հ/հ	Արտադրանքի (ապրանքի) անվանումը	Սանիտարահամաճարակաբանական պահանջները		
		ցուցանիշ	թույլատրելի մակարդակներ	Նշումներ
5. Կենցաղային քիմիայի ապրանքներ եւ լաքաներկանյութեր				
5.1.	Սանիտարակենցաղային նշանակության արտադրանքի (զուգարանակոնքերի, կոյուղու խողովակների, կերամիկական, էմալապատ մակերեսայինների (բացի ամանեղենից)) մաքրման համար նախատեսվող մաքրման միջոցներ	Թունաբանական ցուցանիշները		
		Սուր թունավոր՝ <1>, DL ₅₀ ստամոքս ընկնելու դեպքում	3-4 -րդ դասի թունավորում DL ₅₀ > 150 մգ/կգ	
		Ինհալացիոն վտանգավորությունը՝ ըստ ցնդելիության աստիճանի (հագեցնող խտանյութեր)՝ ըստ փոշիանման միջոցների եւ աերոզոլների փոշիացման մակարդակի <1> կամ Ինհալացիոն վտանգավորություն՝ ստատիկ ինհալացիայի թունավորման մեթոդով	3-4 դասի վտանգավորություն՝ թունավորման կլինիկական նշանների առկայություն էքսպոզիցիայի ժամանակ Կենդանիների մահվան դեպքերի բացակայություն	
Գրգռիչ ազդեցություն կիրառության համար առաջարկվող ռեժիմի պայմաններում՝ – կաշվե ծածկույթների վրա <4>	Մինչեւ 2 բալ գրգռիչ ազդեցության առկայությունը համարվում է թույլատրելի	Սպառողական փաթեթվածքի վրա պարտադիր պետք է լինի մականշվածք (պատկերագիր եւ տեքստ, ԱՊՄ-ի		

		օգտագործում)
Սանիտարաքիմիական ցուցանիշներ		
Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշ (pH)	2,0 - 11,5 միավ. pH	
Ակտիվ քլորի զանգվածային մասը (քլորակտիվ միացություններ պարունակող միջոցների համար)	8%-ից ոչ ավելի	Սպառողական փաթեթվածքի վրա պարտադիր պետք է լինի մականշվածք (պատկերագիր եւ տեքստ)
կամ ակտիվ քլորի զանգվածային խտությունն այն միջոցներում, որոնք պարունակում են քլորակտիվ միացություններ	200 գ/դմ ³ -ից ոչ ավելի	Սպառողական փաթեթվածքի վրա պարտադիր պետք է լինի մականշվածք (պատկերագիր եւ տեքստ)

(5.1 կետը Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

5.2.	Կենցաղային եւ արդյունաբերական քիմիայի միջոցներ՝ բնակավայրի, տնային գործածության իրերի, հագուստի, կոշիկի, ավտոմեքենաների համար (մաքրող, փայլեցնող, հոտազերծիչ, անտիստատիկ, կաշվի եւ թավշակաշվի խնամքի, ավտոկոսմետիկական միջոցներ եւ այլն)	<u>Թունաբանական ցուցանիշները</u>		
		Սուր թունավոր՝ <1>, DL ₅₀ ստամոքս ընկնելու դեպքում	3-4-րդ դասի թունավորում DL ₅₀ > 150 մգ/կգ	
		Ինհալացիոն վտանգավորությունն ըստ ցնդելիության աստիճանի (հագեցնող խտանյութեր), ըստ փոշիանման միջոցների եւ աերոզոլների փոշիացման մակարդակի <1> կամ Ինհալացիոն վտանգավորություն՝ ստատիկ ինհալացիայի թունավորման մեթոդով <1>	3-4 դասի վտանգավորություն՝ թունավորման կլինիկական նշանների առկայություն էքսպոզիցիայի ժամանակ կենդանիների մահվան դեպքերի բացակայություն	
		Գրգռիչ ազդեցություն կիրառության համար առաջարկվող ռեժիմի պայմաններում՝ – կաշվե ծածկույթների վրա <4>	Մինչեւ 2 բալ գրգռիչ ազդեցության առկայությունը համարվում է թույլատրելի	Սպառողական փաթեթվածքի վրա պարտադիր պետք է լինի մականշվածք (պատկերագիր եւ տեքստ, ԱՊՄ-ի օգտագործում)
		– աչքի շաղկապենու վրա,	Մինչեւ 2 բալ գրգռիչ ազդեցության առկայությունը համարվում է թույլատրելի	Սպառողական փաթեթվածքի վրա պարտադիր պետք է լինի մականշվածք (պատկերագիր եւ տեքստ, ԱՊՄ-ի օգտագործում)
	Զգայունացնող	0 բալ		

		ազդեցությունը <1>		
		Սանիտարաքիմիական ցուցանիշներ՝		
		Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշ (pH)	3.0 - 11,5 միավ. pH	
		Մեթանոլի պարունակությունը <3> (զանգվածային մասը)	0.05%-ից ոչ ավելի	
(5.2-րդ կետը Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)				
5.2.1.	Այդ թվում՝ բուժ-պրոֆիլակտիկ, սանիտարակուրորտային, մանկական, նախադպրոցական, դպրոցական եւ այլ համանման հաստատությունների տարածքները ներքին հարդարման նպատակով լվանալու եւ մաքրելու համար	Թունաբանական ցուցանիշները		
		Սուր թունավոր՝ <1>, DL ₅₀ ստամոքս ընկնելու դեպքում	3-4-րդ դասի թունավորում DL ₅₀ > 150 մգ/կգ	
		Ինհալացիոն վտանգավորությունը՝ ըստ ցնդելիության աստիճանի (հագեցնող խտանյութեր), ըստ փոշիանման միջոցների եւ աերոզոլների փոշիացման մակարդակի <1> կամ Ինհալացիոն վտանգավորություն՝ ստատիկ ինհալացիայի թունավորման մեթոդով <1>	3-4-րդ դասի վտանգավորություն՝ թունավորման կլինիկական նշանների առկայություն էքսպոզիցիայի ժամանակ Կենդանիների մահվան դեպքերի բացակայություն	
		Գրգռիչ ազդեցություն՝ կիրառության համար առաջարկվող ռեժիմի պայմաններում՝ - կաշվե ծածկույթների վրա <4>	Մինչեւ 2 բալ գրգռիչ ազդեցության առկայությունը համարվում է թույլատրելի	Սպառողական փաթեթվածքի վրա պարտադիր պետք է լինի մականշվածք (պատկերագիր եւ տեքստ, ԱՊՄ-ի օգտագործում)
		- աչքի շաղկապենու վրա <4>	0-1 բալ գրգռիչ ազդեցության առկայությունը համարվում է թույլատրելի	Սպառողական փաթեթվածքի վրա պարտադիր պետք է լինի մականշվածք (պատկերագիր եւ տեքստ, ԱՊՄ-ի օգտագործում)
		Չգայունացնող ազդեցությունը <1>	0 բալ	
		Սանիտարաքիմիական ցուցանիշներ՝		
		Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշ (pH)	3.0 - 11,5 միավ. pH	
		Մեթանոլի պարունակությունը <3> (զանգվածային մասը)	0.05%-ից ոչ ավելի	
		- կենսաբանական տարրալուծում (ամբողջական,	60%-ից ոչ պակաս (ըստ ածխածնի երկօքսիդի) եւ 70% -	

		առաջնային)	ից ոչ պակաս (ըստ ընդհանուր օրգանական ածխածնի)	
(5.2.1 կետը՝ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)				
5.3.	Շինություններում, փակ տարածքներում, ավտոմեքենաներում հոտազերծիչ միջոցներ (օդի թարմացնող միջոցներ եւ այլն)	Թունաբանական ցուցանիշները		
		Ինհալացիոն վտանգավորությունն ըստ ցնդելիության աստիճանի (հագեցնող խտանյութեր), ըստ փոշիանման միջոցների եւ աերոզոլների փոշիացման մակարդակի <1> կամ Ինհալացիոն վտանգավորություն՝ ստատիկ ինհալացիայի թունավորման մեթոդով <1>	3-4 դասի վտանգավորություն՝ թունավորման կլինիկական նշանների առկայություն էքսպոզիցիայի ժամանակ Կենդանիների մահվան դեպքերի բացակայություն	
		Գրգռիչ ազդեցություն՝ կիրառության համար առաջարկվող ռեժիմի պայմաններում՝ – կաշվե ծածկույթների վրա <4>	0 բալ	
		–աչքի շողկապենու վրա <4>	Մինչեւ 1 բալ	Սպառողական փաթեթվածքի վրա պարտադիր պետք է լինի մականշվածք (պատկերագիր եւ տեքստ, ԱՊՄ–ի օգտագործում)
		Զգայունացնող ազդեցությունը <1>	0 բալ	
		Սանիտարաքիմիական ցուցանիշներ՝		
Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշ (pH)	3.0 - 11,5 միավ. pH			
(5.3 կետը՝ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)				
5.4.	Լվացող, մաքրող, փայլեցնող միջոցներ՝ սպասքը լվանալու եւ ողողելու համար նախատեսված՝ սպասք լվացող մեքենաների համար, նստվածքը հեռացնելու, սննդամթերքի հետ շփման համար	Սանիտարաքիմիական ցուցանիշներ.		
	Սպասքը լվանալու համար նախատեսված միջոցների՝ սպասքից ողողմամբ հեռացվելու հատկությունը (ՄԱՆ մնացորդային քանակությունը վերամշակվող մակերեսայինների ողողվածքներում՝ 3	0,5մգ/դմ ³ -ից ոչ ավելի 0,5մգ/դմ ³ -ից ոչ ավելի		

նախատեսված մետաղից արտադրատեսակների մաքրման, գազով աշխատող ու էլեկտրական սալօջախներ մաքրելու եւ լվանալու, սառնարանների, այլ տեխնիկական ու տեխնոլոգիական սարքավորումների համար, որոնք օգտագործվում են կենցաղում, սննդի արդյունաբերության մեջ եւ հասարակական սննդի ձեռնարկություններում»

անգամ ողողելուց հետո) - անիոնային մակերեսային մակերեսային նյութեր (ԱՄԱՆ) պարունակող միջոցների համար - ոչ անիոնային մակերեսային նյութեր (ԱՄԱՆ) պարունակող միջոցների համար		
Մշակման ենթարկված մակերեսայիններից pH ողողվածքներ	pH ջրի սահմանային չափը՝ 6-9 միավոր pH	
Սպասքը լվանալու համար նախատեսված միջոցների կազմում մետաղի պարունակությունը	մկնդեղ՝ 5մգ/կգ -ից ոչ ավելի սնդիկ՝ 1 մգ/կգ -ից ոչ ավելի կապար՝ 5 մգ/կգ -ից ոչ ավելի կամ ըստ բոլոր ծանր մետաղների զանգվածային մասի՝ 0,002%-ից ոչ ավելի	
Թունաբանական ցուցանիշները		
Սուր թունավոր՝ DL ₅₀ ստամոքս ընկնելու դեպքում	3-4-րդ դասի թունավորում DL ₅₀ > 5000 մգ/կգ	
- կումուլյատիվ ներգործության գնահատում Kcum	2 պայմ. միավորից ավելի	
Ինհալացիոն վտանգավորությունը՝ ըստ ցնդելիության աստիճանի C ₂₀ (հագեցնող խտանյութեր), ըստ փոշիանման միջոցների եւ աերոզոլների փոշիացման մակարդակի կամ ինհալացիոն վտանգավորություն՝ ստատիկ ինհալացիայի թունավորման մեթոդով	3-4-րդ դասի վտանգավորություն՝ թունավորման կլինիկական նշանների առկայություն էքսպոզիցիայի ժամանակ, կենդանիների մահվան դեպքերի բացակայություն	
- Մաշկի միջոցով ներծծման ազդեցություն՝ մեկանգամյա, կրկնվող (աշխատանքային լուծույթներ)	էքսպոզիցիայի ժամանակ թունավորման կլինիկական նշանների բացակայություն	
Գրգռիչ ազդեցություն կիրառության համար	0-1 բալ	

առաջարկվող ռեժիմում՝		
– կաշվե ծածկույթների վրա		
– աչքի շաղկապենու վրա	Մինչև 1 բալ	
Չգայունացնող ազդեցություն	0 բալ	
Կենսատարալուծում (ամբողջական, առաջնային)	60%-ից ոչ պակաս (ըստ ածխածնի երկօքսիդի) եւ 70% – ից ոչ պակաս (ըստ ընդհանուր օրգանական ածխածնի)	Վերահսկողության ատեստավորված մեթոդների առկայության դեպքում
Սանիտարամանրէաբանական ցուցանիշներ		Հեղուկ միջոցների դեպքում՝ նախատեսված սպասքը լվանալու համար
Մեզոֆիլային աերոբ եւ ֆակուլտատիվ անաերոբ միկրոօրգանիզմների ընդհանուր քանակ (ՄԱՖԱՄԸՔ)	ոչ ավելի, քան 1×10^3 ԳԱՄ՝ 1 գ (սմ ³) զանգվածում	
Բորբոսասնկեր եւ խմորիչներ	ոչ ավելի, քան 1×10^2 ԳԱՄ՝ 1 գ (սմ ³) զանգվածում	
Enterobacteriaceae ընտանիքի մանրէներ	Բացակայություն	
Staphylococcus aureus ընտանիքի մանրէներ	Բացակայություն	
Pseudomonas aeruginosa ընտանիքի մանրէներ	Բացակայություն	

(5.4. կետը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

5.5.	Լվացող միջոցներ, սպիտակեղենի եւ հագուստի վացքի համար նախատեսված լվացող միջոցներ՝ սինթետիկ (ձեռքի եւ մեքենայի)՝ թրջման, վերջնամշակման, կապտաներկման, օսլայման, համալիր ազդեցության, տարբեր կտորներից արտադրատեսակներին հակաստատիկ հատկություններ հաղորդելու, (սինթետիկ լվացող	Թունաբանական ցուցանիշներ	
		Սուր թունավոր՝ <1>, DL ₅₀ ստամոքսում ընկնելու դեպքում	3-4 դասի թունավորում DL ₅₀ > 150 մգ/կգ
	Ինհալացիոն վտանգավորությունն ըստ ցնդելիության աստիճանի (հագեցնող խտանյութեր), փոշիանման միջոցների եւ աերոզոլների փոշիացման մակարդակի <1> կամ Ինհալացիոն վտանգավորություն՝ ստատիկ ինհալացիայի թունավորման մեթոդով <1>	3-4-րդ դասի վտանգավորություն՝ թունավորման կլինիկական նշանների առկայություն՝ էքսպոզիցիայի ժամանակ, կենդանիների մահվան դեպքերի բացակայություն	

միջոցներ՝ յուղի, օճառի հիմքով, ջրափափկեցնող, փափկեցնող, հարդարման եւ այլն)	Գրգռիչ ազդեցություն կիրառության համար առաջարկվող ռեժիմի պայմաններում (աշխատանքային լուծույթ) - կաշվե ծածկույթների վրա <4> - աչքի շաղկապենու վրա <4>	0 բալ 0-1 բալ	
	- մաշկի միջոցով ներծծման ազդեցություն՝ մեկանգամյա (աշխատանքային լուծույթներ) <1>	Էքսպոզիցիայի ժամանակ թունավորման կլինիկական նշանների բացակայություն	
	Զգայունացնող ազդեցությունը (աշխատանքային լուծույթ) <1>	0 բալ	
	Սանիտարաքիմիական ցուցանիշներ՝		
	Զրաձնային իոնների ակտիվության ցուցանիշ (pH)	11.5 միավորից ոչ ավելի	
	Կտորներից լվացմամբ հեռացվելու հատկությունը (ՄԱՆ մնացորդային քանակությունը ողողված կտորներում՝ 3 անգամ մաքրաջրելուց հետո) - անիոնային մակերեսային ակտիվ նյութեր (ԱՄԱՆ) պարունակող միջոցների համար - ոչ անիոնային մակերեսային ակտիվ նյութեր (ՈԱՄԱՆ) պարունակող միջոցների համար	0,5մգ/դմ3-ից ոչ ավելի 0,1մգ/դմ3-ից ոչ ավելի	նշված ցուցիչները չօգտագործել՝ նախքան մեթոդի մշակումը
	Ֆոսֆորական թթվի միացությունների զանգվածային մասը՝ P ₂ O ₅ , %-ի հաշվարկով ֆոսֆատներ պարունակող միջոցներ (բացի ջրափափկեցնող միջոցներից) ջրափափկեցնող միջոցներում	17%-ից ոչ ավելի 30%-ից ոչ ավելի	
	Կենսատարալուծում (ամբողջական)	60%-ից ոչ պակաս (ըստ ածխածնի	

			երկօքսիդի) եւ 70% – ից ոչ պակաս (ըստ ընդհանուր օրգանական ածխածնի)		
(5.5 կետը՝ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)					
5.5.1.	Այդ թվում՝ մանկական տեսականու ապրանքները վնասալու համար	Թունաբանական ցուցանիշներ՝			
		Սուր թունավոր՝ <1>, DL ₅₀	3-4 դասի թունավորում՝ DL ₅₀ > 5000 մգ/կգ		
		Ինհալացիոն վտանգավորությունն ըստ ցնդելիության աստիճանի, C ₂₀ (հագեցնող խտանյութեր), փոշիանման միջոցների եւ աերոզոլների փոշիացման մակարդակի <1> կամ Ինհալացիոն վտանգավորություն՝ ստատիկ ինհալացիայի թունավորման մեթոդով <1>	4-րդ դասի վտանգավորություն՝ թունավորման կլինիկական նշանների առկայություն՝ էքսպոզիցիայի ժամանակ, կենդանիների մահվան դեպքերի բացակայություն		
		Գրգռիչ ազդեցություն՝ կիրառության համար առաջարկվող ռեժիմի պայմաններում (աշխատանքային լուծույթ) - կաշվե ծածկույթների վրա <4> - աչքի շաղկապենու վրա <4>	0 բալ 0 բալ		
		Մաշկի միջոցով ներծծման ազդեցություն՝ մեկանգամյա (աշխատանքային լուծույթներ) <1>	Էքսպոզիցիայի ժամանակ թունավորման կլինիկական նշանների բացակայություն		
		Զգայունացնող ազդեցություն <1>	0 բալ		
		Թունավորման ինդեքս <2>	70 - 120%		
		Սանիտարաքիմիական ցուցանիշներ՝			
		Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշ	11.5-ից ոչ ավելի		

		(pH)		
		Լվացման ջրերի pH	pH ջրի սահմանային չափը՝ 6-9 միավոր pH	
		Կտորներից լվացմամբ հեռացվելու հատկությունը (ՄԱՆ մնացորդային քանակությունը ողողված կտորներում՝ 3 անգամ մաքրաջրելուց հետո) - անիոնային մակերեսային ակտիվ նյութեր (ԱՄԱՆ) պարունակող միջոցների համար - ոչ անիոնային մակերեսային ակտիվ նյութեր (ՈԱՄԱՆ) պարունակող միջոցների համար	0,5մգ/դմ ³ -ից ոչ ավելի 0,1 մգ/դմ ³ -ից ոչ ավելի	նշված ցուցիչները չօգտագործել՝ նախքան մեթոդի մշակումը
		Ֆոսֆորական թթվի միացությունների զանգվածային մասը՝ P ₂ O ₅ , % -ի հաշվարկով, ֆոսֆատներ պարունակող միջոցներ (բացի ջրափափկեցնող միջոցներից) ջրափափկեցնող միջոցներում	17%-ից ոչ ավելի 30%-ից ոչ ավելի	
(5.5.1 կետը՝ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 07-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)				
5.6.	Տարբեր կտորներից արտադրատեսակների համար սպիտակեցման եւ բծերի հեռացման միջոցներ	Սանիտարաքիմիական ցուցանիշներ՝ Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշ (pH)	3.0 - 11,5 միավ. pH	
		Ակտիվ քլորի զանգվածային մասը (քլորակտիվ միացություններ պարունակող միջոցների համար)	8%-ից ոչ ավելի	
		կամ ակտիվ քլորի զանգվածային խտությունը այն միջոցներում, որոնք պարունակում են քլորակտիվ միացություններ	200 գ/դմ ³ -ից ոչ ավելի	
		Թունաբանական ցուցանիշներ.		
		Սուր թունավոր՝ <1>, DL ₅₀	3-4 դասի	

		ստամոքս ընկնելու դեպքում	թունավորում $DL_{50} > 150$ մգ/կգ	
		Ինհալացիոն վտանգավորությունն ըստ ցնդելիության աստիճանի, C_{20} (հագեցնող խտանյութեր), ըստ փոշիանման միջոցների եւ աերոզոլների փոշիացման մակարդակի <1> կամ Ինհալացիոն վտանգավորություն՝ ստատիկ ինհալացիայի թունավորման մեթոդով <1>	3-4 դասի վտանգավորություն՝ թունավորման կլինիկական նշանների առկայություն էքսպոզիցիայի ժամանակ կենդանիների մահվան դեպքերի բացակայություն	
		Գրգռիչ ազդեցություն՝ կիրառության համար առաջարկվող ռեժիմի պայմաններում (աշխատանքային լուծույթ) - կաշվե ծածկույթների վրա <4> - աչքի շաղկապենու վրա <4>	0-1 բալ 0-2 բալ	
(5.6 կետը՝ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 07-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)				
5.6.1.	Այդ թվում՝ մանկական տեսականու ապրանքները սպիտակեցնելու համար	Զգայունացնող ազդեցությունը (աշխատանքային լուծույթ) <1>	0 բալ	
Թունաբանական ցուցանիշներ.				
		Սուր թունավոր՝ <1>, DL_{50} ստամոքս ընկնելու դեպքում	3-4-րդ դասի թունավորում՝ $DL_{50} > 150$ մգ/կգ	
		Ինհալացիոն վտանգավորությունն ըստ ցնդելիության աստիճանի (հագեցնող խտանյութեր), ըստ փոշիանման միջոցների եւ աերոզոլների փոշիացման մակարդակի <1> կամ Ինհալացիոն վտանգավորություն՝ ստատիկ ինհալացիայի թունավորման մեթոդով <1>	3-4-րդ դասի վտանգավորություն՝ թունավորման կլինիկական նշանների առկայություն էքսպոզիցիայի ժամանակ կենդանիների մահվան դեպքերի բացակայություն	

	Գրգռիչ ազդեցություն՝ կիրառության համար առաջարկվող ռեժիմի պայմաններում (աշխատանքային լուծույթ) - կաշվե ծածկույթների վրա <4> - աչքի շաղկապենու վրա <4>	0 բալ	
		0 բալ	
	Զգայունացնող ազդեցություն	0 բալ	
	Թունավորման ինդեքս <2>	70 - 120%	

(5.6.1 կետը՝ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

5.7.	Ձեռքերը սրբելու համար միջոցներ, թաց անձեռոցիկներ՝ տարբեր մակերեսային մաքրելու համար	Թունաբանական ցուցանիշներ		
		սուր թունավոր՝ DL ₅₀ ստամոքս ընկնելու դեպքում (անձեռոցիկների դեպքում՝ արտադրատեսակներից լուծամզուկներ) <1>	3-4 –րդ դասի թունավորում՝ DL ₅₀ > 150 մգ/կգ	
		Գրգռիչ ազդեցություն՝ կիրառության համար առաջարկվող ռեժիմի պայմաններում՝ - կաշվե ծածկույթների վրա <4> - աչքի շաղկապենու վրա <4>	0 բալ	Սպառողական փաթեթվածքի վրա պարտադիր պետք է մականշվածք լինի (պատկերագիր եւ տեքստ)
			մինչեւ 2 բալ	
		Զգայունացնող ազդեցություն <1>	0 բալ	
Սանիտարաքիմիական ցուցանիշներ՝				
	Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշ (pH) (անձեռոցիկների դեպքում՝ pH լուծամզուկներ)	3.0 - 11,5 միավ. pH		
	Մեթանոլի պարունակություն	0.05%-ից ոչ ավելի	Անձեռոցիկների դեպքում չի սահմանվում	

(5.7 կետը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

5.8.	Ավտոմեքենաների, մոտոցիկլետների, հեծանիվների	Թունաբանական ցուցանիշներ		
		Սուր թունավոր՝ <1>, DL ₅₀	3-4 –րդ դասի	

խնամքի միջոցներ (լվացող, մաքրող, փայլեցնող, պաշտպանիչ, հերմետիկացնող, ապակի լվացող հեղուկներ՝ օժանդակ, շահագործման եւ այլն) (բացի աերոզոլային հեղուկներից)	ստամոքս ընկնելու ռեպրում	թունավորում $DL_{50} > 150$ մգ/կգ		
	Ինհալացիոն վտանգավորությունն ըստ ցնդելիության աստիճանի (հագեցնող խտանյութեր), ըստ փոշիանման միջոցների եւ աերոզոլների փոշիացման մակարդակի <1> կամ Ինհալացիոն վտանգավորություն՝ ստատիկ ինհալացիայի թունավորման մեթոդով <1>	3-4-րդ դասի վտանգավորություն՝ թունավորման կլինիկական նշանների առկայություն էքսպոզիցիայի ժամանակ, կենդանիների մահվան դեպքերի բացակայություն		
	Գրգռիչ ազդեցություն՝ կիրառության համար առաջարկվող ռեժիմի պայմաններում՝ - կաշվե ծածկույթների վրա <4> - աչքի շաղկապենու վրա <4>	0-1 բալ 0-1 բալ		
	Սանիտարաքիմիական ցուցանիշներ՝			
	Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշ (pH)	3.0 - 11,5 միավ. pH		
	Մեթանոլի պարունակություն <3>	0.05%-ից ոչ ավելի		
(5.8 կետը՝ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)				
5.9.	Լաքաներկանյութեր (ԼՆՆ)	Հոտաչափական ցուցանիշներ	արդյունաբերական եւ քաղաքացիական շինարարության, խմելու ջրի մատակարարման, կահույքի արտադրության մեջ կիրառվող ԼՆՆ-ների, ինչպես նաեւ ավտոմեքենաների խնամքի համար նախատեսված ԼՆՆ-ների դեպքում	
		Օդային միջավայրում հոտ (շինարարության մեջ, կահույքի արտադրության մեջ, ԼՆՆ-ներ՝ ավտոմեքենաների խնամքի համար)	2 բալից ոչ ավելի	
		ԼՆՆ-ի նմուշից վերցված ջրային լուծամզուկի հոտ, որը պատում է ապակե թիթեղը եւ չորացվում է կիրառման հրահանգներին համապատասխան (խմելու ջրի մատակարարման	2 բալից ոչ ավելի	

	Ժամանակ օգտագործվելու դեպքում)		
	Լուծամզուկների հոտը մոդելային լուծույթներում, որոնք նմանակում են ապակե թիթեղի վրա պատված եւ կիրառման հրահանգներին համապատասխան չորացված ԼՆՆ-ի նմուշից վերցված սննդամթերքին	1 բալից ոչ ավելի	
	Հեղուկ մոդելային միջավայրերի օրգանոլեպտիկ ցուցանիշներ. ԼՆՆ-ի նմուշից վերցված ջրային լուծամզուկի հոտ, որը պատում է ապակե թիթեղը եւ չորացվում է կիրառման հրահանգներին համապատասխան (խմելու ջրի մատակարարման ժամանակ օգտագործվելու դեպքում)		Խմելու ջրի մատակարարման, սննդարդյունաբերութ յան մեջ կիրառվող ԼՆՆ-ների դեպքում
	կողմնակի համ	2 բալից ոչ ավելի	
	գույնը	20 (35) <*> աստիճանից ոչ ավելի	
	պղտորությունը	Ֆորմազինի ստանդարտով պղտորության (ՖՍՊ) 2,6 (3,5) <*> միավորից ոչ ավելի կոալինի ստանդարտով 1,5 (2) <*> մգ/լ-ից ոչ ավելի	
	Լուծամզուկների հոտը մոդելային լուծույթներում, որոնք նմանակում են ապակե թիթեղի վրա պատված եւ կիրառման հրահանգներին համապատասխան չորացված ԼՆՆ-ի նմուշից վերցված սննդամթերքին		
	կողմնակի համ	չի թույլատրվում	
	գույնը	չի թույլատրվում	

պղտորությունը	չի թույլատրվում	
Թունաբանական ցուցանիշներ. Սուր թունավոր՝ ԼՆՆ-ի լուծամզուկը ստամոքս ընկնելու դեպքում	Ջրային մոդելային միջավայրերը, որոնք շփվում են ԼՆՆ-ի (լուծամզուկի) հետ, չպետք է թողնեն արտահայտված ընդհանուր թունավոր (տոկսիկ) ազդեցություն	Խմելու ջրի մատակարարման, սննդարդյունաբերության մեջ կիրառվող ԼՆՆ-ների դեպքում
ԼՆՆ-ի՝ գրգռիչ եւ մաշկի միջոցով ներծծվելու ազդեցություն՝ կիրառության համար առաջարկվող ռեժիմում		

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշման խմբագրությամբ)

- կաշվե ծածկույթների վրա	0-4 բալ (թույլատրվում է գրգռիչ ազդեցություն 2-ից 4 բալի սահմաններում՝ պայմանով, որ մականշվածքում եւ համապատասխան նախազգուշական գրություններում նշված՝ ձեռքի ԱՊՄ-ի օգտագործման պայմանները պահպանվեն միջոցի համար)	արդյունաբերական եւ քաղաքացիական շինարարության, կահույքի արտադրության մեջ կիրառվող ԼՆՆ-ների, ինչպես նաեւ ավտոմեքենաների խնամքի համար նախատեսված ԼՆՆ-ների դեպքում
ԼՆՆ-ի հետ շփվող մոդելային միջավայրի գրգռիչ ազդեցություն (լուծամզուկներ)՝ կիրառության համար առաջարկվող ռեժիմում - կաշվե ծածկույթների վրա - լորձաթաղանթների վրա	0 բալ 0 բալ	Խմելու ջրի մատակարարման, սննդարդյունաբերության մեջ կիրառվող ԼՆՆ-ների դեպքում
Մաշկի միջոցով ներծծման ազդեցությունը (մեկանգամյա, կրկնվող)	Էքսպոզիցիայի ժամանակ թունավորման կլինիկական նշանների բացակայություն	

(ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշմամբ)

	Զգայունացնող	Մթերքները կարող	
--	--------------	-----------------	--

	ազդեցություն	են ունենալ ալերգեն ազդեցություն՝ պայմանով, որ միջոցների մականշվածքի վրա կատարվեն համապատասխան նախազգուշացնող գրությունները եւ օգտագործվի ԱՊՄ	
	Միկրոկենսաբանական ցուցանիշներ՝		
	Enterobacteriaceae 50 սմ ² վրա	Բացակայություն	Շինությունների ներկման համար (ներքին հարդարման աշխատանքներ)՝ նախատեսված ԼՆՆ-ի դեպքում, որոնց համար նախատեսված է փստահանման խոնավ ռեժիմ
	Staphylococcus aureus 50 սմ ² վրա	Բացակայություն	
	Pseudomonas aeruginosa 50 սմ ² վրա	Բացակայություն	
	Մեզոֆիլային աերոբ եւ ֆակուլտատիվ անաերոբ միկրոօրգանիզմների ընդհանուր քանակ (ՄԱՖԱՄԸՔ)	1 x 10 ³ ԳԱՄ/սմ ³ ոչ ավելի	
	Բորբոսասնկեր եւ խմորիչներ	1 x 10 ² ԳԱՄ/սմ ³ ոչ ավելի	
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)			

Ծանոթագրություն. <*>՝ կիրառվում են նշված ցուցանիշներից որեւէ մեկը

Աղյուսակ 1. Վնասակար նյութերի միգրացիայի թույլատրելի քանակություններ, որոնք առավելագույնս հաճախ են սահմանվում օդային միջավայրում լաքաներկանյութերի հիմնական տեսակների հիգիենիկ գնահատման ժամանակ

Հ հ/հ	Լաքաներկանյութի անվանումը	Սանիտարահամաճարակաբանական պահանջները	
		ցուցանիշ	օդային միջավայր միգրացիայի թույլատրելի մակարդակը, մգ/մ ³
1	2	3	4
1.	Ացետոբուտիրատցելյուլոզային (ԱԲ)	Ֆորմալդեհիդ	0,01
		Քացախաթթու	0,06
		Քսիլոլ <*>	0,1
2.	Պոլիակրիլային (ԱԿ)	Ֆորմալդեհիդ	0,01
		Մեթիլմեթակրիլատ	0,01
		Քսիլոլ <*>	0,1
3.	Ստիրոլ-ակրիլային	Ֆորմալդեհիդ	0,01
		Մեթիլմեթակրիլատ	0,01
		Ստիրոլ	0,002
4.	Ալկիդային ակրիլային (ԱԿ)	Ֆորմալդեհիդ	0,01
		Մեթիլմեթակրիլատ	0,01
		Ստիրոլ	0,002
		Ֆտալային անհիդրիդ	0,02
		Քսիլոլ <*>	0,1
5.	Ալկիդային՝ գլիֆտալային (ԳՖ), պենտաֆտալային (ՊՖ), մելամինային (ՄԼ), նիտրոցելյուլոզային (ՆՑ)	Ֆորմալդեհիդ	0,01
		Ֆտալային անհիդրիդ	0,02
		Քսիլոլ <*>	0,1
6.	Բիտումային (ԲՏ)	Ֆորմալդեհիդ	0,01
		Ֆենոլ	0,003
		Քսիլոլ <*>	0,1
7.	Բութադեն ստիրոլային (ԲՍ), կաուչուկային (ԿՉ), քլորկաուչուկային (ՔԿ)	Ֆորմալդեհիդ	0,01
		Ստիրոլ	0,002
		Երկբութիլֆտալատ	0,1
		Քսիլոլ <*>	0,1
8.	Վինիլացետատային (ՎԱ)	Ֆորմալդեհիդ	0,01
		Քացախաթթու	0,06
		Երկբութիլֆտալատ	0,1
9.	Պոնիվինիլացետատային (ՎԼ), բենեկնախեժային (ԿՖ), յուղային (ՄԱ)	Ֆորմալդեհիդ	0,01
		Քսիլոլ <*>	0,1
10.	Սիլիցիոնօրգանական (ԿՕ)	Ֆորմալդեհիդ	0,01
		Քլորաջրածին	0,1
		Տոլուոլ	0,3
11.	Յուղա- ալկիդաստիրոլային (ՄՍ)	Ֆորմալդեհիդ	0,01
		Ֆտալային անհիդրիդ	0,02
		Ստիրոլ	0,002

		Քսիլոլ	0,1
12.	Կարբամիդային (ՄՉ)	Ֆորմալդեհիդ	0,01
		Քսիլոլ	0,1
		Մեթիլսպիրտ	0,5
13.	Բազմաթերային չհագեցած (ՊԷ) փոշու	Ֆորմալդեհիդ	0,01
		Ստիրոլ	0,002
14.	Պոլիուրեթանային (ՈԻՐ)	Ֆորմալդեհիդ	0,01
		Ցիանաջրածին	0,01
		Ֆենոլ	0,003
		Քսիլոլ <*>	0,1
15.	Պոլիուրետան-ակրիլատային	Ֆորմալդեհիդ	0,01
		Ցիանաջրածին	0,01
		Մեթիլմեթակրիլատ	0,01
		Բենզոլ	0,1
16.	Ֆենոլակրիդային (ՖԱ)	Ֆորմալդեհիդ	0,01
		Ֆենոլ	0,003
		Ֆտալային անհիդրիդ	0,02
		Քսիլոլ	0,1
17.	Ֆենոլային (ՖԼ) (ֆենոլֆորմալդեհիդային)	Ֆորմալդեհիդ	0,01
		Ֆենոլ	0,003
		Քսիլոլ	0,1
18.	Պերքլորվինիլային եւ քլորիդային (ՔՎ)	Ֆորմալդեհիդ	0,01
		Քլորաջրածին	0,1
		Երկբութիլֆտալատ	0,1
		Քսիլոլ	0,1
19.	Համապոլիմեր-վինիլքլորիդային (ՔՍ)	Ֆորմալդեհիդ	0,01
		Քլորաջրածին	0,1
		Երկբութիլֆտալատ	0,1
		Մեթիլմեթակրիլատ	0,01
		Ստիրոլ	0,002
		Քսիլոլ	0,1
20.	Էպօքսիդային (ԷՊ)	Ֆորմալդեհիդ	0,01
		Էպիքլորհիդրին	0,04
		Քսիլոլ <*>	0,1

<*> Լրացուցիչ սահմանվում է օրգանական լուծիչ ԼՆՆ-ների դեպքում:

Պոլիմերային եւ պոլիմեր պարունակող շինարարական նյութերին ու կահույքին ներկայացվող պահանջները

ՊՈԼԻՄԵՐԱՅԻՆ ԵՎ ՊՈԼԻՄԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՆ

ՈՒ ԿԱՀՈՒՅՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

Սույն ենթաբաժնով սահմանվում են պոլիմերային եւ պոլիմերային շինարարական նյութերին (այսուհետ՝ «ՊՇՆ») եւ կահույքին ներկայացվող հիմնական պահանջները՝

Ապակու մածիկներ, ձյութացեմենտներ, բաղադրություններ՝ խտացման համար եւ այլ մածիկներ, ներկարարական ներկաստառներ, ոչ հրակայուն բաղադրություններ՝ շենքերի ճակատները, ներքին պատերը, հատակները, առաստաղները կամ նույնանման մասերը նախապատրաստելու համար (ՄՄ ԱՏԳ ԱԱ 3214 ծածկագիր)։

Պլաստմասսայից պատվածքներ հատակի համար՝ ինքնակաշուն կամ ոչ ինքնակաշուն, գլանափաթեթներով կամ սալիկներով, պլաստմասսայից պատվածքներ պատերի կամ առաստաղների համար՝ նշված սույն խմբի 9–րդ ծանոթագրության մեջ՝ վինիլքլորիդի պոլիմերից (ներքին շենքերի համար) (ՄՄ ԱՏԳ ԱԱ 391810 ծածկագրից)։

Պլաստմասսայից սալիկներ, թաղանթներ, ժապավեն, շերտ եւ այլ հարթ ձեւեր, ինքնակաշուն, գլանափաթեթներով կամ ոչ գլանափաթեթներով (ներքին շենքերի համար) (ՄՄ ԱՏԳ ԱԱ 3919 ծածկագրից)։

Պլաստմասսայից սալիկներ, թաղանթներ, ժապավեն ու շերտեր եւ այլն՝ ոչ ծակոտկեն եւ չամրանավորված, ոչ շերտավոր, ոչ հիմնաշերտով եւ համանման ձեւով չմիացված այլ նյութերի հետ ներքին շենքերի համար (ՄՄ ԱՏԳ ԱԱ 3920 ծածկագրից)։

Լոգնոցներ, ցնցուղներ, կոնքեր՝ ջրի հոսքի համար, լվացարանակոնքեր, լվացասարքեր (բիդեներ), զուգարանակոնքեր, դրանց համար նստոցներ ու կափարիչներ, ջրթափ բաքեր եւ նույնանման սանիտարատեխնիկական ապրանքներ պլաստմասսայից (ՄՄ ԱՏԳ ԱԱ 3922 ծածկագրից)։

Շինարարական դետալներ պլաստմասսայից, այլ տեղում չնշված կամ չներառված (ՄՄ ԱՏԳ ԱԱ 3925 ծածկագրից)։

Հատակի ծածկոցներ՝ վուլկանիզացման ռեզինից, բացի պինդ ռեզինից, որն օգտագործվում է ներքին տարածքների համար (ՄՄ ԱՏԳ ԱԱ 4016910000 ծածկագրից)։

Փայտատաշեղային սալեր, ուղղորդված փայտատաշեղային սալեր (ՕՍՊ) եւ փայտանյութից կամ այլ փայտացած նյութերից պատրաստված նույնանման սալեր (օրինակ՝ վաֆելային սալեր), խեժերով կամ օրգանական այլ կապակցող նյութերով տոգորած կամ չտոգորած (ՄՄ ԱՏԳ ԱԱ 4410 ծածկագիր)։

Փայտանրբաթելային սալեր փայտանյութից կամ այլ փայտացած նյութերից՝ խեժի կամ օրգանական այլ նյութերի հավելումով, կամ առանց դրա (ՄՄ ԱՏԳ ԱԱ 4411 ծածկագիր)։

Սոսնձված ֆաներա, ֆաներային պանելներ եւ նույնանման նյութեր շերտավոր փայտանյութից (ՄՄ ԱՏԳ ԱԱ 4412 ծածկագիր)։

Մամլած փայտանյութ՝ բլոկների, սալերի, չորսունների կամ պրոֆիլացված ապրանքների տեսքով (ՄՄ ԱՏԳ ԱԱ 4413 00 000 0 ծածկագիր)։

Փայտյա իրեր՝ խճանկարած եւ ներդրվագած, փայտյա առարկաներ կահույքից, որոնք նշված չեն 94-րդ խմբում (ՄՄ ԱՏԳ ԱԱ 4420 ծածկագիր)։

Հյուսվածեղեն եւ նույնանման ապրանքներ՝ հյուսքի համար նախատեսված նյութերից, գոտիներով կամ ժապավենով միացված կամ չմիացված՝ պլաստմասսայից. հյուսքի համար նյութեր, հյուսվածեղեն եւ նույնանման ապրանքներ հյուսքի համար նախատեսված նյութերից՝ զուգահեռ փնջերով կամ տերեւի ձեով հյուսած, ավարտուն կամ ոչ ավարտուն (օրինակ՝ գորգիկներ, խսիրներ, փեղկավարագույրներ)՝ պլաստմասսայից (ներքին տարածքների համար) (ՄՄ ԱՏԳ ԱԱ 4601 ծածկագրից)։

Թղթի կամ սովարաթղթի հիմքով ծածկեր՝ հատակի համար, կտրված կամ չկտրված չափով (ներքին տարածքների համար) (ՄՄ ԱՏԳ ԱԱ 4811 10 000 0

ծածկագրից, 4811 41 900 0 ծածկագրից, 4811 49 000 0 ծածկագրից, 4811 51 000 1 ծածկագրից, 4811 59 000 1 ծածկագրից, 4811 60 000 0 ծածկագրից, 4811 90 000 0 ծածկագրից, 4823 90,859 5 ծածկագրից)։

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)

Պաստառային թուղթ եւ պատի նույնանման այլ պատվածքներ, պատուհանի թափանցիկ թուղթ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 4814 ծածկագիր)։

Թաղիք կամ նրբաթաղիք՝ տոգորված կամ չտոգորված, պատվածքով կամ առանց պատվածքի, կրկնակված կամ չկրկնակված (ՄՄ ԱՏԳ ԱԱ 5602 ծածկագիր)։

Չգործված նյութեր՝ տոգորված կամ չտոգորված, պատվածքով կամ առանց պատվածքի, կրկնակված կամ չկրկնակված (ՄՄ ԱՏԳ ԱԱ 5603 ծածկագիր)։

Հանգուցավոր գորգեր եւ այլ մանածագործ հատակի ծածկույթներ՝ պատրաստի կամ ոչ պատրաստի (ՄՄ ԱՏԳ ԱԱ 5701 ծածկագիր)։

Գործած գորգեր եւ հատակի այլ մանածագործ ծածկույթներ մազախավից կամ ֆլոկից չպատրաստված, պատրաստի կամ ոչ պատրաստի՝ ներառյալ «կիլիմ» , «սումախ», «կերմանի» եւ ձեռքի աշխատանքի համանման գորգերը. (ՄՄ ԱՏԳ ԱԱ 5702 ծածկագիր)։

Գորգեր եւ հատակի այլ մանածագործ ծածկույթներ՝ սինթետիկ մանրաթելի մազախավից, պատրաստի կամ ոչ պատրաստի (ՄՄ ԱՏԳ ԱԱ 5703 ծածկագիր)։

Գորգեր եւ հատակի այլ մանածագործ ծածկույթներ՝ թաղիքից, սինթետիկ մանրաթելի մազախավից կամ ֆլոկից չպատրաստված, պատրաստի կամ ոչ պատրաստի (ՄՄ ԱՏԳ ԱԱ 5704 ծածկագիր)։

Գորգեր եւ հատակի այլ մանածագործ ծածկույթներ, պատրաստի կամ ոչ պատրաստի (ՄՄ ԱՏԳ ԱԱ 5705 ծածկագիր)։

Մանածագործական նյութեր՝ տոգորված, պատվածքով կամ պլաստմասսայով կրկնակված՝ բացառությամբ 5902 ապրանքային դիրքում նշված նյութերի (ՄՄ ԱՏԳ ԱԱ 5903 ծածկագիր),

Լինուլեում, ըստ ձեւի ձեւած կամ չձեւած, հատակի ծածկույթներ՝ մանածագործվածքային հիմքով, ըստ ձեւի ձեւած կամ չձեւած (ՄՄ ԱՏԳ ԱԱ 5904 ծածկագիր).

Պատի պաստառներ՝ մանածագործվածքեղենից (ՄՄ ԱՏԳ ԱԱ 5905 00 ծածկագիր).

Խարամաբամբակ, սիլիկատային հանքաբամբակ եւ նմանատիպ հանքաբամբակներ, շերտավորված վերմիկուլիտ, փքված կավեր, փրփրած մետաղախարամ եւ նմանատիպ փքված հանքային արտադրանք, ջերմամեկուսիչ, ձայնամեկուսիչ կամ ձայնակլանիչ հանքանյութերի խառնուրդներ եւ դրանցից պատրաստված արտադրատեսակներ՝ բացառությամբ 6811 կամ 6812 ապրանքային դիրքերում դասակարգված կամ 69-րդ խմբում ընդգրկված արտադրատեսակների (ՄՄ ԱՏԳ ԱԱ 6806 ծածկագիր).

Պանելներ, սալեր, սալիկներ, բլոկներ եւ բուսական թելերից, ծղոտից կամ տաշեղներից, մանրատաշեղից, մասնիկներից, փայտաթեփից կամ փայտանյութի այլ թափոններից պատրաստված նմանատիպ արտադրատեսակներ՝ ցեմենտով, գիպսով կամ այլ հանքային կապակցող նյութերով բեկորաշեղջված (ՄՄ ԱՏԳ ԱԱ 6808 00 000 0 ծածկագիր):

Արտադրատեսակներ ասբեստացեմենտից, ցեմենտից թաղանթանյութի մանրաթելերի հետ կամ նույնանման նյութերից՝ բացառությամբ խողովակների, փողակների եւ դրանց կցամասերի (ՄՄ ԱՏԳ ԱԱ 6811 ծածկագրից).

Սալեր՝ սալարկման համար, հախճասալիկներ (երեսապատման սալիկներ) հատակների, վառարանների, բուխարիների կամ պատերի համար՝ կերամիկական, չջնարակված. խորանարդիկներ կերամիկական, չջնարակված, խճանկարային աշխատանքների համար եւ նույնանման արտադրատեսակներ՝ հիմքով կամ առանց հիմքի (ՄՄ ԱՏԳ ԱԱ 6907 ծածկագիր).

Սալեր սալարկման համար, հախճասալիկներ (երեսապատման սալիկներ) հատակների, վառարանների, բուխարիների կամ պատերի համար՝ կերամիկական, ջնարակված. խորանարդիկներ կերամիկական, չջնարակված, խճանկարային

աշխատանքների համար եւ նույնանման արտադրատեսակներ՝ հիմքով կամ առանց հիմքի (ՄՄ ԱՏԳ ԱԱ 6908 ծածկագիր)։

Կահույք՝ նստելու համար (բացի 9402 ապրանքային դիրքում նշվածներից), որոնք ձեւափոխվում են կամ չեն ձեւափոխվում որպես մահճակալ, եւ դրա մասերը (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9401 ծածկագիր)։

Այլ կահույք եւ դրա մասերը՝ բացառությամբ մետաղական, ապակե կահույքի (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9403 ծածկագիր)։

Սույն պահանջը տարածվում է ՊՇՆ-ների վրա, որոնք կիրառվում են շենքերի եւ շինությունների նախագծման, շինարարության ու վերանորոգման ժամանակ։

Երկրորդային ռեսուրսներով եւ արտադրական թափոններից պատրաստված ՊՇՆ-ները պետք է անցնեն հիգիենիկ գնահատում՝ որպես նոր նյութեր։

ՊՇՆ-ների հիգիենիկ գնահատման նպատակով անցկացվող հետազոտությունների ծավալը եւ ուղղությունը սահմանվում է կոնկրետի դեպքի համար՝ կապված պոլիմերային նյութերի բաղադրագրերից եւ նշանակությունից։

Հաշվի առնելով սույն Սանիտարական կանոնների պահանջները՝ ՊՇՆ-ները կիրառվում են հետեւյալ տիպի շենքերում եւ կառույցներում՝

Տիպ Ա՝ բնակելի տներ եւ հանրակացարաններ, կրթական հաստատություններ, առողջապահական կազմակերպություններ, հաշմանդամների եւ ծերերի կացարաններ, առողջարաններ, հանգստյան տներ, փակ սպորտային կառույցներ, Բ եւ Գ տիպի արտադրական ձեռնարկությունների եւ այլ օբյեկտների վարչական շենքերի ծառայողական տարածքներ, որտեղ մշտապես մարդիկ են լինում։

Տիպ Բ՝ սննդարդյունաբերության, առետրի եւ հասարակական սննդի ձեռնարկություններ, հյուրանոցներ, արդյունաբերական ապրանքների խանութներ, կապի ձեռնարկություններ, կենցաղսպասարկման ձեռնարկություններ, մշակութահանդիսադիր եւ այլ օբյեկտներ, վարչական շենքեր,

Տիպ Գ՝ արդյունաբերական ձեռնարկություններ, օժանդակ եւ կենցաղային տարածքներ ու կառույցներ, պահեստներ, ավտոտնակներ։

Շենքերի եւ կառույցների տիպերի միջեւ բաժանումը չի տարածվում այն արտադրանքի վրա, որը ենթակա է պնդացման եւ (կամ) հովացման (բացառությամբ հատակի վերջնամշակված լցովի ծածկույթների), ՊՇՆ-ների վրա, որոնք անմիջական շփում չունեն շինության օդային միջավայրի հետ (այսինքն՝ ենթակա են վերջնամշակման այլ շինանյութերով), ճենապակուց, ապակուց, մետաղից պոլիմեր պարունակող արտադրատեսակների վրա:

Դահլիճներում, սպասասրահներում, միջանցքներում, ճաշասենյակներում, հանրակացարանների պահեստանոցներում, բարձրագույն եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, փակ սպորտային կառույցներում թույլատրվում է կիրառել ՊՇՆ, եթե դրանք ունեն Բ տիպի շենքերի եւ կառույցների շինարարության թույլտվություն:

Քիմիական թելքերի հիմքով խավավոր ծածկույթները (վորսիտ, նրբախավով ծածկույթներ եւ այլն) կիրառվում են բոլոր տեսակների շենքերի եւ կառույցների տարածքներում՝ հատակների կառուցման համար (Ա, Բ, Գ տիպեր)՝ բացառությամբ այն տարածքների, որտեղ պարբերաբար պետք է կատարվի թաց միջոցների օգտագործմամբ մաքրում եւ վարակազերծում, ինչպես նաեւ եթե ճարպերի, յուղերի, ջրի, հղկումային նյութերի եւ ագրեսիվ միջավայրերի ազդեցությունը բացակայում է:

2. ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Պոլիմերային շինարարական նյութեր (ՊՇՆ)՝ նյութեր, որոնք ստացվել են սինթետիկ բարձրմոլեկուլային միացությունների օգնությամբ:

Պոլիմեր պարունակող շինարարական նյութեր՝ նյութեր, որոնց կազմում կա պոլիմեր:

ՊՇՆ-ի եւ կահույքի հիգիենիկ գնահատում (փորձագիտություն)՝ հետազոտությունների փաթեթ, որոնք մարդու առողջության համար անվտանգ կիրառությունն ապահովելու համար են իրականացվում:

Բնակելի վայրերի մթնոլորտային օդում աղտոտող նյութի սահմանային

թույլատրելի խտություն (այսուհետ՝ ՍԹԽ)՝ խտություն, որը ներկա է ասպագա սերունդների համար ուղղակի կամ անուղղակի աննպաստ ազդեցության ամբողջ ընթացքում չի նվազեցնում մարդու աշխատունակությունը, չի վատացնում նրա ինքնազգացողությունը կամ սանհիտարակենցաղային պայմանները:

Ներգործության կողմնորոշիչ անվտանգ մակարդակ՝ (այսուհետ՝ ՆԿԱՄ)՝ բնակելի վայրերի մթնոլորտային օդում աղտոտող նյութի առավելագույն թույլատրելի պարունակությունը:

ՊՇՆ-ի է և կահույքի հետազոտություններ մոդելային պայմաններում՝ շահագործման իրական պայմաններին մոտ մոդելների օգնությամբ հետազոտություն:

ՊՇՆ-ի է և կահույքի հետազոտություն բնական պայմաններում՝ հետազոտությունների բնակելի բնական օբյեկտներում:

Փորձարարական շինություններում ՊՇՆ-ի է և կահույքի հետազոտություններ՝ ՊՇՆ-ի հետազոտություն չբնակեցված բնական օբյեկտներում:

Էլեկտրաստատիկ դաշտի լարվածության մակարդակ՝ ֆիզիկական հաստատուն, որը բնութագրում է ՊՇՆ-ի է և կահույքի էլեկտրականացման մակարդակը:

ՊՇՆ-ի հագեցվածություն՝ պոլիմերային նյութի բաց ծածկույթի մակերեսի հարաբերությունը քառակուսի մետրով տարածքի ծավալին՝ խորանարդ մետրով:

Օդափոխանակության բազմապատիկություն՝ միավոր ժամանակում մղվող (հեռացվող) օդի ծավալի հարաբերությունը տվյալ տարածքի ծավալի նկատմամբ:

Տարածքի միկրոկլիմա՝ միջավայրի վիճակ, որով պայմանավորված է մարդու ջերմազգացողությունը:

3. ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ (ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ)

3.1. ՊՇՆ-ն եւ կահույքը տարածքում չպետք է առաջացնեն սպեցիֆիկ հոտ (2 բալլից ոչ ավելի):

3.2. ՊՇՆ-ները եւ կահույքը շրջակա միջավայր չպետք է արտազատեն ցնդող նյութեր այնպիսի քանակությամբ, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի անբարենպաստ ազդեցություն ունենալ մարդու օրգանիզմի համար (հաշվի առնելով արտազատվող բոլոր նյութերի համատեղ ազդեցությունը):

3.3. Շենքերի եւ կառույցների շահագործման ընթացքում շինությունների օդում ՊՇՆ-ից եւ կահույքից չպետք է արտազատվեն քիմիական նյութեր, որոնք պատկանում են վտանգավորության 1-ին դասին, իսկ մնացած նյութերի պարունակությունը չպետք է գերազանցի հիգիենիկ նորմատիվները (ՊՇՆ_{մ.օ.}, ՆԿԱՄ) մթնոլորտային օդի համար, որը ներկայացված է սույն Միասնական պահանջների II գլխի 6-րդ բաժնի 6.1 հավելվածում): Եթե ՊՇՆ-ից կամ կահույքից արտադրվում են մի քանի քիմիական նյութեր, որոնք ընդհանուր ներգործության ազդեցություն ունեն, ապա խտությունների հարաբերությունների հանրագումարն իրենց ՍԹԽ-ի նկատմամբ չպետք է գերազանցի մեկը:

3.4. Էլեկտրաստատիկ դաշտի լարվածության մակարդակը ՊՇՆ-ի մակերեսային եւ կահույքի վրա տարածքների շահագործման պայմաններում (օդի՝ 30-60% խոնավության դեպքում) չպետք է գերազանցի 15,0 կՎ/մ-ը:

3.5. Բնական ռադիոնուկլիդների տեսակարար արդյունավետ ակտիվության արժեքը՝ հանքային հիմքով ՊՇՆ-ում եւ կահույքում ու փայտանյութում, դրա վերամշակման արդյունքում ստացված ապրանքներում եւ այլ բնական հումքում եւ ցեզիում-137-ի տեսակարար ակտիվության արժեքը չպետք է գերազանցեն հիգիենիկ նորմատիվները, որոնք սահմանված են սույն Միասնական պահանջների II գլխի 11-րդ բաժնում:

3.6. ՊՇՆ-ները չպետք է խթանեն միկրոֆլորայի աճը եւ զարգացումը, այդ թվում՝ ախտածին միկրոֆլորայի՝ շենքերի եւ կառույցների տարածքների ներքին

հարդարման աշխատանքներ կատարելիս, եթե նախատեսված է թաց վարակազերծման ռեժիմ:

3.7. ՊՇՆ-ները չպետք է վատթարացնեն շինությունների միկրոկլիման:

3.8. Սանիտարաքիմիական եւ հոտաչափական հետազոտությունների արդյունքով դրական հիգիենիկ գնահատական ստացած ՊՇՆ-ների եւ կահույքի նկատմամբ պետք է կատարվի թունաբանական հետազոտություն, եթե դրանք

ա) արտազատում են թեկուզ մեկ նյութ, որը չունի հիգիենիկ կանոնակարգ (ՍԹԽ մ.օ. մթնոլորտում, ՆԿԱՄ),

բ) արտազատում են 5 եւ ավելի տարբեր քիմիական միացություններ, եթե նույնիսկ դրանք բոլորն ունեն հիգիենիկ կանոնակարգ,

գ) թունաբանական հետազոտություններ պետք է անցկացվեն նաեւ այն դեպքերում, եթե անհրաժեշտություն կա գնահատելու նյութերի խումբը, որը նախատեսված է շինարարության եւ ներքին հարդարման նպատակով:

4. ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ՓԱԹԵԹՎԱԾՔԻ ԵՎ ՄԱԿԱՆՇՎԱԾՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ՊՇՆ-ների եւ կահույքի պատրաստումը պետք է իրականացվի տեխնիկական նորմատիվ իրավական ակտերի (այսուհետ՝ ՏՆԻԱ) պահանջներին համապատասխան:

ՊՇՆ-ների եւ կահույքի փաթեթվածքը պետք է ունենա դրոշմակնիք, որի վրա նշված է՝

արտադրող ձեռնարկությունը,

արտադրող ձեռնարկության եւ (կամ) առաքիչի վավերապայմանները՝

ՏՆԻԱ, որի համաձայն, իրականացվում է արտադրանքի թողարկումը,

տեխնիկական հսկողության մասին նշում, խմբաքանակի համարը եւ ՊՇՆ-ի պատրաստման ամսաթիվը:

ՊՇՆ-ի եւ կահույքի փաթեթվածքն ու մականշվածքը պետք է համապատասխանեն այն պահանջներին, որոնք սահմանված են ՏՆԻԱ-ում, որին կից պետք է ներկայացվեն հրահանգներ՝ դրանց կիրառության կամ օգտագործման մասին:

Հավելված 6.1

**Սանիտարահամաճարակաբանական
վերահսկողությանը (հսկողությանը) ենթակա
ապրանքներին ներկայացվող
սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ
միասնական պահանջների II գլխի 6-րդ բաժնի**

**ՊՈԼԻՄԵՐԱՅԻՆ ԵՎ ՊՈԼԻՄԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ
ԿԱՆՈՒՅՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

Հ հ/հ	ՊՇՆ–ի պատրաստման համար կիրառվող պոլիմերի անվանումը	Սանիտարահամաճարակաբանական պահանջները	
		ցուցանիշը	օդային միջավայր միգրացիայի թույլատրելի մակարդակը, մգ/մ ³
1	2	3	4
1.	Պլաստիկացված պոլիվինիլքլորիդ (սուսպենզացված եւ էմուլսիոն)	Դիբութիլֆտալատ	0,10
		Դիօկտիլֆտալատ	0,02
		Ֆորմալդեհիդ	0,01
		Քլորաջրածին	0,10
2.	Ֆենոլֆորմալդեհիդային մեղամինֆորմալդեհիդային խեժեր	Ամոնիակ	0,04
		Մեթիլապիրտ	0,50
		Ֆենոլ	0,003
		Ֆորմալդեհիդ	0,01
3.	Կարբամիդային խեժեր	Ամոնիակ	0,04
		Մեթիլապիրտ	0,50
		Ֆորմալդեհիդ	0,01
4.	Սինթետիկ կաուչուկներ բուտադիենի եւ բուտադիենի համապոլիմերների հիմքով՝ ակրիլոնիտրիլով եւ ստիրոլով	Ակրիլոնիտրիլ	0,03
		Ցիանաջրածին	0,01
		Դիբութիլֆտալատ	0,10
		Դիօկտիլֆտալատ	0,02
		Ստիրոլ	0,002
		Տոլուոլ	0,30
		Քսիլոլ	0,10
		Ֆորմալդեհիդ	0,01
5.	Պոլիստիրոլային պլաստիկներ		
5.1.	պոլիստիրոլ (բլոկային, սուսպենզային, հարվածակայուն). Ստիրոլի համապոլիմեր՝ ակրիլոնիտրիլով, ԱԲՍ պլաստիկներ	Ակրիլոնիտրիլ	0,03
		Դիբութիլֆտալատ	0,10
		Դիօկտիլֆտալատ	0,02
		Ստիրոլ	0,002
		Ֆորմալդեհիդ	0,01
5.2.	ստիրոլի համապոլիմեր՝ մեթակրիլատով	Մեթիլմեթակրիլատ	0,01
		Ստիրոլ	0,002
		Ֆորմալդեհիդ	0,01
5.3.	ստիրոլի համապոլիմեր՝ բութադիենով	Բութիլապիրտ	0,10
		Մեթիլապիրտ	0,50

		Ստիրոլ	0,002
		Ֆորմալդեհիդ	0,01
5.4.	Փրփրած պոլիստիրոլներ	Ստիրոլ	0,002
		Քսիլոլ	0,10
		Տոլուոլ	0,30
		Ֆորմալդեհիդ	0,01
6.	Պոլիուրետաններ	Բութիլացետատ	0,10
		Ցիանաջրածին	0,01
		Իզոպրոպիլ սպիրտ	0,20
		Մեթիլսպիրտ	0,50
		Ֆորմալդեհիդ	0,01
		Էթիլենգլիկոլ	0,30
7.	Էպօքսիդային խեժեր	Դիբութիլֆտալատ	0,10
		Դիօկտիլֆտալատ	0,02
		Քսիլոլ	0,10
		Ֆենոլ	0,003
		Ֆորմալդեհիդ	0,01
		Էպիքլորհիդրին	0,04
8.	Բազմաէթերային խեժեր	Դիբութիլֆտալատ	0,10
		Դիօկտիլֆտալատ	0,02
		Ստիրոլ	0,002
		Ֆտալային անհիդրիդ	0,02
		Ֆորմալդեհիդ	0,01
		Էթիլենգլիկոլ	0,30
9.	Վինիլացետատի եւ դրա ածանցյալների հիմքով ՊՇՆ	Վինիլացետատ	0,15
		Երկբութիլֆտալատ	0,10
		Դիօկտիլֆտալատ	0,02
		Մեթիլսպիրտ	0,50
		Ֆորմալդեհիդ	0,01
10.	Ակրիլային եւ մեթակրիլաթթվի հիմքով ՊՇՆ	Ակրիլոնիտրիլ	0,03
		Երկբութիլֆտալատ	0,10
		Դիօկտիլֆտալատ	0,02
		Մեթիլսպիրտ	0,50
		Մեթիլմեթակրիլատ	0,01
		Ֆորմալդեհիդ	0,01
11.	պոլիէթիլենի եւ պոլիպրոպիլենի հիմքով ՊՇՆ	Ացետալդեհիդ	0,01
		Իզոպրոպիլ սպիրտ	0,20
		Մեթիլսպիրտ	0,50
		Ֆորմալդեհիդ	0,01
12.	Պոլիամիդ	Երկբութիլֆտալատ	0,10
		Դիօկտիլֆտալատ	0,02
		Կապրոլակտամ	0,06
		Մեթիլսպիրտ	0,50
		Ֆորմալդեհիդ	0,01
13	Հանքային հիմքով ՊՇՆ	Ֆոսֆորի անհիդրիդ	0,05
		Ծծմբի երկօքսիդ	0,05
14.	Ցելյուլոզայի հիմքով ՊՇՆ	Ամոնիակ	0,04
		Մեթիլսպիրտ	0,50
		Ֆենոլ	0,003
		Ֆորմալդեհիդ	0,01

**Բաժին 7. Մեքենաշինության, գործիքաշինության եւ էլեկտրատեխնիկայի
արտադրանքին ներկայացվող պահանջները**

1. ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՈԼՈՐՏԸ

Սույն փաստաթուղթն ընդունվում է քաղաքացիների կյանքի եւ առողջության, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքի, պետական կամ մունիցիպալ գույքի պաշտպանության, շրջակա միջավայրի պահպանության եւ սպառողներին մոլորության մեջ զցող գործողությունները կանխելու նպատակներով:

Սույն փաստաթղթի օբյեկտների շարքին դասվող արտադրանքի ցանկում ներառվում է մեքենաշինության, գործիքաշինության, էլեկտրատեխնիկայի արտադրանք, այդ թվում՝

- Վերգետնյա տրանսպորտային միջոցներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8709 19 ծածկագիր).
- Գյուղատնտեսական տրակտորներ, այդ թվում՝ փոքրածավալ, մոտոբլոկեր (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8432 ծածկագիր).
- Մեքենաներ եւ փայտամթերման ու փայտալուղարկման սարքավորումներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8432 ծածկագիր).
- Մեքենաներ՝ ձեռքի, օդաճնշական, էլեկտրական, բենզինաշարժիչային (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8432 ծածկագիր).
- էլեկտրատեխնիկական արտադրատեսակ, այդ թվում՝ էլեկտրական սղոցներ եւ դանակներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8432 ծածկագիր).
- Ֆերմերային եւ տնամերձ տնտեսության համար սարքեր, գազոնահնձիչներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8432 ծածկագիր).
- Գյուղատնտեսության, այգեգործության մեջ օգտագործվող մեքենաներ՝ հողի նախապատրաստման եւ մշակման համար. գլղոններ՝ սիզամարգերի եւ մարգահրապարակների համար (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8432 ծածկագիր).
- Մեքենաներ եւ մեխանիզմներ՝ խոտհնձիչներ՝ սիզամարգերի, զբոսայգիների

եւ մարզահրապարակների համար (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8433 ծածկագիր).

– Հղկումային, ավմաստից գործիք, եռակցման էլեկտրոդներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 2513, 2601 – 2617 ծածկագիր).

– Սարքավորումներ փաթեթավորման եւ ծրարման համար՝ նախատեսված շաքարի ու օսլայի եւ մաթի արդյունաբերության համար, պահածոյի բանկաներ ու շշեր բացելու եւ փակելու սարքեր (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8422 40 000 ծածկագիր).

– Սննդամթերք կշռելու համար սարքեր (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8423 ծածկագրից) <*>.

<*> Այստեղ եւ այսուհետ՝ աստղանիշով նշված արտադրատեսակների հիգիենիկ անվտանգության գնահատումն ըստ զգայորոշման, սանիտարաքիմիական, թունաբանական ցուցանիշների իրականացվում է Սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա ապրանքների միասնական սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջների II գլխի 3–րդ եւ 16–րդ բաժինների պահանջների համաձայն:

– Տեխնոլոգիական սարքեր՝ առետրի, հասարակական սննդի եւ սննդի կետերի համար (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8418 50 ծածկագիր) <*>.

– Ապրանքներ պահելու եւ սառեցնելու համար նախատեսված սառնարանային սարքեր եւ ջերմախցիկներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8418, 8418 21, 8418 30 200, 8418 30 800, 8418 40 200, 8418 40 800 ծածկագրեր) <*>

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16–ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)

– Պինդ, հեղուկ եւ գազանման վառելիքով աշխատող սարքավորումներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8432 ծածկագիր) <*>.

– Կթելու կայանքներ եւ ապարատներ, կաթի մշակման եւ վերամշակման

սարքավորումներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8434 ծածկագիր) <*>.

- Սարքավորումներ այրադաց արդյունաբերության համար (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8437 ծածկագիր) <*>.

- Սարքավորումներ սննդամթերքի եւ ըմպելիքների արդյունաբերական պատրաստման կամ արտադրության համար (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8438 ծածկագիր) <*>.

- Սննդի պատրաստման սարքեր, խոհանոցային աշխատանքներն ավտոմատացնելու համար նախատեսված սարքեր (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8509 40 000 0, 8516 10 110 0 ծածկագիր) <*>.

- Հեղուկների տաքացման համար նախատեսված սարքեր, ջրատաքացուցիչներ, այդ թվում՝ 10 լիտրը չգերազանցող թեյնիկներ, սրճեփներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8516 10 ծածկագիր) <*>.

- Խոհանոցային մեքենաներ, սրճադացներ, սուրճ մանրացնող սարքեր, հաց բովող սարքեր, գրիլներ, ռոստերներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8509 40 000 0 ծածկագիր) <*>.

- Սննդամթերքի մանրիչներ եւ հարիչներ. Հյութաքամիչներ՝ մրգերի կամ բանջարեղենի համար (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8509 40 000 0 ծածկագիր) <*>.

- Ապակեմաքրիչներ, հակասառցապատիչներ եւ հակաքրտնապատիչներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8512 40 000 ծածկագիր) <*>.

- Էլեկտրական ոչ իներցիոն կամ կուտակող ջրատաքացուցիչներ, սուզվող էլեկտրաջեռուցիչներ, ջրատաքացուցիչներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8516 10 ծածկագիր) <*>.

- Ոչ իներցիոն ջրատաքացուցիչներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8516 10 110 0 ծածկագիր) <*>.

- Միկրոալիքային եւ ինդուկցիոն տաքացման վառարաններ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8516 50 000 0 ծածկագիր) <*>.

- Այլ վառարաններ, էլեկտրասալեր, էլեկտրասալիկներ, եփման էլեկտրակաթսաներ, գրիլներ եւ ռոստերներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8516 60 ծածկագիր) <*>.

- Էլեկտրասալեր (որոնք առնվազն ունեն վառարան եւ էլեկտրատաքացուցիչի

տարրերով բուխարի) (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8516 60 10 ծածկագիր) <*>.

- Էլեկտրասալեր՝ կենցաղային շուրջօրյա (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8516 60 101 0 ծածկագիր) <*>.

- Այլ՝ էլեկտրասալիկներ, եփման կաթսաներ եւ էլեկտրասալերի համար էլեկտրատաքացուցիչ տարրերով բուխարիներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8516 60 109 0 ծածկագիր) <*>.

- Հեռախոսային ապարատներ՝ բջջային կապի եւ այլ անլար կապի ցանցերի համար, ռադիոհեռախոսներ, ազդանշանային պաշտպանության, տեսահսկողության եւ մուտքի վերահսկողության սարքավորումներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8517 12 000 0 ծածկագիր) <*>.

- Բազային կայաններ, շարժական, բջջային, անտենա-ֆիդերային համակարգեր, ռադիոլուկացիոն կայաններ, բաց բաշխիչ սարքեր, արբանյակային կապի երկրային կայաններ, արբանյակային կապի շարժական, ավտոմոբիլային, արոնենտային տերմինալներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8517 61 000 ծածկագիր) <*>.

- Փոշեկուլներ եւ ջուր ներծծող հավաքող մեքենաներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8508 11 000 0 - 8508 60 000 0 ծածկագիր).

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)

- Տեղեկատվական տեխնիկա, գրասենյակային սարքավորումներ, տպիչ պատճենահանող տեխնիկա, անհատական ԷՀՄ, արդյունաբերական եւ կենցաղային նշանակության տեսաէկրանային տերմինալներ, պաշտպանիչ էկրաններ, հեռուստաընդունիչներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8471 -ից ,8472-ից, 8528-ից, 9002 20 000 0 ծածկագրերից).

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)

- Կուլտուր-կենցաղային նշանակության եւ տնային գործածության արտադրատեսակներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8512 40 000 ծածկագիր).

– Լազերային ճառագայթման հիմքով աշխատող սարքեր եւ սարքավորումներ, տեխնիկական, թատերադեկորացիոն սարքեր (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9013 20 000 0 ծածկագիր).

– Միջուկային ռեակտորներ, ջերմանջատիչ տարրեր՝ չճառագայթված, միջուկային ռեակտորների համար. Իզոտոպերի բաժանման համար հարմարանքներ, ալեփոխարկիչներ եւ տրոհվող ու ռադիոակտիվ նյութերի հայտնաբերման համակարգեր՝ ստացիոնար, բջջային, փոխանցելի (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8401 ծածկագիր).

ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրերով՝ մեքենաշինության, գործիքաշինության, էլեկտրատեխնիկայի արտադրանքի ցանկը ներկայացված է 1-ին հավելվածում:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն փաստաթղթում օգտագործվում են հետեւյալ հասկացությունները՝

արտադրող՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որն արտադրատեսակը շրջանառության մեջ բաց թողնելիս իր անունից պատասխանատվություն է կրում այդ արտադրատեսակի նախագծման, արտադրման, փաթեթավորման եւ (կամ) պիտակավորման, համակարգի հավաքման կամ արտադրատեսակի մոդիֆիկացիայի համար՝ անկախ այն բանից, թե տվյալ գործունեությունն իրականացնում է հենց այդ անձը, թե նրա անունից գործող երրորդ անձը: Արտադրողներ չեն համարվում այն անձինք, որոնք տվյալ հաճախորդի համար իրականացնում են արտադրատեսակի հավաքման կամ ձեւափոխման աշխատանքներ՝ պայմանով, որ այդպիսի արտադրատեսակներն արդեն դրվել են շրջանառության մեջ.

սարքավորում՝ ինքնուրույն օգտագործվող կամ մեքենայի վրա տեղադրվող տեխնիկական սարքվածք, որն անհրաժեշտ է դրա հիմնական եւ (կամ) լրացուցիչ գործառույթները կատարելու, ինչպես նաեւ մի քանի մեքենա մեկ համալիրի մեջ միավորելու համար.

ցածրավոլտ սարքավորումներ՝ ցանկացած էլեկտրական սարքավորում, որը նախատեսված է մինչեւ 1000 վոլտ անվանական լարման դեպքում՝ փոփոխական հոսանքի եւ մինչեւ 1500 վոլտ անվանական լարման դեպքում՝ հաստատուն հոսանքի կիրառման համար եւ օգտագործման դեպքում բնութագրվում է վնասի հասցման բարձր ռիսկայնությամբ.

նախատեսված նշանակում՝ արտադրատեսակի կիրառումը՝ ըստ արտադրողի կողմից ներկայացված տեղեկությունների, որոնք նշված են մականշվածքի վրա, օգտագործման ցուցման մեջ եւ (կամ) գովազդային նյութում.

օգտագործման ցուցում (շահագործման ձեռնարկ), շահագործման փաստաթղթեր՝ փաստաթղթեր, որոնք պարունակում են տեղեկություններ արտադրանքի շահագործման (կիրառման) եղանակների եւ անվտանգության միջոցների վերաբերյալ.

կից ներկայացված փաստաթղթեր՝ արտադրանքին կից ներկայացվող փաստաթղթեր (տեխնիկական անձնագիր, նկարագրություն, շահագործման ձեռնարկ կամ օգտագործման ցուցում, պիտակ, փորձարկման արձանագրություններ, հավաստագրեր, փորձագիտական եզրակացություն եւ այլն), որոնք պարունակում են այդ արտադրանքի տեխնիկական բնութագրերը, օգտագործման ժամանակ անվտանգության պահանջները եւ այլն.

ԺՍԱ՝ Ժողովրդական սպառման ապրանքներ՝

օգտագործողի պատրաստության աստիճանին ներկայացվող պահանջներ՝ այն գիտելիքները, կարողությունները, հմտությունները եւ փորձը, որոնցով պետք է օժտված լինի օգտագործողը՝ արտադրատեսակն անվտանգ օգտագործելու նպատակներով:

3. ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԳՈՐԾԻՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մեքենաշինության, գործիքաշինության, էլեկտրատեխնիկայի արտադրանքը

(այսուհետ՝ մեքենաներ եւ (կամ) սարքավորումներ) շահագործման ժամանակ սպասարկող անձնակազմի աշխատատեղերում եւ կենցաղում օգտագործելիս չպետք է ստեղծեն վնասակար գործոնների (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական, ռադիոլոգիական) այնպիսի մակարդակներ, որոնք գերազանցում են սանիտարական օրենսդրության պահանջներին համապատասխանող սահմանային թույլատրելի ցուցիչները:

Սարքավորումները պետք է համալրվեն բոլոր անհրաժեշտ պարագաներով՝ դրանց անվտանգ շահագործման, կարգավորման, տեխնիկական սպասարկման համար:

Սարքավորումները պետք է նախագծվեն եւ արտադրվեն այնպես, որ դրանց արտադրության եւ շահագործման ժամանակ օգտագործվող հումքը, նյութերը եւ արտադրանքը սպառնալիք չստեղծեն քաղաքացիների կյանքի եւ առողջության, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքի, պետական կամ մունիցիպալ գույքի, կենդանիների եւ բույսերի կյանքի կամ առողջության համար: Լուծույթների կիրառման դեպքում բացառվում է դրանց կիրառման հետ կապված վտանգը:

Մեքենաների եւ (կամ) սարքավորումների անվտանգ շահագործման համար նախատեսվում է լրացուցիչ լուսաբանում:

Մեքենաների եւ սարքավորումների կառավարման համակարգերը բոլոր նախատեսվող աշխատանքային ռեժիմներում եւ շահագործման պայմաններով նախատեսված բոլոր արտաքին ազդեցությունների առկայության պարագաներում՝ ներառյալ նախազգուշական ազդանշանների համակարգը եւ այլ միջոցներ, որոնք նախազգուշացնում են մեքենայի եւ (կամ) սարքավորման՝ հնարավոր վտանգավոր իրավիճակների հանգեցման մասին, ինչպես նաեւ վթարային դադարի, բլոկավորման մասերը եւ այլ միջոցներ պետք է ապահովեն դրանց շահագործման անվտանգությունը:

Արտադրատեսակների կառուցվածքը պետք է, հնարավորության դեպքում, բացառի ֆիզիկական գործոնների բարձր մակարդակների ազդեցությունը սպասարկող անձնակազմի եւ օգտագործողների վրա՝ բլոկավորումների,

պաշտպանակների, էկրանների, ֆիլտրերի, պաշտպանական պատյանների եւ ծածկույթների, լուսազդանշային սարքերի, թայմերների, հեռակառավարման եւ նմանատիպ այլ միջոցների) կառավարման եւ օգտագործման միջոցով: Աղմկող եւ թրթռող սարքավորման կառուցվածքում պետք է նախատեսվի, որ աղմուկը եւ թրթռումը հասցվի նվազագույնի: Էլեկտրական արտադրատեսակները շահագործման պայմաններում պետք է ապահովեն էլեկտրաանվտանգությունը:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

Աշխատանքային գոտի եւ (կամ) շրջակա միջավայր վնասակար գործոնների (քիմիական, ֆիզիկական, կենսաբանական եւ ճառագայթիչ) արտանետման հետ կապված վտանգներից պաշտպանվելու համար սարքավորումները պետք է զինված լինեն համապատասխան պաշտպանական հարմարանքներով (օդափոխվող ծածկույթներ, ջերմամեկուսիչ եւ ձայնամեկուսիչ պատյաններ, հակաթրթռական մեղմիչներ, մարիչ սարքվածքներ, ներկառուցված պաշտպանիչ էկրաններ եւ այլն):

Շահագործման ժամանակ մեքենայի եւ (կամ) սարքավորումների արտանետած գազերը, հեղուկը, փոշին, գոլորշին եւ մյուս թափոնները չպետք է վտանգի աղբյուր լինեն: Այդպիսի վտանգի առկայության դեպքում սարքավորումը զինվում է այդ նյութերը հավաքելու եւ հեռացնելու համար նախատեսված սարքվածքներով, որոնք տեղադրվում են արտանետման աղբյուրին հնարավորինս մոտ, ինչպես նաեւ արտանետումների նկատմամբ չընդհատվող ավտոմատ հսկողության իրականացման համար նախատեսված սարքվածքներով:

Արտադրատեսակների կառուցվածքը պետք է, հնարավորության դեպքում, բացառի ֆիզիկական գործոնների բարձր մակարդակների ազդեցությունը սպասարկող անձնակազմի եւ օգտագործողների վրա՝ բլոկավորումների, պաշտպանակների, էկրանների, ֆիլտրերի, պաշտպանական պատյանների ու ծածկույթների, լուսազդանշային սարքերի, ժամանակաչափերի, հեռակառավարման եւ նմանատիպ այլ միջոցների) կառավարման ու օգտագործման միջոցով: Աղմուկ եւ թրթռում առաջացնող սարքավորումները պետք է հագեցած լինեն աղմկամեկուսիչ եւ թրթռամեկուսիչ տարրերով: Էլեկտրական արտադրատեսակները պետք է

ապահովված լինեն պաշտպանական հողանցմամբ: Ուլտրամանուշակագույն սարքավորումների շահագործման ժամանակ, այնտեղ, որտեղ դա անհրաժեշտ եւ հնարավոր է, հարկ է օգտագործել ակրիլային պաշտպանիչ ծածկույթ: III, IV դասերի լազերային արտադրատեսակները, որոնք ճառագայթում են առաջացնում սպեկտրի անտեսանելի մասում, հարկ է զինել I, II դասերի ներկառուցված լազերներով, որոնք ունեն տեսանելի ճառագայթում՝ հիմնական լազերային փնջի տեսանելիացման համար (կարգավորիչ, նշանոցային լազերներ):

Արտադրող ձեռնարկությունը դասակարգում է մեքենաշինության, գործիքաշինության եւ էլեկտրատեխնիկայի արտադրատեսակներն ըստ լազերային վտանգավորության աստիճանի, հաշվի առնելով ճառագայթման ելքային բնութագրերը՝ օգտագործելով գործող սանիտարական նորմերի եւ կանոնների պահանջներին համապատասխան հաշվարկային մեթոդը: Լազերների վտանգավորության դասի որոշման համար պատասխանատվություն է կրում արտադրող ձեռնարկությունը: Լազերի դասը ճիշտ որոշելու հսկողությունն իրականացվում է պետական սանիտարական հսկողության (վերահսկողության) լիազորված մարմինների կողմից:

Թույլատրելի սահմանները գերազանցող ֆիզիկական գործոնների մակարդակներ առաջացնող սարքավորման լրակազմում արտադրողը պետք է ընդգրկի անհատական պաշտպանության միջոցներ (հակաաղմկային ներդրակներ, պաշտպանիչ ակնոցներ, ձեռնոցներ)՝ 2 հատից ոչ պակաս քանակությամբ:

Մեքենաները եւ (կամ) սարքավորումները պետք է զինված լինեն հողանցման համակարգով:

Մեքենաշինության, գործիքաշինության, էլեկտրատեխնիկայի արտադրանքի եւ արտադրատեսակների վրա պետք է զետեղվեն պիտակներ, որով օգտագործողին կտեղեկացվի արտադրողի, արտադրանքի նշանակության, արտադրանքը շահագործելու ժամանակ անվտանգության միջոցների մասին:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

4. ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԳՈՐԾԻՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Սանիտարաքիմիական փորձարկումներ՝

- օդային միջավայր արտանետվող վնասակար քիմիական նյութերի որակաքանակական հետազոտություններ: Բացառությամբ այն արտադրանքի, որի նկատմամբ հիգիենիկ անվտանգության պահանջները բերված են սույն Սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա ապրանքների սույն միասնական սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջների II գլխի 3–րդ եւ 16–րդ բաժիններում:

Փորձարկման ֆիզիկական մեթոդներ՝

- առաջացող ֆիզիկական գործոնների մակարդակների չափում (աղմուկ, ընդհանուր եւ տեղային թրթռում, օդային եւ հպումային ուլտրաձայն, ճառագայթումներ՝ ուլտրամանուշակագույն, օպտիկական ընդգրկույթի, ենթակարմիր, լազերային, ռենտգենային, էլեկտրական, մագնիսական եւ էլեկտրամագնիսական դաշտեր ու ճառագայթումներ, օդափոնային կազմ, օգտագործողի հպման համար հասանելի մակերեւույթների ջերմաստիճանը:

5. ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԳՈՐԾԻՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՄԱԿՆՇՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մեքենաշինության, գործիքաշինության, էլեկտրատեխնիկայի արտադրատեսակների մասին տեղեկությունները պետք է շարադրվեն արտադրողի կողմից՝ արտադրատեսակի մականշվածքում եւ փաստաթղթերում: Բացի արտադրատեսակներն արտադրողի հասցեից՝ տեղեկություններում պետք է թվարկվեն այն ցուցանիշները, որոնք առնչվում են շուկայում արտադրատեսակների շուկայահանման պաշտպանական եւ շահագործման հատկություններին, իրավական կողմերին, ինչպես նաեւ պետք է պարունակվի ցանկացած այլ տվյալ, որը հնարավոր

օգտագործողի համար ապահովում է արտադրատեսակների համապատասխան ընտրության եւ օգտագործման հնարավորություն ու կարող է կապված լինել նրա առողջության եւ անվտանգության հետ:

Մականշվածքը դրվում է անմիջապես արտադրատեսակի վրա:

Մականշվածքը պետք է լինի տեսանելի, ընթեռնելի, չջնջվող եւ պետք է զետեղված լինի կամ արտադրատեսակի վրա, կամ դրա օգտագործման հրահանգի մեջ: Մականշվածքը հնարավորության դեպքում պետք է զետեղվի առետրային փաթեթվածքի վրա: Մականշվածք չի զետեղվում, եթե արտադրատեսակն ունի շատ փոքր չափսեր, կամ ունի հատուկ հատկանիշներ, որոնք թույլ չեն տալիս մականշվածք զետեղել:

Արգելվում է զետեղել այնպիսի նշաններ կամ կատարել այնպիսի մակագրություններ, որոնք կարող են մոլորեցնել երրորդ կողմերին՝ շուկայում այդ արտադրանքի շրջանառության նշանով կատարված մականշվածքի նշանակության կամ գրաֆիկական պատկերագրի առնչությամբ: Արտադրատեսակի, դրա փաթեթվածքի կամ օգտագործման հրահանգի վրա կարելի է կատարել ցանկացած այլ մակնշում՝ պայմանով, որ այն բացասաբար չի ազդի մականշվածքի տեսանելիության եւ ընթեռնելիության վրա:

Անմիջապես արտադրատեսակի վրա զետեղվող մականշվածքը պետք է ներառի արտադրողի անվանումը եւ (կամ) նրա առետրային նշանը, արտադրատեսակի անվանումը, չափսերը, զանգվածը, էլեկտրասնուցումը, (անհրաժեշտության դեպքում), գործարանային համարը, արտադրման ամսաթիվը (տարին, պիտանելիության ժամկետը կամ պիտանելիության ժամկետի ավարտը, այն նորմատիվ փաստաթուղթը, որի պահանջներին համապատասխանում է արտադրատեսակը, շրջանառության նշանը, արտադրողի տեխնիկական փաստաթղթերին համապատասխան այլ տեղեկություններ:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

Արտադրատեսակի փաթեթվածքի վրա զետեղվող մականշվածքի վրա պետք է

նշվի արտադրող երկրի անվանումը, արտադրողի անվանումը, իրավաբանական հասցեն, առետրային նշանը, արտադրատեսակի անվանումը, այն նորմատիվային փաստաթուղթը, որի պահանջներին համապատասխանում է արտադրատեսակը, չափսը (առկայության դեպքում), արտադրատեսակի խնամքի եղանակները, արտադրության տարեթիվը, պիտանիության ժամկետը կամ պիտանիության ժամկետի մարման ամսաթիվը, շրջանառության նշանը, արտադրողի փաստաթղթերին համապատասխան ներկայացվող այլ տեղեկություններ:

Մականշվածքը պետք է լինի լավ ընթեռնելի եւ մշտական: Մականշվածքի զետեղման եղանակն ընտրում է արտադրողը՝ արտադրատեսակի արտադրման տեխնոլոգիական պրոցեսին համապատասխան: Թույլատրվում է տեղեկությունները նշել պատկերագրի ձեւով, ինչպես նաեւ դժվարությամբ հեռացվող ներկով՝ անմիջապես արտադրատեսակի վրա: Տեղեկությունները պետք է լինեն դյուրընթեռնելի եւ չջնջվեն արտադրանքի պահպանման, փոխադրման, իրացման եւ ըստ նշանակության օգտագործման ժամանակ:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

Մականշվածքը պետք է շարադրված լինի ռուսերենով:

Արտադրատեսակների փաթեթները պետք է մականշվեն պատկերագրերով, (նշաններով եւ (կամ) տեքստով), որոնցով գրավոր ցուցումներ են տրվում արտադրատեսակների պահպանման եւ (կամ) փոխադրման համար արտադրողի կողմից սահմանված պայմանների մասին՝ նորմատիվային (շահագործման) փաստաթղթերին համապատասխան:

Մականշվածքում նշվում են բոլոր անհրաժեշտ տվյալները, որոնք ապահովում են արտադրանքի անվտանգ շահագործումը՝ արտադրանքի հիմնական տեխնիկական բնութագրերը, նախազգուշական գրությունները, անհրաժեշտության դեպքում՝ վտանգի նշանները (մագնիսական, լազերային եւ այլն), անհատական պաշտպանության միջոցների օգտագործման նկատմամբ պահանջները, անվտանգ հեռավորությունները կամ շահագործման թույլատրելի տեւողությունը եւ այլն:

Սարքավորանքի շահագործումն իրականացվում է որոշակի արտադրատեսակների համար կազմված նորմատիվ փաստաթղթերի եւ սանիտարական օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթերի համաձայն, որոնք պարունակում են համապատասխան բնութագրերի նկատմամբ ներկայացվող պահանջներ:

Մեքենաների եւ սարքավորումների շահագործման ընթացքում անվտանգության ապահովման նկատմամբ այն պահանջները, որոնք նշված են հատուկ ցուցանակների վրա, ինչպես նաեւ նախազգուշական նշաններն ու մակագրությունները տեղադրվում են մեքենաշինության, գործիքաշինության, էլեկտրատեխնիկայի արտադրատեսակների տեսանելի մասերում: Արտադրողը պետք է տեղեկություններն այնպես տրամադրի, որ հնարավոր լինի ընդունել համապատասխան նախազգուշական միջոցները եւ ապահովել բոլոր վտանգավոր գործոնների նկատմամբ համապատասխան հսկողությունը՝ պաշտպանական միջոցառումների ամբողջ համալիրի օգտագործմամբ:

Առողջության համար պոտենցիալ մեծ վտանգ ներկայացնող մեքենաները եւ սարքավորումները (ուլտրամանուշակագույն սարքեր, լազերային արտադրատեսակներ եւ այլն) օգտագործողին պետք է նախազգուշացվի առկա ռիսկի մասին: Արտադրատեսակների վտանգավորությունը նշվում է համապատասխան ձեւով:

Ուլտրամանուշակագույն ճառագայթման սարքերը մակնշվում են նախազգուշական գրությամբ՝ «ՈւՇԱԴԻՈՒԹՅՈՒՆ. Ուլտրամանուշակագույն ճառագայթումը կարող է առաջացնել աչքի եւ մաշկի վնասվածք: Ուշադիր ծանոթացեք ցուցման հետ: Դրեք արտադրատեսակի հետ տրամադրված պաշտպանիչ ակնոցները:» Գեղեցկության սրահներում եւ նմանատիպ վայրերում կիրառման համար նախատեսված ուլտրամանուշակագույն ճառագայթման սարքերի համար նախազգուշական գրությունները կարող են ներկայացվել ազդագրի վրա, որը մշտապես ամրացված է ուլտրամանուշակագույն ճառագայթման սարքի մոտակայքում:

Այն ուլտրամանուշակագույն ճառագայթման սարքերը, որոնց պայծառությունը

գերազանցում է 100000 քղ/մ²-ը, մակնշվում են նախազգուշական գրությամբ՝ «Հզոր լույս: Չնայել ճառագայթիչին»:

Ուլտրամանուշակագույն ճառագայթներով ճառագայթահարման կայանքները, որոնք նախատեսված են շրջակայքում մարդկանց բացակայության ժամանակ շահագործման համար, մակնշվում են համապատասխան նախազգուշական գրությամբ:

Տարբեր դասերի լազերային արտադրատեսակներ մակնշվում են հետևյալ նախազգուշական գրություններով՝ «Փնջին չնայել», «Լազերային ճառագայթում», «Խուսափեք անմիջական եւ ցրված ճառագայթներով աչքի ու մաշկի ճառագայթումից», «Լազերային բացվածք (ապերտուր)» եւ այլն՝ լազերային արտադրատեսակի դասի նշումով: Լազերային արտադրատեսակները, որոնք ճառագայթում են առաջացնում սպեկտրի անտեսանելի մասում, մակնշվում են համապատասխան նախազգուշացնող գրությամբ՝ «Անտեսանելի լազերային ճառագայթում» եւ այլն:

Շահագործման փաստաթղթերի «Անվտանգության վերաբերյալ պահանջներ» բաժինն ընդգրկում է արտադրանքի անվտանգ շահագործման ապահովման մասին հիմնական պահանջները, ինչպես նաեւ արտադրանքի արտադրության մասին հիմնական պահանջները սանիտարական օրենսդրության հիմնական փաստաթղթերի համաձայն՝ կատարելով հղումներ այդ փաստաթղթերին, այդ թվում՝ աշխատատեղերում արտադրական սարքավորումների օգտագործման եւ վնասակար գործոնների մակարդակների, կոլեկտիվ եւ անհատական պաշտպանության միջոցների, աշխատանքի ռեժիմների, աշխատողներին պարբերական բժշկական ստուգման եւ (անհրաժեշտության դեպքում) արտադրական հսկողության ենթարկելու վերաբերյալ պահանջներ: Այս բաժնում պետք է նշվի, որ արտադրանքը պետք է անվտանգ լինի այն արտադրելիս եւ կիրառելիս, որը պետք է հաստատվի սանիտարահամաճարակաբանական փորձաքննության արդյունքներով:

**ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԳՈՐԾԻՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱՅԻ
ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՑԱՆԿ՝ ՄՄ ԱՏԳ ԱԱ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ**

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի օգոստոսի
16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)

Ապրանքի դասակարգումը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի	Ապրանքի կրճատ անվանումը
2513	Հղկանյութեր
2601 - 2617	Խանքաքարեր եւ խտահանքեր
Խումբ 84. Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ եւ մեխանիկական հարմարանքներ, դրանց մասերը	
8401	Միջուկային ռեակտորներ. ջերմանջատիչ տարրեր (ՋԱՏ՝ չճառագայթված միջուկային ռեակտորների համար. սարքավորումներ եւ հարմարանքներ՝ իզոտոպերի բաժանման համար
8421 19 700 9	Այլ
8418-ից 8418 21, 8418 30 200, 8418 30 800, 8418 40 200, 8418 40 800	Պահարաններ, սառնարանային, սառցարանային խցիկներ
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)	
8418 50	Կահույք (խցիկներ, պահարաններ, ցուցափեղկեր, վաճառասեղաններ եւ համանման կահույք)՝ պահպանման եւ ցուցադրման համար՝ ներսառնարանային կամ սառցարանային սարքավորումներով, այլ
8422 40 000-ից	Փաթեթավորման եւ ծրարման համար սարքավորումներ (ներառյալ ջերմանստեցմամբ ապրանք ծրարող սարքավորումները՝ փաթեթավորման նյութով)՝ նախատեսված շաքարի ու օսլայի եւ մաթի արդյունաբերության համար, պահածոյացման բանկաներն ու շշերը բացելու եւ կրկին փակելու սարքավորումներ
8423-ից	Սննդամթերքը կշռելու համար սարքավորումներ
8432-ից	Գյուղատնտեսության, այգեգործության մեջ օգտագործվող մեքենաներ՝ հողի նախապատրաստման եւ մշակման համար. Գլոբններ՝ սիզամարգերի եւ մարգահրապարակների համար
8433-ից	Մեքենաներ եւ մեխանիզմներ. Խոտհնձիչներ՝ սիզամարգերի, զբոսայգիների եւ մարգահրապարակների համար
8434-ից	Կթելու սարքավորումներ եւ ապարատներ, կաթի մշակման ու վերամշակման սարքավորումներ
8437-ից	Ալյուրադացման արդյունաբերության եւ հացահատիկային ու լոբազգի կուլտուրաների մշակման համար սարքավորումներ՝ բացի գյուղատնտեսական ֆերմաներում օգտագործվող սարքավորումներից
8438	Սարքավորումներ սննդամթերքների կամ ըմպելիքների

	արդյունաբերական պատրաստման կամ արտադրության համար, այլ խմբում չնշված կամ չներառված՝ բացի կենդանական կամ բուսական ծագում ունեցող ճարպերի և յուղերի լուծամզման կամ պատրաստման համար սարքավորումներից
Խումբ 85. Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, դրանց մասերը, ձայնագրման և ձայնավերարտադրման հարմարանքներ, հեռուստատեսային պատկերի ու ձայնի ձայնագրման և վերարտադրման համար հարմարանքներ, դրանց մասերն ու պարագաները	
8509 40 000 0	Մենդամթերքի մանրիչներ և հարիչներ, մրգերի և բանջարեղենի համար հյութաքամիչներ
8512 40 000	Ապակեմաքրիչներ, հակասառցապատներ և հակաքրտնապատներ
8516 10	Էլեկտրասարքեր ջրատաքացման համար՝ ոչ իներցիոն կամ կուտակող և սուզվող էլեկտրաջեռուցիչներ, ջրատաքացուցիչներ
8516 10 110 0	Ջրատաքացուցիչներ՝ ոչ իներցիոն
8516 10 800 0	Այլ (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)
8516 50 000 0	Միկրոալիքային վառարաններ
8516 60	Այլ վառարաններ, էլեկտրասալեր, էլեկտրասալիկներ, եփման էլեկտրակաթսաներ, գրիլներ և ռոստերներ
8516 60 10	Էլեկտրասալեր (ունեն առնվազն վառարան և էլեկտրատաքացուցիչ տարրերով պանել)
8516 60 101 0	Կենցաղային, մշտական (ստացիոնար) էլեկտրասալեր
8516 60 109 0	Էլեկտրասալեր, եփման էլեկտրակաթսաներ և էլեկտրասալերի համար նախատեսված էլեկտրատաքացուցիչ տարրերով պանելներ
8517 12 000 0	Հեռախոսային ապարատներ՝ բջջային կապի և առանց հաղորդալարի կապի այլ ցանցերի համար
8517 61 000	Բազային կայաններ
Խումբ 87. Վերգետնյա տրանսպորտային միջոցներ՝ բացի երկաթուղային կամ տրամվայի շարժակազմից, դրանց մասերը և պարագաները	
8709 19	Հատուկ նախատեսված՝ բարձր ռադիոակտիվություն ունեցող նյութերի փոխադրման համար
Խումբ 90. Գործիքներ և ապարատներ՝ օպտիկական, լուսանկարչական, կինեմատոգրաֆիական, չափիչ, հսկիչ, ճշգրիտ, բժշկական կամ վիրաբուժական, դրանց մասերը և պարագաները	
9013 20 000 0	Լազերներ (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)

Հսկողության ենթակա արտադրանքին (ապրանքներին) եւ դրա անվտանգության ցուցանիշներին ներկայացվող հիմնական պահանջները

Հ h/h	Արտադրանքի (ապրանքի) անվանումը	Սանիտարահամաճարակաբանական պահանջները		Ծանոթագրություններ
		ցուցանիշ	թույլատրելի մակարդակներ	
7. Մեքենաշինության, գործիքաշինության եւ էլեկտրատեխնիկայի արտադրանք (բացառությամբ խմելու ջրի եւ սննդամթերքի հետ շփվող արտադրանքի)				
7.1	Մեքենաշինության, գործիքաշինության եւ էլեկտրատեխնիկայի արտադրության ու կենցաղային նշանակության արտադրանք՝ բացի պահեստային մասերից, կոմպլեկտավորող արտադրատեսակներից, արտադրանքի անպետք կույտերից, որոնք պահանջում են մոնտաժման փորձարկումների կատարում շահագործման վայրում (տեխնոլոգիական գծեր, խոշոր ծավալաչափի հաստոցներ եւ ագրեգատներ՝ ստացիոնար եւ այլ տեսակի)	Ա) Վնասակար խտանյութեր, որոնք աշխատանքային գոտում արտադրական նշանակության սարքավորման շահագործման ժամանակ արտազատվում են օդ	չպետք է գերազանցեն աշխատանքային գոտու օդում՝ դրանց համար սահմանված ՍԹԽ-ի կամ ՆԿԱՄ-ի 30%-ը:	Վնասակար նյութերի ՍԹԽ-ի եւ ՆԿԱՄ-ի ցանկը աշխատանքային գոտու օդում
		Բ) Վնասակար խտանյութեր, որոնք մթնոլորտ են արտազատվում կենցաղում, հասարակական շենքերի տարածքներում օգտագործման համար նախատեսված՝ մեքենաշինության ոլորտի սարքավորում (արտադրատեսակ) կիրառելիս	չպետք է գերազանցեն դրանց միջին օրական ՍԹԽ-ն, իսկ միջին օրական ՍԹԽ-ի բացակայության դեպքում՝ մթնոլորտային օդում տվյալ նյութերի միանվագ առավելագույն ՍԹԽ-ն կամ ՆԿԱՄ-ը:	Բնակելի եւ հասարակական շենքերի սենքերի օդային միջավայրն աղտոտող առավել հիգիենիկ կարեւորություն ունեցող նյութերի ցանկը
		Աղմուկ		
		Ա) Մեքենաշինության, գործիքաշինության եւ արտադրական նշանակության էլեկտրատեխնիկայի սարքավորումներից (արտադրանքից) առաջացող աղմուկը, ձայնի մակարդակը		
		- աշխատատեղերում	ձայնի առումով ՍԹԽ-ի	Ձայնային ճնշման սահմանային

		սահմաններում այն աշխատատեղերում, որոնց համար այն նախատեսված է՝ կախված առաջարկվող աշխատանքի ծանրությունից եւ լարվածությունից	թույլատրելի մակարդակը օկտավային շերտերում միջին երկրաչափական հաճախականություններում, ձայնի մակարդակները եւ ձայնի մակարդակների համարժեքները՝ II գլխի 7-րդ բաժնի 7.1 հավելվածի 1.1 աղյուսակի համաձայն
	– բնակելի եւ հասարակական շենքերում ու բնակելի կառուցապատման տարածքներում	ձայնի առումով ՍԹՄ-ի սահմաններում, որի համար այն նախատեսված է (կախված դրանց նշանակությունից)	Ձայնային ճնշման թույլատրելի մակարդակը օկտավային շերտերում՝ միջին երկրաչափական հաճախականություններում, ձայնի մակարդակները եւ ձայնի առավելագույն ու համարժեք մակարդակները՝ II գլխի 7-րդ բաժնի 7.1 հավելվածի 1.3 աղյուսակի համաձայն
	Բ) Կենցաղում օգտագործման համար նախատեսված հասարակական սպառման ապրանքներից եւ հասարակական շենքերում (այդ թվում՝ գրասենյակներում) օգտագործման համար նախատեսված արտադրատեսակներից առաջացող աղմուկ, ձայնի մակարդակը եւ ձայնի համարժեք մակարդակ/ձայնի առավելագույն մակարդակներ	40 դԲԱ-ից ոչ ավելի	Պետք է համապատասխանեն ժողովրդական սպառման ապրանքների տվյալ խմբին ներկայացվող պահանջներին՝ հաշվի առնելով շահագործման տեւողությունը (ձայնային ճնշման թույլատրելի մակարդակը օկտավային շերտերում՝ միջին երկրաչափական հաճախականություններում, ձայնի մակարդակները եւ ձայնի համարժեք մակարդակները՝ II գլխի 7-րդ բաժնի 7.1 հավելվածի 1.4 աղյուսակի համաձայն)
	ա) արտադրատեսակներ, որոնք նախատեսված են բնակարանների օժանդակ, ոչ բնակելի տարածքներում շահագործման համար, օրինակ՝ սառնարաններ, սառցարաններ եւ համարժեք	45/55 դԲԱ-ից ոչ ավելի	

		սարքավորումներ		
		բ) երկարատև օգտագործման արտադրատեսակներ (օրվա մեջ 1-6 ժամ), որոնք նախատեսված են տնտեսական եւ խոհանոցային աշխատանքների ավտոմատացման համար, օրինակ՝ վացքի եւ կարի մեքենաները, կուլտուր-կենցաղային նշանակության արտադրատեսակներ	70/75 դՔԱ-ից ոչ ավելի	
		գ) կարճաժամկետ օգտագործման արտադրատեսակները (օրվա մեջ 1 ժամից պակաս), որոնք նախատեսված են տնտեսական եւ խոհանոցային աշխատանքների համար, օրինակ՝ փոշեկուլները, խոհանոցային կոմբայնները, սրճադացները, հարիչները	80/85 դՔԱ-ից ոչ ավելի	
		դ) արդյունաբերական եւ կենցաղային նշանակության արտադրատեսակները, օրինակ՝ էլեկտրական գայլիկոնիչները, էլեկտրական ռանդաները	80/90 դՔԱ-ից ոչ ավելի	Աշխատանքների տեղականության սահմանափակում, անհրաժեշտության դեպքում՝ ԱՊՄ-ի, շահագործման հրահանգներում նշումներ կատարելու եւ նախազգուշական մականշվածքի միջոցով
		ե) սանիտարահիգիենիկ նշանակության էլեկտրական սարքերը, օրինակ՝ ֆեներ, էլեկտրական ածելիներ	70/75 դՔԱ-ից ոչ ավելի	
		զ) կենցաղային օրգտեխնիկա, օրինակ՝	65/75 դՔԱ-ից ոչ ավելի	

	բազմացնող տեխնիկա		
	է) Անհատական էլեկտրոնային հաշվողական մեքենա (ԱԷՀՄ) (համակարգային բլոկեր)	50 դԲԱ-ից ոչ ավելի	
	Տեղային թրթռում		
	Բռնալծակների եւ մեքենաշինության, գործիքաշինության ու էլեկտրատեխնիկայի այլ արտադրատեսակների մակերեսային սարքերի վրա գրանցվող թրթռում, որոնք նախատեսված են ձեռքի, ոտնաթաթերի եւ օպերատորի մարմնի այլ մասերի հետ շփման համար. Ա) արտադրական նշանակության, ճշգրտված եւ համարժեքային ճշգրտված արժեքներ (կամ դրանց լրգարիթմական մակարդակները)		
	- թրթռման արագացում (վիբրոարագացում)	2,0 մ/վ ² -ից (126 դԲ) ոչ ավելի	
	- թրթռման արագություն (վիբրոարագություն)	2,0 x 10 ⁻² մ/վ-ից (112 դԲ) ոչ ավելի	
	Բ) ժողովրդական սպառման ապրանքներ, ճշգրտված եւ համարժեքային ճշգրտված արժեքներ (կամ դրանց լրգարիթմական մակարդակները)		
	- թրթռման արագացում	116 դԲ-ից ոչ ավելի	

	(վիբրոարագացում) – թրթռման արագություն (վիբրոարագություն)	102 դԲ-ից ոչ ավելի	
	Թրթռում՝ ընդհանուր		
	Ա) Մեքենաշինության, գործիքաշինության եւ էլեկտրատեխնիկայի արդյունաբերական նշանակության սարքավորումից (արտադրանքից) առաջացող թրթռում (հաշվի առնելով թրթռամեկուսացման եւ թրթռակլանման բոլոր անհրաժեշտ միջոցների օգտագործումը) - աշխատատեղում, որի համար այն նախատեսած է, համարժեքային ճշգրտված արժեքներ (կամ դրանց լրգարիթմական մակարդակները). ա) մշտական աշխատատեղերում՝ ներառյալ հաստոցները՝ մետաղամշակման եւ փայտամշակման, դարբնոցամամլիչային սարքավորումները, գծային մեքենաները, էլեկտրական մեքենաները, մնայուն էլեկտրական կայանքները, պոմպային ագրեգատները, հորանցքների հորատման սարքավորումները, հորատման հաստոցները,	0,1 մ/վ ² -ից (100 դԲ) ոչ ավելի 0.2 x 10 ⁻² մ/վ-ից (92 դԲ) ոչ ավելի	

		<p>անասնաբուծության, ցորենի մաքրման եւ տեսակավորման համար մեքենաները (այդ թվում՝ չորացնող գործիքներ), շինանյութերի արտադրության սարքավորումները (բացի բետոնափոփններից), քիմիական եւ նավթաքիմիական արդյունաբերության սարքերը</p> <p>– թրթռման արագացում (վիբրոարագացում)</p> <p>– թրթռման արագություն (վիբրոարագություն)</p>		
		<p>բ) աշխատատեղերում՝ պահեստներում, ճաշարաններում, կենցաղային, հերթափոխային եւ այլ արտադրական շինություններում, որտեղ չկան թրթռում առաջացնող մեքենաներ, (թրթռման հնարավոր աղբյուրներ՝ տեղեկանքի համաձայն եւ սարքավորման այլ տեսակներ)</p> <p>– թրթռման արագացում (վիբրոարագացում)</p> <p>– թրթռման արագություն (վիբրոարագություն)</p> <p>գ) աշխատատեղերում՝ գործարանի կառավարման</p>	<p>0,04 մ/վ²-ից (92 դԲ) ոչ ավելի</p> <p>0,079 x 10⁻² մ/վ-ից (84 դԲ) ոչ ավելի</p>	

Օկտավային շերտագծերի միջին երկրաչափական հաճախականությունները, Հց	Թույլատրելի արժեքները, դԲ	
	Թրթռա-արագություն	Թրթռա-արագացում
2	100	45
4	91	42
8	85	42
16	84	48
31,5	84	54
63	84	60
Ճշգրտված մակարդակ, դԲ	84	92

2.4.2. Տեղային թրթռում

2.4.2.1. ԼՍԱ-ի շահագործումից առաջացող տեղային թրթռման թույլատրելի մակարդակները

Օկտավային շերտագծերի միջին	Թույլատրելի արժեքներ, դԲ
----------------------------	--------------------------

Երկրաչափական հաճախականություններ, Հg	Թրթռա- արագություն	Թրթռա- արագացում
8	105	63
16	99	63
31,5	99	69
63	99	75
125	99	81
250	99	87
500	99	93
1000	99	99
Ճշգրտված մակարդակ, դԲ	102	116

2.5. Նորմավորվող չափորոշիչները

2.5.1. Մարդու վրա ներգործող մշտական, ինչպես նաև ոչ մշտական թրթռման հիգիենիկ գնահատումը պետք է կատարվի հետևյալ մեթոդներով՝

- նորմավորվող չափորոշիչների հաճախականության (սպեկրալ) անալիզով.

- ինտեգրալ գնահատմամբ ըստ նորմավորվող պարամետրի հաճախականության:

- ինտեգրալ գնահատմամբ՝ հաշվի առնելով վիբրացիայի ազդեցության ժամանակը ըստ նորմավորվող չափորոշիչի համարժեքային (ըստ էներգիայի) մակարդակի:

2.5.2. Հաճախականությունների նորմավորվող տիրույթը որոշվում է՝

- Տեղային թրթռման (վիբրացիայի) համար որպես 8, 16, 31,5, 63, 125, 250, 500, 1000 Հg միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր:

- Ընդհանուր թրթռման (վիբրացիայի) համար 0,8, 1, 1,25, 1,6, 2,0, 2,5, 3,15, 4, 5,0, 6,3, 8,0, 10,0, 12,5, 16,0, 20,0, 25,0, 31,5, 40,0, 50,0, 63,0, 80,0 Հg միջին երկրաչափական հաճախականության օկտավային կամ 1/3 օկտավային շերտեր:

2.5.3. Հաճախականությունների (սպեկտրալ) անալիզի դեպքում նորմավորվող չափորոշիչներ են համարվում հաճախականությունների 1/1 եւ 1/3 օկտավային շերտերով չափվող վիբրաարագության (V) եւ վիբրաարագացման (a) միջին

քառակուսային արժեքները կամ դրանց լոգարիթմական մակարդակները (L_v , L_a):

2.5.4. Վիբրաարագության լոգարիթմական մակարդակները (L_v), դԲ-ով, որոշում են հետևյալ բանաձեռով՝

$$L_v = 20 \lg \frac{V}{5 \times 10^{-8}}, \text{ որտեղ}$$

V ՝ վիբրաարագության միջին քառակուսային արժեքն է, մ/վրկ.

5×10^{-8} ՝ վիբրաարագության հիմքային արժեքն է, մ/վրկ:

2.5.5. Վիբրաարագացման լոգարիթմական մակարդակները (L_a), դԲ-ով, որոշվում են հետևյալ բանաձեռով՝

$$L_a = 20 \lg \frac{a}{1 \times 10^{-6}}, \text{ որտեղ}$$

a ՝ վիբրաարագացման միջին քառակուսային արժեքն է, մ/վ²:

1×10^{-6} ՝ վիբրաարագացման հիմքային արժեքն է, մ/վ²:

2.5.6. Ըստ հաճախականության ինտեգրալային գնահատման դեպքում նորմավորվող չափորոշիչներ են համարվում վիբրաարագության եւ վիբրաարագացման (U) ճշգրտված արժեքը կամ դրանց լոգարիթմական մակարդակները (L_U), որոնք չափվում են ճշգրտող ֆիլտրերի կամ հաշվարկվում են հետևյալ բանաձեռերի օգնությամբ՝

$$U = \sqrt{\sum_{i=1}^n (U_i \times K_i)^2},$$

կամ

$$L_U = 10 \lg \sum_{i=1}^n 10^{0.1(L_{U_i} + L_{K_i})}, \text{ որտեղ}$$

U_i , L_{U_i} ՝ թրթռման արագության կամ թրթռման արագացման միջին քառակուսային արժեքն է (կամ դրանց լոգարիթմական մակարդակները) i -րդ

հաճախականության գոտում,

որտեղ n ՝ հաճախականության շերտերի թիվն է (1/3 կամ 1/1 օկտավում) հաճախականությունների նորմավորվող միջակայքում.

K_i , L_{ki} ՝ կշռային գործակիցներն են i -րդ հաճախականության գոտու համար ստորեւ բերված աղյուսակներին համապատասխան լոկալ տատանումների համար որոշվող՝ համապատասխանաբար բացարձակ արժեքների կամ դրանց լոգարիթմական մակարդակների համար:

K_i եւ L_{ki} (դԲ) կշռային գործակիցների արժեքները տեղային թրթռման համար

Միջին երկրաչափական հաճախականությունների օկտավային շերտերը, Հց	Կշռային գործակիցների արժեքները, դԲ			
	թրթռման արագության համար		թրթռման արագացման համար	
	K_i	L_{ki}	K_i	L_{ki}
8	1,0	0	0,5	-6
16	1,0	0	1,0	0
31,5	0,5	-6	1,0	0
63	0,25	-12	1,0	0
125	0,125	-18	1,0	0
250	0,063	-24	1,0	0
500	0,0315	-30	1,0	0
1000	0,016	-36	1,0	0

2.5.7. Թրթռման ինտեգրալ գնահատման դեպքում, հաշվի առնելով վերջինիս ազդեցության ժամանակը ըստ համարժեք (ըստ էներգիայի) մակարդակի, նորմավորվող չափորոշիչներ են համարվում վիբրաարագության կամ վիբրաարագացման ($U_{hաճ}$) համարժեք ճշգրտված արժեքը կամ հետեւյալ բանաձեւով չափված կամ հաշվարկված վերջիններիս լոգարիթմական մակարդակը ($L_{U_{hաճ}}$)՝

$$U_{hաճ} = \sqrt{\frac{\sum_{i=1}^n U_i^2 \cdot t_i}{T}},$$

կամ

$$L_{U_{hաճ}} = 10 \lg \left(\frac{1}{T} \sum_{i=1}^n 10^{0,1L_i} \cdot t_i \right), \text{ որտեղ}$$

U_i ՝ հաճախականությամբ ճշգրտված՝ վիբրաարագության (v, L_v), մ/վ, կամ վիբրաարագացման (a, L_a) մ/վ² վերահսկվող չափորոշչի արժեքն է.

t_i ՝ վիբրացիայի գործողության ժամանակն է, Ժ.

$$T = \sum_{i=1}^n t_i,$$

n ՝ վիբրացիայի միջակայքերի ընդհանուր թիվը:

K_i եւ L_{ki} կշռային գործակիցների արժեքներն ընդհանուր թրթռման համար, դԲ

Միջին երկրաչափական հաճախականության շերտերը, Հց	Ընդհանուր թրթռում							
	թրթռման արագացման համար							
	1/3 օկտավում				1/1 օկտավում			
	Z_0		X_0, Y_0		Z_0		X_0, Y_0	
	K_i	L_{ki}	K_i	L_{ki}	K_i	L_{ki}	K_i	L_{ki}
0,8	0,45	-7	1,0	0				
1,0	0,5	-6	1,0	0	0,5	-6	1,0	0
1,25	0,56	-5	1,0	0				
1,6	0,63	-4	1,0	0				
2,0	0,71	-3	1,0	0	0,71	-3	1,0	0
2,5	0,8	-2	0,8	-2				
3,15	0,9	-1	0,63	-4				
4,0	1,0	0	0,50	-6	1,0	0	0,5	-6
5,0	1,0	0	0,4	-8				
6,3	1,0	0	0,315	-10				
8,0	1,0	0	0,25	-12	1,0	0	0,25	-12
10,0	0,8	-2	0,2	-14				
12,5	0,63	-4	0,16	-16				
16,0	0,50	-6	0,125	-18	0,5	-6	0,125	-18
20,0	0,4	-8	0,1	-20				
25,0	0,315	-10	0,08	-22				
31,5	0,25	-12	0,063	-24	0,25	-12	0,063	-24
40,0	0,2	-14	0,05	-26				
50,0	0,16	-16	0,04	-28				
63,0	0,125	-18	0,0315	-30	0,125	-18	0,0315	-30
80,0	0,1	-20	0,025	-32				

Ծանոթագրություն. 2-րդ եւ 3-րդ կատեգորիաների ընդհանուր վիբրացիաները

գնահատելիս քաշային գործակիցների արժեքները X_o , Y_o ուղղությունների համար ընդունվում են Z_o ուղղության համար արժեքներին հավասար:

Միջին երկրաչափական հաճախականու- թյան շերտերը, ζg	Ընդհանուր թրթռում							
	թրթռման արագության համար							
	1/3 օկտավում				1/1 օկտավում			
	Z_o		X_o, Y_o		Z_o		X_o, Y_o	
	K_i	L_{ki}	K_i	L_{ki}	K_i	L_{ki}	K_i	L_{ki}
1	2	3	4	5	6	7	8	9
0,8	0,45	-27	0,4	-8				
1,0	0,063	-24	0,5	-6	0,045	-25	0,5	-6
1,25	0,09	-21	0,63	-4				
1,6	0,125	-18	0,8	-2				
2,0	0,188	-15	1,0	0	0,16	-16	0,9	-1
2,5	0,25	-12	1,0	0				
3,15	0,35	-9	1,0	0				
4,0	0,5	-6	1,0	0	0,45	-7	1,0	0
5,0	0,63	-4	1,0	0				
6,3	0,8	-2	1,0	0				
8,0	1,0	0	1,0	0	0,9	-1	1,0	0
10,0	1,0	0	1,0	0				
12,5	1,0	0	1,0	0				
16,0	1,0	0	1,0	0	1,0	0	1,0	0
20,0	1,0	0	1,0	0				
25,0	1,0	0	1,0	0				
31,5	1,0	0	1,0	0	1,0	0	1,0	0
40,0	1,0	0	1,0	0				
50,0	1,0	0	1,0	0				
63,0	1,0	0	1,0	0	1,0	0	1,0	0
80,0	1,0	0	1,0	0				

Ծանոթագրություն. 2-րդ եւ 3-րդ կատեգորիաների ընդհանուր վիբրացիաները գնահատելիս քաշային գործակիցների արժեքները X_o , Y_o ուղղությունների համար ընդունվում են Z_o ուղղության համար արժեքներին հավասար:

3. Ինֆրաձայնի թույլատրելի մակարդակները

3.1. Արտադրական սենքերում ինֆրաձայնի սահմանային թույլատրելի մակարդակները բնակելի կառուցապատման տարածքներում եւ բնակելի ու հասարակական շենքերում ինֆրաձայնի թույլատրելի մակարդակները

Թիվ ը/հ	Սենքերի նշանակությունը	Ձայնային ճնշման մակարդակները, դԲ, միջին երկրաչափական հաճախականություններով օկտավային շերտերում, Հց				Ձայնային ճնշման ընդհանուր մակարդակը, դԲ Լին
		2	4	8	16	
1	Տարբեր աստիճանների ծանրության եւ աշխատանքային գործընթացի լարվածության աշխատանքներ արտադրական սենքերում ու ձեռնարկությունների տարածքում՝					
1.1	- տարբեր աստիճանների ծանրության աշխատանքներ	100	95	90	85	100
1.2	- տարբեր աստիճանների մտավոր-հուզային լարվածության աշխատանքներ	95	90	85	80	95
2	բնակելի կառուցապատման տարածք	90	85	80	75	90
2	բնակելի եւ հասարակական շենքերի սենքեր	75	70	65	60	75

3.2. Լայն սպառման ապրանքներից առաջացող ինֆրաձայնի թույլատրելի մակարդակները

Միջին երկրաչափական հաճախականության եռօկտավային շերտեր, կՀց	2	4	8	16
Ձայնային ճնշման մակարդակը, դԲ	75	70	65	60

3.2.1. Ձայնային ճնշման ընդհանուր մակարդակը չպետք է գերազանցի 75 դԲ-ին:

3.3. Եզրույթներ եւ սահմանումներ

Ինֆրաձայն՝ լսելի (ակուստիկ) հաճախականության միջակայքի ստորին շերտագծից՝ 20 Հց-ից (Հերց) ցածր հաճախականության ձայնային տատանումներ եւ ալիքներ:

3.4. Մարդու վրա ներգործող ինֆրաձայնի դասակարգումը

3.4.1. Ինֆրաձայնը ըստ սպեկտրի դասակարգվում է. Լայնաշերտ ինֆրաձայն՝

- մեկ օկտավից ավելի լայնությամբ չընդհատվող սպեկտրով լայնաշերտ ինֆրաձայն:

- Երանգային ինֆրաձայն. սպեկտր, որը ներառում է լսելի ընդհատվող բաղադրիչներ: Ինֆրաձայնի ներդաշնակ (հարմոնիկ) բնութագիրը սահմանվում է օկտավային հաճախականությունների շերտագծերում՝ մեկ շերտագծի մակարդակի 10 դԲ-ից ոչ պակաս գերազանցմամբ՝ հարակից շերտագծերի նկատմամբ:

3.4.2. Ըստ ժամանակային բնութագրերի՝ ինֆրաձայնը դասակարգվում է.

- Մշտական ինֆրաձայն, որի ձայնային ճնշման մակարդակը դիտարկման ընթացքում փոփոխվում է 2 անգամից ոչ ավելի (6 դԲ-ով)՝ աղմկաչափի «դանդաղ» ժամանակային բնութագրով եւ «գծային» սանդղակով չափումների ժամանակ:

- Ոչ մշտական ինֆրաձայն, որի ձայնային ճնշման մակարդակը դիտարկման ընթացքում փոփոխվում է 2 անգամից ոչ պակաս (6 դԲ-ով) աղմկաչափի «դանդաղ» ժամանակային բնութագրով եւ «գծային» սանդղակով չափումների ժամանակ:

3.4.3. Մշտական ինֆրաձայնի նորմավորվող չափորոշիչները համարվում են՝

- 2, 4, 8, 16 Հց միջին երկրաչափական հաճախականություններով օկտավային շերտերում ձայնային ճնշման մակարդակները (L_p), որոնք որոշվում են հետեւյալ բանաձեւով (դԲ).

$$L_p = 10 \lg \frac{p^2}{p_0^2},$$

p' ձայնային ճնշման միջին քառակուսային արժեքն է, Պասկալ (Պա).

P_0 ՝ օդում ձայնային ճնշման ելքային արժեքը՝ հավասար է 2×10^{-5} Պա

- Ձայնային ճնշման մակարդակը (միաթիվ գնահատականով) չափվում է աղմկաչափի «գծային» սանդղակով՝ դԲգծ-ով (պայմանով, եթե աղմկաչափի «դանդաղ» ժամանակային բնութագրով «գծային» եւ «Ա» սանդղակներով չափված մակարդակների տարբերությունը կազմում է 10 դԲ-ից ոչ պակաս):

Ոչ մշտական ինֆրաձայնի նորմավորվող չափորոշիչներ համարվում են 2, 4, 8, 16 Հց միջին երկրաչափական հաճախականություններով օկտավային շերտերում ձայնային ճնշման համարժեքային (ըստ էներգիայի) մակարդակները՝ (L_{hws}) (դԲ) եւ ձայնային ճնշման համարժեքային ընդհանուր մակարդակը (դԲգծ), որոնք որոշվում են հետեւյալ բանաձեւով.

$$L_{hws} = 10 \lg \left(\frac{1}{T} \sum_{i=1}^n t_i \times 10^{0,1L_i} \right) \text{ դԲ, որտեղ}$$

T ՝ դիտարկման ժամանակն է, ժամ

t_i ՝ L_i մակարդակով աղմուկի ազդեցության տեւողությունն է, ժամ

n ՝ ինֆրաձայնի ազդեցության ընդհատումների ընդհանուր թիվն է՝

L_i ՝ ինֆրաձայնի լոգարիթմական մակարդակը՝ i -րդ ժամանակահատվածում, դԲ.

Ձայնային ճնշման համարժեքային ընդհանուր մակարդակը կարող է որոշվել անմիջականորեն գործիքային չափման միջոցով կամ ըստ չափված մակարդակի եւ երկարատեւ ներգործության հաշվարկի միջոցով:

Որպես ինֆրաձայնի գնահատման համար լրացուցիչ բնութագիր (օրինակ՝ երանգային ինֆրաձայնի դեպքում) կարող են օգտագործվել ձայնային ճնշման մակարդակները 1,6, 2, 2,5, 3,15, 4, 5, 6,3, 8, 10, 12,5, 16 եւ 20 Հց միջին երկրաչափական հաճախականություններով 1/3 օկտավային շերտերում. դրանք անհրաժեշտ է վերահաշվարկել մակարդակներում՝ հաճախականությունների օկտավային շերտերում:

Ժամանակի ընթացքում տատանվող եւ ընդհատվող ինֆրաձայնի ձայնային ճնշման սահմանային թույլատրելի մակարդակը, ըստ «գծային» աղմկաչափի սանդղակի, չպետք է գերազանցի 120 դԲ-ն:

4. Ուլտրաձայնի թույլատրելի մակարդակները արտադրական եւ կենցաղային պայմաններում

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

4.1. Օդային ուլտրաձայնի սահմանային թույլատրելի մակարդակները արտադրական պայմաններում

Միջին երկրաչափական հաճախականության եռօկտավային շերտերը. կՀց	Ձայնային ճնշման մակարդակները, դԲ
12,5	80
16,0	90
20,0	100
25,0	105
31,5 - 100,0	110

4.1. Աշխատողների համար հպումային ուլտրաձայնի սահմանային թույլատրելի մակարդակները

Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտերը, կՀց	Վիբրաարագության պիկային արժեքները. մ/վ	Վիբրաարագության մակարդակները, դԲ
16,0 - 63,0	5×10^{-3}	100
125,0 - 500,0	$8,9 \times 10^{-3}$	105
$1 \times 10^3 - 31,5 \times 10^3$	$1,6 \times 10^{-2}$	110

Հպումային ուլտրաձայնի սահմանային թույլատրելի մակարդակներն անհրաժեշտ է ընդունել աղյուսակում նշված արժեքներից 5 դԲ-ով ցածր, այն

դեպքերում, երբ աշխատողները ենթարկվում են օդային եւ հպումային ուլտրաձայնի համատեղ ազդեցության.

Որպես կանոն՝ 100 կՀց-ից ցածր հաճախականություններով տատանումներ առաջացնող կենցաղային նշանակության ուլտրաձայնային աղբյուրներ օգտագործելիս օդային եւ հպումային ուլտրաձայնի թույլատրելի մակարդակները չպետք է գերազանցեն 75 դԲ աղբյուրի աշխատանքային հաճախականությունում:

4.2. Լայն սպառման ապրանքներից առաջացող օդային ուլտրաձայնի թույլատրելի մակարդակները

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

Միջին երկրաչափական հաճախականության եռօկտավային շերտեր, կՀց	12,5	16,0	20,0	25,0	31,5 - 100,0
(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)					
Ձայնային ճնշման մակարդակը, դԲ	70	80	90	95	100

4.3. Եզրույթները եւ սահմանումները

4.3.1. Ուլտրաձայնի թույլատրելի մակարդակ (ՈւԹՄ)՝ մակարդակ, որը ամենօրյա (հանգստյան օրերից բացի) աշխատանքի դեպքում, սակայն մեկ շաբաթում 40 ժամից ոչ ավելի, ամբողջ աշխատանքային ստաժի ընթացքում չպետք է առաջացնի ժամանակակից հետազոտության մեթոդներով հայտնաբերվող հիվանդություններ կամ առողջության վիճակի շեղումներ՝ աշխատանքի ընթացքում կամ ներկա եւ հաջորդ սերունդների կյանքի հետագա տարիներին: Ուլտրաձայնի թույլատրելի մակարդակի պահպանումը չի բացառում առողջության վիճակի խանգարումներ բարձր զգայունությամբ անձանց մոտ:

4.3.2. Ուլտրաձայնի թույլատրելի մակարդակը բնակելի եւ հասարակական շենքերում՝ դա այն գործոնի մակարդակն է, որը մարդու մոտ չի առաջացնում զգալի անհանգստություն եւ աղմուկի նկատմամբ զգայուն ֆունկցիոնալ համակարգի վիճակի կամ անալիզատորների էական որոշակի փոփոխություններ:

4.3.3. Ուլտրաձայնի աղբյուրներ՝ 18 կՀց-ից մինչեւ 100 ՄՀց եւ բարձր հաճախականությունների տիրույթում ուլտրաձայնային տատանումներ առաջացնող՝ ուլտրաձայնային տեխնոլոգիական սարքավորումների բոլոր տեսակները, ուլտրաձայնային սարքերը եւ արդյունաբերական, բժշկական, կենցաղային նշանակության սարքավորումները: Ուլտրաձայնի աղբյուրներին դասվում է նաեւ այն սարքավորումը, որը շահագործելիս ուլտրաձայնային տատանումներն առաջանում են որպես ուղեկից գործոն:

4.3.4. Շփումային միջավայր՝ միջավայր (պինդ, հեղուկ, գազանման), որտեղ տարածվում են ուլտրաձայնային տատանումներ փոխանցման շփումային եղանակի դեպքում:

4.4. Ուլտրաձայնի հիգիենիկ դասակարգումը

4.4.1. Ըստ ուլտրաձայնային տատանումների տարածման եղանակի՝ տարանջատում են՝

- շփումային եղանակ՝ ուլտրաձայնը տարածվում է ուլտրաձայնի աղբյուրի, մշակվող դետալների, դրանց հետ պահման հարմարանքների, հնչունավորված հեղուկների, բժշկական ախտորոշիչ սարքերի սկաներների, ֆիզիոթերապեւտիկ եւ վիրաբուժական ուլտրաձայնային սարքավորման ու այլնի հետ մարդու ձեռքերի կամ մարմնի այլ մասերի հետ հպումից,

- օդային եղանակ՝ ուլտրաձայնը տարածվում է օդով:

4.4.2. Ըստ ուլտրաձայնային տատանումների սպեկտրալ բնութագրերի՝ առանձնացնում են՝

- ցածր հաճախականության ուլտրաձայն՝ 16-63 կՀց, (նշված են օկտավային

շերտերի միջին երկրաչափական հաճախականությունները).

- միջին հաճախականության ուլտրաձայն՝ 125-250 կՀց,
- բարձր հաճախականության ուլտրաձայն՝ 1,0 - 31,5 ՄՀց:

4.4.3. Ըստ ուլտրաձայնային տատանումների առաջացման ռեժիմի՝ առանձնացնում են՝

- մշտական ուլտրաձայն,
- իմպուլսային ուլտրաձայն:

4.5. Ուլտրաձայնի նորմավորվող չափորոշիչները եւ նորմատիվ արժեքները աշխատողների ու բնակչության համար

4.5.1. Օդային ուլտրաձայնի նորմավորվող չափորոշիչներն են 12.5, 16, 20, 25, 31.5, 40, 50, 63, 80, 100 կՀց միջին երկրաչափական հաճախականության եռօկտավային շերտերում ձայնային ճնշման մակարդակները, դեցիբելով (դԲ):

4.5.2. Շփումային ուլտրաձայնի նորմավորվող չափորոշիչներն են վիբրաարագության պիկային արժեքները կամ դրա լոգարիթմական մակարդակները հետեւյալ բանաձեւով որոշվող 16, 31,5, 63, 125, 250, 500, 1000, 2000, 4000, 8000, 16000, 31500 կՀց միջին երկրաչափական հաճախականություններով օկտավային շերտերում՝ դեցիբելներով՝

$$L_v = 20 \lg \frac{v}{v_0}, \text{ որտեղ}$$

v ՝ վիբրաարագության պիկային արժեքն է, մ/վ.

v_0 ՝ վիբրաարագության հիմքային արժեքն է, հավասար 5×10^{-8} , մ/վ:

5. Էլեկտրամագնիսական դաշտերի ազդեցության թույլատրելի մակարդակները արտադրության պայմաններում եւ բնակչության վրա ազդեցության դեպքում

Էլեկտրամագնիսական դաշտերի ազդեցության սահմանային թույլատրելի մակարդակները արտադրության պայմաններում

5.1. Աշխատատեղերում, բնակելի եւ հասարակական շենքերում եւ կառուցապատման տարածքներում գեոմագնիսական դաշտի թուլացման սահմանային թույլատրելի մակարդակը

Գեոմագնիսական դաշտի թուլացման մակարդակի գնահատումը եւ կարգավորումը կատարվում է սենքի, օբյեկտի, տրանսպորտային միջոցի (հետայսու՝ սենքեր) եւ դրա տեղակայման վայրին հարող տարածքում բաց տարածության մեջ վերջինիս ինտենսիվության որոշման հիման վրա՝ հետագայում հաշվարկելով գեոմագնիսական դաշտի թուլացման գործակիցը:

Գեոմագնիսական դաշտի ինտենսիվությունը գնահատում են մագնիսական դաշտի լարվածության միավորներով (H) Ա/մ -ով կամ մագնիսական ինդուկցիայի միավորներով (B) Տլ (մկՏլ, նՏլ-ով), որոնք միմյանց հետ կապված են հետեւյալ հարաբերակցությամբ

$$H = B / \mu_0,$$

որտեղ $\mu_0 = 4\pi \cdot 10^{-7}$ Գն/մ՝ մագնիսական հաստատուն,

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

ընդ որում 1 Ա/մ ~ 1,25 մկՏլ, 1 մկՏլ ~ 0,8 Ա/մ:

3.2. Մեկ հերթափոխում հիպոգեոմագնիսական պայմաններում աշխատանքի ժամանակ գեոմագնիսական դաշտի ինտենսիվության թուլացման սահմանային թույլատրելի մակարդակը մինչեւ երկու ժամ սահմանվում է որպես 4-ին հավասար:

3.3. Հիպոգեոմագնիսական պայմաններում աշխատանքի ժամանակ գեոմագնիսական դաշտի ինտենսիվության թուլացման սահմանային թույլատրելի

մակարդակը մեկ հերթափոխում երկու ժամից ավելին սահմանվում է որպես 2-ին հավասար:

3.4. Գեոմագնիսական դաշտի թուլացման սահմանային թույլատրելի մակարդակը բնակելի եւ հասարակական շենքերի սենքերում (բնակելի սենյակներ եւ բնակարանների ու հանրակացարանների խոհանոցներ, հանգստյան տների, պանսիոնատների, ծերերի եւ հաշմանդամների համար տուն-ինտերնատների բնակելի սենքեր, ննջարաններ եւ խաղասենյակներ՝ նախադպրոցական հաստատություններում ու դպրոց-ինտերնատներում, ուսումնական սենյակներ՝ հանրակրթական հաստատություններում եւ մասնագիտական կրթության հաստատություններում, հիվանդանոցների ու առողջարանների սենյակներ) սահմանվում է որպես 1,5-ին հավասար:

5.2. Էլեկտրաստատիկ դաշտի (ԷՄԴ) սահմանային թույլատրելի մակարդակները

5.2.1. Արտադրության պայմաններում էլեկտրաստատիկ դաշտի լարվածության թույլատրելի մակարդակը ($E_{\text{ԹՄ}}$) մեկ հերթափոխում ≤ 1 ժամ ազդեցության դեպքում սահմանվում է որպես 60 կՎ/մ-ին հավասար:

Մեկ հերթափոխում 1 ժամից ավելի ԷՄԴ ազդեցության դեպքում $E_{\text{ԹՄ}}$ որոշվում են հետևյալ բանաձեւով՝

$$E_{\text{ԹՄ}} = \frac{60}{\sqrt{t}}, \text{ որտեղ}$$

t՝ ազդեցության ժամանակն է (ժամ):

5.2.2. 60կՎ/մ գերազանցող ԷՄԴ լարվածության դեպքում աշխատանքն առանց պաշտպանության միջոցների արգելվում է:

5.2.3. 20կՎ/մ-ից պակաս ԷՄԴ-ի լարվածության դեպքում էլեկտրաստատիկ դաշտերում լինելու ժամանակը չի կանոնակարգվում:

Բնակչության համար էլեկտրաստատիկ դաշտի լարվածության թույլատրելի

մակարդակը կազմում է 15կՎ/մ:

5.3. Հաստատուն մագնիսական դաշտի (ՀՄԴ) սահմանային թույլատրելի մակարդակները

Մեկ աշխատանքային օրում ազդեցության ժամանակը, րոպե	Ազդեցության պայմանները			
	ընդհանուր		տեղային	
	Լարվածության ՍԹՄ, կԱ/մ	Մագնիսական ինդուկցիայի ՍԹՄ, մՏԼ	Լարվածության ՍԹՄ, կԱ/մ	Մագնիսական ինդուկցիայի ՍԹՄ, մՏԼ
0 - 10	24	30	40	50
11 - 60	16	20	24	30
61 - 480	8	10	12	15

5.3.1. ՀՄԴ-ի գնահատումը եւ կարգավորումն իրականացվում են ըստ մագնիսական դաշտի մակարդակի՝ դիֆերենցված, կախված մեկ հերթափոխի ժամանակ աշխատողի վրա դրա ազդեցության ժամանակից ընդհանուր (ամբողջ մարմնի վրա) եւ տեղային (ծեռքի դաստակի, նախաբազկի) ազդեցության պայմանների համար:

5.3.2. ՀՄԴ-ի մակարդակը գնահատում են մագնիսական դաշտի լարվածության միավորներով (H) Ա/մ-ով եւ մագնիսական ինդուկցիայի միավորներով (B) մՏԼ-ով:

5.3.3. Տարբեր լարվածություններով (ինդուկցիայով) ՀՄԴ-ի գոտիներում անձնակազմի գտնվելու անհրաժեշտության դեպքում այդ գոտիներում աշխատանքների կատարման ընդհանուր ժամանակը առավելագույն լարվածությամբ գոտու համար չպետք է գերազանցի թույլատրելի ժամանակը:

5.4. 50 Հց հաճախականությամբ էլեկտրամագնիսական դաշտի սահմանային թույլատրելի մակարդակները

5.4.1. Արտադրական հաճախականության (Ա< 50 Հց) էՄԴ գնահատումը

կատարվում է ըստ էլեկտրական դաշտի լարվածության՝ (E) կիլովոլտ/մետրով (կՎ/մ), մագնիսական դաշտի լարվածության՝ (H) Ամպեր/մետրով (Ա/մ) կամ մագնիսական դաշտի ինդուկցիայի՝ (B) միկրոՏեսլայով (մկՏլ): Աշխատատեղերում 50 Հց էՄԴ նորմավորումը տարբերակվում է՝ կախված էՄԴ գտնվելու ժամանակից:

5.4.2. 50 Հց էլեկտրական դաշտի լարվածության սահմանային թույլատրելի մակարդակները:

(5.4.2 կետն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշմամբ)

5.4.2.1. Աշխատատեղերում էլեկտրական դաշտի (այսուհետ՝ էԴ) լարվածության սահմանային թույլատրելի մակարդակն ամբողջ հերթափոխի ընթացքում սահմանվում է որպես 5 կՎ/մ-ին հավասար:

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

5.4.2.2. 5-20կՎ/մ-ից ավելի տիրույթում լարվածությունների դեպքում՝ ներառյալ էԴ գտնվելու թույլատրելի ժամանակը՝ T-ն (ժամ), հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$T = (50/E) - 2, \text{ որտեղ}$$

E՝ էԴ լարվածությունն է հսկվող գոտում, կՎ/մ,

T՝ լարվածության համապատասխան մակարդակի դեպքում էԴ-ում գտնվելու թույլատրելի ժամանակն է, ժ:

5.4.2.3. 20-25կՎ/մ-ը լարվածության դեպքում էԴ-ում գտնվելու թույլատրելի ժամանակը կազմում է 10 րոպե:

5.4.2.4. 25կՎ/մ-ից բարձր լարվածության դեպքում առանց պաշտպանիչ միջոցների էԴ-ում գտնվելն արգելվում է:

5.4.2.5. էԴ-ում գտնվելու թույլատրելի ժամանակը կարող է սպառվել միանվագ կամ կոտորակային՝ աշխատանքային օրվա ընթացքում: Մնացած

աշխատաժամանակի ընթացքում անհրաժեշտ է գտնվել էԴ ազդեցության գոտուց դուրս կամ կիրառել պաշտպանիչ միջոցներ:

5.4.2.6. Աշխատանքային օրվա ընթացքում էԴ տարբեր լարվածությունների գոտիներում անձնակազմի գտնվելու ժամանակը ($T_{անձ}$), հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$T_{անձ} = 8(t_{E1} / T_{E1} + t_{E2} / T_{E2} + \dots + t_{En} / T_{En}), \text{ որտեղ}$$

$T_{անձ}$ ՝ գտնվելու ժամանակն է, որը համարժեք է նորմավորող լարվածության ստորին սահմանի էԴ-ում գտնվելու բիոլոգիական էֆեկտին,

$t_{E1}, t_{E2}, \dots, t_{En}$, - էԴ E_1, E_2, \dots, E_n լարվածությամբ հսկվող գոտիներում գտնվելու ժամանակն է,

$T_{E1}, T_{E2}, \dots, T_{En}$,՝ համապատասխան հսկվող գոտիների համար գտնվելու թույլատրելի ժամանակն է:

Էլեկտրական դաշտում գտնվելու ժամանակը չպետք է գերազանցի 8 ժամը:

5.4.7. Հսկվող գոտիների թիվը որոշվում է աշխատավայրում էԴ լարվածության մակարդակի տատանումներով: Հսկվող գոտիների էԴ լարվածության մակարդակների տարբերությունը սահմանվում է 1 կՎ/մ:

5.4.8. Պահանջները գործում են՝ պայմանով, որ աշխատանքների կատարումը կապված չէ վեր բարձրանալու հետ, բացառվում է անձնակազմի վրա էլեկտրական պարպումների ազդեցության հնարավորությունը, ինչպես նաև պաշտպանիչ հողանցման պայմանով՝ գետնից մեկուսացված բոլոր այն առարկաները, կառուցվածքները, սարքավորման մասերը, մեքենաները եւ մեխանիզմները, որոնց հնարավոր է դիպչեն էԴ ազդեցության գոտում աշխատողները:

5.5. 50 Հց հաճախականության պարբերական (սինուսոիդալ) մագնիսական դաշտի ազդեցության սահմանային թույլատրելի մակարդակները

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17–ի թիվ 341

որոշման խմբագրությամբ)

Ազդեցության ժամանակը (ժամ)	ՄԴ սահմանային թույլատրելի մակարդակներ. H(Ա/մ)/ B[մկՏ], ազդեցության դեպքում	
	ընդհանուր	տեղային
<= 1	1600/2000	6400/8000
2	800/1000	3200/4000
4	400/500	1600/2000
8	80/100	800/1000

5.5.1. ՄԴ տարբեր լարվածության (մակածումով) գոտիներում անձնակազմի գտնվելու անհրաժեշտության դեպքում, աշխատանքների կատարման ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի առավելագույն լարվածությամբ գոտու համար սահմանված թույլատրելի ժամանակը:

5.5.2. Գտնվելու թույլատրելի ժամանակը կարող է սպառվել միանվագ կամ կոտորակային՝ աշխատանքային օրվա ընթացքում:

**5.6. 50 Հց հաճախականության իմպուլսային մագնիսական դաշտերի
ազդեցության սահմանային թույլատրելի մակարդակները՝ կախված
գեներացիայի (ծագման) ռեժիմից**

T, ժամ	H [Ա/մ]		
	ՍԹՄ		
	Ռեժիմ I	Ռեժիմ II	Ռեժիմ III
<= 1,0	6000	8000	10000
<= 1,5	5000	7500	9500
<= 2,0	4900	6900	8900
<= 2,5	4500	6500	8500
<= 3,0	4000	6000	8000
<= 3,5	3600	5600	7600
<= 4,0	3200	5200	7200
<= 4,5	2900	4900	6900
<= 5,0	2500	4500	6500
<= 5,5	2300	4300	6300
<= 6,0	2000	4000	6000

$\leq 6,5$	1800	3800	5800
$\leq 7,0$	1600	3600	5600
$\leq 7,5$	1500	3500	5500
$\leq 8,0$	1400	3400	5400

50 Հց իմպուլսային մագնիսական դաշտի ազդեցության պայմանների համար դաշտի լարվածության ամպլիտուդային արժեքի թույլատրելի մակարդակները ($H_{\text{սթմ}}$) տարբերակվում են (դիֆերենցվում են)՝ կախված մեկ աշխատանքային հերթափոխի ընթացքում ազդեցության ընդհանուր տեւողությունից եւ գեներացիայի (ծագման) իմպուլսային ռեժիմների բնութագրից

Ռեժիմ I՝ իմպուլսային՝ $\tau_p \geq 0,02$ վրկ, $t_n \leq 2$ վրկ,

Ռեժիմ II՝ իմպուլսային՝ 60 վրկ $\geq \tau_p \geq 1$ վրկ, $t_n \geq 2$ վրկ,

Ռեժիմ III՝ իմպուլսային՝ $0,02$ վրկ $\leq \tau_p < 1$ վրկ, $t_n > 2$ վրկ, որտեղ

τ_p ՝ իմպուլսի տեւողությունն է, վրկ,

t_n ՝ իմպուլսների միջեւ դադարի տեւողությունը, վրկ:

5.7. $\geq 10 - 30$ կՀց հաճախականությունների տիրույթում էլեկտրամագնիսական դաշտերի սահմանային թույլատրելի մակարդակները

5.7.1. ԷՄԴ-ի գնահատումը եւ նորմավորումն իրականացվում են առանձին՝ ըստ էլեկտրական (E) Վ/մ-ով եւ մագնիսական (H), Ա/մ-ով դաշտերի լարվածության՝ կախված ազդեցության ժամանակից:

5.7.2. Ամբողջ հերթափոխի ընթացքում ազդեցության ժամանակ էլեկտրական եւ մագնիսական դաշտի լարվածության ՍԹՄ-ը կազմում է համապատասխանաբար 500 Վ/մ եւ 50 Ա/մ:

Մեկ հերթափոխի ընթացքում մինչեւ երկու ժամ ազդեցության տեւողության դեպքում էլեկտրական եւ մագնիսական դաշտի լարվածության ՍԹՄ-ը կազմում է համապատասխանաբար 1000 Վ/մ եւ 100 Ա/մ:

5.7.3. Էլեկտրոնային հաշվիչ մեքենաների, դրանց ծայրամասային հարմարանքների եւ հաշվիչ տեխնիկայի հիման վրա հարմարանքների ֆիզիկական անվտանգության ցուցանիշները

Ցուցանիշներ	Թույլատրելի մակարդակը
Էլեկտրական դաշտի լարվածությունը, Վ/մ 5 Հg - 2 կՀg 2 կՀg - 400 կՀg հաճախականությունների տիրույթում	25 2,5
Մագնիսական հոսքի խտությունը, նՏլ <*> 5Հg - 2 կՀ 2 կՀg - 400 կՀg հաճախականությունների տիրույթում	250 նՏլ 25 նՏլ
Էլեկտրաստատիկ պոտենցիալի մեծությունը դիսփիլեյի էկրանի վրա, В	500
Ցայտագունություն (մոնոքրոմ ռեժիմի համար) ոչ պակաս, քան	3
Սպիտակ դաշտի պայծառություն, ոչ պակաս կդ/մ ²	35 կդ/մ ²
Պատկերի տարածական անկայունություն	Չպետք է ֆիքսվի
Պատկերի տարածական անկայունություն, ոչ ավելին, մմ <*>	0,1
Ձայնի մակարդակը, դԲԱ <*>	50

<*> Տեսամոնիտորի մակերեսից 50 սմ հեռավորության վրա:

5.8. ≥ 30 կՀ - 300 ԳՀg հաճախականությունների տիրույթում Էլեկտրամագնիսական դաշտերի թույլատրելի մակարդակները

5.8.1. ≥ 30 կՀg - 300 ԳՀg հաճախականությունների տիրույթում ԷՄԴ գնահատումը եւ նորմավորումն իրականացվում են ըստ էներգետիկ էքսպոզիցիայի (ԷԷ) մեծության:

5.8.2. ≥ 30 կՀg - 300 ՄՀg հաճախականությունների տիրույթում էներգետիկ էքսպոզիցիան հաշվարկվում է հետեւյալ բանաձեւերով՝

$$E^2 = E^2 \cdot T, (\text{Վ/մ})^2 \text{ ժամ},$$

$$H^2 = H^2 \cdot T, (\text{Ա/մ})^2 \text{ ժամ, որտեղ}$$

E՝ էլեկտրական դաշտի լարվածությունը (Վ/մ),

H՝ մագնիսական դաշտի լարվածությունը (Ա/մ), էներգիայի հոսքի խտություն (էՀԽ, Վտ/մ², մկՎտ/սմ²),

T՝ մեկ հերթափոխում ազդեցության ժամանակը (ժամ):

5.8.3. ≥ 300 ՄՀց - 300 ԳՀց հաճախականությունների տիրույթում էներգետիկ էքսպոզիցիան հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$E_{\text{էՀԽ}} = \text{էՀԽ} \cdot T, (\text{Վտ/մ}^2) \cdot \text{ժ}, (\text{մկՎտ/սմ}^2) \cdot \text{ժամ, որտեղ}$$

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

էՀԽ՝ էներգիայի հոսքի խտությունը (Վտ/մ², մկՎտ/սմ²).

5.9. ≥ 30 կՀց - 300 ԳՀց հաճախականությունների տիրույթի համար մեկ հերթափոխում աշխատատեղերում էներգետիկ էքսպոզիցիաների սահմանային թույլատրելի մակարդակները (էԷ_{սթՄ})

Չափորոշիչ	Հետևյալ հաճախականությունների տիրույթում էԷ (ՄՀց) ՍԹՄ				
	$\geq 0,03 - 3,0$	$\geq 3,0 - 30,0$	$\geq 30,0 - 50,0$	$\geq 50,0 - 300,0$	$\geq 300,0 - 300000,0$
էԷ, (Վ/մ ²) ժամ E	20000	7000	800	800	-
էԷ, (Ա/մ ²) ժամ H	200	-	0,72	-	-
էԷ, (մկՎտ/սմ ²).ժամ էՀԽ	-	-	-	-	200

5.10. ≥ 30 կՀց- 300 ԳՀց հաճախականությունների տիրույթում էլեկտրական եւ մագնիսական դաշտերի լարվածության, ԷՄԴ էներգիայի հոսքի խտության առավելագույն թույլատրելի մակարդակները

Չափորոշիչ	Հետեւյալ հաճախականությունների տիրույթում առավելագույն թույլատրելի մակարդակները (ՄՀg)				
	>= 0,03 - 3,0	>= 3,0 - 30,0	>= 30,0 - 50,0	>= 50,0 - 300,0	>= 300,0 - 300000,0
E, Վ/մ	500	300	80	80	-
H, Ա/մ	50	-	3,0	-	-
ԷՀԽ, մկՎտ/սմ ²	-	-		-	1000 5000 <*>
<*> դաստակների տեղային ճառագայթման պայմանների համար					

5.11. Ճառագայթման պտտվող դիագրամայով հարմարանքներից ճառագայթման (1Հg-ից ոչ ավելի պտտման կամ սկաներավորման հաճախականությամբ եւ 20-ից ոչ պակաս միջադադարը պտտվող եւ սկաներավորող ավեհավաքներ) եւ միկրոշերտավոր սարքերի հետ աշխատելիս ձեռքերի տեղային ճառագայթման դեպքերի համար ճառագայթման համապատասխան ժամանակի համար էներգիայի հոսքի խտության սահմանային թույլատրելի մակարդակը (ԷՀԽ_{ՍԹՄ}) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$ԷՀԽ_{ՍԹՄ} = Q \cdot ԷԷ_{ՍԹՄ} / T, \text{ որտեղ}$$

Q՝ ազդեցության կենսաբանական ակտիվության նվազման գործակիցն է.

Q = 10 - պտտվող եւ սկաներավորող ավեհավաքներից ճառագայթման դեպքերի համար.

Q = 12,5 - դաստակների տեղային ճառագայթման դեպքերի համար (ընդ որում՝ մարմնի մյուս մասերի վրա ազդեցության մակարդակները չպետք է գերազանցեն 10 մկՎտ/սմ²):

5.12. Աշխատատեղերում էլեկտրամագնիսական դաշտերի մակարդակների հսկողությանը ներկայացվող պահանջները

5.12.1. ԷՄԴ-ի ինտենսիվության չափումներն իրականացվում են գետնի մակերեսույթից երեք մակարդակներով յուրաքանչյուր աշխատատեղում հաշվի առնելով աշխատանքային դիրքը՝ 0,5, 1,0 եւ 1,4 մ՝ նստած աշխատանքային դիրքում.

0,5, 1,0 եւ 1,7 մ՝ կանգնած աշխատանքային դիրքում: Փոփոխական էլեկտրական եւ մագնիսական դաշտերի գնահատումը կատարվում է միջին քառակուսային արժեքներով, էլեկտրաստատիկ դաշտերինը՝ ըստ առավելագույն արժեքի: Թույլատրելի արժեքների հետ համեմատվում են չափված մեծությունները, որոնց գումարվում է (իսկ գեոմագնիսական դաշտի թուլացման հսկողության դեպքում՝ հանվում է) չափման սխալանքը՝ չափման միջոցի շահագործման ուղեցույցին համապատասխան:

5.13. Հաստատուն մագնիսական դաշտի մակարդակների հսկողությանը ներկայացվող պահանջները

5.13.1. Տեղային ազդեցության պայմանների համար ՀՄԴ մակարդակների հսկողությունը պետք է կատարվի դաստակի մատների վերջույթային մատնահատվածների (ֆալանգների), նախաբազկի մեջտեղի, բազկի մեջտեղի մակարդակով: Որոշիչ է համարվում չափված լարվածության առավելագույն արժեքը:

5.13.2. Մարդու ձեռքերի անմիջական կոնտակտի դեպքում ՀՄԴ մագնիսական ինդուկցիայի չափումները կատարվում են մագնիսի մակերեսույթի հետ չափման միջոցի անմիջական ցուցիչի (դատչիկի) միջոցով:

5.14. 50 Հց հաճախականության էլեկտրամագնիսական դաշտի մակարդակների հսկողությանը ներկայացվող պահանջները

5.14.1. 50 Հց հաճախականության էՄԴ մակարդակների հսկողությունն իրականացվում է առանձին էԴ-ի եւ ՄԴ-ի համար:

5.14.2. էՄԴ-ի միաֆազ աղբյուրներով էլեկտրական սարքերում հսկվում են $E = E_m / \sqrt{2}$ եւ $H = H_m / \sqrt{2}$ էԴ-ի եւ ՄԴ-ի գործող (էֆեկտիվ) արժեքները, որտեղ E_m եւ H_m - էԴ-ի եւ ՄԴ-ի լարվածությունների ժամանակում չափման ամպլիտուդային արժեքներն են:

5.14.3. ԷՄԴ-ի երկ- եւ ավելի ֆազային աղբյուրներով էլեկտրական սարքերում հսկվում են E_{\max} եւ H_{\max} լարվածությունների գործող (էֆեկտիվ) արժեքները, որտեղ E_{\max} եւ H_{\max} - էլիպսի կամ էլիպսոիդի մեծ կիսաառանցքով լարվածությունների գործող արժեքներն են:

5.14.4. Նախագծման փուլում թույլատրվում է ԷԴ-ի եւ ՄԴ-ի մակարդակների որոշումը հաշվարկային եղանակով՝ հաշվի առնելով սահմանված կարգով հաստատված մեթոդներով ԷՄԴ-ի աղբյուրների տեխնիկական բնութագրերը:

5.14.5. 50 Հց հաճախականությամբ ԷԴ-ի լարվածության չափումը եւ հաշվարկը պետք է կատարվեն էլեկտրասարքավորման առավելագույն աշխատանքային լարվածության ժամանակ, կամ չափված արժեքները պետք է վերահաշվարկվեն առավելագույն հոսանքի վրա (U_{\max}) բազմապատկելով չափված արժեքները U_{\max} / U հարաբերության վրա, որտեղ U_{\max} -ը էլեկտրասարքավորման առավելագույն աշխատանքային լարումն է, իսկ U -ն չափումների ժամանակ էլեկտրասարքավորման լարումը.

5.15. ≥ 10 կՀց - 300 ԳՀց ռադիոհաճախականությունների տիրույթում էլեկտրամագնիսական դաշտի մակարդակների հսկողությանը ներկայացվող պահանջները

5.15.1. ԷՄԴ-ի մակարդակների չափումները պետք է կատարվեն սարքերի բոլոր աշխատանքային ռեժիմների համար օգտագործվող առավելագույն հզորության դեպքում: Ոչ լրիվ ճառագայթվող հզորության պարագայում չափումների դեպքում կատարվում է վերահաշվարկ մինչեւ առավելագույն արժեքների մակարդակները՝ բազմապատկելով չափված արժեքները W_{\max} / W հարաբերակցության, որտեղ W_{\max} -ը հզորության առավելագույն արժեքն է, W -ն՝ չափումները կատարելիս հզորությունը:

5.15.2. Հսկողության ենթակա չեն արտադրության պայմաններում օգտագործվող ԷՄԴ-ի աղբյուրները, եթե դրանք չեն աշխատում տարածության մեջ ճառագայթման համար նախատեսվող բաց ռադիոհաղորդափողի, ակեհավաքի կամ

այլ տարրի վրա, եւ դրանց առավելագոյն հզորութիւնը, ըստ անձնագրային տվյալների, չի գերազանցում՝

5,0 Վտ - \geq 30 կՀց - 3 ՄՀց հաճախականությունների տիրույթում.

2,0 Վտ - \geq 3 ՄՀց - 30 ՄՀց հաճախականությունների տիրույթում.

0,2 Վտ - \geq 30 ՄՀց - 300 ԳՀց հաճախականությունների տիրույթում:

5.15.3. ԷՄԴ-ի ինտենսիվության հսկողությունը անձնակազմի ձեռքերի տեղային ճառագայթման դեպքում անհրաժեշտ է լրացուցիչ անցկացնել դաստակների, նախաբազկի մեջտեղի հատվածում:

5.15.4. Պտտվող կամ սկանավորող ալեհավաքներից առաջացող ԷՄԴ-ի ինտենսիվության հսկողությունն իրականացվում է աշխատատեղերում եւ անձնակազմի ժամանակավոր լինելու վայրերում ալեհավաքների թեքման անկյան բոլոր աշխատանքային արժեքների դեպքում:

5.15.5. \geq 30 կՀց - 3 ՄՀց եւ \geq 30 - 50 ՄՀց հաճախականությունների տիրույթի դեպքում հաշվի են առնվում ինչպես էլեկտրական (ԷԷ_E), այնպես էլ մագնիսական (ԷԷ_H) դաշտերից առաջացող ԷԷ-ն.

$$ԷԷ_E / ԷԷ_{E\text{ՍԹՄ}} + ԷԷ_H / ԷԷ_{H\text{ՍԹՄ}} \leq 1:$$

5.15.6. Ռադիոհաճախականության տիրույթի ԷՄԴ-ի մի քանի աղբյուրներից՝ աշխատողի ճառագայթման դեպքում, որոնց համար սահմանված են միասնական սահմանային թույլատրելի մակարդակներ, աշխատանքային օրվա համար ԷԷ-ն որոշվում է յուրաքանչյուր աղբյուրից առաջացող ԷԷ-ի գումարման միջոցով:

5.15.7. ԷՄԴ-ի մի քանի աղբյուրներից ճառագայթման դեպքում աշխատողներին հաճախականության տիրույթներում, որոնց համար սահմանված են տարբեր սահմանային թույլատրելի մակարդակներ, պետք է պահպանվեն հետեւյալ պայմանները՝

$$ԷԷ_{E1} / ԷԷ_{E\text{ՍԹՄ}1} + ԷԷ_{E2} / ԷԷ_{E\text{ՍԹՄ}2} + \dots + ԷԷ_{En} / ԷԷ_{E\text{ՍԹՄ}n} \leq 1,$$

$$ԷԷ_E / ԷԷ_{E\text{ՍԹՄ}} + ԷԷ_{ԷՀԽ} / ԷԷ_{ԷՀԽ\text{ՍԹՄ}} \leq 1:$$

5.15.8. Անընդհատ ռեժիմով աշխատող անձնակազմի համաժամանակյա կամ հաջորդական ճառագայթման դեպքում եւ շրջանակային դիտարկման ու սկաներավորման ռեժիմում ճառագայթող ալեհավաքներից գումարային էէ-ն հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$E_{E<T_{\text{գում}}} = E_{E<T_{\text{H}}} + E_{E<T_{\text{անձ}}}, \text{ որտեղ}$$

$E_{E<T_{\text{գում}}}$ ՝ գումարային էէ, որը չպետք է գերազանցի 200 մկՎտ/սմ² ժ. մկՎտ/սմ².

$E_{E<T_{\text{H}}}$ ՝ անդադար ճառագայթմամբ առաջացող էէ.

$E_{E<T_{\text{անձ}}}$ ՝ պտտվող կամ սկաներավորող ալեհավաքների ընդհատվող ճառագայթումից առաջացող $0,1 E_{E<T_{\text{անձ}}} \cdot T_{\text{անձ}}$ հավասար էէ:

5.15.9. Մինչեւ 300 ՄՀց հաճախականությունների տիրույթում էՄԴ-ի ինտենսիվությունը չափելու համար 30%-ից ոչ ավելի թույլատրելի հարաբերական սխալանքով էլեկտրական եւ (կամ) մագնիսական դաշտերի լարվածության միջին քառակուսային արժեքը որոշելու համար:

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

5.15.10. ≥ 300 ՄՀց - 300 ԳՀց հաճախականության տիրույթում էՄԴ-ի մակարդակները չափելու համար օգտագործվում են 40%-ից ոչ ավելի թույլատրելի հարաբերական սխալանքով հոսքի խտության միջին արժեքների գնահատման համար նախատեսվող սարքերը:

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

5.16. Բնակչության համար արդյունաբերական հաճախականության էլեկտրական եւ մագնիսական դաշտերի սահմանային թույլատրելի մակարդակները

Բնակավայրերի տարածքում 50 Հց հաճախականությամբ փոփոխական էլեկտրական դաշտի սահմանային թույլատրելի լարվածությունը 2 մ բարձրության վրա կազմում է 1000 Վ/մ, մինչդեռ բնակելի սենքերում 50 Հց հաճախականությամբ փոփոխական էլեկտրական դաշտի թույլատրելի սահմանային լարվածությունը գետնից 0,5-ից մինչև 2 մ բարձրության վրա կազմում է 500 Վ/մ: Մագնիսական դաշտի թույլատրելի լարվածությունը կազմում է՝

թիվ թիվ ը/հ	Ներգործության տեսակը, տարածքը	50 Հց հաճախականությամբ ՄԴ-ի ինտենսիվությունը (գործող արժեքները), մկՏԼ (Ա/մ)
1	Բնակելի սենքերում, մանկական, նախադպրոցական, դպրոցական հանրակրթական եւ բժշկական հաստատություններում	5 (4)
2	Բնակելի շենքերի, հասարակական եւ վարչական շենքերի ոչ բնակելի սենքերում, սելիտեբային տարածքում, բնակելի սենքերում, սելիտեբային տարածքում, այդ թվում նաեւ հողատարածքներում	10 (8)
3	Բնակելի կառուցապատման գոտուց դուրս բնակելի տեղանքում, այդ թվում նաեւ 1 կԲ-ից բարձր լարվածությամբ էլեկտրահաղորդման օդային եւ մալուխային գծերի գոտում էլեկտրասարքավորումների շահագործման հետ մասնագիտորեն առնչություն չունեցող անձանց էլեկտրահաղորդման օդային եւ մալուխային գծերի անցկացման գոտում:	20 (16)
4	Չբնակեցված եւ դժվարահասանելի տեղանքում, որտեղ ժամանակ առ ժամանակ մարդիկ են գտնվում	100 (80)

20 - 22 կՀց հաճախականությամբ աշխատող ինդուկցիոն կենցաղային վառարաններից առաջացող էլեկտրամագնիսական դաշտի լարվածության սահմանային թույլատրելի մակարդակները

Էքսպոզիցիա	Սահմանային թույլատրելի	Մակարդակի
------------	------------------------	-----------

(Էլեկտրական դաշտում գտնվելու ժամանակը)	մակարդակները		հսկողության համար նախատեսվող սարք
	Ըստ էլեկտրական բաղադրյալի	Ըստ մագնիսական բաղադրյալի	
Օրվա ընթացքում 2,5 ժամից ոչ ավելին ընդհանուր տեղողությամբ եռակի ազդեցություն	0,5 կՎ/մ 30 հեռավորության վրա	վառարանի կորպուսից 4 Ա/մ	ԷՄԴԻ-2

Չափումների ժամանակահատվածում վառարանը պետք է ունենա առավելագույն ծանրաբեռնվածություն եւ առավելագույն արտանետիչ հզորություն, որոնք որոշվում են կենցաղային ինդուկցիոն վառարանների պատրաստման վերաբերյալ տեխնիկական պայմաններով:

Կենցաղային ինդուկցիոն վառարաններից առաջացող էլեկտրամագնիսական դաշտի լարվածության մակարդակների հսկողությունը կատարվում է՝

արտադրող գործարանի տեխնիկական հսկողության հարցերով բաժնի կողմից յուրաքանչյուր թողարկվող վառարանի որակն ստուգելիս.

Կողմերի, Մաքսային միության անդամ պետությունների լիազոր մարմինների մասնագետների կողմից արտադրող գործարանի ինդուկցիոն վառարանների վերանորոգում իրականացվող արհեստանոցների թողարկվող արտադրանքի (ինդուկցիոն վառարաններ) սանիտարական հսկողություն իրականացնելիս՝ մինչ դրանք պատվիրատուին հանձնելը:

5.17. Բնակչության համար 30 կՀg- 300 ԳՀg հաճախականությունների տիրույթում ԷՄԴ-ի թույլատրելի մակարդակները (սելիտեբային տարածքում, զանգվածային հանգստի վայրերում, բնակելի, հասարակական եւ արտադրական սենքերում)

Հաճախականու- թյունների տիրույթը	30 - 300 կՀg	0,3 - 3 ՄՀg	3 - 30 ՄՀg	30 - 300 ՄՀg	0,3 - 300 ԳՀg
Նորմավորվող պարամետր	Էլեկտրական դաշտի լարվածությունը, E (Վ/մ)				Էներգիայի հոսքի խտությունը, էՀԽ

					(մկՎտ/սմ ²)
Սահմանային թույլատրելի մակարդակները	25	15	10	3	25 ¹⁰ <*>
<*> - Շրջանային դիտարկման կամ սկաներավորման ռեժիմում աշխատող ալեհավաքներից ճառագայթման դեպքերի համար					

Ծանոթագրություն.

1. Աղյուսակում բերված տիրույթները բացառում են հաճախականության ստորին եւ ընդգրկում են վերին սահմանը:

2. Ճառագայթման մոտակա գոտում տեղակայված բնակավայրերի տարածքում ճառագայթի էլեկտրոնային սկաներավորման ռեժիմում 150-300 ՄՀց հաճախականությունների տիրույթում աշխատող՝ տիեզերական տարածության միջով կապի իրականացման համար ռադիոկայանների, տիեզերական տարածության հսկողության համար նախատեսվող հատուկ նշանակության ռադիոլուկացիոն կայանների էլեկտրական դաշտի լարվածությունը չպետք է գերազանցի 6 Վ/մ-ն եւ ճառագայթման հեռավոր բնակավայրերի տարածքում՝ 19 Վ/մ-ն:

Կայանների ճառագայթման հեռավոր գոտու սահմանը որոշվում է հետեւյալ հարաբերակցությամբ՝

$$r = 2 \cdot D^2 / \lambda, \text{ որտեղ}$$

r –ը՝ հեռավորությունն է ալեհավաքից, մ.

D –ն՝ ալեհավաքի առավելագույն գծային չափսը, մ.

λ –ը՝ ալիքի երկարությունը, մ:

Բնակչության համար ներկայացված ՍՄ-ն տարածվում է նույնպես հաճախականությունների այդ տիրույթում ԱՄԴ-ի այլ աղբյուրների վրա:

Մի քանի աղբյուրներից միաժամանակյա ճառագայթման դեպքում, որոնց համար սահմանված են նույն ՍԹՄ-ն, պետք է պահպանվեն հետեւյալ պայմանները՝

$$\sum_{i=1}^n \varepsilon_{iU} \leq \varepsilon_{\partial U}, \text{ որտեղ}$$

E_i ՝ i-րդ համարի էՄԴ-ի աղբյուրից առաջացող էլեկտրական դաշտի լարվածությունը.

ε_{iU} ՝ i-րդ համարի էՄԴ-ի աղբյուրից առաջացող էներգիայի հոսքի խտությունը.

$E_{\partial U}$ ՝ նորմավորվող տիրույթի էլեկտրական դաշտի լարվածության թՄ.

$\varepsilon_{\partial U}$ ՝ նորմավորվող տիրույթի էներգիայի հոսքի խտության թՄ.

n՝ էՄԴ-ի աղբյուրների քանակը.

էՄԴ-ի մի քանի աղբյուրներից միաժամանակյա ճառագայթման դեպքում, որոնց համար սահմանված են տարբեր ՍԹՄ-ներ, պետք է պահպանվեն հետևյալ պայմանները՝

$$\sum_{j=1}^m (E_{q_{iUj}} / E_{\partial Uj})^2 + \sum_{k=1}^q (\varepsilon_{q_{iUK}} / \varepsilon_{\partial UK}) \leq 1, \text{ որտեղ՝}$$

$E_{q_{iUj}}$ ՝ j-րդ նորմավորվող տիրույթի էՄԴ-ի աղբյուրներից առաջացող էլեկտրական դաշտի գումարային լարվածություն.

$E_{\partial Uj}$ ՝ j-րդ նորմավորվող տիրույթի էլեկտրական դաշտի լարվածության թՄ.

$\varepsilon_{q_{iUK}}$ ՝ k-րդ նորմավորվող տիրույթի էՄԴ-ի աղբյուրներից առաջացող էներգիայի հոսքի գումարային խտությունը.

$\varepsilon_{\partial UK}$ ՝ k-րդ նորմավորվող տիրույթի էներգիայի հոսքի խտության թՄ.

m՝ տիրույթների քանակությունն է, որոնց համար նորմավորվում է E-ն.

q՝ տիրույթների քանակությունն է, որոնց համար նորմավորվում է ε_{iU} -ն:

3. Բնակելի սենքերի համար թույլատրելի մակարդակները կիրառվում են նաեւ պատշգամբների եւ լոջաների համար (ներառյալ ընդհատվող եւ երկրորդային ճառագայթումը) ստացիոնար հաղորդող ռադիոտեխնիկական օբյեկտներից:

4. Սույն Բաժնի պահանջները չեն տարածվում պատահական բնույթի, ինչպես նաեւ տեղաշարժվող հաղորդող ռադիոտեխնիկական օբյեկտներից առաջացող

էլեկտրամագնիսական ազդեցության վրա:

Բնակելի եւ հասարակական շենքերում հաղորդող ռադիոտեխնիկական օբյեկտների սնուցող եւ ուժային սարքավորումից առաջացող 50 Հց հաճախականությամբ էլեկտրական դաշտի լարվածության մակարդակները բնակչության համար չպետք է գերազանցեն ԹՄ-ն:

5.18. Էլեկտրամագնիսական դաշտերի մակարդակների գործիքային վերահսկմանը ներկայացվող պահանջները

Էլեկտրական (մագնիսական) դաշտի լարվածության մակարդակների եւ ԷՄԴ-ի էներգիայի հոսքի խտության չափումները պետք է կատարվեն սարքը ճառագայթման առավելագույն հզորության միացնելիս՝ սահմանված կարգով հաստատված մեթոդական ցուցումներին համապատասխան: Փոփոխական էլեկտրական եւ մագնիսական դաշտերի գնահատումը կատարվում է ըստ միջին քառակուսային արժեքների. էլեկտրաստատիկ դաշտերինը՝ ըստ առավելագույն արժեքի: Թույլատրելի արժեքի հետ համեմատվում են չափված մեծությունները, որոնց գումարված է չափման սխալանքը՝ չափման միջոցի շահագործման մասով ուղեցույցին համապատասխան:

Հիգիենիկ նորմերին համապատասխանության մասով արտադրանքի փորձաքննության ժամանակ չափումը կատարվում է օգտագործողի գտնվելու գոտում արտադրանքի տեխնիկական փաստաթղթերին համապատասխան: Եթե նման տեղեկությունները բացակայում են, ապա՝ արտադրանքի մակերեսային 10 սմ հեռավորության վրա:

51սմ-ից պակաս էկրանի անկյունագծով հեռուստատեսային ընդունիչների եւ հեռուստատեսային խաղային ավտոմատների տեսամոնիտորների համար չափումները կատարվում են 50սմ հեռավորության վրա՝ առջելից, կողքերից եւ հետելից էկրանի կենտրոնի մակարդակով (51սմ-ից բարձր էկրանի անկյունագծի դեպքում չափումները նույնանման են կատարվում, սակայն 1մ հեռավորության վրա), եթե արտադրանքի շահագործման մասով ցուցումներով չի պահանջվում

օգտագործողի տեղակայում փոքր հեռավորության վրա:

Փոփոխական էլեկտրական եւ մագնիսական դաշտերի գնահատումը կատարվում է ըստ միջին քառակուսային արժեքների, իսկ էլեկտրաստատիկ դաշտերինը՝ ըստ առավելագույն արժեքի: Թույլատրելի արժեքի հետ համեմատվում են չափված մեծությունները, որոնց գումարված է չափման սխալանքը՝ չափման միջոցի շահագործման ուղեցույցին համապատասխան:

5.19. Կապի շարժական միջոցներից առաջացող էլեկտրամագնիսական դաշտերի մակարդակներին ներկայացվող պահանջները (բացի ծովային, գետային եւ օդային շարժական ռադիոկապի, արբանյակային կապի վերգետնյա ստացիոնար կայաններից)

Աշխատանքային հաճախականությունը, ՄՀց	Ալեհավաքի մակարդակով կապի միջոցից մինչեւ չափման կետն ընկած հեռավորությունը, մ	Առավելագույն հզորությամբ աշխատանքի դեպքում թույլատրելի մակարդակը
27 - 30	0,38	1,5 Վ/մ
30 - 40	0,2	1,5 Վ/մ
150	4,9	1,5 Վ/մ
180	4,2	1,5 Վ/մ
300	2,5	1,5 Վ/մ
450	0,62	3 մկՎտ/սմ ²
800 - 2400	0,37	3 մկՎտ/սմ ²

Ծանոթագրություն. Աղյուսակում ներկայացված հաճախականությունների միջեւ միջակայքերում սարքից մինչեւ չափման կետը հեռավորությունը որոշվում է գծային միջարկումով (ինտերպոլյացիայով):

Շարժական կայաններից (այդ թվում նաեւ արբանյակային կապի բաժանորդային տերմինալներով) առաջացող էլեկտրական դաշտի լարվածության եւ ԷՄԴ-ի էներգիայի հոսքի խտության մակարդակների հսկողությունն իրականացվում է արտադրանքի մասով սանիտարահամաճարակաբանական եզրակացության

տրամադրման փուլում: Արտադրական գործունեության մեջ շարժական կայաններ օգտագործող աշխատողների աշխատանքի պայմանները գնահատելիս ԷՄԴ-ի մակարդակների հսկողություն չի կատարվում, այլ հիմնվում է շարժական կայանի տվյալ մոդելի մասով սանիտարահամաճարակաբանական փորձաքննության նյութերի վրա:

Բջջային կապի շարժական հեռախոսների եւ քաղաքացիական կիրառման կապի այլ շարժական միջոցների օգտագործողների դեպքում հարկ է հաշվի առնել, որ ներկայացված նորմերը նախատեսված են օրը 30 րոպեից ոչ ավելի հաղորդման համար եւ չեն տարածվում 18-ից ցածր անձանց, հղի կանանց եւ սրտախթանիչ (կարդիոստիմուլյատոր) կրող անձանց վրա:

6. Աչքերի եւ մաշկի վրա ազդեցության դեպքում լազերային ճառագայթման սահմանային թույլատրելի մակարդակները

6.1. Ընդհանուր դրույթները

6.1.1. Լազերային ճառագայթման սահմանային թույլատրելի մակարդակները (ՍԹՄ) սահմանվում են ճառագայթման երկու պայմանների համար՝ մեկանգամյա եւ քրոնիկ ալիքների երեք տիրույթի երկարությունների համար՝

$$I \quad 180 < \lambda \leq 380 \text{ նմ}$$

$$II \quad 380 < \lambda \leq 1400 \text{ նմ}$$

$$III \quad 1400 < \lambda < 10^5 \text{ նմ}$$

6.1.2. Լազերային ճառագայթման նորմավորող չափորոշիչներն են սահմանափակող ապերտուրայով միջինացված էներգետիկ էքսպոզիցիան H եւ ճառագայթահարումը E :

6.1.3. Մաշկի վրա լազերային ճառագայթման ազդեցության դեպքում $H_{\text{ՍԹՄ}}$ եւ $E_{\text{ՍԹՄ}}$ սահմանային թույլատրելի մակարդակները որոշելու համար միջինացումը

կատարվում է ըստ $1,1 \times 10^{-3}$ մ (ապերտուրայի մակերեսը $S_a = 10^{-6}$ մ²) տրամագծով սահմանափակող ապերտուրայի:

6.1.4. I եւ III տիրույթներում աչքերի վրա լազերային ճառագայթման ազդեցության դեպքում $H_{U\theta U}$ եւ $E_{U\theta U}$ սահմանային թույլատրելի մակարդակները որոշելու համար միջինացումը կատարվում է նաեւ ըստ $1,1 \times 10^{-3}$, տրամագծով ապերտուրայի, իսկ II տիրույթում՝ 7×10^{-3} մ տրամագծով ապերտուրայի:

6.1.5. Էներգետիկ էքսպոզիցիայից եւ ճառագայթահարումից բացի՝ նորմավորող չափորոշիչներն են նաեւ նշված սահմանափակող ապերտուրաների միջով անցած ճառագայթման էներգիան W եւ հզորությունը P :

6.1.6. ($380 < \lambda \leq 1400$ նմ) տիրույթում աչքերի վրա լազերային ճառագայթման ազդեցությունը գնահատելիս 7×10^{-3} մ տրամագծով սահմանափակող ապերտուրայի միջով անցած լազերային ճառագայթման էներգիայի եւ հզորության նորմավորումը համարվում է առաջնային:

6.1.7. Վերը նշված էներգետիկ պարամետրերը կապված են հետեւյալ հարաբերակցություններով՝

$$H_{U\theta U} = \frac{W_{U\theta U}}{S_a}, E_{U\theta U} = \frac{P_{U\theta U}}{S_a} \quad (6.1)$$

$H_{U\theta U}$, $E_{U\theta U}$ եւ $W_{U\theta U}$, $P_{U\theta U}$ պարամետրերը կարող են օգտագործվել անկախ՝ լուծվող խնդրին համապատասխան:

6.2. $180 < \lambda \leq 380$ նմ տիրույթում լազերային ճառագայթման ՍԹՄ-ն՝ աչքերի եւ մաշկի մեկանգամյա ճառագայթման դեպքում

6.2.1. Միայնակ իմպուլսների համար ՍԹՄ

$1,1 \times 10^{-3}$ մ սահմանափակող ապերտուրայի դեպքում I ($180 < \lambda \leq 380$ նմ) սպեկտրալ միջակայքում կոլիմացված կամ ցրված լազերային ճառագայթման միայնակ իմպուլսների՝ աչքերի եւ մաշկի վրա մեկանգամյա ազդեցության դեպքում, $H_{U\theta U}$, $E_{U\theta U}$ եւ $W_{U\theta U}$, $P_{U\theta U}$ -ն որոշելու համար հարաբերակցությունները ներկայացված

են 6.2.1 աղյուսակում:

6.2.2. Իմպուլսների սերիաների համար՝ ՍԹՄ

Իմպուլսների սերիաների՝ աչքերի եւ մաշկի վրա ազդեցության դեպքում $180 < \lambda \leq 380$ նմ տիրույթում լազերային ճառագայթման սահմանային թույլատրելի մակարդակները որոշելու համար անհրաժեշտ է առաջնորդվել հետեւյալ պահանջներով՝

ա) Եղջերաթաղանթի եւ մաշկի մակերեսային էներգետիկ էքսպոզիցիան H_i կամ ճառագայթահարումը E_i դիտարկվող հաջորդականությունից առանձին իմպուլսի ազդեցության դեպքում չպետք է գերազանցի 6.2.1 կետով որոշվող միայնակ իմպուլսների համար սահմանային թույլատրելի արժեքները՝

$$H_i \leq H_{\text{нды}}(\tau_u), \quad E_i \leq E_{\text{нды}}(\tau_u) \quad (6.2)$$

$$H_i \leq H_{\text{УДМУ}}(\tau_p), \quad E_i \leq E_{\text{УДМУ}}(\tau) \quad (6.2)$$

Եթե առանձին իմպուլսների ճառագայթումների միջեւ ժամանակային միջակայքը փոքր է 600 վ-ից, ապա $H_{\text{УДМУ}}(E_{\text{УДМУ}})$ եւ $W_{\text{УДМУ}}(P_{\text{УДМУ}})$ արժեքները որոշվում են ըստ (6.14) եւ (1.16) բանաձեւերի համաձայն՝ 6.8.2 կետի առաջարկությունների:

բ) Քանի որ $180 < g < 380$ նմ միջակայքում ճառագայթման կենսաբանական հյուսվածքների վրա ազդեցությունն օժտված է ադիտիվության հատկությամբ, նախորդ պահանջի կատարման պայմանով, ապա $H^{\Sigma}(3 \times 10^4)$ մեկանգամյա օրական չափաբաժինը չպետք է գերազանցի 6.2.1 աղյուսակում որոշվող արժեքները՝

$$H^{\Sigma}(3 \times 10^4) = \sum_{i=1}^M H_i(\tau_p) \leq H_{\text{УДМУ}}^{\Sigma}(3 \times 10^4):$$

6.2.3. Փոքր տրամագծի փնջի համար լազերային ճառագայթման ՍԹՄ

Եթե ճառագայթահարումը կենտրոնացած է մաշկի կամ եղջերաթաղանթի մի շրջանում, որի նվազագույն չափսը հավասար կամ փոքր է $1,1 \times 10^{-3}$ մ-ը սահմանափակող ապերտուրայի տրամագծից, ապա ճառագայթահարման E եւ էներգետիկ էքսպոզիցիայի H առավելագույն արժեքը չպետք է գերազանցի 6.2.1 եւ

6.2.2 կետերում որոշվող $E_{սթս}$ եւ $H_{սթս}$ արժեքները:

6.3. Աչքերի եւ մաշկի քրոնիկ ճառագայթման դեպքում $180 < \lambda \leq 380$ նմ տիրույթում լազերային ճառագայթման ՍԹՄ

I ($180 < \lambda \leq 380$ նմ) ալիքների երկարության տիրույթում կոլիմացված կամ ցրված լազերային ճառագայթմամբ քրոնիկ ճառագայթվելու դեպքում $H_{սթս}$, $E_{սթս}$ եւ $W_{սթս}$, $P_{սթս}$ սահմանային թույլատրելի արժեքները, ինչպես նաեւ $H_{սթս}(3 \times 10^4)$ օրական սահմանային չափաբաժինները որոշելու համար անհրաժեշտ է (6.2.1 եւ 6.2.2 աղյուսակների) 6.2 կետում բերված համապատասխան արժեքները 10 անգամ նվազեցնել:

6.4. Աչքերի մեկանգամյա ճառագայթման դեպքում $380 < \lambda < 1400$ նմ տիրույթում լազերային ճառագայթման ՍԹՄ

6.4.1. ՍԹՄ-ն աչքերի վրա կոլիմացված լազերային ճառագայթման ազդեցության դեպքում

$380 < \lambda \leq 1400$ նմ տիրույթում կոլիմացված լազերային ճառագայթման (փնջի ուղիղ կամ հայելային արտացոլման դիտարկման)՝ աչքերի վրա ազդեցության դեպքում $W_{սթս}$ եւ $P_{սթս}$ որոշելու համար հարաբերակցությունները բերված են 6.4.1, 6.4.2 աղյուսակներում:

6.4.2. ՍԹՄ-ն չկոլիմացված լազերային ճառագայթման՝ աչքերի վրա ազդեցության դեպքում

Եթե չկոլիմացված (ցրված կամ դիֆուզային արտացոլված) աղբյուրը հեռավոր օբյեկտ է, որի $W_{սթս}$ էներգիայի եւ $P_{սթս}$ հզորության սահմանային թույլատրելի արժեքները կախված են նշված աղբյուրի ալֆայի տեսանելի անկյունային չափսից:

$W_{սթս}^{\text{մաշկ}}$ եւ $P_{սթս}^{\text{մաշկ}}$ արժեքներն այդ դեպքում որոշվում են բազմապատկելով կոլիմացված ճառագայթման համար $W_{սթս}$ եւ $P_{սթս}$ արժեքները

(կետ 6.4.1) B ուղղիչ գործակցով՝

$$W_{\text{ուղ}}^{\text{ա}} = B \times W_{\text{ուղ}}; \quad P_{\text{ուղ}}^{\text{ա}} = B \times P_{\text{ուղ}} \quad (6.4)$$

$$W_{U\theta U} = B \times W_{U\theta U}, \quad P_{U\theta U} = B \times P_{U\theta U} \quad (6.4)$$

B արժեքը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$B = B_1 \times (\alpha)^2 + 1 (\alpha > \alpha_{\text{սահմ}}), \quad (6.5)$$

$$B = 1 (\alpha \leq \alpha_{\text{սահմ}}):$$

Այստեղ B_1 -ը օժանդակ գործակից է, որը կախված է ճառագայթման տեսողությունից.

Ալֆա արժեքը եւ անալիտիկ հարաբերակցությունները B մեծության հաշվարկի համար տրված են 6.4.3 աղյուսակում:

Իմպուլսների սերիաների ազդեցության դեպքում B ուղղիչ գործակիցը սերիայում առանձին իմպուլսի տեսողությանը համապատասխանող արժեք է ընդունում:

6.4.3. ՍԹԴ կոլիմացված լազերային ճառագայթման իմպուլսների սերիաների՝ աչքերի վրա ազդեցության դեպքում

Խումբ 56 Բամբակ, թաղիք կամ նրբաթաղիք եւ չգործված կտորեղեն, հատուկ մանվածք, լարաններ, ճոպաններ, պարաններ, հաստ պարաններ եւ դրանցից պատրաստված արտադրատեսակներ	
9619 00 310	Կանացի հիգիենիկ միջադիրներ եւ տամպոններ,

0 9619 00 390 0	մանկական խանձարուրներ ու տակդիրներ եւ նմանատեսակ սանիտարահիգիենիկ արտադրատեսակներ թամբակից (Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշման խմբագրությամբ)
--------------------	--

Հավելված 12.1

Սանիտարահամաճարակաբանական վերահսկողությանը (հսկողությանը) ենթակա ապրանքներին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ միասնական պահանջների II գլխի 12-րդ բաժնի

ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐ

(տեսակներն ըստ նշանակության)

Արտադրանքի խմբերը (տեսակները)	Անվանումը
1	Մեծահասակների համար նախատեսված տակդիրներ, մեկանգամյա օգտագործման տակդիրներ, խանձարուրներ եւ այլն
2	Կանացի հիգիենիկ միջադիրներ, տամպոններ, լակտացիոն ներդրուկներ եւ այլն
3	Հիգիենիկ եւ կոսմետիկ անձեռոցիկներ (ներծծված ու չներծծված) եւ այլն
4	Սպասքավորման համար նախատեսված թղթե անձեռոցիկներ, սրբիչներ (մեկանգամյա), թաշկինակներ (մեկանգամյա), զուգարանի թուղթ (միաշերտ ու բազմաշերտ) եւ այլն
5	Հիգիենիկ (բժշկական) բամբակ, բամբակյա կոսմետիկ գնդիկներ, տամպոններ, բարձիկներ, բամբակյա ձողիկներ եւ այլն

Հավելված 12.2

Սանիտարահամաճարակաբանական վերահսկողությանը (հսկողությանը) ենթակա ապրանքներին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ միասնական պահանջների II գլխի 12-րդ բաժնի

ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԶԳԱՅՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9–ի թիվ 889 որոշման խմբագրությամբ)

Արտադրանքի խմբերը (անվանումը)	Ցուցանիշի անվանումը	Բնութագիրը եւ նորմը
1	2	3
1. Տակդիրներ, մեկանգամյա օգտագործման տակդիրներ (մեծահասակների համար) եւ այլն	Արտաքին տեսքը	Ամբողջական, հերմետիկ փաթեթավորում, առանց ապրանքի արտաքին թերության (հավասարաչափ, միատարր մակերեսներ, կողմնակի բծերի, շղարշի, ներառման, վնասման բացակայություն)
	Հանուկի զգայորոշիչներ. արտաքին տեսքը հոտը	Թափանցիկ հեղուկ առանց պղտորության եւ նստվածքի՝ 1 բալից ոչ ավելի
	Ջրածնային ցուցանիշ pH, միավոր	pH-ի փոփոխություն. +/- 1 միավորից ոչ ավելի
	Հանուկի թթվայնացում (օրգանական նյութերի ընդհանուր քանակը) մգ O ₂ /դմ ³	10-ից ոչ ավելի
	Ֆորմալդեհիդ	0.1-ից ոչ ավելի

	մգ/դմ ³	
2. Կանացի հիգիենիկ միջադիրներ, տամպոններ, լակտացիոն ներդրուկներ եւ այլն	Արտաքին տեսքը	Ամբողջական, հերմետիկ փաթեթավորում, առանց ապրանքի արտաքին թերության (հավասարաչափ, միատարր մակերեսներ, կողմնակի բծերի, ներառումների, վնասվածքի բացակայություն)
	Հանուկի զգայորոշիչներ. արտաքին տեսքը հոտը	Թափանցիկ հեղուկ առանց պղտորության եւ նստվածքի՝ 1 բալից ոչ ավելի
	Ջրածնային ցուցանիշ. pH, միավոր	pH-ի փոփոխություն. +/- 1 միավորից ոչ ավելի
	Հանուկի թթվայնացում (օրգանական նյութերի ընդհանուր քանակը) մգ O ₂ /դմ ³	10-ից ոչ ավելի
	Ֆորմալդեհիդ մգ/դմ ³	0.1-ից ոչ ավելի
3. Հիգիենիկ եւ կոսմետիկ անձեռոցիկներ (ներծծված ու չներծծված) եւ այլն	Արտաքին տեսքը	Ամբողջական, հերմետիկ փաթեթավորում, առանց ապրանքի արտաքին թերության (հավասարաչափ, միատարր մակերեսներ, կողմնակի բծերի, շղարշի, ներառման, վնասման բացակայություն)
	Հոտ	Հաճելի, հատուկ հոտավորմամբ
	Հանուկի զգայորոշիչներ. արտաքին տեսքը	Թափանցիկ հեղուկ՝ առանց պղտորության, նստվածքի եւ գունավորման, թույլատրվում է աննշան լուսացրում (օպալեսցենցիա)
	Ջրածնային ցուցանիշ. pH, միավոր	4,5 – 8,5
	Ֆորմալդեհիդ մգ/դմ ³	0.1-ից ոչ ավելի
Սպասքավորման համար նախատեսված թղթե	Արտաքին տեսքը	Ամբողջական փաթեթավորում, առանց ապրանքի արտաքին թերությունների (միատարր մակերեսներ, կողմնակի բծերի

անձեռոցիկներ, սրբիչներ (մեկանգամյա), թաշկինակներ (մեկանգամյա), զուգարանի թուղթ (միաշերտ ու բազմաշերտ) եւ այլն		բացակայություն), եզրերն ուղիղ կտրված
	Հանուկի զգայորոշիչներ.	
	արտաքին տեսքը	Թափանցիկ հեղուկ՝ առանց պղտորության, նստվածքի եւ գունավորման
	հոտ	1 բալից ոչ ավելի
	Ջրածնային ցուցանիշ. pH, միավոր	4,5 - 9,1
(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 889 որոշման խմբագրությամբ)		
	Ֆորմալդեհիդ մգ/դմ ³	0,1-ից ոչ ավելի
Խոհանոցային թղթե սրբիչներ եւ սպասքավորման համար նախատեսված անձեռոցիկներ	Կապար մգ/դմ ³	0,03-ից ոչ ավելի
	Ցինկ մգ/դմ ³	0,1-ից ոչ ավելի
	Քրոմ (գումարային) մգ/դմ ³	0,1-ից ոչ ավելի
Հետեւյալ գույներն ստանալու համար օգտագործվող ներկանյութերը.		
կապույտ	Կոբալտ մգ/դմ ³	0,1-ից ոչ ավելի
դեղին	Քրոմ (գումարային) մգ/դմ ³ Կադմիում մգ/դմ ³	0,1-ից ոչ ավելի 0,001-ից ոչ ավելի
կարմիր	Պղինձ մգ/դմ ³ Մանգան մգ/դմ ³	1-ից ոչ ավելի 0,1-ից ոչ ավելի
կանաչ	Պղինձ մգ/դմ ³ Քրոմ (գումարային) մգ/դմ ³	1,0-ից ոչ ավելի 0,1-ից ոչ ավելի
սեւ, վարդագորշագույն, վարդագույն	Մանգան մգ/դմ ³	0,1-ից ոչ ավելի
երկնագույն	Կոբալտ մգ/դմ ³ Պղինձ մգ/դմ ³	0,1-ից ոչ ավելի 1-ից ոչ ավելի
Շագանակագույ ն	Երկաթ մգ/դմ ³	0,3-ից ոչ ավելի
5. Հիգիենիկ բամբակ, բամբակյա կոսմետիկ գնդիկներ,	Արտաքին տեսքը	Միատարր, լավ զգված (սանրած) թելային մասսա, առանց կողմնակի խառնուրդների եւ հավելումների: Թույլատրվում է թելային հանգույցների եզակի

տամպոններ, բարձիկներ, բամբակյա ձողիկներ եւ այլն		կուտակումներ
	Հանուկի զգայորոշիչներ. արտաքին տեսքը հոտը	Թափանցիկ հեղուկ՝ առանց պղտորության, նստվածքի եւ գունավորման. 2 բալից ավելի չի թույլատրվում<*>
	Ջրային հանուկի ռեակցիան	Չեզոք
	Վերականգնող նյութերի պարունակություն	Հետքեր
	Ֆորմալդեհիդ մգ/դմ ³	0,1-ից ոչ ավելի
	<*> Ստիրոլ մգ/դմ ³	0,01-ից ոչ ավելի

Ծանոթագրություն.

<*> միգրացիայի ենթարկվող վնասակար նյութերի որոշման համար հնարավոր է այլ մեթոդների օգտագործումը, որն իր զգայունությամբ չի զիջում սահմանված կարգով հաստատվածներին:

<*> բամբակյա ձողիկների համար

Հավելված 12.3

Սանիտարահամաճարակաբանական վերահսկողությանը (հսկողությանը) ենթակա ապրանքներին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ միասնական պահանջների II գլխի 12-րդ բաժնի

ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

(մանրէային աղտոտվածության թույլատրելի մակարդակները)

<*> Միայն հերմետիկ կամ ամբողջությամբ փաթեթավորված անձնական հիգիենայի միջոցների համար

Արտադրանքի խումբը	Enterobacteriaceae 10գ-ում	Staphylococcus aureus 10գ-ում	Pseudomonas aeruginosa 10գ-ում	Մանրէների ընդհանուր քանակը (ՄԱՖԱՄ) ԳԱՄ/գ (ոչ ավելի)	Բորբոսասանկեր եւ խմորասանկեր ԳԱՄ/գ (ոչ ավելի)
1	Բացակայություն	Բացակայություն	Բացակայություն	1×10^2	Բացակայություն
2	-//-	-//-	-//-	-//-	-//-
3	-//-	-//-	-//-	1×10^3	1×10^2
4	-//-	-//-	-//-	-//-	-//-
5	-//-	-//-	-//-	-//-	-//-

Հավելված 12.4

Սանիտարահամաճարակաբանական վերահսկողությանը (հսկողությանը) ենթակա ապրանքներին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ միասնական պահանջների II գլխի 12-րդ բաժնի

ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԹՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Արտադրանքի խումբը	Ցուցանիշի անվանումը	Նորման եւ բնութագիրը	
		չափանիշը	ազդեցության թույլատրելի աստիճանը
1, 2	Մաշկի տեղային գրգռման ազդեցության ինդեքս(I), բալ	0	Գրգռիչ ազդեցության բացակայություն
	Աչքի լորձաթաղանթի վրա գրգռիչ ազդեցության ինդեքս (I), բալ	0	Գրգռիչ ազդեցության բացակայություն
	Սենսիբիլիզացնող ազդեցության ինդեքս(I), բալ	0	Գրգռիչ ազդեցության բացակայություն
3, 4	Մաշկի տեղային գրգռման ազդեցության ինդեքս(I), բալ	0	Գրգռիչ ազդեցության բացակայություն
	Աչքի լորձաթաղանթի վրա գրգռիչ ազդեցության ինդեքս (I), բալ	0	Գրգռիչ ազդեցության բացակայություն
5	Մաշկի տեղային գրգռման ազդեցության ինդեքս(I), բալ	0	Գրգռիչ ազդեցության բացակայություն
	Աչքի լորձաթաղանթի վրա գրգռիչ ազդեցության ինդեքս (I), բալ	0	Գրգռիչ ազդեցության բացակայություն

Հավելված 12.5

Սանիտարահամաճարակաբանական վերահսկողությանը (հսկողությանը) ենթակա ապրանքներին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ միասնական պահանջների II գլխի 12-րդ բաժնի

ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐՈՎ

Արտադրանքի խումբը	Ցուցանիշի անվանումը	Բնութագիրը եւ նորման
1	Էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը (ԷՄԴ)	15.0 կՎ/մ–ից ոչ ավելի

Բաժին 13. Սիգարետներին եւ ծխախոտահումքին ներկայացվող պահանջները

Սիգարետներին եւ ծխախոտահումքին ներկայացվող պահանջները

(ՄՄ ԱՏԳ ԱԱ 2401, 2402, 2403 ծածկագրեր)

1. ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

1.1. Սույն պահանջներով սահմանվում են այն ընդհանուր սկզբունքներն ու մոտեցումները, որոնցով ապահովվում է ծխախոտի արտադրանքի եւ ծխախոտահումքի անվտանգությունը (ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրեր «Խումբ 24՝ Ծխախոտ եւ ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ» 2401՝ ծխախոտահումք, 2402–ից՝ սիգարետներ՝ ծխախոտից կամ դրա փոխարինիչներից, 2403՝ այլ ծխախոտներ՝ արդյունաբերական պատրաստման եւ ծխախոտի

արդյունաբերական փոխարինիչներ. ծխախոտ՝ «հոմոգենացված» կամ «վերականգնված». ծխախոտի լուծամզուքներ եւ էսենցիաներ):

2. ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Ծխախոտ՝ մորմազգիների ընտանիքի *Nicotiana* ցեղի *Nicotiana Tabacum, Rustica* տեսակներին պատկանող բույս, որը մշակվում է ծխախոտային արտադրատեսակների արտադրության համար հումք ստանալու նպատակով՝

ծխախոտային արտադրատեսակների արտադրության համար հումք՝ հետքերքահավաքային եւ (կամ) արդյունաբերական այլ մշակում անցած ծխախոտ,

ծխախոտային արտադրատեսակներ՝ ծխախոտի տերեւից ամբողջովին կամ մասամբ, որպես հումք պատրաստված արտադրանքը, որը պատրաստված է այնպես, որ օգտագործվի ծխելու, ծծելու, ծամելու կամ հոտ քաշելու համար,

ծխախոտային արտադրատեսակի տեսակ՝ ծխելու եւ չծխելու համար նախատեսված ծխախոտային այն արտադրատեսակների ամբողջությունը, որոնք նման են սպառողական հատկություններով եւ օգտագործման եղանակով: Դրանց թվին են դասվում սիգարետները, սիգարները, սիգարիլլաները (բարակ սիգարներ), ծխազլանակները, նարգիլեի համար նախատեսված ծխախոտը, բարակ կտրատված ծխախոտը, ծխամորճի, համար նախատեսված ծխախոտը, «բիդի», «կրետեկ» տեսակի ծխախոտները, ծամելու եւ քթանցքով ներքաշելու համար նախատեսված ծխախոտը եւ ծխախոտային այլ արտադրատեսակներ,

ծխախոտային արտադրանք՝ սպառողական տարայում փաթեթավորված ծխախոտային արտադրատեսակը,

ծխելու ծխախոտային արտադրատեսակներ՝ ծխելու համար նախատեսված ծխախոտային արտադրատեսակները,

սիգարետ՝ ծխելու ծխախոտային արտադրատեսակի տեսակը՝ կազմված ծխախոտային արտադրատեսակների արտադրության համար նախատեսված կտրատված հումքից եւ գլանափաթեթված սիգարետի թղթով,

սիգարետ ֆիլտրով՝ ծխելու ծխախոտային արտադրատեսակի տեսակը՝ կազմված ծխախոտային արտադրատեսակների արտադրության համար նախատեսված կտրատված հումքից՝ գլանափաթեթված սիգարետի թղթով (ծխելու հատվածը) եւ ֆիլտրից,

սիգարետ առանց ֆիլտրի՝ ծխելու ծխախոտային արտադրատեսակի տեսակը՝ կազմված ծխախոտային արտադրատեսակների արտադրության համար նախատեսված կտրատված հումքից՝ գլանափաթեթված սիգարետի թղթով (ծխելու հատվածը),

սիգար՝ ծխելու ծխախոտային արտադրատեսակի տեսակը՝ պատրաստված ծխախոտային արտադրատեսակների արտադրության համար նախատեսված սիգարից եւ այլ հումքից ու կազմված երեք շերտից. ծխախոտային արտադրատեսակների արտադրության համար նախատեսված ամբողջական, ճզմված կամ կտրատված սիգարի եւ այլ հումքից կազմված լցոնից, ծխախոտային արտադրատեսակների արտադրության համար նախատեսված սիգարի եւ (կամ) այլ հումքից պատրաստված ենթափաթեթից ու սիգարի ծխախոտի տերեւից կազմված փաթաթվածքից: Սիգարի հաստությունը դրա երկարության մեկ երրորդի (կամ ավելի) երկայնքով պետք է լինի 15 միլիմետրից (մմ) ոչ պակաս,

սիգարիլա (բարակ սիգարներ)՝ ծխելու համար նախատեսված ծխախոտային արտադրատեսակի տեսակը՝ պատրաստված ծխախոտային արտադրատեսակների արտադրության համար նախատեսված սիգարի եւ այլ հումքից ու կազմված բազմաթիվ շերտերից. ծխախոտային արտադրատեսակների արտադրության համար նախատեսված՝ կտրատված կամ ջարդված սիգարի եւ այլ հումքից կազմված լցոնից, ծխախոտային արտադրատեսակների արտադրության համար նախատեսված սիգարի եւ (կամ) այլ հումքից պատրաստված ենթափաթեթից եւ սիգարի ծխախոտի տերեւից, վերականգնված ծխախոտից կամ ցելյուլոզայի եւ ծխախոտի հիմքով պատրաստված՝ հատուկ թղթից կազմված փաթաթվածքից: Սիգարիլան կարող է չունենալ ենթափաթեթ: Սիգարիլան կարող է ունենալ ֆիլտր: Երեք շերտ ունեցող սիգարիլայի առավելագույն հաստությունը չպետք է գերազանցի 15 մմ-ը,

Ծխագլանակ՝ ծխելու համար նախատեսված ծխախոտային արտադրատեսակի տեսակը՝ ծխախոտային արտադրատեսակների արտադրության համար նախատեսված կտրատած հումքից եւ ծխափողի թղթի փաթեթի տեսք ունեցող ծխափողից՝ ծխագլանակի (սիգարետի) թղթով գլանափաթեթված, առանց սոսնձի ատամնածեւ կարով միացված: Ծխագլանակի ծխափողի մեջ կարող է դրվել զտող նյութ,

նարգիլեի համար նախատեսված ծխախոտ՝ ծխելու ծխախոտային արտադրատեսակի տեսակը՝ նարգիլեի օգտագործմամբ ծխելու համար, որը ծխախոտային արտադրատեսակների արտադրության համար նախատեսված կտրատած կամ ջարդած հումքի խառնուրդ է՝ ոչ ծխախոտային հումքի եւ այլ բաղադրիչների ավելացմամբ կամ առանց դրա,

ծխելու համար նախատեսված բարակ կտրատված ծխախոտ՝ ծխելու ծխախոտային արտադրատեսակի տեսակը, որը նախատեսված է ձեռքով սիգարետներ կամ ծխագլանակներ պատրաստելու համար եւ կազմված է կտրատված, ջարդված, փաթաթված կամ մամլած ծխախոտից՝ ոչ ծխախոտային հումքի, սոուսների եւ բուրավետիչների ավելացմամբ կամ առանց դրա, որի մեջ արտադրանքի զտաքաշի 25 տոկոսից ոչ պակաս մասը կազմում են 1 մմ կամ պակաս լայնությամբ մանրաթելերը,

ծխամորճի համար նախատեսված ծխախոտ՝ ծխելու ծխախոտային արտադրատեսակի տեսակը, որը նախատեսված է ծխամորճի օգտագործմամբ ծխելու համար եւ կազմված է կտրատված, ջարդված, փաթաթված կամ մամլած ծխախոտից՝ ոչ ծխախոտային հումքի, սոուսների եւ բուրավետիչների ավելացմամբ կամ առանց դրա, որի մեջ արտադրանքի զտաքաշի 75 տոկոսից ավելին կազմում են 1 մմ-ից ավելի լայնությամբ մանրաթելերը,

բիդի՝ ծխելու ծխախոտային արտադրատեսակի տեսակը՝ կազմված ծխախոտի մանրացված տերեւների, ծխախոտի ջղերի եւ ցողունների խառնուրդից, փաթաթած ու քուղակապված տենդուի (հնդկական երեխոսի) չորացրած տերեւով,

կրետեկ՝ ծխելու ծխախոտային արտադրատեսակի տեսակը՝ կազմված

մանրացված մեխակի եւ ծխախոտային արտադրատեսակների արտադրության համար նախատեսված կտրատած հումքի ստուսացված եւ բուրավետացված խառնուրդից, սիգարետի թղթով կամ եգիպտացորենի կողրի չորացրած տերեւով փաթաթած, ֆիլտրով կամ առանց ֆիլտրի,

չծխելու համար նախատեսված ծխախոտային արտադրատեսակներ՝ ծծելու, ծամելու կամ հոտ քաշելու համար նախատեսված ծխախոտային արտադրատեսակները,

ծծելու համար նախատեսված ծխախոտ (սնյուս)՝ չծխելու ծխախոտային արտադրատեսակի տեսակը՝ ծծելու համար նախատեսված ու ծխախոտի փոշուց մաքրված եւ (կամ) կտրատված ծխախոտի մանր թորամասերից ամբողջովին կամ մասամբ պատրաստված՝ ոչ ծխախոտային հումքի եւ այլ բաղադրիչների ավելացմամբ կամ առանց դրա,

ծամախոտ՝ չծխելու ծխախոտային արտադրատեսակի տեսակը՝ նախատեսված ծամելու համար եւ պատրաստված ծխախոտի տերեւների մամլած կտորներից՝ ոչ ծխախոտային հումքի եւ այլ բաղադրիչների ավելացմամբ կամ առանց դրա,

քթախոտ՝ չծխելու ծխախոտային արտադրատեսակի տեսակը՝ նախատեսված քթով ներքաշելու համար եւ պատրաստված շատ մանրացված ծխախոտից՝ ոչ ծխախոտային հումքի եւ այլ բաղադրիչների ավելացմամբ կամ առանց դրա,

ծխախոտի արտադրանքի անվանում՝ արտադրողի կողմից ծխախոտի արտադրանքին տրված սահմանումը,

բաղադրիչ՝ ծխախոտային արտադրատեսակի արտադրության ժամանակ եւ պատրաստի ծխախոտային արտադրատեսակի մեջ օգտագործվող նյութը (բացառությամբ ծխախոտի տերեւի եւ ծխախոտի այլ մասերի), այդ թվում՝ փոփոխված ձեւով,

ոչ ծխախոտային նյութեր՝ ծխախոտային արտադրատեսակի բաղադրության մեջ մտնող նյութերը (բացառությամբ ծխախոտային արտադրատեսակների արտադրության համար նախատեսված հումքի) եւ արտադրողի կողմից դրան տրվող՝ սահմանված բնութագրերը, առանձնահատկություններն ու ձեւը հաղորդող

նյութերը: Ոչ ծխախոտային նյութերը բաժանվում են հետեւյալ կատեգորիաների. ծխագլանակային, սիգարետային, եզրաշերտային եւ ծխափողի թուղթ, ֆիլտրերի համար փաթաթվածքի թուղթ (ֆիցելլա), ֆիլտրող նյութ, սոսինձներ, թանաք, ծծելու ծխախոտի (սնյուսի) չափաբաժնի համար նախատեսված փաթաթվածքի նյութ, փաթեթավորման նյութ,

սպառողական տարա՝ ծխախոտային արտադրատեսակների փաթեթվածքի նվազագույն միավորը, որի մեջ դրված ձեռով ծխախոտային արտադրատեսակները ձեռք են բերվում սպառողի կողմից,

խեժ՝ ծխախոտի ծխի ջրազրկված կոնդենսատը (խտարարը)՝ նիկոտին չպարունակող,

ֆիլտր՝ արտադրության գործընթացում ծխելու արտադրատեսակի վերջնամասին միացված հարմարանքը՝ նախատեսված ծխախոտի ծխի մասը պահելու համար:

3. ՍԱՆԻՏԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱՎԱՆՁՆԵՐԸ

3.1. Ծխախոտի արտադրանքի արտադրության ժամանակ որպես բաղադրիչներ չի թույլատրվում օգտագործել հետեւյալ նյութերը.

ազարինաթթու (*Acidum agarricimcum*), կեչու ձյութայուղ (*Oleum Betulae empyreumaticum*), դառը նուշի յուղ (*Oleum Amygdalarum amarum*)՝ ազատ կամ կապված սինիլաթթվի պարունակությամբ, սասաֆրասի յուղ (*Oleum Sassafratis*), գիհու ձիթայուղ (*Oleum Juniperi empyreumaticum*), կամֆորայի յուղ (*Oleum camphoratum*), կամֆորա (*Camphora*), կումարին, կանճրակ (*Carthamus*), կենսածառ՝ թույա (*Thuja*),

նյութեր, որոնց շրջանառությունն արգելված է՝ Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերի համաձայն,

բուրավետիչ եւ համային նյութեր՝ պատրաստված կամֆորայի ծառից (*Camphorae*), բազմոտիկ սովորականի կոճղարմատից (*Poiypodii*), ձարխոտի

կոճղարմատից (*Rhizoma Filicis dulcis*), կվասսիայից (*Lignum Quassiae*), օճառածառի կեղեից (*Cortex Quillaja*), մեղվամուշկի խոտից (*Herba Tanacetii*), փեզենայի խոտից (*Herba Rutae*), սասաֆրասի ցողուններից, տերեւներից, կեղեից (*Stipes, Folium, Cortex Sassafras*), իշառվույտ դեղատուից (*Millilotus officinalis*), տոնկայի հատիկներից (*Semen Toncae*), վանիլինի արմատից (*Radix Liatridis odoratissima*), գետնաստղից (*Asperula odorata*), ինչպես նաեւ այնպիսի նյութեր, որոնց շրջանառությունն արգելված է՝ Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերի համաձայն,

3.2. Խեժի եւ նիկոտինի պարունակությունը միլիգրամներով՝ մեկ սիգարետի համար (մգ/սիգ.) չպետք է գերազանցի. ֆիլտրով մեկ սիգարետի ծխում՝ համապատասխանաբար 14 մգ/սիգ. եւ 1.2 մգ/սիգ., առանց ֆիլտրի մեկ սիգարետի ծխում՝ համապատասխանաբար 16 մգ/սիգ. եւ 1.3 մգ/սիգ.:

3.3. Այն դեպքում, եթե արտադրողը եւ (կամ) ներմուծողն անցկացրել է բաղադրիչների թունաբանական հետազոտություններ կամ նման հետազոտություններ անցկացվել են նրանց պատվերով, ապա արտադրողը եւ (կամ) ներմուծողը պարտավոր է տեղեկացնել թունաբանական հետազոտությունների անցկացման փաստի մասին եւ ներկայացնել արդյունքները՝ սանիտարահամաճարակաբանական գնահատումն իրականացնող պաշտոնատար անձի հարցման հիման վրա:

3.4. Ծծելու ծխախոտի (սնյուսի), ծամախոտի համար որպես բաղադրիչներ չի թույլատրվում օգտագործել այլ նյութեր՝ բացի սննդամթերքի մեջ օգտագործման համար թույլատրված սննդամթերքից, սննդային հավելումներից եւ բուրավետիչներից:

3.5. Ծծելու ծխախոտի (սնյուսի), ծամախոտի համար ծանր մետաղների եւ թունաքիմիկատների (պեստիցիդների) պարունակությամբ որպես բուրավետիչներ, սոուսներ, լուծամզուքներ օգտագործվող բաղադրիչները պետք է համապատասխանեն «Սանիտարահամաճարակաբանական (հսկողությանը) վերահսկողությանը ենթակա ապրանքներին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ միասնական պահանջների» II

գլխի «Սննդամթերքի անվտանգությանը եւ սննդային արժեքին ներկայացվող պահանջների» 1-ին բաժնում սահմանված պահանջներին:

Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշման համաձայն՝ 3.6 կետից հանվել են «...եւ ծխախոտային մասի ներմուծվող ծխախոտային արտադրատեսակներ» բառերը:

3.6. Ծխախոտահումքի մեջ թունաքիմիկատների պարունակության սահմանային թույլատրելի մակարդակները ներկայացված են «Սանիտարահամաճարակաբանական հսկողությանը (վերահսկողությանը) ենթակա ապրանքներին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ միասնական պահանջների» II գլխի «Թունաքիմիկատներին (պեստիցիդներին) եւ ազրոքիմիկատներին ներկայացվող պահանջների» 15-րդ բաժնում:

(3.6 կետը՝ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

3.7-3.8. Հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 34 որոշում

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տեխնիկական կանոնակարգման հարցերով կոլեգիայի 2012 թվականի հունիսի 13-ի թիվ 89 որոշման 14-րդ բաժնի համաձայն՝ «Սանիտարահամաճարակաբանական վերահսկողությանը (հսկողությանը) ենթակա ապրանքներին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ միասնական պահանջները» կիրառվում են արտադրանքի՝ սահմանված պահանջների համապատասխանության մասին փաստաթղթերի հիման վրա արտադրված եւ շրջանառության մեջ դրված արտադրանքի նկատմամբ, որոնք տրվել կամ ընդունվել են մինչեւ 2012 թվականի

հուլիսի 1-ը՝ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 878 որոշման 3.2, 3.3, 3.4 կետերի համաձայն:

Բաժին 14. Անհատական պաշտպանության միջոցներին ներկայացվող պահանջները

1. ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՈԼՈՐՏԸ

Սույն փաստաթղթով սահմանվում են անհատական պաշտպանության միջոցներին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ միասնական պահանջները՝ քաղաքացիների կյանքը եւ առողջությունը, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքը, պետական կամ մունիցիպալ գույքը պաշտպանելու, շրջակա միջավայրը պահպանելու եւ սպառողներին մոլորության մեջ գցող գործողությունները կանխելու նպատակներով:

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

Սույն փաստաթղթի օբյեկտների շարքին դասվող արտադրանքի ցանկում ներառվում են անհատական պաշտպանության միջոցներ, այդ թվում՝

– համազգեստներ՝ մեկուսիչ, եւ մարդու մարմինը ռադիոակտիվ նյութերից, իոնացնող եւ ոչ իոնացնող ճառագայթումներից պաշտպանող միջոցներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 3920, 4015, 5603, 5903 ծածկագիր),

– շնչառական օրգանների անհատական պաշտպանության միջոցներ՝ մեկուսիչ եւ զտիչ, այդ թվում՝ դիմային մասեր եւ զտիչներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8421 39, 9020 00 000 0 ծածկագրեր),

– հագուստ՝ հատուկ պաշտպանիչ, այդ թվում՝ զտիչ պաշտպանիչ հագուստ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 4015, 6101-ից, 6102-ից, 6103, 6104, 6107, 6108, 6211 32 100 0, 6211 33 100 0, 6211 43 100 0 ծածկագրեր),

- ձեռքերի անհատական պաշտպանության միջոցներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 4015, 4015 19 000 , 6116 10, 6116 91 000 0, 6116 92 000 0 ծածկագրեր),

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)

- ոտքերի անհատական պաշտպանության միջոցներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 6401, 6402-ից, 6403-ից, 6405-ից ծածկագրեր),

- գլխի, դեմքի եւ աչքերի անհատական պաշտպանության միջոցներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9003 ծածկագիր),

- լսողական օրգանի՝ աղմուկից պաշտպանող անհատական պաշտպանության միջոցներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9021 40 000 0 ծածկագիր),

- ցածր ջերմաստիճանի եւ ջերմային ճառագայթման ներգործությունից պաշտպանող հատուկ հագուստ (տաքացված համազգեստներ, կոշիկ, թաթմաններ, ձեռնոցներ, գլխարկներ, ջերմային սպիտակեղեն, քնապարկեր եւ այլն) (ՄՄ ԱՏԳ ԱԱ 5007, 5111, 5309, 5310, 5311 00, 5407, 5408, 5801, 5802 ծածկագրեր),

- բարձր ջերմաստիճանի եւ ջերմային ճառագայթման ներգործությունից պաշտպանող հատուկ հագուստ (համազգեստներ, կոշիկ, թաթմաններ, ձեռնոցներ, գլխարկներ) (ՄՄ ԱՏԳ ԱԱ 5007, 5111, 5309, 5310, 5311 00, 5407, 5408, 5801, 5802 ծածկագրեր),

- հագուստ ազդանշանային՝ լուսարձակիչ եւ լուսանդրադարձնող նյութերի կիրառմամբ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 5007, 5111, 5309, 5310, 5311 00, 5407, 5408, 5801, 5802 ծածկագրեր),

- ժապավենանյութեր (ՄՄ ԱՏԳ ԱԱ 3920 ծածկագիր),

- գործվածքներ՝ պաշտպանիչ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 5007, 5111, 5309, 5310, 5311 00, 5407, 5408, 5801, 5802 ծածկագրեր),

- չգործված նյութեր՝ ներծծված կամ չներծծված, պատվածքով եւ առանց պատվածքի, կրկնակված (ՄՄ ԱՏԳ ԱԱ 5603 ծածկագիր),

– մանածագործական նյութեր՝ ներծծված, պատվածքով կամ պլաստմասսայով կրկնակված (ՄՄ ԱՏԳ ԱԱ 5903 ծածկագիր),

– կլանիչներ, կատալիզատորներ՝ շնչառական օրգանների անհատական պաշտպանության միջոցների համար, կլանող տուփեր, վերականգնման պարկուճներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 2524, 2530, 2846, 3920 ծածկագրեր),

Սույն փաստաթղթի դրույթները տարածվում են անհատական պաշտպանության միջոցների ու դրանց արտադրության համար օգտագործվող նյութերի վրա եւ չեն տարածվում բժշկության ոլորտի աշխատողների համար նախատեսված պաշտպանության միջոցների, լրացուցիչ պաշտպանիչ միջոցների եւ հարմարանքների (շինարարության համար նախատեսված ապահովիչ գոտիների եւ այլն) ու մաշկաբանության ոլորտի պաշտպանիչ միջոցների վրա:

Անհատական պաշտպանության միջոցներ ներառող հագուստի ցանկը ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրերի հետ ներկայացված է աղյուսակում:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն փաստաթղթում օգտագործվում են հետեւյալ հասկացությունները՝

անհատական պաշտպանության միջոցներ (ԱՊՄ)՝ տեխնիկական միջոցներ, որոնք կիրառվում են մարդու վրա՝ վնասակար եւ (կամ) վտանգավոր գործոնների ազդեցությունը կանխելու կամ նվազեցնելու, ինչպես նաեւ՝ աղտոտումներից պաշտպանելու համար,

օդաթափանցելիություն՝ օդի ծավալը, որը մակերեսի միավորի միջով անցնում է ժամանակի միավորի մեջ՝ 49 Պա ճնշման անկման դեպքում,

վնասակար գործոն՝ գործոն, որի ազդեցությունը մարդու վրա կարող է հանգեցնել նրա հիվանդանալուն կամ առողջության վատթարացմանը,

ԱՊՄ-ի պաշտպանիչ ազդեցության ժամանակ՝ ԱՊՄ-ի մեջ գտնվող մարդու վրա վնասակար կամ վտանգավոր գործոնի ազդեցությունն սկսելուց մինչեւ այնպիսի իրավիճակի առաջացման պահին ընկած ժամանակը, երբ վնասակար կամ

վտանգավոր գործոնի ազդեցության մակարդակը գերազանցի սահմանված սահմանային մեծությունները՝ նշված պայմաններում,

զտիչ ՇՕԱՊՄ-ի պաշտպանիչ ազդեցության ժամանակ՝ ՇՕԱՊՄ-ի դիմաց փորձանյութի բեկման նորմավորված խտությանը հասնելու համար ծախսված ժամանակը՝ նշված պայմաններում,

խոնավածծություն (հիգրոսկոպիկություն)՝ շրջակա միջավայրից խոնավությունը կլանելու նյութերի ունակությունը,

ԱՊՄ-ի լրակազմ՝ ԱՊՄ-ի եւ հագուստի բոլոր առարկաները՝ հագցված մարդու (մանեկենի) վրա,

ԱՊՄ-ի համար համալրող արտադրատեսակներ՝ ԱՊՄ-ի փոխովի բաղկացուցիչ մասեր, որոնք ԱՊՄ-ի հետ կամ դրանից առանձին, պատրաստի վաճառքի համար, մականշվածքով եւ կիրառության ցուցումներով մատակարարվում են արտադրողի կողմից,

ԱՊՄ-ի պաշտպանության գործակից՝ մարդու վրա վնասակար կամ վտանգավոր գործոնի ազդեցության մակարդակը անհատական պաշտպանության միջոցով նվազեցման բազմապատիկը,

վնասակար քիմիական նյութերի միգրացիա դեպի մոդելային միջավայրեր՝ նյութերից կամ արտադրատեսակներից դեպի մոդելային միջավայրեր (օդ, թորած ջուր) քիմիական նյութերի արտազատումը՝ փորձի որոշակի պայմաններում սանիտարաքիմիական փորձարկումներ անցկացնելիս,

վտանգավոր գործոն՝ գործոն, որի ազդեցությունը մարդու վրա կարող է հանգեցնել նրա վնասվածք ստանալուն կամ մահվան,

ճառագայթային գործոն՝ արտաքին իոնացնող ճառագայթման եւ (կամ) ռադիոակտիվ նյութերի վնասակար եւ (կամ) վտանգավոր ազդեցությունը մարդու վրա, որոնք ներթափանցում են օրգանիզմ եւ մաշկային ծածկույթ,

բաղադրատոմս (արտադրատեսակի նյութի)՝ նյութի մեջ հումքի այն բաղադրիչների տոկոսային պարունակությունը, որոնք օգտագործվում են դրա

արտադրության ժամանակ (պոլիմերային, սինթետիկ, արհեստական, ռետինե, ռետինագործվածքային),

բաղադրություն (արտադրատեսակի նյութի)՝ նյութի մեջ հումքի այն բաղադրիչների ցանկը, որոնք օգտագործվում են դրա արտադրության ժամանակ (պոլիմերային, սինթետիկ, արհեստական, ռետինե, ռետինագործվածքային),

իոնացնող ճառագայթումներից ԱՊՄ-ի կապարի համարժեք՝ նյութի պաշտպանիչ արդյունավետության ցուցանիշը, որ միլիմետրերով հավասար է կապարե թիթեղի այն հաստությանը, որը ռենտգենային ճառագայթման չափաբաժնի ուժը թուլացնում է այնքան անգամ, որքան տվյալ նյութը,

շնչառական օրգանների պաշտպանության միջոց (ՇՕԱՊՄ)՝ տեխնիկական սարք, որը կրում է մարդը, եւ որն ապահովում է օրգանիզմի պաշտպանությունը վտանգավոր եւ վնասակար գործոնների՝ գլխավորապես ինհալացիայի միջոցով առաջացրած ազդեցությունից,

ջերմամեկուսիչ հատկություններ (լրակազմի)՝ ԱՊՄ-ի լրակազմի հատկությունները՝ մարդու մարմնի մակերեսույթից ջերմությունը արտաքին միջավայր եւ (կամ) հակառակ ուղղությամբ փոխանցելու նկատմամբ լրիվ դիմադրությանն առնչվող՝ ներառյալ հագուստի նյութերը, դրանց միջեւ եղած օդային միջնաշերտերը եւ հագուստի արտաքին մակերեսույթին հարակցվող օդի շերտը,

օգտագործողի որակավորմանը ներկայացվող պահանջներ՝ այն գիտելիքների, կարողությունների, հմտությունների եւ փորձի ցանկը, որոնք պետք է ունենա օգտագործողը՝ ԱՊՄ-ի անվտանգ օգտագործման նպատակներով,

էկրանացնող հատկություններ (էլեկտրամագնիսական դաշտերից պաշտպանության համար նախատեսված լրակազմերի)՝ մարդու համար պասիվ պաշտպանություն ապահովելու էկրանացնող լրակազմերի ունակությունը՝ ներքին էլեկտրամագնիսական միջավայրն արտաքինից մեկուսացնելու ճանապարհով՝ հատուկ նյութերի (կլանող եւ էկրանացնող) կիրառման օգնությամբ,

էլեկտրականացման հատկություն՝ էլեկտրաստատիկ լիցք կուտակելու նյութի ունակությունը:

3. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԱՊՄ-ները, դրանց արտադրության համար օգտագործվող նյութերը, ինչպես նաև այն նյութերն ու արտադրանքը, որոնք կարող են արտազատվել դրանց շահագործման ժամանակ, չպետք է վնաս պատճառեն մարդու առողջությանը եւ շրջակա միջավայրին ու պետք է համապատասխանեն սահմանված սանիտարահիգիենիկ պահանջներին:

ԱՊՄ-ները պետք է լինեն թեթեւ, բայց ոչ ի վնաս կառուցվածքի ամրությանը եւ դրանց օգտագործման արդյունավետությանը:

ԱՊՄ-ները պետք է ունենան այնպիսի կառուցվածք, որն առավելագույնս համապատասխանում է օգտագործողի ֆիզիոլոգիային, նրա ֆիզիկական առանձնահատկություններին եւ ենթադրվող աշխատանքի ծանրությանը, ինչպես նաև շրջակա միջավայրի կլիմայական (միկրոկլիմայական) այն պայմաններին, որոնց համար դրանք նախատեսված են:

ԱՊՄ-ները պետք է նախագծվեն եւ պատրաստվեն այնպես, որ նախատեսված պայմաններում դրանք ըստ նշանակության կիրառելիս, օգտագործողը կարողանա իրականացնել նորմալ գործունեություն, ինչի ընթացքում նա համարժեք եւ արդյունավետ կերպով պաշտպանված կլինի ռիսկերի համապատասխան տեսակներից:

ԱՊՄ-ները պետք է ունենան պիտակ (մականշվածք), որի միջոցով օգտագործողը տեղեկանում է արտադրողի, արտադրանքի կիրառության ոլորտի, կիրառության եւ պահպանման ժամկետների ու պայմանների մասին, ինչպես նաև արտադրանքը շահագործելիս պետք է անվտանգության միջոցների մասին նախազգուշացնող տեղեկություններ լինեն:

4. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

4.1. Սանիտարաքիմիական փորձարկումներ.

- հոտաչափական հետազոտություններ (նյութերի հոտի ուժգնության գնահատում),
- արտադրատեսակների նյութերից վնասակար նյութերի՝ դեպի մոդելային միջավայրեր (օդ, թորած ջուր) միգրացիայի մակարդակների որակական-քանակական հետազոտություններ,
- ջրային լուծամզուկների վիճակի ինտեգրալ ցուցանիշների գնահատում,
- ջրային լուծամզուկների զգայորոշման (օրգանոլետիկ) հետազոտություններ (հոտի ուժգնության, գույնի, պղտորության գնահատում),
- ջրածնի իոնների (pH) ակտիվության ցուցանիշի չափումը՝ արտադրատեսակների նյութերի ջրային լուծամզուկներում եւ դրա փոփոխությունները՝ հսկողության հետ համեմատած, թթվեցումը, բրոմացումը, ուլտրամանուշակագույն կլանումը՝ 220-360 նմ ալիքների երկարությամբ տիրույթում, վերականգնող խառնուկները:

4.2. Թունաբանական փորձարկումներ՝

- Մաշկային ծածկույթի վրա արտադրատեսակների նյութերի եւ (կամ) դրանցից ստացվող ջրային լուծամզուկների գրգռիչ ազդեցության գնահատումը,
- աչքի լորձաթաղանթի վրա գազանջատումների կամ նյութերից ստացվող ջրային լուծամզուկների գրգռիչ ազդեցության գնահատումը,
- արտադրատեսակների նյութերի եւ (կամ) դրանցից ստացվող ջրային լուծամզուկների զգայունացնող ազդեցության գնահատումը,

- in vitro (թունավորության ինդեքս) պայմաններում շարժունակ բջջային կուլտուրայի վրա արտադրատեսակների նյութերից ստացվող ջրային լուծամզուկների ընդհանուր թունաբանական եւ մաշկը գրգռող ազդեցության գնահատումը,

- այն քիմիական բաղադրիչների (կլանիչների, կատալիզատորների) թունաբանական բնութագիրը, որոնք օգտագործվում են շնչառական օրգանների անհատական պաշտպանության միջոցների բաղադրության մեջ:

4.3. ԱՊՄ-ների եւ նյութերի փորձարկման ֆիզիկական մեթոդները

- Արտադրատեսակների նյութերի էլեկտրականացման գնահատումը,
- արտադրատեսակների նյութերի խոնավածծության (հիգրոսկոպիկության) գնահատումը,
- արտադրատեսակների նյութերի օդաթափանցելիության գնահատումը,
- էլեկտրամագնիսական դաշտերի ազդեցությունից պաշտպանության համար նախատեսված լրակազմերի էկրանացման արդյունավետության գնահատումը,
- հատուկ հագուստի, համազգեստի, այդ թվում՝ մեկուսիչ, կոշիկի եւ այլ ԱՊՄ-ների զանգվածի գնահատումը,
- օգտագործողի շփման համար հասանելի մակերեսային ջերմաստիճանի չափումը՝ կլանող տուփերի, վերականգնման պարկուճների, ջերմության ինքնավար աղբյուրների օգտագործման ժամանակ,
- ազդանշանային սարքերի ձայնի, խոսելու սարքերի եւ նմ. էՄԴ-ների մակարդակների գնահատումը:

4.4. Ֆիզիոլոգիական եւ հիգիենիկ հետազոտություններ (փորձարարների ներգրավմամբ)

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

- Ֆիզիոլոգիական ցուցանիշների գնահատումը՝ հատուկ հագուստի օգտագործման դեպքում (մաշկի ջերմաստիճանի, ջերմային հոսքի, խոնավության կորստի, սրտի կծկումների հաճախականության չափումներ եւ նմ.),
- ցածր ջերմաստիճանից պաշտպանելու համար նախատեսված հատուկ հագուստի ջերմամեկուսիչ (ջերմապաշտպանիչ) հատկությունների գնահատումը՝ մարդու ջերմային վիճակի ցուցանիշների համաձայն,
- բարձր ջերմաստիճանից պաշտպանելու համար նախատեսված հատուկ հագուստի պաշտպանիչ հատկությունների գնահատումը,
- առանց մեկուսիչ համազգեստի աշխատելու ժամանակ մարդու մարմնի միջին ջերմաստիճանից մեկուսիչ համազգեստով աշխատելու ժամանակ մարմնի միջին ջերմաստիճանի շեղման չափումը,
- մեկուսիչ համազգեստների տակ գտնվող տարածությունում եղած օդի միկրոկլիմայական պարամետրերի գնահատումը,
- էլեկտրամագնիսական դաշտերի ազդեցությունից պաշտպանության համար նախատեսված՝ էկրանացնող լրակազմերի որակավորման փորձարկումները:

**5. ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՄԱԿԱՆՇՎԱԾՔԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341
որոշման խմբագրությամբ)

Անհատական պաշտպանության միջոցների մականշվաձքը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

անհատական պաշտպանության միջոցների յուրաքանչյուր միավոր՝ ներառյալ փոխովի բաղկացուցիչ մասերը, պետք է ունենա մականշվաձք: Մականշվաձքը դրվում է անմիջապես արտադրատեսակի եւ դրա փաթեթվաձքի վրա: Եթե մականշվաձքը հնարավոր չէ դնել անմիջապես արտադրատեսակի վրա, ապա այն դրվում է արտադրատեսակին ամրացված պիտակի կամ դրա անհատական փաթեթվաձքի վրա:

Մականշվաձքը դրվում է անմիջապես արտադրատեսակի եւ անհատական պաշտպանության հետևյալ միջոցները համալրող արտադրատեսակների վրա. համազգեստներ՝ մեկուսիչ, ՇՕԱՊՄ, հագուստ՝ հատուկ եւ զտիչ պաշտպանիչ հագուստ, ԱՊՄ՝ գլխի, ԱՊՄ՝ աչքերի, ԱՊՄ՝ դեմքի, ԱՊՄ՝ լսողական օրգանի՝ բացի ականջակալներից, ձեռնոցներ՝ էլաստոմերային նյութերից:

Անմիջապես արտադրատեսակի կամ արտադրատեսակին ամրացված պիտակի վրա դրվող մականշվաձքը պետք է ներառի.

արտադրատեսակի անվանումը (կոշիկի համարը՝ մոդելի, ծածկագրի, ապրանքատեսակի անվանումը),

արտադրողի անվանումը եւ (կամ) նրա ապրանքային նշանը,

պաշտպանիչ հատկությունները,

չափսը (առկայության դեպքում),

ստանդարտացման ոլորտում նորմատիվ իրավական այն ակտի, փաստաթղթերի, եւ (կամ) կանոնագրքերի, եւ (կամ) տեխնիկական պայմանների անվանումը, որոնց պահանջներին համապատասխանում է անհատական պաշտպանության միջոցը,

շուկայում առկա շրջանառության նշանը,

համապատասխանության հավաստագրի կամ համապատասխանության հայտարարագրի առկայության մասին տեղեկությունները,

արտադրման ամսաթիվը կամ պիտանիության ժամկետը լրանալու ամսաթիվը, եթե այն սահմանված է,

կլիմայական այն գոտու մասին տեղեկությունները, որտեղ կարող են կիրառվել անհատական պաշտպանության միջոցները (անհրաժեշտության դեպքում),

անհատական պաշտպանության միջոցի խնամքի եղանակների եւ օգտահանման մասին տեղեկությունները,

այլ տեղեկություններ՝ արտադրողի տեխնիկական փաստաթղթերին համապատասխան:

Տեղեկությունները պետք է դրվեն ռեխիթային ցանկացած եղանակով (դրոշմատպում, փորագրում, ձուլում, դրոշմակում) կամ դժվարությամբ հեռացվող ներկով՝ անմիջապես արտադրատեսակի կամ արտադրատեսակին կցված պիտակի վրա: Թույլատրվում է տեղեկությունները դնել այնպիսի պատկերագրերի տեսքով, որոնք կարող են օգտագործվել որպես վտանգի կամ անհատական պաշտպանության միջոցների կիրառության ոլորտի ցուցիչներ: Տեղեկությունները պետք է լինեն հստակ ընթեռնելի եւ չջնջվող՝ արտադրանքի պահպանման, փոխադրման, իրացման եւ ըստ նշանակության օգտագործման դեպքում՝ շահագործման ամբողջ ժամկետի եւ (կամ) երաշխավորված պահպանման ժամկետի ընթացքում:

Արտադրատեսակի փաթեթվածքի վրա դրվող մականշվածքը պետք է ներառի՝

արտադրատեսակի անվանումը (կոշիկի համար՝ մոդելի, ծածկագրի,

ապրանքատեսակի անվանումը),

արտադրող երկրի անվանումը,

արտադրողի անվանումը, իրավաբանական հասցեն եւ առեւտրային նշանը,

ստանդարտացման ոլորտում նորմատիվ իրավական այն ակտի, փաստաթղթերի եւ (կամ) կանոնագրքերի եւ (կամ) տեխնիկական պայմանների անվանումները, որոնց պահանջներին համապատասխանում է անհատական պաշտպանության միջոցը,

չափսը (առկայության դեպքում),

արտադրատեսակի պաշտպանիչ հատկությունները,

արտադրատեսակի խնամքի եղանակները (անհրաժեշտության դեպքում),

արտադրման տարեթիվը, եւ, եթե սահմանված են, ապա՝ պիտանիության ժամկետը կամ պիտանիության ժամկետը լրանալու ամսաթիվը,

երաշխիքային ժամկետը՝ անհատական պաշտպանության այն միջոցների համար, որոնք պահպանման եւ (կամ) շահագործման ընթացքում կորցնում են պաշտպանիչ հատկությունները,

շուկայում առկա շրջանառության նշանը, համապատասխանության հավաստագրի կամ համապատասխանության հայտարարագրի առկայության մասին տեղեկությունները,

վտանգավոր կամ վնասակար գործոնի մեծությունը, որը սահմանափակում է անհատական պաշտպանության միջոցի օգտագործումը (առկայության դեպքում),

օգտագործողների տարիքով, առողջական վիճակով եւ ֆիզիոլոգիական այլ առանձնահատկություններով պայմանավորված՝ օգտագործման սահմանափակումները,

կլիմայական այն գոտու մասին տեղեկությունները, որտեղ կարող են կիրառվել անհատական պաշտպանության միջոցները (անհրաժեշտության դեպքում),

այլ տեղեկություններ՝ արտադրողի փաստաթղթերին համապատասխան:

Մականշվածքը պետք է շարադրված լինի ոուսերենով:

Անհատական պաշտպանության միջոցների մականշվածքը պետք է լինի հասկանալի, դյուրընթեռնելի եւ դրված լինի արտադրանքի մակերեսի վրա (պիտակի, փաթեթվածքի), որը տեսանելի է առանց ուշադիր զննելու կամ գործիք կիրառելու:

Անհատական պաշտպանության միջոցների շահագործման ցուցումները ներառված են անհատական պաշտպանության միջոցներին առնչվող շահագործման փաստաթղթերում եւ պետք է ներառեն.

1) կիրառության ոլորտը,

2) անհատական պաշտպանության միջոցների կիրառության սահմանափակումներն ըստ ազդեցության գործոնների, ինչպես նաեւ ըստ օգտագործողների տարիքային կատեգորիաների եւ առողջական վիճակի (առկայության դեպքում),

3) անհատական պաշտպանության միջոցների օգտագործման կարգը (բարդ կառուցվածք ունեցող անհատական պաշտպանության միջոցների համար),

4) օգտագործողի որակավորմանը ներկայացվող պահանջները, անհատական պաշտպանության միջոցների կիրառման համար թույլտվության կարգը (առկայության դեպքում),

5) անհատական պաշտպանության միջոցի տեսակը,

6) անհատական պաշտպանության միջոցի անվանումը,

7) անհատական պաշտպանության միջոցի պաշտպանիչ եւ շահագործման հատկությունների ցուցանիշները՝ ձեռք բերողի համար տեղեկություններին ներկայացվող պահանջների եւ այն պայմանների համաձայն, որոնց դեպքում ապահովվում են այդ պահանջները,

8) անհատական պաշտպանության միջոցի անվտանգ կիրառության մասին տեղեկությունները,

9) անհատական պաշտպանության միջոցի պարբերական ստուգումների եւ դրա սպասարկումն անցկացնելու կարգը (անհրաժեշտության դեպքում),

10) անհատական պաշտպանության միջոցի չափի (բարձրության) մասին տեղեկությունները՝ ԵվրԱզԷՍ-ի երկրներում կիրառվող չափման միավորներով (առկայության դեպքում),

11) անհատական պաշտպանության միջոցի անվտանգ պահպանման կանոնները, պայմանները եւ ժամկետները,

12) անհատական պաշտպանության միջոցների անվտանգ փոխադրմանը ներկայացվող պահանջները (այդպիսի պահանջների առկայության դեպքում),

13) անհատական պաշտպանության միջոցի օգտահանմանը ներկայացվող պահանջները (այդպիսի պահանջների առկայության դեպքում),

14) ստանդարտացման ոլորտում նորմատիվ իրավական այն ակտի, փաստաթղթերի եւ (կամ) կանոնադրքերի եւ (կամ) տեխնիկական պայմանների անվանումը, որոնց պահանջներին համապատասխանում է անհատական պաշտպանության միջոցը,

15) արտադրող երկրի անունը եւ արտադրողի անվանումը, նրա իրավաբանական հասցեն,

16) պիտանելիության ժամկետը կամ պիտանելիության ժամկետը լրանալու ամսաթիվը,

17) երաշխիքային ժամկետը՝ անհատական պաշտպանության այն միջոցների համար, որոնք կորցնում են պաշտպանիչ հատկությունները պահպանման եւ (կամ) շահագործման ընթացքում,

18) արտադրողի երաշխիքները,

19) համապատասխանության հավաստագրի կամ համապատասխանության հայտարարագրի առկայության մասին տեղեկությունները:

**Անհատական պաշտպանության միջոցների եւ դրանց պատրաստման համար
օգտագործվող նյութերի ցանկը՝ ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրերով**

Ապրանքի դասակարգումը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի	Ապրանքի կրճատ անվանումը
2524	Ասբեստ
2530	Այլ տեղում չնշված կամ չներառված հանքային նյութեր
2846	Միացություններ՝ անօրգանական կամ օրգանական, հազվագյուտ հողային մետաղների, իտրիումի կամ սկանդիումի, կամ այդ մետաղների խառնուրդների
3920	Պլաստմասսայից սալիկներ, թերթեր, թաղանթ եւ շերտեր կամ ժապավեններ եւ այլն՝ ոչ ծակոտկեն եւ չամրանավորված, ոչ շերտավոր, ոչ հիմնաշերտով եւ համանման ձեւով չմիացված այլ նյութերի հետ
4015	Հագուստ եւ հագուստի պարագաներ (ներառյալ ձեռնոցները, թաթմանները եւ կիսաձեռնոցները)՝ վուլկանացված ռետինից՝ բացի կոշտ ռետինից եւ բժշկական նպատակներով օգտագործվող ռետինից
5007	Գործվածքներ՝ մետաքսե թելերից կամ մետաքսի թափոններից
5111	Գործվածքներ՝ մեքենայական մանման բրդյա մանվածքից կամ կենդանիների նուրբ մազից մեքենայական մանման մանվածք
5309	Գործվածքներ՝ վուշի
5310	Գործվածքներ՝ ջութե մանրաթելերից կամ 5303 ապրանքային դիրքում նշված այլ թելատուների մանածագործական մանրաթելերից
5311 00	Գործվածքներ՝ այլ բուսական մանածագործական մանրաթելերից, գործվածք՝ թղթե մանվածքից
5407	Գործվածքներ՝ սինթետիկ համալիր թելերից՝ ներառյալ 5404 ապրանքային դիրքի ներքո դասակարգված նյութերից պատրաստված գործվածքները
5408	Գործվածքներ՝ արհեստական համալիր թելերից՝ ներառյալ 5405 ապրանքային դիրքի ներքո դասակարգված նյութերից պատրաստված գործվածքները
5603	Չգործված կտորեղեն՝ ներծծված կամ չներծծված, ծածկույթով կամ առանց ծածկույթի, կրկնակված կամ չկրկնակված
5801	Գործվածքներ՝ խավավոր եւ գործվածքներ՝ թավաթելից՝ բացի 5802 կամ 5806 ապրանքային դիրքերի ներքո դասակարգված գործվածքներից
5802	Գործվածքներ՝ խավավոր սրբիչային եւ համանման խավավոր գործվածքներ, բացի 5806 ապրանքային դիրքի ներքո գործվածքներից. թափակար նրբախավով մանածագործական նյութեր՝ բացի 5703 ապրանքային դիրքի ներքո դասակարգված արտադրատեսակներից
5903	Մանածագործական նյութեր՝ ներծծված, ծածկույթով կամ պլաստմասսայով կրկնակված՝ բացառությամբ 5902

	ապրանքային դիրքի ներքո դասակարգված նյութերի
8421 39 200	Օդի զտման եւ մաքրման համար այլ սարքավորումներ եւ սարքեր
9003	Շրջանակներ եւ արմատուրա՝ ակնոցների, պաշտպանիչ ակնոցների կամ համանման օպտիկական սարքերի համար եւ դրանց մասերը
9020 00 000 0	Սարքավորումներ՝ շնչառական այլ տեսակի եւ գազային դիմակներ՝ բացի պաշտպանիչ դիմակներից, առանց մեխանիկական դետալների եւ փոխովի գտիչների:

Հսկողության ենթակա արտադրանքին (ապրանքներին) եւ դրանց անվտանգության ցուցանիշներին ներկայացվող հիմնական պահանջները

Հ/հ	Արտադրանքի (ապրանքի) անվանումը	Սանիտարահամաճարակաբանական պահանջները		Ծանոթագրություններ
		ցուցանիշ	թույլատրելի մակարդակներ	
14. Անհատական պաշտպանության միջոցներ				
1.	Անհատական պաշտպանության միջոցների նյութեր	Սանիտարահիգիենիկ ցուցանիշներ Հոտաչափություն (արտադրատեսակների նմուշների նյութերի հոտը)	2 բալից ոչ ավելի	
		Ջրային լուծամզուկների վիճակի սանիտարաքիմիական ցուցանիշները		
		Հոտը Գույնը Պղտորությունը pH Փոփոխությունը pH Թթվեցումը Բրոմացումը <*> ուլտրամանուշակագույն կլանում՝ 2203 60 նմ ալիքների երկարությամբ տիրույթում Վերականգնող խառնուկներ	2 բալից ոչ ավելի, ըստ սանդղակի՝ 20°-ից ոչ ավելի, 2 բալից ոչ ավելի՝ 6-9-ի սահմաններում. pH +/- 1 միավոր pH 5 մգO ₂ /լ-ից ոչ ավելի 0.3 մգO ₂ վգ ₂ /լ-ից ոչ ավելի 0,3 միավոր ծավալից ոչ ավելի 1 մլ 0,02H p-րա Na ₂ S ₂ O ₃ լուծույթից ոչ ավելի	
		Վնասակար նյութերի միգրացիան թորած	ՄԹՔ (մգ/լ ոչ ավելի)	<*> քիմիական

ջրում (ելնելով նյութերի բաղադրությունից)		վնասակար նյութի ՍԹԽ-ն՝ խմելու ջրում, մգ/լ
Բնական մանրաթելեր՝ Ֆորմալդեհիդ	0,1 մգ/լ	
Արհեստական մանրաթելեր (վիսկոզա, ացետատներ)՝ - ծծմբաածխածին - ացետալդեհիդ <*>	1,0 մգ/լ 0,2 մգ/լ	
Քիմիական մանրաթելեր.		
Պոլիէթերային (ՊԵ, լավսան)՝ - էթիլենգլիկոլ - դիմեթիլտերեֆտալատ	1,0 մգ/լ 1,5 մգ/լ	
Պոլիամիդային (ՊԱ, կապրոն, նեյլոն)՝ - կապրոլակտամ - հեքսամեթիլենդիամին	0,5 մգ/լ 0,01 մգ/լ	
Պոլիակրիլոնիտրիլային (ՊԱՆ, նիտրոն)՝ - ակրիլանիտրիլ - վինիլացետատ	0,02 մգ/լ 0,2 մգ/լ	
Պոլիվինիլքլորիդային (ՊՎԶ, քլորին)՝ - վինիլքլորիդ - բենզոլ - դիօկտիլֆտալատ - դիբութիլֆտալատ	0,01 մգ/լ 0,01 մգ/լ 2,0 մգ/լ 0,2 մգ/լ	
Պոլիվինիլ սպիրտային (ՊՎՍ, վինոլ). - վինիլացետատ	0,2 մգ/լ	
Պոլիուլեֆինային (պոլիպրոպիլենային, պոլիէթիլենային). - ֆորմալդեհիդ - ացետալդեհիդ	0,1 մգ/լ 0,2 մգ/լ	
Պոլիուրետային (սպանդեկս)՝ - էթիլենգլիկոլ - ացետալդեհիդ	1,0 մգ/լ 0,2 մգ/լ	
Պոլիէթերներ՝ Պոլիէթիլենօքսիդ - ֆորմալդեհիդ - ացետալդեհիդ Պոլիպրոպիլենօքսիդ - մեթիլացետատ	0,1 մգ/լ 0,2 մգ/լ 0,1 մգ/լ	

	<ul style="list-style-type: none"> - ացետոն - ֆորմալդեհիդ - ացետալդեհիդ <*> <p>Պոլիտետրամեթիլենօքսիդ</p> <ul style="list-style-type: none"> - պրոպիլային սպիրտ - ացետալդեհիդ <*> - ֆորմալդեհիդ <p>Պոլիֆենիլենօքսիդ</p> <ul style="list-style-type: none"> - ֆենոլ - ֆորմալդեհիդ <p>Պոլիկարբոնատ</p> <ul style="list-style-type: none"> - ֆենոլ - դիֆենիլուպրոպան - մեթիլենքլորիդ - քլորբենզոլ 	<p>0,2 մգ/լ</p> <p>0,1 մգ/լ</p> <p>0,2 մգ/լ</p> <p>0,1 մգ/լ</p> <p>0,2 մգ/լ</p> <p>0,1 մգ/լ</p> <p>0,05 մգ/լ</p> <p>0,1 մգ/լ</p> <p>0,05 մգ/լ</p> <p>0,01 մգ/լ</p> <p>0,02 մգ/լ</p> <p>0,02 մգ/լ</p>	
	<p>Պոլիսուլֆոն</p> <ul style="list-style-type: none"> - դիֆենիլուպրոպան - ֆենոլ - բենզոլ 	<p>0,01 մգ/լ</p> <p>0,05 մգ/լ</p> <p>0,01 մգ/լ</p>	
	<ul style="list-style-type: none"> - մկնդեղ (As) - կապար (Pb) - կադմիում (Cd) - քրոմ (Cr) - կոբալտ (Co) - պղինձ (Cu) - նիկել (Ni) - սնդիկ (Hg) 	<p>0,05 մգ/լ</p> <p>0,03 մգ/լ</p> <p>0,001 մգ/լ</p> <p>0,1 մգ/լ</p> <p>0,1 մգ/լ</p> <p>1 մգ/լ</p> <p>0,1 մգ/լ</p> <p>0,0005 մգ/լ</p>	
	<p>Ռետիններ, (կախված բաղադրությունից), հետեւյալ տեսակի՝ Կաուչուկներ՝ СКН, СКД եւ այլն</p> <ul style="list-style-type: none"> - ակրիլաթթվի նիտրիլ Ստիրոլային (СКС, СРС եւ այլն) - ստիրոլ Մեթիլենստիրոլային (СКМС, СРМС եւ այլն) - ալֆա-մեթիլստիրոլ Իզոպրենային (СКИ) - իզոպրեն <p>Բոլոր ռետիններից եւ լատեքսներից</p> <ul style="list-style-type: none"> - թիուրամ - ցիմատ - էթիլցիմատ - կապտաքս - ալտաքս - դիբուրիլֆտալատ 	<p>0,02 մգ/լ</p> <p>0,01. մգ/լ</p> <p>0,1 մգ/լ</p> <p>0,01 մգ/լ</p> <p>0,5 մգ/լ</p> <p>0,05 մգ/լ</p> <p>0,05 մգ/լ</p> <p>0,4 մգ/լ</p> <p>0,4 մգ/լ</p> <p>0,25. մգ/լ</p>	

		- ցինկի իոններ	1 մգ/լ	
		Վնասակար նյութերի միգրացիան օդային միջավայրում (ելնելով նյութերի բաղադրությունից)	ՍԹԽ- մ.օ. մթնոլորտային օդում (մգ/մ ³), ոչ ավելի	
		Բնական մանրաթելեր՝ - ֆորմալդեհիդ	0,003 մգ/մ ³	<*> Նորմատիվը նշված է առանց հաշվի առնելու շրջակա օդի ֆոնային աղտոտումը
		Արհեստական մանրաթելեր (վիսկոզա, ացետատներ)՝ - ծծմբաածխածին - ացետալդեհիդ	0,005 մգ/մ ³ 0,01 մգ/մ ³	
		Քիմիական մանրաթելեր.		
		Պոլիէթերային (ՊԵ, լավսան)՝ - էթիլենգլիկոլ - դիմեթիլտերեֆտալատ	1,0 մգ/մ ³ 0,05 մգ/մ ³	
		Պոլիամիդային (ՊԱ, կապրոն, նեյլոն)՝ - կապրոլակտամ	0,06 մգ/մ ³	
դիրքը հանվել է:Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշում				
		Պոլիակրիլոնիտրիլային (ՊԱՆ, նիտրոն)՝ - ակրիլանիտրիլ - վինիլացետատ	0,03 մգ/մ ³ 0,15 մգ/մ ³	
		Պոլիվինիլքլորիդային (ՊՎԲ, քլորին)՝ - բենզոլ - տոլուոլ - դիօկտիլֆտալատ	0,1 մգ/մ ³ 0,6 մգ/մ ³ 0,02 մգ/մ ³	
		Պոլիվինիլ սպիրտային (ՊՎՍ, վինոլ)՝ - վինիլացետատ	0,15 մգ/մ ³	
		Պոլիօլեֆինային (պոլիպրոպիլենային, պոլիէթիլենային)՝ - ֆորմալդեհիդ - ացետալդեհիդ	0,003 մգ/մ ³ 0,01 մգ/մ ³	
		Պոլիուրետային (սպանդեկս)՝		

		<ul style="list-style-type: none"> - էթիլենգլիկոլ - ացետալդեհիդ 	<p>1,0 մգ/մ³</p> <p>0,01 մգ/մ³</p>	
		<p>Պոլիէթերներ՝</p> <p>Պոլիէթիլէնօքսիդ</p> <ul style="list-style-type: none"> - ֆորմալդեհիդ <*> - ացետալդեհիդ <p>Պոլիպրոպիլէնօքսիդ՝</p> <ul style="list-style-type: none"> - մեթիլացետատ - ացետոն - ֆորմալդեհիդ <p>Պոլիտետրամէթիլէնօքսիդ</p> <ul style="list-style-type: none"> - պրոպիլային սպիրտ - ացետալդեհիդ - ֆորմալդեհիդ <p>Պոլիֆենիլէնօքսիդ</p> <ul style="list-style-type: none"> - ֆենոլ - ֆորմալդեհիդ <p>Պոլիկարբոնատ</p> <ul style="list-style-type: none"> - ֆենոլ 	<p>0,003 մգ/մ³</p> <p>0,01 մգ/մ³</p> <p>0,07 մգ/մ³</p> <p>0,35 մգ/մ³</p> <p>0,003 մգ/մ³</p> <p>0,01 մգ/մ³</p> <p>0,3 մգ/մ³</p> <p>0,01 մգ/մ³</p> <p>0,003 մգ/մ³</p> <p>0,003 մգ/մ³</p> <p>0,003 մգ/մ³</p> <p>0,003 մգ/մ³</p>	
		<p>դիրքը հանվել է: Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18 –ի թիվ 456 որոշում</p>		
		<ul style="list-style-type: none"> - քլորբենզոլ Պոլիսուլֆոն 	<p>0,1 մգ/մ³</p>	
		<p>դիրքը հանվել է: Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18 –ի թիվ 456 որոշում</p>		
		<ul style="list-style-type: none"> - ֆենոլ - բենզոլ 	<p>0,003 մգ/մ³</p> <p>0,1 մգ/մ³</p>	
		<p>Ռետիններ (կախված բաղադրությունից), կաուչուկներ՝ հետեւյալ տեսակի.</p> <p>Բութադիմեն նիտրիլային</p> <ul style="list-style-type: none"> - բութադիեն (դիվինիլ) <p>Կաուչուկներ՝ ՇՔԽ, ՇՔԸ եւ այլն</p> <ul style="list-style-type: none"> - ակրիլաթթվի նիտրիլ Ստիրոլային (ՇՔԸ, ՇՔԸ եւ այլն) - ստիրոլ <p>Մեթիլէնստիրոլային (ՇՔՄՇ, ՇՔՄՇ եւ այլն)</p> <ul style="list-style-type: none"> -մեթիլստիրոլ - էթիլբենզոլ <p>Քլորոպրենային (նաիրիտ, նեոպրեն)</p> <ul style="list-style-type: none"> - քլորոպրեն <p>Կաուչուկներ եւ լատեքսներ</p>	<p>1,0 մգ/մ³</p> <p>0,007 մգ/մ³</p> <p>0,003 մգ/մ³</p> <p>0,04 մգ/մ³</p> <p>0,02 մգ/մ³</p> <p>0,1 մգ/մ³</p>	

		- բութադիեն	1,0 մգ/մ ³	
		Պոլիուրեթանային (ՇԿՄ)		
դիրքը հանվել է: Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18 -ի թիվ 456 որոշում				
		ՊՎՔ-պլաստիզոլներ՝ դիօկտիլֆտալատի, դիբութիլֆտալատի կիրառությամբ - դիէթիլենգլիկոլ - էթիլենգլիկոլ - քլորային վինիլ	0,2 մգ/մ ³ 1,0 մգ/մ ³ 0,01 մգ/մ ³	
		Լուծիչներ՝ օրգանական. - տոլուոլ - բենզոլ - քսիլոլ	0,6 մգ/մ ³ 0,1 մգ/մ ³ 0,2 մգ/մ ³	
		Թունաբանական- հիգիենիկ ցուցանիշները		
		Մաշկային ծածկույթի վրա գրգռիչ ազդեցությունը (կենդանիների վրա կատարված փորձի ժամանակ)	Գրգռիչ ազդեցության բացակայությունը՝ 0 բալ	
		Գրգռիչ ազդեցությունը լորձաթաղանթի վրա (կենդանիների վրա կատարված փորձի ժամանակ)՝ միայն մարդու դեմքի մաշկի եւ լորձաթաղանթի հետ շփման համար նախատեսված արտադրատեսակների համար	Գրգռիչ ազդեցության բացակայությունը՝ 0 բալ	
		Մաշկի միջոցով ներծծման ազդեցությունը՝ միայն մարդու դեմքի մաշկի եւ լորձաթաղանթի հետ շփման համար նախատեսված արտադրատեսակների համար	Ազդեցության բացակայությունը	
		Զգայունացնող ազդեցությունը (կենդանիների վրա կատարված փորձի	Զգայունացնող ազդեցության բացակայությունը՝ 0 բալ	

		Ժամանակ)՝ միայն մարդու դեմքի մաշկի եւ լորձաթաղանթի հետ շփման համար նախատեսված արտադրատեսակների համար		
		Թունավորության ինդեքսը	70 - 120%	
		Նյութերի էլեկտրականացումը (էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը) դասերի արտադրատեսակների համար՝	15 կՎ/մ-ից ոչ ավելի	
2	Շնչառական օրգանների անհատական պաշտպանության միջոցներ, համազգեստներ՝ մեկուսիչ	Սանիտարահիգիենիկ եւ թունաբանական ցուցանիշները՝ ըստ 1-ին կետի (կախված նյութերի բաղադրությունից)		
		Արտադրատեսակների զանգվածը՝	արտադրանքի կոնկրետ տեսակներին առնչվող նորմատիվ – տեխնիկական փաստաթղթերի համաձայն	
3	Հագուստ ազդանշանային՝ լուսարձակիչ եւ լուսանդրադարձ նող նյութերի կիրառմամբ	Բոլոր ցուցանիշներն ըստ 1-ին բաժնի՝ բացառությամբ. լուսարձակիչ գունանյութերի բաղադրության գնահատումը՝ ռադիոակտիվ նյութերի օգտագործումը բացառելու նպատակով:		
4	Ցածր ջերմաստիճանի եւ ջերմային ճառագայթման ներգործությունից պաշտպանող հագուստ՝ հատուկ (տաքացված համազգեստներ, ընդհանուր առմամբ՝	Բոլոր ցուցանիշներն ըստ 1-ին բաժնի՝ բացի դրանից. արտադրատեսակների եւ առանձին առարկաների ջերմամեկուսիչ հատկությունները՝ ընդհանուր առմամբ՝		

<p>կոշիկ, թաթմաններ, ձեռնոցներ, գլխարկներ, ջերմային սպիտակեղեն, քնապարկեր եւ այլն)</p>	<p>կամավորների մասնակցությամբ կլիմայական խցերում անցկացվող ֆիզիոլոգիական եւ հիգիենիկ հետազոտությունների արդյունքներով գնահատվող:</p> <p>Ջերմային մեկուսացման համար պահանջվող մեծությունը՝ կլիմայական շրջանների (գոտիների) <***> համար դրա օգտագործման իրական պայմաններում, $m^2 \cdot x^{\circ}C/վտ$, ոչ պակաս ԱՊՄ-ի լրակազմի X (ցրտի դեմ).</p>	<p>I Ա (հատուկ) 0,513 I Բ (IV) 0,681 II (III) 0,442 III (II) 0,360</p>	
	<p>ԱՊՄ՝ գլխի (գլխարկների).</p>	<p>I Ա (հատուկ) 0,397 I Բ (IV) 0,447 II (III) 0,329 III (II) 0,295</p>	
	<p>ԱՊՄ՝ ոտքերի (կոշիկների).</p>	<p>I Ա (հատուկ) 0,437 I Բ (IV) 0,572 II (III) 0,422 III (II) 0,332</p>	
	<p>ԱՊՄ՝ ձեռքերի (թաթմանների եւ այլ).</p>	<p>I Ա (հատուկ) 0,497 I Բ (IV) 0,551 II (III) 0,403 III (II) 0,377</p>	
	<p>Ընդհանուր առմամբ՝ արտադրատեսակների եւ առանձին առարկաների փաստացի ջերմամեկուսիչ հատկությունների հաշվարկը՝ մարդու ջերմային վիճակի ցուցանիշների գնահատման արդյունքների հիման վրա կատարվող.</p>	<p>– Մաշկի ջերմաստիճանը (միջին կշռված եւ տեղային) – Մարմնի ջերմաստիճանը – Մարմնի միջին ջերմաստիճանը – Ջերմության քանակի փոփոխությունը – Սրտի կծկումների հաճախականությունը – Խոնավության կորուստները</p>	

			<p>– Ջերմության զգացողությունները</p> <p>– Էներգիայի ծախսի մակարդակը</p>	
		Արտադրատեսակների զանգվածը, որոնց համար սահմանված են թույլատրելի մեծություններ (կոշիկ, ԱՊՄ մեկուսիչ լրակազմեր եւ այլն)	արտադրանքի կոնկրետ տեսակներին առնչվող նորմատիվ–տեխնիկական փաստաթղթերի համաձայն	
4	բարձր ջերմաստիճանի եւ ջերմային ճառագայթման ներգործությունից պաշտպանող հագուստ՝ հատուկ (համազգեստներ, կոշիկ, թաթմաններ, ձեռնոցներ, գլխարկներ)	Բոլոր ցուցանիշներն ըստ 1-ին բաժնի՝ բացի դրանից. (կոշիկի համար).		
		արտադրատեսակների եւ առանձին առարկաների ջերմամեկուսիչ հատկությունները՝ ընդհանուր առմամբ՝ կամավորների մասնակցությամբ կլիմայական խցերում անցկացվող ֆիզիոլոգիական եւ հիգիենիկ հետազոտությունների արդյունքներով գնահատվող՝ ըստ մարդու ջերմային վիճակի չափորոշիչների (տե՛ս 3-րդ կետը), ինչպես նաեւ ըստ հետեւյալ ցուցանիշների .	40°C-ից ոչ ավելի	
		– հագուստի ներքին հատվածի ջերմաստիճանի – հագուստի տակ գտնվող տարածությունում եղած օդի ջերմաստիճանի	40°C-ից ոչ ավելի	
		Շփման ջերմության նկատմամբ կոշիկի ներբանի նյութերի դիմադրությունը՝ (կոշիկի ջերմակայունությունը)՝ կամավորների մասնակցությամբ		

		<p>հատուկ սարքի օգտագործմամբ անցկացվող ֆիզիոլոգիական եւ հիգիենիկ հետազոտությունների արդյունքների հիման վրա գնահատվող: Մինչեւ (300±2)°C տաքացված մակերեսային հետ շփումից հետո ներբանի (կոշկատակի) փոփոխությունների բնութագիրը՝ (60±1) վայրկյանի ընթացքում եւ 10 րոպե տեղողությամբ հովանալուց հետո. փորձարկվող ներբանի (կոշկատակի) արտաքին տեսքը՝ (մակերեսորեն հալելը, ճաքերը, ածխանալը) եւ մարդու վիճակի հոգեֆիզիոլոգիական ցուցանիշները. – սուբյեկտիվ զգացողությունները</p> <p>– մաշկի ջերմաստիճանը՝ ներբանի (կոշկատակի) շրջանում</p>		
		Արտադրատեսակների զանգվածը, որոնց համար սահմանված են թույլատրելի մեծություններ (կոշիկ եւ նմ.)	արտադրանքի կոնկրետ տեսակներին առնչվող նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համաձայն	
5	Էլեկտրական եւ էլեկտրամագնիսական դաշտերի ներգործությունից պաշտպանող աշխատանքային եւ հատուկ	Բոլոր ցուցանիշներն ըստ 1-ին բաժնի՝ բացառությամբ. Նյութերի սանիտարահիգիենիկ առանձնահատուկ բնութագրերը. – վնասակար նյութերի	ՄԹՔ	

<p>հագուստն ու անհատական պաշտպանության միջոցները (բաճկոնները, կոմբինեզոնները, սաղավարտների վրա հագցվող կտորը, ձեռնոցները, ճտքակոշիկները, գոգնոցները, գլխաշորերը, վարագույրները), հաստատուն մագնիսական դաշտի ներգործությունից պաշտպանող ձեռնոցները</p>	<p>միգրացիան ջրի մեջ – պղինձ պարունակող գործվածքներից. պղինձ</p> <p>– էկրանացնող այլ նյութերից միգրացիայի ենթարկվող նյութերի հսկողությունը՝ ելնելով գործվածքի բաղադրությունից, – նյութերից վնասակար նյութերի միգրացիան դեպի օդային միջավայր (անհրաժեշտության դեպքում)</p> <p>Ընդհանուր առմամբ նյութերի եւ հագուստի էկրանացնող հատկությունները՝ 50<g (50<g էԴ) արդյունաբերական հաճախականության էլեկտրական դաշտերից (էԴ) եւ ռադիոհաճախականությունների էլեկտրամագնիսական դաշտերից (Ռ< էՄԴ) պաշտպանելու համար՝ ստենդների, մանեկենների օգտագործմամբ եւ կամավորների ներգրավմամբ, ֆիզիոլոգիական ու հիգիենիկ հետազոտությունների պայմաններում գնահատվող.</p> <p>– պաշտպանիչ հագուստ հագած մարդու վրա ներգործող 50<g էԴ-ի եւ Ռ< էՄԴ-ի մակարդակները՝ չափված հագուստի տակ գտնվող տարածությունում,</p>	<p>1 մգ/լ-ից ոչ ավելի</p> <p>ջրում՝ վնասակար նյութերի ՍԹԽ-ի եւ ՆԿԱՄ-ի համաձայն,</p> <p>մթնոլորտային օդում՝ վնասակար նյութերի ՍԹԽ-ի եւ ՆԿԱՄ-ի համաձայն</p>	
---	--	---	--

		<p>պետք է համապատասխանեն՝</p> <ul style="list-style-type: none"> - 50<g հաճախականությամբ էԴ-ի լարվածությունը, - էԴ-ի լարվածությունը՝ հաճախականությունն երի տիրույթում >= 10 - 30 կ<g - էԴ-ի լարվածությունը՝ հաճախականությունն երի տիրույթում, Մ<g՝ >= 0,03 - 3,0 >= 3,0 - 30,0 >= 30,0 - 50,0 >= 50,0 - 300,0 	<p>5 կՎ/մ-ից ոչ ավելի</p> <p>0,5 կՎ/մ-ից ոչ ավելի</p> <p>0,5 կՎ/մ-ից ոչ ավելի</p> <p>0,03 կՎ/մ-ից ոչ ավելի</p> <p>0,08 կՎ/մ-ից ոչ ավելի</p> <p>0,08 կՎ/մ-ից ոչ ավելի</p>	
		<p>- էկրանացման հաշվարկված գործակիցը (էգ) կամ նյութերի եւ հագուստի թուլացման գործակիցը պետք է համապատասխանի</p>	<p>արտադրանքին առնչվող նորմատիվային փաստաթղթերի պահանջներին:</p>	
		<p>Հաստատուն մագնիսական դաշտի (ՀՄԴ) ներգործությունից արտադրատեսակների նյութերի պաշտպանիչ հատկությունները.</p> <ul style="list-style-type: none"> - մարդու ձեռքերի վրա տեղային ներգործություն ունեցող ՀՄԴ-երի մակարդակները, չափված պաշտպանիչ թաթմանների տակ, պետք է գտնվեն սահմաններում 	<p>ՀՄԴ-ի մագնիսական ինդուկցայի ՍԹՄ-ն (սահմանային թույլատրելի մակարդակը)՝ 10 մՏԼ-ին հավասար</p>	
6	<p>Իոնացնող ճառագայթներից մարդու համար նախատեսված պաշտպանու-</p>	<p>Բոլոր ցուցանիշներն ըստ 1-ին բաժնի՝ բացի դրանից.</p> <p>Նյութերի սանիտարահիգիենիկ</p>		

	թյան միջոցները	<p>առանձնահատուկ բնութագրերը. – վնասակար նյութերի միգրացիան ջրի մեջ, մգ/լ, ոչ ավելի</p> <p>Նյութերի սանիտարահիգիենիկ առանձնահատուկ բնութագրերը. – վնասակար նյութերի միգրացիան ջրի մեջ – կապարից անազ պարունակող գործվածքներից, – կապար, – անազ, – ռենտգենապաշտպան այլ նյութերից, միգրացիայի ենթակա նյութերի հսկողությունն անհրաժեշտ է իրականացնել՝ ելնելով գործվածքի բաղադրությունից, – նյութերից վնասակար նյութերի միգրացիան դեպի օդային միջավայր (անհրաժեշտության դեպքում)</p>	<p>ՄԹՔ</p> <p>0,03. մգ/լ-ից ոչ ավելի 2,0. մգ/լ-ից ոչ ավելի ջրում՝ վնասակար նյութերի ՍԹԽ-ի եւ ՆԿԱՄ-ի ցանկի համաձայն</p> <p>մթնոլորտային օդում՝ վնասակար նյութերի ՍԹԽ-ի եւ ՆԿԱՄ-ի ցանկի համաձայն</p>	
7	Պաշտպանիչ հագուստի եւ նյութերի այլ տեսակներ՝ նշված առանձնակի հատկություններով	<p>Բոլոր ցուցանիշներն ըստ 1-ին բաժնի՝ բացառությամբ.</p> <p>Նյութերի սանիտարահիգիենիկ առանձնահատուկ բնութագրերը. – վնասակար նյութերի միգրացիան ջրի մեջ, մգ/լ, ոչ ավելի</p> <p>– վնասակար նյութերի միգրացիան օդային միջավայր, մգ/մ³, ոչ ավելի</p>	<p>Վնասակար նյութերի միգրացիան հսկվում է՝ ելնելով նյութերի բաղադրությունից՝ ջրում վնասակար նյութերի ՍԹԽ-ի եւ ՆԿԱՄ-ի ցանկի համաձայն</p> <p>մթնոլորտային օդում՝ վնասակար նյութերի ՍԹԽ-ի եւ ՆԿԱՄ-ի ցանկի համաձայն</p>	
8	Կլանիչներ, կատալիզատորներ՝ շնչառական	Կենդանիների վրա անցկացվող փորձերի համար սահմանվող		

<p>օրգանների անհատական պաշտպանության միջոցների համար, կլանող տուփեր, վերականգնման պարկուճներ</p>	<p>թունաբանական ցուցանիշներ՝ տոքսիկոմետրիայի պարամետրեր, արտադրանքի թունավորության աստիճան (արտադրանքն արտադրելու եւ այն շրջանառելու ժամանակ անվտանգության պահանջները սահմանելու նպատակով)</p> <p>Տոքսիկոմետրիայի ցուցանիշները.</p>		
	<p>- Սուր թունավորում՝ ինհալացիայի ժամանակ</p>	<p>Ինտոքսիկացիայի կլինիկական նշանների բացակայությունը՝ արտադրանքը փոշիացնելիս եւ էքսպոզիցիայից հետո կենդանիների վիճակի գործառական ցուցանիշների փոփոխությունների բացակայությունը,</p>	<p>Ազդեցության նշանների առկայության դեպքում թույլատրվում է միայն արտադրանքի հերմետիկ տեղակայումը:</p>
	<p>- Մաշկի վրա գրգռող ազդեցությունը (մեկանգամյա, կրկնվող)</p>	<p>0 բալ Գրգռվածության նշանների բացակայությունը</p>	<p>_ II _</p>
	<p>- Արտադրանքի գրգռող ազդեցությունը լորձաթաղանթի եւ վերին շնչառական ուղիների վրա՝ ինհալացիայի ժամանակ</p>	<p>0 բալ Գրգռվածության նշանների բացակայությունը</p>	<p>_ II _</p>
	<p>- մաշկի միջոցով ներծծման ազդեցությունը (մեկանգամյա, կրկնվող)</p>	<p>Բացակայություն</p>	<p>_ II _</p>
	<p>- Ջգայունացնող ազդեցությունը</p>	<p>0 բալ Ջգայունացնող ազդեցության նշանների բացակայությունը</p>	<p>_ II _</p>
	<p>Շահագործման</p>	<p>40 °C-ից ոչ ավելի</p>	

		Ժամանակ մարդու մարմնի հետ շփվող վերականգնման պարկուճների մակերեսային ջերմաստիճանը (էկզոթերմիկ ռեակցիայի առաջացման դեպքում)	
		Արտադրանքի արտադրության եւ կիրառության ժամանակ աշխատանքային գոտու օդում եւ մաշկային ծածկույթների վրա հսկողության ենթակա նյութերի, դրանց հիգիենիկ նորմատիվների եւ կանխարգելիչ միջոցների սահմանում՝ նորմատիվային հետեւյալ փաստաթղթերի համաձայն (կախված կիրառության ոլորտից).	- վնասակար նյութերի ՍԹԽ-ի եւ ՆԿԱՄ-ի ցանկը՝ աշխատանքային գոտու օդում - վնասակար նյութերի ՍԹԽ-ն եւ ՆԿԱՄ-ը՝ մթնոլորտային օդում

<*> Ցուցանիշը գնահատվում է անհրաժեշտության դեպքում՝ ելնելով նյութերի բաղադրությունից

<***> Կլիմայական շրջանները սահմանվում են՝ ելնելով Ռուսաստանի կամ այլ պետությունների նմանատեսակ շրջանների կլիմայական վայրերի շրջանացումից (աշխարհագրական լայնությունից եւ տեղի կլիմայական պայմաններից կախված)՝ 14.1 հավելվածի աղյուսակի համաձայն:

Արտադրատեսակը, անընդմեջ կրելու եւ օգտագործելու հաճախականության տեսողությունից կախված, ըստ միավորային համակարգի, բաժանվում է հետեւյալ

խմբերի.

– կանոնավոր օգտագործման՝ (ամեն օր՝ սկսած 4 ժամից եւ ավելի)՝ 1 բալ,

– հազվադեպ օգտագործման՝ (շաբաթը 1–2 անգամ՝ 4 ժամից ոչ ավելի)՝ 2 բալ:

Բալային համակարգով հիգիենիկ դասակարգման համաձայն՝ յուրաքանչյուր կոնկրետ արտադրատեսակի համար անհրաժեշտ է որոշել դասակարգող ցուցանիշը (ԴՑ), որով սահմանվում է արտադրատեսակի ներգործության ռիսկի աստիճանը երեխաների եւ մեծահասակների առողջության վրա՝ հետեւյալ բանաձեւով.

$$KII = \frac{\sum_1^3 B_i}{(\Sigma B_{\max} - \Sigma B_{\min}) + 1} \text{ որտեղ՝}$$

$\sum_1^3 B_i$ ՝ բալերի հանրագումարը, որը տրվում է արտադրատեսակին՝ դասակարգման համաձայն,

ΣB_{\max} ՝ բալերի հնարավոր առավելագույն հանրագումարը, որը տրվում է դասակարգման համաձայն,

ΣB_{\min} ՝ բալերի հնարավոր նվազագույն հանրագումարը, որը տրվում է դասակարգման համաձայն:

Դասակարգող ցուցանիշի նշանակությունից կախված՝ արտադրատեսակներն անհրաժեշտ է բաժանել 4 դասի.

I դաս՝ դասակարգող ցուցանիշ՝ 0,38–0,55,

II դաս՝ դասակարգող ցուցանիշ՝ 0.56–0.70,

III դաս՝ դասակարգող ցուցանիշ՝ 0.71–0.92,

IV դաս՝ դասակարգող ցուցանիշ՝ 0,93–1,25

Հավելված 14.1

Սանիտարահամաճարակաբանական վերահսկողությանը (հսկողությանը) ենթակա ապրանքներին ներկայացվող միասնական սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ միասնական պահանջների II գլխի 14-րդ բաժնի

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ (ԳՈՏԻՆԵՐ)

Կլիմայական շրջանի (գոտու) պայմանական նշում	Շրջան	Ներկայացված քաղաքներ
IV (I) (-1,0°C <*> 2,7 մ/վ <***>)	Ռուսաստանի Դաշնություն՝ Աստրախանի մարզ, Կալմիկիա, Ռոստովի մարզ, Ստավրոպոլի երկրամաս	Ստավրոպոլ, Կրասնոդար, Նովոռոսիյսկ, Դոնի Ռոստով, Սոչի, Աստրախան
III (II) (-9.7°C <*>; 5,6 մ/վ <***>)	Ռուսաստանի Դաշնություն. Բրյանսկի մարզ, Վլադիմիրի մարզ, Վորոնեժի մարզ, Իվանովի մարզ, Կալուգայի մարզ, Կուրսկի մարզ, Լենինգրադի մարզ, Լիպեցկի մարզ, Մարիյ Էլ Հանրապետություն, Մորդովայի Հանրապետություն, Մոսկվայի մարզ, Նիժեգորոդսկի մարզ, Նովգորոդի մարզ, Օրլովսկի մարզ: Բելառուսի Հանրապետություն. Մինսկի մարզ, Վիտեբսկի մարզ, Մոգիլյովի մարզ, Գրոդնոյի մարզ, Գոմելի մարզ, Բրեստի մարզ: Ղազախստանի Հանրապետություն. Ակտյուբինսկի մարզ, Ատիրաույի մարզ, Ալմաթայի մարզ, Ժամբիլի մարզ, Կիզիլօրդայի մարզ, Մանգիստաույի մարզ, Հարավ-Ղազախստանյան մարզ	Արխանգելսկ, Սանկտ Պետերբուրգ Մոսկվա, Սարատով, Մուրմանսկ, Ն. Նովգորոդ, Տվեր, Սմոլենսկ, Տամբով, Կազան, Վոլգոգրադ, Սամարա: Մինսկ Ալմաթի
II (III) (-18,0 °C <*> 3.6 մ/վ <***>)	Ռուսաստանի Դաշնություն. Ալթայի Հանրապետություն, Ամուրի մարզ, Բաշկորտոստանի Հանրապետություն, Բուրյաթիայի Հանրապետություն, Վոլոգդայի	Նովոսիբիրսկ, Օմսկ, Տոմսկ, Սիկտիվկար, Չելյաբինսկ, Չիտա, Տյումեն, Սուրգուտ,

	<p>մարզ, Իրկուտսկի մարզ (ստորեւ թվարկված շրջաններից բացի), Կարելիայի Հանրապետություն, Կեմերովոյի մարզ, Կիրովի մարզ, Կոստրոմայի մարզ, Կրասնոյարսկի երկրամաս (ստորեւ թվարկված շրջաններից բացի), Կուրգանի մարզ, Նովոսիբիրսկի մարզ, Օմսկի մարզ, Օրենբուրգի մարզ, Պերմի մարզ, Սախալինի մարզ (ստորեւ թվարկված շրջաններից բացի), Սվերդլովսկի մարզ, Թաթարստանի Հանրապետություն, Տոմսկի մարզ (ստորեւ թվարկված շրջաններից բացի) Տուվայի Հանրապետություն, Տյումենի մարզ (ստորեւ թվարկված շրջաններից բացի), Ուդմուրտական Հանրապետություն, Խաբարովսկի երկրամաս (ստորեւ թվարկված շրջաններից բացի) Չելյաբինսկի մարզ, Չիտինսկի մարզ: Ղազախստանի Հանրապետություն. Աքմոլայի մարզ, Արեւելա-Ղազախստանյան մարզ, Արեւմտա-Ղազախստանյան մարզ, Քարաղանդայի մարզ, Քոստանայյի մարզ, Պավլոդարի մարզ, Հյուսիս-Ղազախստանյան մարզ:</p>	<p>Տոբոլսկ, Իրկուտսկ, Խաբարովսկ, Պերմ, Օրենբուրգ: Աստանա</p>
<p>IB (IV) (-41°C <*> 1,3 մ/վ <*>)</p>	<p>Արխանգելսկի մարզ (Բելեռային շրջանից այն կողմ տեղակայված շրջաններից բացի), Իրկուտսկի մարզ (շրջաններ՝ Բոդայբինսկի, Կատանգսկի, Կիրենսկի, Մամսկո-Չույսկի), Կամչատկայի մարզ, Կարելիայի Հանրապետություն (հյուսիսային լայնության 63° դեպի հյուսիս), Կոմի Հանրապետություն (Բելեռային շրջանից դեպի հարավ տեղակայված շրջաններ), Կրասնոյարսկի երկրամաս (Էվենսկի ինքնավար օկրուգի եւ Բելեռային շրջանից դեպի հարավ տեղակայված Տուրուխանի շրջանի տարածքները), Կուրիլյան կղզիներ, Մագադանի մարզ (Չուկոտկայի ինքնավար օկրուգից եւ ստորեւ թվարկված շրջաններից բացի) Մուրմանսկի մարզ, Սախայի (Յակուտիայի) Հանրապետություն (Օյմյակոնի շրջանից եւ Բելեռային շրջանից դեպի հյուսիս տեղակայված շրջաններից բացի), Սախալինի մարզ (շրջաններ՝ Նոգլիկսկի, Օխտինսկի), Տոմսկի մարզ (շրջաններ՝ Բակչարսկի, Վերխնեկետսկի, Կրիվոշեինսկի, Մուլչանովսկի, Պարաբելսկի, Չաինսկի եւ Ալեքսանդրովի ու Կարգասոկսի</p>	<p>Յակուտսկ, Օյմյակոն, Վերխոյանսկ, Տուրուխանսկ, Ուրենգոյ, Նադիմ, Սալեխարդ, Մագադան, Օլեկմինսկ</p>

	<p>շրջանների տարածքներ՝ հյուսիսային լայնության, 60° դեպի հարավ տեղակայված), Տյումենի մարզ (Խանտի-Մանսիական եւ Յամալ-Նենեցյան ինքնավար օկրուգների շրջաններ, հյուսիսային լայնության, 60° դեպի հյուսիս տեղակայված շրջաններից բացի), Խաբարովսկի երկրամաս (շրջաններ՝ Այանո-Մայսկի, Նիկոլաեյան, Օխոտսկի Պոլինա Օսիպենկոյի անվան, Տուգուրո-Չումիկանսկի, Ուլինսկի</p>	
<p>IU («հատուկ» (-25°C <*> 6,8 մ/վ <*>)</p>	<p>Մագադանի մարզ (շրջաններ՝ Օմսուկչանի, Օլսկի, Սեյերո-Էվենսկի, Սրեդնեկանսկի, Սուամանսկի, Տենկինսկի, Խասինսկի, Յագոդնինսկի) Սախայի (Յակուտիայի) Հանրապետություն (Օյմյակոնսկի շրջան), Բելեռային շրջանից դեպի հյուսիս տեղակայված տարածք (Մուրմանսկի մարզից բացի), Տոմսկի մարզ (Ալեքսանդրովի եւ Կարգասոկսի շրջանների տարածքներ՝ հյուսիսային լայնության 60° դեպի հյուսիս տեղակայված), Տյումենի մարզ (Խանտի-Մանսիական եւ Յամալ-Նենեցյան ինքնավար օկրուգների շրջաններ՝ տեղակայված հյուսիսային լայնության 60°-ի վրա՝ դեպի հյուսիս), Չուկոտկայի ինքնավար օկրուգ</p>	<p>Նորիլսկ, Տիկսի, Դիկսոն</p>

Ծանոթագրություն. * Ձմեռային ամիսներին օդի միջին ջերմաստիճանը,

<*> Քամու միջին արագությունը՝ ամենահավանական մեծություններից:

Բաժին 15. Թունաքիմիկատներին (պեստիցիդներին) եւ ագրոքիմիկատներին ներկայացվող պահանջները

1. ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԵՎ ՆՐԱՆՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻՆ (ՊԵՍՏԻՑԻԴՆԵՐԻՆ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(հսկողության ենթակա ապրանքներ՝ միջատասպան, կրծողասպան, սնկասպան, հերբիցիդներ, դեֆոլիանտներ, ֆումիգանտներ, բույսերի աճը կանխող եւ կարգավորող միջոցներ՝ ՄՄ ԱՏԳ ԱԱ 3808 ծածկագիր)

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

1. ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ միասնական պահանջները (այսուհետ՝ միասնական պահանջներ) տարածվում են Մաքսային միության անդամ պետությունների տարածքում արտադրվող կամ նրանց տարածք ներմուծվող թունաքիմիկատների (պեստիցիդների) վրա՝ անկախ ծագման երկրից:

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

Սահմանված պահանջները մշակվել են Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությունների եւ միջազգային իրավունքի գործող փաստաթղթերի հիման վրա եւ ուղղված են մարդու եւ նրա շրջակա միջավայրի անվտանգությունը թունաքիմիկատներից (պեստիցիդներից) առավելագույնս ապահովելուն:

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622

որոշման խմբագրությամբ)

Միասնական պահանջները կատարման համար պարտադիր են թունաքիմիկատների (պեստիցիդների) բնագավառում աշխատող բոլոր քաղաքացիների եւ իրավաբանական անձանց համար:

Միասնական պահանջները խախտելու դեպքում սահմանվում է վարչական, կարգապահական եւ քրեական պատասխանատվություն՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության համաձայն:

2. ԵՐՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Թունաքիմիկատ (պեստիցիդ)՝ ցանկացած նյութ կամ նյութերի խառնուրդ, որը նախատեսված է որեւէ տեսակի վնասատուների (ներառյալ մարդկանց եւ կենդանիների հիվանդությունները տարածողների), բույսերի անցանկալի տեսակների առաջացումը կանխելու եւ դրանք վերացնելու համար կամ գյուղատնտեսական արտադրանքի, փայտանյութի կամ կենդանիների համար նախատեսված կերերի արտադրությանը, վերամշակմանը, պահպանմանը եւ փոխադրմանը խոչընդոտող վնասատուների դեմ պայքարելու համար, ինչպես նաեւ այն նյութերը, որոնք նախատեսված են բույսերի, ֆերոմոնների, դեֆոլիանտների, դեսիկանտների, ֆումիգանտների աճը կարգավորելու համար:

Պատրաստուկային ձեւեր՝ թունաքիմիկատային (պեստիցիդային) պատրաստուկ, որը բաղկացած է գործող տեխնիկական նյութից (նյութերից) եւ օգտագործման համար պիտանի բաղադրիչներից:

Գործող նյութ՝ պատրաստուկային ձեւերի բաղադրիչ, որը պատասխանատու է թունաքիմիկատի (պեստիցիդի) կենսաբանական ակտիվության համար, երբ այն պայքարում է վնասատուների կամ հիվանդությունների դեմ կամ կարգավորում է բույսերի աճը եւ այլն:

Կարելոր խառնուկներ՝ թունաքիմիկատի (պեստիցիդի) արտադրության, պահպանման կամ օգտագործման կողմնակի արդյունքը, որոնք գործող նյութի

հետ համակցմամբ վտանգ են ներկայացնում մարդու առողջության եւ շրջակա միջավայրի համար:

Կիրառվող կանոնակարգ՝ այն գործոնների ամբողջությունը, որոնցով բնութագրվում է թունաքիմիկատների (պեստիցիդների) կիրառումը՝ ներառյալ ակտիվ նյութի խտությունը՝ օգտագործվող պատրաստուկային ձեւով, ծախսի նորմայով, մշակման համար նախատեսված ժամանակով, մշակման քանակով, օժանդակ նյութերի ու մեթոդների օգտագործմամբ, կիրառման ծավալով, որոնք սահմանվում են անհրաժեշտ քանակով, մշակման համար նախատեսված ժամանակով՝ բերքահավաքի ընդմիջումներից առաջ:

Վտանգ՝ օգտագործման կոնկրետ պայմաններում թունաքիմիկատների (պեստիցիդների) հնարավոր վտանգավորության աստիճանը մարդկանց առողջության եւ մարդու բնական միջավայրի համար:

Մարդու բնական միջավայր՝ այն օբյեկտների ամբողջությունը, շրջակա միջավայրում առկա երեւոյթները եւ գործոնները, որոնցով որոշվում է մարդու կենսագործունեությունը:

ՊԳԿ-ի մասնագրերը՝ թունաքիմիկատների (պեստիցիդների) որակի միջազգային ստանդարտները, որոնք գնահատվում եւ հրապարակվում են ՊԳԿ-ի կողմից:

Ժամկետներ՝ թունաքիմիկատների (պեստիցիդների) միջոցով կատարված վերջին մշակման եւ բերքահավաքի միջեւ ընկած ժամանակահատվածը:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Մաքսային միության անդամ պետությունների տարածքում հնարավոր է շրջանառել այն թունաքիմիկատները (պեստիցիդները), որոնք սահմանված կարգով անցել են պետական գրանցումը եւ ներառվել պետական գրանցամատյանում (Ռեեստր), որը նախատեսված է այն թունաքիմիկատների (պեստիցիդների) համար, որոնք Մաքսային միության անդամ պետությունների տարածքում թույլատրվում է

օգտագործել:

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

Պետական գրանցամատյանում (Ռեեստր) չներառված թունաքիմիկատների (պեստիցիդների) ներմուծումը եւ շրջանառությունն արգելվում է Մաքսային միության անդամ պետությունների տարածքում:

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

Թունաքիմիկատների (պեստիցիդների) թունաբանական հիգիենիկ գնահատումը, դրանց որակի եւ անվտանգության ցուցանիշները պետք է համապատասխանեն Մաքսային միության անդամ պետությունների կողմից սահմանված պահանջներին:

Թունաքիմիկատների (պեստիցիդների) անվտանգ շրջանառությունն ապահովվում է թունաքիմիկատների (պեստիցիդների), դրանց փաթեթվածքի եւ մակնշման համար սահմանված պահանջների կատարմամբ, ինչպես նաեւ Մաքսային միության անդամ պետությունների տարածքում թունաքիմիկատների (պեստիցիդների) կիրառման համար սահմանված պահանջների հիգիենիկ կանոնակարգմամբ:

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

Մաքսային միության անդամ պետությունների տարածք շրջանառման համար մտցվող թունաքիմիկատները (պեստիցիդները) պետք է արտադրողի(մատակարարի) կողմից անցնեն սահմանված պահանջներին համապատասխանության պարտադիր հաստատման գործընթաց, ինչպես նաեւ դասակարգվեն ըստ վտանգավորության աստիճանի՝ ելնելով պատրաստուկների եւ դրանց գործող նյութերի թունաբանական հիգիենիկ բնութագրերից:

Թունաքիմիկատների (պեստիցիդների) մատակարարը (մշակողը) պարտավոր

է քննել ստացված թունաքիմիկատները (պեստիցիդները)՝ դրանց թունաբանական հատկանիշների հայտնաբերման, շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության նպատակով, որպեսզի շրջանառության ժամանակ անվտանգության միջոցներն ապահովի:

Արտադրողը (մատակարարը) պարտավոր է ապահովել, որ թունաքիմիկատները (պեստիցիդները) բաց թողնվեն (ներմուծվեն) սպառողի համար հարմար փաթեթավորմամբ, ինչպես նաեւ ապահովեն վերլուծական ստանդարտների (թեստերի) բացթողումը (ներմուծումը)՝ գյուղատնտեսական արտադրանքում, դեղագործական հումքում, սննդամթերքում եւ շրջակա միջավայրում առկա թունաքիմիկատների (պեստիցիդների) ու ազրոքիմիկատների միկրոքանակությունները հսկելու նպատակով: Արտադրողը (մատակարարը) պարտավոր է նաեւ ապահովել շրջակա միջավայրի օբյեկտներում եւ գյուղատնտեսական արտադրանքում առկա թունաքիմիկատների (պեստիցիդների) մնացորդային քանակության որոշման մեթոդները:

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

Թունաքիմիկատների (պեստիցիդների) հետ անվտանգ վարվեցողության պարտադիր պայմանն է դրանց կիրառման, փոխադրման եւ պահպանման վերաբերյալ առաջարկությունների առկայությունը թունաքիմիկատ (պեստիցիդ) պարունակող յուրաքանչյուր տարայի վրա (տարայի վրա փակցված պիտակի վրա կամ հատուկ հավելվածում):

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

Թունաքիմիկատների (պեստիցիդների) շրջանառությունը չպետք է հանգեցնի՝

- գյուղատնտեսական արտադրանքում թունաքիմիկատների (պեստիցիդների) մնացորդային քանակության, թունավոր եւ վտանգավոր մետաբոլիտների ու միացությունների, կայուն օրգանական աղտոտիչների հիգիենիկ նորմատիվների գերազանցմանը՝ սահմանված բնակչության սանիտարահամաճարակաբանական

բարեկեցությանն ուղղված օրենսդրության համաձայն,

- շրջակա միջավայրի օբյեկտներում թունաքիմիկատների (պեստիցիդների) կիրառման հետեանքով ախտածին միկրոֆլորայի, էնտերոկոկերի եւ այլ վտանգավոր կենսաբանական ազենտների առաջացմանը,

- հողի բնական միկրոբիոցենոզի խախտմանը:

Ջրի, սննդամթերքի եւ մթնոլորտային օդի միջոցով մարդու օրգանիզմ թափանցող թունաքիմիկատների (պեստիցիդների) համալիր մնացորդային քանակությունը չպետք է գերազանցի սահմանված կարգով հաստատված թույլատրելի օրական չափաքանակը (ԹՕՉ):

4. Թունաքիմիկատների (պեստիցիդների) եւ դրանց գործող նյութերի անվտանգության գնահատման չափանիշները

Թունաքիմիկատների (պեստիցիդների) գործող նյութերի անվտանգության գնահատման չափանիշներն են.

- գործող նյութի թունաբանական բնութագիրը (սուր, ենթասուր, քրոնիկ թունավորում)՝ ներառյալ մարդու առողջության վրա ունեցած սպեցիֆիկ կամ ոչ անմիջական ազդեցության գնահատումը (ալերգեն հատկանիշները, վերարտադրողական թունավորում, տերատոգենություն, մուտագենություն, քաղցկեղածնություն, սաղմնային թունավորություն)՝ գործող չափանիշների, CAS, IUPAC համարների նշմամբ, REACH համակարգի գրանցմամբ,

- տեխնիկական արտադրանքի համարժեքությունը (գործող նյութերի) օրիգինալ տարբերակն արտադրող ընկերության կողմից գրանցված թունաքիմիկատի (պեստիցիդի) տեխնիկական արտադրանքի հետ,

- վտանգավոր (թունաբանական նշանակության) խառնուկների եւ մետաբոլիտների առկայությունը,

- շրջակա միջավայրի օբյեկտներում առկա գործող նյութերի ազդեցությունը մարդու բնական միջավայրի (խմելու ջուր, օդ, հող), սննդամթերքի որակի եւ

անվտանգության վրա՝ օգտագործելով մոնիթորինգի տվյալները (առկայության դեպքում):

Միկրոօրգանիզմների (բակտերիաներ, սնկեր) արտադրական շտամների եւ կենսապատրաստուկների պատրաստի ձեւերի գնահատման չափորոշիչներն են՝

- շտամի ծագումը եւ աճեցման պայմանները, դրա նույնականացման եղանակը, շտամի դիսեմինացիան,

- բակտերիաների, սնկերի ախտածնությունը (վիրուլենտությունը, թունավորությունը, տոքսիգենությունը) լաբորատոր կենդանիների երկու տեսակի վրա՝ ներորովայնաթաղանթային եւ(կամ) ներորովայնային մեկանգամյա ներարկման դեպքում, ինչպես նաեւ ջերմարյուն կենդանիների վերին շնչառական ուղիներով թափանցելիս,

- աչքի լորձաթաղանթի վրա գրգռիչ ազդեցությունը,

- զգայունացնող եւ իմունոլոգիական թունավորության ազդեցությունը՝ մաշկի եւ վերին շնչառական ուղիների միջոցով միկրոօրգանիզմների թափանցելու դեպքում,

- քրոնիկ փորձերի դեպքում սահմանվող վնասակարության չափորոշիչները,

- ջրային միջավայրում միկրոբային ինքնամաքման գործընթացների ազդեցությունը (անհրաժեշտության դեպքում՝ ջրամբարների ջրի նորմավորումը):

Թունաքիմիկատների (պեստիցիդների) պատրաստուկային ձեւերի գնահատման չափորոշիչներն են՝

պատրաստուկային ձեւի բաղադրիչների թունաբանական բնութագիրը (լցանյութեր, էմուլգատորներ, կայունացուցիչներ, լուծիչներ եւ այլն)՝ գործող չափանիշների, CAS, IUPAC համարների նշմամբ, REACH համակարգի գրանցմամբ,

բերանի միջոցով սուր թունավորում (մկներ, առնետներ) LD₅₀,

մաշկային սուր թունավորում՝ մաշկին քսվելու դեպքում LD_{50cut},

ներշնչակային (ինհալացիոն) սուր թունավորում՝ CL₅₀,

մաշկի եւ լորձաթաղանթների վրա գրգռող ազդեցություն,

բերանի միջոցով ենթասուր թունավորում (կուտակային միջոցներ), կուտակային գործակից,

վերնամաշկային ենթասուր թունավորում (այն պատրաստուկների համար, որոնք օժտված են մաշկային արտահայտված թունավորմամբ),

ներշնչակային (ինհալացիոն) ենթասուր թունավորություն (այն պատրաստուկների համար, որոնք ներկայացնում են ներշնչակային (ինհալացիոն) արտահայտված վտանգավորություն),

զգայունացնող ազդեցություն,

թունաքիմիկատների (պեստիցիդների) քիմիական եւ ֆիզիկական հատկությունները՝ ներառյալ դրանց ցնդականությունը, կայունությունը, այլ միացությունների հետ համատեղելիությունը, հրդեհավտանգությունն ու պայթյունավտանգությունը,

ՊԳԿ/ԱՀԿ կամ Եվրոպական միության կամ Շրջակա միջավայրի պաշտպանության ԱՄՆ-ի գրասենյակի տվյալները (առկայության դեպքում)՝ ներմուծվող թունաքիմիկատների (պեստիցիդների) վտանգավորության գնահատմամբ:

Նշված չափորոշիչները համարվում են ներմուծվող թունաքիմիկատների (պեստիցիդների) վտանգավորության հիմնական գնահատումը եւ իրականացվում են Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության համաձայն:

5. ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ (ՊԵՍՏԻՑԻԴՆԵՐԻ) ԹՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԻԿ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Թունաքիմիկատների (պեստիցիդների) թունաբանական հիգիենիկ գնահատումն իրականացնում են լիազորված կազմակերպությունները, որոնք ունեն համապատասխան գիտական ու նյութական ապահովվածություն եւ համապատասխան պրոֆիլ ու որակավորում ունեցող մասնագետներ՝ համաձայն Մաքսային միության անդամ պետությունների կողմից սահմանված կարգի:

Թունաքիմիկատների (պեստիցիդների) թունաբանական հիգիենիկ գնահատման իրականացման կարգը որոշվում է Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության համաձայն:

Արտադրողի կողմից թունաքիմիկատների (պեստիցիդների) գնահատման համար տրամադրվում են՝

թունաքիմիկատների (պեստիցիդների) թունաբանական դոսյե (ներառյալ գործող նյութի, հիմնական բաղադրիչների եւ ընդհանուր պատրաստուկային ձեւի բնութագիրը),

սննդամթերքում, շրջակա միջավայրի օբյեկտներում (ջուր, հող, մթնոլորտային օդ) եւ աշխատանքային գոտում առկա թունաքիմիկատի (պեստիցիդի) գործող նյութերի պարունակության հիգիենիկ նորմատիվների փաստաթղթային սահմանումը, ինչպես նաեւ մարդու օրգանիզմ թափանցող գործող նյութերի թույլատրելի օրական չափաքանակի (ԹՕՉ) սահմանումը,

թունաքիմիկատի (պեստիցիդի) պատրաստուկային ձեւի անալիտիկ օրինակը՝ արտադրողի կողմից արտադրված փաթեթվածքի տարայի վրա փակցված հատուկ պիտակի վրա,

անվտանգության անձնագիրը եւ(կամ) անվտանգության փաստաթուղթը (MSDS), պատրաստողի մասնագիրը եւ(կամ) պատրաստողի հայտարարագիրը՝ թունաքիմիկատից (պեստիցիդից) թունավորվելու դեպքում առաջին օգնության միջոցների նշմամբ,

թունաքիմիկատի (պեստիցիդի) գործող նյութի ստանդարտ օրինակը,

արտադրողի կողմից անցկացված ուսումնասիրության (պատրաստուկի հինգ խմբաքանակից) հավաստագիրը,

համապատասխան միջավայրերում (սննդամթերքի համար, ինչպես նաեւ, անհրաժեշտության դեպքում, կենցաղային եւ խմելու ջրի աղբյուրների ջրօգտագործման, հողի, աշխատանքային գոտու եւ մթնոլորտային օդի համար) կոնկրետ գործող նյութի անալիտիկ հսկողության մեթոդի (մեթոդների) մասին

տեղեկությունը,

թունաքիմիկատների (պեստիցիդների) գրանցման արդյունքները Մաքսային միության յուրաքանչյուր անդամ պետության տարածքում, իրականացված Մաքսային միության անդամ պետություններում՝ ելնելով ցանքաշրջանառության, տարածաշրջանների հողային եւ կլիմայական պայմանների, բույսերի հիվանդությունների եւ գյուղատնտեսական կուլտուրաների վնասատուների զարգացման առանձնահատկություններից,

բուսաբուժական եւ անասնաբուժական արտադրանքում առկա թունաքիմիկատների (պեստիցիդների) մնացորդային քանակության ուսումնասիրության, սննդային արժեքի գնահատման եւ սննդամթերքի զգայորոշման, ինչպես նաեւ ջրի զգայորոշման վրա թունաքիմիկատների (պեստիցիդների) ունեցած ազդեցության եւ ջրամբարների ընդհանուր սանիտարական ռեժիմի տվյալները,

Մաքսային միության անդամ պետությունների տարածքում թունաքիմիկատների (պեստիցիդների) կիրառման դեպքում պատրաստուկների հետ աշխատողների եւ բնակիչների համար առկա իրական վտանգի գնահատման արդյունքները:

Ընդ որում, կարող են ընդունվել Մաքսային միության որեւէ անդամ պետության տարածքում անցկացված փորձաքննության գրանցման արդյունքները, եթե փորձաքննության անցկացման եւ կանոնակարգով առաջարկվող պատրաստուկների կիրառման կարգերը գյուղատնտեսական մշակաբույսերի, պատրաստուկների ծախսերի նորմայի, թունաքիմիկատների (պեստիցիդների) մշակման, տեխնոլոգիական կիրառման եւ այլ առումներով համընկնում են:

Թունաբանական հիգիենիկ գնահատման սկզբունքներն են՝

դրա անցկացման պարտադիր կատարումը,

գիտականորեն հիմնավորված եզրակացությունները,

փորձագետների անկախ մոտեցումն իրենց պարտականություններն իրականացնելիս,

լիակատար անցկացումը,

քննարկվող նյութերի գաղտնիության պահպանում,

անցկացման կարգի վճարովիությունը:

Թունաքիմիկատի (պեստիցիդի) թունաբանական հիգիենիկ գնահատման արդյունքների հիման վրա ձեւակերպվում է սահմանված օրինակով փաստաթուղթը, որով հաստատվում է անվտանգությունը եւ որում առկա են հետեւյալ տեղեկությունները.

թունաքիմիկատի (պեստիցիդի) անվանումը (դրա պատրաստուկային ձեւը),

թունաքիմիկատի (պեստիցիդի) գործող նյութի (նյութերի) պատրաստողը,

պատրաստուկային ձեւի պատրաստողը,

թունաքիմիկատի (պեստիցիդի) հիգիենիկ բնութագիրը՝ ներառյալ տեխնիկական արտադրանքի մաքրությունը, դրա մեջ պարունակվող թունաբանական նշանակության եւ վտանգավոր խառնուկներն ու մետաբոլիտները (առկայության դեպքում) եւ թունաքիմիկատի (պեստիցիդի) վտանգավորության դասը (գործող հիգիենիկ դասակարգման համաձայն),

թունաքիմիկատի (պեստիցիդի) կիրառման բնագավառը (ոլորտը) (արտադրական՝ ներառյալ գյուղատնտեսական, ֆերմերային, անտառային, կոմունալ տնտեսական կիրառումը. անձնական օժանդակ տնտեսության մեջ կիրառումը եւ սենյակային ծաղկաբուծությունը),

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

Համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման՝ քանութերորդ պարբերությունը շարադրված է հետեւյալ խմբագրությամբ. «Հիգիենիկ նորմատիվների բացակայության դեպքում (ԱԹՄ) սննդամթերքի այս կամ այն տեսակի եւ(կամ) գործող նյութերի անալիտիկ

հսկողության հաստատված մեթոդի նպատակով շրջանառության համար ծրագրված թունաքիմիկատի (պեստիցիդի) մնացորդային քանակության պարունակությունը չի կարող ներառվել այն կուլտուրաների ցանկում, որոնց վրա տվյալ պատրաստուկը կարող է կիրառվել:»

պատրաստուկի համար նախատեսված կանոնակարգերը եւ տեխնոլոգիական կիրառումը (ավիաքիմիական աշխատանքները, վերգետնյա մշակումները. մշակվող կուլտուրաների ոլորտը, ծախսի նորման, կիրառման բազմապատիկությունը, առաջարկվող «ժամկետները» եւ մշակված տարածքներում մարդկանց գտնվելու հնարավոր ժամկետները եւ այլն),

նորմատիվ փաստաթղթեր (սանիտարական նորմեր եւ կանոններ, հիգիենիկ պահանջներ եւ այլն), որոնց համաձայն, պետք է ապահովվեն թունաքիմիկատի (պեստիցիդի) հետ վարվելու անվտանգության միջոցները,

թունաքիմիկատի (պեստիցիդի) անվտանգությունն ապացուցող փաստաթղթի գործողության ժամկետը:

Հիգիենիկ նորմատիվների բացակայության դեպքում (ԱԹՄ) սննդամթերքի այս կամ այն տեսակի եւ(կամ) գործող նյութերի անալիտիկ հսկողության հաստատված մեթոդի նպատակով շրջանառության համար ծրագրված թունաքիմիկատի (պեստիցիդի) մնացորդային քանակության պարունակությունը չի կարող ներառվել այն կուլտուրաների ցանկում, որոնց վրա տվյալ պատրաստուկը կարող է կիրառվել:

Շրջակա միջավայրի օբյեկտներում (ջուր, հող, մթնոլորտային օդ), աշխատանքային գոտում եւ այլ վայրերում հիգիենիկ նորմատիվների բացակայության դեպքում պատրաստուկների թունաբանական հիգիենիկ հատկությունների վերաբերյալ հակասական տեղեկությունների հայտնաբերման կամ փորձարարական հետազոտությունների անցկացման ընթացքում բացասական արդյունքների ստացման դեպքում տրամադրվում է հիմնավորված եզրակացություն՝ թունաքիմիկատի (պեստիցիդի) պետական գրանցման անհնարինության մասին:

6. ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ (ՊԵՍՏԻՑԻԴՆԵՐԻ) ՓԱԹԵԹՎԱԾՔԸ ԵՎ ՄԱԿՆՇՈՒՄԸ

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

Չափաճրարված թունաքիմիկատների (պեստիցիդների) մակնշումը պետք է դրվի անմիջապես թունաքիմիկատներով (պեստիցիդներով) փաթեթվածքի վրա՝ փաթեթվածքին ամրացվելով այնպիսի եղանակով, որպեսզի ապահովվի դրա անվնաս լինելը:

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

Մանրածախ առևտրի համար նախատեսված սպառողական տարայով թունաքիմիկատների (պեստիցիդների) մակնշման մեջ պետք է պարունակվի հետևյալ տեղեկությունը.

- թունաքիմիկատի (պեստիցիդի) անվանումը՝ համաձայն տեխնիկական նորմատիվային իրավական ակտերում սահմանվածների (այսուհետ՝ ՏՆԻԱ) եւ դրա նշանակությունը,

- գործող նյութի անվանումը եւ պարունակությունը,

- արտադրողի անվանումը (ֆիրմային անվանումը) եւ գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն՝ ներառյալ արտադրող երկրի անվանումը),

- արտադրողի ապրանքային նշանը,

- ՏՆԻԱ-ի նշանակությունը՝ համաձայն որի արտադրվում է թունաքիմիկատը (պեստիցիդը),

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

- թունաքիմիկատի (պեստիցիդի) պատրաստուկային ձեւը (թողարկման ձեւը),

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

- սպառողական տարայում առկա թունաքիմիկատի (պեստիցիդի) անվանական քանակը (զտաքաշը կամ ծավալը),

- գործող ՏՆԻԱ-ի անվտանգության տեղեկությունները,

- գործող ՏՆԻԱ-ի մանիպուլյացիոն նշանները,

- թունաքիմիկատի (պեստիցիդի) ,

- տարայի վրա փակցված պիտակի գրանցման համարը,

- պատրաստման ամսաթիվը (ամիսը, տարին),

- պահպանման ժամկետը,

- թունաքիմիկատի (պեստիցիդի) երաշխիքային ժամկետը,

- թունաքիմիկատի (պեստիցիդի) գծանիշ նույնականացման ծածկագիրը, համապատասխանության ազգային նշանը՝ հավաստագրված արտադրանքի համար, կիրառության սահմանափակումները (բույսերի պաշտպանության այլ միջոցների հետ համատեղելիությունը, բույսերի թունավորում),

- նախազգուշական միջոցները թունաքիմիկատի (պեստիցիդի) հետ աշխատելիս, դրա փոխադրումը եւ պահպանումը,

- շրջված կամ թափված թունաքիմիկատի (պեստիցիդի) վնասազերծման միջոցները. տարայի վնասազերծումը եւ օգտահանումը,

- սուր թունավորումների կլինիկական պատկերը (եթե կան տվյալներ), բժշկի առաջարկությունները, այդ թվում՝ անտիդոտի նշմամբ (առկայության դեպքում),

- առաջին օգնության միջոցները՝ թունավորվելու դեպքում:

Գյուղատնտեսական ձեռնարկություններում իրացնելու համար նախատեսված թունաքիմիկատների (պեստիցիդների) մակնշման մեջ պետք է նշվի հետեւյալ

տեղեկությունը*.

- արտադրողի անվանումը (ֆիրմային անվանումը) եւ գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն՝ ներառյալ արտադրող երկրի անվանումը),

- թունաքիմիկատի (պեստիցիդի) անվանումը՝ համաձայն ՏՆԻԱ-ով սահմանվածի, եւ դրա նշանակությունը,

- գործող նյութի անվանումը եւ պարունակությունը,

- ՏՆԻԱ-ի նշանակությունը՝ համաձայն որի թունաքիմիկատն (պեստիցիդը) արտադրվում եւ մատակարարվում է,

- թունաքիմիկատի (պեստիցիդի) ապրանքանիշը, պատրաստուկային ձեւը,

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

- գործող ՏՆԻԱ-ի անվտանգության տեղեկությունները,

- գործող ՏՆԻԱ-ի մանիպուլյացիոն նշանները,

- խմբաքանակի համարը,

- պատրաստման ամսաթիվը (ամիսը, տարին),

- թունաքիմիկատի (պեստիցիդի) անվանական քանակը (զտաքաշը կամ ծավալը),

- թունաքիմիկատի (պեստիցիդի) երաշխիքային ժամկետը եւ պահպանման ժամկետը,

- կիրառության սահմանափակումները (բույսերի պաշտպանության այլ միջոցների հետ համատեղելիությունը, բույսերի թունավորում),

- շրջված կամ թափված թունաքիմիկատի (պեստիցիդի) վնասազերծման միջոցները. տարայի վնասազերծումն ու օգտահանումը,

- առաջին օգնության միջոցները՝ թունավորվելու դեպքում,

- սուր թունավորումների կլինիկական պատկերը (եթե կան տվյալներ), բժշկի

առաջարկությունները, այդ թվում՝ անտիդոտի նշմամբ (առկայության դեպքում):

Մակնշումն իրականացվում է Մաքսային միության անդամ պետությունների պետական լեզուներով:

Երկաթուղային գլանատակառների (ցիստեռնների) եւ ավտոցիստեռնների վրա մակնշումը պետք է դրվի ավտոմոբիլային եւ երկաթուղային տրանսպորտային ուղեբեռների փոխադրումների կանոնների պահանջների համաձայն:

Մակնշումը պետք է լինի հստակ եւ հասկանալի, կայուն քիմիական նյութերի ու կլիմայական գործոնների ազդեցության նկատմամբ եւ պահպանվի թունաքիմիկատի (պեստիցիդի) շահագործման ամբողջ ժամկետի ընթացքում:

**II. ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔ
ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԵՎ ՆՐԱՆՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԱԳՐՈՔԻՄԻԿԱՏՆԵՐԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման
խմբագրությամբ)

1. ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

Նշված Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ միասնական պահանջները պատկանում են հսկողության ենթակա ապրանքների հետեւյալ խմբին.

Հանքային կամ քիմիական, ազոտական պարարտանյութեր (ՄՄ ԱՏԳ ԱԱ 3102 ծածկագիր),

Հանքային կամ քիմիական, ֆոսֆորական պարարտանյութեր (ՄՄ ԱՏԳ ԱԱ 3103 ծածկագիր),

Հանքային կամ քիմիական, կալիումական պարարտանյութեր (ՄՄ ԱՏԳ ԱԱ 3104 ծածկագիր),

Հանքային կամ քիմիական պարարտանյութեր՝ երկու կամ երեք սնուցող տարրերի պարունակությամբ. ազոտ, ֆոսֆոր եւ կալիում. այլ պարարտանյութեր (ՄՄ ԱՏԳ ԱԱ 3105 ծածկագիր):

Միասնական պահանջները տարածվում են նաեւ այն ագրոքիմիկատների վրա, որոնք նախատեսված են բույսերի սնուցման, հողի բերրիությունը կարգավորելու եւ կենդանիների լրացասնունդի համար.

- օրգանական պարարտանյութեր,

- օրգանահանքային պարարտանյութեր,

- ագրոքիմիկատներ՝ կեղտաջրերի նստվածքների հիմքով,

- ագրոքիմիկատներ՝ արտադրական թափոնների հիմքով,

- մելիորանտներ եւ հողի դրենաժավորման համար նախատեսված նյութեր,

- բնահողեր, տորֆային հողեր եւ պաշտպանական հողի համար նախատեսված արհեստական հիմքեր, անասնաբուժական եւ թռչնաբուժական կերային հավելումներ,

- բնափայտային բուսականությունը վնասվելուց պաշտպանելու միջոցները:

- համակցված պարարտանյութեր՝ հանքանյութերի ավելացմամբ. բոր, կորալտ, պղինձ, երկաթ, մանգան, մոլիբդեն, ցինկ եւ այլն:

Միասնական պահանջներն ուղղված են մարդու եւ նրա բնական միջավայրի անվտանգությունն ագրոքիմիկատներից առավելագույնս ապահովելուն եւ կատարման համար պարտադիր են բոլոր ֆիզիկական ու իրավաբանական անձանց կողմից:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

Միասնական պահանջները խախտելու դեպքում սահմանվում է վարչական, կարգապահական եւ քրեական պատասխանատվություն՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության համաձայն:

2. ԵԶՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Ագրոքիմիկատներ՝ բույսերի սնուցման, հողի բերրիությունը կարգավորելու եւ կենդանիների լրացասնունդի համար նախատեսված պարարտանյութեր, քիմիական մեղիորանտներ, կերային հավելումներ:

Պարարտանյութեր՝ նյութեր, որոնց միջոցով բույսերն ապահովվում են սնուցող տարրերով, եւ որոնք նպաստում են հողի բերրիության բարձրացմանը:

Պարարտանյութերի տեսակներ՝ պարարտանյութերի դասակարգումը՝ կախված գործող նյութից եւ ագրեգատային վիճակից:

Կարելի է խառնուկներ՝ ագրոքիմիկատի արտադրության, պահպանման կամ օգտագործման կողմնակի արդյունքը, որոնք ագրոքիմիկատի ակտիվ գործող նյութի հետ համակցմամբ վտանգ են ներկայացնում մարդու առողջության եւ շրջակա միջավայրի համար:

Կիրառվող կանոնակարգ՝ այն գործոնների ամբողջությունը, որոնցով բնութագրվում է ագրոքիմիկատների կիրառումը՝ ներառյալ ծախսի նորման, մշակման համար նախատեսված ժամանակը, մշակման քանակը, օժանդակ նյութերի ու մեթոդների օգտագործումը, կիրառման ծավալը, բերքահավաքից առաջ ընկած ընդմիջումները:

Վտանգ՝ օգտագործման կոնկրետ պայմաններում ագրոքիմիկատների հնարավոր վտանգավորության աստիճանը՝ մարդկանց առողջության եւ մարդու բնական միջավայրի համար:

Մարդու բնական միջավայր՝ այն օբյեկտների ամբողջությունը, շրջակա միջավայրում առկա երեւոյթները եւ գործոնները, որոնցով որոշվում է մարդու կենսագործունեությունը:

ՊԳԿ-ի մասնագրերը՝ ագրոքիմիկատների որակի միջազգային ստանդարտները, որոնք գնահատվում եւ հրապարակվում են ՊԳԿ-ի կողմից:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Մաքսային միության անդամ պետությունների տարածքում հնարավոր է շրջանառել այն ագրոքիմիկատները, որոնք սահմանված կարգով անցել են պետական գրանցումը եւ ներառվել պետական գրանցամատյանում (Ռեեստր), որը նախատեսված է այն ագրոքիմիկատների համար, որոնք Մաքսային միության անդամ պետությունների տարածքում թույլատրվում է օգտագործել:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

Պետական գրանցամատյանում (Ռեեստր) չներառված ագրոքիմիկատների ներմուծումը եւ շրջանառությունն արգելվում է Մաքսային միության անդամ պետությունների տարածքում:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

Ագրոքիմիկատների թունաբանական հիգիենիկ գնահատումը, դրանց որակի եւ անվտանգության ցուցանիշները պետք է համապատասխանեն Մաքսային միության անդամ պետությունների կողմից սահմանված պահանջներին:

Ագրոքիմիկատների անվտանգ շրջանառությունն ապահովվում է ագրոքիմիկատների համար սահմանված պահանջների կատարմամբ, դրանց փաթեթվածքով եւ մակնշմամբ, ինչպես նաեւ Մաքսային միության անդամ պետությունների տարածքում ագրոքիմիկատների համար սահմանված հիգիենիկ կանոնակարգի պահանջների կիրառմամբ:

Մաքսային միության անդամ պետությունների տարածք շրջանառման համար մտցվող ագրոքիմիկատները պետք է արտադրողի (մատակարարի) կողմից անցնեն սահմանված պահանջներին համապատասխանության պարտադիր հաստատման գործընթաց, ինչպես նաեւ դասակարգվեն ըստ վտանգավորության աստիճանի՝ ելնելով պատրաստուկների եւ դրանց գործող նյութերի թունաբանական հիգիենիկ բնութագրերից:

Ագրոքիմիկատների մատակարարը (մշակողը) պարտավոր է քննել ստացված պատրաստուկները՝ շրջակա միջավայրի վրա ունեցած դրանց թունաբանական հատկանիշները հայտնաբերելու համար, որպեսզի ապահովվեն դրանց հետ շփման միջոցները: Ստացված տեղեկությունները ներառվում են արտադրանքին կից ներկայացված ագրոքիմիկատների թունաբանական հիգիենիկ գնահատման փաստաթղթերում:

Արտադրողը (մատակարարը) պարտավոր է ապահովել, որ ագրոքիմիկատներն արտադրվեն (ներմուծվեն) սպառողի համար հարմար կշռաձրարմամբ:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

Ագրոքիմիկատների հետ անվտանգ վարվեցողության պարտադիր պայմանը դրանց կիրառման, փոխադրման եւ պահպանման վերաբերյալ առաջարկությունների առկայությունն է պատրաստուկ պարունակող յուրաքանչյուր տարայի վրա (տարայի վրա փակցված պիտակի վրա կամ հատուկ հավելվածում):

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

Ագրոքիմիկատների շրջանառությունը չպետք է հանգեցնի՝

- գյուղատնտեսական արտադրանքում թունավոր եւ վտանգավոր մետաբոլիտների ու միացությունների, կայուն օրգանական աղտոտիչների, ռադիոնուկլիդների, ծանր մետաղների ու մկնդեղի աղերի, հոտավետ բազմացիկլային ածխաջրածինների, բենզապիրենի հիգիենիկ նորմատիվների գերազանցմանը՝ սահմանված բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցությանն ուղղված օրենսդրության համաձայն.

- շրջակա միջավայրի օբյեկտներում ագրոքիմիկատների կիրառման հետեանքով ախտածին եւ պայմանական ախտածին միկրոֆլորայի, հելմինտի կենսունակ ձվերի, աղիքային ախտածին պարզագույն օրգանիզմների թաղանթապատյանների եւ այլ վտանգավոր կենսաբանական ագենտների առաջացմանը,

- հողի բնական միկրոբիոցենոզի խախտմանը:

4. ԱԳՐՈՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Ագրոքիմիկատների անվտանգության գնահատման չափորոշիչներն են՝

- սուր, ենթասուր, քրոնիկ թունավորում՝ ներառյալ մարդու առողջության վրա ունեցած սպեցիֆիկ կամ ոչ անմիջական ազդեցության գնահատումը (ալերգեն հատկանիշները, վերարտադրողական թունավորում, տերատոգենություն, մուտագենություն, քաղցկեղածնություն, սաղմնային թունավորություն),

- վտանգավոր (թունաբանական նշանակության) խառնուկների եւ մետաբոլիտների առկայությունը,

- շրջակա միջավայրի օբյեկտներում առկա գործող նյութերի ազդեցությունը մարդու բնական միջավայրի (խմելու ջուր, օդ, հող), սննդամթերքի որակի եւ անվտանգության վրա՝ օգտագործելով մոնիթորինգի տվյալները (առկայության դեպքում):

Ագրոքիմիկատների գնահատման չափորոշիչներից են նաեւ՝

պատրաստուկային ձեւի բաղադրիչների թունաբանական բնութագիրը (լցանյութեր, էմուլգատորներ, կայունացուցիչներ, լուծիչներ եւ այլն)՝ գործող չափանիշների, CAS, IUPAC համարների նշմամբ, REACH համակարգի գրանցմամբ,

ՊԳԿ/ԱՀԿ կամ Եվրոպական միության կամ Շրջակա միջավայրի պաշտպանության ԱՄՆ-ի գրասենյակի տվյալները (առկայության դեպքում)՝ ներմուծվող ագրոքիմիկատների վտանգավորության գնահատմամբ:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

ագրոքիմիկատների քիմիական ու ֆիզիկական հատկանիշների վերաբերյալ նյութերը:

Նշված չափորոշիչները համարվում են ներմուծվող ագրոքիմիկատների վտանգավորության հիմնական գնահատումը՝ համաձայն Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

5. ԱԳՐՈՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ԹՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԻԿ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ագրոքիմիկատների թունաբանական հիգիենիկ գնահատումն իրականացնում են լիազորված կազմակերպությունները, որոնք ունեն համապատասխան գիտական ու նյութական ապահովվածություն եւ համապատասխան պրոֆիլ ու որակավորում ունեցող մասնագետներ՝ համաձայն Մաքսային միության անդամ պետությունների կողմից սահմանված կարգի:

Ագրոքիմիկատների թունաբանական հիգիենիկ գնահատումն իրականացնելու կարգը որոշվում է Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության համաձայն:

Արտադրողի (մատակարարի, գրանցված անձի) կողմից ագրոքիմիկատների գնահատման համար տրամադրվում են՝

ագրոքիմիկատների թունաբանական դոսյե (ներառյալ գործող նյութի, հիմնական բաղադրիչների եւ ընդհանուր պատրաստուկային ձեւի բնութագիրը),

պատրաստուկների փորձարկումների գրանցման արդյունքները Մաքսային միության անդամ պետության տարածքում՝ ներառյալ սննդային արժեքի եւ բուսաբուծության մեջ աճեցվող արտադրանքի օրգանոլեպտիկ հատկությունների գնահատումը:

Ընդ որում, կարող են ընդունվել Մաքսային միության որեւէ անդամ պետության տարածքում անցկացված փորձարկումների գրանցման արդյունքները, եթե փորձարկումների անցկացման եւ կանոնակարգով առաջարկվող պատրաստուկների կիրառման կարգերը գյուղատնտեսական մշակաբույսերի, պատրաստուկների ծախսերի նորմայի, մշակման, ագրոքիմիկատների տեխնոլոգիական կիրառման ու այլ առումներով համընկնում

են:

շրջակա միջավայրի օբյեկտներում, բուսաբուծության եւ անասնաբուծության հումքում առկա թունավոր եւ վտանգավոր միացությունների (խառնուկներ, նյութեր) պարունակության վերաբերյալ անալիտիկ տվյալների հսկողության մեթոդների առկայության մասին, որոնք գտնվում են ագրոքիմիկատի կուտակումներում՝ գերազանցելով գյուղատնտեսական հանդակների հողում եղած պարունակությունը,

ագրոքիմիկատի անալիտիկ օրինակը՝ արտադրողի կողմից արտադրված փաթեթվածքի տարայի վրա փակցված հատուկ պիտակի վրա,

անվտանգության անձնագիրը եւ(կամ) անվտանգության փաստաթուղթը (MSDS), պատրաստողի մասնագիրը եւ(կամ) պատրաստողի հայտարարագիրը,

ագրոքիմիկատի ֆիզիկաքիմիական հատկությունները, այլ նյութերի (միացություններ) առկայության դեպքում օդային միջավայրում եւ կեղտաջրերում թունավոր, հրդեհավտանգ եւ պայթյունավտանգ միացություններ գոյացնելու ունակությունները. ոչ պիտանի ագրոքիմիկատների եւ դրանց տարաների վնասազերծման կամ օգտահանման կարգը:

Թունաբանական հիգիենիկ գնահատման սկզբունքներն են՝

դրա անցկացման պարտադիր կատարումը,

գիտականորեն հիմնավորված եզրակացությունները,

փորձագետների անկախ մոտեցումն իրենց պարտականություններն իրականացնելիս,

լիակատար անցկացումը,

անցկացման կարգի վճարովիությունը:

քննարկվող նյութերի գաղտնիության պահպանումը,

Ագրոքիմիկատների սանիտարահամաճարակաբանական փորձաքննության արդյունքներով ձեւակերպվում է սահմանված նմուշի սանիտարահամաճարակաբանական եզրակացությունը՝ հետեւյալ նշմամբ՝

պատրաստուկի անվանումը,

արտադրողը.

ագրոքիմիկատի հիգիենիկ բնութագիրը՝ ներառյալ դրա մեջ պարունակվող թունաբանական նշանակություն ունեցող եւ վտանգավոր խառնուկները (առկայության դեպքում) եւ պատրաստուկի վտանգավորության դասը (գործող հիգիենիկ դասակարգման համաձայն),

ագրոքիմիկատի կիրառման ոլորտը (գյուղական, ֆերմերային, անտառային, կոմունալ տնտեսության, սենյակային ծաղկաբուծության, անձնական օժանդակ տնտեսության մեջ կիրառումը),

պատրաստուկի համար նախատեսված կանոնակարգերը եւ տեխնոլոգիական կիրառումը (ավիաքիմիական աշխատանքները, վերգետնյա մշակումները. մշակվող կուլտուրաների ոլորտը, ծախսի նորման, կիրառման բազմապատիկությունը՝ մինչեւ բերքահավաքն առաջարկվող «սպասման ժամկետները»),

նորմատիվ փաստաթղթեր (սանիտարական նորմեր եւ կանոններ, հիգիենիկ պահանջներ եւ այլն), որոնց համաձայն, պետք է ապահովվեն պատրաստուկի հետ վարվելու անվտանգության միջոցները,

սանիտարահամաճարակաբանական եզրակացության գործողության ժամկետը:

Թունաբանական հիգիենիկ գնահատում տալու համար անհրաժեշտ տեղեկության բացակայության դեպքում ժամանակակից աղբյուրներում պատրաստուկների վերաբերյալ թունաբանական հիգիենիկ հատկությունների մասին բացասական տվյալների բացահայտման կամ փորձարարական հետազոտությունների անցկացման ընթացքում բացասական արդյունքների ստացման դեպքում տրամադրվում է հիմնավորված եզրակացություն՝ ագրոքիմիկատի պետական գրանցման անհնարինության մասին:

6. ԱԳՐՈՔԻՄԻԿԱՏԻ ՓԱԹԵԹՎԱԾՔԸ ԵՎ ՄԱԿՆՇՈՒՄԸ

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման
խմբագրությամբ)

Չափաճրարված ագրոքիմիկատների մակնշումը պետք է դրվի անմիջապես
ագրոքիմիկատներով փաթեթվածքի վրա՝ փաթեթվածքին ամրացվելով այնպիսի
եղանակով, որպեսզի ապահովվի դրա անվնաս լինելը: Չփաթեթավորված
պարարտանյութեր մատակարարելու դեպքում մակնշումը տրամադրվում է կցված
փաստաթղթերում:

**(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622
որոշման խմբագրությամբ)**

Մանրաձախ առետրի համար նախատեսված սպառողական տարայով
ագրոքիմիկատների մակնշման մեջ պետք է պարունակվի հետևյալ տեղեկությունը.

- ագրոքիմիկատների անվանումը՝ համաձայն տեխնիկական նորմատիվային
իրավական ակտերում սահմանվածների (այսուհետ՝ ՏՆԻԱ) եւ դրա նշանակությունը,

- գործող նյութի անվանումը եւ պարունակությունը,

- արտադրողի անվանումը (ֆիրմային անվանումը) եւ գտնվելու վայրը
(իրավաբանական հասցեն՝ ներառյալ արտադրող երկրի անվանումը),

- արտադրողի ապրանքային նշանը,

- ՏՆԻԱ-ի նշանակությունը՝ համաձայն որի ագրոքիմիկատն արտադրվում եւ
մատակարարվում է,

- ագրոքիմիկատի ապրանքանիշը, բաղադրությունը, պատրաստուկային ձեւը,

- սպառողական տարայում առկա ագրոքիմիկատի անվանական քանակը
(զտաքաշը կամ ծավալը),

- գործող ՏՆԻԱ-ի անվտանգության տեղեկությունները,

- գործող ՏՆԻԱ-ի մանիպուլյացիոն նշանները,

- ագրոքիմիկատի կիրառման վերաբերյալ հանձնարարականները,
 - պարարտանյութի պետական գրանցման համարը,
 - տարայի վրա փակցված պիտակի գրանցման համարը,
 - արտադրման ամսաթիվը (ամիսը, տարին),
 - պահպանման ժամկետը,
 - ագրոքիմիկատի երաշխիքային ժամկետը,
 - ագրոքիմիկատի գծանիշ նույնականացման ծածկագիրը,
 - հավաստագրված արտադրանքի համապատասխանության ազգային նշանը,
 - կիրառության սահմանափակումները (այլ ագրոքիմիկատների եւ բույսերի պաշտպանության այլ միջոցների հետ համատեղելիությունը, բույսերի թունավորում),
 - նախազգուշական միջոցներն ագրոքիմիկատի հետ աշխատելիս, դրա փոխադրումը եւ պահպանումը,
 - շրջված կամ թափված ագրոքիմիկատի վնասազերծման միջոցները. տարայի վնասազերծումը եւ օգտահանումը,
 - սուր թունավորումների կլինիկական պատկերը (եթե կան տվյալներ), բժշկի հանձնարարականները, այդ թվում՝ անտիդոտի նշմամբ (առկայության դեպքում),
 - առաջին օգնության միջոցները թունավորվելու դեպքում:
- Գյուղատնտեսական ձեռնարկություններում իրացնելու համար նախատեսված ագրոքիմիկատների մակնշման մեջ պետք է նշվի հետեւյալ տեղեկությունը*.
- արտադրողի անվանումը (ֆիրմային անվանումը) եւ գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն՝ ներառյալ արտադրող երկրի անվանումը),
 - ագրոքիմիկատի անվանումը՝ համաձայն ՏՆԻԱ-ով սահմանվածի, եւ դրա նշանակությունը,
 - գործող նյութի անվանումը եւ պարունակությունը,

- ՏՆԻԱ-ի նշանակությունը՝ համաձայն որի պարարտանյութն արտադրվում է մատակարարվում է,

- ագրոքիմիկատի ապրանքանիշը, բաղադրությունը, պատրաստուկային ձեւը,

- գործող ՏՆԻԱ-ի անվտանգության տեղեկությունները,

- մանիպուլյացիոն նշանները,

- խմբաքանակի համարը,

- արտադրման ամսաթիվը (ամիսը, տարին),

- ագրոքիմիկատի անվանական քանակը (զտաքաշը կամ ծավալը),

- պետական գրանցման համարը,

- ագրոքիմիկատի երաշխիքային ժամկետը եւ պահպանման ժամկետը,

- կիրառության սահմանափակումները (այլ պարարտանյութերի եւ բույսերի պաշտպանության այլ միջոցների հետ համատեղելիությունը, բույսերի թունավորում),

- շրջված կամ թափված ագրոքիմիկատի վնասազերծման միջոցները. տարայի վնասազերծումը եւ օգտահանումը,

- առաջին օգնության միջոցները՝ թունավորվելու դեպքում,

- սուր թունավորումների կլինիկական պատկերը (եթե կան տվյալներ), բժշկի առաջարկությունները, այդ թվում՝ անտիդոտի նշմամբ (առկայության դեպքում):

Մակնշումն իրականացվում է Մաքսային միության անդամ պետությունների պետական լեզուներով:

Երկաթուղային գլանատակառների (ցիստեռնների) եւ ավտոցիստեռնների վրա մակնշումը պետք է դրվի ավտոմոբիլային ու երկաթուղային տրանսպորտային ուղեբեռների փոխադրումների կանոնների պահանջների համաձայն:

Մակնշումը պետք է լինի հստակ եւ հասկանալի, կայուն քիմիական նյութերի ու կլիմայական գործոնների ազդեցության նկատմամբ եւ պահպանվի ագրոքիմիկատի շահագործման ամբողջ ժամկետի ընթացքում:

**Հսկողության ենթակա արտադրանքին (ապրանքներին) եւ դրանց
անվտանգության ցուցանիշներին ներկայացվող հիմնական պահանջները**

Հ h/h	Արտադրանքի (ապրանքի) անվանումը	Սանիտարահամաճարակաբանական պահանջները		Ծանոթագրու- թյուններ
		ցուցանիշ	թույլատրելի մակարդակ- ներ	
15. Թունաքիմիկատներ (պեստիցիդների) եւ ազրոքիմիկատներ				
օդի նախապատրաստում՝ օդի մշակում՝ դրան տեխնիկական եւ սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխանող հատկություններ

հաղորդելու համար. օդի մաքրում փոշուց, վնասակար գազային խառնուրդներից եւ հոտերից, տաքացում կամ հովացում, չորացում կամ խոնավացում, թթվածնի, օդային իոնների, արոմատիկ նյութերի ավելացում: Կիրառվում է օդային ջեռուցման, օդափոխության եւ օդորակման համակարգերում.

օդի ֆիլտր՝ օդափոխության եւ օդորակման համակարգերով սենք մատուցվող օդի փոշեմաքրման սարքվածք.

օդախոնավորիչ՝ օդի օդախոնային կազմը կարգավորող սարք.

ջրաօդախոնավորիչ (կամ աէրոֆիտոգեներատոր)՝ ջրաօդային իոնների (օդային իոններ, որոնք առաջացել են հեղուկ դիսպերսային ֆազով աերոզոլներից) արհեստականորեն ստեղծման համար նախատեսված սարքվածք

հալոգեներատոր՝ աղի աերոզոլների արհեստականորեն ստեղծման համար նախատեսված սարքվածք.

իոնազերծիչ՝ կրիչը էլեկտրական լիցքից արհեստականորեն լիցքաթափելու միջոցով օդային իոնների խտությունը նվազեցնելու համար նախատեսված սարքվածք.

օգտագործման ցուցում (շահագործման ձեռնարկ), շահագործման վերաբերյալ փաստաթղթեր՝ փաստաթղթեր, որոնք պարունակում են տեղեկություններ արտադրանքի շահագործման (կիրառման) եղանակների եւ անվտանգության միջոցների վերաբերյալ.

օդորակիչ՝ օդորակման համակարգերում օդի մշակման եւ տեղափոխման ապարատ.

օդորակում՝ փակ սենքերում եւ փոխադրամիջոցներում օդային միջավայրի այնպիսի վիճակի ստեղծում եւ պահպանում, որն առավել բարենպաստ է մարդկանց ինքնազգացողության, տեխնոլոգիական գործընթացների ընթացքի եւ սարքավորումների աշխատանքի համար: Օդորակման համակարգերը պարունակում են տեխնիկական միջոցներ՝ օդի հովացման (տաքացման), մաքրման, խոնավեցման (չորացման), աղմկախլացման եւ օդի տեղափոխման համար.

լամինար պահարաններ եւ տուփեր՝ աերոզոլների ու այլ վնասակար ազդակների գոյացմամբ ուղեկցվող տեխնոլոգիական գործողությունների ֆիզիկական մեկուսացումն ապահովելու համար օգտագործվող սարքավորումներ, որոնք արգելքի դեր են կատարում՝ խոչընդոտելով դրանց արտագատմանը օդային միջավայր՝ լաբորատոր մեթոդիկաները կատարելիս: Օգտագործվում են դեղագործության մեջ, միկրոէլեկտրոնիկայում, նանոնյութերի հետ աշխատելիս եւ այլ ոլորտներում.

ցածրավոլտ սարքավորումներ՝ ցանկացած էլեկտրական սարքավորում, որը նախատեսված է մինչեւ 1000 վոլտ անվանական լարման դեպքում՝ փոփոխական հոսանքի եւ մինչեւ 1500 վոլտ անվանական լարման դեպքում՝ հաստատուն հոսանքի կիրառման համար եւ օգտագործման դեպքում բնութագրվում է վնասի հասցման բարձր ռիսկայնությամբ.

սարքավորում՝ ինքնուրույն օգտագործվող կամ մեքենայի վրա տեղադրվող տեխնիկական սարքվածք, որն անհրաժեշտ է դրա հիմնական եւ (կամ) լրացուցիչ գործառույթները կատարելու, ինչպես նաեւ մի քանի մեքենա մեկ համալիրի մեջ միավորելու համար.

նախատեսված նշանակում՝ արտադրատեսակի կիրառումն ըստ արտադրողի կողմից ներկայացված տեղեկությունների, որոնք նշված են մականշվածքի վրա, օգտագործման ցուցման մեջ եւ (կամ) գովազդային նյութում.

օդի վերաշրջանառություն՝ սենքի օդի խառնելն արտաքին օդի հետ եւ այդ խառնուրդի մատուցումը տվյալ կամ այլ սենքերի. վերաշրջանառություն չի համարվում օդի խառնումը մեկ սենքի սահմաններում, այդ թվում՝ երբ դա ուղեկցվում է տաքացումով (հովացումով)՝ ջեռուցման ագրեգատներով կամ օդափոխիչ հովհարներով.

գազային ճառագայթային ջեռուցման համակարգ՝ սարքավորում, որում էներգակրի (բնական կամ հեղուկացված գազ) այրման էներգիայի անցման հետեւանքով այդ էներգիան անմիջապես վերածվում է ենթակարմիր) ջերմային ճառագայթման.

կից փաստաթղթեր՝ արտադրանքին կից ներկայացվող փաստաթղթեր (տեխնիկական անձնագիր, նկարագրություն, շահագործման ձեռնարկ կամ օգտագործման ցուցում, պիտակ, փորձարկման արձանագրություններ, հավաստագրեր, փորձագիտական եզրակացություն եւ այլն), որոնք պարունակում են այդ արտադրանքի տեխնիկական բնութագրերը, օգտագործման ժամանակ անվտանգության պահանջները եւ այլն.

արտաքին միջավայր արտածվող մշակված օդի ջերմային վերաօգտագործում՝ մի որեւէ ջերմատեխնիկական կայանքից ջերմային էներգիայի մի մասի վերադարձ կրկնակի օգտագործման համար, որի ժամանակ այրման գազանման արգասիքները վերաօգտագործիչ սարքում տաքացնում են այդ կայանք ներս մտնող օդը.

ջերմային պոմպ՝ տաքացված օդի ճնշումով տեղափոխման համար նախատեսված սարքվածք.

ջերմագեներատոր՝ ջերմության աղբյուր, որում ջերմակրի տաքացման համար օգտագործվում են վառելիքի այրման ընթացքում արտազատվող ջերմությունը.

ջերմափոխանակիչ՝ առավել բարձր ջերմաստիճանով միջավայրից (տաքացնող մարմին՝ ջերմակիր) առավել ցածր ջերմաստիճանով միջավայրին (տաքացվող մարմին) ջերմության փոխանցման համար նախատեսված սարքվածք.

ջերմակիր՝ շարժվող միջավայր (գազ, գուրջի, հեղուկ), որն օգտագործվում է ջերմությունը փոխանցելու համար.

օգտագործողի որակավորմանը ներկայացվող պահանջներ՝ այն գիտելիքները, կարողությունները, հմտությունները եւ փորձը, որոնցով, արտադրատեսակի անվտանգ օգտագործման նպատակներով, օգտագործողը պետք է օժտված լինի.

մանրէասպան ուլտրամանուշակագույն կայանք՝ մանրէասպան լամպերով սարքավորված ներհոս-օդաքաշ օդափոխության համակարգ.

Ֆիլտր՝ սարքվածք, սարք, կառույց, որում քամիչ միջնորմի օգնությամբ տեղի է ունենում կարծր եւ գազանման ֆազեր պարունակող անհամասեռ համակարգերի բաժանում.

լուսակատալիտիկ օդամաքիչ՝ սարքվածք, որի գործողության սկզբունքը հիմնված է ուլտրամանուշակագույն ճառագայթման՝ կատալիզորդի միջոցով բարդ միացությունները պարզ անվնաս նյութերի տրոհելու հատկության վրա: Սարքվածքը ներառում է ծակոտկեն կրիչ՝ պատված TiO_2 տեսակի կիսահաղորդչային միացությամբ, որը ճառագայթահարվում է ուլտրամանուշակագույն ճառագայթումով եւ որի միջով օդ է ներփչում: Օդի հոսքից օդամաքիչ ներթափանցող քիմիական նյութերը եւ միացությունները, այդ թվում՝ օրգանական մոլեկուլները, արտանետված գազերը, միկրոօրգանիզմները, վարակները մակակլանվում են ծակոտկեն ապակու (լուսակատալիտիկ ֆիլտր) վրա հագցված լուսակատալիզորդի մակերեսային եւ ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցության ներքո օքսիդացվում են մինչեւ ածխաթթու գազի վերածվելը: Կարող են օգտագործվել այլ տեխնոլոգիաներ եւս, օրինակ՝ Flash Steamer կոչվող համակարգի միջոցով առաջացած արագ էլեկտրոնների օգտագործման վրա հիմնված տեխնոլոգիաներ:

էլեկտրական օդախոնավորիչ՝ օդախոնավորիչ, որի գործողության սկզբունքը հիմնված է ուժեղ էլեկտրական դաշտում էլեկտրոդներից էլեկտրական լիցքի արտահոսքի վրա (ներառյալ «Չիժեւսկու ջահերը»):

էլեկտրաստատիկ ֆիլտր՝ օդի ֆիլտր, որի գործողության սկզբունքը հիմնված է աերոզոլին էլեկտրական լիցքի հաղորդման, այդ էլեկտրական լիցքն օգտագործելու միջոցով աերոզոլի նստեցման ու հավաքման վրա:

3. ՕԴԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՄԱՔՐՄԱՆ ԵՎ ԶՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Օդի նախապատրաստման, մաքրման եւ զտման համար նախատեսված սարքավորումներն ու նյութերը պետք է (դրանում վնասակար նյութերի խտության մակարդակով եւ միկրոկլիմայի հարաչափերով) ապահովեն սենք մատուցվող օդի համապատասխանությունը սանիտարական օրենսդրության պահանջներին եւ չպետք է շրջակա միջավայրի աղտոտման աղբյուր լինեն:

Օդի նախապատրաստման, մաքրման եւ գտման համար նախատեսված սարքավորումներն ու նյութերը շահագործման ժամանակ սպասարկող անձնակազմի աշխատավայրերում եւ կենցաղում օգտագործելիս չպետք է ստեղծեն վնասակար գործոնների (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական, ռադիոլոգիական) այնպիսի մակարդակներ, որոնք գերազանցում են սանիտարական օրենսդրության պահանջներին համապատասխանող սահմանային թույլատրելի խտությունը:

Սարքավորումները պետք է համալրվեն բոլոր անհրաժեշտ պարագաներով՝ դրանց անվտանգ շահագործման, կարգավորման, տեխնիկական սպասարկման համար:

Սարքավորումները պետք է նախագծվեն եւ արտադրվեն այնպես, որ դրանց արտադրության եւ շահագործման ժամանակ օգտագործվող հումքը, նյութերը եւ իրերը սպառնալիք չստեղծեն քաղաքացիների կյանքի ու առողջության, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքի, պետական կամ մունիցիպալ գույքի, կենդանիների եւ բույսերի կյանքի կամ առողջության համար: Գազերի, հեղուկների, քիմիական արտադրանքի օգտագործման ժամանակ պետք է բացառվի դրանց օգտագործման հետ կապված վտանգը:

Սարքավորումների անվտանգ օգտագործման համար պետք է նախատեսվի լրացուցիչ լուսավորություն:

Սարքավորումների կառավարման համակարգերը բոլոր նախատեսվող աշխատանքային ռեժիմներում եւ շահագործման պայմաններով նախատեսված բոլոր արտաքին ազդեցությունների առկայության պարագաներում՝ ներառյալ նախազգուշական ազդանշանների համակարգը եւ վտանգավոր իրավիճակների հանգեցնող սարքավորումների աշխատանքի խափանումների մասին նախազգուշական այլ միջոցներ, ինչպես նաեւ աշխատանքների վթարային դադարի, ուղեկապման եւ այլ միջոցներ, պետք է ապահովվեն դրա շահագործման անվտանգությունը:

Աշխատանքային գոտի եւ (կամ) շրջակա միջավայր վնասակար գործոնների

(քիմիական, ֆիզիկական, կենսաբանական եւ ճառագայթային) արտանետման հետ կապված վտանգներից պաշտպանվելու համար սարքավորումները պետք է զինված լինեն համապատասխան պաշտպանական հարմարանքներով՝ (օդափոխվող ծածկույթներ, ջերմամեկուսիչ եւ ձայնամեկուսիչ պատյաններ, հակաթրթռական մեղմիչներ, մարիչ սարքվածքներ, ներկառուցված պաշտպանիչ էկրաններ, կատալիտիկ եւ գազի ոչ լրիվ այրման արգասիքների լրավառման համար այլ միջոցներ՝ գազով ջեռուցման համակարգերի համար, թայմերներ, հեռակառավարման միջոցներ եւ այլն):

Շահագործման ժամանակ սարքավորումների արտանետած գազերը, հեղուկը, փոշին, գոլորշին եւ մյուս թափոնները չպետք է վտանգի աղբյուր լինեն : Այդպիսի վտանգի առկայության դեպքում սարքավորումը զինվում է այդ նյութերը հավաքելու եւ հեռացնելու համար նախատեսված սարքվածքներով, որոնք տեղադրվում են արտանետման աղբյուրին հնարավորինս մոտ, ինչպես նաեւ արտանետումների նկատմամբ չընդհատվող ավտոմատ հսկողության իրականացման համար նախատեսված սարքվածքներով:

Օդի նախապատրաստման, մաքրման եւ զտման համար նախատեսված սարքավորումների խտությունը, տեղակայման բարձրությունը, ինչպես նաեւ դրանց աշխատանքի ինտենսիվությունը պետք է որոշվեն՝ ելնելով կոնկրետ միկրոկլիմայական պայմաններից եւ ընթացող տեխնոլոգիական գործընթացներից:

Սարքավորումները պետք է զինված լինեն հողանցման արդյունավետ համակարգերով:

Սարքավորումների շահագործումն իրականացվում է որոշակի արտադրատեսակների համար կազմված նորմատիվ փաստաթղթերի եւ սանիտարական օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթերի համաձայն, որոնք համապատասխան բնութագրերի նկատմամբ ներկայացվող պահանջներ են պարունակում:

Արտադրական ձեռնարկություններում օդափոխման եւ օդորակման համակարգերի տեղադրումը պետք է իրականացվի ըստ վերահսկողության

համապատասխան մարմինների հետ համաձայնեցված տեխնիկական նախագծերի:

4. ՕԴԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՄԱՔՐՄԱՆ ԵՎ ՋՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Սանիտարահիգիենիկ փորձարկումներ՝

- արտադրանքի շահագործման ընթացքում օդային միջավայր արտանետվող վնասակար քիմիական նյութերի որակաքանակական հետազոտություններ.

-արտադրատեսակների բաղադրության մեջ մտնող նյութերի հիգիենիկ գնահատում (հոտաչափության, սանիտարաքիմիական հետազոտություններ):

Փորձարկման ֆիզիկական մեթոդներ՝

- առաջացող ֆիզիկական գործոնների (աղմուկի, ընդհանուր թրթռման (վիբրացիա), օդային ուլտրաձայնի, ուլտրամանուշակագույն, ենթակարմիր) ճառագայթման, արդյունաբերական հաճախականության էլեկտրական, մագնիսական դաշտերի, էլեկտրաստատիկ դաշտի, էլեկտրամագնիսական դաշտերի եւ ճառագայթումների, օդափոնային կազմի, միկրոկլիմայի ստեղծվող հարաչափերի, օգտագործողի հպման համար հասանելի մակերեսայինների ջերմաստիճանների) մակարդակների չափում,

- արտադրատեսակների բաղադրության մեջ մտնող նյութերի մակերեսայիններին էլեկտրաստատիկ դաշտի լարվածության գնահատում,

- ռադիացիոն անվտանգության գնահատում (բնական ձայնակլանիչ եւ ձայնամեկուսիչ նյութերի օգտագործմամբ արտադրատեսակների համար):

Թունաբանական փորձարկումներ՝

- օդի նախապատրաստման, մաքրման եւ զտման համակարգերում քիմիական արտադրանքի, ինչպես նաեւ, անհրաժեշտության դեպքում, նյութերի թունաբանական գնահատում:

Փորձարկման մանրէաբանական մեթոդներ՝

- օդում մանրէների կոնցենտրացիայի ցուցանիշի եւ մաքրման արդյունավետության գնահատում:

5. ՕԴԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՄԱՔՐՄԱՆ ԵՎ ՁՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՄԱԿԱՆՇՎԱԾՔԻՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Օդի նախապատրաստման, մաքրման եւ զտման համար նախատեսված սարքավորումները պետք է ունենան պիտակներ (մականշվածք, մետաղապիտակներ), որոնցով օգտագործողը կտեղեկանա արտադրողի, արտադրանքի կիրառման ոլորտի եւ շահագործման ժամանակ անվտանգության միջոցների մասին:

Արտադրողը պետք է օդի նախապատրաստման, մաքրման եւ զտման համար նախատեսված սարքավորումների եւ նյութերի մասին տեղեկությունները շարադրի արտադրատեսակի մականշվածքում եւ փաստաթղթերում: Արտադրողի անվանումից ու հասցեից եւ (կամ) ապրանքանշանից բացի՝ տեղեկությունները պետք է պարունակեն հղում այն նորմատիվային փաստաթղթին, որի պահանջներին համապատասխանում է արտադրատեսակը, արտադրողի տեխնիկական փաստաթղթերին համապատասխան ներկայացվող տեղեկություններ, շրջանառվող արտադրատեսակի համապատասխանության նշանը տեխնիկական կանոնակարգերին, արտադրման ամսաթիվը, արտադրատեսակների պաշտպանիչ եւ շահագործական հատկություններին, շուկայում արտադրատեսակների տեղաբաշխման իրավական կողմերին առնչվող ցուցանիշներ, ինչպես նաեւ ցանկացած այլ տվյալներ, որոնք ենթադրյալ օգտագործողի համար ապահովում են արտադրատեսակների համապատասխան ընտրության եւ օգտագործման հնարավորություն եւ կարող են կապված լինել նրա առողջության ու անվտանգության հետ: Մականշվածքը դրվում է անմիջապես արտադրատեսակի վրա:

Արտադրատեսակի փաթեթվածքի վրա դրվող մականշվածքը պետք է

պարունակի՝ արտադրող երկրի անվանումը, իրավաբանական հասցեն, արտադրողի առևտրային նշանը, արտադրատեսակի անվանումը, այն նորմատիվային փաստաթուղթը, որի պահանջներին համապատասխանում է արտադրատեսակը, չափը (առկայության դեպքում), արտադրատեսակի խնամքի եղանակները, արտադրության տարեթիվը, պիտանիության ժամկետը կամ պիտանիության ժամկետի մարման ամսաթիվը, շրջանառության նշանը, արտադրողի փաստաթղթերին համապատասխան ներկայացվող այլ տեղեկություններ:

Մականշվածքում նշվում են բոլոր անհրաժեշտ տվյալները, որոնք ապահովում են արտադրանքի անվտանգ շահագործումը՝ արտադրանքի հիմնական տեխնիկական բնութագրերը, նախազգուշական գրությունները, անհրաժեշտության դեպքում՝ վտանգի նշանները, անհատական պաշտպանության միջոցների օգտագործման նկատմամբ պահանջները, անվտանգ հեռավորությունները կամ շահագործման թույլատրելի տեսողությունը եւ այլն:

Մականշվածքը պետք է լինի տեսանելի, ընթեռնելի, չջնջվող եւ պետք է դրված լինի կա՛մ արտադրատեսակի վրա, կա՛մ դրա կիրառման ցուցման մեջ: Հնարավորության դեպքում մականշվածքը պետք է դրվի առևտրային փաթեթի վրա: Մականշվածք չի դրվում, եթե արտադրատեսակը շատ փոքր չափսերի է կամ ունի հատուկ հատկանիշներ, որոնք թույլ չեն տալիս մականշվածք դնել:

Տեղեկությունները պետք է նշվեն ռելիեֆային եղանակով (դրոշմում, փորագրում, ձուլում, դրոշմահատում): Թույլատրվում է տեղեկությունները նշել պատկերագրի ձեւով, ինչպես նաեւ դժվարությամբ հեռացվող ներկով՝ անմիջապես արտադրատեսակի վրա: Տեղեկությունները պետք է լինեն դյուրընթեռնելի եւ չջնջվեն արտադրանքի պահպանման, փոխադրման, իրացման եւ ըստ նշանակության օգտագործման ժամանակ:

Արգելվում է զետեղել այնպիսի նշաններ կամ մակագրություններ, որոնք կարող են մոլորեցնել երրորդ կողմերին՝ շուկայում այդ արտադրանքի շրջանառության նշանով կատարված մականշվածքի նշանակության կամ գրաֆիկական պատկերման առնչությամբ: Արտադրատեսակի, դրա փաթեթվածքի կամ

օգտագործման ցուցման վրա կարելի է կատարել ցանկացած այլ մակնշում՝ պայմանով, որ այն բացասաբար չի ազդի մականշվածքի տեսանելիության եւ ընթեռնելիության վրա:

Մականշվածքը պետք է շարադրված լինի ռուսերենով:

Արտադրատեսակների փաթեթվածքները պետք է մակնշվեն պատկերագրերով (նշաններով եւ (կամ) տեքստով), որոնցով գրավոր ցուցումներ են տրվում արտադրատեսակների պահպանման եւ (կամ) փոխադրման համար արտադրողի կողմից սահմանված պայմանների մասին՝ նորմատիվային (շահագործման) փաստաթղթերին համապատասխան:

Սարքավորումների շահագործման ընթացքում անվտանգության ապահովման նկատմամբ պահանջները, որոնք նշված են հատուկ ցուցանակների վրա, ինչպես նաեւ նախազգուշական նշանները եւ մակագրությունները տեղադրվում են արտադրատեսակների տեսանելի մասերում:

Արտադրողը պետք է տեղեկություններն այնպես տրամադրի, որ հնարավոր լինի ընդունել համապատասխան նախազգուշական միջոցներ եւ ապահովել բոլոր վտանգավոր գործոնների նկատմամբ համապատասխան հսկողություն՝ պաշտպանական միջոցառումների ամբողջ համալիրի օգտագործմամբ:

Առողջության համար պոտենցիալ մեծ վտանգ ներկայացնող սարքավորումներ (ուլտրամանուշակագույն սարքեր եւ այլն) օգտագործողը պետք է տեղեկացվի առկա ռիսկի մասին: Արտադրատեսակների վտանգավորությունը նշվում է համապատասխան ձեւով:

Ուլտրամանուշակագույն ճառագայթման կայանքները, որոնք նախատեսված են առանց մարդկային միջամտության շահագործման համար, մակնշվում են համապատասխան նախազգուշական մակագրությամբ:

Շահագործման փաստաթղթերի «Անվտանգության վերաբերյալ պահանջներ» բաժինները ներառում են արտադրանքի անվտանգ շահագործման ապահովմանը ներկայացվող հիմնական պահանջներ, ինչպես նաեւ արտադրանքի արտադրությանը ներկայացվող հիմնական պահանջներ ըստ սանիտարական

օրենսդրության հիմնական փաստաթղթերի՝ կատարելով հղումներ այդ փաստաթղթերին: Այս բաժնում պետք է նշվի, որ արտադրանքը պետք է անվտանգ լինի այն արտադրելիս եւ կիրառելիս, որը պետք է հաստատվի սանիտարահամաճարակաբանական փորձաքննության արդյունքներով:

Հավելված 1

ՕԴԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՄԱՔՐՄԱՆ ԵՎ ԶՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈՒ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ՝ ՄՄ ԱՏԳ ԱԱ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ

Ապրանքի դասակարգումն՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի	Ապրանքի կրճատ անվանումը
2524	Ասբեստ
2530	Այլ տեղում չնշված կամ չներառված հանքային նյութեր
Խումբ 39.	
Պլաստմասսա եւ դրանից պատրաստված արտադրատեսակներ	
3917	Խողովակներ, փողրակներ, ճկափողեր եւ դրանց կցամասեր (օրինակ՝ միացումներ, արմունկներ, կցաշուրթեր)՝ պլաստմասսայից
3919	Պլաստմասսայից սալիկներ, թերթեր, ժապավեն, շերտ եւ այլ հարթ ձեւեր՝ ինքնակաշուն, գլանափաթեթներով կամ ոչ գլանափաթեթներով
3920	Պլաստմասսայից սալիկներ, թերթեր, թաղանթ եւ շերտեր կամ ժապավեններ եւ այլն՝ ոչ ծակոտկեն եւ չամրանավորված, ոչ շերտավոր, ոչ հիմնաշերտով եւ նմանատիպ ձեւով ներքին սենքերի համար նախատեսված այլ նյութերի հետ չմիացված
Խումբ 54	
Քիմիական թելեր, քիմիական մանածագործական նյութերից հարթ եւ համանման թելեր	
5407	Գործվածքներ՝ սինթետիկ համալիր թելերից՝ ներառյալ 5404 ապրանքային դիրքում նշված նյութերից պատրաստված գործվածքը
5408	Գործվածքներ՝ արհեստական համալիր թելերից՝ ներառյալ 5405 ապրանքային դիրքում նշված նյութերից պատրաստված գործվածքը

<p>Խումբ 56</p> <p>Բամբակ, թաղիք կամ նրբաթաղիք եւ չգործված կտորեղեն, հատուկ մանվածք, լարաններ, ճոպաններ, պարաններ, հաստ պարաններ եւ դրանցից պատրաստված արտադրատեսակներ</p>	
5601 21 900 0	Այլ
5602	Թաղիք կամ նրբաթաղիք՝ ներծծված կամ չներծծված, ծածկույթով կամ առանց ծածկույթի, կրկնակված կամ չկրկնակված
5603	Չգործված կտորեղեն՝ ներծծված կամ չներծծված, ծածկույթով կամ առանց ծածկույթի, կրկնակված կամ չկրկնակված
<p>Խումբ 59</p> <p>Մանածագործական նյութեր՝ ներծծված, ծածկույթով կամ կրկնակված, տեխնիկական նշանակությամբ մանածագործական արտադրատեսակներ</p>	
5903	Մանածագործական նյութեր՝ ներծծված, ծածկույթով կամ պլաստմասսաներով կրկնակված՝ բացառությամբ 5902 ապրանքային դիրքում նշված նյութերի
<p>Խումբ 68</p> <p>Արտադրատեսակներ քարից, գիպսից, ցեմենտից, ասբեստից, փայլարից կամ համանման նյութերից</p>	
6806	Խարամաբամբակ, սիլիկատային հանքաբամբակ եւ համանման հանքաբամբակներ, շերտավորված վերմիկուլիտ, փքված կավեր, փրփրած մետաղախարամ եւ համանման փքված հանքային արտադրանք, ջերմամեկուսիչ, ձայնամեկուսիչ կամ ձայնակլանիչ հանքանյութերի խառնուրդներ եւ դրանցից պատրաստված արտադրատեսակներ՝ բացառությամբ 6811 կամ 6812 ապրանքային դիրքում նշված կամ 69-րդ խմբում ընդգրկված արտադրատեսակների:
6808 00 000 0	Պանելներ, սալեր, սալիկներ, բլոկներ եւ բուսական թելերից, ծղոտից կամ տաշեղներից, մանրատաշեղից, մասնիկներից, փայտաթեփից կամ փայտանյութի այլ թափոններից պատրաստված համանման արտադրատեսակներ՝ ցեմենտով, գիպսով կամ այլ հանքային կապակցող նյութերով ագլոմերացված:
<p>Խումբ 84</p> <p>Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ եւ մեխանիկական սարքվածքներ, դրանց մասերը</p>	
8414	Պոմպեր՝ օդային կամ վակուումային, օդային կամ գազային կոմպրեսորներ եւ օդափոխիչներ, օդափոխիչ կամ օդաքաշ գլխադիր թասակներ կամ պահարաններ՝ օդափոխիչներով, քամիչներով կամ առանց քամիչների
8415	Կայանքներ՝ նախատեսված օդորակման համար, սարքավորված շարժիչային օդափոխիչով եւ սարքերով՝

	օդի ջերմաստիճանը եւ խոնավությունը չափելու համար՝ ներառյալ օդորակիչները, որոնցում խոնավությունն առանձին չի կարող կարգավորվել
8421 19 700 9	Այլ
8421 39 200	Օդի զտման եւ մաքրման համար նախատեսված այլ սարքավորումներ ու սարքվածքներ
Խումբ 90 Գործիքներ եւ ապարատներ՝ օպտիկական, լուսանկարչական, կինեմատոգրաֆիական, չափիչ, հսկիչ, ճշգրիտ, բժշկական կամ վիրաբուժական, դրանց մասերն ու պարագաները	
9018 20 000 0	Ուլտրամանուշակագույն կամ ենթակարմիր ճառագայթումն օգտագործելու վրա հիմնված ապարատուրա

Հսկողության ենթակա արտադրանքին (ապրանքներին) եւ դրա անվտանգության ցուցանիշներին ներկայացվող հիմնական պահանջները

Թիվ h/h	Արտադրանքի (ապրանքի) անվանումը	Սանիտարահամաճարակաբանական պահանջները		Ծանոթագրու- թյուններ
		ցուցանիշ	թույլատրելի մակարդակներ	
17. Օդի նախապատրաստման, մաքրման եւ զտման համար սարքավորումներն ու նյութերը				
17.1	Օդի նախապատրաստման, մաքրման եւ զտման համար սարքավորումները	Օդի նախապատրաստման, մաքրման եւ զտման համար սարքավորումների միջոցով սենք մատուցվող օդի նկատմամբ ներկայացվող հիգիենիկ պահանջները		
		Ա) Օդի նախապատրաստման, մաքրման եւ զտման համար սարքավորումների միջոցով աշխատանքային գոտու սենք	չպետք է գերազանցեն աշխատանքային գոտու օդում դրանց համար սահմանված ՍԹԽ-ի կամ ՆԿԱՄ-ի 30%-ը:	Վնասակար նյութերի ՍԹԽ-ի եւ ՆԿԱՄ-ի ցանկը աշխատանքային գոտու օդում

	մատուցվող օդում վնասակար նյութերի խտությունները		
	Բ) Օդի նախապատրաստման, մաքրման եւ զտման համար սարքավորումների միջոցով բնակելի եւ հասարակական շենքերի սենքեր մատուցվող օդում վնասակար նյութերի խտությունները	չպետք է գերազանցեն դրանց միջին օրական ՍԹՄ-ն, իսկ միջին օրական ՍԹՄ-ի բացակայության դեպքում՝ մթնոլորտային օդում տվյալ նյութերի միանվագ առավելագույն ՍԹՄ-ն կամ ՆԿԱՄ-ը:	Բնակելի եւ հասարակական շենքերի սենքերի օդային միջավայրն աղտոտող առավել հիգիենիկ կարելություն ունեցող նյութերի ցանկը
	Աղմուկ		
	Ա) Օդի նախապատրաստման, մաքրման եւ զտման ինժեներատեխնիկական համակարգերի առաջացրած աղմուկը (հաշվի առնելով ձայնամեկուսիչ եւ ձայնակլանիչ բոլոր անհրաժեշտ միջոցների օգտագործումը), ձայնի մակարդակները՝		
	- աշխատատեղերում	պետք է աշխատատեղերի համար նախատեսված աղմուկի ՍԹՄ-ից (սահմանային թույլատրելի մակարդակ) առնվազն 5 դԲԱ-ով քիչ լինեն, սակայն չպետք է գերազանցեն 75	II գլխի 7-րդ բաժնի 7.1 հավելվածի 1.1 աղյուսակին համապատասխան

			դԲԱ-ն:	
		-բնակելի եւ հասարակական շենքերի սենքերում	պետք է բնակելի եւ հասարակական շենքերի սենքերում աղմուկի թույլատրելի մակարդակների արժեքներից առնվազն 5 դԲԱ-ով քիչ լինեն (կախված սենքի նշանակությունից)	II գլխի 7-րդ բաժնի 7.1 հավելվածի 1.3 աղյուսակին համապատասխան
		Բ) Կենցաղում օգտագործման (շուրջօրյա) համար նախատեսված օդի նախապատրաստման, մաքրման եւ զտման համար արտադրատեսակների առաջացրած աղմուկը՝ - ձայնի մակարդակներ եւ ձայնի համարժեք մակարդակներ - ձայնի առավելագույն մակարդակներ	30 դԲԱ-ից ոչ ավելի 40 դԲԱ-ից ոչ ավելի	պետք է համապատասխանեն ժողովրդական սպառման ապրանքների տվյալ խմբի նկատմամբ ներկայացվող պահանջներին՝ հաշվի առնելով շահագործման տեւողությունը (II գլխի 7-րդ բաժնի 7.1 հավելվածի 1.4 աղյուսակին համապատասխան)
		Թրթռումը		
		Օդի նախապատրաստման, մաքրման եւ զտման հինժեներատեխնիկական համակարգերի առաջացրած թրթռումը (հաշվի առնելով թրթռամեկուսացման եւ թրթռակլանման բոլոր անհրաժեշտ միջոցների օգտագործումը)՝		

		- աշխատատեղերում, որոնց համար դրանք նախատեսված են, համարժեք ճշգրտված արժեքներ (կամ դրանց լոգարիթմական մակարդակները)		
		ա) ձեռնարկությունների արտադրական սենքերի մշտական աշխատատեղերում - թրթռման արագացման - թրթռման արագության	0,1 մ/վ ² -ից (100 դՔ) ոչ ավելի 0,2 x10 ⁻² մ/վ-ից (92 դՔ) ոչ ավելի	
		բ) պահեստների, ճաշարանների, կենցաղային, հերթապահ եւ այլ արտադրական սենքերի աշխատատեղերում, որտեղ չկան թրթռում առաջացնող մեքենաներ - թրթռման արագացման - թրթռման արագության	0,04 մ/վ ² -ից (92 դՔ) ոչ ավելի 0,079 x10 ⁻² մ/վ-ից (84 դՔ) ոչ ավելի	
		գ) գործարանների վարչական սենքերի, կոնստրուկտորական բյուրոների, լաբորատորիաների, ուսումնական հաստատություննե- րի, հաշվողական կենտրոնների, բուժկետերի, գրասենյակային սենքերի,		

		<p>աշխատասենյակների եւ մտավոր աշխատանքով զբաղվող աշխատակիցների համար նախատեսված այլ սենքերի աշխատատեղերում</p> <ul style="list-style-type: none"> - թրթռման արագացման - թրթռման արագության 	<p>0,014 մ/վ²-ից (83 դՔ) ոչ ավելի 0,28 x10⁻³ մ/վ-ից (75 դՔ) ոչ ավելի</p>	
		<p>-բնակելի տարածքներում, հիվանդասենյակներում եւ առողջարաններում, որոնց համար դրանք նախատեսված են, համարժեք ճշգրտված արժեքները (կամ դրանց լոգարիթմական մակարդակները)</p> <ul style="list-style-type: none"> - թրթռման արագացման - թրթռման արագության 	<p>4,0 x10⁻³ մ/վ²-ից (72 դՔ) ոչ ավելի 1,1 x10⁻⁴ մ/վ-ից (67 դՔ) ոչ ավելի</p>	
		<p>- վարչակառավարչական եւ հասարակական շենքերի սենքերում, որոնց համար դրանք նախատեսված են, համարժեք ճշգրտված արժեքները (կամ դրանց լոգարիթմական մակարդակները)</p> <ul style="list-style-type: none"> - թրթռման արագացման 	<p>10 x10⁻³ մ/վ²-ից (80 դՔ) ոչ ավելի 0,28 x10⁻³ մ/վ-ից (75 դՔ) ոչ ավելի</p>	

		- թրթռման արագության		
		Բ) Թրթռումը, որն ստեղծվում է օդի նախապատրաստման, մաքրման եւ զտման համար արտադրատեսակներով, որոնք նախատեսված են կենցաղում օգտագործման (շուրջօրյա) համար, ճշգրտված մակարդակը՝ - թրթռման արագացման - թրթռման արագության	70 դԲ-ից ոչ ավելի 62 դԲ-ից ոչ ավելի	
		Ինֆրաձայն		
		Ա) Օդի նախապատրաստման, մաքրման եւ զտման ինժեներատեխնիկական համակարգերի առաջացրած ինֆրաձայնը (հաշվի առնելով ձայնամեկուսիչ եւ ձայնակլանիչ բոլոր անհրաժեշտ միջոցների օգտագործումը), մեկ երրորդ օկտավային		

		<p>շերտերի միջին երկրաչափական հաճախականություն ներում ձայնային ճնշման մակարդակը՝</p> <ul style="list-style-type: none"> - տարբեր աստիճանի ծանրության աշխատանքների արտադրական պայմաններում՝ 2 Հց 4 Հց 8 Հց 16 Հց <p>ձայնային ճնշման ընդհանուր մակարդակը</p>	<p>100 դԲ-ից ոչ ավելի 95 դԲ-ից ոչ ավելի 90 դԲ-ից ոչ ավելի 85 դԲ-ից ոչ ավելի 100 դԲ գծային մակարդակից ոչ ավելի</p>	
		<ul style="list-style-type: none"> - տարբեր աստիճանների մտավոր եւ հուզական լարվածություն պահանջող աշխատանքների ժամանակ արտադրական պայմաններում՝ 2 Հց 4 Հց 8 Հց 16 Հց <p>ձայնային ճնշման ընդհանուր մակարդակը</p>	<p>95 դԲ-ից ոչ ավելի 90 դԲ-ից ոչ ավելի 85 դԲ-ից ոչ ավելի 80 դԲ-ից ոչ ավելի 95 դԲ գծային մակարդակից ոչ ավելի</p>	
		<ul style="list-style-type: none"> - բնակելի կառուցապատման տարածքում 2 Հց 4 Հց 8 Հց 16 Հց <p>ձայնային ճնշման ընդհանուր մակարդակը</p>	<p>90 դԲ-ից ոչ ավելի 85 դԲ-ից ոչ ավելի 80 դԲ-ից ոչ ավելի 75 դԲ-ից ոչ ավելի 90 դԲ գծային մակարդակից ոչ ավելի</p>	

	<p>- բնակելի եւ հասարակական շենքերում՝</p> <p>2 Հց 4 Հց 8 Հց 16 Հց</p> <p>ձայնային ճնշման ընդհանուր մակարդակը</p>	<p>75 դԲ-ից ոչ ավելի 70 դԲ-ից ոչ ավելի 65 դԲ-ից ոչ ավելի 60 դԲ-ից ոչ ավելի</p> <p>75 դԲ գծային մակարդակից ոչ ավելի</p>	
	<p>Բ) Կենցաղում օգտագործման համար նախատեսված օդի նախապատրաստման, մաքրման եւ զտման համար արտադրատեսակների առաջացրած ինֆրաձայնը, մեկ երրորդ օկտավային շերտերի միջին երկրաչափական հաճախականություններում ձայնային ճնշման մակարդակը՝</p>		
	<p>2 Հց 4 Հց 8 Հց 16 Հց</p> <p>ձայնային ճնշման ընդհանուր մակարդակը</p>	<p>75 դԲ-ից ոչ ավելի 70 դԲ-ից ոչ ավելի 65 դԲ-ից ոչ ավելի 60 դԲ-ից ոչ ավելի</p> <p>75 դԲ գծային մակարդակից ոչ ավելի</p>	
	<p>Ուլտրաձայն</p>		
	<p>Ա) Օդի նախապատրաստման, մաքրման եւ զտման այն ինժեներատեխնիկական համակարգերի առաջացրած ուլտրաձայնը (հաշվի առնելով ձայնամեկուսացման</p>		

		<p>եւ ձայնակլանման բոլոր անհրաժեշտ միջոցների օգտագործումը), որոնք նախատեսված են արտադրական պայմաններում օգտագործելու համար, ձայնային ճնշման մակարդակները մեկ երրորդ օկտավային շերտերի միջին երկրաչափական հաճախականություններում, կ<g`</p> <p>12,5 16,0 20,0 25,0 31,5 - 100,0</p>	<p>80 դԲ-ից ոչ ավելի 90 դԲ-ից ոչ ավելի 100 դԲ-ից ոչ ավելի 105 դԲ-ից ոչ ավելի 110 դԲ-ից ոչ ավելի</p>	
		<p>Բ) Օդի նախապատրաստման, մաքրման եւ զտման այն ինժեներատեխնիկական համակարգերի առաջացրած ուլտրաձայնը, որոնք նախատեսված են կենցաղում օգտագործելու համար (օրինակ՝ ուլտրաձայնային փոշիացման գործառույթով համակարգերը), ձայնային ճնշման մակարդակները մեկ երրորդ օկտավային շերտերի միջին երկրաչափական հաճախականություն</p>		

	<p>ներում, կՀց 12,5 16,0 20,0 25,0 31,5 - 100,0</p>	<p>70 դԲ-ից ոչ ավելի 80 դԲ-ից ոչ ավելի 90 դԲ-ից ոչ ավելի 95 դԲ-ից ոչ ավելի 100 դԲ-ից ոչ ավելի</p>	
	<p>Էլեկտրամագնիսական դաշտեր</p>		
	<p>Ա) Օդի նախապատրաստման, մաքրման եւ զտման այն ինժեներատեխնիկական համակարգերի առաջացրած էլեկտրամագնիսական դաշտերը, որոնք նախատեսված են արտադրական պայմաններում օգտագործելու համար՝</p>		
	<p>Էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը</p>	<p>20 կՎ/մ-ից ոչ ավելի</p>	<p>Արտադրական հսկողության պայմաններում</p>
	<p>50 Հց հաճախականությամբ էլեկտրական դաշտի լարվածությունը</p>	<p>5 կՎ/մ-ից ոչ ավելի</p>	<p>"-"</p>
	<p>50 Հց հաճախականությամբ մագնիսական դաշտի լարվածությունը (ինդուկցիա)</p>	<p>8 Ա/մ-ից (10 միկրո Տլ) ոչ ավելի</p>	<p>"-"</p>

	<p>Էլեկտրական դաշտի լարվածությունը հաճախականությունների ընդգրկույթում, $U < g' \geq 0,01 - 0,03$ $\geq 0,03 - 3,0$ $\geq 3,0 - 30$ $\geq 30 - 50$ $\geq 50 - 300$</p>	<p>0,5 կՎ/մ-ից ոչ ավելի 0,5 կՎ/մ-ից ոչ ավելի 0,3 կՎ/մ-ից ոչ ավելի 0,08 կՎ/մ-ից ոչ ավելի 0,08 կՎ/մ-ից ոչ ավելի</p>	
	<p>Մագնիսական դաշտի լարվածությունը հաճախականությունների ընդգրկույթում, $U < g' \geq 0,01 - 0,03$ $\geq 0,03 - 3,0$ $\geq 30 - 50$</p>	<p>50 Ա/մ-ից ոչ ավելի 50 Ա/մ-ից ոչ ավելի 3 Ա/մ-ից ոչ ավելի</p>	
	<p>Բ) Օդի նախապատրաստման, մաքրման եւ զտման համար կենցաղում (շուրջօրյա) օգտագործման համար արտադրատեսակների առաջացրած էլեկտրամագնիսական դաշտերը՝</p>		
	<p>Էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը</p>	<p>15 կՎ/մ-ից ոչ ավելի</p>	
	<p>50 Հg հաճախականությամբ էլեկտրական դաշտի լարվածությունը</p>	<p>0,5 կՎ/մ-ից ոչ ավելի</p>	
	<p>50 Հg հաճախականությամբ մագնիսական դաշտի</p>		

		<p>լարվածությունը (ինդուկցիա)</p> <ul style="list-style-type: none"> - բնակելի տարածքներում, մանկական, նախադպրոցական, դպրոցական, հանրակրթական եւ բժշկական հաստատություններում օգտագործման համար նախատեսված սարքավորումների համար 	<p>4 Ա/մ-ից (5 միկրո ՏՍ) ոչ ավելի</p>	
		<ul style="list-style-type: none"> - բնակելի շենքերի ոչ բնակելի սենքերում, հասարակական, վարչական եւ արտադրական շենքերում, շինարարության համար հատկացված տարածքում 	<p>8 Ա/մ-ից (10 միկրո ՏՍ) ոչ ավելի</p>	
		<p>Գ) Օդի նախապատրաստման, մաքրման եւ զտման համար սարքավորումների ցուցասարքերի առաջացրած էլեկտրամագնիսական դաշտերը՝</p> <ul style="list-style-type: none"> - էլեկտրական դաշտի լարվածությունը հաճախականությունների ընդգրկույթում <ul style="list-style-type: none"> 5 Հց-2 կՀց 2 կՀց - 400 կՀց - մագնիսական հոսքի խտությունը 	<p>25 Վ/մ-ից ոչ ավելի 2,5 Վ/մ-ից ոչ ավելի</p>	

		<p>հաճախականությունների ընդգրկույթում 5 Հց - 2 կՀց 2 կՀց – 400 կՀց</p>	<p>250 նՏլ-ից ոչ ավելի 25 նՏլ-ից ոչ ավելի</p>	
		<p>Դ) Ուլտրաձայնի, ուլտրամանուշակագույն եւ ենթակարմիր ճառագայթման, ինչպես նաեւ օդափոնավորիչների աղբյուր հանդիսացող արտադրատեսակների առաջացրած ռադիոհաճախականության ընդգրկույթի էլեկտրամագնիսական դաշտերը - էլեկտրական դաշտի լարվածությունը հաճախականությունների ընդգրկույթում, ՄՀց՝ >= 0,03 - 0,3 >= 0,3 - 3,0 >= 3,0 - 30 >= 30 - 300 - Էներգիայի հոսքի խտությունը 0,3 - 300 ԳՀց ընդգրկույթում</p>	<p>25 Վ/մ-ից ոչ ավելի 15 Վ/մ-ից ոչ ավելի 10 Վ/մ-ից ոչ ավելի 3 Վ/մ-ից ոչ ավելի 10 մկՎտ/մ²-ից ոչ ավելի</p>	
		Ուլտրամանուշակա-	Կայանքի	

	<p>գույն ճառագայթում՝ ներհոս օդափոխության համակարգերում ներդրվող մանրէասպան ուլտրամանուշակագույն սարքերի համար</p>	<p>սահմաններից դուրս ուլտրամանուշակագույն ճառագայթման թափանցման բացակայություն (A, B, C ուլտրամանուշակագույն ճառագայթների բացակայություն)</p>	
	<p>Ենթակարմիր ճառագայթում</p>		
	<p>Ա) Արտադրական պայմաններում առաստաղի (պատի) օդի տաքացման աղբյուրների առաջացրած ենթակարմիր) ճառագայթումը (Iia-Ii6 կատեգորիայի աշխատանքներ կատարելիս), ենթակարմիր) ճառագայթման ինտենսիվությունը - կանգնած մարդու գլխի մակարդակով՝ կախված սենքում օդի ջերմաստիճանից, °C՝</p> <p>11 12 13 14 15 16</p> <p>- մարդու իրանի մակարդակով՝ կախված սենքում օդի ջերմաստիճանից, °C՝</p> <p>11 12 13</p>	<p>60 Վտ/մ²-ից ոչ ավելի 60 Վտ/մ²-ից ոչ ավելի 60 Վտ/մ²-ից ոչ ավելի 45 Վտ/մ²-ից ոչ ավելի 30 Վտ/մ²-ից ոչ ավելի 25 Վտ/մ²-ից ոչ ավելի</p> <p>150 Վտ/մ²-ից ոչ ավելի 125 Վտ/մ²-ից ոչ ավելի 100 Վտ/մ²-ից ոչ ավելի</p>	<p>Նշված թույլատրելի մակարդակները գերազանցելիս պահանջվում է ավելացնել կախոցի (հեռավորության) բարձրությունը ճառագայթման աղբյուրից մինչև մարդու երկարաժամկետ գտնվելու վայրը՝ այնպիսի հաշվարկով, որ ենթակարմիր ճառագայթման առաջացող մակարդակները համապատասխանեն թույլատրելի մեծություններին:</p> <p>Արտադրական մակարդակներում սարքավորման կիրառումը հնարավոր է գլխի պաշտպանու-</p>

	<p>14 15 16</p>	<p>75 Վտ/մ²-ից ոչ ավելի 50 Վտ/մ²-ից ոչ ավելի 25 Վտ/մ²-ից ոչ ավելի</p>	<p>թյան աշխատող միջոցների օգտագործմամբ եւ ազդեցության ժամանակը կարգավորելով ըստ աղյուսակի: 9.2.2 II գլխի 7-րդ բաժնի 7.1 հավելված</p>
	<p>Բ) Կենցաղում օգտագործման համար նախատեսված առաստաղի (պատի) օդի տաքացման աղբյուրների առաջացրած ենթակարմիր ճառագայթումը, ենթակարմիր ճառագայթման ինտենսիվությունը - կանգնած մարդու գլխի մակարդակով - մարդու իրանի մակարդակով</p>	<p>60 Վտ/մ²-ից ոչ ավելի 150 Վտ/մ²-ից ոչ ավելի</p>	<p>թույլատրելի արժեքների սահմաններում ենթակարմիր ճառագայթման ինտենսիվությունը կարգավորվում է օգտագործողի ջերմազգացողությամբ</p>
	<p>Կիրառման համար նախատեսված ինժեներատեխնիկական համակարգերի եւ օդի նախապատրաստման սարքավորումների առաջացրած միկրոկլիմայի հարաչափերը, (օդի ջերմաստիճանը, հարաբերական խոնավությունը, օդի շարժման արագությունը եւ</p>	<p>պետք է կարգավորվեն միկրոկլիմայի հարաչափերի թույլատրելի արժեքների սահմաններում, որոնք սահմանվում են՝</p>	<p>համաձայն՝ տե՛ս Միասնական պահանջների II գլխի 7-րդ բաժնի, 7.1 հավելվածի 9.1 կետը</p>

		<p>ջերմային ճառագայթումը՝</p>	<p>այն աշխատատեղերի համար, որոնց համար դրանք նախատեսված են (տարվա եղանակից, իրականացվող աշխատանքների կատեգորիայից, էներգասպառումների մակարդակից, ջերմային ճառագայթման աղբյուրների առկայությունից եւ ինտենսիվությունից կախված)</p>	
		<p>-բնակելի սենքերում</p>	<p>բնակելի բնակարանների տարբեր նշանակության սենքերի համար</p>	<p>տե՛ս Միասնական պահանջների II գլխի 7-րդ բաժնի, 7.1 հավելվածի 9.3 կետը</p>
		<p>Իոնների պարունակությունն օդում, իոնների թիվը 1սմ³ օդում՝</p> <ul style="list-style-type: none"> - բացասական բեւեռայնության, p⁻ - դրական բեւեռայնության, p⁺ - միաբեւեռայնության գործակիցը, Y 	<p>6 x 10² - 5 x 10⁴ սահմաններում</p> <p>4 x 10² - 5 x 10⁴ սահմաններում</p> <p>0,4 < Y < 1,0</p>	
		<p>Օգտագործողի հպման համար հասանելի մակերեւույթների ջերմաստիճանը</p>	<p>43°C-ից ոչ ավելի (մակերեւույթի ավելի բարձր ջերմաստիճանի դեպքում պահանջվում են հպման տեղողությունը սահմանափակելու անհրաժեշտության</p>	

			մասին նախազգուշական գրություններ)
17.2	Օդի նախապատրաստման, մաքրման եւ գտման համար նյութերը	Սանիտարա-հիգիենիկ ցուցանիշներ Հոտաչափություն (արտադրատեսակների նմուշների նյութերի հոտը)	2-x բալից ոչ ավելի
		Վնասակար նյութերի միգրացիան օդային միջավայր	ՍԹԽ մ.օ. մգ/մ ³
		Բնական մանրաթելեր՝ ֆորմալդեհիդ	0,003 մգ/մ ³ -ից ոչ ավելի <*>
		Արհեստական մանրաթելեր (վիսկոզա, ացետատներ)՝ ծծմբաածխածին ացետալդեհիդ	0,005 մգ/մ ³ -ից ոչ ավելի 0,01 մգ/մ ³ -ից ոչ ավելի
		Քիմիական մանրաթելեր՝	
		Պոլիէթերային (ՊԵ, լավսան)՝ - էթիլենգլիկոլ - դիմեթիլտերեֆտալատ	1,0 մգ/մ ³ -ից ոչ ավելի 0,01 մգ/մ ³ -ից ոչ ավելի
		Պոլիամիդային (ՊԱ, կապրոն, նեյլոն)՝ - կապրոլակտամ - հեքսամեթիլենդիամին	0,06 մգ/մ ³ -ից ոչ ավելի 0,001 մգ/մ ³ -ից ոչ ավելի
	Պոլիակրիլոնիտրիլային (ՊԱՆ, նիտրոն)՝ - ակրիլոնիտրիլ - վինիլացետատ	0,03 մգ/մ ³ -ից ոչ ավելի 0,15 մգ/մ ³ -ից ոչ ավելի	
	Պոլիվինիլբլորիդային (ՊՎԲ, քլորին)՝	0,1 մգ/մ ³ -ից ոչ ավելի	

	<ul style="list-style-type: none"> - բենզոլ - տոլուոլ - երկօկտիլֆտալատ 	<p>0,6 մգ/մ³-ից ոչ ավելի</p> <p>0,02 մգ/մ³-ից ոչ ավելի</p>
	Պոլիվինիլ սպիրտային (ՊՎՍ, վինոլ)՝ - վինիլացետատ	0,15 մգ/մ ³ -ից ոչ ավելի
	Պոլիոլեֆինային (պոլիպրոպիլենային, պոլիէթիլենային)՝ - ֆորմալդեհիդ - ացետալդեհիդ	<p>0,003 մգ/մ³-ից ոչ ավելի <*></p> <p>0,01 մգ/մ³-ից ոչ ավելի</p>
	Պոլիուրետային (սպանդեկս)՝ - էթիլենգլիկոլ - ացետալդեհիդ	<p>1,0 մգ/մ³-ից ոչ ավելի</p> <p>0,01 մգ/մ³-ից ոչ ավելի</p>
	Պոլիէթերներ՝ Պոլիէթիլենօքսիդ - ֆորմալդեհիդ - ացետալդեհիդ Պոլիպրոպիլենօքսիդ - մեթիլացետատ - ացետոն - ֆորմալդեհիդ - ացետալդեհիդ	<p>0,003 մգ/մ³-ից ոչ ավելի <*></p> <p>0,01 մգ/մ³-ից ոչ ավելի</p> <p>0,07 մգ/մ³-ից ոչ ավելի</p> <p>0,35 մգ/մ³-ից ոչ ավելի</p> <p>0,003 մգ/մ³-ից ոչ ավելի <*></p> <p>0,01 մգ/մ³-ից ոչ ավելի</p>
	Պոլիտետրամեթիլենօքսիդ - պրոպիլային սպիրտ - ացետալդեհիդ - ֆորմալդեհիդ	<p>0,3 մգ/մ³-ից ոչ ավելի</p> <p>0,01 մգ/մ³-ից ոչ ավելի</p> <p>0,003 մգ/մ³-ից ոչ ավելի <*></p>
	Պոլիֆենիլենօքսիդ - ֆենոլ - ֆորմալդեհիդ	<p>0,003 մգ/մ³-ից ոչ ավելի</p> <p>0,003 մգ/մ³-ից ոչ ավելի <*></p>

		Պոլիկարբոնատ - ֆենոլ - երկֆենիլոլպրոպան - քլորբենզոլ	0,003 մգ/մ ³ –ից ոչ ավելի 0,04 մգ/մ ³ –ից ոչ ավելի 0,1 մգ/մ ³ –ից ոչ ավելի	
		Պոլիսուլֆոն - երկֆենիլոլպրոպան - ֆենոլ - բենզոլ	0,04 մգ/մ ³ -ից ոչ ավելի 0,003 մգ/մ ³ -ից ոչ ավելի 0,1 մգ/մ ³ -ից ոչ ավելի	
<*> Նորմատիվը նշված է՝ առանց հաշվի առնելու մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածությունը:				
		Էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը (բնական, արհեստական եւ սինթետիկ թելերից գործված եւ չգործված կտորեղենի համար)	15 կՎ/մ–ից ոչ ավելի	
		Ռադիացիոն ցուցանիշները (բնական ձայնակլանիչ եւ ձայնամեկուսիչ նյութերի օգտագործմամբ արտադրատեսակների համար) Բնական ռադիոնուկլիդների տեսակարար արդյունավետ ակտիվությունը, ԱէՖ	II գլխի 11–րդ բաժնի հավելվածին համապատասխան	
17.2.1	այդ թվում՝ բուժկանխարգելիչ հիմնարկների համար նախատեսված	նյութերի եւ քիմիական արտադրանքի թունաբանական գնահատումը - Սուր		Ազդեցության

հատուկ օդորակիչների համար քարթրիջներ	թունավորում՝ ինհալացիայի ժամանակ	կլինիկական նշանների բացակայությունը՝ արտադրանքի փոշիացման դեպքում, էքսպոզիցիայից հետո կենդանիների վիճակի գործառական ցուցանիշների փոփոխությունների բացակայությունը	նշանների առկայության դեպքում թույլատրվում է միայն արտադրանքի հերմետիկ տեղակայումը
	- Մաշկի վրա գրգռող ազդեցությունը (մեկանգամյա, կրկնվող)	0 բալ Գրգռվածության նշանների բացակայությունը	Ազդեցության նշանների առկայության դեպքում թույլատրվում է միայն արտադրանքի հերմետիկ տեղակայումը
	- Արտադրանքի գրգռող ազդեցությունը լրծաթաղանթի եւ վերին շնչառական ուղիների վրա՝ ինհալացիայի ժամանակ	0 բալ Գրգռվածության նշանների բացակայությունը	"-
	- Մաշկի միջոցով ներծծման ազդեցությունը (մեկանգամյա, կրկնվող)	Բացակայությունը	"-
	- Ջգայունացնող ազդեցությունը	0 բալ Ջգայունացնող ազդեցության նշանների բացակայությունը	"-

Հավելված 17.1

Սանիտարահամաճարակաբանական վերահսկողությանը (հսկողությանը) ենթակա ապրանքներին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ միասնական պահանջների II գլխի 17-րդ բաժնի

Բնակելի եւ հասարակական շենքերի սենքերի օդային միջավայրն աղտոտող՝ առավել հիգիենիկ կարելություն ունեցող նյութերի ցանկը

Թիվ h/h	Նյութի անվանումը	Բանաձեւը	Վնասակար նյութերի ՍԹԽ-ների մեծությունները (միջին օրական կամ միանվագ առավելագույն*), մգ/մ ³	Վտանգավորության դասը
1	Ազոտ (II) օքսիդ	NO ₂	0,06	2
2	Ամոնիակ	NH ₃	0,04	4
3	Ացետալդեհիդ	C ₂ H ₄ O	0,01 <*>	3
4	Բենզոլ	C ₆ H ₆	0,1	2
5	Բութիլացետատ	C ₆ H ₁₂ O ₂	0,1 <*>	4
6	Երկմեթիլամին	C ₂ H ₇ N	0,0025	2
7	1,2-դիքլորէթան	C ₂ H ₄ Cl ₂	1,0	2
8	Քսիլոլ	C ₈ H ₁₀	0,2 <*>	3
9	Օզոն	O ₂	0,03	1
10	Սնդիկ	Hg	0,0003	1
11	Կապար եւ դրա անօրգանական միացությունները (կապարի վերահաշվարկով)	Pb	0,0003	1
12	Ծծմբաջրածին	H ₂ S	0,008 <*>	2
13	Ստիրոլ	C ₈ H ₈	0,002	2
14	Տոլուոլ	C ₇ H ₈	0,6 <*>	3
15	Ածխածնի օքսիդ	CO	3,0	4
16	Ֆենոլ	C ₆ H ₆ O	0,003	2
17	Ֆորմալդեհիդ	CH ₂ O	0,003	2
18	Երկմեթիլֆտալատ	C ₁₀ H ₁₀ O ₄	0,007	2
19	Էթիլացետատ	C ₄ H ₈ O ₂	0,1 <*>	4
20	Էթիլբենզոլ	C ₈ H ₁₀	0,02 <*>	3

Բաժին 18. Բժշկական նշանակության եւ բժշկական տեխնիկայի արտադրատեսակներին ներկայացվող պահանջներ

1. ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՈԼՈՐՏԸ

Սույն փաստաթուղթն ընդունվում է քաղաքացիների կյանքի եւ առողջության, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքի, պետական կամ մունիցիպալ գույքի պաշտպանության, շրջակա միջավայրի պահպանության եւ գնորդներին մոլորության մեջ գցող գործողությունները կանխելու նպատակներով:

Բժշկական նշանակության եւ բժշկական տեխնիկայի արտադրատեսակների (այսուհետ՝ ԲՆԱ եւ ԲՏԱ) սանիտարահամաճարակաբանական գնահատումն իրականացվում է արտադրատեսակների անվտանգությունը հաստատելու նպատակներով:

Սույն փաստաթղթի օբյեկտների շարքին դասվող արտադրանքի ցանկը ներառում է բժշկական նշանակության եւ բժշկական տեխնիկայի արտադրատեսակներ, այդ թվում՝

ավտոմատացման, բժշկական տեղեկատվության մշակման ծրագրատեխնիկական համակարգեր, այդ թվում՝

ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐ

– Վիրակապման միջոցներ, վիրակարման եւ օժանդակ նյութեր (վիրակապեր, ժապավեններ, բինտեր, սպեղանիներ, հիգիենիկ անձեռոցիկներ. բամբակ՝ բժշկական, խոնավածուծ, վիրաբուժական, հիգիենիկ, աչքի, մանրէազերծված ու չմանրէազերծված. գիպսային կապեր (բինտեր). հակաայրվաճքային վիրակապեր, հեմոստատիկ, ներծծվող եւ այլ բամբակաթանգիֆային միջոցներ, ներառյալ անձեռոցիկները, բինտերը, վիրակապման փաթեթները. կաշուն սպեղանիները, վնասված մաշկային ծածկույթների եւ լորձաթաղանթների հետ շփման համար

նախատեսված այլ միջոցներ. վիրաբուժական թելերը. սոսինձները, սորբենտները, հեմոստատիկ փոշիները, ուլտրաձայնային հետազոտության համար դոնդողանյութերը (գելերը)) (ՄՄ ԱՏԳ ԱԱ 3005, 3005 90 100 0, 3005 90 310 0, 3005 90 500 0, 3006 10, 3006 70 000 0, 5601 21, 5601 21 100 0 ծածկագրեր),

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)

– Արյան, արյան հիմքով դեղամիջոցների, ներանոթային ներարկման համար նախատեսված նյութերի հետ առնչվող արտադրատեսակներ (սարքվածքներ՝ էքսֆուզիոն, ինֆուզիոն եւ տրանսֆուզիոն, միանվագ օգտագործման ներարկիչներ, ներանոթային ձողախողովակներ (կաթետերներ), բժշկական խողովակներ, արյունով լցված անոթները խցանափակելու համար խցաններ եւ այլն. արյան, արյան հիմքով դեղամիջոցների, արյան փոխարինիչների եւ ինֆուզիոն լուծույթների համար բեռնարկղեր. մանրաթելեր, թաղանթներ, սորբենտներ օրգանիզմի համակարգերի եւ օրգանների ֆունկցիաների փոխարինման համար նախատեսված ապարատների ու սարքվածքների համար՝ արյան արհեստական շրջանառության ապարատներ, արհեստական երիկամներ հեմոսորբցիայի համար. գլխավոր մալուխային գծերի մագիստրալների լրակազմեր եւ ապարատների ֆունկցիոնալ տարրեր) (ՄՄ ԱՏԳ ԱԱ 4001 10 000 0, 4002 11 000 0, 9018 31, 9018 31 100, 9018 31 100 1, 9018 31 900 1, 9018 90 500 ծածկագրեր),

– Բժշկական գործիքներ, սարքվածքներ, ապարատներ (ձողախողովակներ (կաթետերներ), զոնդեր, վիրափողակներ, բժշկական զննածողերի տարբեր տեսակներ, պոլիմերային սպառման նյութեր եւ ասպիրացիայի (շնչանցում), դրենաժավորման եւ էնտերալ սնուցման համար նախատեսված սարքերի համար լրացուցիչ նյութեր. ներդիտակների մասեր, տվիչներ, էլեկտրոդներ եւ մաշկի կամ լորձաթաղանթի հետ շփման մեջ մտնող այլ սարքվածքներ, պոլիմերային նյութերից գինեկոլոգիական գործիքներ՝ հայելիներ եւ այլն. ներշնչակներ (ինհալատորներ), շնչաշափերի (սպիրոմետր) համար ծայրոցներ եւ այլն. պատյաններ, ձայնահաղորդիչ փողակներ, լսողական ապարատների համար ականջի ներդրուկներ, «Կլինիտրոն» տեսակի հակաայրվածքային մահճակալների համար

միկրոոլորտներ) (ՄՄ ԱՏԳ ԱԱ 3006 91 000 0, 9021, 4818 90 100 0 ծածկագրեր),

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)

- Հիվանդանոցային սպիտակեղեն, բժշկական անձնակազմի համար արտահագուստ, բժշկական նշանակության արտադրատեսակների համար նյութեր (չգործված կտորեղենից միանվագ օգտագործման բժշկական արտադրատեսակներ՝ վիրահատական բլոկի սպիտակեղեն եւ հիվանդների խնամքի համար նախատեսված արտադրատեսակներ (սավաններ, սրբիչներ եւ այլն), հագուստ բուժանձնակազմի համար, չգործված կտորեղեն բժշկական նշանակության միանվագ օգտագործման արտադրատեսակների պատրաստման համար՝ տոգորանյութերով եւ հավելանյութերով կամ առանց դրանց, բուժական սպիտակեղեն, սեղմումային արտադրատեսակներ, էլաստիկ բինտեր, գուլպաներ, կիսագուլպաներ, մինչեւ ծնկները հասնող գուլպաներ, անդրավարտիքներ, կալանդներ եւ նույնանման այլ արտադրատեսակներ, ռետինե խառնուրդներ, ռետինե եւ լատեքսային նյութերի ու արտադրատեսակների պատրաստման համար հումք, տակդիր մոմլաթներ, ռենտգեն ճառագայթներից պաշտպանող նյութեր եւ արտադրատեսակներ՝ գոգնոցներ, լանջապանակներ, ձեռնոցներ, բախիլներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրեր՝ 4001 10 000 0, 4002 11 000 0, 4014, 4015, 5603-ից, 6107, 6108-ից, 6115-ից, 6210-ից, 6212-ից, 6302-ից, 6307-ից, 9021-ից)

- Սանիտարահիգիենիկ արտադրատեսակներ, հիվանդների խնամքի համար նախատեսված պարագաներ (տակդիրներ, տակդիրներ մեծահասակների համար. վիրահատական ձեռնոցներ՝ հետազոտման համար, անատոմիական. պահպանակներ. սրսկիչներ, էսմարխի բաժակներ, հոգնայի համար ծայրապանակներ. մեզի եւ կղկղանքի համար անոթներ, տակադիր պետքանոթներ, ջեռակներ, պարկեր սառույցի համար, սառնապահպանիչ տոպրակներ (կրիոպակետներ)) (ՄՄ ԱՏԳ ԱԱ 3006 91 000 0, 4001 10 000 0, 4002 11 000 0, 4014, 4015, 4803 00, 4818, 9619 00-ից, 4818 90 100 0 ծածկագրեր),

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012

թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)

– արտադրատեսակներ ակնաբուժության համար (ներաչքային, կոնտակտային ոսպնյակներ, այլ արտադրատեսակներ. աչքի պրոթեզներ. ոսպնյակներ՝ տեսողության շտկման համար, ակնոցի շրջանակներ. ակնավիրաբուժության համար դոնդողանյութեր (գելեր)) (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9003, 9003 11 000 0, 9004 10 ծածկագրեր),

– արտադրատեսակներ ներքին եւ արտաքին օրգանների պրոթեզավորման համար (սրտի փականներ, սրտամկանային եւ նյարդամկանային խթանիչներ, ներքին օրգանների պրոթեզներ, ներպատվաստվող տվիչներ, դեղանյութերի մշտական դոզավորմամբ ներարկման համար սարքվածքներ, ոսկրային ցեմենտներ, ներարգանդային հակաբեղմնավորիչներ եւ օղակներ. ներպատվաստվող դոնդողանյութեր (գելեր). կաթնագեղձի էկզոպրոթեզներ, պրոթեզաօրթոպեդիկ արտադրատեսակներ եւ պրոթեզաօրթոպեդիկ արտադրատեսակների կիսաֆարիկատներ) (ՄՄ ԱՏԳ ԱԱ 3006 91 000 0, 9021, 9021 10, 9021 10 100 0, 9021 10 900 0 ծածկագրեր),

– բժշկական սարքերի եւ ապարատների բաղադրիչ մասեր ու դետալներ (բժշկական սարքերի եւ ապարատների կորպուսներ ու դետալներ, խցեր գերճնշումային օքսիգենացման համար եւ այլն, կարգավորվող սեղմման ապարատներ, թթվածնային վրաններ. նորածնային ինկուբատորների խցերում երեխայի մաշկի հետ շփվող նյութեր, նորածինների համար ինկուբատորներ

(կյուվեզներ). թթվածնի եւ անոգայացման շնչառական ապարատների դետալներ՝ ներառյալ դիմակները, շնչառական կոնտուրները եւ այլն, թթվածնային բարձիկներ, այլ նյութեր ու արտադրատեսակներ՝ նախատեսված մարդու օրգանիզմի հետ անմիջական եւ միջնորդավորված շփման համար) (ՄՄ ԱՏԳ ԱԱ 4001 10 000 0, 4002 11 000 0, 9019, 9019 10, 9019 10 100 0, 9019 10 900 1, 9019 20 000 0 ծածկագրեր):

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)

ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐ

- Վակուումային-մղման ապարատներ՝ ներարկման եւ լվացման (հրիգացիայի) համար. ասպիրացիոն-դրենաժային համակարգեր, արտածծիչներ, պոմպեր, ներփչող եւ լվացման ապարատներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 4001, 9018 ծածկագրեր)
- Քիթ-կոկորդ-ականջի մասնագիտացված կաբինետների, օտոսկոպիայի, ակնաբուժության համար նախատեսված ախտորոշման ապարատներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018 ծածկագիր)
- Լսողության եւ խոսքի վերականգնման համար ապարատներ, խոսքի վերարտադրման սարքվածքներ եւ էլեկտրոնային լսողական ապարատներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9021, 9021 40 000 0 ծածկագրեր)
- Օրգանիզմի համակարգերի եւ օրգանների ֆունկցիաների փոխարինման համար ապարատներ եւ սարքվածքներ, արյան կոնցենտրատորներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018, 9018 90 500 ծածկագրեր)
- Հեմոդիալիզի սարքավորումներ (արհեստական երիկամներ, արհեստական երիկամների ապարատներ եւ դիալիզորդներ) (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018 90 300 0 ծածկագիր)
- Ապարատներ եւ սարքվածքներ՝ թոքերի արհեստական օդափոխության համար, անզգայացման շնչառական ապարատներ, ներշնչակներ եւ տուրբո-ներշնչակներ, այդ թվում՝ ուլտրաձայնային, աէրոզոլթերապիայի, ազդազերծման (փոխհատուցման) եւ թթվածնային անբավարարությունը բուժելու ապարատներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018 90 600 0, 9019 ծածկագրեր)
- Լազերային ապարատներ՝ մաշկաբանության, կոսմետոլոգիայի, ատամնաբուժության, վիրաբուժության, ակնաբուժության, ֆիզիոթերապիայի եւ այլ բաժինների համար: (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9013 20 000 0 ծածկագիր)
- Օդափոնավորիչներ, սարքավորումներ օդորակման համար, օդի մաքրման եւ հարստացման համար բժշկական սարքավորումներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9019 20 000 0 ծածկագիր)

– Վազքուղիներ՝ ֆիզիկական ծանրաբեռնվածության թեստերի անցկացման համար, ծանրաբեռնվածության համակարգեր՝ էլեկտրասրտագրության համար (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018 ծածկագիր)

– Ուլտրաձայնային եւ էլեկտրավիրահատական կազմալուծիչներ-ծծիչներ, էլեկտրավիրահատական գործիքներ, անոթները եռացնելու համար գեներատորներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018 ծածկագիր)

– Արտաքին, ավտոմատ դեֆիբրիլյատորներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018 ծածկագիր)

– Ավտոմատ ներարկիչներ՝ անգիոգրաֆիայի, համակարգչային եւ մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիայի համար, գրիչ-ներարկիչներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018 14 000 0 ծածկագիր)

– Գործիքներ՝ կարող, կտրող եւ այլն, վիրահատական՝ շարժաբերներով (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018 ծածկագիր)

– Ուլտրաձայնային սկաներների տվիչների լրակազմեր (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018 12 000 0 ծածկագիր)

– Բժշկական սարքավորումների խնամքի համար սպառման նյութեր (հղկումային նյութեր, լուծույթներ, յուղեր) (ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրեր՝ 3403 99 000 0–ից, 3403 19 900 0)

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16–ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)

– Բժշկական կահույք (սեղաններ, կողասեղաններ, ֆունկցիոնալ մահճակալներ, պատզարակներ, բազկաթոռներ, պահարաններ), ներքնակներ եւ ջրային ներքնակով մահճակալներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9402, 9403, 9404 ծածկագրեր)

– Վերակենդանացման մոնիտորներ, կարդիոմոնիտորներ, այդ թվում՝ մոդուլային, շարժական եւ այլն (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018 11 000 0 ծածկագիր)

– Մանրէասպան, ուլտրամանուշակագույն ճառագայթիչներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018 20 000 0 ծածկագիր)

- Ատամների պրոթեզավորման սարքավորումներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018 ծածկագիր)

- Բուժական-ախտորոշման սարքավորումներ՝ ինտերվենցիոն էլեկտրաֆիզիոլոգիայի, արտաքին հակապուլսացիայի համակարգերի համար (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018 ծածկագիր)

- Ատամնաբուժական սարքավորումներ՝ բժիշկ-ատամնաբույժի, օգնականի աշխատատեղը, հիվանդի նստելու տեղը, ատամնաբուժական կայանքներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018 41 000 0 ծածկագիր)

- Զարկերակային ճնշումը եւ անոթազարկի (պուլսի) հաճախությունը չափելու սարքեր, օքսիմետրեր, ծխաչափեր եւ այլն՝ տվիչներով ու առանց տվիչների (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018 90 100 0 ծածկագիր)

- Ռադիոթերապեւտիկ, ռենտգենագրական սարքեր եւ ապարատներ (աղմուկի բնութագրերի, էլեկտրամագնիսական դաշտերի եւ այլնի չափումների ու գնահատման մասով) (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9022 ծածկագիր)

- Ավտոմատացված համակարգերի, ավտոմատացման եւ բժշկական տեղեկությունների մշակման համար ծրագրա-տեխնիկական միջոցների համալիր (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018, 9030 ծածկագրեր)

- Նորածինների համար տաքացման եւ վերակենդանացման համակարգեր (ինկուբատորներ, ֆոտոթերապեւտիկ կայանքներ եւ լամպեր) (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018 ծածկագիր)

- Հիվանդներին տաքացնելու համար համակարգեր (էլեկտրական ծածկոցներ) (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018 20 000 0 ծածկագիր)

- Դիտանցման համակարգեր, հեռաչափական բժշկական համակարգեր (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018 19 100 0 ծածկագիր)

- Կարգավորվող սեղմման համար թերապեւտիկ համակարգեր (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018 ծածկագիր)

- Ատամնաբուժական ռադիովիզիոգրաֆներ, վիզիոգրաֆիկ սարքեր (ՄՄ ԱՏԳ

ԱԱ 9022 ծածկագիր)

– Հաշմանդամների վերականգնման համար տեխնիկական միջոցներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9021 ծածկագիր)

– Մագնիսառեզոնանսային տոմոգրաֆներ, լիթոտրիպտորներ (երիկամներում քարերի փշրման սարք), հարվածալիքային թերապիայի ապարատներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018 13 000 0, 9018 90 840 1 ծածկագրեր)

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)

– Ախտորոշիչ, վիրաբուժական եւ բուժական ուլտրաձայնային ապարատներ, ուլտրաձայնային վիրաբուժական հերձադանակներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018, 9018 12 000 0 ծածկագրեր)

– Լվացման, վարակազերծման, ախտահանման կայանքներ (ուլտրամանուշակագույն ճառագայթների, ուլտրաձայնի եւ գերբարձր հաճախության (ԳԲՀ)) շոգու, չոր օդային, այդ թվում՝ ճկուն ներդիտակների ավտոմատ ախտահանման, բժշկական թափոնների օգտահանման համար (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8419 20 000 0, 9018 20 000 0 ծածկագիր)

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)

– Էլեկտրաախտորոշման սարքավորումներ՝ ռեոգրաֆիկ համակարգչային համալիրներ, կարդիոմոնիտորներ եւ էլեկտրասրտագրիչներ, էլեկտրաէնցեֆալոգրաֆներ, նյարդամկանային ապարատի հիվանդությունների ախտորոշման համար համալիրներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018, 9018 11 000 0, 9018 19 900 0, 9022 12 000 0, 9030 ծածկագրեր)

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)

– Էնդոսկոպիկ եւ վիդեոէնդոսկոպիկ սարքվածքներ, գործիքներ եւ համակարգեր, մուլտիմեդիա, վիդեոէնդոսկոպիկ, խոշորացման համակարգեր (ՄՄ

ԱՏԳ ԱԱ 9018, 9018 19 100 0, 9018 90 200 0 ծածկագրեր)

– Ֆիզիոթերապիայի, բուժական կոսմետոլոգիայի համար ապարատներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018 ծածկագիր)

– Մերսման եւ մաշկի մաքրման համար ապարատներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9019 10, 9019 10 100 0 ծածկագիր)

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)

– Ռեկաբսացիոն-վերականգնողական համակարգեր (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018 ծածկագիր)

– Էլեկտրական եւ մագնիսական թերապիայի խթանիչներ, ավտոբիոռեզոնանսային դեղարկիչներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018, 9018 90 750 0 ծածկագրեր)

– Ֆիզիոթերապեւտիկ ապարատներ (գերծայնի, լազերային, ենթակարմիր ճառագայթման, ջերմային ճառագայթման ազդեցության հիմքով գործող), էլեկտրականությամբ բուժման ապարատներ՝ ցածր հաճախականության, բարձր հաճախականության, քվանտային եւ այլն՝ հաստատուն, իմպուլսային հոսանքների ու մագնիսական դաշտերի եւ այլնի հիմքով (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9013 20 000 0, 9018, 9018 20 000 0 ծածկագրեր)

– Ռադիացիոն, բժշկական, բուժական եւ ախտորոշման կայանքներ, համակարգչային տոմոգրաֆներ, մամոգրաֆներ, խտաչափեր, համակարգչային ռադիոգրաֆիայի համակարգեր, սցինտիգրաֆիայի ապարատներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 9018, 9018 14 000 0, 9022 ծածկագրեր)

Սույն փաստաթղթի դրույթները տարածվում են մարդու մաշկային ծածկույթների եւ լորձաթաղանթների հետ անմիջական կամ միջնորդավորված շփման համար նախատեսված այն նյութերի վրա, որոնք օգտագործվում են բժշկական տեխնիկայի արտադրատեսակների արտադրության մեջ:

Սույն փաստաթղթի դրույթները չեն տարածվում՝

– արհեստական պայմաններում (in vitro) ախտորոշման համար նախատեսված բժշկական արտադրատեսակների վրա,

– դեղամիջոցների վրա, այդ թվում՝ մարդու արյունից եւ պլազմայից պատրաստված,

– կոսմետիկ միջոցների վրա,

– մարդու՝ արյան կամ արյան բաղադրիչների, պլազմայի, մարդու արյունից եւ պլազմայից պատրաստված դեղամիջոցների, ինչպես նաեւ այն արտադրատեսակների վրա, որոնք շրջանառության մեջ բաց թողնելու ժամանակ ներառում են նշված նյութերը,

– փոխպատվաստման համար նախատեսված մարդկային բջիջների կամ հյուսվածքների, ինչպես նաեւ այն արտադրատեսակների վրա, որոնք պատրաստված են մարդու օրգանիզմի հյուսվածքներից կամ բջիջներից կամ վերջիններիս օգտագործմամբ,

– փոխպատվաստման համար նախատեսված՝ կենդանական ծագում ունեցող հյուսվածքների կամ բջիջների վրա, բացառությամբ այն արտադրատեսակների, որոնք պատրաստված են կամ կենդանական ծագում ունեցող մահացած հյուսվածքներից, կամ՝ վերջիններիս օգտագործմամբ,

– ատամնաբուժական նյութերի վրա՝

– ապակուց եւ մետաղից պատրաստված արտադրատեսակների վրա (ներարկիչներ, տարաներ, փաթեթավորման նյութեր, բժշկական գործիքներ, կահույք),

– կշեռքների, մեծահասակների համար նախատեսված հասակաչափերի վրա,

– կանանց հիգիենայի պարագաների (կանացի հիգիենիկ միջադիրներ, կանացի հիգիենիկ, մանկական խանձարուրներ եւ տակդիրներ), բացառությամբ այն արտադրատեսակների, որոնք արտադրողի կողմից հատուկ նախատեսված են բժշկական նպատակներով օգտագործման համար:

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010

թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշմամբ)

ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրերով բժշկական նշանակության եւ բժշկական տեխնիկայի այն արտադրատեսակների ցանկը, որոնց համար պահանջվում է սանիտարահամաճարակաբանական եզրակացության ձեւակերպում, ներկայացված է 1-ին հավելվածում:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն փաստաթղթում օգտագործվում են հետեւյալ հասկացությունները՝

բժշկական նշանակության արտադրատեսակներ (ԲՆԱ)՝ արտադրատեսակներ, որոնք նախատեսված են բժշկական պրակտիկայում կիրառելու համար՝ հարմարանքներ վիրակապման եւ կարելու համար նախատեսված միջոցներ, պոլիմերային, ռետինե եւ այլ նյութերից պատրաստված արտադրատեսակներ, որոնք բժշկական նպատակներով օգտագործվում են առանձին-առանձին կամ համակցված եւ որոնք նախատեսված են հետեւյալի համար՝

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

– հիվանդության կանխարգելում, ախտորոշում, բուժում, վերականգնում, բժշկական պրոցեդուրաների, բժշկական հետազոտությունների իրականացում, մարդու հյուսվածքների, օրգանների եւ օրգանիզմի մասերի փոխարինում կամ ձեւափոխում, խախտված կամ կորցրած ֆիզիոլոգիական ֆունկցիաների վերականգնում կամ փոխհատուցում, բեղմնավորման պրոցեսի նկատմամբ հսկողություն,

– մարդու օրգանիզմի վրա այնպիսի ազդեցություն, որի ֆունկցիոնալ նշանակությունը չի իրականացվում մարդու օրգանիզմի հետ քիմիական, դեղագործական, իմունաբանական, մետաբոլիկ փոխազդեցության միջոցով,

բժշկական տեխնիկայի արտադրատեսակներ (ԲՏԱ)՝ սարքեր, ապարատներ, գործիքներ, սարքվածքներ, համալիրներ, ծրագրային կառավարմամբ

համակարգեր, մարդու նկատմամբ ստորեւ նշված նպատակներով կիրառման համար նախատեսված սարքավորումներ՝ հետազոտություններ, ախտորոշում, հսկողություն, բուժում, կանխարգելում, հիվանդության ախտանիշների թեթեւացում, վնասվածքի կամ հաշմանդամության փոխհատուցում (կոմպենսացիա) եւ ֆիզիոլոգիական ֆունկցիաների պահպանում,

բժշկական արտադրատեսակներ՝ բժշկական նշանակության եւ բժշկական տեխնիկայի արտադրատեսակներ՝ ցանկացած գործիք, ապարատ, սարք, սարքվածք, նյութ կամ այլ արտադրատեսակ, որն օգտագործվում է առանձին-առանձին կամ համակցված՝ ներառյալ դրանց ըստ նշանակության կիրառման համար անհրաժեշտ ծրագրային ապահովման միջոցները, որոնք նախատեսված են մարդկանց նկատմամբ հետեւյալ նպատակներով կիրառելու համար՝

- ախտորոշում, կանխարգելում, հսկողություն, բուժում կամ հիվանդության ախտանիշների թեթեւացում,

- ախտորոշում, հսկողություն, բուժում, վնասվածքի կամ հաշմանդամության ախտանիշների թեթեւացում կամ փոխհատուցում (կոմպենսացիա),

- հետազոտություններ, անատոմիական կառուցվածքի փոխարինում կամ փոփոխում, ֆիզիոլոգիական ֆունկցիաների պահպանում,

- բեղմնավորման ընթացքի կառավարում,

պայմանով, որ դրանց հիմնական ազդեցությունը չի հիմնվում կիրառման դեղագործական, իմունոլոգիական կամ մետաբոլիկ ազդեցության վրա, սակայն որոնք կարող են նպաստել մարդու վերոնշյալ ազդեցություններ առաջացնող միջոցների՝ մարդու օրգանիզմ ներմուծմանը կամ մարդու մարմնի արտաքին մակերեսույթ դրանց ներթափանցմանը,

օժանդակ պարագաներ՝ առարկաներ, որոնք թեւ առանձին չեն համարվում բժշկական արտադրատեսակներ, սակայն արտադրողի կողմից հատուկ նախատեսված են դրանց հետ համակցված օգտագործման համար, որպէսզի բժշկական արտադրատեսակներն օգտագործվեն նախատեսված նշանակությամբ,

անհատական օգտագործման արտադրատեսակ՝ արտադրատեսակ, որն արտադրվել է այն տեխնիկական առաջադրանքին համապատասխան, որում, պատշաճ կերպով որակավորված բժիշկը, կամ համապատասխան որակավորում եւ լիազորություններ ունեցող մեկ այլ անձ, իր պատասխանատվության ներքո, գրավոր ներկայացնում է հատուկ պահանջներ՝ այդ արտադրատեսակի մշակման կամ արտադրման համար: Այդպիսի արտադրատեսակը պետք է նախատեսված լինի բացառապես տվյալ հիվանդի համար: Սերիական արտադրության այն արտադրատեսակը, որը պատրաստվում կամ ենթարկվում է ձեւափոխության՝ պատշաճ կերպով որակավորված բժշկի կամ համապատասխան որակավորմամբ եւ լիազորություններով օժտված այլ անձի հատուկ պահանջների համաձայն, չի համարվում անհատական օգտագործման արտադրատեսակ:

արտադրող՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը արտադրատեսակը շրջանառության մեջ բաց թողնելիս իր անունից պատասխանատվություն է կրում այդ արտադրատեսակի նախագծման, արտադրման, փաթեթավորման եւ (կամ) մակնշման, համակարգի հավաքման կամ արտադրատեսակի ձեւափոխման համար՝ անկախ այն բանից, թե տվյալ գործունեությունն իրականացնում է հենց այդ անձը, թե նրա անունից գործող երրորդ անձը: Արտադրողներ չեն համարվում այն անձինք, որոնք տվյալ հաճախորդի համար իրականացնում են արտադրատեսակի հավաքման կամ ձեւափոխման աշխատանքներ՝ պայմանով, որ այդպիսի արտադրատեսակներն արդեն դրվել են շրջանառության մեջ,

նախատեսված նշանակում՝ արտադրատեսակի կիրառումն ըստ արտադրողի կողմից ներկայացված տեղեկությունների, որոնք նշված են մականշվածքի վրա, օգտագործման ցուցման մեջ եւ (կամ) գովազդային նյութում,

օգտագործման ցուցում (շահագործման ձեռնարկ), շահագործման փաստաթղթեր՝ փաստաթղթեր, որոնք պարունակում են տեղեկություններ արտադրանքի շահագործման (կիրառման) եղանակների եւ անվտանգության միջոցների վերաբերյալ,

բուժանձնակազմ՝ այն անձինք, որոնք իրենց գործունեության բնույթով

մշտապես կամ ժամանակավորապես աշխատում են բժշկական նշանակության եւ բժշկական տեխնիկայի արտադրատեսակների հետ ու կարող են ենթարկվել այդպիսի արտադրատեսակների առաջացրած ֆիզիկական, քիմիական եւ կենսաբանական գործոնների ազդեցությանը,

վնասակար քիմիական նյութերի միգրացիա դեպի մոդելային միջավայրեր՝ փորձարկման որոշակի պայմաններում սանիտարաքիմիական փորձեր կատարելիս նյութերից կամ արտադրատեսակներից քիմիական նյութերի արտազատումը մոդելային միջավայրեր (օդ, թորած ջուր եւ այլն),

բաղադրատոմս (արտադրատեսակի նյութի)՝ նյութի մեջ հումքի այն բաղադրիչների տոկոսային պարունակությունը, որոնք օգտագործվում են դրա արտադրության ժամանակ (պոլիմերային, սինթետիկ, արհեստական, ռետինե, ռետինագործվածքային),

բաղադրություն (արտադրատեսակի նյութի)՝ նյութի մեջ հումքի այն բաղադրիչների ցանկը, որոնք օգտագործվում են դրա արտադրության ժամանակ (պոլիմերային, սինթետիկ, արհեստական, ռետինե, ռետինագործվածքային),

կից փաստաթղթեր՝ արտադրանքին կից ներկայացվող փաստաթղթերը, (տեխնիկական անձնագիր, նկարագրություն, շահագործման ձեռնարկ կամ օգտագործման ցուցում, պիտակ, փորձարկման արձանագրություններ, հավաստագրեր, սանիտարահամաճարակաբանական եզրակացություն եւ այլն), որոնք պարունակում են այդ արտադրանքի տեխնիկական բնութագրերը, անվտանգության պահանջները՝ օգտագործման ժամանակ եւ այլն,

օգտագործողի որակավորմանը ներկայացվող պահանջներ՝ այն գիտելիքները, կարողությունները, հմտությունները եւ փորձը, որոնցով պետք է օժտված լինի օգտագործողը արտադրատեսակն անվտանգ օգտագործելու նպատակներով,

ուլտրամանուշակագույն մանրէասպան կայանք՝ մանրէասպան ճառագայթիչների խումբ, որոնք ապահովում են մանրէասպանության արդյունավետության առաջադրված մակարդակը սենքում,

բաց տեսակի ճառագայթիչներ՝ ճառագայթիչներ, որոնցում լամպերից եւ

անդրադարձիչից (կամ առանց դրա) ուղղակի մանրէասպան հոսքը տարածության մեջ զբաղեցնում է լայն գոտի, որը կարող է կազմել մինչեւ 4π մարմնային անկյուն,

փակ տեսակի ճառագայթիչներ (վերաշրջապատիչներ (ռեցիրկուլյատորներ))՝ ճառագայթիչներ, որոնցում ճառագայթի կորպուսի ոչ ընդարձակ փակ տարածքում տեղակայված լամպերի մանրէասպան հոսքը ելք չունի դեպի արտաքին միջավայր,

համակցված տեսակի ճառագայթիչներ՝ ճառագայթիչներ, որոնք ունեն երկու մանրէասպան լամպ, որոնք էկրանով բաժանված են այնպես, որ այդ լամպերի որեւէ մեկից ելնող էլեկտրական հոսքն ուղղվում է դեպի դուրս՝ սենքի ներքեւի գոտի, իսկ մյուսից ելնող էլեկտրական հոսքն ուղղվում է սենքի վերեւի գոտի, ընդ որում, լամպերը կարող են վառվել միաժամանակ եւ առանձին-առանձին,

էլեկտրականացման հատկություն (նյութերի)՝ նյութի՝ էլեկտրաստատիկ լիցք կուտակելու ունակությունը:

3. ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Բժշկական արտադրատեսակները շահագործման ժամանակ սպասարկող անձնակազմի եւ այլ օգտագործողների աշխատավայրերում չպետք է ստեղծեն վնասակար գործոնների (ֆիզիկական, քիմիական եւ կենսաբանական) այնպիսի մակարդակներ, որոնք գերազանցում են սանիտարական օրենսդրության պահանջներին համապատասխանող սահմանային թույլատրելի խտությունները:

Արտադրատեսակները պետք է ապահովեն հիվանդի անվտանգությունը կամ դրանք օգտագործողների կամ, համապատասխան դեպքերում, այլ անձանց անվտանգությունն ու առողջությունը, եւ, դրանց կիրառման հետ կապված ցանկացած ռիսկ պետք է համարվի ընդունելի՝ հիվանդի համար դրանց օգտակարության եւ հիվանդի առողջության ու անվտանգության ապահովման մակարդակի համեմատությամբ:

Արտադրատեսակի տեխնիկական բնութագրերը եւ շահագործման

առանձնահատկությունները չպետք է ունենան այնպիսի վտանգավոր ազդեցություն, որը ռիսկի կենթարկի հիվանդների եւ բուժանձնակազմի կամ այլ անձանց անվտանգությունն արտադրատեսակի՝ արտադրողի կողմից նշված պիտանիության ժամկետի ընթացքում, արտադրողի ցուցումներին համապատասխան շահագործման դեպքում:

Բժշկական նշանակություն ունեցող արտադրատեսակների, դրանց պատրաստման համար օգտագործվող նախնական հումքի եւ նյութերի յուրաքանչյուր տեսակի համար արտադրող ձեռնարկությունը սահմանված կարգով ձեւակերպում եւ հաստատում է նորմատիվատեխնիկական փաստաթղթերը, այդ թվում՝ բաղադրատոմսը կամ կազմությունը:

Նորմատիվային փաստաթղթերում եւ բժշկական արտադրատեսակներին առնչվող սանիտարահիգիենիկ գնահատման համար ներկայացված այլ նյութերում նշվում են՝

- արտադրանքի նպատակային նշանակությունը եւ կիրառության ոլորտը,
- արտադրատեսակի նկարագրությունը՝ նշելով (անհրաժեշտության դեպքում) օրգանիզմի հետ շփման տեսակը եւ տեղողությունը,
- օգտագործվող նյութերի կազմը կամ բաղադրատոմսը,
- հիգիենիկ նշանակություն ունեցող տեխնիկական հարաչափերը եւ բնութագրերը (բժշկական տեխնիկայի արտադրատեսակների համար),
- արտադրության ամսաթիվը,
- անվտանգ շահագործման վերաբերյալ հանձնարարականներ:

Բժշկական տեխնիկայի արտադրատեսակների վերաբերյալ շահագործման փաստաթղթերում նշվում են վտանգների բոլոր հնարավոր տեսակները (այսինքն այն ֆիզիկական եւ այլ գործոններ, որոնք առաջանում են տվյալ սարքավորանքի շահագործման հետեւանքով), դրանց հիգիենիկ նշանակություն ունեցող տեխնիկական հարաչափերը եւ բնութագրերը, ինչպես նաեւ արտադրատեսակի շահագործման եւ սպասարկման ժամանակ անվտանգության ապահովման

պահանջներն ու միջոցները:

Ֆիզիկական գործոնների աղբյուր հանդիսացող բժշկական տեխնիկայի արտադրատեսակների առնչությամբ, դրանց կից փաստաթղթերում (տեխնիկական նկարագրության թերթիկում կամ տեխնիկական պայմաններում կամ տեխնիկական անձնագրում) ներկայացված են հետեւյալ տեղեկությունները՝

– աղմուկի կամ թրթռման աղբյուր հանդիսացող բոլոր արտադրատեսակների առնչությամբ (որոնք իրենց կազմում ունեն շարժական մասեր, պոմպեր, կոմպրեսորներ, օդափոխիչներ, էլեկտրական շարժիչներ եւ այլն)՝ ձայնի մակարդակների մասին տեղեկություններ (անհրաժեշտության դեպքում՝ տեղային կամ ընդհանուր թրթռման մակարդակների եւ հաճախականությունների մասին), որոնք գրանցվում են սարքավորումների աշխատանքի բոլոր անվանական ռեժիմների ժամանակ,

– ուլտրաձայնի աղբյուր հանդիսացող ախտորոշիչ, բուժական, օժանդակ (վարակազերծիչ) սարքավորումների առնչությամբ՝ ուլտրաձայնի աղբյուրների ակուստիկ հարաչափերի մասին տվյալներ՝ բոլոր տվիչների ակուստիկ ելքի, թերապեւտիկ գլխիկների կամ այլ աղբյուրների մասին՝ աշխատանքային հաճախականություններ, ուլտրաձայնի ելքային հզորություն (թրթռման արագության առավելագույն արժեք, ուլտրաձայնի ինտենսիվություն), տվիչների աշխատանքային մակերեսային մակերես (թերապեւտիկ գլխիկներ),

– էլեկտրամագնիսական դաշտի աղբյուր հանդիսացող սարքավորման առնչությամբ՝ արտադրատեսակի բաղադրակազմի մեջ մտնող բոլոր աղբյուրների ցանկը, յուրաքանչյուր աղբյուրի բնութագիրը՝ ներառյալ առաջացող էլեկտրամագնիսական դաշտերի հաճախականությունը, առաջացող հզորությունը, հնարավորության դեպքում՝ էլեկտրական եւ (կամ) մագնիսական դաշտերի լարվածության առավելագույն արժեքները, էներգիայի հոսքի խտությունը, հաստատուն մագնիսական դաշտի ինդուկցիան (մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիայի համար, բացի դրանից, պահանջվում է մագնիսական դաշտի արագության փոփոխությունը, գրադիենտը, տեսակարար կլանումը). իմպուլսային ռեժիմներում աշխատող աղբյուրների համար՝ իմպուլսների կրկնման

հաճախականությունը, ձեռք, տեղությունը եւ իմպուլսների ընթացքի ժամանակահատվածը, ինչպես նաեւ յուրաքանչյուր աղբյուրի աշխատանքի ենթադրյալ առավելագույն տեղությունը. անհրաժեշտության դեպքում՝ անվտանգ հեռավորությունը (անվտանգ կամ հսկվող մուտքի գոտիները),

– ուլտրամանուշակագույն ճառագայթման աղբյուր հանդիսացող ֆոտոթերապեւտիկ, մանրէասպան սարքավորման առնչությամբ նշվում են՝ ուլտրաձայնային լամպերի տեսակները, հզորությունը, քանակությունը, ուլտրամանուշակագույն ճառագայթման սպեկտրային բնութագրերը 100-400 նմ ալիքների երկարության ընդգրկույթում կամ ճառագայթման ինտենսիվությունը՝ Ա ընդգրկույթում (315-400 նմ-ից բարձր), Բ ընդգրկույթում (280-315 նմ-ից բարձր), Գ ընդգրկույթում (100-280 նմ-ից բարձր), տեղեկություններ սարքավորումների աշխատանքի ընթացքում օդային միջավայր արտանետված օզոնի կոնցենտրացիաների մասին, ինչպես նաեւ առաջարկված հեռավորությունը եւ շահագործման տեղությունը, մանրէասպան ճառագայթիչների համար պետք է նշել, թե արդյոք թույլատրվում է դրանք շահագործել մարդկանց ներկայությամբ թե բացակայությամբ,

– ալիքների երկարությունների ընդգրկույթի ենթակարմիր, տեսանելի ճառագայթման աղբյուր հանդիսացող սարքավորումների առնչությամբ նշվում են՝ ալիքների երկարությունը, ճառագայթման ինտենսիվությունը կամ հզորությունը առավելագույն աշխատանքային իմպուլսում, անհրաժեշտության դեպքում՝ պայծառությունը, լուսավորվածությունը, բաբախման գործակիցը, լուսադիոդային աղբյուրների համար՝ լույսի առանցքային ուժը, ճառագայթման մարմնային անկյունը, լուսադիոդի այլ անձնագրային բնութագրեր,

– լազերային ճառագայթման աղբյուր հանդիսացող սարքավորումների առնչությամբ նշվում են (կայանքի կազմի մեջ մտնող բոլոր աղբյուրների համար)՝ լազերի տեսակը, ալիքի երկարությունը, ելքային հզորությունը, աշխատանքի ռեժիմները (մշտական, ընդհատվող, պարբերական, իմպուլսային), փնջի տրամագիծն ու տարամիտումը, գլխադիրների եւ օպտիկական մանրաթելի տրամագիծը, ճառագայթվող մակերեւույթի վրա բծի տրամագիծը, իմպուլսային

ռեժիմների համար՝ փնջում էներգիայի խտությունը, իմպուլսների հարաչափերը, բաբախման հաճախականությունը, ազդեցության տեւողությունը, կարգավորիչ լազերների ճառագայթման բնութագրերը՝ ճառագայթման ալիքի երկարությունը եւ հզորությունը, բոլոր աղբյուրների լազերային վտանգի դասը;

- կարգավորվող սեղմման համակարգերի եւ սեղմումային արտադրատեսակների առնչությամբ՝ գործադրված ճնշման մակարդակները,

- օդափոնավորիչ բուժկանխարգելիչ սարքավորումների առնչությամբ նշվում են՝ իոնացնող էլեկտրոդների լարվածությունը, դրական եւ բացասական օդային իոնների կոնցենտրացիան, որոնք առաջանում են տարբեր աշխատանքային ռեժիմներում, յուրաքանչյուր աշխատանքային ռեժիմի համար նշելով առաջարկված հեռավորությունը եւ շահագործման տեւողությունը, ինչպես նաեւ տեղեկություններ սարքավորումների աշխատանքի ընթացքում օդային միջավայր արտանետված օզոնի խտությունների մասին,

- բժշկական տեխնիկայի բոլոր էլեկտրական արտադրատեսակների առնչությամբ ներկայացվում են սնուցման աղբյուրների բնութագրերը (հաստատուն կամ փոփոխական հոսանքը, ցանցում հոսանքի լարվածությունը, հաճախականությունը, սպառվող հզորությունը, փուլայնությունը)

- բժշկական տեխնիկայի բոլոր արտադրատեսակների կամ բժշկական անձնակազմի ձեռքերի հետ շփման համար նախատեսված համալրող արտադրատեսակների համար պետք է նշվի մակերեսային նյութի կազմը, ինչպես նաեւ սարքավորումների աշխատանքի տարբեր ռեժիմներում մակերեսային ջերմաստիճանը:

Արտադրատեսակների կառուցվածքը պետք է, հնարավորության դեպքում, բացառի ֆիզիկական գործոնների բարձր մակարդակների ազդեցությունը սպասարկող անձնակազմի եւ օգտագործողների վրա բլոկավորումների, պաշտպանականների, էկրանների, ֆիլտրերի, պաշտպանական պատյանների եւ ծածկույթների, լուսաազդանշային սարքերի, թայմերների, հեռակառավարման եւ նույնանման այլ միջոցների). ստեղծման եւ օգտագործման միջոցով: Աղմուկ եւ

թրթռում առաջացնող սարքավորումները պետք է հագեցած լինեն աղմկամեկուսիչ եւ թրթռամեկուսիչ տարրերով: Էլեկտրական արտադրատեսակները պետք է ապահովված լինեն պաշտպանական հողանցմամբ: Ուլտրամանուշակագույն սարքավորումների շահագործման ժամանակ, այնտեղ, որտեղ դա անհրաժեշտ եւ հնարավոր է, հարկ է օգտագործել ակրիլային պաշտպանիչ ծածկույթ: III, IV դասերի լազերային արտադրատեսակները, որոնք ճառագայթում են առաջացնում սպեկտրի անտեսանելի մասում, հարկ է զինել I, II դասերի ներկառուցված լազերներով, որոնք ունեն տեսանելի ճառագայթում՝ հիմնական լազերային փնջի տեսանելիացման համար (կարգավորիչ, նշանոցային լազերներ):

Արտադրող ձեռնարկությունը բժշկական արտադրատեսակների լազերային վտանգավորության աստիճանը դասակարգում է հաշվարկային մեթոդով ըստ ճառագայթման ելքային բնութագրերի՝ գործող սանիտարական նորմերի եւ կանոնների պահանջներին համապատասխան: Լազերների վտանգավորության դասի որոշման համար պատասխանատվություն է կրում արտադրող ձեռնարկությունը: Լազերի դասի որոշման ճշգրտության նկատմամբ հսկողությունն իրականացվում է պետական սանիտարական հսկողության (վերահսկողության) լիազորված մարմինների կողմից:

Հայրենական արտադրության լազերային արտադրատեսակների տեխնիկական պայմանները պարտադիր համաձայնեցվում են պետական սանիտարական հսկողության (վերահսկողության) լիազորված մարմինների հետ:

Պետական սանիտարական հսկողության (վերահսկողության) մարմինները պետք է տրամադրեն սույն Միասնական սանիտարական պահանջների հետ լազերային արտադրատեսակների փորձանմուշների համապատասխանության մասին իրենց եզրակացությունը՝ սերիական արտադրության հետագա թույլտվությամբ:

Բժշկական նշանակության լազերային արտադրատեսակները պետք է սարքավորված լինեն հիվանդի եւ սպասարկող անձնակազմի վրա ազդող՝ լազերային ճառագայթման մակարդակը չափելու համապատասխան միջոցներով:

III–IV դասի լազերային արտադրատեսակները, նախքան դրանց շահագործումը, պետք է ընդունվեն հաստատության ադմինիստրացիայի կողմից նշանակված հանձնաժողովի կողմից, որի կազմում պարտադիր պետք է ներառվեն պետական սանիտարական հսկողության (վերահսկողության) լիազորված մարմինների ներկայացուցիչները: Հանձնաժողովը սահմանում է սույն Միասնական սանիտարական պահանջների կատարումը, որոշում լազերային արտադրատեսակները շահագործման մեջ մտցնելու հարցը: Հանձնաժողովի որոշումը ձեռնարկվում է ակտով:

III եւ IV դասերի լազերային արտադրատեսակները շահագործման մեջ մտցնելու համար արտադրողը հանձնաժողով է ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝

- լազերային արտադրատեսակի տեխնիկական անձնագիրը,
- շահագործման եւ անվտանգության տեխնիկայի ցուցումները,
- լազերային արտադրատեսակների տեղադրման հաստատված ծրագիրը,
- սանիտարական անձնագիրը (սահմանված ձեւաչափով):

Լազերային արտադրատեսակների շահագործման ժամանակ աշխատատեղերի անվտանգությունը պետք է ապահովվի արտադրատեսակի կառուցվածքով: Աշխատանքային գոտու տարածքի սահմաններում լազերային ճառագայթման եւ այլ անբարենպաստ արտադրական գործոնների ազդեցության մակարդակները չպետք է գերազանցեն սանիտարական նորմերով եւ կանոններով ու այլ նորմատիվ փաստաթղթերով սահմանված մեծությունները:

Լազերային ճառագայթման տարածման գոտիները պետք է նշվեն լազերային վտանգի նշաններով: Եթե լազերային փունջը դուրս է գալիս հսկվող գոտու սահմաններից, ապա դրա օգտակար հետագծի ծայրին պետք է սահմանափակիչ լինի:

Բաց տեսակի լազերային արտադրատեսակների հետ աշխատանքի ժամանակ անվտանգությունն ապահովվում է անհատական անվտանգության միջոցների կիրառման միջոցով:

Արտադրական այն սենքերը, որոնցում շահագործվում են լազերային արտադրատեսակները, պետք է բավարարեն գործող շինարարական նորմերի եւ կանոնների պահանջներն ու ապահովեն արտադրատեսակի սպասարկման անվտանգությունը:

Լազերները եւ ցանկացած դասի լազերային արտադրատեսակները պետք է ունենան արտադրանքի տվյալ տեսակին ներկայացվող պահանջներին համապատասխան մականշվածք, այդ թվում՝ արտադրանքի (բացառությամբ I դասի արտադրատեսակների) բացատրական նշումը պետք է պարունակի՝ տեղեկություններ արտադրողի, լազերային ճառագայթման առավելագույն ելքային էներգիայի (հզորության) եւ ճառագայթման ալիքի երկարության, լազերային վտանգավորության դասի մասին:

Լազերային արտադրատեսակի տեխնիկական անձնագրում (տեղեկամատյանում) պետք է նշվի՝ ճառագայթման ալիքի երկարությունը, ելքային հզորությունը (էներգիան), լազերային ճառագայթման ժամանակավոր բնութագրերը, լազերի վտանգավորության դասը, հարակից վտանգավոր եւ վնասակար գործոններ:

Արտադրատեսակները պետք է մշակվեն, արտադրվեն եւ փաթեթավորվեն այնպես, որ փոխադրելիս եւ պահպանելիս դրանց տեխնիկական բնութագրերը ու շահագործման առանձնահատկությունները վնասակար ազդեցություն չկրեն՝ արտադրատեսակներն ըստ նշանակության օգտագործելու ընթացքում:

Բժշկական նշանակության արտադրատեսակները պետք է ունենան պիտակ (մականշվածք), որի միջոցով օգտագործողը տեղեկանում է արտադրողի, արտադրանքի կիրառության ոլորտի, կիրառության եւ պահպանման ժամկետների ու պայմանների մասին, ինչպես նաեւ՝ տեղեկացվում է արտադրանքն օգտագործելիս անվտանգության միջոցների մասին: Արտադրության անվտանգության միջոցներ ձեռնարկելու բացակայության դեպքում արտադրողը նշում է՝ «Անվտանգության միջոցների պահպանում չի պահանջվում»:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ

341 որոշման խմբագրությամբ)

Թույլատրելի սահմանները գերազանցող ֆիզիկական գործոնների մակարդակներ առաջացնող ԲՏԱ արտադրողը պետք է առաքվող արտադրատեսակների լրակազմում ընդգրկի 2 զույգից ոչ պակաս անհատական պաշտպանության միջոցներ (հակաաղմկային ներդրակներ, պաշտպանիչ ակնոցներ, ձեռնոցներ):

4. ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Արտադրատեսակների նյութերի սանիտարաքիմիական փորձարկումները՝

- հոտաչափական հետազոտություններ (նյութերի հոտի ինտենսիվության գնահատում),
- արտադրատեսակների նյութերից վնասակար նյութերի՝ դեպի մոդելային միջավայրեր (օդ, թորած ջուր) միգրացիայի մակարդակների որակական եւ քանակական հետազոտություններ,
- ջրային լուծամզուկների վիճակի ինտեգրալ ցուցանիշների գնահատում,
- ջրային լուծամզուկների օրգանոլեպտիկ հետազոտություններ (հոտի ինտենսիվության, գույնի, պղտորության գնահատում),
- արտադրատեսակների կազմի մեջ մտնող նյութերից պատրաստված ջրածնային լուծամզուկներում ջրածնի իոնների (pH) ակտիվության ցուցանիշի չափումը եւ դրա փոփոխությունները՝ հսկողության հետ համեմատած,
- վերականգնող խառնուկների գնահատումը,
- 220–360 նմ ալիքների երկարության ընդգրկույթում ուլտրամանուշակագույն կլանման գնահատումը:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ

341 որոշման խմբագրությամբ)

Թունաբանական փորձարկումներ՝

– մաշկային ծածկույթի վրա արտադրատեսակների պատրաստման համար օգտագործված նյութերի եւ (կամ) մաշկային ծածկույթների վրա դրանցից ստացվող ջրային լուծամզուկների գրգռիչ ազդեցության գնահատումը,

– աչքի լորձաթաղանթի վրա նյութերի եւ (կամ) արտադրատեսակների պատրաստման համար օգտագործված նյութերից ստացվող ջրային լուծամզուկների գրգռիչ ազդեցության գնահատումը,

– սուր թունավորման ցուցանիշների գնահատում՝ այդ նյութերը որովայնաթաղանթ, ստամոքս, մաշկի տակ եւ այլն ներարկելիս),

– արտադրատեսակների բաղադրության մեջ մտնող նյութերի եւ (կամ) դրանցից ստացվող ջրային լուծամզուկների զգայունացնող ազդեցության գնահատումը,

– արհեստական ((in vitro) թունավորության ինդեքս) պայմաններում շարժունակ բջջային կուլտուրայի վրա արտադրատեսակների բաղադրության մեջ մտնող նյութերից ստացվող ջրային լուծամզուկների ընդհանուր թունաբանական եւ մաշկը գրգռող ազդեցության գնահատումը,

– հեմոլիտիկ ակտիվության գնահատում,

– ջերմաձնության գնահատում:

Միկրոկենսաբանական փորձարկումներ (տես՝ 2-րդ հավելված, 1.1.2 կետը)

Բժշկական նշանակության արտադրատեսակների փորձարկման ֆիզիկական մեթոդները

– արտադրատեսակների բաղադրության մեջ մտնող նյութերի էլեկտրականացման գնահատումը,

– ռադիացիոն ցուցանիշների գնահատում (բուսական հանքանյութերի եւ հումքի օգտագործմամբ արտադրատեսակների համար)

Բժշկական տեխնիկայի արտադրատեսակների փորձարկման ֆիզիկական

մեթոդները.

– առաջացող ֆիզիկական գործոնների մակարդակների չափում (աղմուկ, ընդհանուր եւ տեղային թրթռում, օդային ու հպումային ուլտրաձայն, ճառագայթումներ՝ ուլտրամանուշակագույն, օպտիկական ընդգրկույթի, ենթակարմիր, լազերային, ռենտգենային, էլեկտրական, մագնիսական եւ էլեկտրամագնիսական դաշտեր ու ճառագայթումներ, օդափոնային կազմ, օգտագործողի հպման համար հասանելի ԲՏԱ-ների մակերեւույթների ջերմաստիճանը:

Կլինիկական փորձարկումներ (արտադրողի կողմից բացառապես բժշկական նպատակներով նախատեսված կանացի հիգիենիկ միջադիրների, տակդիրների, խանձարուրների համար):

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

5. ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՄԱԿԱՆՇՎԱԾՔԻՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Արտադրողը պետք է շարադրի բժշկական նշանակության եւ բժշկական տեխնիկայի արտադրատեսակների մասին տեղեկությունները արտադրատեսակի մականշվածքում եւ փաստաթղթերում: Տեղեկությունները, բացի արտադրատեսակն արտադրողի հասցեից, պետք է պարունակեն շուկայում արտադրատեսակների տեղաբաշխման պաշտպանական եւ շահագործման հատկություններին, իրավական կողմերին առնչվող ցուցանիշների թվարկումը, ինչպես նաեւ ցանկացած այլ տվյալներ, որոնք ենթադրյալ օգտագործողի համար ապահովում են արտադրատեսակների համապատասխան ընտրության եւ օգտագործման հնարավորություն ու կարող են կապված լինել նրա առողջության եւ անվտանգության հետ:

Մականշվածքը զետեղվում է անմիջապես արտադրատեսակի եւ (կամ) դրա

փաթեթվածքի վրա: Մանրէագերծ վիճակում շրջանառության մեջ մտցվող արտադրատեսակների համար մականշվածքը պետք է զետեղվի նաև մանրէագերծ փաթեթվածքի վրա: Արտադրատեսակի վրա մականշվածք չի զետեղվում, եթե այն ունի շատ փոքր չափսեր, կամ հատուկ հատկանիշներ, որոնք թույլ չեն տալիս մականշվածք զետեղել:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

Մականշվածքը պետք է լինի տեսանելի, ընթեռնելի, չջնջվող եւ պետք է զետեղված լինի կամ արտադրատեսակի վրա, կամ դրա օգտագործման ցուցման մեջ: Հնարավորության դեպքում մականշվածքը պետք է զետեղվի առետրային փաթեթվածքի վրա: Մանրէագերծ վիճակում շրջանառության մեջ մտցվող արտադրատեսակների համար մականշվածքը պետք է զետեղվի մանրէագերծ փաթեթվածքի վրա: Մականշվածք չի զետեղվում, եթե արտադրատեսակն ունի շատ փոքր չափսեր կամ հատուկ հատկանիշներ, որոնք թույլ չեն տալիս մականշվածք զետեղել:

Արգելվում է զետեղել այնպիսի նշումներ կամ կատարել այնպիսի մակագրություններ, որոնք կարող են մոլորեցնել երրորդ կողմերին՝ շուկայում այդ արտադրանքի շրջանառության նշանով կատարված մականշվածքի նշանակության կամ գրաֆիկական պատկերման առնչությամբ: Արտադրատեսակի, դրա փաթեթվածքի կամ օգտագործման ցուցման վրա կարելի է կատարել ցանկացած այլ մակնշում՝ պայմանով, որ այն բացասաբար չի ազդի մականշվածքի տեսանելիության եւ ընթեռնելիության վրա:

Անմիջապես արտադրատեսակի վրա զետեղվող մականշվածքը պետք է ներառի՝ արտադրողի անվանումը եւ (կամ) նրա առետրային նշանը, արտադրատեսակի անվանումը, չափսերը, զանգվածը, էլեկտրասնուցումը, գործարանային համարը (անհրաժեշտության դեպքում), արտադրման ամսաթիվը (տարին) (ԲՏԱ-ների համար), պիտանելիության ժամկետը կամ պիտանելիության ժամկետի ավարտը, այն նորմատիվ փաստաթուղթը, որի պահանջներին համապատասխանում է արտադրատեսակը, շրջանառության նշանը, արտադրողի

տեխնիկական փաստաթղթերին համապատասխան այլ տեղեկություններ:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

Արտադրատեսակի փաթեթվածքի վրա զետեղվող մականշվածքը պետք է պարունակի՝ արտադրող երկրի անվանումը, արտադրողի անվանումը, իրավաբանական հասցեն եւ առետրային նշանը, արտադրատեսակի անվանումը, այն նորմատիվային փաստաթուղթը, որի պահանջներին համապատասխանում է արտադրատեսակը, չափսերը, զանգվածը (անհրաժեշտության դեպքում), արտադրատեսակի խնամքի եղանակները, արտադրության տարեթիվը (ԲՏԱ-ների համար), պիտանելիության ժամկետը կամ պիտանելիության ժամկետի մարման ամսաթիվը (ԲՆԱ-ների համար), շրջանառության նշանը, արտադրողի փաստաթղթերին համապատասխան այլ տեղեկություններ:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

ԲՏԱ-ների վրա տեղեկությունները պետք է նշվեն ռելիեֆային եղանակով (դրոշմատպում, փորագրում, ձուլում, դրոշմահատում): Թույլատրվում է տեղեկությունները նշել պատկերագրի ձևով, ինչպես նաեւ դժվարությամբ հեռացվող ներկով՝ անմիջապես արտադրատեսակի վրա: Տեղեկությունները պետք է լինեն դյուրընթեռնելի եւ չճնշվեն արտադրանքի պահպանման, փոխադրման, իրացման եւ ըստ նշանակության օգտագործման ժամանակ:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշման խմբագրությամբ)

Մականշվածքը պետք է շարադրված լինի ռուսերենով: Թույլատրվում է այլ լեզուների լրացուցիչ օգտագործում:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի մարտի 2-ի թիվ 571 որոշման խմբագրությամբ)

Արտադրատեսակների փաթեթվածքները պետք է մականշվեն պատկերագրերով

(նշաններով եւ (կամ) տեքստով), որոնցով գրավոր ցուցումներ են տրվում արտադրատեսակների պահպանման եւ (կամ) փոխադրման համար արտադրողի կողմից սահմանված պայմանների մասին՝ նորմատիվային (շահագործման) փաստաթղթերին համապատասխան:

Մականշվածքում նշվում են բոլոր անհրաժեշտ տվյալները, որոնք ապահովում են արտադրանքի անվտանգ շահագործումը՝ դրա հիմնական տեխնիկական բնութագրերը, նախազգուշական գրությունները, վտանգի նշանները (մագնիսական, լազերային կամ այլ ԲՏԱ-ների համար. տվյալներ այն նյութերի մասին, որոնցից պատրաստված են ԲՆԱ-ները եւ այլն), անհատական պաշտպանության միջոցների օգտագործման անհրաժեշտության վերաբերյալ պահանջները, անվտանգ հեռավորությունները կամ շահագործման թույլատրելի տեւողությունը եւ այլն:

Բժշկական տեխնիկայի արտադրատեսակների շահագործումն իրականացվում է որոշակի արտադրատեսակների համար կազմված նորմատիվ փաստաթղթերի եւ սանիտարական օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթերի համաձայն, որոնք պարունակում են ԲՏԱ-ների համապատասխան բնութագրերին ներկայացվող պահանջներ:

ԲՏԱ-ների շահագործման ընթացքում անվտանգության վերաբերյալ այն պահանջները, որոնք նշված են հատուկ ցուցանակների վրա, ինչպես նաեւ նախազգուշական նշանները եւ մակագրությունները տեղադրվում են արտադրատեսակի տեսանելի մասերում:

Արտադրողը պետք է տեղեկություններն այնպես տրամադրի, որ հնարավոր լինի ընդունել համապատասխան նախազգուշական միջոցներ եւ ապահովել բոլոր վտանգավոր գործոնների նկատմամբ համապատասխան հսկողությունը՝ պաշտպանական միջոցառումների ամբողջ համալիրի օգտագործմամբ:

Առողջության համար պոտենցիալ մեծ վտանգ ներկայացնող ԲՏԱ-ների (ոլտրամանուշակագույն սարքեր, լազերային արտադրատեսակներ եւ այլն) օգտագործողը պետք է նախազգուշացվի առկա ռիսկի մասին: Արտադրատեսակների վտանգավորությունը նշվում է համապատասխան ձեւով:

Բնակչության կողմից կենցաղում օգտագործման համար նախատեսված բժշկական տեխնիկայի արտադրատեսակների կիրառումը պետք է իրականացվի ըստ բժշկի նշանակման՝ բժշկական հանձնարարականներին համապատասխան:

Ուլտրամանուշակագույն ճառագայթման սարքերը մակնշվում են նախազգուշական գրությամբ՝ «ՈւՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Ուլտրամանուշակագույն ճառագայթումը կարող է առաջացնել աչքի եւ մաշկի վնասվածք: Ուշադիր ծանոթացեք ցուցման հետ: Դրեք արտադրատեսակի հետ տրամադրված պաշտպանիչ ակնոցը:» Գեղեցկության սրահներում եւ նույնանման վայրերում կիրառման համար նախատեսված ուլտրամանուշակագույն ճառագայթման սարքերի համար նախազգուշական գրությունները կարող են ներկայացվել ազդագրի վրա, որը մշտապես ամրացված է ուլտրամանուշակագույն ճառագայթման սարքի մոտակայքում:

Այն ուլտրամանուշակագույն ճառագայթման սարքերը, որոնց պայծառությունը գերազանցում է 100000 քր/մ²-ը, մակնշվում են նախազգուշական գրությամբ՝ «Հզոր լույս: Չնայել ճառագայթիչին»:

Ուլտրամանուշակագույն ճառագայթներով ճառագայթահարման կայանքները, որոնք նախատեսված են շրջակայքում մարդկանց բացակայությամբ շահագործման համար, մակնշվում են համապատասխան նախազգուշական գրությամբ:

Տարբեր դասերի լազերային արտադրատեսակները մակնշվում են հետեւյալ նախազգուշական գրություններով՝ «Փնջին չնայել», «Լազերային ճառագայթում», «Խուսափեք անմիջական եւ ցրված ճառագայթներով աչքի եւ մաշկի ճառագայթումից», «Լազերային բացվածք (ապերտուր)» եւ այլն՝ լազերային արտադրատեսակի դասի նշումով: Լազերային արտադրատեսակները, որոնք ճառագայթում են առաջացնում սպեկտրի անտեսանելի մասում, մակնշվում են համապատասխան նախազգուշացնող գրությամբ՝ «Անտեսանելի լազերային ճառագայթում» եւ այլն:

Շահագործման փաստաթղթերի «Անվտանգության վերաբերյալ պահանջներ» բաժիններն ընդգրկում են արտադրանքի անվտանգ շահագործման ապահովման

մասին հիմնական պահանջները, ինչպես նաև արտադրանքի արտադրության մասին հիմնական պահանջները սանիտարական օրենսդրության հիմնական փաստաթղթերի համաձայն՝ կատարելով հղումներ այդ փաստաթղթերին, այդ թվում՝ աշխատավայրերում արտադրական սարքավորումների օգտագործման եւ վնասակար գործոնների մակարդակների, կոլեկտիվ եւ անհատական պաշտպանության միջոցների, աշխատանքի ռեժիմների, աշխատողներին պարբերական բժշկական ստուգման եւ (անհրաժեշտության դեպքում) արտադրական հսկողության ենթարկելու վերաբերյալ պահանջներ: Այս բաժնում պետք է նշվի, որ արտադրանքը պետք է անվտանգ լինի այն արտադրելիս եւ կիրառելիս ու այդ արտադրանքի համար պետք է տրվի պատշաճ կերպով ձեւակերպված սանիտարահամաճարակաբանական եզրակացություն:

**ՄՄ ԱՏԳ ԱԱ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ
ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՈՐՈՆՔ ԵՆԹԱԿԱ ԵՆ
ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ՝ ՍՈՒՅՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ
ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՈՒՄՈՎ**

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի
16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)

Ապրանքի դասակարգումը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի	Ապրանքի կրճատ անվանումը
Խումբ 30. Դեղագործական արտադրանք	
3005	Բամբակ, թանգիֆ, քինտեր եւ նույնանման ապրանքներ(օրինակ՝ վիրակապման նյութեր, կաշուն սպեղանիներ, թրջոցալաթեր)՝ ներծծված կամ ծածկված դեղագործական նյութերով կամ բաժնեծրարված ձեւերով կամ փաթեթավորումով՝ մանրաձախ առետրի համար, որոնք նախատեսված են բժշկության, վիրահատության, ատամնաբուժության կամ անասնաբուժության մեջ օգտագործելու համար.
3005 10 000 0	Վիրակապման հարակցային նյութ եւ այլ արտադրատեսակներ, որոնք ունեն կաշուն շերտ,
3005 90	այլ՝
3005 90 100 0	բամբակ եւ բամբակից ստացված արտադրատեսակներ,
3005 90 310 0	թանգիֆ եւ թանգիֆից ստացված արտադրատեսակներ
3005 90 510 0	Հանվել է: –Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշում
3005 90 500 0	Այլ: (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)
3005 90 990 0	Այլ:
3006	Դեղագործական արտադրանք, որը նշված է այս խմբին վերաբերող 4-րդ ծանոթագրության մեջ՝
3006 10-ից	Վիրաբուժական, մանրէազերծ աղելար, նույնանման

	մանրէագերծ նյութեր՝ կարեր դնելու համար (ներառյալ մանրէագերծ ներծծվող վիրահատական կամ ատամնաբուժական թելերը) եւ մանրէագերծ հարակցային գործվածքներ՝ վերքերի վիրաբուժական փակման համար՝
3006 70 000 0-ից	Դոնդողանման պատրաստուկներ, որոնք նախատեսված են բժշկության մեջ վիրահատությունների կամ ֆիզիկական հետազոտությունների ժամանակ որպես մարմնի մասերի համար քսուքներ կամ մարմնի եւ բժշկական գործիքների միջեւ որպես կապակցող ազդանյութեր օգտագործելու համար:
3006 91 000 0	Հարմարանքներ, որոնք նույնացվում են որովայնային օգտագործման հարմարանքների հետ (4-րդ տողատակի ծանոթագրություն)
Խումբ 40.	
Կաուչուկ, ռետին եւ դրանցից պատրաստված արտադրատեսակներ	
4001 10 000 0	Բնական կաուչուկե լատեքս՝ նախավուկանացված կամ չնախավուկանացված
4002 11 000 0	Լատեքս
4014-ից	Հիգիենիկ արտադրատեսակներ՝ պատրաստված վուկանացված ռետինից, բացի կոշտ ռետինից, կոշտ ռետինից պատրաստված կցամասերով կամ առանց դրանց. մանկական ծծակների տարբեր տեսակներ եւ նույնանման արտադրատեսակներ
4015	Հագուստ եւ հագուստի պարագաներ (ներառյալ ձեռնոցները, թաթմանները եւ կիսաձեռնոցները)՝ պատրաստված վուկանացված ռետինից՝ բացի կոշտ ռետինից եւ բժշկական նպատակներով օգտագործվող ռետինից
4016 91 000 0-ից	Հատակի ծածկոցներ վուկանացված ռետինից, բացի կոշտ ռետինից, որն օգտագործվում է ներքին սենքերի համար (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)
Խումբ 48	
Թուղթ եւ սովարաթուղթ. արտադրատեսակներ թղթային զանգվածից, թղթից կամ սովարաթղթից	
4803 00	Զուգարանի թղթե անձեռոցիկներ կամ անձեռոցիկներ դեմքի համար, սրբիչներ կամ խանձարուրներ եւ կենցաղ-տնտեսական կամ սանիտարահիգիենիկ նշանակության թղթի այլ տեսակներ, թաղանթանյութի բամբակ եւ թաղանթանյութի մանրաթելից պաստառ՝ խորշոմավորված կամ հարթ մակերեսույթով, ծալքավոր կամ ոչ ծալքավոր, դրոշմատպված կամ առանց դրոշմատպման, ծակոտած կամ չծակոտած, ներկված կամ չներկված մակերեսով, տպվածքով կամ առանց տպվածքի, գլանափաթեթներով

	կամ թերթերով
4805-ից	Սննդամթերքի փաթեթավորման համար թուղթ, սննդի արտադրության մեջ օգտագործվող քամիչ թուղթ եւ քամիչ ստվարաթուղթ
4811 10 000 0-ից 4811 41 900 0-ից 4811 49 000 0-ից 4811 51 000 1 4811 59 000 1 4811 90 000 0-ից 4823 90 859 5-ից	Թղթի կամ ստվարաթղթի հիմքով ծածկեր հատակի համար, ըստ չափի կտրված կամ չկտրված (ներքին սենքերի համար)
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)	
4814	Պաստառներ եւ պատի նույնանման այլ պատվածքներ, պատուհանների համար թափանցիկ թուղթ
4818	Զուգարանի թուղթ եւ նույնանման թուղթ, թաղանթանյութի բամբակ կամ թաղանթանյութի բամբակից պաստառ կամ թաղանթանյութի մանրաթելից պաստառ՝ կենցաղ-տնտեսական կամ սանիտարահիգիենիկ նշանակության, 36 սմ-ից ոչ ավելի լայնությամբ գլանափաթեթներով կամ ըստ չափի կամ ձեւի կտրտած. թաշկինակներ, կոսմետիկ անձեռոցիկներ, սրբիչներ, սփռոցներ, սեղանի անձեռոցիկներ, մանկական խանձարուրներ, խճուծներ (տամպոններ), սավաններ եւ կենցաղ-տնտեսական կամ բժշկական նշանակության նույնանման արտադրատեսակներ, հագուստեղեն եւ հագուստի պարագաներ՝ թղթանյութի զանգվածից, թղթից, թաղանթանյութի բամբակից կամ թաղանթանյութի մանրաթելի պաստառից
9619 00	Կանացի հիգիենիկ միջադիրներ եւ խճուծներ (տամպոններ), մանկական խանձարուրներ եւ տակդիրներ ու նույնանման սանիտարահիգիենիկ արտադրատեսակներ Կանացի հիգիենիկ միջադիրներ, խճուծներ (տամպոններ) եւ նույնանման արտադրատեսակներ
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)	
9619 00 110 0	կանացի հիգիենիկ միջադիրներ
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)	
9619 00 130 0	խճուծներ (տամպոններ)
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)	
9619 00 190 0	Այլ

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)	
9619 00 210 0, 9619 00 290 0	Մանկական խանձարուրներ եւ տակդիրներ ու նույնանման սանիտարահիգիենիկ արտադրատեսակներ
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)	
4818 90 100 0	Վիրաբուժական, բժշկական կամ հիգիենիկ նպատակներով կիրառվող արտադրատեսակներ՝ մանրածախ առևտրի համար չբաժնետրարված
Խումբ 56	
Բամբակ, թաղիք կամ նրբաթաղիք եւ չգործված կտորեղեն. հատուկ մանվածք. լարաններ, ճոպաններ, պարաններ, հաստ պարաններ եւ դրանցից պատրաստված արտադրատեսակներ	
5601	Մանածագործական նյութերից բամբակ եւ դրանից ստացվող արտադրատեսակներ, մանածագործական մանրաթելեր, որոնք երկարությամբ չեն գերազանցում 5 մմ-ը (նրբախավ), մանածագործական փոշի եւ հանգուցիկներ
9619 00 310 0, 9619 00 390 0	Կանացի հիգիենիկ միջադիրներ եւ խճուճներ (տամպոններ), մանկական խանձարուրներ եւ տակդիրներ ու բամբակից պատրաստված նույնանման սանիտարահիգիենիկ արտադրատեսակներ
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)	
5601 10 100 0	Հանվել է: -Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշում
5601 10 900 0	Հանվել է: -Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշում
5601 21	Բամբակ եւ բամբակից ստացված այլ արտադրատեսակներ, բամբակե մանրաթելերից,
5601 21 100 0	հիգրոսկոպիկ,
5601 21 900 0	Այլ
5602	Թաղիք կամ նրբաթաղիք՝ ներծծված կամ չներծծված, պատվածքով կամ առանց պատվածքի, կրկնակված կամ չկրկնակված
5603	Չգործված կտորեղեն՝ ներծծված կամ չներծծված, պատվածքով կամ առանց պատվածքի, կրկնակված կամ չկրկնակված
Խումբ 90	
Գործիքներ եւ ապարատներ՝ օպտիկական, լուսանկարչական, կինեմատոգրաֆիական, չափիչ, հսկիչ, ճշգրիտ, բժշկական կամ վիրաբուժական, դրանց մասերը եւ պարագաները	
9003	Շրջանակներ եւ արմատուրա՝ ակնոցների, պաշտպանիչ ակնոցների կամ նույնանման օպտիկական սարքերի համար, եւ դրանց մասերը,

9003 11 000 0	ալյաստմասսայից շրջանակներ եւ արմատուրա,
9004 10	արեւապաշտպան ակնոցներ
9013 20 000 0	Լազերներ, բացի շրջանակների եւ արմատուրաների լազերային դիողներից
9018	Բժշկության, վիրաբուժության, ատամնաբուժության կամ անասնաբուժության մեջ օգտագործվող սարքեր եւ սարքվածքներ՝ ներառյալ սցինտիգրաֆիկական ապարատները, էլեկտրաբժշկական այլ ապարատներ եւ սարքեր՝ տեսողությունը հետազոտելու համար. էլեկտրադիագնոստիկ ապարատներ (ներառյալ ֆունկցիոնալ ախտորոշման հետազոտությունների կամ ֆիզիոլոգիական հարաչափերի հսկողության համար նախատեսված ապարատները)
9018 11 000 0	էլեկտրասրտագրիչներ
9018 12 000 0	ուլտրաձայնային ներզննման ապարատներ,
9018 13 000 0	մագնիսառեզոնանսային տոմոգրաֆներ,
9018 14 000 0	սցինտոգրաֆիկական ապարատներ,
9018 19	այլ,
9018 19 100 0	երկու կամ ավելի հարաչափերի միաժամանակյա հսկողության համար ապարատներ,
9018 19 900 0	այլ
9018 20 000 0	ուլտրամանուշակագույն կամ ենթակարմիր ճառագայթման օգտագործման վրա հիմնված ապարատներ,
9018 31	ներարկիչներ, ձողախողովակներ (կաթետերներ) եւ նույնանման գործիքներ՝ ներարկիչներ՝ ասեղներով կամ առանց ասեղների
9018 31 100	ալյաստմասսայից՝
9018 31 100 1	ինսուլինի համար՝ 2 մլ-ից ոչ ավելի ծավալով,
9018 31 100 9	այլ,
9018 31 900	այլ՝
9018 31 900 1	ինսուլինի համար՝ 2մլ-ից ոչ ավելի ծավալով,
9018 31 900 9	այլ,
9018 41 000 0	բոր մեքենաներ՝ այլ ատամնաբուժական սարքավորումների հետ միասնական հիմքով համատեղված կամ չհամատեղված
9018 90 100 0	արյան ճնշումը չափելու համար նախատեսված գործիքներ եւ սարքավորումներ,
9018 90 200 0	ներդիտակներ,
9018 90 300 0	հեմոդիալիզի սարքավորումներ (արհեստական երիկամներ, արհեստական երիկամների ապարատներ եւ դիալիզորդներ),
9018 90 500	արյան փոխներարկման համար նախատեսված ապարատներ՝
9018 90 500 1	Արյան, արյան փոխարինիչների եւ ինֆուզիոն լուծույթների վերցման ու փոխներարկման համար նախատեսված համակարգեր,

9018 90 500 9	այլ,
9018 90 600 0	անզգայացման համար ապարատներ եւ սարքվածքներ
9018 90 840 1	ուլտրաձայնային լիթոտրիպտորներ, (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)
9018 90 750 0	նյարդային համակարգի գործունեությունը խթանելու համար ապարատներ,
9018 90 840 9	այլ, (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)
9019	Սարքվածքներ մեքենաբուժության (մեխանոթերապիա) համար, մերսման ապարատներ, կարողությունների որոշման նպատակով հոգեբանական թեստերի համար ապարատներ, օզոնային, թթվածնային եւ աերոզոլային թերապիայի, արհեստական շնչառության համար կամ այլ թերապեւտիկ շնչառական ապարատներ
9019 10	Սարքվածքներ մեքենաբուժության (մեխանոթերապիայի) համար, մերսման ապարատներ, կարողությունների որոշման նպատակով հոգեբանական թեստերի համար ապարատներ՝
9019 10 100 0	էլեկտրական թրթռամերսման ապարատներ, (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)
9019 10 900	այլ՝
9019 10 900 1	հիդրոմերսման լոզարաններ եւ ցնցղախցիկներ,
9019 10 900 9	այլ,
9019 20 000 0	Օզոնային, թթվածնային եւ աերոզոլային թերապիայի, արհեստական շնչառության համար եւ այլ թերապեւտիկ շնչառական ապարատներ:
9020 00 000 0	Այլ շնչառական սարքավորումներ եւ գազային դիմակներ, բացի պաշտպանական դիմակներից, առանց մեխանիկական դետալների եւ փոխովի զտիչների:
9021	Օրթոպեդիկ հարմարանքներ՝ ներառյալ հենակները, վիրաբուժական գոտիները, կալանդները, բեկակալները եւ այլ հարմարանքներ՝ կոտրվածքները բուժելու համար, արհեստական մարմնի մասեր, լսողական ապարատներ եւ այլ հարմարանքներ, որոնք կրում են մարմնի վրա՝ օրգանի արատը կամ կորցրած աշխատունակությունը փոխհատուցելու համար.
9021 10	Հարմարանքներ՝ օրթոպեդիկ կամ կոտրվածքները բուժելու համար՝
9021 10 100 0	Օրթոպեդիկ հարմարանքներ,
9021 10 900 0	Բեկակալներ եւ կոտրվածքները բուժելու համար այլ հարմարանքներ,
9021 40 000 0	Լսողական ապարատներ՝ բացի մասերից եւ պարագաներից,

9021 50 000 0	սրտախթանիչներ՝ բացի մասերից եւ պարագաներից, (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 125 որոշման խմբագրությամբ)
9022 12 000 0	Համակարգչային տոմոգրաֆներ,
9022	Ապարատներ՝ հիմնված ռենտգենյան ալֆա, բետա եւ գամմա ճառագայթների օգտագործման վրա, նախատեսված կամ չնախատեսված բժշկական, վիրաբուժական, ատամնաբուժական կամ անասնաբուժական օգտագործման համար՝ ներառյալ ռենտգենաչափիչ եւ ռադիոթերապեւտիկ ապարատները, ռենտգենյան խողովակներն ու ռենտգենյան ճառագայթման այլ գեներատորներ, բարձր լարման գեներատորները, վահանները եւ ղեկավարման պուլտերը, էկրանները, սեղանները, բազկաթոռները եւ հետազոտության ու բուժման համար նույնանման այլ արտադրատեսակներ, ապարատներ՝ հիմնված ռենտգենյան ճառագայթների օգտագործման վրա, նախատեսված կամ չնախատեսված բժշկական, վիրաբուժական, ատամնաբուժական կամ անասնաբուժական օգտագործման համար՝ ներառյալ ռենտգենաչափիչ եւ ռադիոթերապեւտիկ ապարատները.
9030	Օսցիլոսկոպներ, սպեկտրոմետրեր, այլ սարքեր եւ ապարատներ՝ էլեկտրական մեծությունները չափելու կամ հսկելու համար, բացի 9028 ապրանքային դիրքում նշված չափիչ սարքերից. սարքեր եւ ապարատներ՝ ալֆա, բետա, գամմա, ռենտգենյան, տիեզերական կամ այլ իոնացնող ճառագայթումները հայտնաբերելու կամ չափելու համար,
<p>Խումբ 94</p> <p>Կահույք, անկողնային պարագաներ, ներքնակներ, ներքնակի հիմնամասեր, բազմոցի բարձիկներ եւ կահույքի նույնանման լցունված պարագաներ, այլ տեղում չհիշատակված կամ չներառված լամպեր եւ լուսային սարքավորումներ, լուսային ցուցանակներ, լուսային տախտակներ՝ անունով կամ անվանումով կամ հասցեով եւ նույնանման արտադրատեսակներ, հավաքովի շինարարական կառուցվածքներ</p>	
9402	Կահույք՝ բժշկական, վիրաբուժական, ատամնաբուժական կամ անասնաբուժական (օրինակ՝ վիրահատական սեղաններ, հիվանդների զննման համար սեղաններ, մեխանիկական հարմարանքներով հիվանդանոցային մահճակալներ, ատամնաբուժական բազկաթոռներ). բազկաթոռներ եւ նույնանման բազկաթոռներ հարմարանքներով՝ պտտման ու միաժամանակ թեքման եւ բարձրացման համար:

Հսկողության ենթակա արտադրանքին (ապրանքներին) եւ դրանց անվտանգության ցուցանիշներին ներկայացվող հիմնական պահանջները (բժշկական տեխնիկայի եւ բժշկական նշանակության արտադրատեսակներ)

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի մարտի 2-ի թիվ 571 որոշման խմբագրությամբ)

Թիվ h/h	Արտադրանքի (ապրանքի) անվանումը	Սանիտարահամաճարակաբանական պահանջները		Ծանոթագրու- թյուններ
		ցուցանիշ	ՄԹԲ-ի թույլատրելի մակարդակները, մգ/դմ ³ , ոչ ավելի	
18.1. Բժշկական նշանակության արտադրատեսակներ				
1.1.	Վիրակապման միջոցներ, վերքը կարելու եւ օժանդակ նյութեր Վիրակապեր, ժապավեններ, բինտեր, սպեղանիներ, հիգիենիկ անձեռոցիկներ	Սանիտարահիգիենիկ ցուցանիշներ Հոտաչափություն (արտադրատեսակների նմուշների պատրաստման համար օգտագործվող նյութերի հոտը)	2-x բալից ոչ ավելի	
1.1.1		Ջրային լուծամզուկների վիճակի սանիտարաքիմիական ցուցանիշներ		
		Հոտը Գույնը Պղտորությունը pH pH-ի փոփոխությունը Օքսիդանելիությունը Բրոմացումը	1 բալից ոչ ավելի Սանդղակով 20°-ից ոչ ավելի 2-x բալից ոչ ավելի 6 – 9 միավոր pH-ի սահմաններում +/-1 միավոր pH 5 մգO ₂ /լ-ից ոչ ավելի 0,3 մգBr ₂ /լ-ից ոչ ավելի	

ՈՒՄ-կլանում՝ 220-360 նմ երկարությամբ ալիքների տիրույթում	Օ. Կ. 0.3 միավորից ոչ ավելի 1,0 մլ 0,0,2 H -ից ոչ ավելի p-րա Na ₂ S ₂ O ₃	
Վերականգնող խառնուկներ		
Վնասակար նյութերի միգրացիան դեպի թորած ջուր		Արտադրատեսակների պատրաստման համար օգտագործվող նյութերի բաղադրյալ կազմի առկայության դեպքում հսկվող նյութերի ամբողջական ցանկի սահմանումը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով աղյուսակի 1-ին հավելվածը:
Բնական մանրաթելեր՝ - ֆորմալդեհիդ - էթիլացետատ - Ացետոն Մնացորդային ակտիվ քլոր	0.1 մգ/լ-ից ոչ ավելի 0.1 մգ/լ-ից ոչ ավելի 0.1 մգ/լ-ից ոչ ավելի բացակայություն	
Արհեստական մանրաթելեր (վիսկոզա, ացետատներ)՝ - ացետալդեհիդ - ֆորմալդեհիդ	0.2 մգ/լ-ից ոչ ավելի 0.1 մգ/լ-ից ոչ ավելի	
Քիմիական մանրաթելեր եւ պոլիմերներ.		
Պոլիէթերային (ՊԵ, լավսան)՝ - էթիլենգլիկոլ - դիմեթիլտերեֆտալատ - ֆորմալդեհիդ	1.0 մգ/լ-ից ոչ ավելի 1.5 մգ/լ-ից ոչ ավելի 0.1 մգ/լ-ից ոչ ավելի	
Պոլիամիդային (ՊԱ, կապրոն, նեյլոն)՝ - կապրոլակտամ - հեքսամեթիլենդիամին - ֆորմալդեհիդ	0.5 մգ/լ-ից ոչ ավելի 0,01 մգ/լ-ից ոչ ավելի 0,1 մգ/լ-ից ոչ ավելի	

<p>Հետեւյալ տեսակի ռետիններ (կախված բաղադրությունից)`</p> <p>Կաուչուկներ` բութադիեն-աքրիլոնիտրիլային, բութադիենային եւ այլն</p> <ul style="list-style-type: none"> - ակրիլաթթվի նիտրիլ <p>Ստիրոլային (բութադիեն-ստիրոլային, CPC եւ այլն)</p> <ul style="list-style-type: none"> - ստիրոլ <p>Մեթիլենստիրոլային (բութադիեն-մեթիլստիրոլային, CPMC եւ այլն)</p> <ul style="list-style-type: none"> -ալֆա-մեթիլստիրոլ <p>Իզոպրենային (սինթետիկ իզոպրենային կաուչուկ)</p> <ul style="list-style-type: none"> - իզոպրեն <p>Բոլոր ռետիններից եւ լատեքսներից</p> <ul style="list-style-type: none"> - թիուրամ - ցիմատ 0,05 - էթիլցիմատ 0,05 - դիֆենիլզուանիդին - կապտաքս 0,4 - ալտաքս - դիբութիլֆտալատ - ցինկի իոններ 	<p>0,02 մգ/լ-ից ոչ ավելի</p> <p>0,01 մգ/լ-ից ոչ ավելի</p> <p>0,1 մգ/լ-ից ոչ ավելի</p> <p>0,01 մգ/լ-ից ոչ ավելի</p> <p>0,5 մգ/լ-ից ոչ ավելի</p> <p>0,03 մգ/լ-ից ոչ ավելի</p> <p>0,01 մգ/լ-ից ոչ ավելի</p> <p>1,0 մգ/լ-ից ոչ ավելի</p> <p>0,15 մգ/լ-ից ոչ ավելի</p> <p>0,15 մգ/լ-ից ոչ ավելի</p> <p>0,25 մգ/լ-ից ոչ ավելի</p> <p>1,0 մգ/լ-ից ոչ ավելի</p>
<p>Պոլիակրիլոնիտրիլային (ՊԱՆ, նիտրոն)`</p> <ul style="list-style-type: none"> - ակրիլոնիտրիլ - վինիլացետատ 	<p>0,02 մգ/լ-ից ոչ ավելի</p> <p>0,2 մգ/լ-ից ոչ ավելի</p>
<p>Պոլիվինիլքլորիդային (ՊՎԶ, քլորին)`</p> <ul style="list-style-type: none"> - քլորային վինիլ - բենզոլ - դիօկտիլֆտալատ - դիբութիլֆտալատ <p>Պոլիվինիլսպիրտային (ՊՎՍ, վինոլ)`</p> <ul style="list-style-type: none"> - վինիլացետատ - վինիլ քլորային - ֆորմալդեհիդ 	<p>0,01 մգ/լ-ից ոչ ավելի</p> <p>0,01 մգ/լ-ից ոչ ավելի</p> <p>2,0 մգ/լ-ից ոչ ավելի</p> <p>0,2 մգ/լ-ից ոչ ավելի</p> <p>0,2 մգ/լ-ից ոչ ավելի</p> <p>0,01 մգ/լ-ից ոչ ավելի</p> <p>0,1 մգ/լ-ից ոչ ավելի</p>

- սուր, ենթասուր, քրոնիկ թունայնություն՝ ներառյալ մարդու առողջության վրա ազդեցության սպեցիֆիկ եւ հեռավոր էֆեկտների գնահատականը (ալերգենություն, ռեպրոդուկտիվ թունայնություն, տերատոգենություն, մուտագենություն, քաղցկեղածնություն, էմբրիոտոքսիկություն)։

- արտադրող ֆիրմայի տեխնիկական արտադրանքին գրանցվող ախտահանիչ միջոցի տեխնիկական արտադրանքի (սուբստանցիաների, գործող նյութերի) համապատասխանությունը։

- տեխնիկական արտադրանքում վտանգավոր (թունաբանական տեսանկյունից կարելի է) խառնուկների եւ մետաբոլիտների առկայությունը։

- աշխատանքային գոտու օդում, բնակավայրերի մթնոլորտային օդում, ջրամբարների ջրում եւ հողի մեջ գործող նյութերի հիգիենիկ նորմերը՝ շրջակա միջավայրի օբյեկտներում գործող նյութերի պարունակության մոնիտորինգի (առկայության դեպքում) օգտագործմամբ։

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

Միկրոօրգանիզմների արտադրական շտամմների (բակտերիաների) եւ բիոպրեպարատների պատրաստի ձեւերի համար գնահատման չափորոշիչներն են համարվում՝

- շտամմի ծագումը եւ աճեցման պայմանները, վերջինիս նույնացման եղանակը, շտամմի տարածումը։

- բակտերիաների պաթոգենությունը (վարակայնությունը (վիրուլենտությունը), թունավորությունը, տոքսիգենությունը) երկու տեսակի լաբորատոր կենդանիների

վրա ներդրովայնաթաղանթային եւ (կամ) ներստամոքսային միանգամյա ներմուծման ժամանակ, ինչպես նաեւ վերին շնչուղիների միջոցով ջերմարյունների օրգանիզմ ներթափանցելիս.

- աչքերի լորձաթաղանթի վրա գրգռիչ ազդեցությունը.

- մաշկի եւ վերին շնչուղիների միջով ներթափանցելիս՝ միկրոօրգանիզմների սենսիբիլիզացնող եւ իմունոտոքսիկ ազդեցությունը.

- քրոնիկ գիտափորձում վնասակարության սահմանափակող չափորոշիչները.

Ախտահանիչ միջոցի պատրաստուկային ձեւի գնահատման չափորոշիչները՝

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

- պատրաստուկային ձեւի բաղադրիչների տոքսիկոլոգիական բնութագիրը (լիցքանյութեր, կայունացուցիչներ, էմուլգատորներ, լուծիչներ եւ այլն) գործող ստանդարտների, CAS, IUPAC համարների, REACH համակարգում գրանցման նշմամբ.

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

- սուր պերօրալ թունայնություն.

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

- մաշկի վրա քսելու դեպքում սուր թունայնությունը.

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

- սուր ինհալյացիոն թունայնությունը (ստատիկ հրանցք).

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

- սուր պարենտերալ թունայնություն (որովայնախոռոչ՝ մանրէազերծման միջոցների համար)։

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

- տեղային գրգռիչ ազդեցություն մաշկի եւ լորձաթաղանթի վրա։

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

- սենսիբիլիզացնող ազդեցություն։

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

- ենթասուր պերորալ թունայնություն (կումուլյատիվ հատկություններ), կումուլյացիայի գործակից (ռոդենտիցիդներ, ախտահարող միջոցներ՝ սննդարդյունաբերության եւ հանրային սննդի համար)։

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

- ենթասուր վերմաշկային թունայնություն (մաշկային հակասեպտիկներ, պեդիկուլիցիդներ, ռեպելենտներ)։

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

- ենթասուր ինհալյացիոն թունայնություն (ինսեկտիցիդներ, ախտահանող միջոցներ)։

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

- իրական վտանգի գնահատումն առաջարկվող ռեժիմներում, նորմերում եւ մշակման եղանակներում,

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622

որոշման խմբագրությամբ)

- ախտահանող միջոցների քիմիական եւ ֆիզիկական հատկությունները՝ ներառյալ դրանց ցնդականությունը, կայունությունը, այլ միացությունների հետ համատեղելիությունը, հրդեհային վտանգավորությունը եւ պայթյունավտանգությունը (տեղեկությունները տրամադրվում են արտադրողի կողմից)։

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

- ներկրվող ախտահանող միջոցների վտանգավորության գնահատման մասով ՊԳԿ/ԱՄԿ (դրանց առկայության դեպքում) կամ Եվրոպական միության կամ ԱՄՆ շրջակա միջավայրի պաշտպանության հարցերով գործակալության (EPA) տվյալները

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

Նշված չափորոշիչները համարվում են ներկրվող ախտահանող միջոցների վտանգավորության գնահատման եւ անցկացվող՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, վերջիններիս սանիտարահամաճարակաբանական փորձաքննության հիմքը։

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

Վարակազերծման միջոցների պատրաստուկային ձևերի սպեցիֆիկ էֆեկտիվությունը բակտերիաների, սնկերի եւ վիրուսների նկատմամբ։ Սպեցիֆիկ էֆեկտիվության գնահատումն անհրաժեշտ է անցկացնել առնվազն երկու լաբորատորիայում։

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման խմբագրությամբ)

4. ԱԽՏԱՀԱՆՈՂ, ՄԻՋԱՏԱՍՊԱՆ, ԿՐԾՈՂԱՍՊԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵԶԻՆՖԵԿՏՈՒՄԻ ԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշման
խմբագրությամբ)

Ախտահանիչ միջոցների դեզինֆեկտոլոգիական փորձաքննությունն իրականացնում են սահմանված կարգով հավատարմագրված կազմակերպությունների համապատասխան ցանկում ընդգրկված կազմակերպությունները, որոնք ունեն անհրաժեշտ գիտական եւ նյութական ապահովում եւ համապատասխան պրոֆիլի ու որակավորման մասնագետներ, Մաքսային միության անդամ պետությունների կողմից սահմանված կարգին համապատասխան:

Ախտահանիչ միջոցների դեզինֆեկտոլոգիական փորձաքննության անցկացման կարգը սահմանվում է Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Արտադրողի (մատակարարի, գրանցվածի) կողմից փորձաքննության համար ներկայացվում են՝

- նորմատիվ փաստաթղթեր (Միջոցի ռեցեպտուրա, տեխնիկական պայմանները (հայրենական արտադրանքի համար) կամ մասնագրեր (ներմուծվող արտադրանքի համար), միջոցի որակի վերահսկման մեթոդները՝ ներառյալ գործող նյութի վերահսկման մեթոդը, միջոցի կիրառման մասով ցուցումները, պիտակները եւ այլն)

- ախտահանիչ միջոցի մասով տոքսիկոլոգիական դոսյե (ներառյալ գործող նյութի, հիմնական բաղադրիչների եւ ընդհանուր առմամբ պատրաստուկային ձեւի բնութագիրը), այդ թվում նաեւ վերջինիս հիգիենիկ նորմերը շրջակա միջավայրի օբյեկտներում (ջուր, օդ, հող)։

- բնօրինակային տարային պիտակով արտադրողի փաթեթում ախտահանիչ միջոցի պատրաստուկային ձեւի նմուշը.

- անվտանգության անձնագիր եւ (կամ) անվտանգության թերթիկ (MSDS), արտադրողի մասնագիր եւ (կամ) հայտարարագիր, որտեղ ներկայացվում են ախտահանիչ միջոցով թունավորվելու դեպքերում առաջին օգնության միջոցները.

- ախտահանիչ միջոցի գործող նյութի ստանդարտ նմուշը.

- պայմանների սպեցիֆիկայի եւ կիրառման օբյեկտներից ելնելով՝ Մաքսային միության անդամ պետություններում կատարվող՝ Մաքսային միության յուրաքանչյուր անդամ պետության տարածքում ախտահանիչ միջոցի գրանցման փորձարկումների արդյունքները:

Դեզինֆեկտոլոգիական փորձաքննության սկզբունքները՝

վերջինիս անցկացման պարտադիր լինելը.

եզրահանգումների գիտական հիմնավորվածությունը.

փորձագետների անկախությունն իրենց լիազորություններն իրականացնելիս.

փորձաքննության անցկացման լիազափությունը.

ուսումնասիրվող նյութերի գաղտնիության պահպանումը.

փորձաքննության անցկացման վճարովի լինելը:

Ախտահանիչ փորձաքննության արդյունքների հիման վրա ձեւակերպվում է հետեւյալ տեղեկությունները պարունակող՝ սահմանված նմուշի փորձագիտական եզրակացությունը՝

ախտահանիչ միջոցի անվանումը (վերջինիս պատրաստուկային ձեւը).

ախտահանիչ միջոցի գործող նյութը (նյութերը) արտադրողը.

պատրաստուկային ձեւի արտադրողը.

ախտահանիչ միջոցի հիգիենիկ բնութագիրը՝ ներառյալ տեխնիկական արտադրանքի մաքրությունը եւ ախտահանիչ միջոցի վտանգավորության դասը

(գործող նորմատիվ փաստաթղթերին համապատասխան).

քիմիական անալիտիկ վերահսկման հիմնական արդյունքները, նպատակային էֆեկտիվության եւ ախտահանիչ միջոցների անվտանգության գնահատականը.

ախտահանիչ միջոցի կիրառման ոլորտը (բնակելի, ոչ բնակելի եւ արտադրական սենքեր, կոմունալ տնտեսության օբյեկտներ, բուժիչ պրոֆիլակտիկ եւ մանկական հաստատություններ, տրանսպորտ, բնակեցված վայրեր ու բնական կայաններ եւ այլն).

նորմատիվ փաստաթղթեր (սանիտարական նորմեր եւ կանոններ, սանիտարահամաճարակաբանական կանոններ, հիգիենիկ պահանջներ, ախտահանիչ միջոցի նպատակային էֆեկտիվության ու անվտանգության նորմատիվ ցուցանիշներ եւ այլն), որոնց համապատասխան պետք է ապահովվեն ախտահանիչ միջոցի հետ անվտանգ վարվելու միջոցները:

Նպատակային էֆեկտիվության մասով ախտահանիչ միջոցների դեզինֆեկտոլոգիական փորձաքննության, միջոցների թունաբանական հիգիենիկ հատկությունների մասին բացասական տեղեկությունների բացահայտման կամ էքսպերիմենտալ հետազոտությունների անցկացման ընթացքում բացասական արդյունքների ստացման համար անհրաժեշտ նյութերի բացակայության դեպքում տրվում է ախտահանիչ միջոցի պետական գրանցման անհարինության մասին հիմնավորված եզրակացությունը:

5. ԱԽՏԱՀԱՆՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՄԱԿԱՆՇՈՒՄԸ

Ախտահանիչ միջոցների համար տարաները (փաթեթները) կատարվում են արտադրանքի պահպանվածությունն ապահովող եւ շրջակա միջավայրի ախտահանիչ միջոցներով աղտոտման հավանականությունը բացառող նյութերից՝ դրանց պահպանման, փոխադրման եւ կիրառման ժամանակ:

Տրանսպորտային մականշումը կատարվում է տարայի վրա տպիչ մեքենաներով, տրաֆարետով կամ պիտակների սոսնձմամբ: Այն պետք է

պարունակի՝ մանիպուլյացիոն նշաններ, դասակարգիչ ծածկագիր, սպառողի համար տեղեկություններ՝ խմբաքանակի համարի, արտադրման ամսաթվի (ամիս, տարի) եւ պահպանման երաշխիքային ժամկետի նշմամբ:

Ագրեսիվ ախտահանիչ միջոցների փաթեթավորման համար տարան (pH 2,0 միավորից պակաս եւ 11,5 միավորից ավելի) պետք է սարքավորված լինի ջրհանով՝ դրանք լցնելու համար:

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշմամբ)

Բաժին 21. Հանքային ջրերին ներկայացվող պահանջները

Հանքային ջրերին ներկայացվող պահանջները

(ԾԱԾԿԱԳԻՐ ՄՄ ԱՏԳ ԱԱ՝ 2201 10)

1. Կիրառման ոլորտը

1. Միասնական սանիտարական կանոնների սույն Բաժնով սահմանվում է բուժիչ եւ պրոֆիլակտիկ նպատակների համար օգտագործման համար նախատեսվող տարբեր քիմիական բաղադրության բնական հանքային խմելու բուժիչ եւ բուժիչ՝ սեղանի ջրերի՝ մարդու համար անվտանգության հիգիենիկ պահանջները: Տվյալ արտադրանքի բուժիչ հատկությունները տվյալ փաստաթղթի կարգավորման առարկա չեն:

2. Հասկացությունները եւ սահմանումները

2.1. Հանքային ջրերին են դասվում հիմնական իոնաաղային եւ գազային կազմով, կենսաբանորեն ակտիվ բաղադրիչների բարձր պարունակությամբ եւ սպեցիֆիկ հատկություններով (ռադիոակտիվություն, ջերմաստիճան, միջավայրի

ռեակցիա) պայմանավորված՝ մարդու օրգանիզմի վրա բուժիչ ազդեցություն թողնող բնական ջրերը:

2.2. Հանքային խմելու ջրերին են դասվում առնվազն $4/դմ^3$ հանքայնացմամբ կամ պակաս հանքայնացման դեպքում խմելու հանքային ջրերի համար ընդունված բալնեոլոգիական նորմերից ոչ ցածր քանակությամբ կենսաբանորեն ակտիվ բաղադրիչներ պարունակող ջրերը:

2.3. Հանքային խմելու բուժիչ՝ սեղանի ջրերին են դասվում 1-ից 10 $գ/դմ^3$ հանքայնացմամբ կամ պակաս հանքայնացման դեպքում՝ բալնեոլոգիական նորմերից ոչ ցածր քանակությամբ կենսաբանորեն ակտիվ բաղադրիչներ պարունակող ջրերը:

2.4. Հանքային խմելու բուժիչ ջրերին են դասվում 10-ից 15 $գ/դմ^3$ հանքայնացմամբ կամ փոքր հանքայնացման դեպքում ջրերը. դրանցում մկնդեղի, բոռի եւ մի քանի այլ կենսաբանորեն ակտիվ միկրոբաղադրիչների բարձր քանակության առկայության դեպքում: Թույլատրվում է բուժիչ ջրերի եւ առավել բարձր հանքայնացման կիրառումը:

3. Ընդհանուր դրույթները

3.1. Հանքային ջրերի շաղցումը պետք է կատարվի սույն Միասնական սանիտարական պահանջների եւ սահմանված կարգով հաստատված խմելու հանքային ջրերի մշակման եւ շաղցման մասով տեխնոլոգիական ցուցումներին համապատասխան ձեռնարկությունների համար խմելու հանքային ջրերի մշակման եւ շաղցման մասով սանիտարական կանոնների պահպանմամբ:

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշման խմբագրությամբ, 3.1 կետ)

3.2. Սինթետիկ նյութերից տարողություններում հանքային ջրերի պահման ժամկետները եւ ջերմաստիճանային պայմանները պետք է համապատասխանեն պատրաստի արտադրանքի մասով նորմատիվ փաստաթղթերում նշված

պահանջներին:

3.3. Հանքային ջրերի մշակման համար թույլատրվում է կիրառել հետևյալ եղանակները՝

- երկաթի, մանգանի եւ ծծմբի, ինչպես նաեւ մկնդեղի միացությունների՝ օդով եւ (կամ) թթվածնով մշակման եղանակով առանձնացումը.

- չլուծվող տարրերի, ինչպիսիք երկաթը եւ ծծումբը, ֆիլտրացիայի կամ դեկանտավորման եղանակով առանձնացումն են.

- բացառապես ֆիզիկական մեթոդներով ածխածնի ազատ երկօքսիդից ամբողջությամբ կամ մասնակի ազատվելը.

- ածխածնի երկօքսիդով հագեցումը.

- կիտրոնի կամ ասկարբինաթթվով մշակումը.

- ծծմբաթթվային արծաթով մշակումը:

Հանքային ջրերի մշակման համար՝ բացառությամբ վերը նախատեսված եղանակների, թույլատրվում է կիրառել նույնպես այլ եղանակներ, որոնք չեն փոխում կատիոնների՝ կալցիումի, մագնեզիումի, նատրիումի եւ կալիումի, անիոնների՝ հիդրոկարբոնատների, սուլֆատների, քլորիդների, ինչպես նաեւ մշակվող հանքային ջրերում կենսաբանորեն ակտիվ բաղադրիչների պարունակությունն ու հարաբերակցությունը:

Չի թույլատրվում շալցնելու համար նախատեսվող հանքային ջրերի մշակման համար քլորի պրեպարատների կիրառումը:

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշման խմբագրությամբ, կետ 3.3)

3.4. Ծծմբաթթվային արծաթով հանքային ջրերը մշակելիս տարողության մեջ կշռաչափված հանքային ջրում արծաթի զանգվածային կոնցենտրացիան չպետք է գերազանցի 0,2 մգ/դմ³-ը:

3.5. Հանքային ջրերի գազավորման համար կիրառում է ածխածնի երկօքսիդ:

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշման խմբագրությամբ, կետ 3.5)

3.6. Կշռաչափված հանքային ջրեր արտադրողները պարտավոր են ապահովել շալցման համար տարողությունների վարակազերծումը, ինչը երաշխավորում է վերջիններիս անվտանգությունը համաճարակաբանական առումով եւ անվնասակարությունը քիմիական կազմի մասով:

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշման խմբագրությամբ, կետ 3.6)

3.7. Հանքային ջրի շալցման համար թույլատրվում է սույն Միասնական սանիտարական պահանջներին համապատասխանող տարողությունների օգտագործումը՝ հաշվի առնելով դրանցում արտադրանքի պահման առավելագույն ժամկետները:

4. Հանքային ջրերի անվտանգությանը ներկայացվող պահանջները

4.1. Հանքային ջուրը պետք է համապատասխանի հիգիենիկ նորմերին ինչպես շալցման, փոխադրման, պահման, այնպես էլ սահմանված պիտանիության ժամկետի ամբողջ ընթացքում:

4.2. Հանքային ջրերի անվտանգությանը ներկայացվող պահանջները՝

բարենպաստ օրգանոլեպտիկ հատկությունները.

անվնասակարությունը ըստ քիմիական կազմի.

խմելու ջրի անվնասակարությունը համաճարակաբանական առումով.

անվտանգությունը ռադիացիոն առումով:

Տվյալ արտադրանքի անվտանգության ցուցանիշները ներկայացված են սույն Միասնական սանիտարական պահանջների տվյալ բաժնի 1-ին հավելվածում:

5. Հանքային ջրի փաթեթավորմանը, մականշմանը, փոխադրմանը եւ պահմանը ներկայացվող պահանջները

5.1. Հանքային ջուրը պետք է շշալցվի սննդամթերքի հետ շփման համար նախատեսվող սպառողական տարայում:

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշման խմբագրությամբ կետ 5.1)

5.2. Հանքային ջրի մականշումը պետք է պարունակի տեղեկություններ՝ գործող տեխնիկական եւ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

5.3. Հանքային ջրի պահման եւ փոխադրման պայմանները, ինչպես նաեւ պիտանիության ժամկետը պետք է համապատասխանեն սահմանված կարգով հաստատված՝ պատրաստի արտադրանքի մասով արտադրողի նորմատիվ փաստաթղթերում նշված պահանջներին:

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշման խմբագրությամբ կետ 5.3)

Հավելված 1

Սանիտարահամաճարակաբանական հսկողությանը ենթակա ապրանքներին ներկայացվող Միասնական սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջների II գլխի 21-րդ բաժնի

ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշման խմբագրությամբ)

1. Ըստ զգայորոշական ցուցանիշների հանքային ջրերը պետք է համապատասխանեն 1-ին աղյուսակում նշված պահանջներին:

Աղյուսակ 1

Ցուցանիշի անվանումը	Բնութագիրը
Արտաքին տեսքը	Թափանցիկ հեղուկ, առանց կողմնակի ներառումների Թույլատրվում է հանքային աղերի աննշան նստվածք
Գույնը	Անգույն հեղուկ կամ դեղնավունից մինչեւ կանաչավուն նրբերանգով
Համը եւ հոտը	Ջրում լուծված կոմպլեքսի համար նյութերին բնորոշ

2. Ըստ հանքայնացման, հիմնական իոնների՝ քիմիական կազմի հանքային ջրերը պետք է համապատասխանեն սահմանված կարգով հաստատված պատրաստի արտադրանքի մասով արտադրողի նորմատիվ փաստաթղթերում եւ համապատասխան տեխնիկական նորմատիվ իրավական ակտերում նշված պահանջներին:

3. Հանքային ջրերում ստորեւ նշված բաղադրիչների զանգվածային կոնցենտրացիան չպետք է գերազանցի 2-րդ աղյուսակում նշված արժեքները:

Աղյուսակ 2

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 456 որոշման խմբագրությամբ)

Բաղադրիչի անվանումը	Չանգվածային կոնցենտրացիան, մգ/դմ ³ , առավելագույնը
Նիտրատներ (NO ₃ ⁻)	50,0
Նիտրիտներ (NO ₂ ⁻)	2,0
Մկնդեղ (As) <*>	0,1
Կապար (Pb)	0,01
Ցինկ (Zn)	5,0
Կադմիում (Cd)	0,003
Պղինձ (Cu)	1,0
Սնդիկ (Hg)	0,001
Սելեն (Se)	0,05
Ստրոնցիում (Sr)	25,0 (բուժիչ եւ բուժիչ-սեղանի ջրերի համար)
Ֆտոր (F) [`]	
բուժիչ ջրերում	15.0
բուժիչ՝ սեղանի ջրերում	10.0
Ծանոթագրություն՝ <*> Մկնդեղը բնական կենսաբանորեն ակտիվ մկնդեղ պարունակող հանքային բնական խմելու բուժիչ ջրերում թունավոր տարր չի համարվում:	

4. Ըստ միկրոկենսաբանական ցուցանիշների՝ շշալցված հանքային ջրերը պետք է համապատասխանեն 3-րդ աղյուսակում նշված պահանջներին:

Աղյուսակ 3

Ցուցանիշի անվանումը	Արժեքը
Մեզոֆիլային աերոբ եւ ֆակուլտատիվ անաերոբ միկրոօրգանիզմների քանակությունը, ԳԱՄ 1 սմ ³ -ում, առավելագույնը	100

Աղիքային ցուպիկների խմբերի բակտերիաներ (կոլիֆորմեր)	չի թույլատրվում 333 սմ ³ -ում
Պաթոգեն միկրոօրգանիզմներ, այդ թվում նաեւ՝ սալմոնելա կարգի բակտերիաներ	չի թույլատրվում 100 սմ ³ -ում
<i>Pseudomonas aeruginosa</i>	չի թույլատրվում 100 սմ ³ -ում

5. Հանքային ջրերի պերմանգանատային թթվեցումը պետք է կազմի սպառված թթվածնի 0,5 - 5,0 մգ/դմ³ -ը:

6. Ըստ ռադիացիոն անվտանգության ցուցանիշների՝ շշալցված հանքային ջրերը պետք է համապատասխանեն 4-րդ աղյուսակում նշված պահանջներին:

Աղյուսակ 4

Ցուցանիշները	Չափման միավորները	Կշռաչափված ջրերի քանակության նորմատիվները, առավելագույնը		Վնասակարության ցուցանիշ <*>
		Առաջին կատեգորիա	Բարձր կատեգորիա	
Ռադիացիոն անվտանգության ցուցանիշները՝				
Տեսակարար գումարային ալֆա-ռադիոակտիվությունը	Բկ/լ	0,2	0,2	Ռադիաց.
Տեսակարար գումարային բետա-ռադիոակտիվությունը	_ II _	1	1	_ " _
Ծանոթագրություն՝ ջրի տարեկան սպառման ժամանակ ստեղծվող էֆեկտիվ դոզան չպետք է գերազանցի 0,1 մՅվ:				

Բաժին 22. Սննդային հավելումների եւ բուրավետիչների անվտանգությանը ներկայացվող պահանջները

(ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 622 որոշմամբ)

Սննդային հավելումների եւ բուրավետիչների անվտանգությանը ներկայացվող սանիտարահամաճարակաբանական ու հիգիենիկ պահանջները

1. Կիրառման ոլորտը

1. Սննդային հավելումների եւ բուրավետիչների անվտանգությանը ներկայացվող սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջները (հետայսու՝ Միասնական սանիտարական պահանջների բաժին) տարածվում են սննդային հավելումների եւ բուրավետիչների վրա վերջիններիս արտադրության, շրջանառության եւ պահման մասով, ինչպես նաեւ սննդային հավելումներ եւ բուրավետիչներ պարունակող սննդամթերքի վրա սննդամթերքի արտադրության ժամանակ վերջիններիս կիրառման մասով:

2. Միասնական սանիտարական պահանջների սույն բաժինը մշակված է Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության հիման վրա, ինչպես նաեւ սննդային հավելումների եւ բուրավետիչների անվտանգության ոլորտում միջազգային փաստաթղթերի օգտագործմամբ:

2. Հասկացությունները եւ սահմանումները

3. Միասնական սանիտարական պահանջների սույն բաժնում օգտագործվում են հետեւյալ հասկացությունները եւ սահմանումները տվյալ փաստաթղթի նպատակներով՝

1) ընդհանուր հասկացությունների մասով՝

1.1) «սննդային բուրավետիչ (բուրավետիչ)»՝ արտադրանք, որը չի օգտագործվում անմիջապես մարդու կողմից որպես սննդամթերք, որը պարունակում է համաբուրավետիչ նյութ (այդ թվում նաեւ՝ բնական) կամ համաբուրավետ նյութ կամ թեմատիկ տեխնոլոգիական բուրավետիչ կամ ծխահարման բուրավետիչ կամ այլ բուրավետիչներ (որոնց կազմի մեջ մտնում են այլ բաղադրիչներ՝ բացառությամբ վերը նշվածների) կամ վերջիններիս խառնուրդը (համաբուրավետիչ բաղադրիչ), որոնք նախատեսված են սննդամթերքին բույրի եւ (կամ) համի հաղորդման համար (բացառությամբ քաղցր, թթու եւ աղի բույրի եւ (կամ) համի), սննդային հավելումների եւ սննդային հումքի հավելմամբ կամ առանց հավելման.

1.2) «ծխահարման բուրավետիչ»՝ ծխի եւ կոնդենսատների թորման մաքրման միջոցով ավանդական ծխեցման մեջ կիրառվող ծխերից արտազատվող նյութի խառնուրդ.

1.3) «թերմիկ տեխնոլոգիական բուրավետիչ»՝ սննդային կամ սննդի մեջ չօգտագործվող բաղադրատարրերի որոշակի պայմաններում տաքացման արդյունքում ստացվող նյութերի խառնուրդ, որոնցից մեկը պետք է լինի ամինամիացություն, իսկ մյուսը՝ ռեդուկցիոն շաքարով. ջերմամշակման պայմանները՝ ջերմաստիճանը 180°C -ից ոչ բարձր, ջերմամշակման տեւողություն 15 րոպե 180°C ջերմաստիճանի դեպքում ժամանակի համապատասխան ավելացմամբ առավել ցածր ջերմաստիճանների կիրառման պարագայում՝ տաքացման ժամանակի կրկնապատկմամբ յուրաքանչյուր 10°C ջերմաստիճանի նվազեցման դեպքում, սակայն 12 ժամից ոչ ավելի pH մեծությունը գործընթացի ընթացքում չպետք է գերազանցի 8,0.

1.4) «սննդային հավելումների, բուրավետիչների եւ դրանք պարունակող սննդամթերքի անվտանգությունը»՝ Միասնական պահանջների սույն բաժնի կանոնակարգերին բավարարող եւ սննդամթերքի կազմում մարդու կողմից օգտագործման դեպքում մարդու կամ հետագա սերունդների կյանքին եւ առողջությանը վնասի պատճառման հետ կապված անթույլատրելի ռիսկի

բացակայության մասին վկայող սննդային հավելումների, բուրավետիչների եւ դրանք պարունակող սննդամթերքի հատկությունների ու բնութագրերի ամբողջականությունը.

1.5) «համաբուրավետիչ նյութ»՝ բուրավետիչի հատկություններով քիմիական որոշակի նյութ (քիմիական անհատական), այսինքն՝ օժտված բնորոշ բույրով եւ (կամ) համով (բացառությամբ քաղցր, թթու եւ աղի).

1.6) «նյութ համաբուրավետիչ բնական»՝ բուսական եւ կենդանական ծագում ունեցող, այդ թվում նաեւ՝ սննդամթերքի պատրաստման ավանդական եղանակներով վերամշակված հումքից քիմիական, ֆերմենտային կամ միկրոկենսաբանական գործընթացների օգնությամբ արտազատվող համաբուրավետ նյութ.

1.7) «համալիրի սննդային հավելում»՝ որպես ապրանքային արտադրանք մշակված սննդային հավելումների խառնուրդ (սննդային հավելման եւ սննդային հումքի), որի կազմ կարող են մտնել բուրավետիչներ, սննդային հումք, սննդամթերք եւ այլ բաղադրիչներ, առնվազն սննդային հավելումներից մեկը, որը մտնում է համալիր սննդային հավելման կազմի մեջ, պետք է վերջնական սննդամթերքի մեջ թողնի ֆունկցիոնալ ազդեցություն.

1.8) «առավելագույն թույլատրելի մակարդակ (առավելագույն մակարդակ, թույլատրելի մակարդակ)»՝ մարդու համար անվտանգությունը երաշխավորող սննդամթերքում սննդային հավելման (բուրավետիչ, կենսաբանորեն ակտիվ նյութ) առավելագույն թույլատրելի քանակությունը սահմանող հիգիենիկ նորմ.

1.9) «չմշակված սննդամթերք»՝ արտադրանք, որը չի ենթարկվում որեւէ մշակման, որը հանգեցնում է վերջինիս ելակետային վիճակի եւ կազմի զգալի փոփոխություններին. նման արտադրանքը կարող է մաքրվել, կշռաձրարվել, փաթեթավորվել եւ սառեցվել.

1.10) «նոր սննդային հավելում, համաբուրավետ նյութ, համաբուրավետ նյութերի բնական աղբյուր»՝ սննդային հավելում, համաբուրավետ նյութ, համաբուրավետ նյութերի բնական աղբյուրը, որոնք չեն կանոնակարգվում՝

Միասնական պահանջների սույն բաժնի կանոնակարգերին համապատասխան սննդամթերքի արտադրության մեջ օգտագործելու համար.

1.11) «սննդային հավելում»՝ ցանկացած նյութ (կամ նյութի խառնուրդը) անկախ իր սննդային արժեքից, որը չի օգտագործվում անմիջականորեն որպես սնունդ կամ սննդամթերքի սովորական բաղադրատարր, որը նախամտածված ներմուծվում է սննդամթերք տեխնոլոգիական նպատակով (ֆունկցիայով) վերջինիս արտադրության, մշակման, պատրաստման, մշակման, փաթեթավորման, փոխադրման կամ պահման համար, ինչը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել նրան, որ տվյալ նյութը կամ վերջինիս փոխարկման արդյունքները դառնում են սննդամթերքի բաղադրիչներ. սննդային հավելումը կարող է կատարել մի շարք տեխնոլոգիական ֆունկցիաներ.

1.12) «բուրավետիչին նախորդող»՝ սննդամթերքի պատրաստման գործընթացում դեստրուկցիայի կամ այլ բաղադրատարրերի հետ ռեակցիայի միջոցով համի եւ բույրի ստացման միակ նպատակով սննդամթերքին դիտավորյալ հավելվող բուրավետիչի հատկություններով ոչ պարտադիր օժտված արտադրանք (կարող է ստացվել ինչպես սննդամթերքից, այնպես էլ որպես սննդամթերք անմիջականորեն չօգտագործվող արտադրանքից).

1.13) «համաբուրավետ պրեպարատ»՝ ֆիզիկական, ֆերմենտատիվ կամ միկրոկենսաբանական գործընթացներից արտազատվող համաբուրավետ եւ այլ նյութերի խառնուրդ. սննդամթերքից կամ սննդային հումքից, այդ թվում նաեւ՝ սննդամթերքի պատրաստման ավանդական եղանակներով մշակումից հետո. եւ (կամ) որպես այդպիսին կիրառվող կամ սննդամթերքի պատրաստման ավանդական եղանակների օգտագործմամբ մշակված՝ անմիջականորեն որպես սննդամթերք չօգտագործվող՝ բուսական, կենդանական կամ միկրոկենսաբանական ծագման արտադրանքից.

1.14) «ցածր էներգետիկ արժեքով սննդամթերք»՝ սննդամթերք, որի էներգետիկ արժեքն իջեցված է ոչ պակաս, քան 30%-ով՝ ավանդական սննդամթերքի հետ համեմատած.

1.15) «առանց հավելված շաքարների սննդամթերք»՝ առանց մոնո- եւ երկշաքարներ եւ դրանք պարունակող սննդամթերքի հավելման պատրաստված սննդամթերքի

1.16) «սննդամթերքի պատրաստման ավանդական եղանակները»՝ եփելը, այդ թվում նաեւ գոլորշու վրա եւ ճնշման տակ (մինչեւ 120°C), թխելը, խորովելը, շոգեխաշելը, տապակելը, այդ թվում նաեւ կարագի վրա մինչեւ 240°C մթնոլորտային ճնշմամբ), չորացում, շոգիացում, տաքացում, սառեցում, պաղեցում, թրջել, կակղացում (թրմում), թրմում (եռացում), պերկուլացում (քամում), ֆիլտրացիա, մամլում (քամում), խառնում, էմուլգացում, մանրացում (կտրատում, մասնատում, տրորում, ծեծում), պատիճավորում (կապսուլացում), կեղեւից մաքրում (կճպում), թորում (ռեկտիֆիկացում), հեռացում (ներառյալ լուծիչներով էքստրակցիան), ֆերմենտացում եւ միկրոկենսաբանական գործընթացներ.

2) սննդային հավելումների ֆունկցիոնալ խմբերի հասկացությունների մասով՝

2.1) «հակաթթվեցուցիչ»՝ թթվեցման գործընթացը դանդաղեցնելու եւ սննդամթերքի (սննդային հումքի) պիտանիության ժամկետների ավելացման համար նախատեսվող սննդային հավելումը.

2.2) «հակահետեւող նյութ (հակակծկիչ)»՝ սննդամթերքի փոշենման կամ մանր բյուրեղանման մասնիկների կաշեւու (կծկումը) կանխարգելման եւ վերջիններիս սորունության պահպանման համար նախատեսվող սննդամթերք.

2.3) «այլուրի մշակման համար նյութ»՝ այլուրի (խմորի) հացաթխման որակները կամ գույնը բարելավելու համար նախատեսվող սննդային հավելում (բացի էմուլգատորներից).

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 889 որոշման խմբագրությամբ 2.3 կետերում)

2.4) «խոնավագսպիչ ագենտ (խոնավագսպիչ նյութ)»՝ չորացումից սննդամթերքի պահպանման եւ խոնավության հետ՝ պահման համար նախատեսվող սննդային հավելում.

2.5) «ջնարակապատիչ»՝ սննդամթերքի մակերեսի վրա քսելու համար նախատեսվող սննդային հավելում՝ վերջիններիս փայլ հաղորդելու եւ (կամ) պաշտպանիչ շերտի գոյացման նպատակով.

2.6) «դոնդողանման դարձնող նյութ»՝ սննդամթերքի դոնդողանման նյութակազմվածքի գոյացման համար նախատեսվող սննդային հավելումը.

2.7) «թանձրացուցիչ»՝ սննդամթերքի մածուցիկության բարձրացման համար նախատեսվող սննդային հավելում.

2.8) «թթու»՝ սննդամթերքի թթվայնության բարձրացման եւ (կամ) վերջինիս թթու համ հաղորդելու համար նախատեսված սննդային հավելում.

2.9) «կոնսերվանտ»՝ մանրէային փչացման եւ (կամ) պաթոգեն միկրոօրգանիզմների աճից պաշտպանության միջոցով սննդամթերքի պիտանիության ժամկետի (պահման) երկարացման (ավելացման) համար նախատեսվող սննդային հավելում.

2.10) «ներկանյութ»՝ սննդամթերքին գույն հաղորդելու, մգացնելու կամ վերականգնելու համար նախատեսվող սննդային հավելում. սննդային ներկանյութերին չեն դասվում երկրորդային գունավորող ազդեցությամբ օժտված սննդամթերքը, ինչպես նաեւ այն ներկանյութերը, որոնք կիրառվում են սննդամթերքի ուտելու համար ոչ պիտանի նյութ արտաքին մասերի գունավորման համար (պանիրների եւ երշիկների թաղանթների գունավորման համար, մսի դրոշմման, պանիրների եւ հավկիթների մականշման համար).

2.11) «լցանյութ»՝ սննդային հավելում, որն ավելացնում է սննդամթերքի ծավալն առանց էներգետիկ արժեքի զգալի ավելացման.

2.12) «կրիչ»՝ սննդային (ֆիզիոլոգիական) նպատակներով առանց դրանց գործառույթի փոփոխության կամ ազդեցության դրանց օգտագործումը դյուրացնելու եւ էֆեկտիվությունը բարձրացնելու նպատակով սննդային հավելումների, բուրավետիչների, ֆերմենտային պրեպարատների, նուտրիենտների եւ (կամ) այլ նյութերի լուծման, ջրիկացման, դիսպերսման կամ այլ ֆիզիկական ձեւափոխումների համար նախատեսվող սննդային հավելում.

2.13) «փրփրամարիչ»՝ սննդամթերքում փրփրագոյացման կանխարգելման կամ իջեցման համար նախատեսվող սննդամթերք.

2.14) «փրփրագոյացուցիչ»՝ հեղուկ եւ պինդ սննդամթերքում գազային ֆազայի հավասարաչափ բաշխման համար նախատեսվող սննդային հավելում.

2.15) «քաղցրացուցիչ»՝ սննդամթերքին քաղցր համ հաղորդելու համար նախատեսված կամ սեղանի քաղցրացուցիչների բաղադրության մեջ օգտագործվող սննդային հավելում.

2.16) «պրոպելենտ՝ տարողությունից (կոնտեյներից) սննդամթերքը դուրս հրելու համար նախատեսվող սննդային հավելում-գազ (օդից բացի).

2.17) «փխրեցուցիչ»՝ գազի գոյացման հաշվին խմորի ծավալի ավելացման համար նախատեսվող սննդային հավելում.

2.18) «թթվայնության կարգավորիչ»՝ սննդամթերքի pH (թթվայնության կամ հիմնայնության) փոփոխության կամ կարգավորման համար նախատեսվող սննդային հավելում.

2.19) «կայունացուցիչ»՝ երկու եւ ավելի չխառնվող բաղադրատարրերի միասեռ դիսպերսիայի պահպանման եւ (կամ) ագրեգատիվ կայունության ապահովման համար նախատեսվող սննդային հավելում.

2.20) «փաթեթավորման գազ»՝ սննդամթերքի տարողության մեջ (կոնտեյներ) մինչեւ տեղադրումը, դրա ժամանակ կամ դրանից հետո տարողություն (կոնտեյներ) ներմուծվող սննդային հավելում-գազ (օդից բացի).

2.21) «խտացուցիչ»՝ մրգերի, բանջարեղենի հյուսվածքների խտության պահպանման եւ սննդամթերքի դոնդողանման կառուցվածքի ամրացման համար նախատեսվող սննդային հավելում.

2.22) «համի (բույրի) ուժեղացուցիչ»՝ սննդամթերքի բնական համի եւ (կամ) բույրի ուժեղացման եւ (կամ) ձեւափոխման համար նախատեսվող սննդային հավելում.

2.23) «գույնի ֆիքսատոր (կայունացուցիչ)»՝ սննդամթերքի գույնի կայունացման,

պահպանման (կամ ուժեղացման) համար նախատեսվող սննդային հավելում.

2.24) «էմուլգատոր»՝ սննդամթերքում երկու կամ ավելի չխառնվող ֆազաների ստեղծման եւ (կամ) պահպանման համար նախատեսվող սննդային հավելում.

2.25) «էմուլգացնող աղ»՝ ճարպերի, սպիտակուցների հավասարաչափ բաշխման եւ (կամ) պանիրների ու դրանց հիման վրա արտադրանքի բարելավման համար նախատեսվող սննդային հավելում:

3. Ընդհանուր դրույթները

4. Միասնական պահանջների սույն բաժնի գործողությունները նախատեսված են՝

1) սննդային հավելումների, բուրավետիչների պատրաստման եւ շրջանառության ոլորտում, ինչպես նաեւ սննդային հավելումներ եւ բուրավետիչներ պարունակող սննդամթերքի պատրաստման, շրջանառության ոլորտում տնտեսական գործունեության մեջ մասնակցող անհատ ձեռներեցների եւ իրավաբանական անձանց համար.

2) բնակչության բարեկեցության սանիտարահամաճարակաբանական ֆունկցիայի ապահովման, սպառողների իրավունքների եւ սպառողական շուկայի պաշտպանության ոլորտում վերահսկում եւ հսկողության մասով գործառույթներ իրականացնող՝ Մաքսային միության անդամ պետությունների վերահսկողության (հսկողության) պետական մարմինների համար:

5. Սննդամթերքի արտադրության մեջ սննդային հավելումների եւ բուրավետիչների կիրառման անվտանգության ու սպառողներին շփոթեցնող գործողությունները կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է կատարել հետեւյալ պահանջները՝

1) սննդային հավելումների եւ բուրավետիչների կիրառումը չպետք է մեծացնի մարդու առողջության վրա սննդամթերքի անբարենպաստ հնարավոր ազդեցության ռիսկի աստիճանը.

2) սննդամթերքը պետք է համապատասխանի սույն Միասնական պահանջներով սահմանված կանոնակարգերին, դրանցում նորմավորվող սննդային հավելումների թույլատրելի պարունակությանը, ինչպես նաև բուրավետիչներում (համաբուրավետ պրեպարատների) եւ (կամ) համաբուրավետ նյութերի բնական աղբյուրներում պարունակվող կենսաբանորեն ակտիվ նյութերին.

3) սննդային հավելումները պետք է կիրառվեն միայն այն դեպքերում, երբ առկա է տեխնոլոգիան կատարելագործելու անհրաժեշտություն, ինչպես նաև սննդամթերքի սպառողական հատկությունների բարելավման, դրանց պահման (պիտանիության) ժամկետների ավելացման անհրաժեշտության դեպքում, որոնց հասնելն անհնարին է այլ եղանակով կամ տնտեսապես արդարացված չէ.

4) սննդային հավելումների եւ բուրավետիչների կիրառումը չպետք է սպառողին շփոթեցնի սննդամթերքի սպառողական հատկանիշների մասով: Չի թույլատրվում բուրավետիչների ներմուծումը սննդամթերք դրանց բնորոշ բնական բույրի ուժեղացման համար (օրինակ՝ վիսկիի մեջ «Վիսկի» բուրավետիչ, բուրավետիչ «Մորի»՝ մորու մուրաբայում (ջեմում), բուրավետիչ «Կաթ»՝ չոր կաթում եւ այլն).

5) սննդային հավելումների եւ բուրավետիչների կիրառումը չպետք է առաջացնի սննդամթերքի զգայորոշական հատկությունների վատթարացում, չպետք է էականորեն ազդի դրանց սննդային արժեքի վրա (բացառությամբ մի քանի մասնագիտացված եւ դիետիկ արտադրանքի).

6) սննդային հավելումները եւ բուրավետիչները պետք է մտցվեն սննդամթերք տվյալ տեխնոլոգիական էֆեկտի ապահովման համար անհրաժեշտ նվազագույն քանակությամբ.

7) չի թույլատրվում սննդային հավելումների եւ բուրավետիչների կիրառումը, փչացումը եւ անորակ հումքի կամ պատրաստի սննդամթերքը թաքցնելու եւ (կամ) դրանք կեղծելու եւ (կամ) սպառողներին մոլորեցնելու նպատակով.

8) Մաքսային միության անդամ պետությունների տարածք ներմուծվող սննդային հավելումները, բուրավետիչները եւ դրանցում պարունակվող սննդամթերքը պետք է համապատասխանեն սույն Միասնական պահանջներով

նախատեսվող պահանջներին.

9) սննդային հավելումները եւ բուրավետիչները պետք է կշռաչափվեն եւ փաթեթավորվեն այնպես, որ հնարավոր լինի ապահովել վերջիններիս անվտանգությունը եւ պահման ժամկետի ընթացքում (պիտանիության) մականշման մեջ հայտարարված սպառողական հատկությունները.

10) սննդային հավելումները եւ բուրավետիչները փաթեթավորելիս պետք է կիրառվեն սննդամթերքի հետ շփվող նյութերի անվտանգության մասով պահանջներին համապատասխանող նյութերը (գլուխ II, բաժին 16).

11) Մաքսային միության անդամ պետությունների տարածքում շրջանառության մեջ գտնվող սննդային հավելումներին եւ բուրավետիչներին կից պետք է ներկայացվեն դրանց անվտանգությունը հաստատող փաստաթղթեր եւ հետազոտությունն ապահովող փաստաթղթեր, ինչպես նաեւ պետք է ներկայացվի արտադրանքի պահման պայմանների եւ պահման ժամկետների (պիտանիության) մասին տեղեկատվություն.

12) գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների ու այլ բիոտեխնոլոգիաների եւ (կամ) նանոտեխնոլոգիաների օգտագործմամբ պատրաստված՝ Մաքսային միության անդամ պետությունների տարածքում շրջանառության մեջ գտնվող սննդային հավելումները եւ բուրավետիչները պետք է բավարարեն սննդամթերքի անվտանգության ու սննդային արժեքի Միասնական պահանջները (գլուխ II, բաժին 1).

13) սննդային հավելումների, բուրավետիչների եւ սննդային հավելումներ ու բուրավետիչներ պարունակող սննդամթերքի անվտանգության համար պատասխանատվությունը կրում է դրանք արտադրողը (վաճառողը):

6. Սննդային հավելումների եւ բուրավետիչների ու դրանք պարունակող սննդամթերքի վերաբերյալ նորմատիվ եւ տեխնիկական փաստաթղթերում (ստանդարտները, տեխնիկական պայմանները, կանոնակարգերը, տեխնոլոգիական ցուցումները, մասնագրերը, ռեցեպտուրաները, կազմի մասին տեղեկությունները) տրամադրվում են բաղադրատարրային կազմին վերաբերող

հետեւյալ տեղեկությունները՝

1) սննդային հավելումների համար E ինդեքսներ (առկայության դեպքում).

2) կոմպլեքսային սննդային հավելումների համար՝ դրանց կազմի մեջ մտնող սննդային հավելումների քանակային պարունակությունը, բացի SՓ-ի համաձայն կանոնակարգվողներից, ինչպես նաեւ դրանց կազմի մեջ մտնող բուրավետիչների կատեգորիաները (համաբուրավետ նյութեր, համաբուրավետ պրեպարատներ, ծխահարման բուրավետիչներ, թերմիկ տեխնոլոգիական բուրավետիչներ եւ այլն) նորմավորվող կենսաբանորեն ակտիվ նյութերի քանակական պարունակությունը նման կենսաբանորեն ակտիվ նյութեր պարունակող համաբուրավետ նյութերի բնական աղբյուրներն օգտագործելիս, կիրառման կանոնակարգի մասին տեղեկությունները (կիրառման ոլորտը, դոզավորում).

3) բուրավետիչների համար՝ բաղադրատարրային կազմը, այդ թվում նաեւ՝ համաբուրավետ նյութերի եւ համաբուրավետ պրեպարատների սննդի արդյունաբերության մեջ դրանց օգտագործումը թույլատրվող միջազգային օրենսդրության (օտարերկրյա արտադրողների համար) նշմամբ. դրանց կազմի մեջ մտնող սննդային հավելումների քանակական պարունակությունը, բացի SՓ-ի համաձայն կանոնակարգվողներից. նորմավորող կենսաբանորեն ակտիվ նյութերի քանակական պարունակությունը նման կենսաբանորեն ակտիվ պարունակող համաբուրավետ նյութերի բնական աղբյուրների օգտագործմամբ, կիրառման կանոնակարգի մասին տեղեկությունները (կիրառման ոլորտը, դոզավորումը).

4) համաբուրավետ հումքի եւ դրանցից պատրաստված համաբուրավետ պրեպարատների բնական աղբյուրների համար՝ լատինական անվանումները, օգտագործվող մասերը (օրգանները, հեղուկները), նորմավորող կենսաբանորեն ակտիվ նյութերի քանակական պարունակությունը՝ նման կենսաբանորեն ակտիվ պարունակող համաբուրավետ նյութերի բնական աղբյուրների օգտագործմամբ, կիրառման կանոնակարգի մասին տեղեկությունները (կիրառման ոլորտը, դոզավորումը).

5) սննդային հավելումներ եւ բուրավետիչներ պարունակող սննդամթերքի

համար՝ սննդամթերքի կազմի մեջ մտնող սննդային հավելումների քանակական պարունակությունը, բացի ՏՓ-ի համաձայն կանոնակարգվողներից, ինչպես նաև սննդամթերքի կազմի մեջ մտնող բուրավետիչների կատեգորիաներից (համաբուրավետ նյութեր, համաբուրավետ պրեպարատներ, ծխահարման բուրավետիչներ, թերմիկ տեխնոլոգիական արամատիզատորներ եւ այլն) նորմավորվող կենսաբանորեն ակտիվ նյութերի քանակական պարունակությունը նման կենսաբանորեն ակտիվ նյութեր պարունակող համաբուրավետ նյութերի բնական աղբյուրներն օգտագործելիս, կիրառման կանոնակարգի մասին տեղեկությունները (կիրառման ոլորտը, դոզավորում)։

6) կոմպլեքսային սննդային հավելումների կազմի մասին (նորմավորող սննդային հավելումների պարունակությունը), բուրավետիչների բաղադրատարրային կազմի, նորմավորող կենսաբանորեն ակտիվ նյութերի մասին տեղեկությունները ներկայացվում են պետական գրանցման կամ պետական սանիտարական վերահսկման (հսկողության) անցկացման ժամանակ։

7) սննդային հավելումների եւ բուրավետիչների կազմում գենաինժեներաձեւափոխված օրգանիզմների, այդ թվում նաև գենաինժեներաձեւափոխված միկրոօրգանիզմների օգտագործման մասին տեղեկությունները։

8) սննդային հավելումների եւ բուրավետիչների կազմում նանոնյութերի եւ նանոմասնիկների օգտագործման մասին տեղեկությունները։

9) սննդային հավելումների եւ բուրավետիչների կազմում ալերգեն նյութերի օգտագործման մասին տեղեկությունները. գետնընկույզ եւ դրա վերամշակման արդյունքում ստացվող արտադրանքը. ասպարտամ եւ ասպարտամ-ացետուլֆատի աղ. մանանեխ եւ դրա վերամշակման արդյունքում ստացվող արտադրանքը. ծծմբի երկօքսիդ եւ սուլֆիտներ (10 մգ/կգ(լ)-ից ավելի զանգվածային բաժնի դեպքում ծծմբի երկօքսիդի վերահաշվարկով). գլյուտեն եւ դրա վերամշակման արդյունքում ստացվող արտադրանքը պարունակող խոտաբույսեր. քունջութ եւ դրա վերամշակման արդյունքում ստացվող արտադրանքը. կաթ եւ դրա վերամշակման արդյունքում ստացվող արտադրանքը (այդ թվում նաև՝ լակտոզա). ընկույզներ եւ

դրա վերամշակման արտադրանքը. խեցգետնանմաններ եւ դրանց վերամշակման արտադրանքը. ձու եւ դրա վերամշակման արդյունքում ստացվող արտադրանքը. նեխուր եւ դրա վերամշակման արդյունքում ստացվող արտադրանքը. սոյա եւ դրա վերամշակման արդյունքում ստացվող արտադրանքը. ձու եւ դրա վերամշակման արդյունքում ստացվող արտադրանքը.

7. Նոր (Միասնական պահանջների սույն բաժնով չկանոնակարգված) սննդային հավելումները եւ բուրավետիչները թույլատրվում են օգտագործման համար Մաքսային միության անդամ պետությունների կողմից սահմանված կարգով: Նորմատիվ եւ տեխնիկական փաստաթղթերին լրացուցիչ ներկայացվում է սննդային հավելումների, համաբուրավետ նյութերի, համաբուրավետ նյութերի բնական աղբյուրների կամ դրանցից պատրաստված համաբուրավետ պրեպարատների անվտանգության մասին վկայող հետեւյալ տեղեկությունները՝

1) սննդային հավելումների եւ համաբուրավետ նյութերի համար՝ նյութի բնութագիրը՝ վերջինիս ծագումը եւ քիմիական բանաձեւը (կազմը), ֆիզիկաքիմիական հատկանիշները/հատկությունները, ստացման եղանակը, հիմնական նյութի պարունակությունը, կիսաարտադրանքի, խառնուրդների առկայությունը եւ մաքրության աստիճանը, ցանկալի տեխնոլոգիական արդյունքին հասնելու մեխանիզմը, սննդային նյութերի հետ փոխազդեցության հնարավոր արդյունքները/արտադրանքները.

2) համաբուրավետ նյութերի բնական աղբյուրների եւ դրանցից պատրաստված համաբուրավետ պրեպարատների համար նշվում է օգտագործվող մասը (մասերը), կազմը եւ հիմնական, այդ թվում նաեւ կենսաբանորեն ակտիվ բաղադրիչների պարունակությունը, սննդային կամ բուժիչ նպատակներով օգտագործումը, դոզավորումը.

3) տոքսիկոլոգիական բնութագրերը՝ անհատական նյութերի համար կենդանական օրգանիզմում նյութափոխանակությունը.

4) նոր արտադրանքի կիրառման տեխնոլոգիական հիմնավորումը, արդեն իսկ կիրառվողի համեմատությամբ առավելությունները, սննդամթերքի ցանկը, որոնցում

առաջարկվում է օգտագործել տեխնոլոգիական արդյունքին հասնելու համար անհրաժեշտ դոզավորումները.

5) անվտանգության սահմանված ցուցանիշները, նոր սննդային հավելումները (վերջինիս փոխարկման արդյունքը) կամ հիմնական բաղադրիչների եւ կենսաբանորեն ակտիվ նյութերի (առկայության դեպքում) մասին տեղեկություններ պարունակող տեխնիկական փաստաթղթերը:

4. Սննդային հավելումների եւ բուրավետիչների օգտագործմամբ պատրաստվող սննդային հավելումներին, բուրավետիչներին եւ սննդամթերքի անվտանգությանը ներկայացվող պահանջները

8. Ըստ անվտանգության ցուցանիշների՝ սննդային հավելումները եւ միայն սննդային հավելումներ պարունակող կոմպլեքսային սննդային հավելումները պետք է համապատասխանեն Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության պահանջներին:

Սննդային հումք եւ սննդամթերք պարունակող կոմպլեքսային սննդային հավելումների անվտանգության ցուցանիշները պետք է համապատասխանեն Սննդամթերքի անվտանգության եւ սննդային արժեքի միասնական պահանջներում խառը (բազմաբաղադրիչային) կազմի սննդամթերքի համար սահմանված պահանջներին (գլուխ II, բաժին 1):

9. Ըստ անվտանգության ցուցանիշների՝ բուրավետիչները պետք է համապատասխանեն սույն Միասնական պահանջների 1-ին եւ 19-րդ հավելվածների համաձայն պահանջներին: Բուրավետիչների արտադրության մեջ կիրառվող համաբուրավետ նյութերի բնական աղբյուրներն օգտագործվում են Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

10. Ըստ անվտանգության ցուցանիշների՝ սննդային հավելումներ եւ բուրավետիչներ պարունակող սննդամթերքը պետք է համապատասխանի սննդամթերքի անվտանգության ու սննդային արժեքի Միասնական պահանջներին (գլուխ II, բաժին 1) եւ Միասնական պահանջների (2 - 18-րդ, 20-րդ հավելումներ)

սույն բաժնի պահանջներին:

11. Սննդային հավելումներն օգտագործվում են սննդամթերքի արդյունաբերական արտադրության համար: Թույլատրվում է 2-րդ հավելվածում նշված եւ սույն Միասնական պահանջների անվտանգության ցուցանիշներին համապատասխանող սննդային հավելումների արտադրությունը (ներմուծումը երկիր), շրջանառությունը եւ դրանց օգտագործումը սննդամթերքի մեջ:

12. Մանրածախ վաճառքի համար թույլատրվում են միայն հետեւյալ սննդային հավելումները՝

1) թթուներ եւ թթվայնության կարգավորիչներ՝ նատրիումի հիդրոկարբոնատ (E500ii, սննդային սոդա), կիտրոնաթթու (E330), ածխածնի երկօքսիդ (E290).

2) ներկանյութեր, այդ թվում նաեւ զատկի հավկիթների համար՝ ազորուբին (E122), անտոցիաններ (E163), դեղին «արեւային մայրամուտ» FCF (E110), դեղին խինոլինային (E104), կանաչ S (E142), ինդիգոկարմին (E132), կարմին (E120), կարոտին եւ դրա ածանցյալները (E160a), պոնսո 4R (E124), կապույտ փայլող FCF (E133), կապույտ պատենտավորված V (E131), տարտրազին (E102).

3) քաղցրացուցիչներ՝ ասպարտամ (E951), կալիումի ացեսուլֆամ (E950), ասպարտամ-ացեսուլֆամի աղ (E962), իզոմալտիտ (E953), քսիլիտ (E967), լակտիտ (E966), մալտիտ (E965), մանիտ (E421), նեոգիսպերիդին դիգիդրոխալկոն (E959), սախարին եւ դրա նատրիումի, կալիումի, կալցիումի աղերը (E950), սորբիտ (E420), ստեվիա եւ ստեվիոզիդ (E960), սուկրալոզա (E955), տաուամատին (E957), ցիկլոմաթթու եւ դրա նատրիումի, կալցիումի աղերը (E952), էրիտրիտ (E968):

Այլ սննդային հավելումների մանրածախ վաճառքը (կոնսերվանտներ՝ բենզոյաթթու (E210), նատրիումի բենզոատ (E211), կալիումի բենզոատ (E212), կալցիումի բենզոատ (E213), սորբինաթթու (E200), նատրիումի սորբատ (E201), կալիումի սորբատ (E202), կալցիումի սորբատ (E203), քացախաթթվի 9% ջրային լուծույթ (առավելագույնը) (E260); համի եւ բույրի ուժեղացուցիչներ՝ գլուտամինաթթու (E620), նատրիումի գլուտամատ (E621), կալիումի գլուտամատ (E622), կալցիումի գլուտամատ (E629), գուանիլաթթու (E626), նատրիումի գուանիլատ (E627), կալիումի

գուանիլատ (E628), կալցիումի գուանիլատ (E629), ինոզինաթթու (E630), նատրիումի ինոզինատ (E631), կալիումի ինոզինատ (E632), կալցիումի ինոզինատ (E633), 5'-կալցիումի ռիբոնուկլեոտիդներ (E634) եւ 5'-նատրիումի ռիբոնուկլեոտիդներ (E635)) կանոնակարգվում են Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

13. Ընդունման բոլոր աղբյուրներից սննդային հավելումների սննդամթերքում պարունակությունը, այդ թվում նաեւ բուրավետիչներով, հումքով, կիսաֆարիկատներով (երկրորդային ընդունում) պետք է համապատասխանի պատրաստի արտադրանքի համար սահմանված պահանջներին եւ չպետք է գերազանցի Միասնական պահանջների սույն բաժնով սահմանված՝ թույլատրելի առավելագույն մակարդակները:

Սննդային հավելումների պարունակության սահմանված առավելագույն թույլատրելի մակարդակները վերաբերում են միայն այն սննդամթերքին, որոնց արտադրության մեջ կիրառվել են նշված սննդային հավելումները:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2012 թվականի ապրիլի 19-ի որոշմամբ)

14. Սույն Միասնական պահանջներով նորմավորվող սննդամթերքում սննդային հավելումների պարունակությունը վերահսկվում է ըստ ներդիրի (ըստ բաղադրատոմսի) եւ (կամ) հետազոտությունների վերլուծական մեթոդների կիրառմամբ:

Հետազոտությունների վերլուծական մեթոդների կիրառմամբ (Մաքսային միության անդամ պետություններում սահմանված կարգով հաստատված վերահսկման մեթոդների առկայության դեպքում) վերահսկվում է հետեւյալ սննդային հավելումների պարունակությունը՝

1) հակաթթվեցուցիչ՝ բուֆիլիդրօքսիանիզոլ, բուֆիլիդրօքսիտոլուոլ, տրետ.-բուֆիլիդրօքսինոն, գալաթթվի օկտիլային եւ դոդեցիլ պարունակող եթերներ.

2) կոնսերվանտներ՝ բենզոյաթթու եւ դրա բենզատների աղեր, դեհիդրացետային թթու եւ դրա նատրիումական աղը, դիֆենիլ, նիտրատներ եւ

նիտրիտներ, պերեքսներ՝ պարահիդրոքսիբենզոլաթթվի եթերներ եւ դրա նատրիումական աղերը, ծծմբաթթու եւ սուլֆիտների, բիսուլֆիտների եւ պիրոսուլֆիտների աղեր, սորբաթթու եւ դրա սորբատների աղերը.

3) ներկանյութերի՝ ազոբուբին, դեղին խինոլինային, դեղին «արեային մայրամուտ» FCF, կանաչ ամուր FCF, կանաչ S, ինդիգոկարմին, շագանակագույն HT, կարմիր հմայիչ AC, պոնսոն 4R, կապույտ փայլուն FCF, կապույտ պատենտավորված V, տարտրազին, սեւ փայլուն PN, աննատո (բիկսին, նորբիկսին), կարմիններ, կուրկումին, լյուտեին, լիկոպին.

4) կրիչների՝ պրոպիլենգլիկոլ, բենզիլային սպիրտ, տրիացետին, դիացետին, տրիէթիլցիտրատ.

5) քաղցրացուցիչներ՝ ասպարտամ, ացետուլֆամ, ասպարտամ-ացետուլֆամի աղ, նեոհեսպերիդին դիհիդրոխալոն, սախարին եւ դրա աղերը (նատրիում, կալիում, կալցիում), սուկրալոզա, տաուամատին, ցիկլամաթթու եւ դրա ցիկլամատի աղերը.

6) համի (բույրի) ուժեղացուցիչները՝ գլուտամինաթթու եւ դրա գլյուտամատի աղերը, գուանիլաթթու եւ դրա գուանիլատների աղերը, ինոզինաթթու եւ դրա ինոզինատների աղերը, 5'-ռիբոնուկլեոտիդներ.

7) ֆոսֆորաթթու եւ ֆոսֆատների աղեր, դիֆոսֆատներ, տրիֆոսֆատներ եւ պոլիֆոսֆատներ՝ P₂O₅-ի վերահաշվարկով.

8) սննդարդյունաբերության մեջ օգտագործման համար չթույլատրված սննդային հավելումների ներկանյութեր՝ ամարանտ, էրիտրոզին, կարմիր 2G, դեղին 2G, ցիտրուսային կարմիր 2, կոնսերվանտներ՝ պարահիդրոքսիբենզոլաթթվի պրոպիլային եթեր եւ դրա նատրիումական աղն ու հեքսամեթիլենտետրամին եւ ալյուրի մշակման համար նյութեր՝ կալիումի եւ կալցիումի բրոմատներ, ինչպես նաեւ ոչ սննդային նյութեր՝ սուդաններ 1 - 4, խմբագրված պարբերություններ:

15. Սննդային հավելումների օգտագործումը սննդամթերքի արտադրության մեջ կանոնակարգվում է կամ թվային նորմով (առավելագույն թույլատրելի մակարդակով), կամ սահմանվում է արտադրողի կողմից տեխնոլոգիական

անհրաժեշտության համապատասխան «համաձայն ՏՓ-ի» («համաձայն տեխնիկական փաստաթղթերի» արտադրողի կողմից սահմանվող սննդային հավելումների եւ բուրավետիչների կիրառման կանոնակարգումն այն դեպքերում, երբ սննդամթերքի թույլատրելի մակարդակները եւ (կամ) տեսակները որոշվում են տեխնոլոգիական նպատակահարմարությամբ, ընդ որում՝ հավելվող սննդային հավելումների եւ բուրավետիչների քանակությունը չպետք է գերազանցի պահանջվող տեխնոլոգիական արդյունքի համար անհրաժեշտ մեծությունները):

16. Սննդամթերքում «ՏՓ-ի համաձայն» ինչպես նորմավորվող, այնպես էլ կանոնակարգվող սննդամթերքում սննդային հավելումների պարունակությանը ներկայացվող պահանջները սահմանված են Միասնական պահանջների սույն բաժնի 3–17–րդ հավելվածներում՝ ըստ հետեւյալ ֆունկցիոնալ խմբերի՝

- 1) նյութեր հակահետեւող (հակագնդողներ)՝ 3–րդ հավելվածում.
- 2) հակաթթվեցուցիչներ՝ 4–րդ հավելվածում.
- 3) ալյուրի մշակման համար նյութեր՝ 5–րդ հավելվածում.
- 4) ջնարակապատիչներ՝ 6–րդ հավելվածում.
- 5) թթուներ եւ թթվայնության կարգավորիչներ՝ 7–րդ հավելվածում.
- 6) կոնսերվանտներ՝ 8–րդ հավելվածում.
- 7) ներկանյութեր՝ 9–րդ, 10–րդ, 11–րդ հավելվածներում.
- 8) կրիչներ՝ 12–րդ հավելվածում
- 9) քաղցրացուցիչներ՝ 13–րդ հավելվածում.
- 10) պրոպելենտներ եւ փաթեթավորման գազեր՝ 14–րդ հավելվածում.
- 11) կայունացուցիչներ, էմուլգատորներ, լցանյութեր եւ խտացուցիչներ՝ 15–րդ հավելվածում.
- 12) համի եւ բույրի ուժեղացուցիչներ՝ 16–րդ հավելվածում.
- 13) գույնի ֆիքսատորներ եւ կայունացուցիչներ՝ 17–րդ հավելվածում:

Մանկական սննդի արտադրության ժամանակ սննդային հավելումների կիրառման կանոնակարգերը ներկայացված են 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ հավելվածներում:

17. Միասնական պահանջների սույն բաժնով սահմանվում են սննդային հավելումների հետեւյալ սահմանափակումները եւ առանձնահատկությունները առանձին տեսակի սննդամթերքի արտադրության մեջ՝

1) սննդային հավելումներ (բացի ներկանյութերից եւ քաղցրացուցիչներից), որոնց կիրառումը կանոնակարգվում է «համաձայն ՏՓ-ի», սույն Միասնական պահանջների 3-6-րդ, 7-րդ (բացի երկօքսիդից, E290) 8-րդ, 12-րդ, 15 - 17-րդ հավելվածներին համապատասխան, թույլատրվում է օգտագործել սննդամթերքի բոլոր տեսակների համար՝ բացառությամբ

ա) չմշակված սննդամթերքի, մեղրի, գինու, կենդանական ծագման ճարպերի, կովի կաթից կարագի, պաստերացված եւ մանրէազերծված կաթի ու սերուցքի, բնական հանքային ջրերի, սուրճի (բացի լուծվող բուրավետացված սուրճից) եւ սուրճի էքստրակտների, չբուրավետացված թերթավոր թեյի, շաքարների, չոր մակարոնեղենի (բացառությամբ անգլյուտենային եւ ցածր սպիտակուցայինի), բնական, չբուրավետացված թանի (բացի մանրէազերծվածից)։

բ) սույն Միասնական պահանջների 18-րդ հավելվածի համաձայն՝ սննդամթերքի, որոնց համար սահմանված է ինչպես «ՏՓ-ի համաձայն» օգտագործվող սննդային հավելումների ցանկը, այնպես էլ դրանց կիրառման թույլատրելի մակարդակները։

2) ներկանյութերը կարող են կիրառվել այն սննդամթերքի ելակետային արտաքին տեսքի պահպանման համար, որի գույնը փոփոխվում է տեխնոլոգիական մշակման, պահման, փաթեթավորման եւ այլնի հետեւանքով, անգույն սննդամթերքին գույն հաղորդելու համար ու դրանց զգայորոշական հատկությունների փոփոխության համար. 10-րդ եւ 11-րդ հավելվածներում սահմանված սննդամթերքում ներկանյութերի պարունակության առավելագույն մակարդակները ենթադրում են ներկանյութերի օգտագործվող կոմերցիոն

պրեպարատների հիմնական ներկանյութի պարունակությունը.

3) չի թույլատրվում օգտագործել ներկանյութեր 9-րդ հավելվածում սահմանված սննդամթերքի արտադրության մեջ, որոնց կիրառումը կանոնակարգվում է «համաձայն ՏՓ-ի», թույլատրվում է օգտագործել սննդամթերքի բոլոր տեսակների համար՝ բացառությամբ սույն Միասնական պահանջների 9-րդ եւ 10-րդ հավելվածներում սահմանվածների.

4) սննդամթերքի գունավորման համար թույլատրվում է ջրում չլուծվող լաքերի օգտագործումը, որոնցում ներկանյութերի պարունակության առավելագույն մակարդակները պետք է համապատասխանեն սույն Միասնական պահանջների 10-րդ եւ 11-րդ հավելվածներում սահմանված ներկանյութերի լուծվող ձեւերի համար մակարդակներին,

5) մսի դրոշմման, հավկիթի եւ պանիրների մականշման համար թույլատրվում են հետեւյալ ներկանյութերը՝ մեթիլլիոլետ (ըստ ներկանյութերի միջազգային դասակարգման - C.I. 42535), ռոդամին C (C.I. 45170), ֆուկսին թթու (C.I. 45685), ինչպես նաեւ 11-րդ հավելվածին համապատասխան սննդային ներկանյութերը. ձու ներկելու համար թույլատրվում են օգտագործել միայն սննդային ներկանյութերի սույն Միասնական պահանջների 11-րդ հավելվածին համապատասխան.

6) չի թույլատրվում մանրածախ վաճառքի համար ալյուրի պատրաստման ժամանակ ալյուրի մշակման համար նյութերի օգտագործումը (բացառությամբ հատուկ տեսակների՝ բլիթային ալյուր, ալյուր կեքսերի համար եւ այլն).

7) չի թույլատրվում կոնսերվանտների օգտագործումը կաթի, կարագի, ալյուրի, հացի (բացառությամբ երկարատեւ պահման համար փաթեթավորվածի), սննդամթերքի արտադրության համար մսահումքի պատրաստման ժամանակ.

8) 10 մգ/կգ, լիտրից պակաս քանակությամբ սննդամթերքում ձծմբի երկօքսիդի պարունակությունը (դետուլֆիտացված հումքի օգտագործման ժամանակ կամ երկրորդային ընդունման պատճառով) գնահատվում է որպես կոնսերվացնող ազդեցություն չթողնող մնացորդային քանակություններ.

9) մսամթերքի արտադրության մեջ նիտրիտներ պետք է կիրառվեն միայն

2) «առավելագույն թույլատրելի մակարդակ (առավելագույն մակարդակ, թույլատրելի մակարդակ)»՝ մարդու համար սննդամթերքում առկա օժանդակ միջոցի մնացորդային քանակի անվտանգությունը երաշխավորող առավելագույն թույլատրելի քանակը սահմանող հիգիենիկ նորմատիվ.

3) «նոր տեխնոլոգիական օժանդակ միջոց»՝ տեխնոլոգիական օժանդակ միջոց, որը կանոնակարգված չէ սույն Միասնական պահանջներով սահմանված պահանջների համաձայն սննդամթերքի արտադրության մեջ օգտագործման համար.

4) «տեխնիկական փաստաթղթերի համաձայն (ՏՓ-ի համաձայն)»՝ տեխնիկական փաստաթղթերում արտադրողի կողմից սահմանվող տեխնիկական օժանդակ միջոցների կանոնակարգմամբ՝ այն դեպքում, երբ դրա մնացորդային քանակներն էապես ցածր են սահմանված մակարդակից, կամ երբ օժանդակ միջոցները տեխնոլոգիական գործընթացի ընթացքում վերանում են եւ չեն սահմանվում ուսումնասիրության ժամանակակից մեթոդներով.

5) «տեխնոլոգիական օժանդակ միջոցներ»՝ ցանկացած նյութ կամ միջոց (բացառությամբ սարքավորումների եւ սպասքի), որոնք, չլինելով սննդային բաղադրամասեր, միտումնավոր օգտագործվում են հումքի մշակման եւ սննդամթերքի արտադրության ժամանակ որոշակի տեխնոլոգիական նպատակներով. տեխնոլոգիական գործընթացի ընթացքում տեխնոլոգիական օժանդակ միջոցները (կամ դրանց ածանցյալները) վերանում են, թեեւ դրանց մնացորդային քանակները կարող են մնալ պատրաստի մթերքում՝ պայմանով, որ դրանք անթույլատրելի վտանգ չեն ներկայացնում մարդու առողջությամբ համար, եւ որեւէ տեխնոլոգիական

ազդեցություն չեն առաջացնում վերջնական սննդամթերքում.

6) «Ֆերմենտային պատրաստուկներ»՝ մաքրված եւ խտացված մթերք, որը պարունակում է որոշակի ֆերմենտներ կամ ֆերմենտների ամբողջություն, որոնք բնորոշ են պրոդուցենտների կենսամիջավայրի (բույսեր, կենդանիներ, միկրոօրգանիզմներ) համար եւ անհրաժեշտ են մթերքի արտադրության ժամանակ տեղի ունեցող կենսաքիմիական որոշակի գործընթացների համար:

3. Ընդհանուր դրույթներ

4. Սույն Միասնական պահանջների գործողությունը նախատեսված է՝

1) տեխնոլոգիական օժանդակ միջոցների արտադրության եւ շրջանառության, ինչպես նաեւ օժանդակ միջոցների օգտագործմամբ արտադրված սննդամթերքի (սննդային հավելումների) արտադրության եւ շրջանառության ոլորտներում տնտեսական գործունեության մեջ ներգրավված իրավաբանական անձանց ու անհատ ձեռնարկատերերի համար.

2) բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, սպառողների իրավունքների եւ սպառողական շուկայի պաշտպանության ոլորտներում հսկողության (վերահսկողության) գործառույթներ իրականացնող՝ Մաքսային միության անդամ երկրների պետական հսկողության (վերահսկողության) մարմինների համար:

5. Նորահայտ տեխնոլոգիական օժանդակ միջոցները, որոնք չեն կարգավորվում սույն Միասնական պահանջներով, կարող են օգտագործվել Մաքսային միության պետությունների կողմից սահմանված կարգով:

Ի լրումն նորմատիվ եւ տեխնիկական փաստաթղթերի (ստանդարտներ, տեխնիկական պայմաններ, կանոնակարգեր, տեխնոլոգիական հրահանգներ, մասնագրեր, բաղադրագրեր, կազմի վերաբերյալ տեղեկություններ).

Նյութի (պատրաստուկի) բնութագիրը՝ դրա ծագումը եւ քիմիական բանաձեւը

(կազմը), ֆիզիկաքիմիական հատկությունները, ստացման եղանակը, հիմնական նյութի բաղադրությունը, կիսամթերքների, խառնուկների առկայությունն ու պարունակությունը, մաքրության աստիճանը, ցանկալի տեխնոլոգիական արդյունքի հասնելու մեխանիզմը, սննդային նյութերի հետ փոխազդող հնարավոր արտադրանքը.

2) թունաբանական բնութագրերը՝ առանձին նյութերի համար՝ նյութափոխանակություն (մետաբոլիզմ). կենդանական ծագման օրգանիզմում.

3) նոր օժանդակ միջոցների կիրառման տեխնոլոգիական հիմնավորումը, առավելություններն արդեն օգտագործվող միջոցների համեմատությամբ, այն սննդամթերքի ցանկը, որի արտադրության մեջ առաջարկվում է դրա օգտագործումը, տեխնոլոգիական առումով արդյունավետության հասնելու համար անհրաժեշտ չափաքանակները.

4) անվտանգության սահմանված ցուցանիշերը, նորահայտ օժանդակ միջոցների մնացորդային քանակների սահմանման մեթոդները պարունակող տեխնիկական փաստաթղթերը:

6. Ֆերմենտային պատրաստուկների վերաբերյալ նորմատիվ եւ տեխնիկական փաստաթղթերում անհրաժեշտ է նշել պատրաստուկի ստացման աղբյուրը եւ դրա բնութագիրը՝ ներառյալ հիմնական եւ լրացուցիչ ակտիվությունը:

Ֆերմենտների միկրոօրգանիզմների եւ պրոդուցենտների շտամների վրա պետք է լրացուցիչ ներկայացվեն հետեւյալ տեղեկությունները՝

1) տաքսոնոմիական դրության (շտամի ցեղի եւ տեսակի անվանումը, համարն ու սկզբնական անվանումը) մասին տվյալներ, կուլտուրաների հավաքման ժամանակ դեպոնացման եւ մոդիֆիկացիաների մասին տեղեկություններ).

2) թունածնության եւ ախտածնության առումով կուլտուրաների ուսումնասիրության վերաբերյալ նյութեր (ցեղերի ներկայացուցիչների շտամների համար, որոնց շրջանում կարելի է հանդիպել ախտածին միկրոօրգանիզմների).

3) ֆերմենտային պատրաստուկների արտադրության մեջ գենետիկորեն ձեւափոխված միկրոօրգանիզմների շտամների օգտագործման մասին հայտարարություն:

7. Տեխնոլոգիական օժանդակ միջոցները, ինչպես ֆերմենտային պատրաստուկները, չեն նշվում այնպիսի սննդամթերքի մակնշման մեջ, որոնց արտադրության մեջ դրանք օգտագործվել են:

4. Տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջները

8. Անվտանգության ցուցանիշների առումով տեխնոլոգիական օժանդակ միջոցները (բացի ֆերմենտային պատրաստուկներից) պետք է համապատասխանեն Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության պահանջներին:

Անվտանգության ցուցանիշների առումով տեխնոլոգիական օժանդակ միջոցները պետք է համապատասխանեն հետեւյալ պահանջներին՝

թունավոր տարրերի պարունակությունը չպետք է գերազանցի՝ կապար՝ 5,0 մգ/կգ.

2) միկրոկենսաբանական ցուցանիշների առումով տեխնոլոգիական օժանդակ միջոցները պետք է համապատասխանեն հետեւյալ պահանջներին՝ մեզոֆիլային աերոբ եւ ֆակուլտատիվ անաերոբ միկրոօրգանիզմների քանակությունը՝ (ՄԱՖԱՄՔ)՝ ԳԱՄ/գ՝ $5 \cdot 10^4$ (բուսական, բակտերիալ եւ սնկային ծագման ֆերմենտային պատրաստուկների համար), $1 \cdot 10^4$ (կենդանական ծագման, այդ թվում՝ կաթ մակարդող ֆերմենտային պատրաստուկների համար), աղիքային ցուպիկների խմբի մանրէներ (ԱՅԽՄ, կոլիձեւեր)՝ 0,1 գ–ում՝ չեն թույլատրվում, ախտածին միկրոօրգանիզմներ, այդ թվում՝ սալմոնելաներ՝ 25 գ–ում՝ չեն թույլատրվում, E. coli 25 գ–ում՝ չեն թույլատրվում.

3) ֆերմենտային պատրաստուկները չպետք է պարունակեն ֆերմենտների պրոդուցենտների կենսունակ ձեւեր.

4) բակտերիալ եւ սնկային ծագման ֆերմենտային պատրաստուկները չպետք է ունենան հակաբիոտիկային ակտիվություն.

5) սնկային ծագման ֆերմենտային պատրաստուկները չպետք է պարունակեն միկոտոքսիններ (աֆլատոքսին B1, T-2 տոքսին, զեարալենոն, օխրատոքսին A, ստերիգմատոցիստին):

Ֆերմենտային պատրաստուկներում միկոտոքսինների պարունակության նկատմամբ հսկողություն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ միկոտոքսինների պրոդուցենտներ առավել հաճախ համարվում են սնկերի թունածին շտամները՝ *Aspergillus flavus* եւ *Aspergillus parasiticus*՝ աֆլատոքսինների եւ ստերիգմատոցիստինի համար. *Aspergillus ochraceus* եւ *Penicillium verrucosum*, առավել հազվադեպ՝ *Aspergillus sclerotiorum*, *Aspergillus melleus*, *Aspergillus alliaceus*, *Aspergillus sulphureus*՝ օխրատոքսին A-ի համար. *Fusarium graminearum*, առավել հազվադեպ՝ *Fusarium*-ի այլ տեսակներ՝ զեարալենոնի, դեզօքսինիվալենոլի եւ T-2 տոքսինի համար:

9. Սննդամթերքի եւ սննդային հավելումների տեխնոլոգիական օժանդակ միջոցների կիրառման անվտանգության նպատակներով՝ պետք է պահպանել հետեւյալ պահանջները՝

1) տեխնոլոգիական օժանդակ միջոցների կիրառումը չպետք է մեծացնի սննդամթերքի միջոցով մարդու առողջությանը հասցվող հնարավոր անբարենպաստ ազդեցության ռիսկի աստիճանը.

2) սննդամթերքը պետք է համապատասխանի սույն Միասնական պահանջներով սահմանված՝ դրանում տեխնոլոգիական օժանդակ միջոցների մնացորդային թույլատրելի քանակների պարունակության վերաբերյալ կանոնակարգերին.

3) տեխնոլոգիական օժանդակ միջոցների կիրառումը չպետք է սննդամթերքի զգայորոշման ցուցանիշների վատթարացում առաջացնի.

4) Մաքսային միության երկրների տարածք ներմուծվող տեխնոլոգիական օժանդակ միջոցները եւ դրանց մնացորդային քանակները պարունակող սննդամթերքը

պետք է համապատասխանեն սույն Միասնական պահանջներով սահմանված կանոնակարգերին.

5) տեխնոլոգիական օժանդակ միջոցները պետք է չափաճրարվեն եւ փաթեթավորվեն այնպիսի եղանակով, որով հնարավոր կլինի պիտանելիության ժամկետի ընթացքում պահել պահպանման պայմանները՝ ապահովելով դրանց անվտանգությունը եւ մակնշման մեջ նշված սպառողական հատկությունները.

6) տեխնոլոգիական օժանդակ միջոցների փաթեթավորման ժամանակ պետք է օգտագործվեն սննդամթերքի հետ շփվող նյութերի անվտանգության պահանջներին համապատասխանող նյութեր (գլուխ II, բաժին 16).

7) Մաքսային միության երկրների տարածքում շրջանառության մեջ գտնվող տեխնոլոգիական օժանդակ միջոցներին պետք է կցվեն դրանց անվտանգությունը հաստատող փաստաթղթեր (պետական գրանցման մասին վկայական) եւ հետազօծելիությունն ապահովող փաստաթղթեր (ապրանքատրանսպորտային բեռնագրեր), ինչպես նաեւ մթերքի պահպանման պայմանների եւ պահպանման (պիտանիության) ժամկետների մասին տեղեկություններ.

8) Մաքսային միության անդամ երկրների տարածքում շրջանառության մեջ գտնվող տեխնոլոգիական օժանդակ միջոցները, որոնք արտադրվել են գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների եւ (կամ) նանոտեխնոլոգիաների եւ այլ կենսատեխնոլոգիաների օգտագործմամբ, պետք է համապատասխանեն սննդամթերքի անվտանգությանը եւ սննդային արժեքին վերաբերող միասնական պահանջներին (գլուխ II, բաժին 1).

10. Տեխնոլոգիայի բարելավման նպատակով հումքի եւ սննդամթերքի մշակում իրականացնելիս թույլատրվում է օգտագործել տեխնոլոգիական օժանդակ միջոցներ՝ սույն Միասնական պահանջներով սահմանված կանոնակարգերին համապատասխան:

Օժանդակ միջոցները կանոնակարգվում են ըստ դրանց ֆունկցիոնալ դասերի՝

1) գունաբացող եւ ֆիլտրող նյութեր, ֆլուկուլյանտներ եւ կլանիչներ.

2) լուծամզող եւ տեխնոլոգիական լուծիչներ.

3) կատալիզատորներ.

4) սնուցող նյութեր (լրացասնունդ) խմորիչների համար.

5) ֆերմենտային պատրաստուկներ.

6) նյութեր եւ կրիչներ՝ ֆերմենտների անշարժացման իմոբիլիզացիայի համար.

7) օժանդակ այլ միջոցներ (վերը չնշված այլ ֆունկցիաներով):

Որպես տեխնոլոգիական օժանդակ միջոց՝ սննդամթերքի արտադրության մեջ կարող են օգտագործել նաեւ այնպիսի սննդային հավելումներ, որոնց կիրառությունը սննդի արդյունաբերության մեջ թույլատրվում է սննդային հավելումների եւ բուրավետիչների անվտանգությանը ներկայացվող միասնական պահանջներին համապատասխան (գլուխ II, բաժին 22):

11. Շաքարի արդյունաբերության, գինեգործության եւ սննդի արդյունաբերության այլ ոլորտներում թույլ է տրվում օգտագործել գունաբացող, ֆիլտրող նյութեր, ֆլոկուլյանտներ եւ սորբենտներ՝ թիվ 1 հավելվածին համապատասխան:

Սննդային յուղերի եւ այլ մթերքի արտադրության մեջ թույլ է տրվում օգտագործել կատալիզատորներ՝ թիվ 2 հավելվածին համապատասխան:

Ճարպային եւ այլ սննդամթերքի, ինչպես նաեւ մի քանի սննդային հավելումների (բուրավետիչներ, ներկանյութեր եւ այլն) արտադրության մեջ թույլ է տրվում օգտագործել լուծամզող եւ տեխնոլոգիական լուծիչներ՝ թիվ 3 հավելվածին համապատասխան:

Հացի եւ հացաբուլկեղենի, սննդային խմորիչների արտադրության մեջ թույլ է տրվում օգտագործել խմորիչների սնուցող նյութեր (լրացասնունդ, սուբստրատներ)՝ թիվ 4 հավելվածով սահմանված կանոնակարգերին համապատասխան:

Հումքի եւ սննդամթերքի մշակման տեխնոլոգիայում թույլատրվում է օգտագործել

այլ տեխնոլոգիական ֆունկցիաներ ունեցող օժանդակ միջոցներ՝ թիվ 5 հավելվածով սահմանված կանոնակարգերին համապատասխան:

12. Սննդի արդյունաբերությունում սննդամթերքի արտադրության տեխնոլոգիայում թույլատրվում է օգտագործել ֆերմենտային պատրաստուկներ:

Պատրաստի սննդամթերքում ֆերմենտների ակտիվություն չպետք է հայտնաբերվի:

Որպես առաջացման աղբյուրներ եւ պրոդուցենտներ՝ ֆերմենտային պատրաստուկների ստացման համար թույլատրվում է օգտագործել գյուղատնտեսական առողջ կենդանիների օրգաններ եւ հյուսվածքներ, մշակաբույսեր, ինչպես նաեւ՝ մանրէների եւ ստորակարգ սնկերի միկրոօրգանիզմների ոչ ախտածին եւ ոչ թունածին հատուկ շտամներ՝ թիվ 6 հավելվածով սահմանված կանոնակարգերին համապատասխան:

Ֆերմենտային պատրաստուկների ակտիվության ստանդարտացման եւ կայունության բարձրացման համար դրանց բաղադրության մեջ ներարկվում են սահմանված կարգով թույլատրված սննդային հավելումներ (կալիումի քլորիդ, նատրիումի ֆոսֆատ, գլիցերին եւ այլն):

13. Որպես իմոբիլիզացնող նյութեր եւ պինդ կրիչներ՝ ֆերմենտային պատրաստուկների արտադրության համար թույլատրվում է օգտագործել օժանդակ միջոցներ՝ թիվ 7 հավելվածին համապատասխան:

14. Տեխնոլոգիական օժանդակ միջոցների եւ դրանց օգտագործմամբ արտադրված սննդամթերքի անվտանգության համար պատասխանատվություն է կրում դրանք արտադրողը (վաճառողը):

15. Տեխնոլոգիական օժանդակ միջոցների մակնշման մեջ պետք է նշված լինի՝

1) մթերքի անվանումը. ֆերմենտային պատրաստուկների համար լրացուցիչ նշվում է՝ ֆերմենտի ակտիվության (պրոտեոլիտիկ, ամիլոլիտիկ եւ այլն) տեսակը

(տեսակները), միկրոօրգանիզմ–պրոդուցենտի, կենդանական կամ բուսական ծագման աղբյուրի տեսակը (տեսակները).

2) բաղադրությունը (բաղադրամասերի ցանկը՝ նվազման կարգով, բացի մեկ բաղադրամասից կազմված արտադրանքից).

3) «նախատեսված չէ մանրաձախ վաճառքի համար».

4) պատրաստողի եւ վաճառողի անվանումն ու գտնվելու վայրը.

5) զտաքաշը (կամ մթերքի ծավալը).

6) պատրաստման ամսաթիվը.

7) պահպանման ժամկետը եւ պայմանները.

8) խմբաքանակի համարը կամ արտադրանքի խմբաքանակը նույնականացնող նշում:

1-ին (բացի մթերքի անվանումից), 5-րդ, 6-րդ եւ 8-րդ ենթակետերում նշված տեղեկությունները կարող են նշվել տեխնիկական (կից ներկայացված) փաստաթղթերում:

**ՀԻԳԻԵՆԻԿ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ ԳՈՒՆԱԲԱՑՈՂ, ՁՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ,
ՖԼՈԿՈՒԼՅԱՆՏՆԵՐԻ ՈՒ ՍՈՐԲԵՆՏՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)

Տեխնոլոգիական օժանդակ միջոց	Սննդամթերք, տեխնոլոգիա	Առավելագույն մնացորդային քանակը
Ակրիլամիդային խեժեր՝ ձեռափոխված (մոդիֆիկացված)	Շաքարի արդյունաբերություն. Ջրի եռալը	համաձայն ՏՓ-ի
Ակրիլատ-ակրիլային խեժ	Շաքարի արդյունաբերություն	10 մգ/կգ
Ալյումակրեմնեզեմ (ալյումասիլիկատ)	Հյութամթերք	1.0 գ/լ
Ալյումաֆոսֆատներ (լուծվող ամբողջություններ)	Ոչ ալկոհոլային խմիչքներ	համաձայն ՏՓ-ի
Սննդային ալբումին	Համաձայն ՏՓ-ի	համաձայն ՏՓ-ի
Անտրանիլաթթու	Բամբակի յուղ (գոսսիպոլի հեռացման համար)	համաձայն ՏՓ-ի
Մազնեզիումի ացետատ	Մաթի, շաքարի լուծույթներ	համաձայն ՏՓ-ի
Բենտոնիտ	Օսլայի եւ մաթի, շաքարի, հյութերի արդյունաբերություն, յուղագործություն, գինեգործություն, լիկյոր-օղու արտադրատեսակներ, ճարպայուղային արտադրություն	համաձայն ՏՓ-ի
Վինիլացետատի ու վինիլպիրոլիդոնի սպոլիմեր	Համաձայն ՏՓ-ի	համաձայն ՏՓ-ի
N-վինիլպիրոլիդոնի դիմետակրիլային եթերով տրիէթիլենգլիկոլի սպոլիմեր	Ոչ ալկոհոլային խմիչքներ, լիկյոր-օղու արտադրատեսակներ	ՏՓ-ի համաձայն՝ պատրաստի մթերքներում մնացորդներ

		չպետք է լինեն
Կավի սորբենտներ (սպիտակեցրած, բնական, ակտիվ հողեր կամ տեսակներ, ակտիվացված տրեպել)	Օսլայի եւ մաթի, շաքարի արդյունաբերություն, յուղագործություն, գինեգործություն, ճարպայուղային արտադրություն	համաձայն ՏՓ-ի
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 34 որոշման խմբագրությամբ)		
Դիատոմիտ	Գինենյութի, շաքարի ու մաթի լուծույթների, մրգային հյութերի, բուսական յուղերի եւ այլ մթերքների մշակում	համաձայն ՏՓ-ի
Երկվինիլբենզոլ էթիլվինիլբենզոլ սուպոլիմեր	Ջրային սննդային լուծույթների մշակում (բացի գազավորված ըմպելիքներից)	համաձայն ՏՓ-ի
Դիմեթիլամին էպիքլորհիդրին	Շաքարի արդյունաբերություն	5,0 մգ/կգ
Սննդային դոնդողանյութ	Գինեգործություն, լիկյոր-օղու արտադրատեսակներ	Համաձայն ՏՓ-ի
Ջտիչ հողեր (նատրիումային մոնոմորֆիլաոնիտի կալցիումային անալոգներ)	Համաձայն ՏՓ-ի	համաձայն ՏՓ-ի
Իոնափոխանակիչ խեժեր	Համաձայն ՏՓ-ի	համաձայն ՏՓ-ի
Կաուլին	Օսլայի եւ մաթի, շաքարի, հյութերի արդյունաբերություն, յուղագործություն, գինեգործություն, լիկյոր-օղու արտադրատեսակներ, ճարպայուղային արտադրություն. Գինենյութի, շաքարի ու մաթի լուծույթների, մրգային հյութերի, բուսական յուղերի եւ այլ մթերքների մշակում	համաձայն ՏՓ-ի
Ստվարաթուղթ - ֆիլտր	Համաձայն ՏՓ-ի	համաձայն ՏՓ-ի
Կիզելգուր	Գարեջրի զտում (ֆիլտրացիա) Լիկյոր-օղու արտադրատեսակներ	համաձայն ՏՓ-ի

	Ճարպայուղային արտադրություն	
Կլինոպտիլոլիտներ (цеолит)	Քաղցրահյութ, հյութե- եւ գինենյութեր	համաձայն ՏՓ-ի
Նատրիումի միահիդրոպիրոֆոսֆատ	Համաձայն ՏՓ-ի	համաձայն ՏՓ-ի
Նիտրիլտրիմեթիլֆոսֆո- նաթթվի տրինատրիումային աղ	Հյութեր (երկաթի հեռացումը)	ՏՓ-ի համաձայն՝ հյութերում մնացորդը պետք է կազմի առավելագույնը 10 մգ/կգ
Կալցիումի օքսիդ, կիր	Շաքարի արդյունաբերություն	համաձայն ՏՓ-ի
Պեռլիտ	Գինենյութ Լիկյոր-օղու արտադրատեսակներ Ճարպայուղային արտադրություն	համաձայն ՏՓ-ի
Արյան չոր պլազմա	Համաձայն ՏՓ-ի	համաձայն ՏՓ-ի
Պոլիակրիլամիդ	Շաքար (ճակնդեղ) Լիկյոր-օղու արտադրատեսակներ	համաձայն ՏՓ-ի
Նատրիումի պոլիակրիլատ	Շաքար (ճակնդեղ)	համաձայն ՏՓ-ի
Պոլիակրիլաթթու	Շաքարի արդյունաբերություն	համաձայն ՏՓ-ի
Պոլիվինիլկապրոլակտամ	Գարեջրի քաղցրահյութ Գինենյութ	համաձայն ՏՓ-ի
Պոլիվինիլտրիագոլ	Խաղողի հյութ, քաղցրահյութ	500 մգ/կգ
Պոլիդիալիլդիմեթիլամո- նիումի քլորիդ	Շաքար Բուսական յուղ	0,01 մգ/կգ (I)
Խնձորաթթվի եւ նատրիումի մալատի պոլիմերներ	Շաքարի արտադրություն	5 մգ/կգ
Պոլիօքսիէթիլեն	Գինենյութ	համաձայն ՏՓ-ի
Պոլիստիրոլ	Շաքար Հյութեր	Համաձայն ՏՓ-ի

	Գինի, գարեջուր	
Ձկան սուսինձ	Գինի, գարեջուր	համաձայն ՏՓ-ի
Ստիրոլիդիվինիլբենզոլային քլորմեթիլացված եւ ամիդացված պոլիմերային խեժ	Շաքարի արդյունաբերություն	1 մգ/կգ
Տանին	Գինիներ Լիկյոր-օղու արտադրատեսակներ	համաձայն ՏՓ-ի
Կտորե ֆիլտրներ՝ բամբակե եւ սինթետիկ	Համաձայն ՏՓ-ի	համաձայն ՏՓ-ի
Ակտիվ ածուխ՝ բուսական	Գինենյութի, շաքարի ու մաթի լուծույթների, մրգային հյութերի, բուսական յուղերի եւ այլ մթերքների մշակում. Օղի	համաձայն ՏՓ-ի
Ֆիտին	Գինենյութ (երկաթի հեռացումը)	համաձայն ՏՓ-ի
Նատրիումի օրտոֆոսֆատ 3՝ տեղակալված	Համաձայն ՏՓ-ի	համաձայն ՏՓ-ի
Ցիրկոնիումի ֆոսֆատ	Գինենյութ	0,1 մգ/լ
Ֆոսֆորաթթու	Համաձայն ՏՓ-ի	համաձայն ՏՓ-ի
Խիտին, խիտոզան	Համաձայն ՏՓ-ի	համաձայն ՏՓ-ի
Էնոմելանին	հյութ- եւ գինենյութ	համաձայն ՏՓ-ի

ՀԻԳԻԵՆԻԿ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ ԿԱՏԱԼԻԶԱՏՈՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<1>

Տեխնոլոգիական օժանդակ միջոց	Սննդամթերք, տեխնոլոգիա	Առավելագույն մնացորդային քանակը
Ալյումին	Համաձայն ՏՓ-ի	համաձայն ՏՓ-ի
Մետաղական կալիում	Սննդայուղերի վերաբերացում	1 մգ/կգ
Կալիումի մեթիլատ (մեթօքսիդ)	Սննդային յուղերի վերաբերացում	1 մգ/կգ
Կալիումի էթիլատ	Սննդայուղերի վերաբերացում	համաձայն ՏՓ-ի
Մանգան	Սննդայուղերի հիդրոգենացում	0,4 մգ/կգ
Պղինձ	Սննդայուղերի հիդրոգենացում	0,1 մգ/կգ
Պղնձի քրոմատ	Համաձայն ՏՓ-ի	համաձայն ՏՓ-ի
Պղնձի քրոմիտ	Համաձայն ՏՓ-ի	համաձայն ՏՓ-ի
Մոլիբդեն	Սննդայուղերի հիդրոգենացում	0,1 մգ/կգ
Մետաղական նատրիում	Սննդայուղերի վերաբերացում	1 մգ/կգ
Նատրիումի ամիդ	Սննդայուղերի վերաբերացում	1 մգ/կգ
Նատրիումի մեթիլատ	Սննդայուղերի վերաբերացում	1 մգ/կգ
Նատրիումի էթիլատ	Սննդայուղերի վերաբերացում	1 մգ/կգ
Նիկել	Սննդայուղերի հիդրոգենացում եւ յուղերի պնդացում	0,7 մգ/կգ
	Շաքարի, էթիլային սպիրտի արտադրություն	1 մգ/կգ
Տարբեր մետաղների օքսիդներ	Սննդայուղերի հիդրոգենացում	< 0,1 մգ/կգ
Պալադիում	Սննդայուղերի հիդրոգենացում	1 մգ/կգ
Պլատին	Սննդայուղերի հիդրոգենացում	0,1 մգ/կգ
Արծաթ	Սննդայուղերի հիդրոգենացում	0,1 մգ/կգ
Տրիֆտորմեթան սուլֆինաթթու	Կակաոյի յուղի փոխարինիչներ	0,01 մգ/կգ
Քրոմ	Սննդայուղերի հիդրոգենացում	0,1 մգ/կգ

Ցիրկոնիում	Համաձայն ՏՓ-ի	համաձայն ՏՓ-ի
------------	---------------	---------------

Ծանոթագրություն. <1> Որպես կատալիզատոր կարող են օգտագործվել նաև նշված երկու կամ ավելի մետաղների համաձուլվածքները:

Հավելված թիվ 3

**ՀԻԳԻԵՆԻԿ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ ԼՈՒԾԱՄՉՎԱԾ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԼՈՒԾԻՉՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Տեխնոլոգիական օժանդակ միջոց	Սննդամթերք, տեխնոլոգիա	Առավելագույն մնացորդային քանակը
Ացետոն	Բուրավետիչներ	30 մգ/կգ
	Ներկանյութեր	2 մգ/կգ
	Սննդայուղեր	0,1 մգ/կգ
Ամիլացետատ	Բուրավետիչ Ներկանյութեր	համաձայն ՏՓ-ի
Բենզիլային սպիրտ	Բուրավետիչներ Ներկանյութեր Ճարպաթթուներ	համաձայն ՏՓ-ի
Բուտան	Բուրավետիչներ	1 մգ/կգ
	Սննդայուղեր	0,1 մգ/կգ
1,3 - Բուտանդիոլ	Բուրավետիչներ	համաձայն ՏՓ-ի
ն - Բուտանոլ - 1	Բուրավետիչներ, ճարպաթթուներ, ներկանյութեր	1 գ/կգ
ն - Բուտանոլ - 2	Բուրավետիչներ	1 մգ/կգ
Բուտիլացետատ	Համաձայն ՏՓ-ի	համաձայն ՏՓ-ի
տրետ - Բուտիլային սպիրտ	Համաձայն ՏՓ-ի	համաձայն

		ՏՓ-ի
Հեքսան	Բուրավետիչներ, սննդայուղեր	1 մգ/կգ
Հեպտան	Բուրավետիչներ, սննդայուղեր	1 մգ/կգ
Ածխածնի երկօքսիդ (հեղուկ ածխաթթու)	Բուրավետիչներ Լուծամզուքներ	համաձայն ՏՓ-ի
Դիբուտիլային եթեր	Բուրավետիչներ	2 մգ/կգ
Դիքլորդիֆտորմեթան	Բուրավետիչներ, ներկանյութեր	1 մգ/կգ
Դիքլորմեթան (մեթիլեն-քլորիդ)	Սուրճի, թեյի կոֆեինազերծում	5 մգ/կգ
Դիքլորտետրաֆտորէթան	Բուրավետիչներ	1 մգ/կգ
Դիքլորֆտորմեթան	Բուրավետիչներ	1 մգ/կգ
Դիքլորէթան	Սուրճի կոֆեինազերծում	5 մգ/կգ
Դիէթիլային եթեր	Բուրավետիչներ, ներկանյութեր	2 մգ/կգ
Դիէթիլարոպիլկետոն	Համաձայն ՏՓ-ի	համաձայն ՏՓ-ի
Դիէթիլցիտրատ	Բուրավետիչներ, ներկանյութեր	համաձայն ՏՓ-ի
Ազոտի ենթաօքսիդ	Համաձայն ՏՓ-ի	համաձայն ՏՓ-ի
Իզոբուտան	Բուրավետիչներ	1 մգ/կգ
Իզոպրոպիլմիրիստատ	Բուրավետիչներ Ներկանյութեր	համաձայն ՏՓ-ի
Իզոպրոպիլային սպիրտ (պրոպան-2-ոլ)	Բուրավետիչներ Ներկանյութեր	համաձայն ՏՓ-ի
Մեթիլացետատ	Սուրճի կոֆեինազերծում	20 մգ/կգ
	Բուրավետիչներ	1 մգ/կգ
	Շաքարի գտում	1 մգ/կգ
Մեթիլպրոպանոլ-1	Բուրավետիչներ	1 մգ/կգ
ն-Օկտիլային եթեր	Կիտրոնաթթու	համաձայն ՏՓ-ի
Պենտան	Բուրավետիչներ, սննդայուղեր	1 մգ/կգ
Պենտոլային եթեր	Բուրավետիչներ, սննդայուղեր	1 մգ/կգ
Պրոպան	Բուրավետիչներ	1 մգ/կգ
	Սննդայուղեր	0,1 մգ/կգ
Պրոպիլենգլիկոլ (պրոնան-1,2-դիոլ)	Ճարպաթթուներ Բուրավետիչներ Ներկանյութեր	համաձայն ՏՓ-ի
Պրոպիլային սպիրտ (ն-պրոպանոլ-1)	Ճարպաթթուներ Բուրավետիչներ	համաձայն ՏՓ-ի

	Ներկանյութեր	
Տոլուոլ	Բուրավետիչներ	1 մգ/կգ
Գլիցերինի տրիբուտիլատ	Բուրավետիչներ Ներկանյութեր	համաձայն ՏՓ-ի
Տրիդոդեցիլամին	Կիտրոնաթթու	համաձայն ՏՓ-ի
Գլիցերինի տրիպրոպիոնատ	Բուրավետիչներ Ներկանյութեր	համաձայն ՏՓ-ի
տրիքլորֆտորմեթան	Բուրավետիչներ	1 մգ/կգ
1,1,2- Տրիքլորէթիլեն	Բուրավետիչներ, սննդայուղեր	2 մգ/կգ
Իզոպարաֆինացված նավթային ածխաջրածիններ	Կիտրոնաթթու	համաձայն ՏՓ-ի
Ցիկլոհեքսան	Բուրավետիչներ, սննդայուղեր	1 մգ/կգ
Էթանոլ	Համաձայն ՏՓ-ի	համաձայն ՏՓ-ի
Էթիլացետատ	Համաձայն ՏՓ-ի	համաձայն ՏՓ-ի
Էթիլմեթիլկետոն (Բուտանոն)	Ճարպաթթուներ, բուրավետիչներ, ներկանյութեր	2 մգ/կգ
	Սուրճի, թեյի կոֆեինազերծում	2 մգ/կգ

Հավելված թիվ 4

**ՀԻԳԻԵՆԻԿ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ ԽՄՈՐԻՉՆԵՐՈՒՄ ՍՆՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐԻ
(ԼՐԱՑԱՄՆԵԴԻ) ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Տեխնոլոգիական օժանդակ միջոց	Կիրառման տեխնոլոգիան
Բիոտին	համաձայն ՏՓ-ի
Յ կոմպլեքսի վիտամիններ	համաձայն ՏՓ-ի
Խմորիչի ավտոլիզատներ	համաձայն ՏՓ-ի
Ինոզիտ	համաձայն ՏՓ-ի
Կալիումի կարբոնատներ	համաձայն ՏՓ-ի
Կալցիումի կարբոնատ	համաձայն ՏՓ-ի
Նիացին	համաձայն ՏՓ-ի
Պանտոտենային թթու	համաձայն ՏՓ-ի
Ամոնիումի սուլֆատ	համաձայն ՏՓ-ի
Երկաթի սուլֆատ	համաձայն ՏՓ-ի
Ամոնիումի երկաթի սուլֆատ	համաձայն ՏՓ-ի

Կալցիումի սուլֆատ	համաձայն ՏՓ-ի
Մագնիումի սուլֆատ	համաձայն ՏՓ-ի
Պղնձի սուլֆատ	համաձայն ՏՓ-ի
Ցինկի սուլֆատ	համաձայն ՏՓ-ի
Ամոնիումի ֆոսֆատ	համաձայն ՏՓ-ի
Կալցիումի սուլֆատ	համաձայն ՏՓ-ի
Ամոնիումի քլորիդ	համաձայն ՏՓ-ի
Կալիումի քլորիդ	համաձայն ՏՓ-ի

Ծանոթագրություն. <1> Նշված օժանդակ միջոցները կարող են օգտագործվել համակցության մեջ:

Հավելված թիվ 5

**ՀԻՓԻԵՆԻԿ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐՈՎ
ՕԺԱՆԴԱԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Տեխնոլոգիական օժանդակ միջոց	Տեխնոլոգիական ֆունկցիա	Առավելագույն մնացորդային քանակը. սննդամթերքը եւ դրա կիրառման տեխնոլոգիան
Ալկիլբենզոլսուլֆոնատ	Լվացող եւ մաքրող	Համաձայն ՏՓ-ի
Նատրիում (սուլֆանոլ, սուլֆանոլ)	միջոցներ	
N-ալկիլ (C12-C16) դիմեթիլբենզիլքլորիդ	Հակամանրէային նյութեր	համաձայն ՏՓ-ի
Կալիումի բրոմիդ	Լվացող եւ մաքրող միջոցներ	Համաձայն ՏՓ-ի՝ միրգ ու բանջարեղեն
Հիբերիլին, հիբերիլինաթթու	Ածիկի աճեցման խթանիչ	համաձայն ՏՓ-ի
Հիպոքլորիտներ	Հակամանրէային նյութեր	համաձայն ՏՓ-ի՝ սննդայուղեր
	Լվացող եւ մաքրող	համաձայն ՏՓ-ի

	միջոցներ	(բացի հավի մսեղիքի մշակումից)
Սահմանային սպիրտների գլիկոլային եթերներ	Փրփրամարիչներ	համաձայն ՏՓ-ի՝ հյութերի արտադրություն
Դիալկանոլամիններ	Լվացող եւ մաքրող միջոցներ	1 մգ/կգ շաքարի ճակնդեղ (շաքարի մեջ չի թույլատրվում)
Դիմեթիլդիկարբոնատ	Հակամանրէային նյութեր	գինու արտադրություն – մնացորդներ չպետք է լինեն
Դիմեթիլդիտիոկարբամինաթթվի նատրիումական աղ	Հակամանրէային նյութեր	համաձայն ՏՓ-ի
Նատրիումի դիօկտիլսուլֆոսուլֆինատ	Դետերգենտներ	10 մգ/կգ Մրգային ըմպելիքներ
Դիքլորդիֆտորմեթան	Շփման միջոցով սառեցնող եւ պաղեցնող միջոցներ	100 մգ/կգ Սառեցրած սննդամթերք (բացի հավի մսեղիքից)
Դիքլորֆտորմեթան	Շփման միջոցով սառեցնող եւ պաղեցնող միջոցներ	100 մգ/կգ Սառեցրած սննդամթերք (բացի հավի մսեղիքից)
Դիէթիլդիկարբոնատ	Հակամանրէային նյութեր	գինու արտադրություն – մնացորդներ չպետք է լինեն
Դոդեցիլբենզոլսուլֆոնաթթվի նատրիումական աղ	Լվացող եւ մաքրող միջոցներ	2 մգ/կգ Միրգ ու բանջարեղեն, միս եւ թռչնամիս
Կաղնու, հաճարենու տաշեղ (դուրգամում, չիպսեր եւ այլն)	Բրենդիի (գինու սպիրտների), բուրավետացված գինիների ու հատուկ տեսակի գարեջրի արտադրության տեսակախառնում (կուպաժ)	Համաձայն ՏՓ-ի
Կարբամատներ	Լվացող եւ մաքրող միջոցներ	համաձայն ՏՓ-ի շաքարի ճակնդեղ

Կետոսպիրտներ C9-C30	Փրփրամարիչներ	համաձայն ՏՓ-ի
Քսիլենսուլֆոնաթթվի նատրիումական աղ	Դետերգենտներ	1 մգ/կգ սննդային ճարպեր եւ սննդայուղեր
Լակտոպերօքսիդազային համակարգ (լակտոպերօքսիդազ, գլյուկոզօքսիդազ, տիոցիանատներ)	Հակամանրէային նյութեր	համաձայն ՏՓ-ի
Նատրիումի լաուրիլսուլֆատ	Դետերգենտներ	1 մգ/կգ սննդային ճարպեր եւ սննդայուղեր
Ճարպաթթուների մեթիլային եթերներ	Փրփրամարիչներ	համաձայն ՏՓ-ի
Մոնո- եւ դիմեթիլնավթալինսուլֆոնաթթվի նատրիումային աղ	Լվացող եւ մաքրող միջոցներ	0,2 մգ/կգ միրգ, բանջարեղեն
Մոնոէթանոլամին	Լվացող եւ մաքրող միջոցներ	1 մգ/կգ Միրգ, բանջարեղեն, շաքարի ճակնդեղ (շաքարի մեջ չի թույլատրվում)
Քացախ չդարձած թթու	Հակամանրէային նյութեր	Հավի մսեղիքի ու ձվերի մշակում. մնացորդներ չպետք է լինեն
Ջրածնի պերօքսիդ	Հակամանրէային նյութեր Լվացող եւ մաքրող միջոցներ Սպիտակեցնող նյութ	Շաքարի, մրգային ու բանջարեղենային հյութերում մնացորդներ չպետք է լինեն. Կիսապատրաստվածքներ՝ նախապատրաստվածքներ գազարից, սպիտակ արմտիքներից ու սոխից պահածոյացման արդյունաբերության համար, 2,4 գ/կգ լուծույթով մշակում – մնացորդներ չպետք է լինեն, ձվերի մշակում. մնացորդներ չպետք է լինեն. սպանդային

		արյուն (գունաթափումը կատալիզի հետ միասին). մնացորդներ չպետք է լինեն
Պոլիակրիլամիդ	Լվացող եւ մաքրող միջոցներ	1 մգ/կգ Միրգ, բանջարեղեն, շաքարի ճակնդեղ
Պոլիակրիլաթթու, նատրիումային աղ	Փրփրամարիչներ	համաձայն ՏՓ-ի
Ճարպաթթուների բազմաակիլենգլիկոլային եթերներ	Փրփրամարիչներ	համաձայն ՏՓ-ի
Գլիցերինի (լապրոլ) բազմաօքսիպրոպիլենային (բազմաօքսիէթիլենային) եթերներ	Փրփրամարիչներ	համաձայն ՏՓ-ի
ճարպաթթուների պրոպիլենային եթերներ C8-C30	Փրփրամարիչներ	համաձայն ՏՓ-ի
Կետոսպիրտների բազմաօքսիպրոպիլենային եթերներ C9-C30	Փրփրամարիչներ	համաձայն ՏՓ-ի
ճարպաթթուների բազմաօքսիէթիլենային եթերներ C8-C30	Փրփրամարիչներ	համաձայն ՏՓ-ի
Կետոսպիրտների բազմաօքսիէթիլենային եթերներ C8-C30	Փրփրամարիչներ	համաձայն ՏՓ-ի
Բազմատրբատներ (60, 65, 80)	Փրփրամարիչներ	համաձայն ՏՓ-ի
Բազմաէթիլենգլիկոլ	Փրփրամարիչներ	համաձայն ՏՓ-ի
Բազմաէթիլենգլիկոլ (400, 600) դիոլետատ	Փրփրամարիչներ	համաձայն ՏՓ-ի
Պրոպիլենի օքսիդ	Հակամանրէային նյութեր	համաձայն ՏՓ-ի
Ծծմբաթթու	Թթվայնության կարգավորիչ սպիրտի արտադրության մեջ	Համաձայն ՏՓ-ի
Նատրիումի սիլիկատ	Լվացող միջոցներ ու մաքրող միջոցներ	Համաձայն ՏՓ-ի
Սահմանային սպիրտներ C8-C30	Փրփրամարիչներ	համաձայն ՏՓ-ի
Նատրիումի եռաբազմաֆոսֆատ	Լվացող եւ մաքրող միջոցներ	Համաձայն ՏՓ-ի

Տրիէթանոլամին	Լվացող եւ մաքրող միջոցներ	0,05 մկգ/կգ շաքարի ճակնդեղ (շաքարում չի թույլատրվում)
Ունդեցիլբենզոլսուլֆոնաթթու, գծային	Լվացող եւ մաքրող միջոցներ	1 մկգ/կգ շաքարի ճակնդեղ (շաքարում չի թույլատրվում)
Ֆորմալդեհիդ	Հակամանրէային նյութեր Փրփրամարիչներ	0,05 մգ/կգ Շաքարի ճակնդեղի վերամշակում, խմորիչների արտադրություն
Ֆրեոն	Շփման միջոցով սառեցնող եւ պաղեցնող միջոցներ	համաձայն ՏՓ-ի
Նատրիումի քլորիդ	Հակամանրէային նյութեր	համաձայն ՏՓ-ի (բացի հավի մսեղիքի մշակումից)
Ցետիլաիրիդային քլորիդ	Հակամանրէային նյութեր	4 մգ/կգ (հավի մսեղիք)
Ցիանդիտիոամիդիկարբոնաթթվի երկնատրիումական աղ	Հակամանրէային նյութեր	համաձայն ՏՓ-ի
Ամոնիումին քառորդային միացություններ	Հակամանրէային նյութեր	համաձայն ՏՓ-ի՝ սննդայուղեր
	Դետերգենտներ	համաձայն ՏՓ-ի
2 – Էթիլհեքսիլային ծծմբաթթվի նատրիումական աղ	Լվացող եւ մաքրող միջոցներ	2 0 մգ/կգ միրգ, բանջարեղեն
Էթիլենբիսդիտիոկարբոնաթթվի երկնատրիումական աղ	Հակամանրէային նյութեր	համաձայն ՏՓ-ի
Էթիլենգլիկոլմիաբուտիլատ	Լվացող եւ մաքրող միջոցներ	0,03 մկգ/կգ շաքարի ճակնդեղ (շաքարում չի թույլատրվում)
Էթիլենդիամին	Հակամանրէային նյութեր	համաձայն ՏՓ-ի
Էթիլենդիամինտետրաքացախաթթվի քառանատրիումական աղ	Լվացող եւ մաքրող միջոցներ	0,003 մկգ/կգ շաքարի ճակնդեղ (շաքարում չի թույլատրվում)

Էթիլենդիքլորիդ	Լվացող եւ մաքրող միջոցներ	0,01 մկգ/կգ շաքարի ճակնդեղ (շաքարում չի թույլատրվում)
Էտոքսիխին (սանտոխին)	Հակամանրէային նյութեր	Խնձորներ (մակերեսային մշակում՝ 0,05 - 0,3%-անոց ջրային լուծույթ), մնացորդները պահպանումից հետո՝ 0,1 մկգ/կգ

Հավելված թիվ 6

ՖԵՐՄԵՆՏԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐ, ՈՐՈՆՑ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է

Ֆերմենտային պատրաստուկներ	Ստացման աղբյուրը, պրոդուցենտ
Կենդանական ծագման ֆերմենտային պատրաստուկներ	
ալֆա-ամիլազ	խոշոր եղջերավոր անասունների ենթաստամոքսային գեղձերը
Կատալազ	խոշոր եղջերավոր անասունների, ձիերի լյարդ
Լիզոցիմ Լիպազ	հավկիթների սպիտակուցը խոշոր եղջերավոր անասունների ստամոքսները, ենթաստամոքսները, շրդանները, թքագեղձերը
Պեպսին	Խոզերի ստամոքսները
Թռչունների պեպսին	հավերի ենթաստամոքսը
Շրդանային ֆերմենտ	խոշոր եղջերավոր անասունների, հորթերի, այծերի, ուլիկների, ոչխարների, գառների ստամոքսները, շրդանները
Տրիպսին	խոշոր եղջերավոր անասունների ենթաստամոքսային գեղձերը
Ֆոսֆոլիպազ	հորթերի, գառների, այծերի ենթաստամոքսային գեղձերը
Խիմոզին	հորթերի, գառների, այծերի ենթաստամոքսային գեղձերը

Բուսական ծագման ֆերմենտային պատրաստուկներ	
Բրոմելայն	Արքայախնձոր (Ananas spp.)
Լիպոզիդազ, լիպոքսիդենազ	սոյա
Մալտկարբոհիդրազներ	գարի, գարու ածիկ
Պապահին	պապայա (Carica papaya)
Խիմապապահին	պապայա (Carica papaya)
Ֆիցին	թուզ (Ficus spp.)
Մանրէային ծագում ունեցող ֆերմենտային պատրաստուկներ	
Ալկոհոլդեհիդրոգենազ	Saccharomyces cerevisiae
ալֆա-ամիլազ	Aspergillus niger Aspergillus oryzae Bacillus amyliquefaciens Bacillus licheniformis Bacillus megaterium Bacillus stearothermophilus Bacillus subtilis Rhizopus arrhizus Rhizopus oryzae
Բետա-ամիլազ	Bacillus cereus Bacillus megaterium Bacillus subtilis
Արաբինոֆուրանոզիդազ	Aspergillus niger
ալֆա-Գալակտոզիդազ	Aspergillus niger Mortierella vinacea Saccharomyces cerevisiae
բետա-Գալակտոզիդազ	Aspergillus niger Curvalaria inaequalis Penicillium canescens Saccharomyces fragilis Saccharomyces sp.
Հեմիցելյուլազ	Aspergillus aculeatus Aspergillus niger Aspergillus oryzae Bacillus subtilis Rhizopus arrhizus Sporotrichum dimorphosporum Trichoderma longibrachiatum (reesei)
բետա-Գլյուկանազ	Aspergillus awamori Aspergillus batate Aspergillus niger Bacillus subtilis Humicola insolens Rhizopus pigmaues

	Trichoderma harzianum
Էնդո-բետա-Գլյուկանազ	Aspergillus niger Aspergillus oryzae Bacillus circulans Bacillus subtilis Disporotrichum dimorphosporum Penicillium emersonii Rhizopus arrhizus Rhizopus oryzae Trichoderma longibrachiatum (reesei)
Գլյուկոամիլազ կամ ամիլոգլյուկոզիդազ	Aspergillus amaurii Aspergillus awamori Aspergillus niger Aspergillus oryzae Rhizopus arrhizus Rhizopus niveus Rhizopus oryzae Trichoderma longibrachiatum (reesei)
բետա-գլյուկոզիդազ	Endmycopsis sp. Penicillium vitale Rhizopus pigmaues Trichoderma harzianum
Էկզո-ալֆա-Գլյուկոզիդազ	Aspergillus niger Penicillium vitale
Գլյուկոզիդոմերազ	Actinoplanes missouriensis Arthrobacter sp. Bacillus coagulans Streptomyces albus Streptomyces olivaceus Streptomyces olivochromogenes Streptomyces rubiginosus Streptomyces sp. Streptomyces violaceoniger
Գլյուկոզոքսիդազ	Aspergillus niger
ալֆա-դեկարբոքսիլազ	Bacillus brevis
Դեքստրանազ	Aspergillus sp. Bacillus subtilis Klebsiella aerogenes Penicillium funiculosum Penicillium lilacinus
Իզոմերազ	Bacillus cereus
Ինվերտազ	Aspergillus niger Bacillus subtilis

	<p>Kluyveromyces fragilis Saccharomyces carlsbergensis Saccharomyces cerevisiae Saccharomyces sp.</p>
Ինուլինազ	<p>Aspergillus niger Kluyveromyces fragilis Sporotrichum dimorphosporum Streptomyces sp.</p>
Կատալազ	<p>Aspergillus niger Micrococcus luteus (lysodeicticus) Penicillium vitale</p>
Քսիլանազ	<p>Aspergillus niger Aspergillus aculeatus Humicola insolens Sporotrichum dimorphosporum Streptomyces sp. Trichoderma longibrachiatum (reesei) Trichoderma viride</p>
Լակտազ, բետա-գալակտոզիդազ	<p>Aspergillus niger Aspergillus oryzae Kluyveromyces fragilis Kluyveromyces lactis Saccharomyces sp.</p>
Լիպազ	<p>Aspergillus flavus Aspergillus niger Aspergillus oryzae Brevibacterium linens Candida lipolytica Candida rugosa Mucor javanicus Mucor miehei Mucor pusillus Rhizopus arrhizus Rhizopus nigrican (stolonifer) Rhizopus niveus</p>
Մալատոդեկարբոքսիլազ	<p>Leuconostoc oenos</p>
Մալտազ, ալֆա-գլյուկոզիդազ	<p>Aspergillus niger Aspergillus oryzae Rhizopus oryzae Trichoderma longibrachiatum (reesei)</p>
Մելիքիազ	<p>Mortierella vinacea Saccharomyces cerevisiae</p>

Նիտրատրեդուկտազ	<i>Micrococcus violagabriella</i>
Պեկտինազ	<i>Aspergillus awamori</i> <i>Aspergillus foetidus</i> <i>Aspergillus niger</i> <i>Aspergillus oryzae</i> <i>Bacillus macerans</i> <i>Botrytis cinerea</i> <i>Penicillium simplicissimum</i> <i>Rhizopus oryzae</i> <i>Trichoderma longibrachiatum (reesei)</i>
Պեկտինիլիազ	<i>Aspergillus niger</i>
Պեկտինէստերազ	<i>Aspergillus niger</i>
Պենտոզանազ	<i>Humicola insolens</i>
Պոլիզալակտուրոնազ	<i>Aspergillus aculeatus</i> <i>Aspergillus niger</i> <i>Penicillium canescens</i>
Պրոտեազ (այդ թվում՝ կաթը մակարդող ֆերմենտները)	<i>Aspergillus awamori</i> <i>Aspergillus melleus (quercinus)</i> <i>Aspergillus niger</i> <i>Aspergillus oryzae</i> <i>Aspergillus terricola</i> <i>Bacillus amyliquefaciens</i> <i>Bacillus cereus</i> <i>Bacillus licheniformis</i> <i>Bacillus mesentericus</i> <i>Bacillus subtilis</i> <i>Brevibacterium linens</i> <i>Endothia parasitica</i> <i>Lactobacillus casei</i> <i>Micrococcus caseolyticus</i> <i>Mucor miehei</i> <i>Mucor pusillus</i> <i>Streptococcus cremoris</i> <i>Streptococcus lactis</i> <i>Streptomyces fradiae</i>
Պուլուլանազ	<i>Bacillus acidopullulyticus</i> <i>Bacillus subtilis</i> <i>Klebsiella aerogenes</i>
Սերինապրոտեինազ	<i>Bacillus licheniformis</i> <i>Streptomyces fradiae</i>
Տանազ	<i>Aspergillus niger</i> <i>Aspergillus oryzae</i>

Խիմոզին	Aspergillus awamori Aspergillus niger Escherichia coli Kluyveromyces lactis
Ցելոբազ	Aspergillus niger Trichoderma longibrachiatum (reesei)
Ցելյուլազ	Aspergillus niger Aspergillus oryzae Geotrichum candidum Penicillium funiculosum Rhizopus arrhizus Rhizopus oryzae Sporotrichum dimorphosporum Thielavia terrestris Trichoderma longibrachiatum (reesei) Trichoderma roseum Trichoderma viride
Էսթերազ	Muccor miehei

Հավելված թիվ 7

**ՖԵՐՄԵՆՏԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ԻՄՈՒԼԻԶԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՕԺԱՆԴԱԿ ՄԻՋՈՑՆԵՐ (ՆՅՈՒԹԵՐ ՈՒ ՊԻՆԴ ԿՐԻՉՆԵՐ), ՈՐՈՆՑ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է**

Նյութեր եւ պինդ կրիչներ
Նատրիումի ալգինատ
Գլուտար ալդեհիդ
Դիատոմիտ (դիատոմային հող)
Երկէթիլամինաէթիլցելյուլոզա
Ժելատին
Իոնափոխանակիչ խեժեր, որոնց կիրառումը սննդի արդյունաբերության մեջ թույլատրվում է
Կարագինան
Կերամիկա
Բազմաէթիլենամին
Ապակի

**ԳԼՈՒԽ III. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

1. Միասնական սանիտարական պահանջներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու անհրաժեշտության դեպքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու նախաձեռնությամբ հանդես եկող՝ Մաքսային միության անդամ պետությունն իր առաջարկներն ուղարկում է Մաքսային միության հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) եւ ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը.

- բացատրական նամակ՝ հիմնավորմամբ.
- փորձարկումների իրականացման մեթոդիկան.
- անցկացված հետազոտությունների արդյունքները եւ այլն:

2. Հանձնաժողովի քարտուղարությունն առաջարկներն ստանալուց հետո 14 օրվա ընթացքում դրանք ուղարկում է Կողմերի լիազոր մարմիններ:

3. Մաքսային միության անդամ պետությունները տեղեկություններն ստանալուց հետո 60 օրվա ընթացքում դրանց վերաբերյալ առաջարկները քննարկում եւ ուղարկում են Հանձնաժողովի քարտուղարություն:

4. Մաքսային միության անդամ պետություններից մեկի կողմից ներկայացրած առաջարկները մերժելու դեպքում Հանձնաժողովի քարտուղարությունը նախաձեռնում է լրացուցիչ փորձաքննություն եւ ըստ դրա արդյունքների՝ Մաքսային միության անդամ պետությունների փորձագետների համաձայնության խորհրդակցություն, որի արդյունքների հիման վրա Մաքսային միության հանձնաժողովը որոշում է կայացնում:

Հաստատված է
Հանձնաժողովի 2010 թվականի մայիսի
28-ի թիվ 299 որոշմամբ

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341, 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 383, 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշումների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 206 որոշման խմբագրությամբ)

Ձեռաթղթի դիմերեսը

ԵվրԱզԷՍ ԼՈԳՈՏԻՊ

ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՂԱԶԱԽՍԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

(Կողմի լիազոր մարմինը)

(լիազոր մարմնի ղեկավարը)

(վարչատարածքային կազմավորման անվանումը)

պետական գրանցման ՎԿԱՅԱԿԱՆ

Թիվ _____ ամսաթիվը _____

Արտադրանք.

(արտադրանքի անվանումը, նորմատիվ եւ (կամ) տեխնիկական փաստաթղթերը, որոնց համաձայն պատրաստվել է արտադրանքը, պատրաստողի (արտադրողի), ստացողի անվանումը եւ գտնվելու վայրը)

համապատասխանում

է

պետական գրանցում է անցել, ներառվել է Պետական գրանցման վկայականների ռեեստրում եւ թույլատրված է արտադրության, իրացման եւ օգտագործման համար

Սույն վկայականը տրվել է հետեւյալ հիմքով (թվարկել ուսումնասիրված արձանագրությունները հետազոտությունների վերաբերյալ, հետազոտություն անցկացրած կազմակերպության (փորձարկման լաբորատորիայի, կենտրոնի) անվանումը, ուսումնասիրված այլ փաստաթղթեր)):

Պետական գրանցման վկայականի գործողության ժամկետը սահմանվում է արտադրանքի պատրաստման կամ հսկողության ենթակա ապրանքների՝ Մաքսային միության տարածք մատակարարումների ամբողջ ժամկետի համար

Փաստաթուղթը տրամադրած լիազոր մարմնի ստորագրությունը, Ա.Ա.Հ., պաշտոնը եւ փաստաթուղթը տրամադրած մարմնի (հաստատության) կնիքը

(Ա.Ա.Հ. ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված թիվ 1
Արտադրանքի (ապրանքների)
անվտանգությունը հաստատող փաստաթղթի
միասնական ձեւի (պետական գրանցման
վկայականի միասնական ձեւը)

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՔԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԻԳԻԵՆԻԿ
ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՈՒՄՈՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ
(ԱՊՐԱՆՔՆԵՐԻ) ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ
ՁԵՎԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341, 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 383, 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշումների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 206 որոշման խմբագրությամբ)

1. Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի միասնական ձեւի ձեւակերպման կարգի մասին կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանվում է սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի, Մաքսային միության մաքսային սահմանին եւ մաքսային տարածքում սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա Ապրանքների միասնական ցանկի II բաժնում ներառված ապրանքների պետական գրանցման վկայականի կազմման, ձեւակերպման եւ տրամադրման կարգը:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

Տվյալ Կանոնակարգի համաձայն՝ «Կողմեր» ասելով ենթադրվում է Մաքսային միության անդամ պետությունները:

2. Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթուղթն ստանալու նպատակով նախատեսված աշխատանքներն իրականացվում են Կողմերի լիազոր մարմինների կողմից անհատ ձեռնարկատերերի, իրավաբանական անձանց (այսուհետ՝ դիմումներ) դիմումների հիման վրա՝ նրանց հաշվին:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթուղթն ստանալու համար դիմումատու է համարվում.

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

Մաքսային միության մաքսային տարածքում պատրաստվող՝ հսկողության ենթակա ապրանքների դեպքում՝ հսկողության ենթակա ապրանքի պատրաստողը (արտադրողը).

Մաքսային միության մաքսային տարածքից դուրս պատրաստվող՝ հսկողության ենթակա ապրանքների դեպքում՝ հսկողության ենթակա ապրանքը պատրաստողը (արտադրողը), մատակարարը (ներմուծողը).

3. Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը

հաստատող փաստաթղթի ձեւակերպման ժամկետը չի կարող գերազանցել դիմումատուի դիմելու պահից 30 օրացուցային օրը:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14–ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

4. Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի ձեւակերպման կարգը ներառում է.

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14–ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

դիմումի ընդունումն ու գրանցումը.

Ներկայացված փաստաթղթերի, այդ թվում՝ դիմումատուի կողմից ներկայացվող փաստաթղթերի, եւ հսկողության ենթակա ապրանքների՝ Միասնական սանիտարական պահանջներին համապատասխանության ստուգման նպատակով անցկացվող լաբորատոր հետազոտությունների (փորձարկումների)արդյունքների փորձաքննությունը <1>.

<1> Միասնական սանիտարական պահանջները գործում են մինչեւ տվյալ տեսակի՝ հսկողության ենթակա ապրանքների նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի տեխնիկական կանոնակարգերի ընդունումը:

անհրաժեշտ տեղեկությունների համաձայնեցումն այն Կողմի օրենսդրության հետ, որտեղ կատարվում է պետական գրանցումը.

հսկողության ենթակա ապրանքների վերաբերյալ տեղեկությունների ներառումը Պետական գրանցման վկայականների ռեեստրում (այսուհետ՝ վկայականների Ռեեստր).

սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի ձեւակերպումն ու տրամադրում:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14–ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

5. Մաքսային միության մաքսային տարածքում պատրաստված՝ հսկողության ենթակա ապրանքների փորձանմուշների (նմուշների) ընտրումը լաբորատոր հետազոտությունների (փորձարկումների) նպատակով իրականացվում է Կողմերի՝ հավատարմագրման (ատեստավորման) ազգային համակարգերում հավատարմագրված (ատեստավորված) եւ Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Միասնական ռեեստրում ընդգրկված՝ լիազոր մարմինների լաբորատորիաների կողմից հետազոտությունների անցկացման համար անհրաժեշտ քանակով եւ ձեւակերպվում է նմուշառման ակտով:

Պետական գրանցման վկայականների ձեւակերպման նպատակով մաքսային միության տարածքից դուրս պատրաստվող՝ հսկողության ենթակա ապրանքների փորձանմուշները (նմուշները) ներկայացվում են պատրաստողի (արտադրողի) կողմից ներկայացված գրության հետ:

6. Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի ձեւակերպման նպատակով նախատեսված՝ հսկողության ենթակա ապրանքների լաբորատոր հետազոտություններն անցկացվում են Կողմերի՝ հավատարմագրման (ատեստավորման) ազգային համակարգերում հավատարմագրված (ատեստավորված) եւ Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Միասնական ռեեստրում ընդգրկված՝ լիազոր մարմինների լաբորատորիաների կողմից հսկողության ենթակա ապրանքների՝ Միասնական սանիտարական պահանջների

հետ համապատասխանության առումով անվտանգության սահմանման նպատակով:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

7. Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի տրամադրման վերաբերյալ որոշումն ընդունվում է լիազոր մարմինների կողմից ներկայացված փաստաթղթերի փորձաքննությունների դրական արդյունքների ու հսկողության ենթակա ապրանքների լաբորատոր հետազոտությունների (փորձարկումների) արդյունքների հիման վրա:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

8. Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի տրամադրման համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

Մաքսային միության մաքսային տարածքում պատրաստվող՝ հսկողության ենթակա ապրանքների դեպքում.

դիմումը.

այն փաստաթղթերի պատճենները, որոնց համաձայն պատրաստվում է արտադրանքը (ստանդարտներ, տեխնիկական պայմաններ, կանոնակարգեր, տեխնոլոգիական հրահանգներ, մասնագրեր, բաղադրագրեր, կազմության վերաբերյալ տեղեկություններ)՝ հաստատված պատրաստողի (արտադրողի) կողմից.

պատրաստողի (արտադրողի) գրավոր ծանուցումն այն մասին, որ իր կողմից

պատրաստված արտադրանքը (արտադրանքի նմուշները) համապատասխանում է (են) այն փաստաթղթերի պահանջներին, որոնց համաձայն այն պատրաստվում է <2>.

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 383 որոշման խմբագրությամբ)

<2> Որպես ծանուցում ընդունվում են. որակի սերտիֆիկատի, անվտանգության (որակի) անձնագրի, որակի վերաբերյալ հավաստագրի պատճենները՝ հաստատված պատրաստողի (արտադրողի) կողմից, կամ պատրաստողի գրությունը (ներկայացվում է թվարկված փաստաթղթերից որեւէ մեկը):

(հղումն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 383 որոշմամբ)

պատրաստողի (արտադրողի)՝ հսկողության ենթակա ապրանքների կիրառման (շահագործմանը, օգտագործմանը) առնչվող փաստաթուղթը (ցուցումներ, ձեռնարկ, կանոնակարգ, առաջարկություններ) կամ դրա պատճենը՝ հաստատված դիմումատուի կողմից (առկայության դեպքում).

պիտակների (փաթեթվածքների) պատճենները կամ դրանց՝ հսկողության ենթակա ապրանքների մանրակերտները՝ հաստատված դիմումատուի կողմից.

կենսաբանորեն ակտիվ սննդային հավելումների (անհայտ բաղադրամասեր, ոչ պաշտոնական գրառումներ պարունակող պատրաստուկների համար) առանձնահատուկ ակտիվությանն առնչվող փաստաթղթերի պատճենները՝ հաստատված դիմումատուի կողմից.

նմուշների (փորձանմուշների) ընտրման ակտը.

սննդամթերքում գենային ինժեներիայի եղանակով ձեւափոխված (տրանսգենային) օրգանիզմների, նանոնյութերի, հորմոնների, թունաքիմիկատների

(պեստիցիդների) առկայության վերաբերյալ պատրաստողի (արտադրողի) հայտարարագրերը.

հետազոտությունների (փորձարկումների) (հիգիենիկ փորձաքննությունների) արձանագրությունները, ազգային զեկույցները, փորձագիտական եզրակացությունները.

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 383 որոշման խմբագրությամբ)

քաղվածք՝ իրավաբանական անձանց Միասնական պետական ռեեստրից կամ անհատ ձեռնարկատերերի Միասնական պետական ռեեստրից:

Արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթերի հավաստիության համար պատասխանատվությունը կրում է դիմումատուն.

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշմամբ)

2) Մաքսային միության մաքսային տարածքից դուրս պատրաստվող՝ հսկողության ենթակա ապրանքների դեպքում.

դիմումը.

այն փաստաթղթերի պատճենները, որոնց համաձայն պատրաստվում է արտադրանքը (ստանդարտներ, տեխնիկական պայմաններ, կանոնակարգեր, տեխնոլոգիական հրահանգներ, մասնագրեր, բաղադրագրեր, կազմության վերաբերյալ տեղեկություններ)՝ հաստատված այն Կողմի օրենսդրության համաձայն, որտեղ կատարվում է պետական գրանցումը.

աննդամթերքում գենային ինժեներիայի եղանակով ձեւափոխված (տրանսգենային) օրգանիզմների, նանոնյութերի, հորմոնների, թունաքիմիկատների (պեստիցիդների) առկայության վերաբերյալ պատրաստողի (արտադրողի) հայտարարագրերը.

պատրաստողի (արտադրողի)՝ հսկողության ենթակա ապրանքների կիրառմանն (շահագործմանը, օգտագործմանը) առնչվող փաստաթուղթը (ցուցումներ, ձեռնարկ, կանոնակարգ, առաջարկություններ) կամ դրա պատճենը՝ հաստատված դիմումատուի կողմից (առկայության դեպքում)։

պատրաստողի (արտադրողի) գրավոր ծանուցումն այն մասին, որ իր կողմից պատրաստված արտադրանքը (արտադրանքի նմուշները) համապատասխանում են այն փաստաթղթերի պահանջներին, որոնց համաձայն այն պատրաստվում է <3>։

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի սեպտեմբերի 20–ի թիվ 383 որոշման խմբագրությամբ)

<3> Որպես ծանուցում ընդունվում են. որակի սերտիֆիկատի, անվտանգության (որակի) անձնագրի, անալիզի սերտիֆիկատի, որակի վերաբերյալ հավաստագրի, ազատ առևտրի սերտիֆիկատի կամ պատրաստողի գրության պատճենները՝ հաստատված այն Կողմի օրենսդրության համաձայն, որտեղ կատարվում է պետական գրանցումը (ներկայացվում է թվարկված փաստաթղթերից որեւէ մեկը)։

(հղումն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20–ի թիվ 383 որոշմամբ)

արտադրանքի պիտակների (փաթեթվածքների) պատճենները՝ հաստատված դիմումատուի կողմից։

կենսաբանորեն ակտիվ սննդային հավելումների (անհայտ բաղադրամասեր, ոչ պաշտոնական գրառումներ պարունակող պատրաստուկների համար) առանձնահատուկ ակտիվությանն առնչվող փաստաթղթերի բնօրինակները կամ պատճենները՝ հաստատված այն Կողմի օրենսդրության համաձայն, որտեղ կատարվում է պետական գրանցումը։

պատրաստուկի թունաբանական բնութագրերին (թունաքիմիկատների (պեստիցիդների, ագրոքիմիկատների, բույսերի պաշտպանության միջոցների ու աճի կարգավորիչների համար) առնչվող փաստաթղթերի բնօրինակները կամ պատճենները՝ հաստատված այն Կողմի օրենսդրության համաձայն, որտեղ կատարվում է պետական գրանցումը.

երկրի (որտեղ արտադրվում է կենսաբանորեն ակտիվ սննդային հավելումը, սննդային հավելումը, ախտահանիչ (միջատասպան (դեզինսեկցիոն) եւ կրծողասպան (դեռատիզացիոն) միջոցը, կոսմետիկական արտադրանքը) առողջապահության իրավասու մարմինների (այլ պետական լիազոր մարմինների) փաստաթղթի պատճենը, որով հաստատվում է տվյալ արտադրանքի անվտանգությունը եւ թույլատրվում դրա ազատ շրջանառությունը պատրաստող (արտադրող) պետության տարածքում, եւ որը հաստատված է այն Կողմի օրենսդրության համաձայն, որտեղ կատարվում է գրանցումը, կամ արտադրողի՝ նման փաստաթղթի ձեւակերպման անհրաժեշտության բացակայության վերաբերյալ տեղեկությունները.

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

հետազոտությունների (փորձարկումների) (հիգիենիկ փորձաքննությունների) արձանագրությունները, ազգային զեկույցները, փորձագիտական եզրակացությունները.

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 383 որոշման խմբագրությամբ)

Մաքսային միության մաքսային տարածք հսկողության ենթակա ապրանքների նմուշների ներմուծումը հաստատող փաստաթղթերի պատճենները՝ հաստատված այն Կողմի օրենսդրության համաձայն, որտեղ կատարվում է, որտեղ կատարվում է պետական գրանցումը:

Պատրաստողի (արտադրողի) փաստաթղթերի թարգմանություններն օտար

լեզուներով պետք է հաստատված լինեն այն Կողմի օրենսդրության համաձայն, որտեղ կատարվում է, որտեղ կատարվում է պետական գրանցումը:

Արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթերի հավաստիության համար պատասխանատվությունը կրում է դիմումատուն:

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշմամբ)

Փոստային առաքումներով ստացված արտադրանքի նմուշների համար ապրանքին կից ներկայացված փաստաթղթերի պատճեններն ընդունվում են առանց «ներմուծումը թույլատրված է» նշման:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2012 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 206 որոշմամբ)

9. Չպետք է պահանջվեն փաստաթղթեր, որոնք նախատեսված չեն սույն Կանոնակարգի 8-րդ կետով:

(9-րդ կետը՝ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

10. Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի ձեւակերպման դիմումը կարող է մերժվել հետեւյալ դեպքերում.

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

հսկողության ենթակա ապրանքների անհամապատասխանությունը Միասնական սանիտարական պահանջներին.

եթե ներկայացված են փաստաթղթեր եւ (կամ) տեղեկություններ, որոնք չեն համապատասխանում այն Կողմի օրենսդրությամբ սահմանված պահանջներին, որտեղ

կատարվում է պետական գրանցումը, ինչպես նաև ոչ հավաստի տեղեկություններ պարունակող փաստաթղթեր.

Եթե չկան սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի ձեւակերպման համար հիմքեր՝ նախատեսված այն Կողմի օրենսդրությամբ, որտեղ կատարվում է պետական գրանցումը.

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14–ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

Եթե հսկողության ենթակա ապրանքների եւ դրանց պատրաստման ու շրջանառության համար անվտանգության պահանջները չեն կարող սահմանվել գիտության զարգացման ժամանակակից մակարդակով, ինչպես նաև արտադրանքում եւ մարդու շրջակա միջավայրում այդպիսի արտադրանքի վտանգավոր գործոնների սահմանման ու չափման մեթոդիկայի բացակայության դեպքում.

արտադրանքը պատրաստելիս, շրջանառության մեջ դնելիս եւ կիրառելիս (օգտագործելիս) մարդու առողջության եւ շրջակա միջավայրի վրա հսկողության ենթակա ապրանքների վնասակար ազդեցության դեպքերի վերաբերյալ տեղեկությունների առկայությունը:

Մերժման մասին որոշումը, մերժման պատճառների մասին հիմնավորմամբ, գրավոր կամ էլեկտրոնային փաստաթղթի ձեւով երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է դիմումատուին, Կողմերի լիազոր մարմինների ղեկավարներին (նրանց տեղակալներին), եւ ներառվում է Եվրասիական տնտեսական համայնքի տեխնիկական կարգավորման, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցների ոլորտի Տեղեկատվական համակարգում ու Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում:

11. Պետական գրանցման վկայականն ուժի մեջ է համարվում տրամադրման պահից մինչեւ Մաքսային միության տարածք արտադրանքի մատակարարման եւ (կամ)

Մաքսային միության մաքսային տարածքում արտադրանքի պատրաստման դադարեցումը:

12. Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող՝ Կողմերի լիազոր մարմինների կողմից ձեւակերպված փաստաթղթերը մինչեւ «Սանիտարական միջոցների մասին» Մաքսային միության համաձայնագրի ուժի մեջ մտնելը գործում են բացառապես տվյալ փաստաթղթերը տրամադրած Կողմի տարածքում դրանցում նշված ժամկետներում, սակայն մինչեւ 2012 թվականի հունվարի 1-ը:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

Վերաձեւակերպման վերաբերյալ տեղեկությունները ներառվում են Պետական գրանցման վկայականների ազգային ռեեստրում:

13. Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին Միասնական ձեւով համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթուղթը տրամադրելիս Կողմերի լիազոր մարմիններն ընդունում են սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող՝ Կողմերի լիազոր մարմինների կողմից ձեւակերպված փաստաթղթեր մինչեւ Միասնական սանիտարական պահանջներին հսկողության ենթակա ապրանքների համապատասխանության առումով «Սանիտարական միջոցների մասին» Մաքսային միության համաձայնագիրն ուժի մեջ մտնելը:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

Պետական գրանցման համար ընդունվում են նաեւ արտադրանքի հետազոտությունների (փորձարկումների)(հիգիենիկ փորձաքննությունների

ակտերը) արձանագրությունները, որոնց հիման վրա տրվել են արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող գործող փաստաթղթերը (սանիտարահամաճարակաբանական եզրակացություններ, պետական գրանցման վկայականներ, պետական սանիտարահիգիենիկ փորձաքննությունների ակտեր, հիգիենային առնչվող պետական գրանցման հավաստագրեր):

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշմամբ, Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մարտի 3-ի թիվ 568 որոշման խմբագրությամբ)

14. Կողմերն ընդունում են սույն Կանոնակարգի 6-րդ կետում նշված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) հետազոտությունների (փորձարկումների) արձանագրությունները, որոնց հիման վրա տրվել են սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթերը:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

15. Կողմերի համար Միասնական սանիտարական պահանջներով նախատեսված՝ հսկողության ենթակա ապրանքների անվտանգության ցուցանիշների տարբերության դեպքում նման անհամապատասխանության վերաբերյալ տեղեկությունները նշվում են սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի Միասնական ձեւի սյունակում՝ գրելով «Համապատասխանում է» բառը եւ թվարկելով այն Կողմի ցուցանիշներն ու նորմատիվները, անվանումը, որի տարածքում հսկողության ենթակա նման ապրանքների շրջանառությունն արգելված է: Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթուղթը ձեւակերպելիս

սննդամթերքների վրա «Արտադրանքի անվանումը» սյունակում նշվում են սննդամթերքի բաղադրության մեջ մտնող սննդային հավելումները, ինչպես նաև տեղեկություններ գենային ինժեներիայի եղանակով ձեւափոխված (տրանսգենային) օրգանիզմների, նանոնյութերի առկայության վերաբերյալ:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

16. Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթուղթը ենթակա է փոխարինման առանց լրացուցիչ կամ կրկնակի հետազոտությունների (փորձարկումների) անցկացման հետեւյալ դեպքերում.

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

եթե հսկողության ենթակա ապրանքները շրջանառության մեջ դնելիս արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթում սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով անհամապատասխանություն, լիազոր մարմնի մեղքով թույլ տված սխալներ (վրիպակներ) են հայտնաբերվում.

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

եթե փոփոխվում են կազմակերպահրավական տեսակի, իրավաբանական հասցեի, արտադրանքի պատրաստողի կամ դիմումատուի անունը.

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշմամբ)

պարբերությունը հանվել է: – Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14 –ի թիվ 432 որոշում.

Եթե հրապարակվում է հսկողության ենթակա ապրանքների նկատմամբ պահանջներ պարունակող նոր նորմատիվ իրավական ակտ, որի ընդունումը հանգեցնում է հիգիենիկ անվտանգության ցուցանիշների, արտադրանքի բաղադրության փոփոխությունների:

Վերոհիշյալ դեպքերում հսկողության ենթակա ապրանքների շրջանառությունը չի կասեցվում սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթերի փոխարինման համար անհրաժեշտ ժամանակով:

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի փոխարինման պահանջ չի ներկայացվում, եթե նորմատիվ եւ (կամ) տեխնիկական փաստաթղթերում կատարված փոփոխությունները չեն վերաբերում հսկողության ենթակա ապրանքների անվտանգության ցուցանիշներին եւ (կամ) բնակչության առանձին խմբերի կողմից սննդամթերքի որոշակի տեսակների կիրառության մասին ցուցումներին (հակացուցումներին):

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշմամբ)

17. Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթուղթը տրամադրելիս այն համարակալվում է հետեւյալ կարգով.

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

XX.XX.XX.XX.XXX.X.XXXXXX.XX.XX

1 2 3 4 5 6 7 8 9

Դիրք 1՝ երկրի ծածկագիրը՝ բաղկացած երկու պայմանանշանից՝ ALPHA2 (BY - Բելառուս, KZ - Ղազախստան, RU - Ռուսաստան)

Դիրք 2՝ երկրի ռեգիոնի կամ գերատեսչության երկնիշ թվային ծածկագիրը (01-ից 99. ռեգիոնի ծածկագիրն ինքնուրույն սահմանվում է ազգային կենտրոնական ռեեստրի կողմից եւ հաղորդվում է միասնական ռեեստր):

Դիրք 3՝ տվյալ ռեգիոնի համար յուրահատուկ՝ կազմակերպության երկնիշ թվատառային (ռուսական այբուբենի տառերը) ծածկագիրը (01-ից 99, «AA»-ից մինչեւ «ЯЯ», հնարավոր է թվերի ու տառերի համակցություն. ռեգիոնի ծածկագիրն ինքնուրույն սահմանվում է ազգային կենտրոնական ռեեստրի կողմից եւ հաղորդվում է միասնական ռեեստր):

Դիրք 4՝ տվյալ կազմակերպության համար յուրահատուկ աշխատատեղի երկնիշ թվային ծածկագիրը (ռեգիոնի ծածկագիրն ինքնուրույն սահմանվում է ազգային կենտրոնական ռեեստրի կողմից եւ հաղորդվում է միասնական ռեեստր):

Դիրք 5՝ երկնիշ թվային ծածկագիրը՝ ըստ արտադրանքի միասնական դասակարգչի:

Դիրք 6՝ «E» տառը:

Դիրք 7՝ տվյալ կազմակերպությունում պետական գրանցման վկայականի՝ ընթացիկ տարում ձեւակերպման վեցանիշ թվային համարը. տարվա սկզբին սահմանվում է «1»:

Դիրք 8՝ ամսվա երկնիշ թվային ծածկագիրը (ամսվա հերթական թիվը՝ 01-ից 12):

Դիրք 9՝ տարեթվի երկնիշ թվային ծածկագիրը (տարեթվի վերջին երկու նիշերը՝

00–ից 99)

Արտադրանքի միասնական դասակարգիչ՝

001՝ կոսմետիկական արտադրանք,

002՝ ախտահանիչ, միջատասպան (դեզինսեկցիոն) եւ կրծողասպան (դեռատիզացիոն) միջոցներ կենցաղում, բուժական-պրոֆիլակտիկ հիմնարկություններում եւ այլ օբյեկտների համար կիրառելու նպատակով (բացի անասնաբուժության մեջ կիրառվող միջոցներից),

003՝ ԿԱՀ,

004՝ դիետիկ սննդամթերք,

005՝ մանկական սննդամթերք,

006՝ հանքային ջուր, խմելու ջուր՝ շշալցված,

007՝ մասնագիտացված մթերք,

008՝ պոտենցիալ վտանգավոր քիմիական եւ կենսաբանական նյութեր եւ դրանց հիմքով պատրաստվող պատրաստուկներ, որոնք պոտենցիալ վտանգ են ներկայացնում մարդու համար (բացի դեղամիջոցներից), բնական կամ արհեստական ծագման առանձին նյութերը (միացությունները), որոնք, արտադրության, կիրառման, տրանսպորտային փոխադրման, վերամշակման, ինչպես նաեւ կենցաղային պայմաններում կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ մարդու առողջության եւ շրջակա բնական միջավայրի վրա,

009՝ սննդային հավելումներ,

010՝ տեխնոլոգիական օժանդակ միջոցներ սննդային արդյունաբերության համար,

011՝ գենային ինժեներիայի միջոցով ձեւափոխված օրգանիզմների օգտագործմամբ ստացված սննդամթերք,

012՝ անձնական հիգիենայի պարագաներ երեխաների եւ մեծահասակների

համար,

013՝ ջրապատրաստման նյութեր, սարքավորումներ, սարքեր եւ այլ տեխնիկական միջոցներ, որոնք նախատեսված են կենցաղային եւ խմելու կարիքների համար ջրամատակարարման համակարգերում օգտագործման համար:

014՝ կոսմետիկական արտադրանք, բերանի խոռոչի հիգիենայի միջոցներ եւ արտադրատեսակներ,

015՝ կենցաղային քիմիայի ապրանքներ,

016՝ հագուստ,

017՝ տոնուսավորող ըմպելիքներ,

018՝ ալկոհոլային արտադրանք՝ ներառյալ թույլ ալկոհոլային արտադրանքը եւ գարեջուրը,

019՝ սննդամթերքի հետ շփման համար նախատեսված արտադրատեսակներ:

18. Ծավալի սահմանափակման պատճառներով՝ Պետական գրանցման վկայականի ձեւաթղթի վրա չտեղավորվող տեղեկությունները նշվում են թիվ 3 հավելվածին համապատասխան ձեւակերպվող պետական գրանցման վկայականի հավելվածում:

Մեկ վկայականում կարող են միասնաբար ներկայացվել այն ապրանքների անվանումները, որոնց պատրաստողը նույնն է, պատրաստվել են միասնական տեխնիկական պահանջներին համապատասխան, ունեն միեւնույն բաղադրակազմը, հիգիենիկ բնութագիրը, կիրառության ոլորտը, սակայն աննշան տարբերություններով չունեն նույն հիգիենիկ նշանակությունը (օրինակ՝ ապրանքի տարբեր ձեւ կամ ծավալ, տոկոսային բաղադրություն, տարբեր գույն կամ համ ու բույր՝ պայմանավորված օգտագործված գունանյութերով, բուրավետիչներով):

Պետական գրանցման վկայականի հավելվածում հսկողության ենթակա ապրանքների անվտանգության ցուցանիշներին, բնակչության առանձին խմբերի

համար՝ որոշակի սննդամթերքի տեսակների կիրառության վերաբերյալ ցուցումների (հակացուցումների) մասին տեղեկություններին չվերաբերող, ինչպես նաև հիգիենիկ նշանակություն չունեցող տվյալների (ինչպիսիք ասպրանքի լրացուցիչ ձեւերի եւ ծավալների, սպառողական փաթեթվածքի տեսակների, ասպրանքային նշանների մասին նշումներն են) ավելացման հետ կապված փոփոխությունները կատարվում են առանց հետազոտությունների (փորձարկումների) արձանագրությունների, հիգիենիկ փորձաքննությունների վերաբերյալ ակտերի, արտադրանքի վերաբերյալ փորձագիտական եզրակացությունների պահանջի:

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշմամբ)

(18-րդ կետն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշմամբ)

19. Կողմերի իրավասու մարմինների միջև սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ասպրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի ձեւակերպման ու տրամադրման հետ կապված տարաձայնությունները կարգավորվում են Կողմերի որոշմամբ լիազորված մարմինների միջև փոխադարձ խորհրդակցություններ վարելու միջոցով:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

20. Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ասպրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթուղթը եւ դրա հավելվածը (հավելվածները) համարվում է (են) կեղծումից պաշտպանություն ապահովող՝ խիստ հաշվետվության ձեւաթղթեր: Ձեւաթղթերի պաշտպանության աստիճանը որոշվում է այն Կողմի օրենսդրությամբ, որտեղ կատարվում է պետական գրանցումը:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

Հավելված թիվ 2

**Արտադրանքի (ապրանքների)
անվտանգությունը հաստատող փաստաթղթի
միասնական ձեւի (պետական գրանցման
վկայականի միասնական ձեւը)**

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԻ ՄԱՍԻՆ ԴՐՈՒՅԹ

1. Սույն դրույթով սահմանվում է Պետական գրանցման վկայականների ռեեստրի (այսուհետ՝ Ռեեստր) ներդրման կարգը:

2. Ռեեստրը վարվում է արտադրանքը սպառողների, արտադրողների եւ մատակարարների տեղեկատվության նպատակներով, ինչպես նաեւ Մաքսային միության մաքսային տարածքում արտաքին եւ փոխադարձ առեւտրի արդյունավետ կարգավորումն ապահովելու, մաքսային, հարկային, տրանսպորտային եւ պետական հսկողության այլ տեսակների իրականացման նպատակով:

3. Ռեեստրը վարվում է տվյալների էլեկտրոնային բազայի ձեւով՝ պաշտպանված վնասումից եւ չթույլատրված մուտքից, ինչպես նաեւ էլեկտրոնային կրիչների վրա պարբերական թողարկման ձեւով:

4. Ռեեստրի վարումն իրականացվում է տեղեկությունների պահպանումն ու փոխանակումն ապահովող հատուկ ծրագրային ապահովմամբ:

5. Տրամադրված պետական գրանցման վկայականների մասին տեղեկությունների ներմուծումը Ռեեստր, պետական գրանցման վկայականների մասին

հաշվետվությունների կազմումը, տեղեկությունների պատրաստումն ու դրանց փոխանցումը Ռեեստր իրականացվում են Կողմերի լիազոր մարմինների կողմից:

Կողմերի լիազոր մարմինները տեղեկությունները տրամադրում են Ռեեստր էլեկտրոնային եղանակով՝ համապատասխան ազգային ռեեստրներ պետական գրանցման վկայականների տրամադրման մասին տեղեկություններ ստանալուն պես:

6. Ռեեստրը վարվում է Մաքսային միության հանձնաժողովի կողմից՝ պետական գրանցման վկայականներ տրամադրող՝ Կողմերի լիազոր մարմինների եւ հաստատությունների կողմից՝ յուրաքանչյուր Կողմի ինտեգրման ուղիներով ու կապերով ներկայացվող տեղեկությունների հիման վրա:

7. Ռեեստրի տեղեկությունները հանրամատչելի են եւ զետեղվում են օրական թարմացվող՝ հատուկ որոնողական սերվերի վրա՝ համացանցում:

8. Կողմերի լիազոր մարմինները, Մաքսային միության հանձնաժողովը Ռեեստրում առկա տվյալները տրամադրում են շահագրգիռ անձանց:

Հավելված թիվ 3
Արտադրանքի (ապրանքների)
անվտանգությունը հաստատող փաստաթղթի
միասնական ձևի (պետական գրանցման
վկայականի միասնական ձևը)

(ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ
341 որոշմամբ)

ԵվրԱզԷՍ ԼՈԳՈՏԻՊ

ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

(Կողմի լիազոր մարմինը)

(լիազոր մարմնի ղեկավարը)

(վարչատարածքային կազմավորման անվանումը)

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՀԱՎԵԼՎԱԾ

Ամսաթիվը «__» _____ թ. Թիվ _____

(պետական գրանցման վկայականի տեքստում չներառված տեղեկություն)

Փաստաթուղթը տրամադրած լիազոր մարմնի ստորագրությունը, Ա.Ա.Հ., պաշտոնը եւ
փաստաթուղթը տրամադրած մարմնի (հաստատության) կնիքը

(Ա.Ա.Հ. ստորագրություն)

Կ. Տ.

Մաքսային միության հանձնաժողովի 2010
թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշմամբ

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԸ ՀԱՏՈՂ
ԱՆՁԱՆՑ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ, ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՈՎ ՈՒ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՈՎ
ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՓՈԽՎՈՂ՝
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ
ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ (ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ)
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341, 2010
թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432, 2011 թվականի մարտի 2-ի թիվ 567, 2011
թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 888 որոշումների եւ Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 37, 2012 թվականի
դեկտեմբերի 17-ի թիվ 114 որոշման խմբագրությամբ)

I. Կիրառության ոլորտը

1. «Մաքսային միության մաքսային սահմանը հատող անձանց եւ տրանսպորտային միջոցների, Մաքսային միության մաքսային սահմանով եւ Մաքսային միության մաքսային տարածքում տեղափոխվող՝ հսկողության ենթակա ապրանքների նկատմամբ պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) իրականացման կարգի վերաբերյալ» սույն Կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) մշակված է «Սանիտարական միջոցների մասին» Մաքսային միության 2009 թվականի դեկտեմբերի 11-ի Համաձայնագրի դրույթների իրականացման նպատակով՝ Եվրասիական տնտեսական համայնքի՝ պետության ղեկավարների մակարդակով Միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) 2009 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 28 որոշման

համաձայն, եւ դրանով սահմանվում է Մաքսային միության մաքսային սահմանին ու Մաքսային միության մաքսային տարածքում պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) իրականացման ընթացակարգը:

2. Կանոնակարգը պարտադիր է Մաքսային միության անդամ պետությունների գործադիր իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ցանկացած կազմակերպարավական ձեւի իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, ֆիզիկական անձանց համար:

II. Եզրույթներ եւ սահմանումներ

3. Սույն Կանոնակարգում տվյալ փաստաթղթի նպատակներով օգտագործվում են հետեւյալ եզրույթներն ու սահմանումները՝

1) «բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության ապահովման ոլորտի օրենսդրություն»՝ օրենքներ եւ դրանց համաձայն ընդունվող նորմատիվ իրավական ակտեր, հիգիենիկ նորմատիվներ, որոնցով սահմանվում են սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներ, այդ թվում՝ բնակավայրի գործոնների, մարդու համար արտադրանքի (ապրանքների), աշխատանքների ծառայությունների անվտանգության եւ (կամ) անվնասակարության չափորոշիչները եւ կանոնակարգվում են բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության ապահովման ոլորտի հարաբերությունները՝ որպես առողջության պահպանման եւ բարենպաստ շրջակա միջավայրի՝ քաղաքացիների իրավունքների իրացման հիմնական պայմաններից մեկը.2) «սանիտարակարանտինային կետ (այսուհետ՝ ՍԿԿ)»՝ հատուկ սարքավորված եւ հագեցած ծառայողական շինություններ եւ տարածք, որոնք նախատեսված են Մաքսային միության մաքսային սահմանի անցման կետերում, Մաքսային միության մաքսային սահմանի միջպետական փոխանցման երկաթուղային կայարաններում (այսուհետ՝ անցման կետերում) անձանց, տրանսպորտային միջոցների եւ հսկողության ենթակա ապրանքների համար

նախատեսված պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) իրականացման, ինչպես նաև նման հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց տեղաբաշխման համար (այսուհետ՝ սանիտարակարանտինային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք) եւ որոնք համապատասխանում են 1-ին հավելվածի համաձայն սանիտարակարանտինային հսկողության կազմակերպման համար անհրաժեշտ շենքերի, շինությունների եւ կառույցների սարքավորմանն ու տեխնիկական հագեցվածությանը ներկայացվող տիպային պահանջներին.

3) «հսկողության ենթակա ապրանքների սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ գնահատական (փորձագիտական եզրակացություն)»՝ լիազոր մարմինների գործունեություն՝ ուղղված սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա ապրանքներին ներկայացվող միասնական սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին (այսուհետ՝ Միասնական սանիտարական պահանջներ հսկողության ենթակա ապրանքների համապատասխանության հավաստմանը (անհամապատասխանության բացահայտմանը <1>).

<1> Միասնական սանիտարական պահանջները գործում են մինչեւ տվյալ տեսակի՝ հսկողության ենթակա ապրանքների նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի տեխնիկական կանոնակարգերի ընդունումը:

4) «սանիտարակարանտինային հսկողություն»՝ անձանց, տրանսպորտային միջոցների եւ հսկողության ենթակա ապրանքների նկատմամբ պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) տեսակ, որն անցկացվում է անցման կետերում սանիտարակարանտինային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից եւ նպատակաուղղված է այն վարակիչ եւ զանգվածային վարակիչ հիվանդությունների (թունավորումների)

ներսերման եւ տարածման, մարդու առողջության համար պոտենցիալ վտանգավոր արտադրանքի (ապրանքների) ներմուծման կանխմանը, որոնց դեպքում պահանջվում է տարածքի սանիտարական պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացում:

Տվյալ Կանոնակարգի համաձայն՝ «Կողմեր» ասելով ենթադրվում է Մաքսային միության անդամ պետությունները:

4. Սույն Կանոնակարգում հատուկ չսահմանված եզրույթներն օգտագործվում են միջազգային այլ պայմանագրերով, այդ թվում՝ Մաքսային միության եւ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում կնքված պայմանագրերով սահմանված իմաստներով:

III. Ընդհանուր դրույթները

5. Անձանց, տրանսպորտային միջոցների, հսկողության ենթակա ապրանքների արտադրության եւ իրացման, Կողմերի տարածքում աշխատանքների եւ ծառայությունների իրականացման նկատմամբ պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողությունն (հսկողությունը) իրականացվում է սույն Կանոնակարգի եւ բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության ապահովման ոլորտը կարգավորող օրենսդրության համաձայն՝ «Սանիտարական միջոցների մասին» Մաքսային միության 2009 թվականի դեկտեմբերի 11-ի Համաձայնագրի դրույթներին չհակասող մասով:

6. Բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության ոլորտը կարգավորող օրենսդրության դրույթները խախտելու համար մեղավոր անձինք պատասխանատվություն են կրում Կողմերի օրենսդրությանը համապատասխան:

IV. Մաքսային միության մաքսային սահմանին անձանց, տրանսպորտային միջոցների եւ հսկողության ենթակա ապրանքների նկատմամբ պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) իրականացումը

7. Սանիտարահամաճարակաբանական վերահսկողություն (հսկողություն) իրականացնող պաշտոնատար անձինք սանիտարակարանտինային հսկողություն են իրականացնում տրանսպորտային միջոցների, ինչպես նաեւ անձանց նկատմամբ Մաքսային միության մաքսային տարածք (տարածքից) ժամանման (մեկնման) պահին, եթե բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության ապահովման ոլորտում առկա է արտակարգ իրավիճակների առաջացման վտանգ:

Բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության ապահովման ոլորտում արտակարգ իրավիճակների առաջացման վտանգներն են՝

- տրանսպորտային միջոցի ժամանումը (մեկնումը) հիվանդություններով վարակված շրջաններ ունեցող երկրներից (երկիր), եւ քիմիական ու ճառագայթային վթարներ ունեցող երկրներից (Առողջապահության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) տեղեկություններով կազմված երկրների ցանկերի համաձայն)։

- սահմանված կարգով նախնական տեղեկություններ չհաղորդելը օդանավի կամ ծովով (գետով) նավարկող նավի վրա այնպիսի հիվանդություն ունենալու մեջ կասկածվող անձանց բացակայության մասին, որի դեպքում պահանջվում է տարածքի սանիտարական պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացում՝ 2-րդ հավելվածի համաձայն (այսուհետ՝ հիվանդություն)։

- տրանսպորտային միջոցի վրա հիվանդություններով վարակված շրջաններ ունեցող երկրներից միջազգային չվերթով ժամանած կամ հիվանդության ինկուբացիոն շրջանում նման երկրներից ժամանած անձանց առկայությունը։

- ավելի վաղ իրականացված սանիտարակարանտինային հսկողության իրականացման ընթացքում միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցի վրա բնակչության սանիտարահամաճարակաբանական

բարեկեցության ապահովման ոլորտը կարգավորող օրենսդրության դրույթների խախտման դեպքերի հայտնաբերումը.

- օգտագործած սպիտակեղեն, հագուստ, անկողնային պարագաներ կամ տնտեսական գործածության այլ իրեր, սպասք, խաղալիքներ պարունակող՝ խախտված ամբողջականությամբ միջազգային փոստային առաքանիները, եւ որոնք ստացվել են վարակված շրջաններ ունեցող երկրներից կամ համաճարակների գոտիներից.

- տեղեկությունների ստացումը տրանսպորտային միջոցի վրա հիվանդություն ունենալու մեջ կասկածվող անձանց առկայության մասին.

- տրանսպորտային միջոցում կրծողների կամ դրանց՝ այնտեղ լինելու հետքերի առկայությունը.

- միջատների առկայությունը վարակված շրջաններ ունեցող երկրներից կամ համաճարակների գոտիներից ժամանած տրանսպորտային միջոցում.

- տրանսպորտային միջոցով ճառագայթման բարձր ֆոն ունեցող՝ հսկողության ենթակա ապրանքներ տեղափոխելու փաստի հաստատումը:

8. Մաքսային միության մաքսային տարածք (տարածքից) ժամանող (մեկնող) տրանսպորտային միջոցների սանիտարակարանտինային հսկողությունը ներառում է՝

- օդանավի, ծովով (գետով) նավարկող նավի անձնակազմից (հրամանատարից կամ անձնակազմի պատասխանատու անդամից) ստացվող տեղեկությունների գնահատումը՝ նախքան դրա ժամանումը՝ ինքնաթիռի ընդհանուր հայտարարագրի սանիտարական մասի, ծովով (գետով) նավարկող նավերի ծովային բժշկասանիտարական հայտարարագրի համաձայն.

- օդանավի ընդհանուր հայտարարագրի սանիտարական մասի, ծովով (գետով) նավարկող նավերի ծովային բժշկասանիտարական հայտարարագրի, ծովով (գետով) նավարկող նավի նկատմամբ սանիտարական հսկողություն իրականացնելու մասին վկայականի, ծովով (գետով) նավարկող նավը

սանիտարական հսկողությունից ազատելու մասին վկայականի, երկաթուղային տրանսպորտի սանիտարական եւ երթային մատյանների, անհրաժեշտության դեպքում՝ պատվաստման վերաբերյալ միջազգային վկայականների ստուգումը.

- ծովով (գետով) նավարկող ուղեւորային նավերում բժշկական օգնության դիմելու դեպքերի գրանցման համար նախատեսված մատյանների ստուգում.

- Մաքսային միության մաքսային սահմանը հատող տրանսպորտային միջոցների տեսողական զննում, անձնակազմի անդամների, գնացքի բրիգադների, ավտոտրանսպորտի վարորդների, ուղեւորների շրջանում հարցում անցկացնելը.

9. Վարակված շրջաններից ժամանած տրանսպորտային միջոցների, բեռնարկերի, լիստերների, ուղեւորների բեռների, հսկողության ենթակա ապրանքների նկատմամբ, համաճարակաբանական ցուցումների առկայության դեպքում (միջատների, կրծողների կամ դրանց՝ տվյալ վայրում լինելու հետքերի առկայությունը), իրականացվում են ախտահանման, միջատասպան (դեզինսեկցիոն) եւ (կամ) կրծողասպան (դերատիզացիոն) աշխատանքներ:

10. Սանիտարակարանտինային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք, օդանավի, ծովով (գետով) նավարկող նավի հրամանատարի կամ անձնակազմի պատասխանատու անդամի, գնացքի ղեկավարի, ավտոտրանսպորտային միջոցի վարորդի պահանջով, նշում են կատարում տրանսպորտային եւ (կամ) ճանապարհային փաստաթղթերում տրանսպորտային միջոցի նկատմամբ սանիտարական միջոցներ կիրառելու մասին:

11. Մաքսային միության մաքսային տարածք վարակիչ եւ զանգվածային վարակիչ հիվանդությունների (թունավորումների) ներսբերումը կանխելու նպատակով սանիտարակարանտինային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք, իրենց իրավասությունների շրջանակներում, իրականացնում են՝

- հարցում (անկետավորում) անցման կետեր ժամանող անձնակազմի անդամների, գնացքի եւ լոկոմոտիվային բրիգադների աշխատողների, ավտոտրանսպորտի վարորդների ու ուղեւորների շրջանում նրանց առողջական

վիճակի վերաբերյալ.

- անձնակազմի անդամների, լոկոմոտիվային բրիգադների աշխատողների, ավտոտրանսպորտի վարորդների եւ ուղեւորների ջերմության չափում (սանիտարահամաճարակաբանական ցուցումներից ելնելով եւ բողոքների առկայության դեպքում).

- բժշկական զննման կազմակերպում՝ առողջական վիճակի հետ կապված բողոքների առկայության դեպքում.

- տրանսպորտային միջոցի սանիտարական զննում (սննդային բլոկի, ջրամատակարարման համակարգերի, թափոնների բոլոր տեսակների հավաքման եւ հեռացման համակարգերի), ինչպես նաեւ վարակը կրողների եւ փոխանցողների (միջատների, կրծողների կամ դրանց՝ տվյալ վայրում լինելու հետքերի) առկայության հայտնաբերման նպատակով զննություն:

12. Տրանսպորտային միջոցում հիվանդի (հիվանդների) կամ հիվանդություն ունենալու մեջ կասկածվող անձանց առկայության դեպքում, Կողմերի լիազոր մարմինների պաշտոնատար անձանց կարգադրագրերի հիման վրա, ծովով (գետով) նավարկող նավերն անցման կետի վարչական ղեկավարության կողմից ուղարկվում են սանիտարական (կարանտինային) նավամատույց, օդանավերը՝ սանիտարական կայան, գնացքները՝ սանիտարական երկաթուղային փակուղի (ճանապարհ), ավտոտրանսպորտը՝ սանիտարական հրապարակ՝ սանիտարահակահամաճարակային միջոցառումներ իրականացնելու նպատակով:

Վարակները փոխանցողների, կենդանի կամ սատկած կրծողների առկայության դեպքում, Կողմերի լիազոր մարմինները կազմակերպում կամ կարգադրագրեր են տրամադրում ախտահանման, միջատասպան (դեզինսեկցիոն) եւ (կամ) կրծողասպան (դերատիզացիոն) միջոցառումներ իրականացնելու համար:

13. Տրանսպորտային (փոխադրման) միջոցի, բեռների համար եւ հիվանդություններով տառապողների (հիվանդություններ ունենալու մեջ կասկածվողների) նկատմամբ կարգադրված սանիտարահակահամաճարակային միջոցառումներն սկսում են իրականացվել անմիջապես, իրականացվում եւ

ավարտվում են առանց ուշացման եւ խտրականության՝ այն ծավալով, որը չի գերազանցում Միջազգային բժշկասանիտարական կանոններով (2005 թվականի) եւ այն Կողմի սանիտարահամաճարակաբանական օրենսդրությամբ սահմանված պահանջները, որի տարածքում իրականացվում են միջոցառումները՝ 3-րդ հավելվածի համաձայն:

14. Մաքսային միության մաքսային սահմանին հսկողության ենթակա ապրանքների սանիտարակարանտինային հսկողությունը ներառում է՝

- արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթերի հսկողությունը՝ Մաքսային միության մաքսային սահմանի վրա եւ մաքսային տարածքում սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա ապրանքների միասնական ցանկի (այսուհետ՝ Ապրանքների միասնական ցանկ) II բաժնում ընդգրկված սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին դրա համապատասխանության առումով, եւ դրանց համապատասխանությունը տրանսպորտային (փոխադրման) եւ (կամ)՝ առետրային փաստաթղթերին.

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341, 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշումների եւ Եվրասիական փնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 37 որոշման խմբագրությամբ)

- զննում, Ապրանքների միասնական ցանկի II բաժնում ընդգրկված՝ հսկողության ենթակա ապրանքների նմուշների ընտրման կազմակերպում (ընտրում)՝ սույն Կանոնակարգի 2-րդ կետում նշված դեպքերում գնահատումն իրականացնելու համար.

(Եվրասիական փնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 37 որոշման խմբագրությամբ)

- մասնակցություն (մաքսային մարմինների դիմումի համաձայն) տրանսպորտային (փոխադրման) եւ (կամ) առետրային փաստաթղթերի ստուգման գործընթացին, զննում, Ապրանքների միասնական ցանկում ընդգրկված՝

հսկողության ենթակա ապրանքների գնահատման համար նմուշների ընտրման կազմակերպում (ընտրում):

15. Սանիտարակարանտինային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք զննման են ենթարկում Մաքսային միության մաքսային տարածք ներս բերվող՝ հսկողության ենթակա ապրանքները՝ սանիտարահամաճարակաբանական հետեւյալ ցուցումների առկայության դեպքում.

- տեղեկությունների ստացում Միասնական սանիտարական պահանջներին չհամապատասխանող՝ հսկողության ենթակա ապրանքների ներսբերման մասին.

- տեղեկությունների առկայություն տրանսպորտային (փոխադրման) եւ (կամ) առեւտրային փաստաթղթերում հայտարարված՝ հսկողության ենթակա ապրանքների անհամապատասխանության մասին.

- տրանսպորտային փոխադրման պայմանների, բեռնարկերի, լիխտերների ամբողջականության խախտման դեպքերի հայտնաբերում, փաթեթվածքի վնասվածություն.

16. Ապրանքների միասնական ցանկում ընդգրկված՝ հսկողության ենթակա ապրանքների տեղափոխումը Մաքսային միության մաքսային սահմանով թույլատրվում է միայն Կողմերի սահմանած՝ միջազգային հաղորդակցության համար բաց այն անցման կետերում, որտեղ իրականացվում է պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողություն (հսկողություն), եւ որոնց ցանկը Կողմերին տրամադրում է Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարությունը:

17. Ապրանքների միասնական ցանկի II բաժնում ընդգրկված՝ հսկողության ենթակա ապրանքների ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք իրականացվում է սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում, որը տրամադրվում է լաբորատոր այն հետազոտությունների (փորձարկումների) արդյունքների համաձայն, որոնք անցկացվում են Կողմերի՝ հավատարմագրման

(ատեստավորման) ազգային համակարգերում հավատարմագրված(ատեստավորված) եւ Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների(կենտրոնների) Միասնական ռեեստրում ընդգրկված լիազոր մարմինների լաբորատորիաներում:

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի առկայության հաստատում է համարվում՝

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի բնօրինակը կամ դրա պատճենը, որը վավերացվել է այն տրամադրող մարմնի կամ նշված փաստաթուղթն ստացողի կողմից. (Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)կամ քաղվածքը՝ Մաքսային միության մաքսային սահմանին եւ մաքսային տարածքում սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա ապրանքների Պետական գրանցման վկայականների ռեեստրից (այսուհետ՝ Միասնական ռեեստր), որը տրամադրվում է Կողմերի՝ բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության ոլորտում լիազոր մարմինների եւ հաստատությունների կողմից՝ նշելով սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի վավերապայմանները, արտադրանքի (ապրանքների), պատրաստողի, ստացողի եւ սանիտարահամաճարակաբանական ու հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթուղթը տրամադրող

մարմնի անվանումները.

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341, 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432, 2011 թվականի մարտի 2-ի թիվ 567 որոշումների խմբագրությամբ)

կամ նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները՝ վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ.

կամ Պետական գրանցման վկայականների միասնական ռեեստրի էլեկտրոնային տվյալների բազայի տեղեկությունները, որոնք տեղադրված են համացանցում՝ Մաքսային միության կայքի հատուկ որոնողական սերվերի վրա.

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշմամբ)

կամ պետական գրանցման վկայականի համարի եւ դրա տրամադրման ամսաթվի մասին նշման առկայությունը ապրանքների ձեռքբերումը (ստացումը) հաստատող փաստաթղթերում եւ (կամ) այլ կից ներկայացված փաստաթղթերում (Միասնական ռեեստրում կամ Կողմերի ազգային ռեեստրներում տեղեկությունների առկայության դեպքում).

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշմամբ)

կամ պետական գրանցման վկայականի համարի եւ դրա տրամադրման ամսաթվի մասին նշման առկայությունը ապրանքի եւ (կամ) դրա սպառողական տարայի վրա (Միասնական ռեեստրում կամ Կողմերի ազգային ռեեստրներում տեղեկությունների առկայության դեպքում):

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշմամբ)

Կողմերից	որեւէ	մեկի	կողմից	տրամադրված՝
սանիտարահամաճարակաբանական		եւ	հիգիենիկ	պահանջներին
համապատասխանության	առումով		արտադրանքի	(ապրանքների)

անվտանգությունը հաստատող փաստաթղթերի ընդունումն իրականացվում է առանց նշված փաստաթղթերը որպես նշանակման Կողմի փաստաթղթեր վերաձեռակերպելու եւ առանց, այդ նպատակներով կրկնակի լաբորատոր հետազոտություններ (փորձարկումներ) անցկացնելու:

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթերը, որոնք Կողմերի լիազոր մարմինների կողմից ձեռակերպվել են մինչեւ «Սանիտարական միջոցների մասին» Մաքսային միության Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը, գործում են բացառապես տվյալ փաստաթղթերը տրամադրած Կողմի տարածքում, դրանցում նշված ժամկետի սահմաններում, սակայն արտադրանքի (ապրանքների) համապատասխան տեսակների վերաբերյալ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ ուշ, եթե այլ բան սահմանված չէ արտադրանքի (ապրանքների) նման տեսակների վերաբերյալ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով կամ այն ընդունելու մասին Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ, եւ հիմք են ծառայում Մաքսային միության մաքսային տարածք հսկողության ենթակա տվյալ ապրանքների ներմուծումը եւ տվյալ փաստաթղթերը տրամադրած Կողմի տարածքում շրջանառության մեջ դնելը թույլատրելու համար:

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432, 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 888 որոշումների խմբագրությամբ)

Կոսմետիկական արտադրանքի, բերանի խոռոչի հիգիենայի միջոցների եւ արտադրատեսակների, կենցաղային քիմիայի ապրանքների, հանքային ջրի (սեղանի բնական, բուժիչ՝ սեղանի, բուժիչ), շշալցված խմելու ջրին, (այդ թվում՝ մանկական սննդի մեջ օգտագործման համար, տոնուսավորող ըմպելիքներին, ալկոհոլային արտադրանքին՝ ներառյալ թույլ ալկոհոլային արտադրանքի, գարեջրի, երեխաների եւ մեծահասակների համար անձնական հիգիենայի պարագաների

դեպքում սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթերը, որոնք Բելառուսի Հանրապետության կամ Ռուսաստանի Դաշնության լիազոր մարմինների կողմից ձեւակերպվել են մինչեւ 2011 թվականի հունվարի 1-ը, գործում են Ղազախստանի Հանրապետության տարածքում, դրանցում նշված ժամկետի սահմաններում, սակայն արտադրանքի (ապրանքների) համապատասխան տեսակների վերաբերյալ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ ուշ, եթե այլ բան սահմանված չէ արտադրանքի (ապրանքների) նման տեսակների վերաբերյալ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով կամ այն ընդունելու մասին Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ, եւ հիմք են ծառայում Ղազախստանի Հանրապետության տարածք հսկողության ենթակա տվյալ ապրանքների ներմուծումը եւ շրջանառության մեջ դնելը թույլատրելու համար:

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մարտի 2-ի թիվ 567 որոշմամբ, Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 888 որոշման խմբագրությամբ)

Հսկողության ենթակա ապրանքների՝ Մաքսային միության մաքսային տարածք ներմուծման եւ այդ տարածքում շրջանառության դեպքում, դրանք Ապրանքների միասնական ցանկի II եւ III բաժիններին դասելու համար հիմք են ծառայում տրանսպորտային (փոխադրման) եւ (կամ) առետրային փաստաթղթերում կամ արտադրանքը պատրաստողի (արտադրողի) տեղեկատվական նամակում նշված եւ Ապրանքների միասնական ցանկի II եւ III բաժիններում նշված՝ արտադրանքի կիրառության ոլորտը հաստատող տեղեկությունները:

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշմամբ)

Այն իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, որին սեփականության իրավունքով կամ որեւէ այլ օրինական հիմքով, պատկանում է արտադրանքը, որը ներմուծվում է՝ ըստ ապրանքին կից ներկայացված փաստաթղթերի, հետեյալ նշումով՝ «արտադրանքի նմուշներ, որոնք նախատեսված

են պետական գրանցման վկայականի ձեւակերպման նպատակով սանիտարահամաճարակաբանական փորձաքննության անցկացման համար», պարտավոր են ապահովել Մաքսային միության մաքսային տարածքում նշված արտադրանքի շրջանառությունը չթույլատրելը՝ մինչեւ պետական գրանցման վկայականը ձեւակերպելը:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 114 որոշմամբ)

18. Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող՝ հսկողության ենթակա ապրանքները պետք է համապատասխանեն Միասնական սանիտարական պահանջներին:

19. Թույլատրվում է հսկողության ենթակա ապրանքների ներմուծումն առանց այն փաստաթղթերի, որոնցով հաստատվում է արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին դրանց համապատասխանության առումով այն դեպքում, երբ տրանսպորտային (փոխադրման) եւ (կամ) առետրային փաստաթղթերում առկա են տեղեկություններ այն մասին, որ ներմուծվող ապրանքը դասվում է Ապրանքների միասնական ցանկի III բաժնում թվարկված ապրանքներին:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

Պարբերությունը հանվել է: – Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշում:

20. Սանիտարակարանտինային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք, իրենց իրավասության շրջանակներում, անցման կետերում իրականացնում են սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթերի, Ապրանքների միասնական ցանկի II, III բաժիններում ընդգրկված՝ հսկողության ենթակա ապրանքների տրանսպորտային (փոխադրման) եւ (կամ) առետրային փաստաթղթերի ստուգում

եւ, սույն Կանոնակարգի 17-րդ կամ 19-րդ կետերով սահմանված պահանջներին դրանց համապատասխանությունը հավաստելու դեպքում, դնում են «Ներմուծումը թույլատրված է» դրոշմակնիք՝ նշելով լիազոր մարմնի անվանումը, տրանսպորտային (փոխադրման) եւ (կամ) առետրային փաստաթղթերից որեւէ մեկի վրա՝ ամսաթիվը եւ ստորագրությունը, ինչպես նաեւ կատարում են նշում անձնական համարակալված կնիքով:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

«Ներմուծումը թույլատրված է» դրոշմակնիք դնելու պահանջ չի ներկայացվում Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առետրի ինտեգրացված տեղեկատվական համակարգը գործարկելուց հետո, որը թույլ է տալիս իրականացնել Ապրանքների միասնական ցանկի II բաժնում ընդգրկված արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը՝ սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով հաստատող փաստաթղթերի հսկողություն եւ տրանսպորտային (փոխադրման) եւ (կամ) առետրային փաստաթղթերին դրանց համապատասխանության ստուգում:

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մարտի 2-ի թիվ 567 որոշմամբ)

21. Կողմերի օրենսդրության եւ (կամ) միջազգային պայմանագրերի համաձայն՝ սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթերի նկատմամբ հսկողության իրականացումը կարող է վերապահվել Կողմերի մաքսային մարմիններին:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

22. Սանիտարակարանտինային հսկողություն իրականացնող պաշտոնատար

անձինք կազմակերպում են հսկողության ենթակա ապրանքների գնահատման իրականացումը հետեւյալ դեպքերում՝

- տրանսպորտային փոխադրման պայմանների, բեռնարկերի, լիխտերների ամբողջականության խախտում եւ այլն.

- փաթեթվածքի վնասվածություն.

- ապրանքների ներսբերում համաճարակաբանական առումով անբարենպաստ երկրներից եւ (կամ) ռադիոակտիվ, քիմիական եւ կենսաբանական վթարների հետեւանքով վարակված շրջաններից (ռադիոակտիվ նյութերի, վնասված փաթեթվածքով՝ պարունակության արտահոսքի նշաններով վտանգավոր բեռների փոխադրման ժամանակ ճառագայթման դոզայի (չափաքանակի) հզորության եւ ռադիոնուկլիդներով մակերեւութային աղտոտման թույլատրելի արժեքների գերազանցում հայտնաբերելու դեպքում) եւ (կամ) կրծողների ու միջատների առկայության նշաններով:

- տեղեկությունների ստացում հսկողության ենթակա ապրանքների՝ Միասնական սանիտարական պահանջներին անհամապատասխանության մասին.

- տեղեկությունների առկայություն տրանսպորտային (փոխադրման) եւ (կամ) առեւտրային փաստաթղթերում հսկողության ենթակա ապրանքների անհամապատասխանության մասին.

Հսկողության ենթակա ապրանքների գնահատումն իրականացնելու ժամանակահատվածում դրանց տեղաբաշխման վերաբերյալ որոշումը կայացվում է մաքսային մարմինների հետ համատեղ:

Հսկողության ենթակա ապրանքի գնահատման արդյունքների հիման վրա սանիտարակարանտինային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից որոշում է կայացվում հսկողության ենթակա տվյալ ապրանքի ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք թույլատրելու կամ արգելելու վերաբերյալ:

Պաշտոնատար այն անձը, որն իրականացնում է սանիտարակարանտինային հսկողություն եւ որոշում է կայացնում Մաքսային միության մաքսային տարածք

Ապրանքների միասնական ցանկի II բաժնում չընդգրկված՝ հսկողության ենթակա այն ապրանքի ներմուծումը թույլատրելու վերաբերյալ, որի նկատմամբ Կողմերից մեկի կողմից կիրառվել են ժամանակավոր սանիտարական միջոցներ, դնում է «Ներմուծումը թույլատրված է» դրոշմակնիք՝ նշելով լիազոր մարմնի անվանումը, տրանսպորտային (փոխադրման) եւ (կամ) առետրային փաստաթղթերից որեւէ մեկի վրա՝ ամսաթիվը եւ ստորագրությունը, ինչպես նաեւ կատարում է նշում անձնական համարակալված կնիքով:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 37 որոշմամբ)

Պաշտոնատար այն անձը, որն իրականացնում է սանիտարակարանտինային հսկողություն եւ որոշում է կայացնում Մաքսային միության մաքսային տարածք Ապրանքների միասնական ցանկի II բաժնում չընդգրկված՝ հսկողության ենթակա այն ապրանքի ներմուծումը մերժելու վերաբերյալ, որի նկատմամբ Կողմերից մեկի կողմից կիրառվել են ժամանակավոր սանիտարական միջոցներ, դնում է «Ներմուծումն արգելված է» դրոշմակնիք՝ նշելով լիազոր մարմնի անվանումը, տրանսպորտային (փոխադրման) եւ (կամ) առետրային փաստաթղթերից որեւէ մեկի վրա՝ ամսաթիվը եւ ստորագրությունը, ինչպես նաեւ կատարում է նշում անձնական համարակալված կնիքով:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 37 որոշմամբ)

23. Այն դեպքում, երբ սանիտարակարանտինային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք բացահայտում են հսկողության ենթակա ապրանքների անհամապատասխանությունը սույն Կանոնակարգի 17-րդ կամ 19-րդ կետում թվարկված պահանջներին եւ (կամ) Միասնական սանիտարական պահանջներին, չի թույլատրվում հսկողության ենթակա նման ապրանքների ներմուծումը, ինչի մասին գրավոր տեղեկացվում է փոխադրողին (բեռնառաքչին)՝ 5-րդ հավելվածի համաձայն:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ

341 որոշման խմբագրությամբ)

Տրանսպորտային (փոխադրման) եւ (կամ) առեւտրային փաստաթղթերից որեւէ մեկի վրա սանիտարականտինային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք դնում են «Ներմուծումն արգելված է» դրոշմակնիք՝ նշելով լիազոր մարմնի անվանումը, ամսաթիվը եւ ստորագրությունը, ինչպես նաեւ կատարում են նշում անձնական համարակալված կնիքով:

24. Մաքսային միության մաքսային տարածք ներմուծման համար արգելված՝ հսկողության ենթակա այն ապրանքները, որոնց վերաբերյալ կայացվել է որոշում Մաքսային միության մաքսային տարածք ներմուծումն արգելելու մասին, ենթակա են Մաքսային միության մաքսային տարածքից անհապաղ արտահանման, եթե այլ բան սահմանված չէ Կողմերի օրենսդրությամբ եւ (կամ) միջազգային պայմանագրերով:

Նշված ապրանքների արտահանմանն հետ կապված միջոցների կիրառումը վերապահվում է փոխադրողին կամ դրանց սեփականատիրոջը, եթե այլ բան սահմանված չէ Կողմերի օրենսդրությամբ եւ (կամ) միջազգային պայմանագրերով:

25. Միասնական սանիտարական պահանջներին չհամապատասխանող՝ հսկողության ենթակա ապրանքների արտահանման անհնարինության կամ դրանց անհապաղ արտահանում չիրականացնելու դեպքում, այդ ապրանքները ենթակա են արգելանքի վերցման՝ ոչնչացման կամ որեւէ այլ կերպ օգտագործման նպատակով՝ Կողմերի օրենսդրությանը համապատասխան:

26. Կողմի լիազոր մարմնի այն տարածքային ստորաբաժանումը, որը հայտնաբերել է հսկողության ենթակա ապրանքների անհամապատասխանությունը Միասնական սանիտարական պահանջներին, անհապաղ տեղեկություններ է ուղարկում իր Կողմի լիազոր մարմնի ղեկավարի (նրա տեղակալի) հասցեով դրանց ներմուծումն արգելելու (կասեցնելու) մասին:

Անհամապատասխանությունը հայտնաբերած Կողմի լիազոր մարմնի ղեկավարը (նրա տեղակալը) արգելքի մասին տեղեկությունները հաղորդում է մյուս Կողմերի լիազոր մարմինների ղեկավարներին (նրանց տեղակալներին) եւ ապահովում է դրանց անհապաղ ներմուծումը Եվրասիական տնտեսական

համայնքի տեխնիկական կարգավորման, սանիտարական ու բուսասանիտարական միջոցների կիրառման ոլորտի Տեղեկատվական համակարգի եւ Մաքսային միության արտաքին ու փոխադարձ առեւտրի ինտեգրացված տեղեկատվական համակարգի մեջ:

Կողմերի լիազոր մարմինների մասին տվյալները Կողմերին են տրամադրվում Հանձնաժողովի քարտուղարության կողմից:

V. Մաքսային միության մաքսային սահմանի անցման կետերում պետական հսկողություն իրականացնող մարմինների պաշտոնատար անձանց փոխգործակցությունը

27. Տրանսպորտային միջոցներում ժամանած անձանց մեջ հիվանդներ, վտանգավոր վարակիչ հիվանդություններ կրողներ եւ (կամ) փոխանցողներ հայտնաբերելու, ինչպես նաեւ Միասնական սանիտարական պահանջներին չհամապատասխանող՝ հսկողության ենթակա ապրանքներ հայտնաբերելու դեպքում սանիտարակարանտինային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք անցման կետերում կատարում են պետական հսկողություն իրականացնող բոլոր մարմինների համապատասխան անհրաժեշտ գործողությունների համակարգումը:

28. Լիազոր մարմինները, պետական հսկողություն իրականացնող մյուս մարմինների հետ համատեղ, կազմակերպում եւ ապահովում են միջազգային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների անձնակազմի, անցման կետում պետական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց համատեղ պարբերական նախապատրաստումը (ուսուցողական վարժանքներ, պարապմունքներ, հրահանգավորումներ) փոխգործակցությանը, հիվանդությունների ախտանշաններով հիվանդների, հիվանդություններ կրողների, հիվանդությունների հարուցիչները փոխանցողների հայտնաբերմանը, հիվանդություններ ունենալու մեջ կասկածվող անձանց հայտնաբերման դեպքում սանիտարահամաճարակաբանական միջոցառումների իրականացմանն առնչվող հարցերի վերաբերյալ:

Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող եւ պետական հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից հսկողության ենթակա ապրանքների մաքսային հսկողության իրականացման ժամանակ մաքսային մարմիններն ապահովում են նման գործողությունների ընդհանուր համակարգումը եւ դրանց միաժամանակյա իրականացումը՝ Կողմերի օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մաքսային մարմինները եւ պետական հսկողություն իրականացնող մարմինները, տեղեկատվական համակարգերի եւ տեխնոլոգիաների օգտագործմամբ, փոխանակում են մաքսային ու պետական հսկողության այլ տեսակների իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ (տվյալներ) եւ (կամ) փաստաթղթեր:

Այն դեպքում, երբ մաքսային մարմինները փոփոխում են մաքսային միության մաքսային տարածք ներմուծված ապրանքների ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը՝ դրանց նկատմամբ նշանակման երկրում մաքսային ընթացակարգ սահմանելիս, նրանք, մինչեւ ապրանքների ժամանակավոր պահպանության ժամկետի լրանալը, փոխադրողին (լիազորված անձ) ուղարկում են բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության ոլորտում լիազոր մարմիններ եւ հաստատություններ Ապրանքների միասնական ցանկի II բաժնում ընդգրկված՝ հսկողության ենթակա ապրանքների նկատմամբ նշանակման երկրում սանիտարակարանտինային հսկողություն իրականացնելու համար:

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մարտի 2-ի թիվ 567 որոշմամբ)

VI. Մաքսային միության մաքսային սահմանի վրա հսկողության ենթակա ապրանքների նկատմամբ պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) իրականացումը

29. Պատրաստողը եւ Մաքսային միության մաքսային տարածք հսկողության ենթակա ապրանքների ներմուծումն իրականացնող անձը պատասխանատվություն

են կրում Միասնական սանիտարական պահանջներին դրանց համապատասխանության համար հսկողության ենթակա ապրանքների արդյունաբերական պատրաստման կամ Մաքսային միության մաքսային տարածք հսկողության ենթակա ապրանքների մատակարարումների ամբողջ ժամանակահատվածի ընթացքում:

30. Ապրանքների միասնական ցանկի II բաժնում ընդգրկված՝ հսկողության ենթակա ապրանքների շրջանառությունը Մաքսային միության մաքսային տարածքում իրականացվում է սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում, որը տրամադրվում է լաբորատոր այն հետազոտությունների (փորձարկումների) արդյունքների համաձայն, որոնք անցկացվում են Կողմերի՝ հավատարմագրման (ատեստավորման) ազգային համակարգերում հավատարմագրված(ատեստավորված)եւ Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների(կենտրոնների)Միասնական ռեեստրում ընդգրկված լիազոր մարմինների լաբորատորիաներում:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի առկայության հաստատում է համարվում՝

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի բնօրինակը կամ դրա պատճենը, որը վավերացվել է այն տրամադրող մարմնի կամ նշված փաստաթուղթն ստացողի

կողմից.

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

կամ քաղվածքը՝ Միասնական ռեեստրից, որը տրամադրվում է Կողմերի՝ բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության ոլորտում լիազոր մարմինների եւ հաստատությունների կողմից՝ նշելով սանիտարահամաճարակաբանական ու հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի վավերապայմանները, արտադրանքի (ապրանքների), պատրաստողի, ստացողի եւ սանիտարահամաճարակաբանական ու հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթուղթը տրամադրող մարմնի անվանումները.

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341, 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432, 2011 թվականի մարտի 2-ի թիվ 567 որոշումների խմբագրությամբ)

կամ նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները՝ վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ.

կամ Պետական գրանցման վկայականների միասնական ռեեստրի էլեկտրոնային տվյալների բազայի տեղեկությունները, որոնք տեղադրված են համացանցում, Մաքսային միության կայքի հատուկ որոնողական սերվերի վրա.

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 341 որոշմամբ)

կամ պետական գրանցման վկայականի համարի եւ դրա տրամադրման ամսաթվի մասին նշման առկայությունը ապրանքների ձեռքբերումը (ստացումը) հաստատող փաստաթղթերում եւ (կամ) այլ կից ներկայացված փաստաթղթերում (Միասնական ռեեստրում կամ Կողմերի ազգային ռեեստրներում տեղեկությունների առկայության դեպքում).

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշմամբ)

կամ պետական գրանցման վկայականի համարի եւ դրա տրամադրման ամսաթվի մասին նշման առկայությունը ապրանքի եւ (կամ) դրա սպառողական տարայի վրա (Միասնական ռեեստրում կամ Կողմերի ազգային ռեեստրներում տեղեկությունների առկայության դեպքում):

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշմամբ)

Կողմերից որեւէ մեկի կողմից տրամադրված՝ սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի ընդունումն իրականացվում է առանց նշված փաստաթուղթն որպես նշանակման Կողմի փաստաթղթեր վերաձեւակերպելու եւ առանց, այդ նպատակներով կրկնակի լաբորատոր հետազոտություններ (փորձարկումներ) անցկացնելու:

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

Հսկողության ենթակա ապրանքների՝ Մաքսային միության մաքսային տարածք ներմուծման եւ այդ տարածքում շրջանառության դեպքում, դրանք Ապրանքների միասնական ցանկի II եւ III բաժիններին դասելու համար հիմք են ծառայում տրանսպորտային (փոխադրման) եւ (կամ) առետրային փաստաթղթերում կամ արտադրանքը պատրաստողի (արտադրողի) տեղեկատվական նամակում նշված եւ Ապրանքների միասնական ցանկի II ու III բաժիններում նշված՝ արտադրանքի կիրառության ոլորտը հաստատող տեղեկությունները:

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշմամբ)

Այն իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, որին սեփականության իրավունքով կամ որեւէ այլ օրինական հիմքով պատկանում է

արտադրանքը, որը ներմուծվում է ըստ ապրանքին կից ներկայացված փաստաթղթերի հետեյալ նշումով՝ «արտադրանքի նմուշներ, որոնք նախատեսված են պետական գրանցման վկայականի ձեւակերպման նպատակով սանիտարահամաճարակաբանական փորձաքննության անցկացման համար», պարտավոր են ապահովել Մաքսային միության մաքսային տարածքում նշված արտադրանքի շրջանառությունը չթույլատրելը՝ մինչեւ պետական գրանցման վկայականը ձեւակերպելը:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 114 որոշմամբ)

31. Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթերը, որոնք Կողմերի լիազոր մարմինների կողմից ձեւակերպվել են մինչեւ «Սանիտարական միջոցների մասին» Մաքսային միության Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը, գործում են բացառապես տվյալ փաստաթղթերը տրամադրած Կողմի տարածքում, դրանցում նշված ժամկետի սահմաններում, սակայն արտադրանքի (ապրանքների) համապատասխան տեսակների վերաբերյալ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ ուշ, եթե այլ բան սահմանված չէ արտադրանքի (ապրանքների) նման տեսակների վերաբերյալ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով կամ այն ընդունելու մասին Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ:

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432, 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 888 որոշումների խմբագրությամբ)

2010 թվականի հուլիսի 1-ից մինչեւ արտադրանքի (ապրանքների) համապատասխան տեսակների վերաբերյալ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու ամսաթիվն ընկած ժամանակահատվածում, եթե այլ բան սահմանված չէ արտադրանքի (ապրանքների) նման տեսակների վերաբերյալ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով կամ այն

ընդունելու մասին Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ, Մաքսային միության միասնական մաքսային տարածքում այն արտադրանքի շրջանառությունը, որի համար արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթերը Կողմերի լիազոր մարմինների կողմից ձեւակերպվել են մինչեւ 2010 թվականի հունիսի 30-ը՝ դրանցում նշված ժամկետի սահմաններում, կատարվում է 2010 թվականի հունիսի 30-ի դրությամբ այն Կողմի օրենսդրության գործող պահանջներին այդ արտադրանքի համապատասխանության դեպքում, որի տարածքում իրացվում է արտադրանքը:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 888 որոշման խմբագրությամբ)

Մինչեւ 2011 թվականի հունվարի 1-ը Ապրանքների միասնական ցանկի II բաժնում ընդգրկված՝ հսկողության ենթակա այն ապրանքների համար, որոնց շրջանառությունը իրականացվելու է բացառապես Կողմերից որեւէ մեկի տարածքում, կարող են տրամադրվել սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթեր այն Կողմի օրենսդրության պահանջներին համապատասխան, որի տարածքում շրջանառության մեջ են դրվելու նշված՝ հսկողության ենթակա ապրանքները:

Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող եւ Կողմի օրենսդրությանը համապատասխան տրամադրված փաստաթուղթը գործում է բացառապես տվյալ փաստաթուղթը տրամադրած Կողմի տարածքում, դրանում նշված ժամկետի սահմաններում, սակայն արտադրանքի (ապրանքների) համապատասխան տեսակների վերաբերյալ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ ուշ, եթե այլ բան սահմանված չէ արտադրանքի (ապրանքների) նման տեսակների վերաբերյալ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով կամ այն ընդունելու մասին Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ:

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի

**թիվ 432, 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 888 որոշումների
խմբագրությամբ)**

32. Կողմերի լիազոր մարմիններն իրավունք ունեն պահանջելու լաբորատոր հետազոտությունների (փորձարկումների) այն արձանագրությունները, որոնց հիման վրա տրվել է սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթուղթը, տվյալ փաստաթուղթը տրամադրած լիազոր մարմիններից հետեւյալ դեպքերում՝

**(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի
թիվ 432 որոշման խմբագրությամբ)**

- պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողություն (հսկողություն) իրականացնելու ընթացքում հսկողության ենթակա ապրանքների՝ Միասնական սանիտարական պահանջներին անհամապատասխանության բացահայտում.

- հսկողության ենթակա ապրանքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու անհրաժեշտություն:

33. Հսկողության ենթակա ապրանքների շրջանառության ժամանակ Կողմերի լիազոր մարմիններն իրավունք ունեն իրենց կողմից հսկողության ենթակա տարածքում կատարելու նմուշների ընտրում լաբորատոր հետազոտությունների (փորձարկումների) անցկացման համար հետեւյալ դեպքերում՝

- համաճարակաբանական ցուցումների առկայություն.

- Կողմերի պետական մարմինների եւ հասարակական կազմակերպությունների կողմից՝ բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության ապահովման ոլորտը կարգավորող օրենսդրության դրույթների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների, հսկողության ենթակա ապրանքների քանակի եւ անվտանգության հետ կապված՝ բնակչությունից ստացված հիմնավորված բողոքների ստացում.

- պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողություն (հսկողություն) իրականացնելու ընթացքում օբյեկտի սանիտարահամաճարակաբանական ստուգման անցկացում:

34. Հսկողության ենթակա ապրանքների՝ Միասնական սանիտարական պահանջներին անհամապատասխանության բացահայտման դեպքում, բացի սույն Կանոնակարգի 31-րդ կետի 2-րդ պարբերության մեջ նշված դեպքերից, Կողմերի տարածքային ստորաբաժանումների լիազոր մարմինների ղեկավարները (նրանց տեղակալները) ձեռնարկում են Կողմերի օրենսդրությամբ նախատեսված միջոցներ, ինչպես նաև՝

- որոշում են կայացնում Միասնական սանիտարական պահանջներին չհամապատասխանող՝ հսկողության ենթակա ապրանքների իրացումն արգելելու մասին.

- հսկողության ենթակա ապրանքի՝ Միասնական սանիտարական պահանջներին անհամապատասխանության մասին փաստի վերաբերյալ տեղեկություններն ուղարկում են իրենց Կողմի լիազոր մարմնի ղեկավարի (նրա տեղակալի) հասցեով:

Կողմի լիազոր մարմնի ղեկավարը (նրա տեղակալը), որը հայտնաբերել է հսկողության ենթակա ապրանքի անհամապատասխանությունը Միասնական սանիտարական պահանջներին, հսկողության ենթակա ապրանքի՝ Միասնական սանիտարական պահանջներին անհամապատասխանության մասին փաստի հաստատման վերաբերյալ անհապաղ տեղեկություններ է ուղարկում Կողմերի լիազոր մարմինների ղեկավարներին (նրա տեղակալներին), Կողմերի մաքսային մարմինների ղեկավարներին՝ Միասնական սանիտարական պահանջներին չհամապատասխանող՝ հսկողության ենթակա ապրանքների ներմուծման եւ շրջանառության սահմանափակման հետ կապված միջոցներ ձեռնարկելու համար: Ընդ որում, տվյալ տեղեկություններն անմիջապես ներմուծվում են Եվրասիական տնտեսական համայնքի տեխնիկական կարգավորման, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցների կիրառման ոլորտի Տեղեկատվական համակարգի եւ Մաքսային միության արտաքին ու փոխադարձ առևտրի ինտեգրացված

տեղեկատվական համակարգի մեջ:

Տեղեկությունների մեջ նշվում են հետևյալ տվյալները.

- հսկողության ենթակա ապրանքի, պատրաստողի (արտադրողի) անվանումը,

- խմբաքանակի համարը եւ ծավալը,

- ապրանքին կից ներկայացված փաստաթղթերի անվանումը եւ դրանցում նշված տվյալները հսկողության ենթակա ապրանքի մասին,

- այն ցուցանիշների ցանկը, որոնց առկայությամբ հայտնաբերվել է Միասնական սանիտարական պահանջներին անհամապատասխանությունը. ում կողմից եւ երբ է հայտնաբերվել այն,

- ձեռնարկված միջոցները,

- սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթուղթը տրամադրած լիազոր մարմնի, կամ հայտարարագիրը գրանցած կազմակերպության անվանումը:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

Տեղեկությունները չեն ուղարկվում եւ չեն ներմուծվում Եվրասիական տնտեսական համայնքի տեխնիկական կարգավորման, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցների կիրառման ոլորտի Տեղեկատվական համակարգի եւ Մաքսային միության արտաքին ու փոխադարձ առևտրի ինտեգրացված տեղեկատվական համակարգի մեջ այն դեպքում, երբ Միասնական սանիտարական պահանջներին արտադրանքի անհամապատասխանությունը կապված է հսկողության ենթակա ապրանքների տրանսպորտային փոխադրման, պահպանման, իրացման պայմանների խախտման հետ:

35. Այն դեպքում, երբ ստացվում են այնպիսի տեղեկություններ, որ հայտնաբերվել է հսկողության ենթակա ապրանքի անհամապատասխանություն Միասնական սանիտարական պահանջներին, սանիտարահամաճարակաբանական

Եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթուղթը տրամադրող Կողմի լիազոր մարմնի ղեկավարը (նրա տեղակալը) որոշում է ընդունում սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի գործողությունը կասեցնելու մասին որոշում կայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

36. Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող՝ լիազոր մարմինների կողմից Միասնական ձեւի համաձայն տրամադրված փաստաթղթի գործողությունը կասեցվում կամ դադարեցվում է հետեւյալ դեպքերում՝

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

- Միասնական սանիտարական պահանջներին՝ հսկողության ենթակա ապրանքների անհամապատասխանության փաստի հաստատում, ինչը հաստատապես կապված չէ հսկողության ենթակա ապրանքի տրանսպորտային փոխադրման, պահպանման եւ իրացման պայմանները խախտելու դեպքերի հետ.

- Մաքսային միության հանձնաժողովի կողմից հսկողության ենթակա ապրանքների անվտանգության ցուցանիշների փոփոխում՝ գիտության ոլորտում տեղի ունեցող ներկայիս զարգացումների հիման վրա.

- տեղեկությունների ստացում տեխնիկական կարգավորման, սանիտարական, անասնաբուժական ու բուսասանիտարական միջոցների հետ կապված աշխատանքներն իրականացնող եւ (կամ) համակարգող՝ Կողմերի լիազոր մարմիններից, միջազգային կազմակերպություններից կամ Մաքսային միության անդամ չհանդիսացող պետություններից այն մասին, որ հսկողության ենթակա

ապրանքները վտանգ են ներկայացնում մարդու կյանքի եւ առողջության համար:

Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի գործողությունը կասեցնելու, վերականգնելու կամ դադարեցնելու մասին տեղեկություններն անհապաղ ուղարկվում են Կողմերի լիազոր մարմինների ղեկավարներին (ներսնց տեղակալներին) եւ ներմուծվում են Եվրասիական տնտեսական համայնքի տեխնիկական կարգավորման, սանիտարական ու բուսասանիտարական միջոցների կիրառման ոլորտի Տեղեկատվական համակարգի եւ Մաքսային միության արտաքին ու փոխադարձ առեւտրի ինտեգրացված տեղեկատվական համակարգի մեջ:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

37. Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի Միասնական ձեւի ձեւակերպման եւ տրամադրման կարգի մասին կանոնակարգի 16-րդ կետով նախատեսված սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթի վերաձեւակերպման դեպքերում, հսկողության ենթակա ապրանքների շրջանառությունը չի կասեցվում սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին համապատասխանության առումով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելու համար պահանջվող ժամանակահատվածի ընթացքում:

(Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 432 որոշման խմբագրությամբ)

38. Այն դեպքում, երբ Կողմերից մեկը համաձայն չէ հսկողության ենթակա ապրանքների լաբորատոր հետազոտությունների (փորձարկումների) արդյունքների

հետ, դրանց կրկնակի հետազոտությունները (փորձարկումները) կարող են անցկացվել Կողմերի կողմից որպես երրորդ Կողմի՝ արբիտրաժային կամ հավատարմագրված լաբորատորիաներ սահմանված՝ հավատարմագրված լաբորատորիաներում:

39. Կողմերից որեւէ մեկի տարածքում հանրային առողջապահության համար սպառնալիք ստեղծող՝ սանիտարահամաճարակաբանական բնույթի արտակարգ իրավիճակի առաջացման դեպքերում, այդ Կողմի լիազոր մարմինը 24 ժամվա ընթացքում դրա մասին, ինչպես նաեւ ձեռնարկված սանիտարական միջոցների մասին տեղեկացնում է մյուս Կողմերին եւ տեղեկությունները տեղադրում է Եվրասիական տնտեսական համայնքի տեխնիկական կարգավորման, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցների կիրառման ոլորտի Տեղեկատվական համակարգում ու Մաքսային միության արտաքին ու փոխադարձ առետրի ինտեգրացված տեղեկատվական համակարգում:

40. Սանիտարակարանտինային հսկողության արդյունքները գրանցվում են հաշվառման ձեւերում՝ 4-րդ հավելվածի համաձայն:

Ապրանքների միասնական ցանկի II բաժնում չընդգրկված՝ հսկողության ենթակա ապրանքների նկատմամբ Կողմերից որեւէ մեկի կողմից ժամանակավոր սանիտարական միջոցներ կիրառելու դեպքում, սանիտարակարանտինային հսկողության արդյունքները գրանցվում են «Մ-3» հաշվառման ձեւում՝ 4-րդ հավելվածի համաձայն:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի թիվ 37 որոշմամբ)

41. Կողմերի լիազոր մարմինների ղեկավարները (նրանց տեղակալները) յուրաքանչյուր տարի՝ մինչեւ փետրվարի 15-ը, հաշվետվությունների սահմանված ձեւին համապատասխան, Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարություն տեղեկություններ են ուղարկում Մաքսային միության մաքսային տարածքի սանիտարական պաշտպանությանն ուղղված միջոցառումների վերաբերյալ, 4-րդ հավելվածի համաձայն, այդ տեղեկությունները համացանցում՝ Մաքսային միության

պաշտոնական կայքում տեղադրելու համար:

Հավելված թիվ 1

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԻՆ ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ (ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ), ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ, ԳԵՏԱՅԻՆ, ԾՈՎԱՅԻՆ ԱՆՑՄԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ ԵՎ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԱՆՑՄԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ (ՕԴԱՅԻՆ ԱՆՑՄԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ) ՍԱՆԻՏԱՐԱԿԱՐԱՆՏԻՆԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ՈՒ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԻՊԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՏԻՊԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ)

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն տիպային պահանջներով սահմանվում են անցման կետերի շենքերի, շինությունների եւ կառույցների տեխնիկական հագեցվածությանը ներկայացվող պահանջները անձանց, տրանսպորտային միջոցների եւ հսկողության ենթակա ապրանքների սանիտարակարանտինային հսկողության իրականացման համար:

2. Անցման կետում նախատեսվում է հետեւյալի առկայությունը՝

ՍԿԿ-ի շինությունների համալիր,

ժամանակավոր մեկուսացման համար նախատեսված շինություն,

սանիտարական կայան (սանիտարական հրապարակ, սանիտարական երկաթուղային փակուղի (ճանապարհ), սանիտարական նավամատույց),

հատուկ սարքավորված շենքերի, շինությունների, կառույցների համալիր՝ նախատեսված ապրանքների, քիմիական, կենսաբանական եւ ռադիոակտիվ նյութերի, թափոնների ու մարդու համար վտանգ ներկայացնող այլ բեռների զննման

համար. Մաքսային միության մաքսային տարածք ապրանքների, կենսաբանական, քիմիական եւ ռադիոակտիվ նյութերի, թափոնների եւ մարդու համար վտանգ ներկայացնող այլ բեռների ներմուծման համար նախատեսված անցման կետերում,

հատուկ սարքավորված շենքերի, շինությունների, կառույցների համալիր՝ նախատեսված սննդամթերքի, նյութերի եւ արտադրատեսակների զննում իրականացնելու համար. Մաքսային միության մաքսային տարածք պարենային հումքի եւ սննդամթերքի հետ շփվող սննդամթերք, նյութեր եւ արտադրատեսակներ ներմուծելու համար նախատեսված անցման կետերում:

3. Նշված շինությունների մակերեսները, քանակը, սարքավորումները եւ հագեցվածությունը, ինչպես նաեւ դրանք համատեղելու հնարավորությունը սահմանվում են Կողմի լիազոր մարմնի կողմից՝ հաշվի առնելով անցման կետում բեռների եւ ուղեւորների հոսքը, անցման կետի աշխատանքի ռեժիմը:

II. Սանիտարակարանտինային կետի շինությունների համալիր

4. ՍԿԿ-ի շինությունները պետք է սարքավորված լինեն օդորակման համակարգով, հակահրդեհային ազդանշանային համակարգով եւ հրդեհաշիջման միջոցներով, արտակարգ իրավիճակի առաջացման դեպքում՝ ազդարարման համակարգով:

5. ՍԿԿ-ի համալիրում նախատեսվում են հերթապահ մասնագետների սենյակներ, ՍԿԿ-ի պետի (վարիչի) սենյակ, կենցաղային շինություններ, սանիտարահակահամաճարակային գույքի պահման համար նախատեսված շինություններ, պահեստանոցի համար նախատեսված շինություններ, սանիտարական բլոկի համար նախատեսված շինություններ, սարքավորումներ՝ մեկ մասնագետի համար նախատեսված մակերեսի հաշվարկով՝ սույն Տիպային պահանջների VII բաժնի համաձայն:

6. ՍԿԿ-ն ապահովվում է ավտոտրանսպորտով՝ հսկողության ենթակա ապրանքների նմուշները լաբորատորիա առաքելու դեպքում օպերատիվությունն ապահովելու համար:

7. ՍԿԿ-ն ապահովվում է հետեւյալ սանիտարահակահամաճարակային գույքով եւ հսկողության միջոցներով՝

- սառնարան՝ լաբորատոր հետազոտության ենթակա նմուշների օրինակների համար,

- պայուսակ-սառնարան կամ սառնազդակով թերմոս,

- մարմնի ջերմաստիճանը հեռակառավարմամբ չափելու սարքավորում,

- բժշկական ջերմաչափեր (10 հատ),

- ճառագայթաչափիչ (ռադիոմետր)-դոզիմետրեր (2 հատ),

- շարժական էլեկտրական լապտերներ՝ ավտոնոմ սնուցմամբ եւ գրելու հետ կապված աշխատանքներ կատարելու համար բավարար հզորությամբ (առնվազն 2 հատ),

- մեկանգամյա օգտագործման անհատական հակաժանտախտային (պաշտպանական) կոստյումներ՝ մեկ տիպի (2-ական կոստյում՝ ՍԿԿ-ի յուրաքանչյուր հերթափոխի մեկ մասնագետի համար),

- բազմակի օգտագործման պաշտպանական կոստյումներ (1-ական կոստյում՝ ՍԿԿ-ի մեկ մասնագետի համար),

- բժշկական խալաթներ (2-ական խալաթ՝ ՍԿԿ-ի յուրաքանչյուր հերթափոխի մեկ մասնագետի համար),

- ձեռնոցներ՝ բժշկական (100 զույգ). ձեռնոցներ՝ ռետինե կենցաղային (հաստ)(10 զույգ),

- բժշկական պաշտպանիչ շնչադիմակներ (մեկանգամյա օգտագործման) (200 հատ),

- մաշկի եւ շնչառական օրգանների անհատական պաշտպանության միջոցներ (հակագազ) յուրաքանչյուր մասնագետի համար,

- գոգնոց՝ ռետինե կամ պոլիէթիլենային. թեւնոցներ՝ ռեզինապատ կամ պոլիէթիլենային (2 զույգ),

- մեկանգամյա օգտագործման ախտահանող անձեռոցիկներ ՍԿԿ-ի աշխատակիցների անձնական պրոֆիլակտիկայի համար (50 հատ),
- ռեպելենտներ (վանիչ նյութեր) աերոզոլների տեսքով (5 հատ),
- միջատասպան նյութեր աերոզոլների տեսքով (5 հատ),
- առաջին նախաբժշկական օգնության դեղարկղ (ավտոմեքենայի դեղարկղի տիպի),
- բժշկական բամբակ,
- ախտահանող միջոցներ,
- տարաներ՝ մեկ աստիճանավորված տարա՝ ախտահանման միջոցների լուծույթներ պատրաստելու համար, մեկ տարա՝ ձեռքերի մշակման համար, երկու տարա՝ պաշտպանիչ հագուստի ախտահանման համար, մեկ տարա՝ պաշտպանիչ ակնոցների ախտահանման համար, երեք տարա՝ հիվանդի արտաթորանքի հավաքման եւ ախտահանման համար,
- արկղիկներ՝ խոլերայով հիվանդից (խոլերայով հիվանդ լինելու մեջ կասկածվող անձից) փորձանմուշ վերցնելու համար, շրջակա միջավայրի օբյեկտներից նմուշներ վերցնելու համար, կրծողների, արյունածուծ միջատների սատկած մարմինները լաբորատորիաներ առաքելու համար, անհետաձգելի անձնական պրոֆիլակտիկայի անցկացման համար:

Արկղիկների համալրումը եւ ՍԿԿ-ի սանիտարահակահամաճարակային գույքի փոխարինումը պետք է կանոնավոր իրականացվի՝ մինչեւ պատրաստուկների եւ բժշկական գույքի պիտանիության ժամկետը լրանալը:

III. Ժամանակավոր մեկուսացման համար նախատեսված շինություններ

8. Անցման կետերում ապահովվում են հիվանդություն ունենալու մեջ կասկածվող անձանց ժամանակավոր մեկուսացման համար շինությունների հատկացումը եւ սարքավորումը (այսուհետ՝ ժամանակավոր մեկուսացման համար

նախատեսված շինություններ):

9. Ժամանակավոր մեկուսացման համար նախատեսված շինությունները՝

- տեղակայվում են առանձին շենքում կամ կարող են մեկուսացված լինել անցման կետում գտնվող մյուս շինություններից (պետք է ունենան առանձին մուտք),

- սարքավորվում են առանձին՝ մեխանիկական օդափոխության ներհուսարտաձիգ համակարգով: Պատերը եւ հատակը պետք է արված լինեն այնպիսի նյութերից, որոնք թույլ կտան կատարել խոնավ մշակում եւ ախտահանում:

10. Անցման կետի ժամանակավոր մեկուսացման համար նախատեսված շինությունները բաղկացած են՝

- հիվանդություններ ունենալու մեջ կասկածվող հիվանդների ժամանակավոր մեկուսացման համար նախատեսված շինությունից.

- բուժաշխատողի համար նախատեսված շինությունից, նախամուտքից (տամբուրից), զուգարանից, ցնցուղից՝ սույն Տիպային պահանջների

11. Անցման կետում բժշկական կետի առկայության դեպքում ժամանակավոր մեկուսացման համար նախատեսված շինությունը կարող է կազմել դրա բաղադրիչ մասը:

IV. Սանիտարական կայան այն տրանսպորտային միջոցի տեղաբաշխման համար, որի մեջ հայտնաբերվել է վարակիչ հիվանդ (հիվանդություն ունենալու մեջ կասկածվող անձ)

12. Ավտոմոբիլային (ավտոճանապարհային) անցման կետում անցման կետի մուտքի մոտ տեղակայվում է սանիտարական հրապարակը, որը պետք է մշտապես ազատ լինի՝ շտապ բուժօգնության ավտոմեքենաների եւ տարհանման փոխադրամիջոցների անարգելք մուտքն ապահովելու համար: Հրապարակը պարսպապատվում է, ապահովվում է նախազգուշացնող գրություններով, պատվում է ասֆալտե ծածկույթով եւ ապահովվում է ցամաքեցման (դրենաժային) համակարգով՝ փոխադրամիջոցի մշակման ժամանակ օգտագործվող հատուկ

լուծույթների մակերեսային հոսքերը հավաքելու համար, դրանց հաջորդող ապակտիվացումն (դեզակտիվացիա) եւ ախտահանումն իրականացնելու համար:

Ավտոմոբիլային (ավտոճանապարհային) անցման կետում գտնվող սանիտարական հրապարակում նախատեսվում է հետեւյալի առկայությունը.

- խմելու ջրի կենտրոնացված ջրամատակարարման համակարգ,
- թափոնների հավաքման եւ օգտահանման համակարգ
- արտաքին արհեստական լուսավորություն,

- երկու տեղով զուգարան՝ սարքավորված կեղտաջրերը հավաքելու եւ նախքան անցման կետի ընդհանուր կոյուղացանցեր հոսքերը թափելը դրանց ախտահանումն իրականացնելու համար սարքով, կամ բիոզուգարաններ (սահմանելով դրանց տեղակայման մշտական վայրը) եւ ձեռքերը լվանալու համար լվացարան:

13. Միջազգային ավիաչվերթներ ընդունող օդանավակայանների անցման կետում (օդային անցման կետերում) գտնվող սանիտարական կայանում նախատեսվում է հետեւյալի առկայությունը.

- ասֆալտապատ ծածկույթով հրապարակ՝ օդանավի տեղակայման հնարավորությամբ,

- պարիսպ՝ նախազգուշացնող գրություններով,
- խմելու ջրի կենտրոնացված ջրամատակարարման համակարգ,
- թափոնների հավաքման եւ օգտահանման համակարգ
- արտաքին արհեստական լուսավորություն

- բիոզուգարան (սահմանելով բիոզուգարանների պահման մշտական վայրը՝ բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության ապահովման ոլորտում արտակարգ իրավիճակների առաջացման վտանգների բացակայության դեպքում):

14. Սանիտարաերկաթուղային փակուղու (ճանապարհի) հրապարակում նախատեսվում է ասֆալտապատ (պինդ) ծածկույթի եւ պարսպի առկայություն՝

նախազգուշացնող գրություններով: Փակուղու տեղադիրքը պետք է ապահովի գնացքների երթեւեկության անվտանգությունը եւ մշտապես ազատ լինի՝ շտապ բուժօգնության ավտոմեքենաների ու տարհանման փոխադրամիջոցների անարգելք ժամանումն ապահովելու համար:

Սանիտարաերկաթուղային փակուղին (ճանապարհը) ապահովվում է՝

- էլեկտրաէներգիային, սառը ջրամատակարարմանը, հեռախոսակապին, կենտրոնական կոյուղուն՝ վազոնների կոյուղու խողովակներից աղբահորի կամ տարաների մեջ (կոռոզիայի նկատմամբ կայուն ծավալով՝ սկսած 200 լ-ից) վազոնները միացնելու համար նախատեսված սարքերով.

- տարածքի՝ արտաքին կենցաղային եւ օժանդակ շինությունների արհեստական լուսավորությամբ,

- շարժական ավտոնոմ զուգարաններով (բիոզուգարաններով)՝ սահմանելով բիոզուգարանների պահման մշտական վայրը՝ բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության ապահովման ոլորտում արտակարգ իրավիճակների առաջացման վտանգների բացակայության դեպքում.

- ասֆալտապատ ծածկույթով, երեք կողմից պարսպապատ հրապարակով, որտեղ տեղադրված է առնվազն երկու մետաղական կամ պլաստմասսայե աղբահավաք (բեռնարկ)՝ պինդ փակվող կափարիչներով.

- օժանդակ եւ պահեստային (ստացիոնար եւ ժամանակավոր) շինություններ, որոնց լրակազմը եւ մակերեսներն անհատական են եւ կախված են սանիտարաերկաթուղային փակուղու (ճանապարհի) տեխնիկական հագեցվածությունից:

15. Սանիտարական նավամատույցի հրապարակում նախատեսվում է ասֆալտապատ (պինդ) ծածկույթի եւ նախազգուշացնող գրություններով պարսպի, նավամատույցը հսկող անձանց համար նախատեսված շինության առկայությունը, սանիտարահակահամաճարակային միջոցառումների իրականացման ժամանակ բուժաշխատողների տեղաբաշխման հնարավորությունը: Դեպի սանիտարական նավամատույց տանող ճանապարհը պետք է ունենա ասֆալտապատ (պինդ)

ծածկույթ:

Սանիտարական նավամատույցում նախատեսվում է հետեւյալի առկայությունը.

- խմելու ջրի որակին համապատասխան ջրի մատակարարման համակարգ՝ նավերի վրա ջրի մատակարարումն ապահովելու համար (ջրածորան, ջուր մատակարարող նավ),

- բավարար չափով ապահովված արտաքին էլեկտրական լուսավորություն,

- բավարար հզորությամբ ճնշակային (կոմպրեսային) կայաններ՝ օդաջեռուցիչով (կալորիֆերով)՝ ախտահանման ժամանակ նավերի վրա տաքացված օդ մատակարարելու համար,

- թափոնների հավաքման եւ օգտահանման համակարգ կեղտաջրեր եւ

- բիոզուգարան (սահմանելով բիոզուգարանների պահման մշտական վայրը՝ բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության ապահովման ոլորտում արտակարգ իրավիճակների առաջացման վտանգների բացակայության դեպքում):

V. Հատուկ սարքավորված շենքերի, շինությունների, կառույցների համալիր՝ նախատեսված ապրանքների, քիմիական, կենսաբանական եւ ռադիոակտիվ նյութերի, թափոնների ու մարդու համար վտանգ ներկայացնող այլ բեռների զննման համար

16. Մաքսային միության մաքսային տարածք քիմիական, կենսաբանական եւ ռադիոակտիվ նյութերի, թափոնների եւ մարդու համար վտանգ ներկայացնող այլ ապրանքների ու բեռների ներմուծման համար նախատեսված անցման կետերում նախատեսվում է հետեւյալի առկայությունը.

- սանիտարական հրապարակներ, պահեստներ՝ քիմիական, կենսաբանական եւ ռադիոակտիվ նյութերի, թափոնների եւ մարդու համար վտանգ ներկայացնող այլ բեռների ժամանակավոր պահպանման համար,

- հատուկ հրապարակ՝ սարքավորված գոյացած վտանգավոր թափոնների հավաքման եւ ոչնչացման մասնագիտացված համակարգով՝ վնասված փաթեթվածքով բեռների հերմետիկացում (անթափանցելիության ստեղծում) իրականացնելու համար, որին հաջորդում է պարունակության արտահոսքի նշաններով բեռնային միավորների գազազերծումը, ախտահանումը եւ (կամ) ապասկտիվացումը,

- տարաների վերանորոգման, մաքրման եւ վտանգավոր բեռների վերատարավորման համար նախատեսված հրապարակներ՝ սարքավորված գոյացած վտանգավոր թափոնների հավաքման եւ ոչնչացման մասնագիտացված համակարգով,

- վտանգավոր բեռների հետ աշխատելու համար նախատեսված հրապարակներ, որոնք պետք է պարսպապատված լինեն՝ կողմնակի անձանց մուտքի հնարավորությունը բացառելու համար:

VI. Հատուկ սարքավորված շենքերի, շինությունների, կառույցների համալիր՝ նախատեսված սննդամթերքի, նյութերի եւ արտադրատեսակների զննում ու ժամանակավոր պահպանում իրականացնելու համար

17. Պարենային հումքի եւ սննդամթերքի հետ շփվող սննդամթերք, նյութեր եւ արտադրատեսակներ ներմուծելու համար նախատեսված անցման կետերում նախատեսվում է սննդամթերքի, նյութերի եւ արտադրատեսակների համար հատուկ սարքավորված հրապարակների եւ պահեստների առկայությունը, այդ թվում՝ սառնարանային սարքավորմամբ պահպանման անհրաժեշտ պայմաններն ապահովելու համար:

VII. ՍԿԿ-ի համալիրի շինությունների մակերեսները եւ սարքավորումները

Շինությունների անվանումը	Մակերեսը	Կահույքը	Սարքավորումները	Կապը
Մասնագետների սենյակներ (1 աշխատանքային տեղի հաշվարկով)	12 մ ²	Սեղան, աթոռներ, փաստաթղթերի պահարան, չիրկիզվող պահարան, օդորակիչ, եթերային ռադիոընդունիչ, հագուստի պահարան	Անհատական էլեկտրոնային հաշվողական մեքենա (ԱԷՀՄ), տպիչ սարք, հեռախոս, հաշվիչ սարք, շարժական հեռախոս՝ յուրաքանչյուր աշխատանքային տեղում. սկաներ, պատճենահանման սարք, ֆաքսիմիլային սարք, գերկարճ ալիքների դիապազոնի ռադիոկայան (2-5 Վտ)՝ 1 հավաքածու 1 ՍԿԿ-ի համար	Համաքաղաքային հեռախոսակապ՝ միջքաղաքային կապի հնարավորությամբ՝ ներքին (անցման կետի), շարժական, մոդեմային՝ համացանցի մատչելիությամբ, ռադիոկապ
Կենցաղային շինություն	12 մ ²	Արտահագուստի եւ աշխատանքային հագուստի պահարան, բազմոց, սեղան, աթոռներ, հեռուստացույց, եթերային ռադիոընդունիչ	Միկրոալիքային վառարան, սառնարան, էլեկտրական թեյնիկ	Ներքին հեռախոսակապ
Սանիտարահալածակային գույքի պահման համար նախատեսված սենյակ	10 մ ²	Պահարան-խցեր (դարակաշարեր)		
Պահեստանոց	6 մ ²	Ախտահանման միջոցների եւ կենցաղային գույքի պահման համար նախատեսված	Օդաքաշ պահարան	

		դարակաշարեր		
Սանիտարական բլոկ	6 մ ²		Լողախցիկ, լվացարան, զուգարանակոնք	

VIII. Անցման կետում հիվանդի ժամանակավոր մեկուսացման համար նախատեսված շինությունների մակերեսը եւ սարքավորումները

Շինությունների անվանումը	Մակերեսը	Կահույքը, հիվանդի խնամքի համար նախատեսված պարագաները	Սարքավորումները	Կապը
Ժամանակավոր մեկուսացման համար նախատեսված շինություն	12 մ ²	1 մահճակալ խոլերայով հիվանդների համար, բժշկական թախտ, մահճակալամերձ պահարանիկ, 1 պահարան՝ խոլերայով հիվանդների անձնական իրերի համար, բժշկական պահարան, 1 սեղան՝ մանիպուլյացիաների համար, 2 աթոռ, 2 տակդիր անոթ, մոմլաթ, 2 հավաքածու անկողնային պարագաներ, 2 ներքնակ, 4 բարձ, 2 բրդե ծածկոց, շշալցված ջուր, ջրոցներ	Հեռախոս, օդի մանրէասպան ճառագայթիչներ՝ փակ տեսակի, լվացարան, զուգարանակոնք, ցնցուղ	Հեռախոսային, շարժական կապ, ռադիոկապ
	6 մ ²	մեկանգամյա օգտագործման բաժակներ		
Նախամուտք (տամբուր)	6 մ ²	Ախտահանման միջոցների եւ կենցաղային գույքի պահման համար նախատեսված		

		դարակաշարեր, բժշկական պատգարակներ, գույք		
Բուժաշխատողի համար նախատեսված շինություն	10 մ ²	Աշխատանքային սեղան, փաստաթղթերի պահարան, աթոռ, վերնահագուստի եւ աշխատանքային հագուստի պահարան	Հեռախոս	Հեռախոսային, շարժական կապ, ֆաքսիմիլային նաղիոկապ
Զուգարան, ցնցուղ	6 մ ²		Լողախցիկ, լվացարան, զուգարանակոնք	

Ծանոթագրություն. Ժամանակավոր մեկուսացման համար նախատեսված շինությունների սարքավորման անհնարինության դեպքում պետք է նախատեսվի հիվանդություն ունենալու մեջ կասկածվող անձի անհապաղ տարհանումը առողջապահական կազմակերպություն:

Հավելված թիվ 2

**ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ
ՊԱՀԱՆՋՈՂ՝ ՎԱՐԱԿԻՉ (ՄԱԿԱԲՈՒԾԱԿԱՆ) ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ**

Հ h/h	Նոզոլոգիական (հիվանդագիտական) ձեռք	Ծածկագիրը՝ ըստ ՀՄԴ-10-ի
1	Ծաղիկ	B 03
2	Պոլիոմիելիտ՝ առաջացած վայրի պոլիովիրուսից	A8 0.1, A8 0.2
3	Մարդու գրիպ՝ առաջացած վիրուսի նոր ենթատիպից	J 10, J 11
4	Ծանր ընթացքով սուր շնչառական համախտանիշ (ԾՍՇՀ)	
5	Խոլերա	A.00: A.00.0; A0 0.1; A0 0,9

6	Ժանտախտ	A2 0: A20.0; A20.1; A20.2; A20.3; A20.7; A20.8; A2 0.9
7	Դեղին տենդ	A95: A95.0, A95.1, A95,9
8	Լասսա տենդ	A96.2
9	Մարբուրգ վիրուսից առաջացած հիվանդություն	A98.3
10	Էբոլա վիրուսից առաջացած հիվանդություն	A98.4
11	Մալարիա	B50, B51, B52, B53.0
12	Արեւմտյան Նեդոսի տենդ	A92.3
13	Ղրիմյան հեմոռագիկ տենդ	A98.0
14	Դենգե տենդ	A9 0, A91
15	Ռիֆտ հովտի տենդ	A92.4
16	Մենինգոկոկային մենինգիտ	A39.0, A39.1, A39.2
17	Սիբիրյան խոց	A22.0, A22.1, A22.2, A22.7, A22.8, A22.9
18	Բրուցելոզ	A23.0, A23.1, A23.2, A23.8, A23.9
19	Պալարախտ (տուբերկուլոզ)	A16.0, A16.1, A16.2, A16.3, A16.4, A16.5
20	Սապ (խլնախտ)	A24.0, A24.1, A24.2, A24.3, A24.4
21	Մելիոիդոզ	A24.0, A24.1, A24.2, A24.3, A24.4
22	Համաճարակային բժավոր տիֆ	A75.0, A75.1, A75.2, A75.3, A75.9
23	Խունին, Մաչուպո տենդեր	A96.0, A96.1
24	Միջազգային նշանակության այլ վարակիչ հիվանդություններ, որոնք, Միջազգային բժշկասանիտարական կանոնների (2005 թվական) 2-րդ հավելվածի համաձայն, հանրային առողջապահության ոլորտում առաջացնում են արտակարգ իրավիճակներ	

**ՍԱՆԻՏԱՐԱՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ (ՏԱՐԱԾՔԻ
ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ՊԱՀԱՆՋՈՂ՝ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԿԱՄ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԵՋ ԿԱՍԿԱԾՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ)**

1. Սանիտարահակահամաճարակային միջոցառումները ներառում են՝

- տեղեկացում անցման կետի վարչական ղեկավարությանը, սահմանապահ եւ մաքսային վերակարգերի հերթափոխների ավագներին (օգտագործելով առկա կապի միջոցները) մաքսային միության մաքսային տարածք ժամանած անձանց՝ հիվանդություն ունենալու մեջ կասկածելու մասին.

- տեղեկացում Կողմերի լիազոր մարմիններին տարածքի սանիտարական պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացում պահանջող հիվանդությունների դեպքերի մասին ծանուցման սխեմայի համաձայն.

- տրանսպորտային միջոցի ուղեկցման կազմակերպում դեպի սանիտարական նավամատույց, սանիտարական կայան, սանիտարական հրապարակ, սանիտարական երկաթուղային փակուղի (ճանապարհ)՝ անցման կետի վարչական ղեկավարության որոշմամբ.

- տրանսպորտային միջոցով տեղափոխման գործողությունների եւ անձնակազմի անդամների, ուղեւորների ելքի, ուղեբեռի, բեռների բեռնաթափման գործողությունների կասեցում.

- սահմանապահ, մաքսային եւ այլ տեսակների պետական հսկողության իրականացման կասեցում.

- տրանսպորտային միջոցի եւ դրա մեջ գտնվող անձանց պաշտպանության ապահովման կազմակերպում՝ մինչեւ հակահամաճարակային միջոցառումների իրականացման ավարտը.

- հիվանդի (հիվանդություն ունենալու մեջ կասկածվող անձի) անհապաղ ժամանակավոր մեկուսացում՝ հիվանդության հայտնաբերման վայրում կամ հիվանդի ժամանակավոր մեկուսացման համար նախատեսված շինությունում՝ կազմակերպելով հետագա հոսպիտալացումը այն հաստատություններում (կազմակերպություններում), որոնք զբաղվում են բուժական-պրոֆիլակտիկ օգնության տրամադրմամբ՝ հիվանդության ախտորոշումը հերքելու համար անհրաժեշտ ժամկետով, իսկ այն հաստատվելու դեպքում՝ մինչեւ հիվանդի լիարժեք ապաքինումը.

- սանիտարակարանտինային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց համար անհետաձգելի անձնական պրոֆիլակտիկայի անցկացում՝ ըստ համաճարակաբանական ցուցումների.

- համաճարակաբանական քննության կազմակերպում՝ հիվանդության համաճարակային օջախի առաջացման պատճառները եւ պայմանները պարզելու նպատակով, ինչպես նաեւ հիվանդների եւ (կամ) հիվանդություն ունենալու (վարակված լինելու) մեջ կասկածվող անձանց հետ շփում ունեցած անձանց հայտնաբերում.

- հիվանդի հետ շփում ունեցած անձանց՝ ներառյալ տրանսպորտային միջոցի ուղեւորների, անձնակազմի (բրիգադի) անդամների, անցման կետի պետական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց հայտնաբերում, մեկուսացում եւ (կամ) բժշկական հսկողության կազմակերպում հիվանդության գաղտնի (ինկուբացիոն) շրջանի ընթացքում՝ ժամանման կամ մեկուսացման պահից: Մեկուսացումը եւ հսկողությունը կարող են ախտորոշումը հանելու դեպքում վերացվել.

- հիվանդների հետ շփում ունեցած անձանց անկետավորում, ինչին հաջորդում է տրանսպորտային միջոցից նրանց տարհանումը ժամանակավոր մեկուսարան.

- հիվանդներից (հիվանդ լինելու մեջ կասկածվող անձանցից) եւ հիվանդների հետ շփում ունեցած անձանցից (ըստ ցուցումների) կենսաբանական փորձանմուշի վերցման կազմակերպում՝ լաբորատոր հետազոտություններ անցկացնելու համար.

- ախտահանման, իսկ կրծողների կամ միջատների հայտնաբերման դեպքում՝ տրանսպորտային միջոցներում, բեռներում եւ ուղեբեռում կրծողասպան (դերատիզացիոն), միջատասպան (դեզինսեկցիոն) աշխատանքների կազմակերպում.

- սատկած կրծողների հայտնաբերման դեպքում դրանցից ընտրվում են նմուշներ եւ առաքվում են լաբորատորիա՝ լաբորատոր հետազոտություններ իրականացնելու համար:

2. Օտարերկրյա քաղաքացիներին հոսպիտալացնելուց հրաժարվելու դեպքում, հետագա միջոցները ձեռնարկվում են Կողմերի օրենսդրության համաձայն:

3. Այն դեպքում, երբ Մաքսային միության մաքսային սահմանը հատող տրանսպորտային միջոցի մեջ գտնվող անձի մոտ հայտնաբերվել է հիվանդություն կամ հայտնաբերվել է այնպիսի բեռ, որի հետ կապված կան հիվանդության հարուցիչներով վարակված լինելու կասկածներ, ընդունող Կողմն իրեն իրավունք է վերապահում արգելել մյուս երկրի քաղաքացիների (հիվանդ եւ նրանց հետ շփում ունեցած անձանց) մուտքը, տարանցիկ երթեւեկելը կամ իր տարածք հսկողության ենթակա ապրանքների (արտադրանքի) ներմուծումը:

4. Սանիտարակարանտինային հսկողության ավարտից հետո, ինչպես նաեւ, անհրաժեշտության դեպքում, սանիտարահամաճարակային միջոցառումների իրականացումից հետո պետական հսկողություն իրականացնող մյուս մարմինների պաշտոնատար անձինք կարող են մոտենալ տրանսպորտային միջոցին եւ ֆիզիկական անձանց՝ իրենց գործառույթներն իրականացնելու համար:

5. Բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության ապահովման ոլորտը կարգավորող՝ Կողմերի եւ մաքսային միության օրենսդրության դրույթների խախտման դեպքերի հայտնաբերման, ինչպես նաեւ վարակիչ հիվանդությունների եւ զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների (թունավորումների) առաջացման ու տարածման սպառնալիքի դեպքում, սանիտարակարանտինային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից կազմված ստուգման մասին ակտի հիման վրա, Կողմի լիազորված անձի

կամ դրա տարածքային ստորաբաժանման ղեկավարը (նրա տեղակալը) ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում պատասխանատու անձանց տրամադրում է սահմանված ժամկետներում նրանց կողմից իրականացման համար պարտադիր կարգադրագրեր՝

- բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության ապահովման ոլորտը կարգավորող օրենսդրության դրույթների խախտման դեպքերի վերացման մասին.

- վարակիչ հիվանդություններով տառապող հիվանդների հետ շփում ունեցած անձանց լաբորատոր ստուգման ենթարկելու, նման անձանց նկատմամբ բժշկական հսկողություն իրականացնելու մասին.

- հսկողության ենթակա այն ապրանքների գնահատում իրականացնելու մասին, որոնք կարող են առաջացնել զանգվածային ոչ վարակիչ հիվանդություններ (թունավորումներ).

- լրացուցիչ սանիտարահակահամաճարակային (պրոֆիլակտիկ) միջոցառումների իրականացման մասին.

- տրանսպորտային միջոցում, անցման կետում ախտահանման, միջատասպան (դեզինսեկցիոն) եւ կրծողասպան(դերատիզացիոն) աշխատանքների իրականացման մասին:

6. Այն դեպքում, երբ Մաքսային միության մաքսային սահմանի անցման կետ է ժամանել տրանսպորտային միջոց, որի վրա գտնվում է այնպիսի հիվանդություններից մահացած անձ, որոնց համար պահանջվում է սանիտարական պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացում, սանիտարակարանտինային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք՝

- կիրառում են այն հիվանդությունների դեպքերի մասին ծանուցման սխեման, որոնց համար պահանջվում է տարածքի սանիտարական պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացում եւ սանիտարահակահամաճարակային միջոցառումների գործառնական ծրագիրը.

- ծանուցում են համապատասխան ծառայություններին՝ դիակը հանելը եւ դիահերձարան տրանսպորտային փոխադրումը կազմակերպելու համար՝ տրանսպորտային փոխադրման հատուկ պայմանների պահպանմամբ.

- փոխադրամիջոցի վրա իրականացնում են այն նույն միջոցառումները, որոնք իրականացվում են հիվանդի առկայության դեպքում:

Հավելված թիվ 4

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մարտի 2-ի թիվ 567 որոշման
խմբագրությամբ)

ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ

Ձեւ «Կ-1»

Հաստատում եմ

«___» հունվարի 201_ թ.

Հերթապահությունների ընդունման եւ հանձնման մատյան

ՍԿԿ _____

Սկսվել է _____

Ավարտվել է _____

Պահպանման ժամկետը՝ 2 տարի

Ամսաթիվը	ՍԿԿ-ի հերթապահ մասնագետի Ա.Ա.Հ. (ազգանուն, անուն, հայրանուն)	Հերթապահությունն սկսելու ժամը	ՍԿԿ-ի մասնագետների ստորագրությունը	Հերթապահությունը հանձնելու ժամը	Նշումներ	ՍԿԿ-ի մասնագետների ստորագրությունը
1	2	3	4	6	7	8

Հաստատում եմ

«___» հունվարի 201_ թ.

Տրանսպորտային միջոցի սանիտարակարանտինային հսկողության հաշվառման մատյան

ԺԱՄԱՆՈՒՄ, ՄԵԿՆՈՒՄ՝ առանձին մատյաններ

ՍԿԿ _____

Սկսվել է _____

Ավարտվել է _____

Պահպանման ժամկետը՝ 5 տարի

Թիվ	Ամսաթիվը, ժամը	Նրանսպորտային միջոցի նվաճումը, համարը, գրանցման համարը (ИМО)	Պետի (նավապետի, հրամանատարի, վարորդի) Ա.Ա.Հ.-ն	Պատկանելիությունը, նավի գործակալը	Շարժման երթուղին	Բեռան քանակը (վազոններ), անվանումը	Ուղեւորների/անձնակազմի անդամների թիվը	Սանիտարական հսկողություն անցնելու (սանիտարական հսկողությունից ազատվելու) մասին վկայականը	Նավահանգստի (օդանավակայանի) հետ ազատ կապ հաստատելու վերաբերյալ թույլտվությունը	Վարակիչ հիվանդների առկայությունը	Սանիտարական խախտումների տեսակները						Մասնագետի ստորագրությունը	
											ընդամենը	այդ թվում՝	հետեւյալ ոլորտում.					այլ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19

3-րդ սյունակում՝ առանձին տողով ներառվում են վազոն-ռեստորանները:

9-րդ սյունակը լրացվում է նավերի համար:

10-րդ սյունակը լրացվում է նավերի եւ օդանավերի համար:

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մարտի 2-ի թիվ 567 որոշման խմբագրությամբ)

Ձեռն «Մ-3»

Հաստատում եմ

«___» հունվարի 201_ թ.

Հսկողության ենթակա ապրանքների սանիտարակարանտինային հսկողության հաշվառման մատյան

ՍԿԿ _____

Սկսվել է _____

Ավարտվել է _____

Պահպանման ժամկետը՝ 5 տարի

Ամսաթիվը, ժամը	Տրանսպորտային միջոցի անվանումը, համարը	Չնման են ենթարկվել սանիտարակարանտինային հսկողության ենթակա ապրանքների խմբաքանակները							Ապրանքների ներմուծումը կասեցված (ժամանակավորապես արգելված) է	Ապրանքների ներմուծումն արգելելու պատճառը	Ծանուցման համարը	Մաքսային միության տարածք մուտքի թույլատրման հիմնավորումը	ՍԿԿ-ի մասնագետի ստորագրությունը	
		ապրանքների անվանումը	ապրանքների բաժինը եւ խումբը՝ Ապրանքների միասնական ցանկի համաձայն	ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Խմբաքանակների թիվը, ընդամենը՝	Դրանցից՝ նմուշների ընտրմամբ	Քանակը՝ տոննաներով	այդ թվում՝ խմբաքանակների թիվը						
								վտանգավոր	սննդամթերք	այլ				

<*> Սույն Ձեւի կիրառության նպատակների համար՝ «վտանգավոր» են համարվում մարդու առողջության եւ շրջակա միջավայրի անվտանգության համար սպառնալիք ստեղծող իրերը եւ նյութերը:

Ձեւ «Կ-4»

Հաստատում եմ

Ղեկավար

«___» հունվարի 201_ թ.

Տրանսպորտային միջոցի սանիտարակարանտինային հսկողության ժամանակ հայտնաբերված հիվանդների կամ վարակիչ հիվանդություն ունենալու մեջ կասկածվող անձանց հաշվառման մատյան

ՍԿԿ _____

Սկսվել է _____

Ավարտվել է _____

Պահպանման ժամկետը՝ 5 տարի

Ձեռն «Մ-5»

Հաստատում եմ

«___» հունվարի 201_ թ.

Մարդկանց դիակների փոխադրման գրանցման մատյան

ՍԿԿ _____

Սկսվել է _____

Ավարտվել է _____

Պահպանման ժամկետը՝ 5 տարի

Հ հ/հ	Ամսաթիվը, ժամը	Տրանսպորտային միջոցի անվանումը, համարը, շարժման երթուղին	Մահվան վկայականի տվյալները	Մահվան պատճառը	Ուղեկցողի անձնագրային տվյալները	Դեպի ուր եւ որտեղից է ուղեկցվում	Դագաղի, աճյունասափորի սանիտարական վիճակը	Ախտահանիչ մշակման վայրը	ՍԿԿ-ի մասնագետի գրառումը
1	2	3	4	5	6	7	8	9	10

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ

ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՍՏԱՅՈՂԻ ԿՈՂՄԻՑ

ՏՎՅԱԼՆԵՐ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ
ՏԱՐԱԾՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ
ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ներկայացնում են՝	Ներկայացնել ու ժամկետները	Ձեռ N 1KT
Մաքսային միության անդամ պետությունների լիազոր մարմինների ղեկավարները (նրանց տեղակալները) ուղարկում են Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարություն	Տարեկան կտրվածքով՝ մինչև փետրվարի 5-ը	Տարեկան

Լիազոր մարմնի անվանումը

Փոստային հասցեն

միջոցների թիվը, որոնց մուտքի թույլատրումը կասեցվել է (ժամանակավորապես արգելվել է)																	
այդ թվում՝ կապված հիվանդների կամ վարակիչ հիվանդություններ ունենալու մեջ կասկածվող անձանց առկայության հետ	2.3																
Այն անձանց թիվը, ովքեր զննման են ենթարկվել վարակիչ հիվանդությունների նշանների առկայություն հայտնաբերելու համար դեպքում	3																

(ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի
թիվ 341 որոշմամբ)


Ծանուցում թիվ _____

(փոխադրողին կամ բեռների հետ կապված այլ լիազոր մարմնին)


Մաքսային միության մաքսային տարածք ներմուծված՝ հսկողության ենթակա
ապրանքի նկատմամբ սանիտարակարանտինային հսկողություն իրականացնելիս,

(ապրանքի անվանումը, տրանսպորտային փոխադրման փաստաթղթի
համարը)


հաստատվել է դրա անհամապատասխանությունը Մաքսային միության
հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշմամբ հաստատված՝
Մաքսային միության մաքսային սահմանը հատող անձանց եւ տրանսպորտային
միջոցների, Մաքսային միության մաքսային սահմանով եւ Մաքսային միության
մաքսային տարածքում տեղափոխվող՝ հսկողության ենթակա ապրանքների
նկատմամբ պետական սանիտարահամաճարակաբանական
վերահսկողության(հսկողության)իրականացման կարգի վերաբերյալ Կանոնակարգի
(այսուհետ՝ Կանոնակարգ) պահանջներին, կապված՝




արտադրանքի (ապրանքի) անվտանգությունը հաստատող փաստաթղթի բացակայության հետ



ներկայացված տրանսպորտային (փոխադրման) եւ (կամ) առետրային փաստաթղթերում այն տվյալների բացակայության հետ, համաձայն որոնց ապրանքը դասվում է այն ապրանքների շարքին, որոնց նկատմամբ պետական գրանցման վկայական ներկայացնելու պահանջ չի ներկայացվում Մաքսային միության մաքսային սահմանին՝ սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա Ապրանքների միասնական ցանկի համաձայն



պատրաստողի (արտադրողի) այն գրավոր կից ներկայացված նամակի բացակայության հետ, համաձայն որի, նշված նմուշներն իր կողմից պատրաստվել (արտադրվել) են արտադրանքը (ապրանքները) որպես նմուշներ ներմուծելու ժամանակ <3>.



ապրանքի նկատմամբ սահմանվել է ժամանակավոր սանիտարական միջոցի կիրառում՝ Մաքսային միության անդամ պետության տարածք ներմուծելու արգելքի ձեռով

Վերոնշյալի հիման վրա՝ արգելվում է ներմուծումը _____

ապրանքի անվանումը

որը ստացվել է ըստ՝ _____

(տրանսպորտային փաստաթղթի անվանումը եւ համարը)

_____ սանիտարակարանտինային կետի
(որոշումը կայացրած մասնագետի պաշտոնը)

_____ (անցման կետի անվանումը) (ԱԱՀ մասնագետի ստորագրությունը)

Նշում ԱՀԿ-ով (անձնական համարակալված կնիքով)

Ծանուցումն ստացել է _____
(պաշտոնը, ազգանունը, ստորագրությունը)

Ծանուցումը կազմված է երկու օրինակից:

Հեռախոս _____

<1> Կանոնակարգի 17-րդ կետը:

<2> Կանոնակարգի 19-րդ կետը:

<3> Կանոնակարգի 19-րդ կետը:

<4> «Սանիտարական միջոցների մասին» Համաձայնագրի 9-րդ հոդվածը: